ISSN 1829-4480

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

4

2017

ԺՈՂՈՎԱԾՈՒՆ ՏՊԱԳՐՎՈՒՄ Է
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ
ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՄԱՄԲ

ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

COLLECTION OF SCIENTIFIC ARTICLES OF GAVAR STATE UNIVERSITY

СБОРНИК НАУЧНЫХ СТАТЕЙ ГАВАРСКОГО ГОСУДАРСТВЕННОГО УНИВЕРСИТЕТА

Գիտական հոդվածների ժողովածու,
Խմբ. խորհուրդ Ռ. Խ. Հակոբյան և ուրիշ.,
Գլխ. խմբագիր Հ. Հ. Հակոբյան

© Արտագերս հրատարակչություն, 2017թ.
© Հ. Հ. Հակոբյան և ուրիշ.(հեղ. խումբ), 2017թ



- *Ժողովածուն նվիրված է Գավառի պետական համալսարանի պատվավոր բարերար, ամերիկահայ գործիչ, մեծ մարդասեր Ժիրայր Նիշանյանի ծննդյան 80-ամյա հոբելյանին:*

- **The collection is dedicated to Gavar State University's honourable benefactor, American-Armenian dignitary and humanist Jerair Nishanyan's 80th birthday anniversary.**

- **Сборник посвящен 80-летию со дня рождения почетного благотворителя ГГУ, армяно-американского деятеля и гуманиста Жирайра Нишаняна.**

Գլխավոր խմբագիր՝ **Հ. Հ. Հակոբյան**	ՀՀ սփյուռքի նախարար, իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Խմբագրական խորհուրդ՝ **Ռ. Խ. Հակոբյան**	ԳՊՀ ռեկտոր, իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ
Ա. Հ. Խաչատրյան	իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Ռ. Գրիգորյան	բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Հ. Մ. Հարությունյան	պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ա. Ա. Սիմոնյան	կենսաբանական գիտություններրի դոկտոր, պրոֆեսոր
Մ. Պ. Ավագյան	գյուղատնտեսական գիտությունների դոկտոր
Վ. Լ. Կատվալյան	բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ
Ն. Ա. Կուտուզյան	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հ. Ա. Մելիքյան	տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ
Լ. Ա. Շեկյան	ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Ս. Գ. Ամիրխանյան	տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
Գ. Ա. Միրիբյան	բանասիրական գիտությունների թեկնածու
Թ.Ա. Ասոյան	բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հ. Գ. Ղաջոյան	փիլիսոփայական գիտությունների թեկնածու

Editor-in-chief **H. H. Hakobyan**	RA Minister for Diaspora, Doctor of Law, Professor
Editorial Council **R. Kh. Hakobyan**	Rector of GSU, Doctor of Law, Associate Professor
A. H. Khachatryan	Doctor of Law, Professor
V. R. Grigoryan	Doctor of Philology, Professor
H. M. Harutyunyan	Doctor of History, Professor
A. A. Simonyan	Doctor of Biology, Professor
M. P. Avagyan	Doctor of Agriculture
V. L. Katvalyan	Doctor of Philology, Associate Professor
N. A. Kutuzyan	PhD in Physics and Mathematics, Associate Professor
H. A. Melikyan	PhD in Technology, Associate Professor
L. A. Shekyan	Doctor of Physics and Mathematics, Professor
S. G. Amirkhanyan	PhD in Economics, Associate Professor
G.A. Miribyan	PhD in of Philology
T. A. Asoyan	PhD in Philology, Associate Professor
H. G. Ghajoyan	PhD in Philosophy

Главный редактор **Г. Г. Акопян**	Министр диаспоры РА, доктор юридических наук, профессор
Редакционная коллегия **Р. Х. Акопян**	ректор ГГУ, доктор юридических наук, доцент
А. А. Хачатрян	доктор юридических наук, профессор
В. Р. Григорян	доктор филологических наук, профессор
Г. М. Арутюнян	доктор исторических наук, профессор
А. А. Симонян	доктор биологических наук, профессор
М. П. Авагян	доктор сельскохозяйственных наук
В. Л. Катвалян	кандидат филологических наук, доцент
Н. А. Кутузян	кандидат физико - математических наук, доцент
Г. А. Меликян	кандидат технических наук, доцент
Л. А. Шекян	доктор физико - математических наук, профессор
С. Г. Амирханян	кандидат экономических наук, доцент
Г. А. Мирибян	кандидат филологических наук
Т. А. Асоян	кандидат филологических наук, доцент
Г. Г. Каджоян	кандидат философских наук

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, Ռ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ
Մարդասիրությունը որպես իրավունքի ընդհանուր սկզբունք.....19

1. ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ն. Ա. ԿՈՒՏՈՒՋՅԱՆ, Ա. Լ. ՇԵԿՅԱՆ, Լ. Ա. ՇԵԿՅԱՆ
Առաձգական անհարթ շերտի վրա հեծանի ծռումը գծային բաշխված լայնական բեռով՝ երկայնական սեղմող ուժերի առկայությամբ.....29
Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ
Էկոլոգիական ճգնաժամը և մուտացիաների բեռի կուտակումը գենոֆոնդում.....38
Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ, Մ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ՆԱԴՖ-կախյալ իզոցիտրատդեհիդրոգենազի ակտիվությունը հավի սաղմի հյուս-վածքներում ինկուբացման տատանողական ջերմաստիճանների դեպքում.....45
Լ. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ, Ա. Ս. ՄԱՐԳԱՐՅԱՆ, Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ, Մ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Առողջությունը պահպանող տեխնոլոգիաների կիրառումը դասավանդման մեջ....50
Ք. Է. ԴԱՆԻԵԼՅԱՆ, Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ, Լ. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ
Պուրինային և պիրիմիդինային փոխանակումների ներգործությունը.....54
Թ. Գ. ԽԱՉԻԿՅԱՆ, Լ. Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ, Ա. Ս. ՄԱՄՅԱՆ, Լ. Ռ. ՀԱՄԲԱՐՅԱՆ
Կարճաղբյուր, Մասրիկ և Վարդենիս գետերի ֆիտոպլանկտոնի տեսակային բազմազանությունը և քանակական ցուցանիշները 58
Մ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, Լ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Նանոկենսաբժշկությունը նանոտեխնոլոգիայի կարևորագույն բաղադրիչ.....64
Հ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ
Կառավարման տարածքային ավտոմատացված համակարգերի մշակման և փորձարկումների անցկացման մասին 69
Մ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
Տեղեկատվական տեխնոլոգիաները ուսումնական գործընթացում. հեռավար ուսուցման համակարգեր 75
Ա. Կ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Նեյրոնային ցանցերի կիրառությունը տնտեսական օբյեկտների «կլաստերացման» համար 81
Ա. Կ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ, Վ. Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Նեյրոնային ցանցերի կիրառությունը տնտեսական գործընթացների մոդելավորման համար 90
Մ. Պ. ԱՎԱԳՅԱՆ
ՀՀ տարածքում հողերի դեգրադացման առանձնահատկությունները թթվային անձրևների ներգործության պայմաններում 100
Լ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
Բնական միջավայրի վրա տուրիզմի բացասական ազդեցության որոշ հարցեր.....105

2. ՊԱՏՄԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վ. Գ. ԹՈՒՆՅԱՆ
Ազգային գաղափարը զեղծարարությունում 111
Ա. Հ. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ
Եփրատ և Տիգրիս գետանունների ստուգաբանության շուրջ 120
Ա. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
Հայկական վիշապագորգերի «Գուհար» ենթախմբի տիպերն ու դրանց տարածման արեալները 125
Ք. Խ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, Ս. Մ. ԳԱԼՈՅԱՆ
Միջառարկայական և ներառարկայական կապերի ապահովումը պատմության դասավանդման ընթացքում 134
Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Ոգեպաշտության վերապրուկները պատմական Հայաստանում 141

3. ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Ս. Գ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ, Մ. Մ. ԹՈՎՄԱՍՅԱՆ
Գյուղատնտեսության զարգացման հնարավորությունները՝ կապված ոլորտի վարկավորման հիմնահարցերի հետ 148
Մ. Ն. ՀԵՐԳՆՅԱՆ, Լ. Մ. ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ, Գ. Հ. ՀԵՐԳՆՅԱՆ
Տոկոսային ռիսկի կառավարման արդյունավետությունը «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի օրինակով 155
Գ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Հարկային բեռի գնահատման մեթոդները, դրանց առավելությունների ու թերությունների վերլուծությունը 168
Վ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Արտադրանքի մրցունակության տեխնիկական մակարդակի մոդելների ձևավորումը 177
Վ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Ա. Ֆ. ՄԿՐՏՉՅԱՆ
Նոր ապրանքների մշակման և առևտրականացման գործընթացի որոշ խնդիրներ 188
Վ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ, Հ. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ, Ա. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Ապրանքի մրցունակության տնտեսական ցուցանիշների կառուցվածքը.....201
Ա. Պ. ԲԱՂԻՆՅԱՆ
Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը Հայաստանի Հանրապետությունում.....206
Դ. Լ. ԹՈՐՈՍՅԱՆ
«Սևան» ազգային պարկի հնարավորությունները որպես էկոտուրիզմի զարգացման միջոց 216
Ա. Վ. ՄԱՐԴՈՅԱՆ
Հայաստանի Հանրապետությունում բնապահպանական և բնօգտագործման վճարների համեմատական վերլուծություն 223
Ա. Վ. ՄԱՐԴՈՅԱՆ
Հանքարդյունաբերության ոլորտում առկա հիմնախնդիրները («Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ-ի օրինակով) 229
Գ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Մրցունակության տեխնիկատնտեսական մակարդակի գնահատման մեթոդները 237

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Արտադրանքի տեխնիկական մակարդակի գնահատման փորձագիտական մեթոդները 242
Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Արտադրանքի որակի ապահովման ծախսերի դասակարգման արդի խնդիրները 246
Մ. Թ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ձեռնարկատիրական ռիսկերի առաջացման առանձնահատկությունները արդի պայմաններում.....251
Մ. Թ. ՄԽԻԹԱՐՅԱՆ
Ձեռնարկատիրական ռիսկերի առաջացումը պայմանավորող գործոնների գնահատումը 257
Ա. Զ. ԳԱԼՍՏՅԱՆ
Հիմնական եկամտի թերությունները և առավելությունները.....265
Ա. Զ. ԳԱԼՍՏՅԱՆ
Հիմնական եկամտի հաջողված փորձնական ներդրումը Նամիբիայում և Հնդկաստանում 274
Մ. Գ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
Կազմակերպության բիզնես-գործընթացների կառավարման նախագծերի պահանջների բացահայտման, վերլուծության և ձևափոխման ժամանակակից մեթոդները 281
Մ. Գ. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ
Ճկուն տեխնոլոգիաների կիրառումը բիզնես-գործընթացների օպտիմալացման նախագծերի կառավարման նպատակով 287
Լ. Ա. ՂԱԶԱՐՅԱՆ
Մանրածախ առևտրի ծառայությունների որակի կառավարման համակարգի վերլուծություն 292

4. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Ցավի չընդմիջվող արձագանքը 296
Թ. Ա. ԱՍՈՅԱՆ
Հովհաննես Զոհրապյանը և արևմտահայերենի կանոնարկման հարցերը 303
Ն. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ
Ցեղասպանության արտացոլումը Եղիշե Չարենցի պոեմներում 311
Ա. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Օրագրողի կերպարը Ֆրանց Կաֆկայի «Օրագրերում» 328
Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ
Արևմտահայերենի խնդիրների մասին 340
Լ. Խ. ՂՌԵՋՅԱՆ
Նոր Բայազետի ազգագրական և բանահյուսական մշակույթը բանագետ – բանահավաքների գրառումներում 345
Ն. Վ. ՊԱՐՈՆՅԱՆ
Արաբերենից փոխառյալ բժշկագիտական եզրերը Մխիթար Հերացու «Ջերմանց մխիթարութիւն» երկում 357
Լ. Ա. ՀԱՅԹՅԱՆ

Ալիս Մոնրոյի հոգեբանական պատումը (նարատիվը) կանադական գրականության համատեքստում.....364
Ի. Վ. ՄԱՐՏԻՆՅԱՆ
Մեկնաբանությունների դաշտի կարգավորման խնդիրը հայաստանյան համացանցային լրատվամիջոցներում 368
Բ. Ժ. ԳԱԼՍՏՅԱՆ, Հ. Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ
Էկզիստենցիալիզմը և ԱՄՆ-ի գրաքննադատությունը.....377
Ա. Մ. ԻԳԻԹՅԱՆ
Աստվածաշնչյան խորհրդանիշների շեքսպիրյան անդրադարձումները.....384
Ա. Մ. ԻԳԻԹՅԱՆ
Աստվածաշնչյան լեզվաոճական միջոցների շեքսպիրյան կիրառումները և դրանց հայերեն թարգմանությունը.....390
Ս. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Անգլերենի հարակցական հարադրությունների ուսուցումը հայերենի զուգադրությամբ 396
Ս. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Հունական փոխառությունները միջին հայերենում 402
Գ. Ա. ՄԻՐԻԲՅԱՆ
Փախստական երեխաների ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները 407
Ա. Մ. ՄՈՒԽՍԻԽՍԶՈՅԱՆ
Հնաբանությունների գեղարվեստական թարգմանության եղանակները.....411
Ռ. Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
«Արական/իգական» հակադրությունը կենդանունների անվանակարգման մեջ ռուսերենում՝ հայերենի, անգլերենի և իտալերենի համադրությամբ (բառակազմական հայեցակետ) 418
Ռ. Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
Ռուսերենի և հայերենի ցեղանունների զուգադրական-տիպաբանական քննությունը որպես ռեցեպտիվ և պրոդուկտիվ առաջադրանքների մշակման լեզվամեթոդական հիմք.....429
Ա. Կ. ԲԱԼԱԳՈՋՅԱՆ
Անգլերենի ռիթմը հայալեզու ուսանողների համար 436
Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Բարձրագույն կրթության միջազգայնացման հիմնահարցեր 441
Հ. Հ. ՕՀԱՆՅԱՆ, Ա. Դ. ՍԱՀԱԿՅԱՆ
Կրտսեր դպրոցականների էկոլոգիական դաստիարակության արդյունավետության բարձրացման ուղիները 452
Ա. Տ. ՄԱՅԻԼՅԱՆ
Մեծահասակների կրթության դիդակտիկական հիմքերը.....462
Թ. Հ. ԿՈՏՈԼԿՅԱՆ
Կրտսեր դպրոցականների նկարչական գործունեության ակտիվացման ուղիները 470

5. ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տրդատ Առաջինի և Սանատրուկի առեղծվածը 477
Ն. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
Իրավունքի բացերի լրացման եղանակների պատմական վերլուծություն.....495

C O N T E N T

H. H. HAKOBYAN, R. KH. HAKOBYAN
Humanism as a General Principle of Law 19

1. NATURAL SCIENCIES

N. A. KUTUZYAN, A. L. SHEKYAN, L. A. SHEKYAN
The Bending of a Beam on an Elastic Rough Band by Linearly Distributed Transverse Load in the Presence of the Longitudinal Compressive Forces 29
A. A. SIMONYAN
The Ecological Crisis and Accumulation of the Mutative Load in the Genes 38
A. A. SIMONYAN, M. H. HOVHANNISYAN
Shifts of NADP-dependent Isocitrate Dehydrogenases Activity in Tissues of Chick Embryos during Hypothermia 45
L. A. SIMONYAN, A. S. MARGARYAN, A. A. SIMONYAN, M. H. HOVHANNISYAN
Application of Health-saving Technology in the Teaching 50
K. E. Danielyan, A. A. Simonyan, L. A. SIMONYAN
The Interaction of the Purine and Pyrimidine Metabolisms 54
T. G. KHACHIKYAN, L. G. STEPANYAN, A. S. MAMYAN, L. R. HAMBARYAN
Species diversity and quantitative indicators of phytoplankton in karchaxbiur, Masrik and Vardenis rivers.....58
M. H. HOVHANNISYAN, L. N. ARAKELYAN.
Nanobiomedicine is the Main Component of Nanotechnology 64
H. A. MELIKYAN
On Development and Testing of Spatial Automated Systems Management 69
M. A. HOVHANNISYAN
Information Technologies in Educational Process, Distance Learning Systems 75
A. K. KHURSHUDYAN
Application of Neural Networks for Clustering Economic Facilities 81
A. K. KHURSHUDYAN, V. K. AVETISYAN
Application of Artificial Intelligence Methods for Modeling Economic Processes 90
M. P. AVAGYAN
The Distinctions of Soil Degradation under the Influence of Acid Rains in the Republic of Armenia 100
L. A. MKRTCHYAN
Some Issues on Negative Impact of Tourism on the Natural Environment 105

2. HISTORY

V. G. TUNYAN
Defalcation of the National Idea 111
A. A. GHARGYOZYAN
To the Etymology of the Names of Tigris and Euphrates Rivers 120
A. A. POGHOSYAN
The Types and Areal Distribution of Armenian Dragonrugs of «Guhar» Subtype …….....125
Q. KH. HAYRAPETYAN, S. M. GALOYAN
Creation of Interdisciplinary and Intradisciplinary Connections during the Teaching of History 134

P. A. BARSEGHYAN
Animism Remnants in Ancient Armenia 141

3. ECONOMICS

S. G. AMIRKHNANYAN, M. M. TOVMASYAN
Agricultural Development Opportunities in Connecton with the Main Problems of Field's Lendings 148
M. N. HERGNYAN, L. M. GHURSHUDYAN, G. H. HERGNYAN
The Efficiency of Interest-rate Risk Management by the Example of VTB bank (Armenia), CJSC 155
G. A. KHACHATRYAN
Tax Burden Assessment Methods, Analysis on their Advantages and Disadvantages 168
V. H. ARAKELYAN
Formation of the Models of Technical Level of Product Competitiveness 177
V. H. ARAQELYAN, A. F. MKRTCHYAN
he Actual Problems of Forming New Product Development and Commercialization Stages...188
V. H. ARAKELYAN, H. H. KHACHATRYAN, A. S. AVETISYAN
The Structure of Economic Indicators of Competitive Product 201
A. P. BAGHINYAN
Automobile Insurance in the Republic of Armenia 206
D. L. TOROSYAN
"Sevan" National Park's Opportunities as a Tool for Ecotourism Development 216
A. V. MARDOYAN
A Comparative Study of Environmental Protection and Natural Consumption Payments in the Republic of Armenia 223
A. V. MARDOYAN
Current Problems in the Mining Industry (based on the case study of "Zangezur Copper Molybdenum Enterprise" CJSC) 229
G. R. GRIGORYAN
Evaluation Methods of Technical Level of Competitiveness 237
R. M. MARTIROSYAN
Behavioral Methods for Evaluation of Technical Level of a Product 242
R. M. MARTIROSYAN
Actual Problems of Quality Cost Classification of a Product 246
M. T. MKHITARYAN
Features of Entrepreneurial Risks in Contemporary Conditions 251
M. T. MKHITARYAN
The Assessment of Factors Underlying the Formation of Entrepreneurial Risks 257
A. Z. GALSTYAN
Advantages and Disadvatages of Unconditional Basic Income 265
A. Z. GALSTYAN
Successful Experimental Implementation of Basic Income in Namibia and India 274
M. G. GHAHRAMANYAN
Modern Methods of Detection, Analysis and Conversion of Projects Requirements for Corporate Business Processes Management 281
M. G. GHAHRAMANYAN
The Use of Agile Technologies for the Management of Projects on Optimization of Corporate Business Processes 287
L. A. GHAZARYAN
Analysis of Quality Management System of Retail Trade Services 292

4. PHILOLOGY, PEDAGOGY AND PSYCHOLOGY

V. R. GRIGORYAN
Echo of the Incessant Pain 296
T. A. ASOYAN
Hovh. Zohrapyan and Regulation Issues of Western Armenian 303
N. Ќ. GHAZARYAN
The Reflection of Genocide in Charents Poems 311
A.H. ARAKELYAN
The Image of the Diary Writer in Franz Kafka's "Diaries" 328
V. L. KATVALYAN
On Issues of the Western Armenian Language 340
L. KH. GHREJYAN
Ethnographic and Folklore Culture of Nor-Bayazet in the Records of Folklorists 345
N. V. PARONYAN
The Medical Entries Borrowed from Arabic in "Jermants Mkhitarutyun" Work by Mkhitar Heratsi 357
L. A. HAYTYAN
The Psychological Narrative of Alice Monroe in the Context of Canadian Literature 364
I. V. MARTINYAN
The Issue of Comment Field Regulations of Internet Media 368
B. J. GALSTYAN, H. P. KARAGULYAN
Existencializm and US Criticism 377
A. M. IGITYAN
Shakespearean Usage of Biblical Symbols 384
A. M. IGITYAN
Shakespearean Usage of the Biblical Linguostylistic Means and their Armenian Translation 390
S. H. KARAPETYAN
Teaching English Copulative (Additive/Adjunctive) Compounds (Analytical Structures) in Comparison with Armenian 396
S. A. GRIGORYAN
Greek Loan words in Middle Armenian 402
G. A. MIRIBYAN
Peculiarities of Educational Process Organization with Refugee Children 407
A. M. MUKHSIKHACHOYAN
Literary Translation Methods of Archaisms 411
R. R. SARGSYAN
Contrast of "Masculine/Feminine" in the Nomination of Faunonyms in Russian Compared with Armenian, English and Italian (Derivative Aspect) 418
R. R. SARGSYAN
Contrastive and Typological Analysis of Ethnonyms of Russian and Armenian Languages as Linguomethodological Basis while Working out Receptive and Productive Tasks 429
A. K. BALAGOZYAN
The Rhythm of English for the Armenian Learner 436
S. A. KHACHATRYAN
Issues on Higher Education Internationalization 441
H. H. OHANYAN, A. D. SAHAKYAN
Ways to Improve the Effectiveness of Environmental Education of Junior Schoolchildren 452

A. T. MAYILYAN
Didactic Bases of Adult Education 462
T. H. KOTOLKIAN
Ways of Activating the Process of Artistic Activity among Junior Schoolchildren 470

5. LAW

S. A. KHACHATRYAN
The Mystery of Armenian Kings Tiridates I and Sanatruk 477
N. A. HAKOBYAN
The Historical Analysis of Methods Used to Fill in the Gaps in Law 495

С О Д Е Р Ж А Н И Е

Г. Г. АКОПЯН, Р. Х. АКОПЯН
Гуманизм как общий принцип права 19

1. ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

Н. А. КУТУЗЯН, А. Л. ШЕКЯН, Л. А. ШЕКЯН
Изгиб балки на упругой шероховатой полосе линейно распределенной поперечной нагрузкой при наличии осевых сжимающих сил 29
А. А. СИМОНЯН
Экологический кризис и накопление мутационного груза в генофонде 38
А. А. СИМОНЯН, М. Г. ОГАННИСЯН
Сдвиги активности НАДФ-зависимой изоцитратдегидро-геназы в тканях куриного эмбриона при гипотермии 45
Л. А. Симонян, А. С. Маргарян, А. А. Симонян, М. Г. ОГАННИСЯН
Применение здоровьесберегающих технологий в преподавании 50
К. Э. ДАНИЕЛЯН, А. А. СИМОНЯН, Л. А. Симонян
Взаимодействие пуринового и пиримидинового метаболизмов 54
Т. Г. ХАЧИКЯН, Л. Г. СТЕПАНЯН, А. С. МАМЯН, Л. Р. ГАМБАРЯН
Видовое разнообразие и количественные показатели фитопланктона рек Карчахбюр, Масрик и Варденис 58
М. Г. ОГАННИСЯН, Л. Н. АРАКЕЛЯН
Нанобиомедицина главная составная часть нанотехнологии 64
Г. А. МЕЛИКЯН
О разработке и проведении испытаний территориальных автоматизированных систем управления 69
М. А. ОВАННИСЯН
Информационные технологии в образовательном процессе, системы дистанционного обучения 75
А. К. ХУРШУДЯН
Применение нейронных сетей для кластеризации экономических объектов 81
А. К. ХУРШУДЯН, В. К. АВЕТИСЯН
Применение методов искусственного интеллекта в моделировании экономических процессов 90
М. П. АВАГЯН
Особенности деградации почв РА под воздействием кислотных осадков……..…..100
Л. А. МКРТЧЯН
О некоторых вопросах негативного влияния туризма на естественную среду 105

2. ИСТОРИЧЕСКИЕ НАУКИ

В. Г. ТУНЯН
Национальная идея в мифотворчестве 111
А. А. КАРАГЕЗЯН
К этимологии названий рек Тигр и Евфрат 120

А. А. ПОГОСЯН
Типы и ареалы подгруппы «Гоар» армянских Вишапагоргов 125
К. Х. АЙРАПЕТЯН, С. М. ГАЛОЯН
Внутрипредметные и межпредметные связи в процессе обучения истории ….....134
П.А. БАРСЕГЯН
Пережитки анимизма в древней Армении 141

3. ЭКОНОМИКА

С. Г. АМИРХАНЯН, М. М. ТОВМАСЯН
Возможности развития сельского хозяйства, связанные с основными вопросами кредитования отрасли 148
М. Н. ЕРГНЯН, Л. М. КУРШУДЯН, Г. А. ЕРГНЯН
Эффективность управления процентным риском на примере ЗАО «ВТБ - банк Армения» 155
Г. А. ХАЧАТРЯН
Методы оценки налогового бремени, анализ их преимуществ и недостатков 168
В. О. АРАКЕЛЯН
Формирование моделей технического уровня конкурентоспособности продукта 177
В. О. АРАКЕЛЯН, А. Ф. МКРТЧЯН
Современные задачи формирования этапов разработки и коммерциализации новых продуктов 188
В. О. АРАКЕЛЯН, А. А. ХАЧАТРЯН, А. С. АВЕТИСЯН
Структура экономических показателей конкурентоспособности товара 201
А. П. БАГИНЯН
Автомобильное страхование в Республике Армения 206
Д. Л. ТОРОСЯН
Возможности национального парка "Севан" как инструмента развития экотуризма 216
А. В. МАРДОЯН
Сравнительный анализ экологических и природопользовательских платежей в Республике Армения 223
А. В. МАРДОЯН
Основные проблемы недропромышленной сферы (на примере ЗАО "Зангезурский медно-молибденовый комбинат") 229
Г. Р. ГРИГОРЯН
Методы оценки технического уровня конкурентоспособности 237
Р. М. МАРТИРОСЯН
Поведенческие методы оценки технического уровня продукта 242
Р. М. МАРТИРОСЯН
Актуальные прблемы классификации затрат на обеспечение качества продукта 246
М. Т. МХИТАРЯН
Особенности возникновения предпринимательских рисков в современных условиях ...251
М. Т. МХИТАРЯН
Оценка факторов, обусловивших появление предпринимательских рисков ….....257
А. З. ГАЛСТЯН
Преимущества и недостатки базового дохода 265
А. З. ГАЛСТЯН
Рассмотрение успешных экспериментальных программ базового дохода, осуществленных в Намибии и Индии 274

М. Г. КАГРАМАНЯН
Современные методы выявления, анализа и преобразования требований проектов по управлению бизнес-процессами компании 281
М. Г. КАГРАМАНЯН
Применение гибких технологий для управления проектами по оптимизации бизнес-процессов предприятия 287
Л. А. КАЗАРЯН
Анализ системы управления качеством услуг розничной торговли 292

4. ФИЛОЛОГИЧЕСКИЕ, ПЕДАГОГИЧЕСКИЕ И ПСИХОЛОГИЧЕСКИЕ НАУКИ

В. Р. ГРИГОРЯН
Эхо несмолкаемой боли 296
Т. А. АСОЯН
Ов. Зограпян и вопросы регулирования западноармянского языка 303
Н. К. КАЗАРЯН
Отражение геноцида в поэмах Чаренца 311
А. Г. АРАКЕЛЯН
Образ дневникописца в произведении Франца Кафки «Дневники» 328
В. Л. КАТВАЛЯН
О проблемах западноармянского языка 340
Л. Х. КРЕДЖЯН
Фольклорная этнографическая культура Нор-Баязета в записях фольклористов 345
Н. В. ПАРОНЯН
Заимствованные из арабского языка медицинские термины в сочинении Мхитара Гераци «Джерманц Мхитарутюн» (утешение при лихорадках) 357
Л. А. АЙТЯН
Психологический нарратив Алис Монро в контексте канадской литературы 364
И. В. МАРТИНЯН
Проблема регулирования поля комментариев в армянском интернет-СМИ 368
Б. Ж. ГАЛСТЯН, А. П. КАРАГУЛЯН
Экзистенциализм и критика США 377
А. М. ИГИТЯН
Шекспировские применения библейских символов 384
А. М. ИГИТЯН
Шекспировские применения лингвостилистических средств и их перевод на армянских язык 390
С. О. КАРАПЕТЯН
Обучение аналитическим конструкциям английского языка с аддитивным соположением компонентов в сопоставлении с армянским языком 396
С. А. ГРИГОРЯН
Греческие заимствования в среднеармянском языке 402
Г. А. МИРИБЯН
Особенности организации образовательного процесса с детьми-беженцами 407
А. М. МУХСИХАЧОЯН
Способы передачи устаревших слов при художественном переводе.....411
Р. Р. САРКИСЯН
Оппозиция “Мужской/женский” в номинации фаунонимов в русском языке в сопоставлении с армянским, английским и итальянским (словообразовательный аспект) 418

Р. Р. САРКИСЯН
Сопоставительно-типологический анализ этнонимов русского и армянского языков как лингвометодическая основа при разработке рецептивных и продуктивных заданий 429
А. К. БАЛАГОЗЯН
Ритм в обучении английскому языку 436
С. А. ХАЧАТРЯН
Интернационализация высшего образования 441
Г. Е. ОГАНЯН, А. Д. СААКЯН
Пути повышения эффективности экологического воспитания младших школьников....452
А. Т. МАИЛЯН
Дидактические основы образования взрослых 462
Т. А КОТОЛКЯН
Пути активизации процесса художественной деятельности у учеников младших классов 470

5. ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ

С. А. ХАЧАТРЯН
Загадка армянских царей Тиридата Первого и Санатрука 477
Н. А. АКОПЯН
Исторический анализ методов дополнения пробелов права 495

ՄԱՐԴԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԿԶԲՈՒՆՔ

Հ. Հ. ՀԱԿՈԲՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ սփյուռքի նախարար,
ԳՊՀ հոգաբարձուների խորհրդի նախագահ
Ռ. Խ. ՀԱԿՈԲՅԱՆ
Իրավաբանական գիտությունների դոկտոր, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի ռեկտոր

«Հայաստանի Հանրապետությունում մարդը բարձրագույն արժեք է»[1],- հռչակում է ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածը և դրանով իսկ ապահովում մարդակենտրոն իրավական համակարգի սահմանադրական հիմքերը:

Իրավական, ժողովրդավարական, սոցիալական պետության կառուցման նպատակ որդեգրած Հայաստանի Հանրապետությունում հասարակական հարաբերությունների իրավական կարգավորման համակարգը պետք է համապատասխանի մարդասիրության սկզբունքին և համահունչ լինի համամարդկային արժեքներին՝ մարդու արժանապատվությանը, իրավունքներին և ազատություններին: Դա հաշվի առնելով՝ ՀՀ Սահմանադրության բազմաթիվ հոդվածներում ամրագրված են դրույթներ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն վերաբերում են մարդասիրությանը՝ որպես իրավունքի ընդհանուր սկզբունքի: Մարդասիրության, մարդու իրավունքների և ազատությունների սահմանադրական հիմքերն ընդլայնվեցին ՀՀ Սահմանադրության՝ 2015 թվականի դեկտեմբերի 6-ի փոփոխությունների արդյունքում:

Սահմանադրությունից բացի՝ մարդասիրության սկզբունքը տարբեր դրսևորումներով արտացոլված է իրավունքի բազմաթիվ աղբյուրներում՝ ՀՀ քրեական, քրեադատավարական, աշխատանքային և այլ օրենսգրքերում, օրենքներում, ենթաօրենսդրական ակտերում:

Իսկ ի՞նչ է մարդասիրությունը:

Ընդհանուր առմամբ մարդասիրությունը կամ հումանիզմը մարդուն բարձրացնող այն համամարդկային գաղափարների համակարգն է, որը խարսխված է մարդու ազատության, երջանկության ու արդարության իդեալների վրա և դարեր շարունակ տարբեր ձևերով ու մոտեցումներով արտահայտվել ժողովրդական

[1] Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Երևան, 2015, էջ 11-12:

բանահյուսության, դիցաբանության, արվեստի, փիլիսոփայության, գրականության մեջ[1]:

Մարդասիրությունն աստվածաշնչյան պատգամ է, բարոյագիտական աշխարհայացք, ընդգրկուն գաղափար, մարդակենտրոն վարդապետություն, նաև մշակույթ, համակեցության ընդհանուր կանոն, հանրորեն ընդունելի վարքագծի նորմ, մարդկային վեհ հատկանիշ: Այն համոզմունք է, կենսադիրքորոշում, ապրելակերպ, արժեքային համակարգ:

Փիլիսոփայական ըմբռնմամբ՝ մարդասիրությունը հայացքների համախումբ է, որն արտահայտում է հարգանք մարդու արժանապատվության և իրավունքների նկատմամբ, հոգատարություն մարդկանց բարեկեցության, նրանց համակողմանի զարգացման, սոցիալական կյանքի նպաստավոր պայմանների ստեղծման հանդեպ[2]:

Մարդասիրությունը հումանիստական բարոյականությունն է կամ բարոյագիտությունը, որ նշանակում է հավատ յուրաքանչյուր մարդկային էակի, նրա կյանքի, գոյության իմաստի, արժեքավորության նկատմամբ: Այն մարդու հանդեպ սերն է ու հանդուրժողականությունը, հոգատարությունն ու բարությունը, մարդկային կարիքները բացահայտելու, դրանք հոգալու կարողությունը:

Որպես արևմտյան փիլիսոփայության ուղղություն՝ մարդասիրությունը (հումանիզմը) ձևավորվել է Վերածննդի ժամանակաշրջանում (XV-XVI դարեր) և իր զարգացման բարձրակետին է հասել XVIII դարի լուսավորիչների՝ Ֆ. Վոլտերի, Ժ.Ժ. Ռուսոյի, Դ. Դիդրոյի, Կ. Հելվեցիուսի, Պ. Հոլբախի և այլոց աշխատություններում: Նրանք ոչ միայն կարևորում էին մարդուն և հարգանք արտահայտում մարդկային էակի նկատմամբ, այլև պահանջում նրա համար կյանքի բարենպաստ պայմաններ ստեղծել: Մարդասիրության ոգով տոգորված սոցիալ-տնտեսական, իրավաքաղաքական բնույթի պահանջներն արտացոլվել են, այսպես կոչված, բուրժուական իրավունքներում և ազատություններում, որոնք նվաճվել, ձեռք են բերվել Եվրոպայում Ռեֆորմացիայի դարաշրջանի երկարատև քաղաքացիական և կրոնական պատերազմների ընթացքում:

Մարդուն դիտելով որպես բարձրագույն արժեք՝ գերմանական դասական փիլիսոփայության հիմնադիր Էմանուել Կանտը ձևակերպել է իմպերատիվ արգելք. մարդուն երբեք չպետք է դիտել որպես սեփական նպատակների իրականացման միջոց: Մարդը ոչ թե միջոց է, այլ նպատակ[3]. ահա մարդասիրության հիմնական սկզբունքը, որը դրսևորվում է իրավունքում:

Համապատասխանաբար մարդասիրական իրավական հայեցակարգն արժևորում է մարդուն՝ որպես իրավունքի սուբյեկտի և ոչ թե օբյեկտի, ինքնին կարևորում

---

[1] Հայ ժողովրդի բնածին մարդասիրության հզոր որակները լավագույնս արտահայտվել են ‹‹Սասունցի Դավիթ›› («Սասնա ծռեր») էպոսում:

[2] Փիլիսոփայական բառարան, Երևան, 1975:

[3] Տե՛ս Кант И, Трактаты и письма, М., 1980, էջ 49:

մարդու գոյությունը, ճանաչում, երաշխավորում ու պաշտպանում մարդու կյանքի, ազատ կամքի, պատվի ու արժանապատվության, երջանկության, իր ունակությունների դրսևորման ու զարգացման, այլ բնական և պոզիտիվ իրավունքներն ու ազատությունները:

Իրավաբանական գրականության մեջ տրվել են մարդասիրության հիմնարար սկզբունքի տարբեր սահմանումներ: Վ. Դ. Պոպկովը մարդասիրության սկզբունքը բնորոշում է որպես «իրավական ձևերով մարդու՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչում, մարդկանց միջև բուն մարդկային հարաբերությունների խրախուսում»[1]: Մարդասիրությունը ենթադրում է անձի նկատմամբ պետության, հասարակության և անհատների կողմից այնպիսի վերաբերմունքի դրսևորում, որն ընդունելի է իրավունքի տեսանկյունից: Նման վերաբերմունքը հիմնվում է մարդու՝ որպես բարձրագույն արժեքի ճանաչման վրա, որն արտահայտվում է քաղաքացիներին պատկանող այնպիսի ոչ նյութական բարիքների հարգմամբ և պահպանմամբ, ինչպիսիք են կյանքը, առողջությունը, անձեռնմխելիությունը, պատիվն ու արժանապատվությունը: Միաժամանակ մարդասիրության սկզբունքը նշանակում է այս կամ այն անձի նկատմամբ վերաբերմունքի և մասնավորապես իրավական ներգործության բոլոր հնարավոր տարբերակներից առավել մեղմի ընտրություն: Այս դրույթներն էլ, մեր կարծիքով, կազմում են մարդասիրության՝ որպես հայացքների համակարգի հիմքը:

Մարդասիրության սկզբունքը նշանակում է, որ իրավական ներգործության միջոցները չպետք է նվաստացնեն անձի արժանապատվությունը, ֆիզիկական տառապանք կամ անհարկի զրկանքներ պատճառեն նրան: Մարդասիրության ընդհանուր սկզբունքի համաձայն՝ ոչ ոք չպետք է միևնույն իրավախախտման համար կրկին ենթարկվի իրավաբանական պատասխանատվության: Ելնելով մարդու արժանապատվության, իրավունքների և ազատությունների՝ որպես բարձրագույն արժեքների ճանաչման սկզբունքից՝ պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենց գործառույթներն իրականացնելիս պարտավոր են հարգել մարդուն և պոզիտիվ սահմանադրական պատասխանատվություն կրեն մարդու թե՛ միջազգային-իրավական, թե՛ ներպետական ակտերով նախատեսված իրավունքների և ազատությունների իրականացման համար[2], իսկ այդ իրավունքները ոտնահարելու դեպքում ենթարկվեն նեգատիվ իրավաբանական պատասխանատվության: «Մարդու բնական, ի ծնե տրված, անօտարելի իրավունքները կազմում են պետության իրավական համակարգի

[1] Տե՛ս Попков В. Д. Гуманизм советского права, М., 1972, էջ 5:

[2] Մարդու իրավունքների մասին մանրամասն տե՛ս Մարդու իրավունքների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության մասնակցությամբ միջազգային պայմանագրեր, Պաշտոնական հայերեն թարգմանություն, Փաստաթղթերի ժողովածու, Հ. 1, Երևան, 2001: Մարդու իրավունքների միջազգային բիլլ, Երևան, 2005: Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 10.12.1948: Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966: Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիր, 1966 և այլ ակտեր:

միջուկը... Դրանք են որոշում օրենքների իմաստը, բովանդակությունը և կիրառումը, օրենսդիր ու գործադիր իշխանության, տեղական ինքնակառավարման մարմինների գործունեությունը և ապահովվում են արդարադատությամբ»[1]:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր վճիռներում բազմիցս շեշտել է, որ «պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար»[2]:

Հանրային իշխանության՝ մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների հարգման և պաշտպանության պարտականություններն ամրագրված են Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 3-րդ հոդվածի 2-րդ մասում: Ինչպես նշված է ՀՀ Սահմանադրական դատարանի՝ «Քաղաքացի Մ. Քոչարյանի և քաղաքացի Հ. Դավթյանի դիմումների հիման վրա՝ «Սոցիալական ապահովության քարտերի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով›› կայացրած որոշման մեջ, «բարձրագույն արժեք» հասկացությունը վերացական չէ և ունի որոշակի իրավական բովանդակություն: «Բարձրագույն արժեք» նշանակում է, որ որևէ այլ արժեք, այդ թվում և՛ պետական, և՛ հանրային խնդիրների լուծմանը կոչված որևէ համակարգ, չի կարող ավելի բարձր դասվել: Սրանից էլ բխում է Սահմանադրության 3-րդ հոդվածով ամրագրված նորմը. «Պետությունը (հանրային իշխանությունը) սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող իրավունք»: Հետևաբար քննության առարկա օրենքի 11-րդ հոդվածից բխող իրավիճակը, որով քաղաքացիների որոշ կատեգորիաներ զրկվում են Սահմանադրությամբ չսահմանափակվող ճանաչված իրենց առանձին հիմնարար իրավունքների իրականացման հնարավորությունից, չի ապահովում արդարացի հավասարակշռություն հանրության ընդհանուր շահի և անձի հիմնարար իրավունքների պաշտպանության պահանջների միջև և չի բխում Սահմանադրության 3-րդ հոդվածի պահանջներից[3]: Կարծում ենք, որ մարդու հիմնարար իրավունքների և հանրության ընդհանուր շահի միջև արդարացի հավասարակշռության մասին դրույթը կազմում է մարդասիրության սկզբունքի բաղկացուցիչ մասը: Ըստ ՀՀ սահմանադրական դատարանի նշված որոշման՝ անհրաժեշտ է օրենքում հաշվի առնել մի կողմից պետության ու հանրային շահերի, մյուս կողմից՝ մարդու և քաղաքացու իրավունքների և օրինական շահերի հավասարակշռությունը՝ չստեղծելով իրավական անհստակություն կամ օրենսդրական ներքին հակասություններ[4]: ՀՀ գործող օրենսդրությունն անթույլատրելի է համարում այն անձի կողմից իրավաբանական

[1] Տե՛ս Леушин В. И. Принципы права // Теория государства и права, էջ 238:
[2] Տե՛ս Perez de Rada Cavanillez v. Spain, 28 oct. 1998; Societe anonyme “Sotiris et Nikos Kouraz ATTEE” v. Greece (16 nov. 2000), 16 feb. 2001.
[3] Տե՛ս ՍԴՈ-649 որոշում, 4.10.2006, էջ 9-10:
[4] Նույն տեղում, էջ 7:

պատասխանատվության կրումը, որը իրավախախտում չի կատարել, կամ որի արարքը կատարման պահին իրավախախտում չէր որակվում, որը մարդասիրության, ինչպես նաև օրինականության ու արդարության սկզբունքների դրսևորումներից է: Մարդասիրության սկզբունքից է բխում ՀՀ Սահմանադրության 16-րդ հոդվածը, ըստ որի՝ «Ընտանիքը՝ որպես հասարակության բնական եւ հիմնական բջիջ, բնակչության պահպանման եւ վերարտադրման հիմք, ինչպես նաեւ մայրությունը եւ մանկությունը պետության հատուկ պաշտպանության եւ հովանավորության ներքո են»: Մարդու ամենակարևոր բնական իրավունքը կյանքի իրավունքն է, ուստի ՀՀ Սահմանադրության 24-րդ հոդվածում ոչ միայն նախատեսված է, որ յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք, այլև ամրագրված է, որ ոչ ոք չի կարող կամայականորեն զրկվել կյանքից և ոչ ոք չի կարող դատապարտվել կամ ենթարկվել մահապատժի: Իրավական նորույթ է պարունակում 2015 թվականին փոփոխված Սահմանադրության 25-րդ հոդվածը, որի 3-րդ մասի համաձայն՝ ‹‹Բժշկության եւ կենսաբանության ոլորտներում մասնավորապես արգելվում են եվգենիկական փորձերը, մարդու օրգաններն ու հյուսվածքները շահույթի աղբյուր դարձնելը, մարդու վերարտադրողական կլոնավորումը››:

Նույն հոդվածի 4-րդ մասը ևս, մարդասիրության սկզբունքից ելնելով, սահմանում է, որ ոչ ոք չի կարող առանց իր ազատ և հստակ արտահայտած համաձայնության ենթարկվել գիտական, բժշկական կամ այլ փորձերի: Մարդը նախապես տեղեկացվում է նման փորձերի հնարավոր հետեւանքների մասին:

Մարդասիրության սկզբունքն արտացոլված է նաև ՀՀ Սահմանադրության 26-րդ հոդվածում, ըստ որի՝

«1. Ոչ ոք չի կարող ենթարկվել խոշտանգման, անմարդկային կամ նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի:

2. Մարմնական պատիժներն արգելվում են:

3.Ազատությունից զրկված անձինք ունեն մարդասիրական վերաբերմունքի իրավունք»:

Մարդասիրության սկզբունքին համապատասխանում են ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված մարդու անձնական (քաղաքացիական), սոցիալ-տնտեսական իրավունքները, ինչպիսիք են անձնական ազատության (27-րդ հոդված), մասնավոր և ընտանեկան կյանքի, պատվի ու բարի համբավի անձեռնմխելիության (31-րդ հոդված), բնակարանի անձեռնմխելիության (32-րդ հոդված), սոցիալական ապահովության (83-րդ հոդված), արժանապատիվ գոյության և նվազագույն աշխատավարձի (84-րդ հոդված), առողջության պահպանության (85-րդ հոդված), մարդու ազատ գործելու (39-րդ հոդված) և այլ իրավունքներ ու ազատություններ: Մարդասիրության հիմնարար դրույթից են բխում օրենքի առջև ընդհանուր հավասարության (28-րդ հոդված), խտրականության արգելքի (29-րդ հոդված), կանանց և տղամարդկանց իրավահավասարության (30-րդ հոդված) սկզբունքները, երեխայի իրավունքները (37-րդ հոդված): Կարևոր են նաև մարդու պատշաճ

իրավական պաշտպանությունը երաշխավորող արդար դատաքննության (63-րդ հոդված), իրավաբանական օգնություն ստանալու (64-րդ հոդված) իրավունքները, անմեղության կանխավարկածի (66-րդ հոդված), օրենքների և այլ իրավական ակտերի հետադարձ ուժի (73-րդ հոդված) սկզբունքները, արտաքսման կամ հանձնման (55-րդ հոդված), կրկին դատվելու արգելքները (68-րդ հոդված), համաներման (117-րդ հոդված), ներում շնորհելու (135-րդ հոդված) և բազմաթիվ այլ սահմանադրական ինստիտուտներ:

Մարդասիրության սկզբունքի դրսևորում է այն, որ պատասխանատվություն սահմանող կամ պատասխանատվությունը խստացնող օրենքը հետադարձ ուժ չունի: Այս սկզբունքը բխում է ՀՀ Սահմանադրության 73-րդ հոդվածից, ըստ որի՝ անձի իրավական վիճակը վատթարացնող օրենքները եւ այլ իրավական ակտերը հետադարձ ուժ չունեն: Իսկ անձի իրավական վիճակը բարելավող օրենքները և այլ իրավական ակտերը հետադարձ ուժ ունեն, եթե դա նախատեսված է այդ ակտերով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 72-րդ հոդվածի՝ արարքի պատժելիությունը վերացնող կամ պատիժը մեղմացնող օրենքը հետադարձ ուժ ունի:

ՀՀ Սահմանադրության հիման վրա ՀՀ քրեական օրենսգրքի 4-րդ հոդվածը, ի թիվս այլ սկզբունքների, ամրագրում է մարդասիրությունը՝ որպես քրեական օրենսդրության սկզբունք, իսկ 2-րդ հոդվածը ՀՀ քրեական օրենսգրքի խնդիր է համարում հանցավոր ոտնձգություններից մարդու և քաղաքացու իրավունքների ու ազատությունների, խաղաղության և մարդկության անվտանգության, այլ կարևոր արժեքների պաշտպանությունը:

ՀՀ քրեական օրենսգրքի 11-րդ հոդվածը, նվիրված մարդասիրության սկզբունքին, սահմանում է, որ

‹‹1. Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրքը ծառայում է մարդու ֆիզիկական, հոգեկան, նյութական, էկոլոգիական և այլ անվտանգությունն ապահովելուն:

2. Ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի››:

Մարդասիրությունից է բխում քրեական օրենքի հետադարձ ուժի սկզբունքը, ըստ որի՝

1. Արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

2. Արարքի հանցավորությունը սահմանող, պատիժը խստացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ վատթարացնող օրենքը հետադարձ ուժ չունի:

3.Պատասխանատվությունը մասնակիորեն մեղմացնող և միաժամանակ պատասխանատվությունը մասնակիորեն խստացնող օրենքը հետադարձ ուժ ունի միայն այն մասով, որը մեղմացնում է պատասխանատվությունը (13-րդ հոդված):

Պատասխանատվություն սահմանող կամ խստացնող օրենքը հետադարձ ուժով օժտելը անթույլատրելի է, քանի որ և՛ արգելքների, և՛ արգելքները խախտելու համար կիրառվող սանկցիաների սոցիալական նշանակությունն այն է, որ ներգործի վարքագծի այս կամ այն ձևի ընտրության վրա (եթե անձը իմանար, որ տվյալ արարքի համար նախատեսված է պատասխանատվություն ու պատիժ, ապա հնարավոր է, որ այդ արարքը չկատարեր):

Ըստ ՀՀ քրեական օրենսգրքի 16-րդ հոդվածի 1-ին մասի՝ այլ պետության տարածքում հանցանք կատարած Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն այլ պետության չեն հանձնվում: Իսկ նույն հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս հանցանք կատարած և Հայաստանի Հանրապետությունում գտնվող օտարերկրյա քաղաքացիները և քաղաքացիություն չունեցող անձինք, ՀՀ միջազգային պայմանագրին համապատասխան, կարող են հանձնվել օտարերկրյա պետությանը՝ քրեական պատասխանատվության ենթարկելու կամ պատիժը կրելու համար: Սակայն մարդասիրության սկզբունքից ելնելով՝ նույն հոդվածի 3-րդ մասն ամրագրում է, որ «Սույն հոդվածի երկրորդ մասում նշված անձինք օտարերկրյա պետությանը չեն հանձնվում, եթե հիմնավոր պատճառներ կան ենթադրելու, որ հանձնումը պահանջվել է նրանց ռասայական, կրոնական, ազգային, որոշակի սոցիալական խմբի պատկանելության կամ քաղաքական կարծիքի պատճառով հետաքննության կամ պատժի կիրառման համար:

Ոչ ոք չպետք է հանձնվի օտարերկրյա պետությանը, որտեղ լուրջ վտանգ կա, որ նրան կարող են սպառնալ խոշտանգումներ կամ անմարդկային կամ նվաստացուցիչ վերաբերմունք կամ պատիժ»:

Մարդասիրության սկզբունքի դրսևորում է այն, որ անմեղսունակ անձի նկատմամբ կիրառում են ոչ թե քրեական պատասխանատվություն ու պատիժ, այլ կարող են կիրառվել բժշկական բնույթի հարկադրանքի միջոցներ (25-րդ հոդված), իսկ սահմանափակ մեղսունակությունը՝ որպես մեղմացնող հանգամանք, հաշվի է առնվում պատիժ նշանակելիս և կարող է հիմք դառնալ պատժի հետ միաժամանակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու համար (26-րդ հոդվածի 2-րդ մաս):

Մարդասիրական մոտեցում է այն, որ հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում (36-րդ հոդվածի 2-րդ մաս):

ՀՀ քրեական օրենսգրքի 8-րդ գլուխը, մարդասիրության սկզբունքին համապատասխան, նախատեսում է արարքի հանցավորությունը, հետևաբար նաև

պատժելիությունը բացառող հետևյալ հանգամանքները՝ անհրաժեշտ պաշտպանությունը (42-րդ հոդված), հանցանք կատարած անձին բռնելիս վնաս պատճառելը (43-րդ հոդված), ծայրահեղ անհրաժեշտությունը (44-րդ հոդված), ֆիզիկական կամ հոգեկան հարկադրանքը (45-րդ հոդված), հիմնավորված ռիսկը (46-րդ հոդված), հրաման կամ կարգադրություն կատարելը (47-րդ հոդված): Մարդասիրության սկզբունքից ելնելով՝ քրեական պատիժների համակարգից ոչ միայն հանվեց բացառիկ պատժամիջոցը՝ մահապատիժը՝ այն փոխարինելով ցմահ ազատազրկմամբ (49-րդ հոդված), այլև նախատեսվեց, որ ցմահ ազատազրկման չեն կարող դատապարտվել հանցանքը կատարելիս տասնութ տարին չլրացած անձինք, հանցանք կատարելու կամ դատավճիռ կայացնելու պահին հղի վիճակում գտնվող կանայք (60-րդ հոդվածի 2-րդ մաս): Մարդասիրության սկզբունքի ցայտուն արտահայտությունն է քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածում պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանքների նախատեսումը, ինչպես նաև սահմանումը, որ պատիժ նշանակելիս դատարանը կարող է հաշվի առնել նաև քրեական օրենսգրքում չնախատեսված այլ մեղմացուցիչ հանգամանքներ, սակայն չի կարող հաշվի առնել քրեական օրենսգրքում չնախատեսված ծանրացնող հանգամանքներ (63-րդ հոդվածի 3-րդ մաս):

Մարդասիրության սկզբունքի դրսևորումներ են բացառիկ հանգամանքներում օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու՝ դատարանի իրավասությունը, պատիժը պայմանականորեն չկիրառելը, քրեական պատասխանատվությունից ազատելը գործուն զղջալու, տուժողի հետ հաշտվելու, իրադրության փոփոխման դեպքերում, վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով, պատիժը կրելուց պայմանական վաղաժամկետ ազատելը, պատժի չկրած մասն ավելի մեղմ պատժատեսակով փոխարինելը, հղի կանանց կամ մինչև երեք տարեկան երեխա ունեցող անձանց պատիժը կրելը հետաձգելը կամ պատժից ազատելը, ինչպես նաև պատժից ազատելը ծանր հիվանդության, արտակարգ հանգամանքների, մեղադրական դատավճռի վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով, համաներումը, ներումը, դատվածությունը մարելը կամ հանելը, պրոբացիոն ծառայությունը, այլընտրանքային խափանման միջոցները և այլ ինստիտուտներ:

Մարդասիրության սկզբունքին համաձայն՝ ՀՀ քրեական օրենսգրքի 5-րդ բաժնում (14-րդ գլուխ) սահմանվել են անչափահասների քրեական պատասխանատվության ու պատժի առանձնահատկությունները, նախատեսվել նրանց նկատմամբ կիրառվող դաստիարակչական բնույթի հարկադրանքի միջոցներ: ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասը միտված է հանցակազմեր և սանկցիաներ նախատեսելու ճանապարհով մարդու, ընտանիքի, հասարակության, պետության, մարդկության համար կարևոր արժեքների պաշտպանությանը:

Մարդասիրության հիմնարար գաղափարից ելնելով՝ ՀՀ քրեական դատավարության օրենսգիրքը, ի թիվս այլ ելակետային դրույթների, որպես քրեական

դատավարության սկզբունք՝ նախատեսել է նաև անձի իրավունքները, ազատությունները և արժանապատվությունը հարգելը, ըստ որի՝

- քրեական դատավարության ընթացքում ոչ ոք չպետք է ենթարկվի իր արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, պահվի ստորացուցիչ պայմաններում, անձին չի կարելի հարկադրել մասնակցելու իր արժանապատվությունը նվաստացնող դատավարական գործողությունների,
- յուրաքանչյուր ոք իրավունք ունի օրենքով չարգելված բոլոր միջոցներով պաշտպանելու իր իրավունքները և ազատությունները (9-րդ հոդված):

Մարդասիրության սկզբունքն ամրագրված է ՀՀ քրեակատարողական օրենսգրքի 6-րդ հոդվածում, ինչպես նաև արտահայտված է ՀՀ սոցիալական ապահովության, կենսաթոշակային, առողջապահական, կրթական, աշխատանքային, ընտանեկան և այլ ոլորտների իրավական կարգավորման կառուցակարգերում:

Այսպիսով, մարդասիրության գաղափարը՝ որպես ելակետային դրույթ, իր նորմատիվ ամրագրումն է ստացել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունում, տարբեր օրենսդրական ակտերում, քանի որ այն հասարակական կյանքի նորմատիվ իրավակարգավորման բոլոր ոլորտներն ընդգրկող և բացառություններ չընդունող հիմնարար սկզբունք է: Կարևոր է այդ սկզբունքի լիարժեք իրագործումը, մարդու՝ որպես բարձրագույն արժեքի հուսալի իրավական պաշտպանությունը այն հստակ գիտակցմամբ, որ մարդասիրական հարացույցով առաջնորդվող հասարակությունն ու պետությունն են ապահովում առաջընթաց և զարգացում:

Բանալի բառեր՝ *Սահմանադրություն, սահմանադրական արժեքներ, մարդասիրություն, իրավունքի սկզբունք, մարդասիրական իրավական հայեցակարգ, մարդու իրավունքներ և ազատություններ, իրավական ներգործություն:*

HUMANISM AS A GENERAL PRINCIPLE OF LAW

H. H. HAKOBYAN
Doctor of Law, Professor
Minister of RA Diaspora, Chairperson of GSU's Board of Trustees
R. KH. HAKOBYAN
Doctor of Law, Associate Professor
Rector of Gavar State University

The article dwells upon humanism as a general principle of Law and comprises citations and analyses from the Armenian Constitution, as well as other sources of Law such as RA Criminal Code, Criminal Procedure Code and other normative legal acts.

The article states that legal concept of humanism estimates a person as the highest value, as a subject and not the object of Law, attaches importance to a person's existence, recognizes, guarantees and protects human rights for life, free will, honor and dignity, happiness, manifestation and development of his abilities, as well as other natural and positive rights and freedoms. There are various definitions of principle of humanism in the legal literature. According to authors, the principle of humanism does not only imply the human's legal protection but also the selection of the mildest way among other possible ways of legal impact on any person.

ГУМАНИЗМ КАК ОБЩИЙ ПРИНЦИП ПРАВА

Г. Г. АКОПЯН
Доктор юридических наук, профессор,
Министр диаспоры РА
Председатель совета попечителей ГГУ
Р. Х. АКОПЯН
Доктор юридических наук, доцент
Ректор ГГУ

Статья посвящена гуманизму как общему принципу права и содержит анализ и ссылки на нормы Конституции РА, Уголовный и Уголовно-процессуальный кодексы, а также другие нормативно-правовые акты.

В статье отмечается, что гуманистическая правовая концепция признаёт человека как высшую ценность, как субъект, а не обьект права, гарантирует и защищает жизнь, честь и достоинство человека, его право на счастье, самовыражение, развитие способностей, на другие естественные и позитивные права.

В юридической литературе встречается множество определений гуманизма как общего принципа права. По мнению авторов, гуманизм права означает не только юридическую защиту человека, но и применение более мягкого средства правового воздействия из всех возможных.

1.	ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ NATURAL SCIENCIES ЕСТЕСТВЕННЫЕ НАУКИ

ИЗГИБ БАЛКИ НА УПРУГОЙ ШЕРОХОВАТОЙ ПОЛОСЕ ЛИНЕЙНО РАСПРЕДЕЛЕННОЙ ПОПЕРЕЧНОЙ НАГРУЗКОЙ ПРИ НАЛИЧИИ ОСЕВЫХ СЖИМАЮЩИХ СИЛ

Н. А. КУТУЗЯН
Кандидат физико-математических наук, доцент
Проректор Гаварского государственного университета
А. Л. ШЕКЯН
Кандидат физико-математических наук, доцент
Лектор Гаварского государственного университета
Л. А. ШЕКЯН
Член корр. Инж. Акад. Армении, доктор физико-математических наук, профессор
Лектор Гаварского государственного университета

Основываясь на предложенной С.П.Тимошенко [1] обобщенной модели изгиба балки, когда помимо поперечных сил, продольные сжимающие или растягивающие осевые силы также влияют на прогибы балки, рассмотрена плоская задача контактного взаимодействия балки и упругой шероховатой полосы, другой край которой защемлена.


Задача приведена к решению нелинейного интегрального уравнения при дополнительных условиях. Эффективное решение задачи получено по разработанной в [2] методике, основанной на теории нелинейных интегральных уравнений типа Гаммерштейна [3] и принципа сжимающих отображений [4]. Аналогичные задачи рассмотрены в [5-7].

1. Постановка задачи. Пусть балка длины $2a$, высоты h, модулем упругости E и коэффициентом Пуассона υ, под действием линейно распределенных вертикальных сил интенсивности $q(x)$ $(-a \le x \le a)$ с граничными значениями $q(-a)=q_-$, $q(a)=q_+$ и осевых сжимающих сил T изгибаясь вдавливается в упругую полосу $\Omega=\{x\in(-\infty;\infty), z\in[0;h_1]\}$ толщиной h_1, с модулем упругости E_1 и коэффициентом Пуассона υ_1, нижний край которой $z=h_1$ жестко защемлена (фиг.1).

2. Вывод интегрального уравнения рассматриваемой контактной задачи.

Сначала рассмотрим упругое равновесие балки под действием. Дифференциальное уравнение изгиба балки получается из общего дифференциального уравнения изгиба прямоугольной пластинки при совместном воздействии поперечных сил $q(x)$, контактных давлений $p(x)$ а также осевых сжимающих сил T в серединной плоскости пластинки, находящейся в условиях плоской деформации с базовой плоскостью Oxz ([1], стр.422, формула 217, $N_x = -T$, $w = \mathrm{v}$, $N_y = N_{xy} = 0$). Оно имеет вид

$$D\frac{d^4\mathrm{v}}{dx^4} + T\frac{d^2\mathrm{v}}{dx^2} = p(x) - q(x),\ (-a < x < a) \quad (1)$$



Фиг. 1. Схема нагружения балки.

где $D = Eh^3/12\left(1-\upsilon^2\right)$ – жесткость балки на изгиб, а $q(x)$ линейная функция вида

$$q(x) = \frac{q_+ + q_-}{2} + \frac{q_+ - q_-}{2a}x \quad (-a \le x \le a). \quad (2)$$

Функции $\mathrm{v}(x)$, $M(x)$ и $Q(x)$ связаны между собой соотношениями

$$M(x) = D\frac{d^2\mathrm{v}}{dx^2},\ Q(x) = D\frac{d^3\mathrm{v}}{dx^3}. \quad (3)$$

Дифференциальное уравнение (1) рассматривается при следующих граничных условиях:

$$M(x)\big|_{x=\pm a} = 0 \ \Rightarrow\ \left.\frac{d^2\mathrm{v}}{dx^2}\right|_{x=\pm a} = 0, \quad (4)$$

указывающих на то, что в концевых точках балки $x = \pm a$ изгибающие моменты $M(x)$ отсутствуют. При этом условия равновесия балки имеют вид

$$\int_{-a}^{a}\left[p(x) - q(x)\right]dx = 0\ ,\ \int_{-a}^{a} x\left[p(x) - q(x)\right]dx = 0\ . \quad (5)$$

Общее решение дифференциального уравнения (1) относительно $d^2\mathrm{v}/dx^2$ можно представить в виде [6]

$$\frac{d^2\mathrm{v}}{dx^2} = C_1\cos kx + C_2\sin kx + \frac{1}{2kD}\int_{-a}^{a}\sin\left(k|x-s|\right)\left[p(s)-q(s)\right]ds\,,\ \left(k=\sqrt{T/D}\right) \quad (6)$$

где C_1 и C_2-постоянные интегрирования.

На основании (6), из граничных условий (4) получим относительно C_1 и C_2 систему линейных алгебраических уравнений:

$$\begin{cases} C_1\cos ka - C_2\sin ka = -\dfrac{1}{2kD}\displaystyle\int_{-a}^{a}\sin\left[k(a+s)\right]\cdot\left[p(s)-q(s)\right]ds, \\ C_1\cos ka + C_2\sin ka = -\dfrac{1}{2kD}\displaystyle\int_{-a}^{a}\sin\left[k(a-s)\right]\cdot\left[p(s)-q(s)\right]ds. \end{cases} \quad (7)$$

При $0<k<\pi/2a$ главный определитель этой системы $\Delta=\sin 2ka\neq 0$, следовательно система (7) имеет единственное решение

$$C_1 = -\frac{tg(ka)}{2kD}\int_{-a}^{a}\cos(ks)\left[p(s)-q(s)\right]ds\,,\ C_2 = \frac{ctg(ka)}{2kD}\int_{-a}^{a}\sin(ks)\left[p(s)-q(s)\right]ds. \quad (8)$$

Тогда формула (6) принимает вид

$$\frac{d^2\mathrm{v}}{dx^2} = \frac{1}{kD\sin 2ka}\int_{-a}^{a}\left(\cos^2 ka\sin kx\sin ks - \sin^2 ka\cos kx\cos ks\right)\left[p(s)-q(s)\right]ds +$$

$$+\frac{1}{2kD}\int_{-a}^{a}\sin\left(k|x-s|\right)\left[p(s)-q(s)\right]ds\,. \quad (9)$$

При $k\geq\pi/2a$, как показывает исследование [7], балка теряет устойчивость, а решение дифференциального уравнения (1) для частного случая $k=0$ получается из формулы (9) путем предельного перехода $k\to 0$, которое с учетом условий равновесия (5) принимает вид

The all genetic studies are vitally important and reflect the main mechanisms and functions of the enzymes, serving as a natural gens knockdown and super activity helpful results.

In patients with PRPS superactivity, Roessler et al. [12] and Becker et al. [13] identified mutations in the PRPS1 gene. All patients except 1 had hyperuricemia, neurodevelopmental abnormalities, and sensorineural deafness; the other patient had only hyperuricemia and gout. Functional expression studies of all mutations showed that enzyme over activity was due to alteration of allosteric feedback mechanisms.

Thus, abnormalities in synthesis of purines might influence on the catabolism of them and induce hyperuricemia and gout.


Laboratory assessments of PRPS activity in the brains of the intact animals revealed that in the presence of ribose-5-phosphate the activity of the enzyme is elevated whereas in the presence of GTP the activity of the enzyme is decreased (GTP is standing as a inhibitor for the enzyme). Allopurinol in accordance to our results was diminishing the activity of PRPS. Thus, the inhibition of purine catabolism was vividly interfering on the activity of purines synthesis.

Interestingly, that excessive amount of GTP was activating and not inhibiting XO. We can suggest that PRPS inhibition doesn't decrease the XO activity or the inhibitors nature has an impact on the process of XO inhibition and consequently on the inhibition of purine catabolism.

Conclusion

Our experiments proved that inhibition of purine catabolism might interfere with synthesis and inhibits this process, whereas utility of one of the inhibitors of regulative enzyme of purine synthesis - PRPS, initiates activation of XO, consequently, purine catabolism (**scheme 1**).

Scheme 1. Schematic representation of the purine – pyrimidine interaction.



Key words: *purine, pyrimidine, catabolism, metabolism, xanthine oxidase, phosphoribosylpyrophosphate synthetase.*

References

[1] N. Zollnerd Purine and pyrimidine metabolism, Proc. Nuti. Soc. , 1982, N 41: P. 329-342.

[2] G.B. Elion, W.N. Kelley, J.M. Weiner Handbook of ExperimentalPharmacology, Berlin: Springer-Verlag: 1978.

[3] W.N. Kelley, T.D. Beardmore Allopurinol: Alteration in Pyrimidine Metabolism in Man, Science, 1970, N 169 (3943): P. 388-390.

[4] W.N. Kelley, I.H. Fox, T.D. Beardmore, J.C. Meade. Allopurinol and oxipurinol: alteration of purine and pyrimidine metabolism in cell culture, Ann N Y Acad Sci, 1971, N 179: P. 588-595.

[5] S.A. Gyongyan, T.G. Manucharyan, K.E. Danielyan, G.A. Kevorkyan, S.G Chailyan. Xanthine oxidoreductase is a key enzyme of purine catabolism regulation, Electronic Journal of Natural Science, 2013, N 2(21): P. 17-21.

[6] K.E. Danielyan. Dependence of Cells Survival from Xanthine Oxidase and Dihydopyrimidine Dehydrogenase Correlative Activities in Human Brain Derived Cell Culture, Central Nervous System Agents in Medicinal Chemistry, 2013, N 13(2): P. 108-113.

[7] B.J. Roessler, T.D. Palella, S. Heidler, M.A. Becker Identification of distinct PRPS1 mutations in two patients with X-linked phosphoribosylpyrophosphate synthetase superactivity. (Abstract), Clin. Res. , 1991, N 39: P. 267A.

[8] M.A. Becker Hyperuricemia and Gout. In: Scriver, C. R.; Beaudet, A. L.; Sly, W. S.; Valle, D. (eds.): The Metabolic and Molecular Bases of Inherited Disease, 8th ed. ed., New York: McGraw-Hill, 2001.

[9] A.P. Brouwer, De H. van Bokhoven, S.B. Nabuurs, W.F. Arts, J. Christodoulou, J. Duley. PRPS1 mutations: four distinct syndromes and potential treatment, Am. J. Hum. Genet., 2010, N 86(4): P. 506-518.

[10] Becker M.A., Losman M.J., Kim M. Mechanisms of accelerated purine nucleotide synthesis in human fibroblasts with superactive phosphoribosylpyrophosphate synthetases, J Biol Chem., 1987, N 262(12): P. 5596-5602.

[11] M.A. Becker, M. Kim Regulation of purine synthesis de novo in human fibroblasts by purine nucleotides and phosphoribosylpyrophosphate, J Biol Chem., 1987, N 262(30): P. 2514531-2514537.

[12]. B.J. Roessler, J.M. Nosal, P.R. Smith, S.A. Heidler, T.D. Palella, R.L. Switzer, M.A. Becker. Human X-linked phosphoribosylpyrophosphate synthetase superactivity is associated with distinct point mutations in the PRPS1 gene, J. Biol. Chem., 1993, N 268: P. 26476-26481.

[13] M.A. Becker, P.R. Smith, W. Taylor, R. Mustafi, R.L. Switzer. The genetic and functional basis of purine nucleotide feedback-resistant phosphoribosylpyrophosphate synthetase superactivity, J. Clin. Invest., 1995, N 96: P. 2133-2141.

ՊՈՒՐԻՆԱՅԻՆ ԵՎ ՊԻՐԻՄԻԴԻՆԱՅԻՆ ՓՈԽԱՆԱԿՈՒՄՆԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ

Ք. Է. ԴԱՆԻԵԼՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու,
ավագ գիտ. աշխատող
Ա. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ
ՀՀ գիտության վաստակավոր գործիչ, պրոֆեսոր,
ԳՊՀ կենսաբանության, էկոլոգիայի և
առողջ ապրելակերպի ամբիոնի վարիչ
Լ. Ա. ՍԻՄՈՆՅԱՆ
Բժշկական գիտությունների թեկնածու, դոցենտ

Մասնագիտական գրականության մեջ ցույց է տրվել պուրինների և պիրիմիդինների փոխանակումների փոխազդեցությունը: Պուրինային իզոմերները կարող են վերածվել տարբեր նուկլեոտիդների, որոնք ազդում են պիրիմիդինների փոխանակության վրա:

Մեր տվյալներով՝ պուրինների կատաբոլիզմի ճնշումը կարող է փոխազդել սինթեզի հետ և ճնշել այդ գործընթացը այն դեպքում, երբ պուրինային սինթեզի ֆոսֆոռիբոզիլպիրոֆոսֆատսինթազի՝ կարգավորող ֆերմենտի ակտիվության ճնշումը խթանում է քսանտին օքսիդազի կատալիտիկ ֆունկցիան և հետևաբար՝ պուրինային կատաբոլիզմը:

ВЗАИМОДЕЙСТВИЕ ПУРИНОВОГО И ПИРИМИДИНОВОГО МЕТАБОЛИЗМОВ

К. Э. ДАНИЕЛЯН
Кандидат биологических наук, старший научный сотрудник
А. А. СИМОНЯН
Заслуженный деятель науки РА. профессор,
заведующий кафедрой биологии,
экологии и здорового образа жизни ГГУ
Л. А. СИМОНЯН
Кандидат медицинских наук, доцент

В статье было рассмотрено взаимодействие пуринового и пиримидинового метаболизма. Пуриновые изомеры могут преобразовываться в различные нуклеотиды, которые влияют на пиримидиновый метаболизм.

Полученные нами данные показывают, что подавление пуринового катаболизма может влиять на синтез и подавить его, в то время, как ингибирование регуляторного фермента синтеза пуринов - фосфорибозилпирофосфат синтазы, инициирует активность ксантиноксидазы, а следовательно - катаболизм пуринов.

ԿԱՐՃԱՂԲՅՈՒՐ, ՄԱՍՐԻԿ ԵՎ ՎԱՐԴԵՆԻՍ ԳԵՏԵՐԻ ՖԻՏՈՊԼԱՆԿՏՈՆԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՔԱՆԱԿԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ

Թ. Գ. ԽԱՉԻԿՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ բնագիտության լաբորատորիայի վարիչ,
ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի գիտաշխատող
Լ. Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի ավագ գիտաշխատող
Ա. Ս. ՄԱՄՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի գիտաշխատող
Լ. Ռ. ՀԱՄԲԱՐՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի հիդրոէկոլոգիայի բաժնի վարիչ, ԵՊՀ Էկոլոգիայի և բնության պահպանության ամբիոնի դոցենտ

Մասրիկ, Կարճաղբյուր և Վարդենիս գետերը պատկանում են Սևանա լճի ջրահավաք ավազանին: Մասրիկը Սևանա լճի ամենամեծ մակերեսով ջրահավաք ավազան ունեցող գետն է (685 կմ^2), որի երկարությունը 45 կմ է, միջին տարեկան ծախսը՝ 3.97 մ^3/վրկ: Գետը սկիզբ է առնում 2880մ բարձրությունից: Կարճաղբյուրը (Մաքենիս) սկիզբ է առնում Վարդենիսի լեռնավահանի հյուսիսային լանջերից՝ 3325մ բարձրությունից: Երկարությունը 26.3 կմ է, ջրահավաք ավազանը՝ 123 կմ^2: Վարդենիս գետի երկարությունը 28 կմ է, ջրահավաք ավազանի մակերեսը՝ 116 կմ^2: Գետը սկիզբ է առնում Վարդենիսի հրաբխային լեռնավահանի մերձգագաթային մասի հյուսիսային լանջերից՝ 3215մ բարձրությունից, գետը սելավաբեր է [1]:

2016թ. գարնան և ամռան ամիսներին նշված գետերում իրականացվել են ֆիտոպլանկտոնային համակեցության հետազոտություններ: Նմուշառում է կատարվել գետերի վերին, միջին և ստորին հոսանքներից: Փորձանմուշների նախնական և հետագա լաբորատոր մշակումներն իրականացվել են ջրակենսաբանության մեջ ընդունված մեթոդներով [2]: Ուսումնասիրվել են ֆիտոպլանկտոնի տեսակային կազմն [3, 5, 7, 8, 10] ու քանակական ցուցանիշները (թվաքանակ, կենսազանգված): Ստացված արդյունքների հիման վրա կենսաինդիկացիոն (սապրոբայնության ինդեքս) մեթոդով գնահատվել է գետերի ջրերում օրգանական աղտոտվածության մակարդակը [4, 6, 9]:

Ուսումնասիրությունների արդյունքում գետերում արձանագրվել է ջրիմուռների չորս բաժինների (Bacillariophyta, Cyanophyta, Chlorophyta, Euglenophyta) 74 տեսակ:


Դոմինանտ են եղել դիատոմային ջրիմուռները (Bacillariophyta)՝ 56 տեսակ: Առանձին գետերում դիատոմայինները կազմել են ֆիտոպլանկտոնի տեսակային բազմազանության 75-90%-ը: Կապտականաչ ջրիմուռներից արձանագրվել է 9, իսկ կանաչներից՝ 7 տեսակ: Համեմատաբար աղքատ է եղել էվգլենային ջրիմուռների տեսակային կազմը. գրանցվել է երկու տեսակ՝ *Trachelomonas volvocina* և *Trachelomonas sp.*: Առավել հարուստ տեսակային բազմազանություն դիտվել է Nitzschia (8), Navicula (6), Gomphonema (6), Cymbella (5) և Pinnularia (5) ցեղերում: Հանդիպման բարձր հաճախականությամբ արձանագրվել են *Amphora ovalis, Achnanthes taeniata, Cymbella ventricosa, Cocconeis placentula, Ceratoneis arcus, Fragilaria capucina, Gomphonema olivaceum, Aphanothece clathrata* և *Microcystis aeruginosa* տեսակներ: Արձանագրված տեսակների շուրջ 81%–ը օրգանական աղտոտվածության կենսաինդիկատորներ են [4], որոնց 23%-ը կազմում են β-մեզոսապրոբները:

Մասրիկ – Մասրիկ գետում գարնանը ֆիտոպլանկտոնային համակեցության հետազոտությունների արդյունքում գրանցվել է ջրիմուռների 32 տեսակ: Ֆիտոպլանկտոնի միջին թվաքանակը կազմել է 386 600 բջ/լ, իսկ կենսազանգվածը՝ 1.35 գ/մ^3: Ֆիտոպլանկտոնային համակեցության հիմքը կազմել են դիատոմային և կապտականաչ ջրիմուռները (նկ.1): Ըստ կենսազանգվածի՝ դիատոմային ջրիմուռները գերակայել են բոլոր հոսանքներում, ըստ թվաքանակի՝ միայն միջին հոսանքում: Արձանագրվել են *Ceratoneis arcus, Cymbella ventricosa, Diatoma vulgare, Fragilaria capucina* և այլ տեսակներ: Վերին և ստորին հոսանքներում թվաքանակով գերակայել են կապտականաչ ջրիմուռները, որոնց խմբում շատ են *Aphanothece clathrata* և *Microcystis aeruginosa* տեսակները: Սապրոբայնության ինդեքսի արժեքները, հաշվարկված ըստ ինդիկատոր տեսակների որակական և քանակական ցուցանիշների, տատանվել են 1.37-1.76 սահմաններում: Այս տիրույթը համապատասխանում է օրգանական աղտոտվածության α-o-ից β-մեզոսապրոբ մակարդակներին [4]: Ամռանը Մասրիկ գետի ֆիտոպլանկտոնային համակեցությունում դիտվել է ջրիմուռների տեսակային բազմազանության համալրում՝ 39 տեսակ: Ֆիտոպլանկտոնի միջին քանակական ցուցանիշները կազմել են 320 000 բջ/լ (թվաքանակ) և 1.9 գ/մ^3 (կենսազանգված): Գետի բոլոր հոսանքներում գերակայել են դիատոմային ջրիմուռները: Արձանագրվել են *Achnanthes taeniata, Nitzschia acicularis, N. dissipata, Ceratoneis arcus, Cymbella ventricosa, C. prostrata* և այլ տեսակներ: Համակեցությունում զգալի տեղ են գրավել նաև կապտականաչ, կանաչ և էվգլենային ջրիմուռները: Կանաչ ջրիմուռները զարգացել են գետի միայն միջին հոսանքում, որին հավանաբար նպաստել են ջրի դանդաղ հոսքն ու բարձր ջերմաստիճանը (19.3^{0}C): Արձանագրվել են *Selenastrum gracile* և *Closterium acutum* տեսակները: Վերին և միջին հոսանքներում գարնան համեմատությամբ սապրոբայնության ինդեքսի արժեքների նկատելի փոփոխություններ չեն դիտվել,

մինչդեռ ստորին հոսանքում գրանցվել է ինդեքսի որոշակի նվազում՝ 1.63: Պահպանվել է օրգանական աղտոտվածության միևնույն մակարդակը:

Կարճաղբյուր - Կարճաղբյուր գետում գարնանն արձանագրվել է ջրիմուռների 27 տեսակ: Ֆիտոպլանկտոնի միջին թվաքանակը կազմել է 329 300 բջ/լ, իսկ կենսազանգվածը՝ 1.3 գ/մ^3 (նկ.1): Տեսակային բազմազանությամբ և քանակական ցուցանիշներով գերակայել են դիատոմային ջրիմուռները՝ բացառությամբ ստորին հոսանքի, որտեղ թվաքանակով գերակայել են կապտականաչ ջրիմուռները: Վերին և միջին հոսանքներում արձանագրվել են նաև կանաչ ջրիմուռներ: Հոսանքն ի վար նկատվել է համակեցության սապրոբայնության ինդեքսի աստիճանական բարձրացում՝ 1.49-1.77: Վերջինս համապատասխանում է օրգանական աղտոտվածության α-o-ից β-մեզոսապրոբ մակարդակներին: Ամռանը գրանցվել է ջրիմուռների 26 տեսակ: Ֆիտոպլանկտոնի միջին թվաքանակը կազմել է 570 600 բջ/լ, կենսազանգվածը՝ 1.6 գ/մ^3: Գարնան համեմատ գետի բոլոր հոսանքներում դիտվել է դիատոմային ջրիմուռների մասնաբաժնի նվազում, դրան զուգահեռ՝ կանաչ և կապտականաչ ջրիմուռների ավելացում (նկ.1), որը հավանաբար կապված է եղել ջերմաստիճանի բարձրացման և հոսքի արագության փոքրացման հետ: Առավել ցայտուն դա արտահայտվել է միջին հոսանքում, որտեղ ջրի ջերմաստիճանը հասել է 26^0 C-ի և ֆիտոպլանկտոնի քանակական հիմքը կազմել են հիմնականում կապտականաչ (ընդհանուր թվաքանակի 72%-ը, կենսազանգվածի՝ 27%-ը) և կանաչ (ընդհանուր թվաքանակի 13%-ը, կենսազանգվածի՝ 66%-ը) ջրիմուռները: Գերակայել են *Pandorina morum, Aphanothece clathrata* և *Microcystis aeruginosa* տեսակները, որոնք էլ օրգանական աղտոտվածության β-մեզոսապրոբ կենսաինդիկատորներ են[4]: Ըստ սապրոբայնության ինդեքսի (1.94)՝ առավել բարձր օրգանական աղտոտվածություն դիտվել է գետի միջին հոսանքում, որը համապատասխանում է օրգանական աղտոտվածության β-մեզոսապրոբ մակարդակին:

Վարդենիս- Գարնանը Վարդենիս գետում գրանցվել է ջրիմուռների 27 տեսակ: Ֆիտոպլանկտոնի միջին քանակական ցուցանիշները կազմել են 346 600 բջ/լ (թվաքանակ) և 1.5 գ/մ^3 (կենսազանգված): Գետի բոլոր հոսանքներում ջրի հոսքը եղել է բավականին արագ (1.5-2մ/վ), մեծ մասամբ գերակայել են դիատոմային ջրիմուռները՝ բացառությամբ վերին հոսանքի, որտեղ թվաքանակով գերակայել են կապտականաչ ջրիմուռները: Համեմատաբար բարձր քանակական ցուցանիշներ դիատոմային ջրիմուռներից ունեցել են *Ceratoneis arcus, Diatoma hieamale, Gomphonema olivaceum, Fragilaria capucina* և *Cymbella ventricosa* տեսակները: Կապտականաչ ջրիմուռները ենթադոմինանտ են եղել, ըստ թվաքանակի, գետի միջին և ստորին, ըստ կենսազանգվածի՝ վերին և ստորին հոսանքներում: Միջին հոսանքում, ըստ կենսազանգվածի, ենթադոմինանտ են եղել կանաչ ջրիմուռները՝ կազմելով համակեցության ընդհանուր կենսազանգվածի 21%-ը:



Նկար 1. Ուսումնասիրված գետերի ֆիտոպլանկտոնի թվաքանակի (1) և կենսազանգվածի (2) միջին ցուցանիշները (Գ-գարուն,Ա-ամառ)

Արձանագրվել է *Ulothrix sp.* տեսակը: Սապրոբայնության ինդեքսի արժեքները տատանվել են 1.1-1.68 սահմաններում՝ համապատասխանելով օրգանական աղտոտվածության α-o-ից β-մեզոսապրոբ մակարդակներին: Ամռանը Վարդենիս գետի ֆիտոպլանկտոնային համակեցության տեսակային կազմը եղել է համեմատաբար աղքատ, գերակայել են կրկին դիատոմային ջրիմուռները: Գարնանն արձանագրված որոշ տեսակներ դուրս են մղվել համակեցությունից՝ իրենց տեղը զիջելով ջրիմուռների այլ տեսակների: Ֆիտոպլանկտոնային համակեցության միջին թվաքանակը կազմել է 373 000 բջ/լ, կենսազանգվածը՝ 1.9 գ/մ³: Գետի բոլոր հոսանքներում դոմինանտ են եղել դիատոմային, ենթադոմինանտ՝ կապտականաչ ջրիմուռները: Գերակայել է *Ceratoneis arcus* տեսակը: Սապրոբայնության ինդեքսի արժեքները տատանվել են 1.3-1.7 սահմաններում, պահպանվել է օրգանական աղտոտվածության միևնույն մակարդակը:

Այսպիսով, ուսումնասիրված գետերի ֆիտոպլանկտոնային համակեցությունում տեսակային բազմազանությամբ գերակայել են դիատոմային, քանակական ցուցանիշներով՝ դիատոմային և կապտականաչ ջրիմուռները: Դիատոմային ջրիմուռների գերակայումը բնորոշ է լեռնային գետերի ֆիտոպլանկտոնին: Ըստ սապրոբայնության ինդեքսի արժեքների՝ հետազոտված գետերում օրգանական աղտոտվածությունը համապատասխանել է α-o-ից β-մեզոսապրոբ մակարդակներին:

Բանալի բառեր՝ *ֆիտոպլանկտոնի տեսակային կազմ, քանակական ցուցանիշներ, օրգանական աղտոտվածություն, սապրոբայնություն, ջրիմուռ:*

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի բնաշխարհ: Հայկական հանրագիտարան, Եր., 2006, 691 էջ:
2. Абакумов В. А. Руководство по методам гидробиологического анализа поверхностных вод и донных отложений // Гидрометеоиздат, Л., 1983, с. 78- 86.
3. Баринова С. С., Медведева Л. А. Атлас водорослей - индикаторов сапробности (российский Дальний Восток) // Владивосток, Дальнаука, 1996, 364 с.
4. Баринова С. С., Медведева Л. А., Анисимова О. В. Биоразнообразие водорослей-индикаторов окружающей среды // Тель-Авив, 2006, 498 с.
5. Забелина М. М., Киселев И. А, Прошкина-Лавренко Л. И. Определитель пресноводных водорослей СССР // Советская Наука, Москва, Т. 6, 1954, 315 с.
6. Макрушин А. В. Библиографический указатель по теме “Биологический анализ качества вод” с приложением списка видов-индикаторов // Л; 1974, 60 с.
7. Прошкина-Лавренко А. И., Макарова И. В. Водоросли планктона Каспийского моря // Наука, Л., 1986, 291 с.
8. Царенко П. М. Краткий определитель хлорококковых водорослей Украинской ССР // “Наукова думка”, Киев, 1990, 206 с.
9. Sladecek V. System of water quality from the biological point of view // Arch. Hydrobiol. Beiheft Ergebnisse Limnol, 1973, N 7. p. 1-218.
10. Swale E. M. Phytoplankton of two English rivers // J. Ecol., 1969, V.57, N 1, p. 1-23.

SPECIES DIVERSITY AND QUANTITATIVE INDICATORS OF PHYTOPLANKTON IN KARCHAXBIUR, MASRIK AND VARDENIS RIVERS

T. G. KHACHIKYAN
PhD, Head of Laboratory of Natural sciences GSU,
Scientific researcher of the Institute of Hydroecology and Ichthyology
L. G. STEPANYAN
PhD, senior researcher of the Institute of Hydroecology and Ichthyology
A. S. MAMYAN
PhD, scientific researcher of the Institute of Hydroecology and Ichthyology
L. R. HAMBARYAN
PhD, Head of Laboratory of the Hydroecology of the Institute of Hydroecology and Ichthyology,
Associate Professor of Department of Ecology and Nature protection YSU

A study of qualitative and quantitative indicators of phytoplankton of Masrik, Karchaxbiur and Vardenis rivers was carried out. According to indicators of saprobic indices, the level of organic pollution was determined.

ВИДОВОЕ РАЗНООБРАЗИЕ И КОЛИЧЕСТВЕННЫЕ ПОКАЗАТЕЛИ ФИТОПЛАНКТОНА РЕК КАРЧАХБЮР, МАСРИК И ВАРДЕНИС

Т. Г. ХАЧИКЯН
Кандидат биологических наук,
Заведующая лабораторией естествознания ГГУ
Научный сотрудник института Гидроэкологии и ихтиологии НАН РА
Л. Г. СТЕПАНЯН
Кандидат биологических наук,
Старший научный сотрудник института Гидроэкологии и ихтиологии НАН РА
А. С. МАМЯН
Кандидат биологических наук,
Научный сотрудник института Гидроэкологии и ихтиологии НАН РА
Л. Р. ГАМБАРЯН
Кандидат биологических наук,
Заведующая отдела Гидроэкологии института, доцент кафедры Экологии и охраны природы ЕГУ
Гидроэкологии и ихтиологии НАН РА

Проводились исследования количественных и качественных показателей фитопланктона рек Масрик, Карчахбюр и Варденис. По показателям индекса сапробности был определен уровень органического загрязнения рек.

ՆԱՆՈԿԵՆՍԱԲԺՇԿՈՒԹՅՈՒՆԸ ՆԱՆՈՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ԲԱՂԱԴՐԻՉ

Մ. Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԳՊՀ կենսաբանության, էկոլոգիայի և առողջ ապրելակերպի ամբիոնի լաբորանտ, դասախոս
Լ. Ն. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Կենսաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ Հ. Բունիաթյանի անվան կենսաքիմիայի ինստիտուտի ավագ գիտաշխատող

Կենսաբանության արդի ժամանակաշրջանը նշանավորված է նանոտեխնոլոգիայի և մոլեկուլաբջջային կենսաբանության նվաճումներով՝ ակնհայտ կապ հաստատելով կենդանի և անկենդան բնության միջև:

Հայտնի է, որ կենդանի բջջի բոլոր համակարգերի գործունեությունն ու ակտիվությունն ապահովում են բնական նանոկառույցները՝ ԴՆԹ-ի (ԴՆԹ-ի մոլեկուլի լայնությունը 2,5 նմ է) տեղեկատվական միավորները, ռիբոսոմները, բջջային ազդանշաններ փոխադրող միջնորդանյութերը և այլն:

Նանոմասնիկները գերփոքր (1-100 նմ) մասնիկներ են, որոնք կազմված են ոչ մեծ թվով ատոմներից: Ներկայումս անհնար է պատկերացնել տեխնիկայի և բժշկության զարգացումն առանց նանոմասնիկների: Նանոկենսաբժշկությունը նանոտեխնոլոգիայի բժշկական կիրառությունն է: Այն զբաղվում է մոլեկուլային մակարդակում մարդու և ընդհանրապես կենդանի օրգանիզմի կենսաբանական համակարգերի հսկման, վերականգնման, ղեկավարման և պաշտպանության հիմնախնդիրներով: Այս ամենին օգնում են հասնել տարատեսակ նանոկառուցվածքներն ու նանոսարքերը: Վերջիններս ունեն երկու կարևոր հատկություններ, որոնք թույլ են տալիս դրանք կիրառել բժշկության մեջ: Առաջին՝ լույսով գրգռելիս նանոմասնիկները լուսարձակում են, երկրորդ՝ մակերեսի և ծավալի մեծ հարաբերակցությունը հնարավորություն է տալիս բազմաթիվ ֆունկցիոնալ խմբեր կցել նանոմասնիկներին, որոնք կարող են օրգանիզմում գտնել և կապվել թիրախային (օրինակ՝ ուռուցքային) բջիջների հետ: Նանոկենսաբժշկության մեջ կիրառվում են տարբեր տիպի և ձևի նանոնյութեր՝ քվանտային կետեր, նանոպատյան, դենդրիմեր, ֆուլերեն, նանոխողովակ, պոլիմերային նանոմասնիկ: Սրանցից յուրաքանչյուրն ունի իր նշանակությունը: Օրինակ՝ տարատեսակ վերքերի բուժումը նանոբյուրեղական արծաթով, մարմնում քաղցկեղային բջիջների դիրքի և քանակի որոշումը քվանտային կետերի միջոցով, նանոմասնիկների միջոցով քիմիաթերապիայի դեղորայքի նպատակային առաքումը դեպի քաղցկեղային բջիջներ, քաղցկեղային բջիջների ոչնչացումը նանոպատյանների միջոցով՝ չվնասելով հարակից առողջ բջիջները, նանոխողովակների միջոցով ոսկրային նոր կա-

ռուցվածքի փոխպատվաստման եղանակով կոտրված ոսկորի վերականգնում, ախտահարված բջիջների ճշգրիտ ախտորոշում և բուժում նանոմասնիկների և նանոսարքերի միջոցով և այլն:

Ներկայումս ստացվել են ածխածնային նանոխողովակներ, որոնք իրենց ամրության և յուրահատուկ էլեկտրական հատկությունների շնորհիվ կիրառվում են բժշկության մեջ որպես պատվաստանյութ, դեղորայքի և այլ մոլեկուլների կրող: Օրինակ՝ ածխածնի նանոխողովակի վրա աճեցվում է ԴՆԹ-ի մենաշերտ և ներմուծվում մարմնի մեջ: Այսպիսի նանոխողովակները հանդիսանում են զգայարաններ-հաղորդիչներ, որոնք գտնվում են բջջի ներսում: Դրանց միջոցով հնարավոր է հատնաբերել ԴՆԹ-ն վնասող մոլեկուլներ:

Այս տեխնոլոգիայի հիմքում ածխածնային նանոխողովակների ֆլուորեսցենտային հատկությունն է: Նանոխողովակները մոտակա ինֆրակարմիր տիրույթում արձակում են էլեկտրամագնիսական ճառագայթներ: Այստեղ խիստ կարևոր է այն հանգամանքը, որ նանոմասնիկը «փաթեթավորված» է օրգանիզմի համար ընդունելի, համատեղելի կենսապոլիմերով, ուստի հարակից հյուսվածքների համար անվտանգ է: Վնասված բջիջներում տեղի են ունենում փոխազդեցություններ, դրանց արդյունքում ԴՆԹ-ի կառուցվածքը խախտվում է, որի հետևանքով նանոխողովակների ֆլուորեսցենտման ինտենսիվությունը կամ արձակվող ալիքի երկարությունը փոխվում է: Արձանագրված փոփոխությունների շնորհիվ ճշգրիտ հայտնաբերվում են վնասվածքներ առաջացնող միացությունները: Այս մեթոդը շատ մեծ նշանակություն ունի ուռուցքաբանության ոլորտում, քանի որ քիմիաթերապիայի դեղամիջոցները հաճախ վնասում են նաև նորմալ բջիջների ԴՆԹ-ն և առաջացնում անցանկալի հետևանքներ:

Ժամանակակից նանոբժշկության մեջ օգտագործվող նանոտեխնոլոգիաների միջոցով մոտ ապագայում հնարավոր կլինի քիմիաթերապևտիկ դեղամիջոցներն ուղղակիորեն ներմուծել ուռուցքային բջիջների մեջ՝ նվազեցնելով առողջ բջիջների վնասումը:

Դեղորայքի նպատակային առաքումը հյուսվածքներ իրականացվում է հետևյալ կերպ. դեղորայքը լցվում է նանոմասնիկի կամ ֆուլերենի (փակ, սնամեջ, գնդաձև նանոչափ մասնիկներ, որոնց մակերևույթը կազմված է գագաթներում ածխածնի ատոմներ պարունակող կանոնավոր վեցանկյուններից և հնգանկյուններից) մեջ, որին կցվում է հակամարմին: Վերջինս հայտնաբերում է հիվանդության հակագենը և կպչում դրան: Հայտնի է, որ յուրաքանչյուր վարակ, մանրէ և հիվանդություն ունի իր համապատասխան հակագենը: Հիմք ընդունելով այս հանգամանքը՝ օրգանիզմ ներմուծված նանոմասնիկին կցված հակամարմինը հայտնաբերում է հիվանդ օրգանը: Նանոմասնիկից կամ ֆուլերենից դեղորայքը լցվում է միայն անհրաժեշտ հյուսվածքների վրա՝ չվնասելով առողջները: Ուռուցքային բջիջների ոչնչացումը հնարավոր է նաև նույն մեթոդով դրանց մեջ ներմուծված նանոպատյանի միջոցով: Վերջինս ինֆրակարմիր լույսով լուսավորվելուց հետո

տաքանում է, անջատված ջերմությունը ոչնչացնում է հիվանդ բջիջները՝ չվնասելով առողջ բջիջները: Օգտագործվում են նաև ֆոտոսենսիբիլիզատներ, հատկապես պորֆիրիններ և դրանց ածանցյալները, որոնք կուտակվում են վնասված գենային ինֆորմացիայով նորագոյացությունների բջիջներում և իրականացնում ուռուցքի ընտրողական ոչնչացում: Երբ կատարվում է ֆոտոսենսիբիլիզատորի ակտիվացում ճառագայթիչի օգնությամբ, նրա մոլեկուլները սկսում են ինտենսիվ կլանել լուսային էներգիան: Գրգռված վիճակում ֆոտոսենսիբիլիզատորը շատ ակտիվ է և փոխազդում է թթվածնի հետ, առաջանում է «սինգլետ» ատոմային թթվածին, որն իր հերթին օժտված է բջջաթունավոր հատկություններով: Քանի որ ֆոտոսենսիբիլիզատորը սելեկտիվ ձևով կուտակվում է ուռուցքում, ապա տվյալ ֆոտոդինամիկ գործընթացը հանգեցնում է այն սնող արյունատար անոթների քայքայմանը, իսկ հետագայում՝ նաև ուռուցքի մեռուկին: Որպես արդյունք՝ զարգանում է վնասված հյուսվածքների ուժեղ այտուց՝ նրանց հետագա ոչնչացմամբ և օրգանիզմից մահացած բջիջների հեռացմամբ:

Ժամանակակից նանոկենսաբժշկության մեջ խիստ կարևոր է նանոռոբոտների դերը՝ բջջի նորոգման համար նախատեսված հատուկ նանոչափ գործիքներ, որոնք մարդու օրգանիզմում փնտրում, գտնում և վերացնում են հյուսվածքների կամ օրգանների ախտահարումները, նմանակում տարբեր բջիջների գործընթացները: Արյան և ավշային համակարգերում, ներքին օրգաններում շրջանառելով՝ բժշկական նանոռոբոտներն ունակ են ախտորոշել հիվանդություններ, առաքել դեղամիջոցներ, անցկացնել գերնուրբ վիրահատություններ: Օրինակ՝ կլոտոցիտը, որն արհեստական թրոմբոցիտ է, նույնիսկ ընդարձակ արյունահոսությունների դեպքում կարող է ապահովել արյան լիարժեք մակարդում 1 վայրկյանի ընթացքում, որը մոտ 100-1000 անգամ գերազանցում է մարդու արյան նորմալ մակարդման արագությունը:

Կլոտոցիտը 2-4 մկմ չափերով գնդաձև նանոռոբոտ է՝ կառուցված սպիտակուցային հիմքի վրա: Կլոտոցիտի ներսում գտնվում է ադամանդից, ցելյուլոզից կամ մետաքսից ստացված խիտ փաթաթված մանրաթելի զանգված: Արհեստական թրոմբոցիտն օրգանիզմում սնվում է գլյուկոզի օքսիդացման հետևանքով առաջացող էներգիայով, կառավարվում է համակարգչի միջոցով: Համապատասխան հրահանգ ստանալով՝ արյան մեջ ներարկված կլոտոցիտն անմիջապես մոտենում է արյունահոսության տեղին և դուրս նետում իր մանրաթելերը: Վերջիններս արյան պլազմայի ջրալույծ միջավայրում բացվում և առաջացնում են թաղանթ, որն արյան անոթում առաջացնում է խցանում՝ դադարեցնելով արյունահոսությունը:

Նշված բոլոր մեթոդներն ուղղված են նանոտեխնոլոգիաների միջոցով բժշկության զարգացմանը, որը նպատակ ունի մարդու օրգանիզմը զերծ պահել տարաբնույթ ախտաբանություններից, իսկ արդեն դրանց առկայության դեպքում հնարավորինս արագ և անվնաս իրականացնել դրանց բուժմանը:

Բանալի բառեր՝ *նանոկենսաբժշկություն, նանոմասնիկներ, քաղցկեղային բջիջներ, թրոմբոցիտ, պլազմա, նանոռոբոտ, կլուտոցիտ, պլազմա:*

Օգտագործված գրականություն

1. Гюлханданян А. Г., Фотофизические свойства порфиринов и их медико-биологическая активность // Автореферат канд. диссерт., Ереван, 2016.
2. Gyulkhandanyan A. G., Zakoyan A. A., Sargsyan H. H., Ghazaryan R. K., Sheyranyan M. A., Gyulkhandanyan G. V. Complexation of 19 porphyrins with nanoparticles of zeolite. // Proc. of SPIE, 2015; Vol. 9519, p. 95190H-1 - 95190H-7. 15:
3. Gyulkhandanyan A. G. Zeolite nanoparticles – nanocontainers of porphyrins. // Biol. Journal of Armenia. 2015; 67(2), p.90-92. 16:
4. Пархоц М. В., Лепешкевич С. В., Сташевский А. С., Джагаров Б. М., Саргсян А. О., Казарян Р. К., Гюльханданян А. Г., Гюльханданян Г. В., Фотосенсибилизированное образование синглетного кислорода нанокомпозитами “наноцеолит - порфирин” в водных растворах // V Конгресс физиков Беларуси. Сборник научных трудов, Минск, Беларусь, 27-30 октября 2015, с.176-177.
5. Սաղյան Ա. Կենսատեխնոլոգիան՝ դեղագործությանը // Գիտության աշխարհում, N 4, 2015, 38:
6. Բոյաջյան Ա. Նանոկենսաբանությունը և նանոբժշկությունը՝ որպես նանոտեխնոլոգիայի կարևորագույն բաղադրիչներ // Գիտության աշխարհում, N 4, 2012, 40:

NANOBIOMEDICINE IS THE MAIN COMPONENT OF NANOTECHNOLOGY

M. H. HOVHANNISYAN
Lab-assistant of GSU Chair of Biology, Ecology and Healthy Lifestyle, Lecturer
L. N. ARAKELYAN
Doctor of Biology, Associate Professor, GSU Professor, Senior Scientist, H. Buniatyan Institute of Biochemistry, NAS RA

Modern studies conducted in the field of nanobiology are mainly aimed at the purposeful introduction of nanoparticles into medicine and pharmaceutics. Due to their small size, nanoparticles easily penetrate into biological cells. Modern methods of nanotechnology will allow the introduction of chemotherapeutic drugs directly into tumor cells and thereby reduce the damage to healthy cells.

НАНОБИОМЕДИЦИНА ГЛАВНАЯ СОСТАВНАЯ ЧАСТЬ НАНОТЕХНОЛОГИИ

М. Г. ОГАННИСЯН
Лаборант кафедры биологии, экологии и здорового образа жизни ГГУ, преподаватель
Л. Н. АРАКЕЛЯН
Кандидат биологических наук, доцент, профессор ГГУ, Научный сотрудник Института биохимии им. Г. Буниатяна, НАН РА

Современные исследования, проводимые в области нанобиологии, в основном направлены на целенапраленное внедрение наночастиц в медицину и фармацевтику. Благодаря маленьким размерам, наночастицы легко проникают в биологические клетки. Современные методы нанотехнологий позволят вводить химиотерапевтические препараты непосредственно в опухолевые клетки и тем самым уменьшить повреждение здоровых клеток.

ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ՓՈՐՁԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԱՆՑԿԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Հ. Ա. ՄԵԼԻՔՅԱՆ

Տեխնիկական գիտությունների թեկնածու, դոցենտ, ԳՊՀ պրոֆեսոր, ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի վարիչ

Ժամանակակից հաշվողական տեխնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների և տնտեսամաթեմատիկական մեթոդների վրա հիմնված կառավարման ավտոմատացված համակարգերը (ԿԱՀ) երևան են եկել 20-րդ դարի 60-ական թվականներին և արագորեն լայն տարածում գտել ամբողջ աշխարհում՝ ընդգրկելով տնտեսության և մարդկային գործունեության համարյա բոլոր բնագավառները:

Ժամանակակից արդյունաբերական և գիտատեխնիկական համալիրների կառավարումը, որոնց աշխատանքին մասնակցում են տասնյակ հազարավոր մարդիկ և օգտագործվում են հսկայական չափերի նյութեր, էներգիա և այլ ռեսուրսներ, շատ բարդ խնդիր է:

Ակադեմիկոս Վ. Մ. Գլուշկովը մտցրել է, այսպես կոչված, «տեղեկատվական պատնեշների» գաղափարը [1], որոնք ծագում են կառավարման գործընթացների բարդացման ժամանակ: Այդ գաղափարի իմաստն այն է, որ առաջին տեղեկատվական պատնեշի ժամանակ անհնար է գործընթացի հետագա կառավարումը մեկ մարդու կողմից, իսկ երկրորդի ժամանակ՝ արտադրությանը մասնակցող բոլոր մարդկանց կողմից միասին վերցրած: Հաշվարկները ցույց են տալիս, որ զարգացած երկրների տնտեսություններն արդեն անցել են երկրորդ տեղեկատվական պատնեշը:

Մարդկային հասարակության զարգացման ընթացքում մշտապես կատարելագործվել են կառավարման մեթոդները: Կառավարման կատարելագործման անհրաժեշտությունը հանգեցրեց կառավարման հատուկ գիտության՝ կիբեռնետիկայի, ինչպես նաև մաթեմատիկական նոր գիտաճյուղերի, ինչպիսիք են «Խաղերի տեսությունը», «Գործողությունների հետազոտությունը», «Զանգվածային սպասարկման տեսությունը», «Մաթեմատիկական ծրագրավորումը», երևան գալուն: Այդ գիտաճյուղերը հնարավորություն են տալիս կառավարման շատ խնդիրներ լուծել խիստ քանակական մեթոդներով: Իսկ հաշվողական տեխնիկայի ստեղծումը թույլ տվեց լուծել մեծ չափայնության շատ խնդիրներ, որոնք սովորական («ձեռքի») մեթոդներով լուծելը գործնականում անհնարին է: Կառավարման մեթոդները առավել զարգանում և կատարելագործվում են ավտոմատ և ավտոմատացված համալիրների ու համակարգերի նախագծման, ստեղծման և շահագործման գործընթացում:

Դիտարկվում է վարչական կառավարման տարածքային հիերարխիկ ավտոմատացված համակարգ (ՏԿԱՀ), որի օբյեկտները զինված են տեղեկատվության ընդունման, հաղորդման, պահելու և արտապատկերման ծրագրատեխնիկական միջոցներով: Տեղեկատվության փոխանակումը նրա օբյեկտների միջև իրականացվում է տեղեկատվության փոխանակման համակարգի (ՏՓՀ) միջոցով:

ՏԿԱՀ-ի օբյեկտները հիերարխիայի տվյալ մակարդակին համապատասխան քանակով աշխատանքային տեղեր ունեցող տեղային հաշվողական ցանցեր են, որոնք ՏՓՀ-ի միջոցով միավորված են մեկ ընդհանուր տարածքային համակարգի մեջ:

Ավտոմատացման միջոցների համալիրների տեսակետից ՏԿԱՀ-ի օբյեկտները կարող են տարբերվել աշխատանքային տեղերի քանակով, համակարգիչների բնութագրերով, ԻՓՀ-ի կապուղիների քանակով, ծրագրային ապահովման բաղադրամասերով և այլն:

Լուծվող նպատակային խնդիրների տեսակետից ՏԿԱՀ-ի բոլոր մակարդակների օբյեկտները կատարում են հիմնականում նույն գործառույթները.

- ձևայնացված և չձևայնացված զանազան հաղորդագրությունների ձևավորում, հաղորդում, ընդունում, մշակում, պահում և արտապատկերում,

- համակարգում փոխանցվող, ընդունվող և օբյեկտներում ծնվող բոլոր հաղորդագրությունների ժամանակագրական կարգով գրանցում և փաստագրում,

- օբյեկտների տեղեկատվական բազաների վարում,

- օբյեկտների օպերատորների՝ տեղեկատվություն ստանալու և զանազան տեղեկատվական - հաշվողական խնդիրներ լուծելու մասին հարցումների սպասարկում և այլն:

ՏԿԱՀ-ի օբյեկտների համար որպես տեղեկատվության աղբյուրներ ծառայում են օպերատորների աշխատանքային տեղերը և ՏՓՀ-ի կապուղիները: Տարբեր աղբյուրներից տվյալ օբյեկտ մտնող տեղեկատվությունը, ըստ գործառական նշանակության, կարելի է բաժանել երկու հիմնական խմբի.

- հաղորդագրություններ, որոնցով փոխհաղորդակցվում են համակարգի օբյեկտները միմյանց հետ,

- հարցումներ, որոնցով տվյալ օբյեկտի օպերատորները դիմում են համակարգին՝ տեղեկատվություն ստանալու կամ զանազան տեղեկատվական – հաշվողական խնդիրներ լուծելու համար:

Ձևայնացված հաղորդագրությունների տեսքով ՏԿԱՀ-ում կարող են փոխանցվել.

- հրահանգներ, հրամաններ, կարգադրություններ (ՀՐՀ), որոնք տալիս են վերադաս օբյեկտները իրենց ենթականերին՝ նրանց կողմից այս կամ այն աշխատանքները կատարելու համար,

- հաստատումներ (ՀՍՏ), որոնք տալիս են ենթակա օբյեկտները վերադասներին՝ ՀՐՀ ստանալու մասին,

- զեկուցագրեր (ԶԿՑ), որոնք տալիս են ենթակա օբյեկտները իրենց վերադասներին իրենց վիճակի, կատարվող աշխատանքների ընթացքի և արդյունքների մասին:

Չձևայնացված հաղորդագրությունների (ՉՁՀ) տեսքով ՏԿԱՀ-ում կարող են փոխանցվել ազատ բովանդակության և չափսերի զանազան տեքստեր՝ նամակներ, զեկուցումներ, տեղեկատվական տարբեր բնույթի զանգվածներ:

Համակարգում տրվող և ստացվող հաղորդագրություններում պարունակվում են այն բոլոր տվյալները, որոնք անհրաժեշտ են օբյեկտների տեղեկատվական մոդելները և տվյալների բազաները ստեղծելու, պահպանելու և օգտագործելու համար:

ՏԿԱՀ-ի տիպի համակարգերին յուրահատուկ են հետևյալ հիմնական նպատակային խնդիրները.

- տվյալ օբյեկտի աշխատանքային տեղերում ձևավորված հաղորդագրության ընդունում, մշակում և փոխանցում ՏՓՀ-ին՝ հաղորդագրության մեջ նշված օբյեկտներին հասցնելու համար,

- ՏՓՀ-ի կապուղիներով եկած հաղորդագրությունների ընդունում, մշակում և արտապատկերում օբյեկտի արտապատկերման սարքերի վրա,

- տվյալ օբյեկտի օպերատորների՝ տեղեկատվություն ստանալու կամ զանազան տեղեկատվական - հաշվողական խնդիրներ լուծելու հարցումների սպասարկում,

- տվյալ օբյեկտում շրջապտտվող ամբողջ տեղեկատվության գրանցում, փաստագրում, արխիվացում և այլն:

Սույն աշխատանքում ներկայացված են հեղինակի՝ որպես նկարագրված տիպի կոնկրետ համակարգերի մշակման ու ներդրման աշխատանքների ղեկավարներից մեկի տեսակետերը այդպիսի համակարգերի տիպային կառուցվածքների ստեղծման և փորձարկումների անցկացման վերաբերյալ:

ՏԿԱՀ-ի մշակման հիմքում դրվում է նրա արտաքին նկարագրությունը՝ որպես պատվիրատուի կողմից մշակված և կատարողի հետ համաձայնեցված «տեխնիկական առաջադրանք» (ՏԱ) (նկար 1): Ընդ որում, ՏԱ-ի մշակումը և համաձայնեցումը կրկնվող գործընթաց է, որը կարող է մեծ համակարգերի համար տևել բավական երկար: Այդ գործընթացում կատարողը կարող է, անհրաժեշտության դեպքում, մշակել և պատվիրատուին ներկայացնել հակընդդեմ տեխնիկական առաջարկություն համակարգի կառուցվածքային ու գործառութային առանձնահատկությունների, ժամանակահավանականային պարամետրերի և տեխնիկատնտեսական հիմնավորումների վերաբերյալ: Նշենք, որ այստեղ խոսքը վերաբերում է փորձանախագծային աշխատանքներով մշակվող համակարգերին:


Համակարգի ստեղծման առաջին քայլը պետք է լինի մշակման միջավայրի կամ, այսպես կոչված, «Գլխավոր նախագծողի փորձատեղի» (ԳՆՓ) ստեղծումը՝ որպես ՏԿԱՀ-ի տարբեր մակարդակների տիպային օբյեկտների կիսաբնօրինականացված մոդելների ամբողջություն: ԳՆՓ-ի օբյեկտների մոդելները իրական

օբյեկտներից կարող են տարբերվել համակարգչային տեխնիկական սարքերով, օպերատորների աշխատանքային տեղերի քանակով, կապուղիների բնույթով և այլն: ԳՆՓ-ն պետք է պարունակի նաև ծրագրային և ինֆորմացիոն ապահովումների մշակման համար անհրաժեշտ համակարգչային, հեռահաղորդակցության, ծրագրային և լեզվագրական բոլոր միջոցները: Անհրաժեշտ է նշել, որ ԳՆՓ-ի գոյաձևը ունի դինամիկ կառուցվածք, որը ճշգրտվում է համակարգի մշակման միջանկյալ նախագծային լուծումներով:

Այնուհետև սկսվում են համակարգի նախագծման ու մշակման ստանդարտ փուլերը. ուրվագծային նախագիծ (անհրաժեշտության դեպքում), տեխնիկական և աշխատանքային նախագծեր, որոնց արդյունքում մշակվում է համակարգի փորձնական նմուշը: Նախագծման բոլոր փուլերում Պատվիրատուն իրականացնում է կատարվող աշխատանքների պարբերական ստուգումներ:

ՏԿԱՀ-ի տիպի համակարգերի ստեղծման ժամանակահատվածի զգալի մասը (40%) [2] զբաղեցնում են նրա փորձարկումները, որոնք բաժանվում են երկու հիմնական խմբի. գլխավոր նախագծողի (լաբորատոր) և պատվիրատուի (միացյալ) փորձարկումներ: Փորձարկումները անցկացվում են համապատասխան մարմնի ստեղծած հանձնաժողովով՝ օգտագործելով կատարողի մշակած մեթոդիկաները: Փորձարկումների արդյունքում ստեղծվում է նկատված թերությունների վերացման և կատարված առաջարկությունների իրականացման միջոցառումների պլան՝ կոնկրետ ժամկետներով և կատարողներով: Միջոցառումների պլանը կատարվելուց հետո համակարգի փորձնական նմուշը ներդրվում է պատվիրատուի օբյեկտներում՝ իրական պայմաններում և իրական ելման տվյալներով միացյալ փորձարկումների շարունակման համար: Այս փուլում նկատված թերությունները վերացնելուց հետո համակարգի փորձնական նմուշը ներդրվում է փորձնական շահագործման:

Վերջում ավելացնենք, որ մեկ հոդվածի սահմաններում հնարավոր չէ ՏԿԱՀ-ի մշակման և փորձարկումների անցկացման ամբողջ մեթոդոլոգիան սպառիչ ներկայացնել այն դեպքում, երբ նրա յուրաքանչյուր քայլը կարող է լինել առանձին հետազոտության նյութ:



Նկար 1 - ՏԿՀՀ-ի մշակման և փորձարկումների ընդհանրացված սխեման

Բանալի բառեր՝ *Կառավարման տարածքային հիերարխիկ համակարգեր, տեղեկատվության փոխանցման համակարգեր, ավտոմատացման միջոցների համալիրներ, ձևայնացված և չձևայնացված հաղորդագրություններ, համակարգի կառուցքավորում, համակարգի փորձնական նմուշ, համակարգի փորձարկումներ, միջոցառումների պլան, համակարգի փորձնական շահագործում:*

Օգտագործված գրականություն

1. Глушков В.М., Введение в АСУ, Киев, Техника, 1972.
2. Мамиконов А.Г., Основы проектирования АСУ, Учебник для вузов, М., Высшая школа, 1981.
3. Մելիքյան Հ.Ա., Ավետիսյան Ռ.Ա., Մարկոսյան Ա.Ա. -Կառավարման ավտոմատացված համակարգեր, Ե., «Պոլիտեխնիկ» 2009թ.

ON DEVELOPMENT AND TESTING OF SPATIAL AUTOMATED SYSTEMS MANAGEMENT

H. A. MELIKYAN
PhD in of Technical Sciences,
Associate Head of the Chair of Informatics and Mathematical Sciences

Issues of development and implementation of various types of experimental tests of automated sample management systems are discussed in the work. Generalized scheme of creation stages and operation of such systems is worked out.

О РАЗРАБОТКЕ И ПРОВЕДЕНИИ ИСПЫТАНИЙ ТЕРРИТОРИАЛЬНЫХ АВТОМАТИЗИРОВАННЫХ СИСТЕМ УПРАВЛЕНИЯ

Г. А. МЕЛИКЯН
Кандидат технических наук, доцент
Заведующий кафедрой информатики и физико-математических дисциплин

Рассматриваются вопросы создания типовой территориальной иерархической системы управления специального назначения и особенности ее испытания и поставки на опытную эксплуатацию у потребителя. Приведена обобщенная схема этапов построения и испытаний таких систем.

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ. ՀԵՌԱՎԱՐ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Մ. Ա. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ
ԳՊՀ ՏՏ բաժնի ծրագրավորող

Ցանցային և տեղեկատվական տեխնոլոգիաների սրընթաց զարգացումը նոր հեռանկարներ բացեց նաև կրթության ոլորտում: Վստահորեն կարելի է պնդել, որ ժամանակակից գիտությունն առանց համակարգչային տեխնիկայի և տեխնոլոգիաների անհնար է պատկերացնել: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառմամբ սկսվեց մի գործընթաց, որի միջոցով հնարավոր դարձավ արագ և որակյալ կերպով մշակել և տեղափոխել ցանկացած տիպի տեղեկատվություն: Փոխանցման միջոց դարձավ համացանցը: Տեղեկատվական տեխնոլոգիաները լուծեցին բազմաթիվ խնդիրներ՝ կապված տեղեկատվության մշակման, պահպանման, տարածման և կիրառման հարցերի հետ: Ցանցային և տեղեկատվական տեխնոլոգիաների մուտքը գիտություն և ուսումնական գործընթաց իր հետ բերեց այնպիսի նոր իրողություններ, ինչպիսիք են էլեկտրոնային և հեռավար ուսուցումները: Համացանցի շնորհիվ ուսումնական հաստատություններում հեռավար ուսուցումը դարձավ ուսուցման հիմնական բաղադրիչներից մեկը: Հեռավար ուսուցման հիմքում դրված է այն գաղափարը, ըստ որի ոչ մի անհատ աղքատության, աշխարհագրական կամ ժամանակավոր մեկուսացվածության, սոցիալական անապահովվածության, ֆիզիկական անբավարարության կամ արտադրական ու սեփական գործերով զբաղվածության, ուսումնական հաստատություններ հաճախելու անհնարինության պատճառով չպետք է զրկված լինի սովորելու կարևորագույն հնարավորությունից: Հեռավար ուսուցումը շատ հաճախ կապում են ուսուցման փակ համակարգի հետ, որի դեպքում տվյալների փոխանցման, շփման և ուսուցման հիմնական միջոցը միայն համացանցն է: Web տեխնոլոգիան դառնում է այն միջավայրը, որտեղ հեռավար ուսուցումը սկսում է գործել ավելի արդյունավետ՝ իր մեջ ներառելով այնպիսի միջոցներ, ինչպիսիք են FTP-ն (File Transfer Protocol, որն օգտագործվում է Internet Protocol-ի մեջ համակարգիչների միջև ֆայլերի փոխանցման համար), էլեկտրոնային փոստը և վեբ-սերվերները, մուլտիմեդիա սերվերները և այլն:

Հեռավար ուսուցման առավելություններն են.

- ուսանողն ինքնուրույնաբար կարող է ընտրել իր համար կրթության վայրը և ժամանակը,
- կրթության մեջ նորագույն տեխնոլոգիաների ներդրում,
- կրթական հաստատությունից հեռու գտնվելու կամ հիվանդության պատճառով դասական կրթություն ստանալու հնարավորությունից զուրկ մարդկանց կրթության ապահովում,
- 50%-ով ընթացիկ ծախսերի կրճատում,

- անհատական աշխատանք դասախոսի հետ և ինքնուրույն աշխատանք տեսանյութերի , ինչպես նաև էլետրոնային գրքերի հետ,
- հեռուստակոնֆերանսների մասնակցության հնարավորություն,
- համակարգչային ցանցերի միջոցով տվյալների բազաների և բանկերի հետ շփում,
- աշխատանքային ճկունության գործոնի առկայություն,
- աշխարհագրական սահմանների և տարածքային խոչընդոտների բացակայություն:

Վերջին շրջանում հեռավար ուսուցումը ամենաակտիվ քննարկվող ուսուցման ձևերից մեկն է: Այս դեպքում խոսքը նախ և առաջ կրթության բնագավառում համակարգչային և հեռահաղորդակցական տեխնոլոգիաների ներդրման մասին է, որոնց շնորհիվ կարող է ստեղծվել ուսումնական ճանաչողական մի այնպիսի միջավայր, որը կնպաստի ինչպես անհատական, այնպես էլ խմբային ու զանգվածային ուսուցման տարբեր խնդիրների լուծմանը: Այսօր առաջնահերթ է համարվում տեղեկատվությունն ինքնուրույն ձեռք բերելը, հիմնախնդիրը տեսնելը և դրանց լուծման ճանապարհները գտնելը, ստացած գիտելիքները քննադատաբար վերլուծելը և դրանք նորանոր խնդիրների լուծման մեջ կիրառելը: Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառումը կրթական ոլորտում ուղղված է աշխարհի տարբեր տարածաշրջաններում տեղեկատվական անհամաչափության հաղթահարմանը: Նոր տեխնիկան, տեխնոլոգիաները, ծրագրային հզոր ապահովումը և վեբ-ծառայությունների համատարած ծավալումը դառնում են մի ամողջություն, որը մեծ հնարավորություն է ապահովում ցանկացած ժամանակ և ցանկացած տեղում սովորելու համար: Ներկայումս տեղեկատվության մշակման և կառավարման համակարգերի, վիրտուալ սարքերի նախագծումը, ստեղծումը, ներդրումը և շահագործումն անհնար է առանց նոր ծրագրային միջավայրի արդիական մեթոդների կիրառման: Տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը հնարավորություն տվեց արդյունավետ նոր համակարգեր մշակել: Հեռավար ուսուցում ապահովող բոլոր մշակված համակարգերը, որոնք իրարից տարբերվում են գործառական որակներով, հարմարավետությամբ, կիրառական տեխնոլոգիաներով, ունեցան իրենց առանձնահատկությունները՝ առավելություններով ու թերություններով հանդերձ: Ուսումնական հաստատությունները, ներդնելով հեռավար կամ էլեկտրոնային ուսուցման համակարգեր, պետք է հաշվի առնեն որոշակի չափանիշներ: Դրանք են.

1. Ֆունկցիոնալություն: Հեռավար ուսուցման համակարգի ֆունկցիոնալությունը կախված է նրանից, թե ինչպիսի հնարավորություններ կարող է ունենալ այն, արդյոք համակարգը կարող է կատարել այնպիսի գործառույթներ, ինչպիսիք են ֆորումները, զրույցները, ուսանողների գործունեության վերլուծությունը, առարկաների ստեղծման և խմբագրման գործողությունները, օգտվողի համակարգում հնարավորությունների թույլատվությունների տարբեր մակարդակները, առցանց ռեժիմով կարդալու, թեստային քննություններ հանձնելու և տեսակոնֆերանսի հնարավորությունները:

2. Հուսալիություն: Հեռավար ուսուցման համակարգերը բնութագրող կարևոր չափանիշներից է նաև այն, թե ինչքանով է պարզ համակարգը, և ինչքանով է ապահով արտաքին ազդեցություններից և միջամտություններից:

3. Կայունություն: Ինչքանով է բարձր համակարգի գործունեության աստիճանը՝ կախված օգտվողների թվից և համակարգի տարողունակությունից, համակարգ ուղղված հարցումների քանակից, տվյալների բազայի մեծությունից:

4. Արժեք: Ինչքան գումարային ծախսեր և ինչ տեխնիկական միջոցներ են անհրաժեշտ համակարգի շահագործման, առարկաների մշակման, այն ուսանողներին հասանելի դարձնելու համար:

5. Մատչելի միջոցների առկայություն: Արդյոք համակարգում առկա՞ են ներկառուցված խմբագիրներ, որոնց հնարավորությամբ հնարավոր է առարկաներ ստեղծել և խմբագրել, առկա՞ են բոլոր այն գործիքակազմերը, որոնց միջոցով հնարավոր է անցկացնել տեսակոնֆերանսներ, արդյոք հնարավո՞ր է ինտեգրել համակարգին տարբեր տիպի փոստային համակարգեր և ամպային տիրույթներ:

6. SCORM միջազգային ստանդարտի աջակցում: Համակարգն արդյոք ունի՞ հնարավորություն, որի միջոցով հնարավոր լինի Scorm փաթեթները ինտեգրել ուսումնական գործընթացին և առարկայական տիրույթների ուսումնասիրությանը:

7. Գիտելիքների ստուգման հնարավորություն: Արդյո՞ք համակարգը հնարավորություն է տալիս ստուգել ուսանողների գիտելիքները, առցանց գնահատել ուսանողների գիտելիքները, երբ այս հնարավորությունը կազմակերպվում է հանձնարարականների թեստերի միջոցով, ինչպես նաև վերահսկելու ֆորումներում ուսանողների ակտիվությունը:

8. Օգտագործելու տեսանկյունից համակարգի պարզությունը: Համակարգը պետք է ապահովի հնարավորություն ոչ մասնագետին համակարգի բոլոր հնարավորությունները կիրառելիս: Պետք է առաջացնի հետաքրքրություն ուսանողների շրջանում և լինի հասկանալի ուսանողի համար:

9. Մոդուլային: Համակարգը պետք է ունենա հնարավորություն առարկայական կուրսերում կիրառելու տարբեր բլոկներ և ծրագրային մոդուլներ, հնարավորություն տա ստեղծելու իրարից տարբերվող և տարբեր առարկայական տիրույթներին համահունչ կուրսերի ստեղծման հնարավորություն:

10. Մուտքի հնարավորություն: Համակարգը պետք է ապահովի հասանելիության տարբեր մակարդակներ, ինչպես նաև օգտվողի դերեր, համակարգում պետք է պարզ կերպով առանձնացվեն ուսուցանվողների և դասախոսների դերերը:

11. Մուլտիմեդիայի հնարավորություն: Համակարգը պետք է ունենա տարբեր մեդիաֆայլերի հետ աշխատելու հնարավորություն, պետք է ապահովի ժամանակակից մուլտիմեդիայի ներդրման բոլոր հնարավորությունները (անիմացիաներ, տեսաֆիլմեր, նկարներ, արխիվներ):

12. Օպերացիոն համակարգից անկախություն: Համակարգը պետք է հասանելի լինի ցանկացած օպերացիոն համակարգից, պետք է լինի սերվերային, այն օգտվողի համակարգչից պետք է հասանելի լինի առանց այլ ծրագրային միջոցներ տեղակայելու:

13. Լեզվական անկախություն: Համակարգը պետք է ապահովի իր աշխատանքը տարբեր լեզուներով:

Հեռավար ուսուցման համակարգերը իրարից տարբերվում են նաև էլեկտրոնային ուսուցումը կազմակերպող գործիքակազմով, մշակված ծրագրային համալիրով: Կարելի է տաբերակել հետևյալ խմբերը.

- սեփական ծրագրային միջոցներ ունեցող համակարգեր,
- փաթեթային համակարգեր (CMS),
- էլեկտրոնային ուսուցումը իրականացնող համակարգեր,
- ուսումնական կոնտենտի ղեկավարման համակարգեր:

1. Սեփական ծրագրային միջոցներով ներդրված համակարգերը բավականին բարդ են, և դասավանդողը պետք է պարտադիր տիրապետի որոշակի ծրագրավորման գիտելիքների, որպեսզի կարողանա ստեղծել ուսումնական կոնտենտներ: Դասավանդողը պետք է հստակ տիրապետի համակարգի կառուցվածքին, որպեսզի կարողանա իր մշակած առարկայական փաթեթը տեղակայել համակարգում: Այսպիսի համակարգում առարկայական փաթեթների ներդրման ավտոմատացում չկա, շատ դժվար է ապահովել նաև այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են ֆորումները, ուսանողների գիտելիքների ստուգումը և այլն: Անհնար է նաև կազմակերպել համակարգի վերահսկողությունը, երբ գործ ունենք բազմաթիվ ուսանողների հետ:

2. Փաթեթային համակարգերը հնարավորություն են տալիս դասավանդողին հեշտությամբ ստեղծել անհրաժեշտ համալիրներ՝ օգտագործելով արդեն իսկ պատրաստի հնարավորությունները, դասավանդողը հնարավորություն է ունենում աշխատել բազմաթիվ մեդիաֆայլերի, արդեն իսկ պատրաստի առարկայական փաթեթների հետ: Համակարգի առավելություններից է, որ թույլ է տալիս մշակված առարկայական փաթեթները պատճենել, խմբագրել և փոփոխել:

3.Կան համակարգեր, որոնք նախատեսված են արդեն իսկ էլեկտրոնային ուսուցում կազմակերպելու համար: Այսպիսի համակարգերը ունեն գրեթե անհրաժեշտ բոլոր գործիքները, որոնց միջոցով կարելի է կազմակերպել էլեկտրոնային ուսուցում:

4. Ուսումնական կոնտենտի ղեկավարման համակարգերը ավելի ֆունկցիոնալ են՝ բացի այն գործիքներից, որոնք անհրաժեշտ են էլեկտրոնային ուսուցում կազմակերպելու համար: Այս համակարգերը կարող ենք օգտագործել նաև այլ նպատակների համար:

Հեռավար կամ էլեկտրոնային ուսուցման համակարգ ուսումնական հաստատություններում ներդնելիս պարտադիր պետք է հաշվի առնել վերը նշված գործոնները: Ուսումնասիրելով բազմաթիվ հեռավար ուսուցման համակարգեր ըստ տարբեր չափանիշների՝ կարելի է կանգ առնել դրանցից մի քանիսի վրա, իսկ հիմնականում խորհուրդ է տրվում ներդնել Moodle հեռավար ուսուցման համակարգը:

Էլեկտրոնային ուսուցման համակարգերի շարքում իր կարևորագույն տեղն է զբաղեցնում, Moodle հեռավար ուսուցման համակարգը, որի ամենակարևոր առավելություններից մեկը բաց ծրագրային կոդն է: Համակարգը դինամիկ

զարգացող համակարգ է, մոդուլային է, օբյեկտ-կողմնորոշված, կարող է ծառայել դասախոս-ուսանող շփման, ինչպես նաև տարբեր էլեկտրոնային կուրսեր ստեղծելու համար: Համակարգի հնարավորությունները ամբողջովին բավարարում են ուսումնական հաստատություններին՝ հեռավար ուսուցում իրականացնելու համար: Համակարգը ինտեգրվում է բազմաթիվ այլ համակարգերի, ապահովում է մի շարք միջազգային ստանդարտներ, թույլ է տալիս կատարել ծրագրային փոփոխություններ, հեշտ է ներդրվում սերվերների վրա: Օրեցօր ավելանում է այն հաստատությունների քանակը, որոնք հեռավար ուսուցում իրականացնելիս, օգտվում են Moodle էլեկտրոնային ուսուցման համակարգի հնարավորություններից:

Օգտագործելով Moodle հեռավար ուսուցման համակարգի հնարավորությունները՝ հաստատությունները կարողանում են լուծել մի շարք կարևոր խնդիրներ: Այն

- թույլ է տալիս ավելի արդյունավետ կազմակերպել ուսուցման գործընթացը, օգտագործել ժամանակակից ուսուցման մեթոդներ և եղանակներ,
- թույլ է տալիս պատրաստել պրոֆեսիոնալ մասնագետներ, որոնք նաև հմտանում են ինտերնետ-ռեսուրսների մշակման և կիրառման մեջ,
- բարձրացնում է դասախոսների գիտելիքների մակարդակը վեբ միջավայրում,
- բարձրացնում է ուսման որակը,
- ուսանողները շահում են ինչպես ժամանակի, այնպես էլ ֆինանսական առումներով:

Ընդհանրապես հեռավար ուսուցման համակարգերը ներկայացնում են բարդ ծրագրային միջավայրեր, որոնք ապահովում են սերվերի և օգտվողների միջև կապը՝ օգտագործելով համացանցի հնարավորությունները: Տեղեկատվության փոխանակումը օգտվողների համակարգիչների և հեռավար ուսուցման համակարգերի միջև կարող է տեղի ունենալ ցանկացած պահի աշխարհի ցանկացած կետից: Էլեկտրոնային ուսուցման համակարգերի սերվերները հիմնականում պահվում են ուսումնական հաստատություններում կամ հոսթինգային ծառայություններ ապահովող ընկերություններում, հենց այդ սերվերներում էլ տեղակայված հեռավար ուսուցման համակարգերն էլ իրենց մեջ պարունակում են օգտատերերի տվյալները, կուրսերը, մեդիա ֆայլերը և այլն:

Հեռավար ուսուցման համակարգերի գլխավոր խնդիրը ինտեգրվելն է դասախոս - ուսանող կապին, այլ ոչ թե հենց դասախոս-ուսանող կապի հիմնական միջավայր հանդիսանալը: Հեռավար ուսուցման համակարգերի գլխավոր էությունն այն է, որ դասախոսի մեկանգամյա պատրաստած լիարժեք դասընթացը արդեն միշտ հասանելի կլինի ուսանող օգտատերերին:

Բանալի բառեր՝ *հեռավար ուսուցում, տեղեկատվական տեխնոլոգիաներ, համացանց, օգտատեր, սերվեր:*

Օգտագործված գրականություն

1. https://en.wikipedia.org/wiki/Distance_education

INFORMATION TECHNOLOGIES IN EDUCATIONAL PROCESS, DISTANCE LEARNING SYSTEMS

M. A. HOVHANNISYAN
Programmer of IT department, GSU

The work is dedicated to the study of distance learning systems and to the development and implementation of relevant e-learning system.

Data from the history of information technology development and application samples of information technologies are presented in educational process.

ИНФОРМАЦИОННЫЕ ТЕХНОЛОГИИ В ОБРАЗОВАТЕЛЬНОМ ПРОЦЕССЕ, СИСТЕМЫ ДИСТАНЦИОННОГО ОБУЧЕНИЯ

М. А. ОВАННИСЯН
Программист отделения информационных технологий ГГУ

Работа посвящена изучению систем дистанционного обучения и разработке и внедрению соответствующей электронной системы обучения. В работе приведены данные из истории развития ИТ и примеры применения информационных технологий в учебном процессе.

ՆԵՅՐՈՆԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ «ԿԼԱՍՏԵՐԱՑՄԱՆ» ՀԱՄԱՐ

Ա. Կ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական
գիտությունների ամբիոնի դասախոս

Մենեջմենթի կարևորագույն փուլերից մեկը կազմակերպության ֆինանսական վիճակի և սպառնացող ռիսկերի գնահատումն է, քանի որ միայն դրանց ստույգ վերլուծության և գնահատման հիման վրա կարելի է ընդունել որոշումներ՝ բացասական հետևանքներից խուսափելու համար: Մասնագիտական գրականության մեջ կարելի է գտնել ռիսկի գնահատման բազմաթիվ մոտեցումներ, սակայն ընդհանուր առմամբ ռիսկի գնահատումը ռիսկի տեսակների, դրանց վրա ազդող գործոնների համակարգված բացահայտումն ու քանակական գնահատումն են, այսինքն՝ ռիսկերի վերլուծության մեթոդաբանությունը համատեղում է միմյանց լրացնող որակական և քանակական մոտեցումները:

Որակական վերլուծության հիմնական խնդիրը ռիսկի աղբյուրների և պատճառների, դրանք առաջացնող գործունեության ուղղվածության և աշխատանքների բացահայտումն է, այսինքն՝ ռիսկի հնարավոր տիրույթների որոշումը, կազմակերպության գործունեությանն ուղեկցող ռիսկերի առանձնացումը և բացահայտված ռիսկերի գործնական շահի ու հնարավոր բացասական հետևանքների կանխատեսումը:

Ռիսկերի որակի և ազդեցության մակարդակի սանդղակային գնահատման լայն տարածում գտած եղանակ է սքորինգը: Համաշխարհային պրակտիկայում սքորինգը հիմնականում կիրառվում է կազմակերպության ֆինանսական կայունության (ինչպես ընդունված է ասել՝ կազմակերպության սնանկության հավանականության) կամ վարկային ռիսկերի գնահատման համար: Սքորինգը հիմնվում է երկու մեթոդաբանական մոտեցումների վրա.

- սուբյեկտիվ փորձագիտական գնահատում,
- սքորինգի ավտոմատացված համակարգեր:

Ըստ էության, սքորինգը մաթեմատիկական մոդել է, որը հարաբերակցում է ռիսկի մակարդակը և կազմակերպության ֆինանսական վիճակը (կամ վարկառուի վճարունակությունը) բնութագրող գործոնների ընտրված համախմբի որոշակի արժեքների հետ: Սքորինգի մոդելները բազմազան են, ընդ որում յուրաքանչյուր մոդել օգտագործում է բնութագրող գործոնների սեփական համախումբ՝ արդյունքում ստանալով ֆինանսական բնութագրիչ (բնութագրիչների համախումբ) որոշակի (օրինակ՝ «լավ» և «վատ» կամ «ցածր», «միջին» և «բարձր») խմբերի բաժանելու հնարավորություն ընձեռող գնահատականներ:

Պարզագույն տեսքով սքորինգի մոդելը որոշակի գործոնների կշռված գումար է: Արդյունքում ստացվում է միասնական ցուցանիշ (score – միավորներ), որի հիման վրա գնահատվում է կազմակերպության ֆինանսական կայունությունը կամ վարկառուի հուսալիության մակարդակը: Որքան մեծ է ցուցանիշը, այնքան ֆինանսապես կայուն է կազմակերպությունը (հուսալի է վարկառուն):

Սքորինգի մոդելների կառուցման համար օգտագործվում են տարբեր մեթոդներ, այդ թվում՝ վիճակագրություն (դիսկրիմինանտային վերլուծություն, գծային ռեգրեսիա, լոգիստիկ ռեգրեսիա, դասակարգման ծառեր), գործառնությունների հետազոտություն (գծային ծրագրավորում, ոչ գծային օպտիմիզացում), բայեսյան ցանցեր, տրամաբանական-հավանական մեթոդներ [1, 2, 3]:

Թվարկված մեթոդները կարող են օգտագործվել ինչպես առանձին, այնպես էլ համատեղված: Յուրաքանչյուր մոտեցում բացատրվում է նրանով, որ գնահատողը (մենեջերը, վարկատուն) ցանկանում է ունենալ ռիսկի գնահատման ստույգ մեթոդաբանություն յուրաքանչյուր իրավիճակի համար, այլ ոչ թե միայն բացահայտել վնասները, սնանկացման պատճառները կամ դրանց կախվածությունը մակրոտնտեսական ցուցանիշներից: Կախված կիրառվող վիճակագրական տվյալներից և դրանց օգտագործման եղանակից՝ տարբերում են սքորինգի մոդելների երեք տարատեսակներ՝ «ուսուցչով» ուսուցանվող, «առանց ուսուցչի» ուսուցանվող և համատեղված:

«Ուսուցչով» ուսուցման սքորինգի մոդելների կառուցման համար անհրաժեշտ են տվյալներ անցյալում իրականացված գործունեության արդյունքների կամ տրամադրված վարկերի վերաբերյալ, որոնք նախապես պետք է բաժանվեն առնվազն երկու խմբի (օրինակ՝ «հաջող» և «անհաջող»):

Մոդելների երկրորդ տեսակը կիրառվում է, երբ կազմակերպությունը, նախաձեռնելով որոշակի ներդրումային կամ վարկային ծրագիր, չունի համապատասխան վիճակագրական տվյալներ (օրինակ՝ «լավ» և «վատ» դեպքերի վերաբերյալ) և չի կարող կառուցել մոդել, որի ուսուցման համար կօգտագործվեն այդ տվյալները: Իհարկե, դա չի նշանակում, որ առհասարակ չեն օգտագործվում ոչ մի տեսակի տվյալներ, պարզապես դրանք նախապես չեն ստորաբաժանվում լավերի և վատերի:

Այդպիսի դեպքերում սքորինգի մոդելի կառուցման համար կարող են կիրառվել տարբեր մեթոդներ, որոնք հիմնված են դասակարգման տարբեր մոդելների կառուցման կամ մակրոտնտեսական օրինաչափությունների վրա: Առաջին դեպքում տվյալները բաժանվում են խմբերի (այսպես կոչված՝ կլաստերների)՝ առկա տեղեկատվությանը համապատասխան: Սակայն քանի որ բացակայում է դրանց որակական տարբերության մասին ինֆորմացիան, տվյալ մոտեցման կիրառության դեպքում առաջանում է առանձնացվող խմբերի վերծանման հիմնահարցը, և դա հատկապես այն դեպքերում, երբ մեթոդը նախատեսում է երկուսից ավելի համասեռ խմբերի (կլաստերների) առանձնացում:

Սքորինգի մոդելների առաջին խումբը («ուսուցչով» ուսուցման) հիմնականում ներառում է, այսպես կոչված, Z-մոդելի տարատեսակները: Դրանք հիմնված են գծային ռեգրեսիայի հետևյալ բանաձևի վրա՝


$$Z = w0 + w1X1 + w2X2 + \dots + wnXn \quad (1)$$

որտեղ Z -ը սքորինգի գնահատվող արժեքն է,

X1, …, Xn-ը՝ կազմակերպության ֆինանսական կայունությունը կամ փոխառուի վարկունակությունը բնորոշող գործոնները,

w1, …, wn-ը՝ գործոնների նշանակալիությունը (կշիռը) բնութագրող գործակիցները:

Ներկայումս կիրառվող վիճակագրական մեթոդների (դիսկրիմինանտային վերլուծություն, բազմագործոնային և լոգիստիկ ռեգրեսիա և այլն) մեծամասնության կիրառության արդյունքում կառուցվում են ռիսկայնության խմբերի կամ ռիսկի գնահատվող աստիճանի սանդղակավորված դասակարգման կանոնները սահմանող մոդելներ, որոնց (ինչպես և Z-մոդելների) հիմքում հիմնականում ընկած է գծային սքորինգային ֆունկցիան [օրինակ՝ 4, 5]: Բոլոր այդպիսի մոդելներն ունեն երկու ընդհանուր հատկություն՝ բազմագործոնային և գծային: Պարզաբանենք դա ազդող X1 և X2 երկու գործոնների օրինակով (գծապատկեր 1): Սքորինգի երկու խմբերը ցուցադրված են տարբեր մգություն ունեցող տիրույթների տեսքով:



Գծապատկեր 1. Սքորինգի սկզբունքի երկրաչափական վերծանումը:

Սքորինգի արդյունքում ստացվում է Z ուղիղը, որը անցնում է երկու խմբերի միջով և բաժանում դրանք միմյանցից: Z ուղղին տարված ուղղահայացը (գծապատկերում այն նշանակված է Z առանցք), որը սովորաբար անվանում են սքորինգի առանցք, հնարավորություն է տալիս իրարից տարբերել ռիսկի երկու մակարդակները (ռիսկային խմբերը): Z ուղղի և Z առանցքի հատման կետը (Z) տալիս է սքորինգի շեմային արժեքը (տարանջատման մակարդակը), որն անջատում է երկու խմբերի բաշխման խտության ֆունկցիաների պրոեկցիաները Z առանցքի

վրա: Սքորինգի նպատակը խմբերը բաժանող հնարավորին չափ ավելի հստակ առանցք ստանալն է:

Սակայն ոչ միշտ է հնարավոր տարբերել այդ խմբերը ըստ որևէ գործոնի, քանի որ գործոնների բաշխման ֆունկցիաներն ունեն հատման մեծ տիրույթներ (գծապատկերում այդ տիրույթները, գնահատվող խմբերի պրոեկցիաների հատումները X1 և X2 առանցքների վրա նշված են հ տառով): Դա նշանակում է, որ եթե որևէ գործոնի արժեքները գտնվում են այդպիսի տիրույթում, դրանք կարող են պատկանել ինչպես 1-ին, այնպես էլ 2-րդ խմբին:

Այդպիսի մոդելների (դրանք լայնորեն կիրառվում են արևմտյան զարգացած երկրներում) օգտագործումը կապված է որոշակի բարդությունների հետ, քանի որ դրանք կարող են ապահովել միայն գծային սահմաններ ռիսկի աստիճանի տարբեր մակարդակների (կամ «վատ» և «լավ» վարկառուների) միջև: Մինչդեռ, օրինակ, ֆինն գիտնականները, ուսումնասիրելով մի շարք տարբեր մեթոդաբանությունների վրա հիմնված 11 մոդելներ (դիսկրիմինանտային վերլուծություն, լոգիստիկ մոդելներ, գենետիկ ալգորիթմներ), եկել են երկու կարևոր եզրահանգման.

- ժամանակի ընթացքում ռիսկի գործոնների կազմը փոփոխվում է. ինչքան կարճատև է ժամկետը, որի համար գնահատվում է ռիսկը, այնքան շատ փոփոխական է անհրաժեշտ սքորինգի մոդելում,
- սահմանը խմբերի միջև գծային չէ. օրինակ՝ նույնիսկ գենետիկ ալգորիթմների ճշտությունը զգալիորեն ավելի բարձր է, քան գծային սահման գեներացնող ալգորիթմներինը:


Մեր կարծիքով՝ վերը նշված թերություններից կարելի է խուսափել՝ օգտագործելով մոդելների կառուցման (ապրոքսիմացիայի) համար արհեստական ինտելեկտի մեթոդները՝ նեյրոնային ցանցերը (ՆՑ): Նեյրոնային ցանցերի օգտագործումը առանձնապես արդյունավետ է այն դեպքերում, երբ նախապես հայտնի չէ կապի ստույգ տեսակը մուտքային և ելքային տվյալների (մուտքային գործոնների և գնահատվող մեծության) միջև: Նեյրոնային ցանցը մոդելավորման բացառիկ հզոր մեթոդ է, որը թույլ է տալիս վերարտադրել չափազանց բարդ կախվածություններ և կարող է օգտագործվել բոլոր այն բնագավառներում, որտեղ անհրաժեշտ է լուծել կանխատեսման, դասակարգման, գնահատման (այդ թվում նաև ֆինանսական ռիսկերի) և կառավարման խնդիրները: Կլաստերացման խնդիրների լուծման համար առավել հարմար է ինքնակազմակերպվող նեյրոնային ցանցերի կիրառությունը:

Ինքնակազմակերպվող նեյրոնային ցանցերի հիմքում ընկած է այն օրինաչափությունը, որ ցանցի գլոբալ կարգավորումը իրականացվում է ցանցի՝ մի շարք իրարից անկախ լոկալ մասերում կատարվող ինքնակազմակերպվող գործողությունների արդյունքում: Նեյրոնների միջև մրցակցության վրա հիմնված ինքնակազմակերպվող ցանցերի ուսուցումը կատարվում է համաձայն ֆինն գիտնական Կոհոնենի ընդհանրացված սկզբունքի: Այդ պատճառով այդպիսի մեթոդները

ստացել են Կոհոնենի ինքնակազմակերպվող քարտեզներ (Self Organizing Maps - SOM) անվանումը: Ի տարբերություն բազմաշերտ նեյրոցանցերի՝ ինքնակազմակերպվող ցանցերի ուսուցման գործընթացը իրականացվում է «առանց ուսուցչի» սկզբունքով, այսինքն՝ արդյունքը կախված է միայն մուտքային տվյալների կառուցվածքից: Այդպիսի համակարգերի միջոցով հետազոտվող խումբը բաժանվում է ընտրած գործոնների բնութագրերի տեսակետից համասեռ ենթախմբերի, որոնք առավելագույն կերպով տարբերվում են մյուս խմբերից: Ինքնակազմակերպվող քարտեզների կիրառության բնագավառը բազմազան է: Դրանք օգտագործվում են տարբեր բնույթի խնդիրների լուծման համար, սակայն հիմնականում այդ տիպի ցանցերի միջոցով լուծվում են օբյեկտների որոշակի բնութագրիչների վերլուծության և օրինաչափությունների բացահայտման հիման վրա կլաստերացման (օբյեկտների համասեռ չհատվող խմբերի առանձնացման) խնդիրները: Ի տարբերություն բազմաչափ վեկտորների կլաստերացման այլ ալգորիթմների՝ Կոհոնենի ցանցի բոլոր հանգույցները (նեյրոնները) կարող են կարգավորվել նաև որոշակի երկչափ կառուցվածքով (սովորաբար վանդակացանցով), այսինքն՝ կառուցվում է սկզբնական բազմաչափ տարածության պրոյեկցիան երկչափ տարածությունում: Ուսուցման ընթացքում վեկտորները, որոնք նման են միմյանց սկզբնական տարածությունում (որոնց բնութարիչները համասեռ են), քարտեզի վրա պատկերվում են կողք կողքի:

Դա առանձնապես հարմար է այնպիսի խնդիրների լուծման համար, որտեղ պահանջվում է որոշակի օբյեկտների բազմությունների տարանջատում ըստ բազմագործոն ցուցանիշների արժեքների (օրինակ՝ կազմակերպությունների խմբավորումն ըստ ցուցանիշների խմբի համասեռության չափանիշի):

Որպես կանոն՝ ինքնակազմակերպվող քարտեզները միաշերտ ցանցեր են, որոնցում յուրաքանչյուր նեյրոն միացված է մուտքային վեկտորի բոլոր բաղադրիչներին (դա պատկերված է գծապատկեր 2-ում): Ցանցի յուրաքանչյուր նեյրոնը ներկայացվում է որպես կշիռների Nաչափ վեկտոր-սյունակ Wi = (wi1, wi2, …, wiN)T, որտեղ i-ն նեյրոնի համարն է, իսկ N-ը՝ մուտքային վեկտորների չափը:



Գծապատկեր 2. Ինքնակազմակերպվող ցանցի կառուցվածքի սխեման:

Ինքնակազմակերպման գործընթացը ենթադրում է նեյրոնների միջև հաջորդական «մրցափուլերի» անցկացում: Յուրաքանչյուր փուլում հաղթում է այն նեյրոնը, որի հեռավորությունը ցանցի մուտքին տրված X = (x1, x2, …, xN) վեկտորից նվազագույնն է: Այդ դեպքում կարևոր հիմնահարց է դառնում X և Wi վեկտորների միջև տարածության չափման եղանակի ընտրությունը: Առավել հաճախ օգտագործվում է էվկլիդյան չափը՝


$$D(X, W) = ||X - W|| = \sqrt{\sum_{n=1}^{N} (x_n - w_{in})^2}$$

Ապացուցված է [5, էջ 105-123], որ մուտքային վեկտորների նորմավորման դեպքում ինքնակազմակերպման գործընթացը ապահովում է տարածության կապակցված տարաբաժանումը: Նորմավորված ուսուցանող վեկտորների ընտրանքի կիրառության դեպքում դրանց ձգտող W վեկտորները նույնպես ինքնաբերաբար նորմավորվում են: Նորմավորումը առանձնահատուկ արդյունավետ է փոքրաչափ տարածության դեպքում (N<200): Մուտքային վեկտորները նորմավորվում են որոշակի բանաձևով:

Նորմավորման արդյունքում յուրաքանչյուր մուտքային վեկտոր դառնում է տարածությունում նույն ուղղվածությունն ունեցող միավոր վեկտոր: Ցանցի ուսուցման յուրաքանչյուր քայլում ընտրվում է մուտքին տրված վեկտորին առավել մոտ (մեր դեպքում էվկլիդյան չափով արտահայտված հեռավորության իմաստով) նեյրոնը (այն կոչվում է հաղթող նեյրոն): Ուսուցման տվյալ քայլում շտկվում է հաղթող նեյրոնի կշիռների վեկտորը՝ ըստ հետևյալ հավասարման (η-ն անվանում են ուսուցման արագության գործակից)՝

$$W_{նոր} = W_{նախորդ} + \eta(X - W_{նախորդ}):$$

Փոփոխության (շտկման) ուղղությունը նվազեցնում է հեռավորությունը հաղթող նեյրոնի և մուտքային վեկտորի միջև: Երկչափ տարածության դեպքում դա կարելի է ներկայացնել գծապատկեր 3-ում բերված տեսքով:



Գծապատկեր 3. Ինքնակազմակերպվող ցանցի ուսուցման մեկ քայլը:

Առաջարկվող մեթոդի փորձարկումը և գործնական կիրառությունը իրականացվել է մեծածախ առևտրով զբաղվող «Պարտնյոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում: Շրջանառելիության անկման պատճառները և սպառողների միջավայրի թույլ օղակները բացահայտելու նպատակով իրականացվեց դրամական հոսքերի ֆիքսումն ըստ սպառողների և ապա ապրանքատեսակների:

Առաջին փուլում սպառողները (ուսումնասիրվել են ընկերության կողմից առաքվող ապրանքները Երևան քաղաքում սպառող 270 կազմակերպություններ) բաժանվեցին 2 համասեռ խմբերի (կլաստերների) Կոհոնենի ինքնակազմակերպվող ցանցի միջոցով: Որպես խմբավորման չափանիշներ՝ ընտրվեցին հետևյալ գործոնները.

1. Շրջանառելիությունը (ամսվա կտրվածքով առաքված ապրանքի դիմաց վճարումներ կատարելու իմաստով): Տարբեր սպառողների համար ցուցանիշի արժեքները կազմում էին 0.33-ից 1.7 (10-ից 50 օր):

2. Մրցակցական շրջապատը: Յուրաքանչյուր սպառողին վերագրվել են միավորներ՝ ըստ մրցակցական շրջապատի մակարդակի: Այսպես.

ա/ եթե մոտակա շրջակայքում չկան նույն տեսակի ապրանքներն իրացնող այլ առևտրական կազմակերպություններ,

բ/ եթե վերը նշված կազմակերպությունների քանակը չի գերազանցում 3-ը, և դրանք գտնվում են խիտ բնակեցված թաղամասում,

գ/ մյուս բոլոր սպառողներին:

3. Մեկ ամսվա ընթացքում առաքված ապրանքների ծավալը դրամով (100 հազարից մինչև 2 մլն դրամ):

Կլաստերացման արդյունքում ստացված սպառողների խմբերից առաջինում հայտնվեցին հիմնականում այն սպառողները (72 սպառող, այդ թվում՝ ինչպես խանութներ, այնպես էլ որոշ տոնավաճառներ և սուպերմարկետներ), որոնց իրացման շրջանառելիությունը չէր համապատասխանում առաքման ծավալներին, որի հետևանքով երկարաձգվում են ապրանքների վաճառքի և, որպես արդյունք, ստացված ապրանքների դիմաց կատարվող վճարումների ժամկետները:

Նույն խմբում հայտնվեցին նաև մի շարք սպառողներ (118 սպառող), որոնք ունեին շրջանառելիության գործոնի բարձր արժեքներ (10-ից 20 օր), սակայն իրացման (ամսվա կտրվածքով առաքված ապրանքների) փոքր ծավալ (դրամական արտահայտությամբ):

Երկրորդ փուլում իրականացվեց առաքվող ապրանքների հոսքերի դիվերսիֆիկացիան վերոնշյալ սպառողների միջև ըստ յուրաքանչյուր ապրանքատեսակի: Արդյունքում 2009թ. առաջին երեք ամսվա ընթացքում իրացման ծավալը ամսվա կտրվածքով ավելացավ մոտ 1.12 անգամ, իսկ առաքված ապրանքների դիմաց գանձվող գումարների մարման առավելագույն ժամկետը նվազեց 50-ից մինչև 40 օր (շրջանառելիության գործակիցը՝ 1.7-ից մինչև 1.3):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ նեյրոնային ցանցերի կիրառության բնագավառը բազմանպատակ է, և դրանք կարող են օգտագործվել տարբեր բնույթի խնդիրների լուծման համար ինչպես ֆինանսական առանձին ռիսկերի, այնպես էլ դրանց համալիր գնահատման առումով:

Բանալի բառեր՝ *Նեյրոն, ինքնակազմակերպվող նեյրոնային ցանց, Կոհոնեն, կլաստեր, շրջանառելիություն, ֆինանսական ռիսկեր:*

Օգտագործված գրականություն

1. Бернстайн Л.А., Анализ финансовой отчетности: теория, практика и интерпретация, М., Финансы и статистика, 1996, 624 էջ:

2. Madden M. G. Evaluation of the performance of the Markov blanket Bayesian classifier algorithm. Department of Information Technology, National University of Ireland, Galway, 2003, էջեր 312–318:

3. De Giorgi E., Burkhard J. An intensity based non-parametric default model for residential mortgage portfolios. Journal of Risk, 8 (4), 2006, էջեր 57-95:

4. Хейне П. Экономический образ мышления: Пер. с англ. – М.: Новости, 1997, 701 էջ:

5. Demartines P., Blayo F. Kohonen self organizing maps: is the normalization necessary?, Complex Systems, vol. 6, 1992, էջեր 105-123:

APPLICATION OF NEURAL NETWORKS FOR CLUSTERING ECONOMIC FACILITIES

A. K. KHURSHUDYAN
PhD in Economics, Professor,
Professor of the Informatics and Physical-Mathematical Sciences Chair

The article deals with some aspects of the application of self-organizing maps for clustering economic facilities, in particular, assessing the financial condition of enterprises.

ПРИМЕНЕНИЕ НЕЙРОННЫХ СЕТЕЙ ДЛЯ КЛАСТЕРИЗАЦИИ ЭКОНОМИЧЕСКИХ ОБЪЕКТОВ

А. К. ХУРШУДЯН
Кандидат экономических наук, доцент,
Доцент кафедры информатики и физико-математических наук

В статье рассмотрены некоторые аспекты применения самоорганизующихся нейронных сетей для кластеризации экономических объектов, в частности, оценки финансового состояния предприятий.

ՆԵՅՐՈՆԱՅԻՆ ՑԱՆՑԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՄՈԴԵԼԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱՐ

Ա. Կ. ԽՈՒՐՇՈՒԴՅԱՆ
Տնտեսական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս
Վ. Կ. ԱՎԵՏԻՍՅԱՆ
Տեխնիկական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ տեղեկատվական տեխնոլոգիաների բաժնի վարիչ,
ինֆորմատիկայի և ֆիզիկամաթեմատիկական գիտությունների ամբիոնի դասախոս

Նեյրոնային ցանցը մոդելավորման բացառիկ հզոր մեթոդ է, որը թույլ է տալիս վերարտադրել չափազանց բարդ կախվածություններ և կարող է օգտագործվել բոլոր այն բնագավառներում, որտեղ անհրաժեշտ է լուծել կանխատեսման, դասակարգման, գնահատման (այդ թվում նաև ֆինանսական ռիսկերի) և կառավարման խնդիրները: Նեյրոնային ցանցերի օգտագործումն առանձնապես արդյունավետ է այն դեպքերում, երբ նախապես հայտնի չէ կապի ստույգ տեսակը մուտքային և ելքային տվյալների (մուտքային գործոնների և գնահատվող մեծության) միջև:

Նեյրոնային ցանցերի մեթոդների օգտագործումը հնարավորություն է ընձեռում լուծելու ևս երկու առաջնահերթ խնդիր՝ ինքնաբերաբար հաշվի առնել մոդելավորվող երևույթի (օրինակ՝ ռիսկի) վրա ազդող առանձին գործոնների կոռելացվածությունը (մասնավորապես գենետիկ ալգորիթմների միջոցով) և խուսափել մոդելի նպատակային ֆունկցիայի հավանականությունների խտության նորմալ բաշխման ենթադրությունից:

Նեյրոնային ցանցերը պատկանում են համակերպվող (ադապտիվ) ոչ գծային համակարգերի դասին, որոնք հիմնված են մարդկային ուղեղի նմանակման վրա և պայմանականորեն ներկայացնում են մարդկային ուղեղի նեյրոնները: Նեյրոնային ցանցերը կարողանում են բացահայտել քողարկված օրինաչափությունները տվյալների հոսքերից, ընդ որում տվյալները կարող են լինել նույնիսկ ոչ լրիվ, որոշ դեպքերում՝ հակասական: Եթե մուտքային և ելքային տվյալների միջև գոյություն ունի որևէ օրինաչափություն, որը չի բացահայտվում ավանդական (օրինակ՝ կոռելյացիոն վերլուծության) մեթոդներով, նեյրոնային ցանցը ունակ է կարգավորել այդ օրինաչափությունը ճշտության տրված աստիճանով:

Բացի դրանից՝ նեյրոնային ցանցերը տալիս են մի շարք լրացուցիչ հնարավորություններ: Կարելի է, օրինակ, գնահատել մուտքային տեղեկատվության համեմատական կարևորությունը և կրճատել դրա ծավալը առանց արժեքավոր տվյալների էական կորստի: Ոչ ստանդարտ իրավիճակներ բացահայտելու ունակության շնորհիվ դրանք մեծ հաջողությամբ օգտագործվում են, օրինակ, վարկային քար-


տերի հետ խարդախությունների բացահայտման, պատկերների ճանաչման, ինքնուսուցվող համակարգերի կառուցման բնագավառներում:

Կամայական նեյրոնային ցանց օգտագործվում է որպես գիտելիքների ներկայացման ինքնուրույն համակարգ, որը կիրառական հավելվածներում, որպես կանոն, հանդիսանում է կառավարման համակարգի առանձին տարր կամ որոշումների ընդունման մոդուլ, որի արդյունքային ազդանշանները հաղորդվում են արհեստական ցանցի հետ անմիջական կապ չունեցող տարրերին: Ցանցի միջոցով իրականացվող ֆունկցիաները կարելի է բաժանել մի քանի խմբի՝ ապրոքսիմացիայի (մոտարկման) և կոռելյացիայի, պատկերների ճանաչման, կանխատեսման, կառավարման, նմանեցման (իդենտիֆիկացման) և ասոցիատիվ վերծանման:

Այս հոդվածում քննարկվում է բազմաշերտ նեյրոնային ցանցերի կիրառության հնարավորությունը տնտեսական գործընթացների մոդելավորման և գնահատման համար:

Բազմաշերտ նեյրոնային ցանցերը հաջողությամբ լայնորեն օգտագործվում են մոդելավորման խնդիրների լուծման բնագավառում և վերաբերում են, այսպես կոչված, «ուսուցչով» ուսուցման մեթոդների դասին: Այդպիսի մեթոդների օգնությամբ գործոնների որոշակի խմբի և մոդելավորվող ֆունկցիայի (որի տեսքը հայտնի չէ) համապատասխան արժեքների վիճակագրական ընտրանքների հիման վրա կառուցվում է իրական կախվածությունը հնարավորին չափ ստույգ մոտարկող ցանց: Այդ դասին են պատկանում, օրինակ, բազմագործոնային վերլուծության և ռեգրեսիայի, Մոնտե-Կարլոյի, դիսկրիմինանտային վերլուծության և բազմաթիվ այլ վիճակագրական մեթոդները:

Դա հիերարխիկ ցանցային կառուցվածք է, որի յուրաքանչյուր հաջորդ շերտի նեյրոնների մուտքերին տրվում են նախորդ շերտի նեյրոնների կշռված ելքային ազդանշանները (ակտիվացիայի ֆուկցիայի արժեքները): Նեյրոնային ցանցի գաղափարը պարզաբանելու նպատակով դիտարկենք առանձին նեյրոնի աշխատանքի սկզբունքը: Գծապատկեր 1-ում ներկայացված է ցանցի առանձին նեյրոնի ընդհանրացված պատկերը:



Գծապատկեր 1. Արհեստական նեյրոնի վամոդելի ընդհանրացված պատկերը:

Նեյրոնը ստանում է մուտքային ազդանշանները (դրանք կարող են լինել մուտքային տվյալները կամ այլ նեյրոնների ելքային ազդանշանները (x1, x2,…, xn) մի քանի մուտքային կապուղով (այսպես կոչված՝ սինապսներով, գծապատկերում դրանք ցուցադրված են սլաքներով), որոնցից յուրաքանչյուրն ունի որոշակի ինտենսիվություն (սինապտիկ կապի ուժ) կամ այլ կերպ ասած՝ կշիռ (w1, w2, …, wn):

Հաշվելով մուտքային ազդանշանների կշռված գումարը՝ ստանում ենք նեյրոնի «վիճակի» S ֆունկցիան (այլ կերպ այն անվանում են «գումարիչ»):

$$S = w_{շեղ.} + w1x1 + w2x2 + \ldots + wnxn \quad (1)$$

Սովորաբար գումարը պարունակում է նաև ազատ անդամ, որն անվանում են շեղում, աղմուկ կամ բևեռիչ (wշեղ): Ստանալով որոշակի վիճակ՝ նեյրոնը ակտիվանում է, այսինքն՝ կատարվում է վիճակի արժեքի ձևափոխություն («սեղմում»), և ձևափոխված արժեքը փոխանցվում է հաջորդ շերտի բջիջներին նույնպես որոշակի կշիռներով:

Առավել լայն կիրառություն են գտել ակտիվացման հետևյալ ֆունկցիաները, որոնք կիրառվում են, այսպես կոչված, «ուսուցչով» ուսուցվող նեյրոնային ցանցերի կառուցման համար.

1. Պարզ պերսեպտրոն՝

$$f(S) = 1,\ S \geq 0$$
$$f(S) = 0,\ S < 0$$

2. Ադապտիվ գծային («ադալայն» - ADAptive LInear NEuron) ֆունկցիա՝

$$f(S) = -1,\ S > 0$$
$$f(S) = -1,\ S \leq 0$$

3.Սիգմոիդալ միաբևեռ ֆունկցիա՝

f(S)=(1+ek(S–a))-1 կամ երկբևեռ ֆունկցիա ՝ f(S)=tanh(k(S–a))

4.Գաուսյան ֆունկցիա՝

f(S) = (1 + ek(S – a))2

Գոյություն ունեն նաև «առանց ուսուցչի» ուսուցանվող նեյրոնային ցանցեր (Գրոսսբերգի ինստար և աութստար, WTA – Winner Takes All և այլ), սակայն տնտեսագիտական գործընթացների մոդելավորման համար առավել հարմար է սիգմոիդալ միաբևեռ ֆունկցիայի կիրառությունը (ընդ որում k = -1 և a = 0 արժեքներով), քանի որ սիգմոիդալ ֆունկցիան ամենուր ածանցելի է: Դա թույլ է տալիս օգտագործել գրադիենտային մեթոդները ցանցի ուսուցման գործընթացում և գործնականում թույլ է տալիս ապահովել մոտարկման կամայական ճշտությունը: Այդ դեպքում ակտիվացիայի ֆունկցիան ընդունում է հետևյալ տեսքը.


$$f(S)=(1 + e^{-S}))^{-1}, \quad (2)$$

իսկ ակտիվացիայի ֆունկցիայի ածանցյալը՝

$$df(S)/dS=f(S)*(1 – f(S)) \text{ տեսքը: } (3)$$

Ցանցի նեյրոնները կարելի է պայմանականորեն բաժանել երեք խմբի. մուտքի շերտ, այսինքն՝ մուտքին տրվող գործոնների արժեքները, միջանկյալ կամ, այսպես կոչված, քողարկված շերտ (այն կարող է պարունակել մեկից ավելի շերտեր) և

ելքային շերտ: Գծապատկեր 2-ում ցուցադրված է մեկ քողարկված շերտով (N մուտքով, քողարկված շերտի M նեյրոնով և ելքայինի P նեյրոնով) նեյրոնային ցանցի սխեմատիկ տեսքը:



Գծապատկեր 2. Միաշերտ նեյրոնային ցանցի պատկերը:

Մեր հետազոտություններում օգտագործվել է ցանցի այդպիսի (մեկ քողարկված շերտով) կառուցվածքը, քանի որ այն լիովին բավարարում է դրված խնդիրների լուծման նպատակին և ուսուցման համապատասխան ալգորիթմների կիրառության դեպքում ապահովում է մոտարկման (ապրոքսիմացիայի) բարձր ճշտություն և հավաստիություն:

Սիգմոիդալ նեյրոնային ցանցը ուսուցվում է «ուսուցչով»: Դա նշանակում է, որ մուտքի գործոնների արժեքների յուրաքանչյուր Xt = (X1, X2, …, Xn)t վեկտորին (t = 1 ÷ T, որտեղ T-ն վիճակագրական ընտրանքի մեծությունն է, այսինքն՝ դիտարկումների քանակը) համապատասխանում է որոշակի ելքային արժեք Yt= (Y1, Y2, …, Yn)t: Ուսուցման նպատակն է գտնել կապերի կշիռների այնպիսի արժեքներ, որոնք թույլ կտան մուտքին տրված կամայական Xt վեկտորի համար ստանալ ելքային այնպիսի ազդանշան (արժեք), որը ցանկալի ճշտությամբ կհամընկնի պահանջվող (ընտրանքային) ելքային Yt արժեքի հետ: Սովորաբար մոտարկման ճշտությունը ապահովվում է որոշակի հայտանիշի մինիմալացման միջոցով (օրինակ՝ կարելի է ընտրել նույն հայտանիշը, որը փոքրագույն քառակուսիների մեթոդի կիրառության դեպքում է):

Այդ նպատակով օգտագործվում է սխալի հետադարձ տարածման ալգորիթմը [1], որն այժմ համարվում է բազմաշերտ նեյրոնային ցանցերի ուսուցման առավել արդյունավետ ալգորիթմ:

Ուսուցման սկզբունքը, ըստ այդ ալգորիթմի, հետևյալն է: Ցանցի մուտքին հաջորդաբար տրվում են մուտքային գործոնների Xt վեկտորները: Ազդանշանի

անմիջական (մուտքից դեպի ելք) տարածման (շերտ առ շերտ առաջխաղացման) արդյունքում ելքային շերտի նեյրոնների ելքում ստացվում են Zt արժեքները: Ելքային արժեքները համեմատվում են պահանջվող (ընտրանքային) Yt արժեքների հետ: Եթե համեմատության արդյունքը չի բավարարում ընտրված (օրինակ՝ տարբերությունների քառակուսիների նվազագույնի) չափանիշին, կատարվում է սխալի հետադարձ տարածումը շերտ առ շերտ, ելքից դեպի մուտք, շտկվում են միջնեյրոնային կապերի կշիռները, օրինակ, առավելագույն վայրէջքի եղանակով: Այդ գործընթացը կրկնվում է այնքան, մինչև ապահովվի չափանիշի կատարումը:

Ցանցի ուսուցման արդյունքների ստուգման համար օգտագործվում են ստուգողական ընտրանքի տվյալները: Եթե արդյունքները բավարարում են դրված նպատակներին, ուսուցումը ավարտվում է, հակառակ դեպքում ուսուցանող ընտրանքը ընդլայնվում է, և գործընթացը կրկնվում է:

Նախապես կառուցվում է բազմաշերտ նեյրոնային ցանց, որի կապերի կշիռներին վերագրվում են կամայական արժեքներ: Սովորաբար սիգմոիդալ տեսակի նեյրոնային ցանցերի նախնական նախագծման ժամանակ քողարկված շերտի նեյրոնների և մուտքային գործոնների հարաբերությունը ընտրում են մեկից երեքի սահմաններում - $\frac{M}{N} =$ 1÷3 (այդպիսի հարաբերությունը ապահովում է մոդելի մեծ ճշգրտությունը [2, 3]:

Բոլոր կշիռներին և շեղումներին տրվում են սկզբնական արժեքներ: Այստեղ չափազանց կարևոր է ճիշտ ընտրել սկզբնական արժեքների վերագրման եղանակը: Տարբեր հեղինակներ առաջարկում են սկզբնական արժեքների վերագրման տարբեր եղանակներ՝ հավասարաչափ [4] կամ կախված նեյրոնի մուտքերի և տվյալ շերտում ընդգրկված նեյրոնների քանակից [5]: Բոլոր դեպքերում կշիռներին սկզբում պետք է վերագրվեն փոքր, ընդ որում ոչ հավասար արժեքներ: Դա երաշխավորում է, որ ցանցը չի հագենա որոշ կշիռների մեծ արժեքներով և կխուսափի խիստ կոռելացված գործոնների կշիռների համաչափ աճից: Փոքր կշիռների պատահական բաշխման եղանակը առավել հարմար է ցանցի ուսուցման հետադարձ տարածման ալգորիթմի կիրառության տեսանկյունից:

Սխալի հետադարձ տարածման ալգորիթմը նախատեսում է քայլերի հետևյալ հաջորդականությունը.

Քայլ 1. Ցանցի մուտքին հաջորդաբար տրվում են ուսուցանող ընտրանքի Xt վեկտորները:

Քայլ 2. Շերտ առ շերտ հաշվարկվում է մուտքային ազդանշանի անմիջական (դեպի ելք) տարածման արդյունքը (նշանակենք այն Zt) (1) և (2) բանաձևերով:

Քայլ 3. Հաշվարկվում է ցանցի փաստացի և պահանջվող ելքերի տարբերությունը (սխալը), որը ուսուցման զուգամիտման հայտանիշ է (այն հաճախ անվանում են ուսուցման նպատակային ֆունկցիա և ուսուցման նպատակը դրա նվազեցումն է): Տարբերությունը կարող է հաշվարկվել երկու եղանակով:

Առաջին դեպքում այն հաշվարկվում է մուտքին տրվող յուրաքանչյուր Xt վեկտորի պահանջվող Yt և հաշվարկային Zt ելքերի համար: Սակայն ցանցի արդյունավետ ուսուցման համար 1 և 2 քայլերը կատարվում են ամբողջ ընտրանքի համար, ապա հաշվարկվում է ելքային շերտի սխալը:

Դրանից հետո ելքային շերտի յուրաքանչյուր նեյրոնի համար հաշվարկվում է δ գործակիցը, որը հաջորդ քայլում օգտագործվում է նեյրոնների բոլոր մուտքային ազդանշանների կշիռները վերահաշվարկելու համար:

Քայլ 4. Շերտ առ շերտ վերահաշվարկվում են նեյրոնների մուտքային բոլոր ազդանշանների կշիռները՝ սխալը նվազեցնելու նպատակով (այդ գործառույթը կոչվում է սխալի հետադարձ տարածում): Քանի որ ելքային շերտի նեյրոնը (ընդհանուր դեպքում՝ նեյրոնները) ունի նպատակային արժեքներ (ուսուցանող ընտրանքից), դրա մուտքերի կշիռները շտկվում են δ գործակցի օգնությամբ:

Քայլ 5. 1-4 քայլերը կրկնվում են այնքան, մինչև սխալը ամբողջ բազմության համար չնվազի չափանիշի նախապես որոշված արժեքից:

Հետադարձ տարածման ալգորիթմը օգտագործում է գրադիենտային վայրէջքի մեթոդի տարատեսակը, անընդհատ կարգավորելով կապերի կշիռների արժեքները նվազագույնի ուղղությամբ: Ուսուցման ընթացքում կարող են առաջանալ երեք տեսակի բարդություններ:

Առաջինը, որն ունի չափազանց մեծ նշանակություն, արագության գործակցի (քայլի) ընտրությունն է: Քայլի փոքր արժեքների դեպքում կարող է պատահել այնպես, որ ուսուցման ընթացքում ցանցը հասնի տեղային (լոկալ) մինիմումի կետին, և քանի որ այդ կետում բոլոր ուղղությունները տանում են դեպի վեր, ուսուցման գործընթացը կարող է ընդհատվել՝ այդպես էլ չհասնելով գլոբալ նվազագույնի կետին: Հակառակը, երբ քայլը մեծ է, կարող են շրջանցվել ինչպես լոկալ, այնպես էլ գլոբալ մինիմումների կետերը: Տարբեր հեղինակներ առաջարկում են ուսուցման քայլի ընտրության տարբեր եղանակներ, որոնք հիմնված են պատահական թափահարման (այսինքն՝ քայլերի ստոխաստիկ ընտրության) սկզբունքի վրա:

Մենք առաջարկում ենք այլ լուծում: Սկզբնական փուլում ընտրվում են քայլի մեծ արժեքներ և ընթացքում ֆիքսվում են բոլոր ստացվող տիրույթները կշիռների սահմանային արժեքներով: Երկրոդ փուլում հետազոտվում են բոլոր ստացված տիրույթները քայլի զգալի փոքրացված արժեքի համար: Յուրաքանչյուր դեպքում ուսուցումը վերսկսվում է՝ կշիռներին վերագրելով ֆիքսված համախմբերի արժեքները:

Երկրորդ խնդիրը, այսպես կոչված, ցանցի «կաթվածն է»: Այն առաջանում է, երբ նեյրոնների մեծ մասը ստանում է մեծ կշիռներ և հետևաբար ակտիվացիայի մեծ արժեքներ: Այդ դեպքում ելքային արժեքները մոտենում են սահմանային արժեքին, իսկ ածանցյալների արժեքները՝ զրոյին: Քանի որ հետադարձ տարածման ալգորիթմը օգտագործում է այդ արժեքները կշիռների փոփոխության համար որպես գործակից, վերջինների փոփոխությունները դառնում են աննշան (զրոյին

մոտ), որը որոշակի չափով դանդաղեցնում է հաշվարկի գործընթացը: Խնդրի լուծման համար առաջարկվում է կիրառել համատեղված ալգորիթմ:

Երրորդ խնդիրը կոռելացված գործոնների բացահայտումն է: Այդ պրոբլեմի լուծումը առաջարկված է մի քանի հեղինակների կողմից [օրինակ՝ 3, էջ 525-533]: Խիստ կոռելացված գործոնների կշիռները աճում են համաչափ և առաջանում է ցանցի, այսպես կոչված, հագեցում: Երբ կշիռների փոփոխման ընթացքում որոշակի գործոնների կշիռները շարունակում են հագեցնել ցանցը, կիրառվում է էվրիստիկ եղանակ, որը հաջորդաբար սահմանափակում է այդպիսի նեյրոնների կշիռները և ուսուցման որոշակի փուլերի կատարումից հետո բացահայտում է ավելի խիստ ազդող նեյրոնը՝ միաժամանակ արգելափակելով մյուսի կշռի փոփոխությունը որոշակի սահմաններում:

Բարդ կախվածությունները բացահայտելու և ցանկալի ճշտության հասնելու համար հաճախ անհրաժեշտ է կառուցել ավելի բարդ՝ մի քանի (առնվազն երկու) քողարկված շերտերով և հետադարձ կապերով կառուցվածք ունեցող ցանցեր (դա հիմնականում վերաբերում է տեխնիկական համակարգերին): Ընդ որում, մեր կարծիքով, անհրաժեշտ է հաշվի առնել (մուտքում ունենալ) հնարավորինս շատ, նույնիսկ առաջին հայացքից անօգուտ թվացող գործոններ: Շատ դեպքերում օգտակար է նաև տարբեր շերտերի համար ընտրել ակտիվացման տարբեր ֆունկցիաներ, օրինակ, մեկի համար միաբևեռ, իսկ մյուսի համար՝ երկբևեռ սիգմոիդներ:

Նեյրոնային ցանցի միջոցով կառուցվող մոդելների (նպատակային ֆունկցիայի մոտարկման) հավաստիությունը ստուգելու նպատակով նախագծվել է ցանց, որի մուտքային շերտը պարունակում է երեք, քողարկված շերտը՝ ութ, ելքային շերտը՝ մեկ նեյրոն: Ստուգումը կատարվել է երեք (X, Y, Z) փոփոխականով (գործոններով) F = 2X3 + 2XY2 - 1.5Z2 ֆունկցիայի մուտքային և ելքային արժեքների հիման վրա: X, Y և Z գործոնների արժեքները ստացվել են պատահական թվերի գեներատորի միջոցով:

Սկզբում նեյրոնային ցանցի մոդելավորման ունակությունը ստուգվել է 20-ական գրանցում (մուտք↔ելք զույգեր) պարունակող ուսուցող և ստուգողական ընտրանքների արժեքներով: Աղյուսակ 1-ում ներկայացված են ստուգողական ընտրանքի իրական (F սյունակը) և ուսուցված նեյրոնային ցանցի միջոցով ստացված արժեքները:

Կարելի է տեսնել, որ ստուգողական ընտրանքի համար միջին սխալը կազմել է 2.42 տոկոս: 50-ական գրանցում պարունակող ուսուցող և ստուգողական ընտրանքների համար սխալը կազմեց 0.36 տոկոս: Նշանակում է, որ մոդելի մոտարկման աստիճանի գնահատման չափանիշների վրա ազդող գործոնների ճիշտ ընտրության, արժեքների հավաստիության և դիտարկումների բավարար քանակի դեպքում նեյրոնային ցանցը հնարավորություն է ընձեռում կառուցելու բարձր հավաստիություն ապահովող և ոչ գծային կապերը հաշվի առնող իմիտացիոն մոդելներ:

Աղյուսակ 1
Ուսուցանված նեյրոնային ցանցի ստուգման արդյունքները

X	Y	Z	F	Նեյրոցանցով ստացված արդյունքը	Բացարձակ սխալը
1,753	1,812	3,208	6,849	6,407	0,442
1,713	2,346	2,167	21,87	21,449	0,421
1,535	3,105	3,204	21,437	21,366	0,071
1,29	2,839	2,063	18,698	18,847	0,149
1,83	1,169	2,886	4,771	4,758	0,013
1,328	1,018	2,902	-5,196	-4,761	0,435
1,005	1,395	2,083	-0,561	-1,003	0,442
1,931	1,053	2,17	11,611	11,904	0,292
1,959	2,612	3,308	25,335	25,677	0,342
1,995	1,775	2,381	19,936	19,73	0,206
1,792	2,99	2,047	37,262	37,034	0,228
1,888	2,572	3,363	21,477	21,128	0,349
1,403	1,359	2,815	-1,174	-1,259	0,085
1,774	3,494	3,974	30,8	30,437	0,363
1,426	1,329	3,783	-10,636	-10,395	0,241
1,693	3,835	2,328	51,354	51,488	0,134
1,43	1,631	3,751	-7,65	18,331	0,366
1,073	1,861	3,624	1,168	1,863	0,694
1,579	2,314	3,576	18,897	19,491	0,594
1,017	1,744	3,349	9,732	9,124	0,609
Միջին սխալը					2,42%

Առաջարկվող մեթոդի փորձարկումը և գործնական կիրառությունը իրականացվել է մեծածախ առևտրով զբաղվող «Պարտնյոր» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունում: Ընկերության ֆինանսական կայունության և շահութաբերության ցուցանիշները բավականաչափ բարձր են: Օրինակ՝ ընթացիկ իրացվելիության գործակցի արժեքը 2006-2008 թթ. ժամանակահատվածի ընթացքում 2.7-ից աճել է մինչև 2.9, իսկ վաճառքի շահութաբերությունը՝ 17.4-ից մինչև 17.8 տոկոս: Սակայն նույն ժամանակահատվածում նվազել է ակտիվների շահութաբերությունը (0.31-ից մինչև 0.25 տոկոս): Դա բացատրվում է այն փաստով, որ ընկերությունը, կուտակելով ակտիվները (յուրաքանչյուր տարի զուտ շահույթի մոտ 70 տոկոսը կուտակվում է հաշվարկային հաշիվներում), չի կատարում լրացուցիչ ներդրումներ գործունեությունն ընդլայնելու նպատակով:

Համաձայն ինդիկացիայի ընդունված շափանիշների համակարգի՝ «Պարտնյոր» ընկերությունն ունի ֆինանսական գործունեության ռիսկայնության միջին մակարդակ, ընդ որում դրա հիմնական պատճառը շրջանառու միջոցների շրջանառելիության նվազումն է, որպես հետևանք՝ վաճառքների ծավալի (այսինքն՝ իրացումից ստացված հասույթի) անկումը:

Բանալի բառեր՝ *նեյրոն, պերսեպտրոն, նեյրոնային ցանց, սիգմոիդալ նեյրոն, բազմաշերտ նեյրոնային ցանց, հետադարձ տարածման ալգորիթմ, ռիսկայնության ասպիճան:*

Օգտագործված գրականություն

1. Haykin S., Neural networks, a comprehensive foundation, N.Y.: Macmillan College Publishing Company, 1994, էջեր 61-64:

2. Осовский С., Нейронные сети для обработки информации, М., Финансы и статистика, 2002, էջ 344:

3. Rumelhart D. E. Hinton G. E., Williams R. J. Learning internal reprentations by error propagation. In Parallel distributed processing, vol. 1, 62. Cambridge, MA: MIT Press,. 1986, էջեր 318-362:

4. Thimm G., Fiesler E. Neural network initialization. Natural to Artificial *Neural* Com putation, Malaga, IWANN, 1995, էջեր 533–542:

5. Weymaere N., Martens J.P. On initialization and optimization of multilayer perception, IEEE Transactions on Neural Networks, Vol. 5, էջեր 738 – 751:

APPLICATION OF ARTIFICIAL INTELLIGENCE METHODS FOR MODELING ECONOMIC PROCESSES

A. K. KHURSHUDYAN
PhD in Economics, professor,
Professor of the Informatics and Physical-Mathematical Sciences Chair
V. K. AVETISYAN
PhD in Computer Science,
Head of GSU IT deaprtment,
Lecturer of the Informatics and Physical-Mathematical Sciences Chair

The article deals with some aspects of the application of multilayer neural networks for modeling of economic processes, in particular, assess the level of risk of the financial condition of enterprises.

ПРИМЕНЕНИЕ МЕТОДОВ ИСКУССТВЕННОГО ИНТЕЛЛЕКТА В МОДЕЛИРОВАНИИ ЭКОНОМИЧЕСКИХ ПРОЦЕССОВ

А. К. ХУРШУДЯН
Кандидат экономических наук, доцент,
Доцент кафедры информатики и физико-математических наук
В. К. АВЕТИСЯН
Кандидат технических наук,
Руководитель отдела информационных технологий ГГУ,
Преподаватель кафедры информатики и физико-математических наук

В статье рассмотрены некоторые аспекты применения многослойных нейронных сетей для моделирования экономических процессов, в частности, оценки финансового состояния уровня риска предприятий.

ՀՀ ՏԱՐԱԾՔՈՒՄ ՀՈՂԵՐԻ ԴԵԳՐԱԴԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԹԹՎԱՅԻՆ ԱՆՁՐԵՎՆԵՐԻ ՆԵՐԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մ. Պ. ԱՎԱԳՅԱՆ
Գյուղատնտեսական գիտությունների դոկտոր, ԳՊՀ պրոֆեսոր,
ԳՊՀ բնագիտական ֆակուլտետի դեկան

ՀՀ տարածքի օդային ավազանի աղտոտումը համարվում է տեղային նշանակության կարևոր հիմնախնդիրներից, որոնք կապված են էներգետիկ նոր ենթակառուցվածքների ստեղծման, հատկապես, ջէկ-երի, ինչպես նաև լեռնահանքային արդյունաբերության գործունեության, տրանսպորտային միջոցների արտանետումների հետ: Ավտոմոբիլային տրանսպորտի մեծ տեսակարար կշիռը, դրանց բարոյական մաշվածությունը հանգեցրել են վառելանյութի թերայրմանը և օդում վտանգավոր գազերի կուտակմանը: Երևան քաղաքում ավտոմեքենաներից արտանետված գազերի քանակը մի քանի անգամ գերազանցում է թույլատրելի նորմաները: Մթնոլորտում կուտակված ծծմբային և ազոտային միացությունները պատճառ են դառնում հողերի քիմիական աղտոտմանը, մասնավորապես թթվային անձրևների առաջացմանը:

Հողերի քիմիական աղտոտումը կատարվում է նաև մթնոլորտ արտանետված արդյունաբերական թափոններով, ծխի և մրի մեջ եղած զանազան թունավոր նյութերով, որոնք հողի մեջ են թափանցում մթնոլորտային տեղումների միջոցով: Այս գործընթացն առավել սուր է արտահայտված լեռնահանքային արդյունաբերական ձեռնարկություններին հարակից հողատարածքներում: Այստեղ հողի մեջ հայտնաբերվել են ծանր մետաղների, հատկապես նիկելի, կոբալտի, կադմիումի, սնդիկի, կապարի բավական մեծ քանակություն:

Հողի հատկությունների վատթարացման գործընթացում էական ազդեցություն են ունեցել հատկապես թթվային անձրևները: Մթնոլորտում արդյունաբերական արտանետումներից քլորաջրածնի (HCl), ծծմբի օքսիդի (SO2), ազոտի ենթաօքսիդների (NO, NO2) և խոնավության փոխազդեցության հետևանքով ձևավորվում են թթվային տեղումներ: Թթվային անձրևները թթվեցնում են հողերը, ջրային ավազանները՝ հանգեցնելով ձկների և մյուս ջրային կենդանիների ոչնչացմանը:

Հողային միջավայրում PH-ի փոփոխման հետևանքով ընկնում է հողի կենսաբանական ակտիվությունը՝ աննպաստ պայմաններ ստեղծելով հողային միկրոօրգանիզմների՝ հատկապես ազոտ ֆիքսող բակտերիաների նորմալ կենսագործունեության համար, որի արդյունքում ընկնում է հողի բերրիության մակարդակը:

Թթվային անձրևների հետևանքով ստորերկրյա ջրերում կտրուկ մեծանում է ծանր մետաղների, մասնավորապես կապարի, պղնձի, ցինկի, կադմիումի, հատկապես ալյումինի պարունակությունը, որը ոչնչացնում է բույսերը: Էկոսֆերայի

բաղադրիչների՝ մթնոլորտի, ջրոլորտի և քարոլորտի վրա, թթվային ներգործությամբ պայմանավորված, տեղի են ունենում ասիդիֆիկացման գործընթացներ, որոնք որակական փոփոխությունների ենթարկեցին սկզբում խոշոր ջրավազանները, այնուհետև հողային ծածկույթը, որն էլ իր հերթին հանգեցրեց հողի վիճակի վատթարացմանը:

Ընդունված է թթվային անվանել այն անձրևաջուրը, որի PH<5: Բնական պայմաններում անձրևաջուրն ունի չեզոքին մոտ կամ թույլ թթվային ռեակցիա (PH≤7): CO2-ի 200C ջերմաստիճանի ազդեցությամբ անձրևաջրի PH-ը իջնում է 5,0: Պայմանավորված մթնոլորտում պարունակվող ծծմբային գազերի, մասնավորապես ծծմբային անհիդրիդի՝ SO3 –ի, ինչպես նաև ազոտի օքսիդներում NaO2-ի առկայությամբ՝ անձրևաջրում կարող են առաջանալ ծծմբական և ազոտական թթուներ՝

H2O+SO2=H2SO3, որն այնուհետև միանում է մթնոլորտում պարունակվող օզոնին՝ O3-ին

H2SO3+O3= H2SO4+O2

2NO2+ H2O=HNO3+HNO2, ազոտական և ազոտային թթուներ:

Արդյունքում անձրևաջրում թթվային ռեակցիան կարող է լինել 10 անգամ ավելի, այսինքն՝ PH=4, իսկ առավել աղտոտված շրջաններում՝ PH=3.5: Թթվային անձրևների հիմնական բաղադրիչներից է ամոնիակը՝ NH3-ը, որը ձևավորվում է մթնոլորտում էլեկտրական պարպումների ժամանակ ջրածնի և ազոտի միացման ռեակցիայի արդյունքում: Թթվային անձրևները կարող են լինել ինչպես բնական, այնպես էլ մարդածին: Բնական աղբյուրներից անտառային հրդեհները, հրաբխային ժայթքումները և այլն: Մարդածին աղբյուրներն են լեռնահանքային արդյունաբերությունը, մետալուրգիան, տրանսպորտը, ջերմաէլեկտրակայանները և այլն: Հարկ է նշել, որ վերջինս CO2-ի էմիսիայի գլխավոր աղբյուրն է:

Ներկայումս թթվային միացությունների մարդածին էմիսիան մոտ 3 անգամ գերազանցում է բնական արտանետումները: Թթվային անձրևները և ասիդիֆիկացիան ազոտի և ծծմբի գլոբալ կենսաերկրաքիմիական ցիկլի մարդածին փոփոխությունների հետևանք են: Ազոտի մարդածին կուտակումը էկոսֆերայում հանգեցնում է ասիդիֆիկացման գործընթացների խորացմանը, որը ազդում է նաև երկրագնդի ճառագայթային բալանսի, ինչպես նաև սննդատարրերի գլոբալ հաշվեկշռի վրա: Լանդշաֆտների և դրանց բաղադրիչների վրա թթվային անձրևների ներգործությունը կապված է միջավայրի ջրաջերմային պայմանների հետ: Անբավարար բնական խոնավապահովվածություն ունեցող տարածքներում թթվային անձրևները չեզոքացվում են, մինչդեռ ավելցուկային խոնավություն ունեցող շրջաններում թթվային անձրևների ներգործությունը կենսոլորտի վրա ունենում է առավել անբարենպաստ ներգործություն: Թթվային անձրևները փոխում են բույսերի վիճակը՝ կախված դրանցում ջրածնի, ազոտի. ծծմբի կոնցենտրացիայից:

Թթվային անձրևների առկայությունը նկատելի է աշխարհի շատ երկրներում: Գոյություն ունեն ջրում դրանց ազդեցության երեք փուլեր: Ջրում թթվայնության

աճի հետ բույսերը սկսում են ոչնչանալ, նվազում է թթվածնի քանակը, ջրիմուռները սկսում են ծաղկել, նկատելի է դառնում ջրամբարների ճահճացում (էվտրոֆիկացիա): Երկրորդ փուլում թթվայնությունը (PH=5.5) ջրի ստորին շերտում ոչնչացնում է բակտերիաները, այնուհետև՝ պլանկտոնը: Երրորդ փուլում, երբ թթվայնությունը դառնում է PH=4.5, ոչնչանում են գրեթե բոլոր ձկներն ու գորտերը, միջատները:

Թթվային անձրևների ազդեցության տակ հողային միջավայրում տեղի է ունենում բարձր տոկսիկություն ունեցող ալյումինի շարժունակության մեծացում: Հողային միջավայրում ալյումինը անշարժ է, երբ հողի PH գերազանցում է 4.2-ը: 4.2-ից նվազելու դեպքում այն կտրուկ աճում է: Ասիդիֆիկացման գործընթացը հողային միջավայրում դանդաղում է՝ կապված հողի կլանող կոմպլեքսում պարունակվող կլանված կատիոնների գումարից: Կլանված կատիոնները թթվայնութան նվազման գործընթացներում արգելակի դեր են կատարում: Նշենք՝ PH-ի նվազումը զգալիորեն կախված է նաև հողի բուֆերական հատկությունից, այսինքն՝ արտաքին ազդակներից, որոնք ձգտում են փոխել հողային լուծույթի PH բնույթը, հողի դիմադրողականությունը: PH-ի փոփոխմամբ պայմանավորված՝ հողային միջավայրից լվացված ալյումինը կարող է կուտակվել ջրային միջավայրում՝ առաջ բերելով կենսաբազմազանության էական փոփոխություն: Բարձր բուֆերականություն ունեցող հողերում լուծույթի ռեակցիայի կայունությունը բացատրվում է այն հանգամանքով, որ միջավայրում հանդես եկած թթվային կամ հիմնային լուծույթը փոխազդեցության մեջ է մտնում հողի կոլոիդների հետ, հիմքի կամ թթվի մի մասը չեզոքանում է, և թուլանում է ռակցիայի փոփոխություն առաջ գալու հնարավորությունը:

Լեռնահանքային արդյունաբերության զարգացման, ինչպես նաև տրանսպորտային և այլ արտանետումների արդյունքում մեր հանրապետության տարածքում՝ հատկապես հյուսիսարևելյան շրջաններում, ավելացել է թթվային անձրևների ինտենսիվությունը, որը հանգեցրել է օգտագործվող հողատարածքների դեգրադացիայի:

Հողամելիորատիվ վիճակի փոփոխության պարագայում զգալիորեն մեծացել են բացասական ներգործությունները հողային միկրոֆլորայի և միկրոֆաունայի վրա: Ազոտ ֆիքսող բակտերիաները, որոնք հատկապես զգայուն են միջավայրի PH-ի փոփոխության նկատմամբ, դադարում են ազոտի կենսաբանական կապման գործընթացներ իրականացնելուց, արդյունքում նիտրատների կուտակումը դառնում է անհնար՝ բույսերին զրկելով ազոտային միացություններից:

Թթվային անձրևներից էապես տուժում են նաև բույսերը: Թափվելով բույսերի տերևների վրա՝ առաջ են բերում քլորոզ հիվանդությունը, որը պատճառ է դառնում քլորոֆիլի հատիկների քայքայմանը՝ բույսերին զրկելով արդյունավետ ֆոտոսինթեզ կատարելու հնարավորությունից, որի արդյունքում բույսերը չորանում և

ոչնչանում են: Թթվային անձրևները հատկապես շատ են ազդում մշակաբույսերի բերքատվության վրա՝ հանգեցնելով զգալի կորուստների:

Թթվային անձրևների բացասական ազդեցությունը շրջակա միջավայրի վրա չեզոքացնելու համար կարևոր նշանակություն ունի մթնոլորտի աղտոտման դեմ կանխարգելիչ միջոցառումների իրականացումը: Առաջին հերթին հանքարդյունաբերության մեջ անհրաժեշտ է նորագույն տեխնոլոգիաների ներդրման ճանապարհով հնարավորինս նվազեցնել ծծմբային և ազոտային արտանետումները մթնոլորտ, գործնական քայլեր ձեռնարկել հատկապես ծծմբային միացությունները ծծմբական թթվի արտադրության մեջ կիրառելու գործում, որի կարիքը մեր հանրապետությունը շատ ունի, հատկապես Արարատյան դաշտի մոտ 30 հազար հեկտար աղուտ հողերը քիմիական մելիորացիա կատարելու համար:

Բանալի բառեր՝ *թթվային անձրևներ, ծծմբային անհիդրիդ, ազոտի երկօքսիդ, լուծույթի ռեակցիա:*

Օգտագործված գրականություն

1. Հայրապետյան Է. Մ., Մելիորատիվ հողագիտություն, Երևան, 1987:
2. Հայրապետյան Է. Մ., Հարությունյան Լ. Վ., Բնության պահպանության հիմունքներ, Երևան, 1983:
3. Հայրապետյան Է. Մ., Հողագիտություն, Երևան,«Աստղիկ» հրատարակչություն, 2000:

THE PECULIARITIES OF SOIL DEGRADATION UNDER THE INFLUENCE OF ACID RAINS IN THE REPUBLIC OF ARMENIA

M. P. AVAGYAN

Doctor of Agricultural Sciences, Professor of GSU

Dean of Faculty of Natural Scineces GSU

Sulfur and nitrogen compounds accumulated in the atmosphere result in the acid rains. As a result of the change of Ph, the biological activeness of soil decreases creating unfavourable conditions for the soil microorganizms, particularly for the normal activity of nitrogen fixing bacteria. The intensity of acid rains has increased in the north-eastern part of our republic. The prevention of the atmospheric pollution has an important role for neutralizing the negative influence of acid rains on the environment. It is necessary to apply innovative technologies in the mining industry which will reduce the sulfur dioxide emissions. The effective use of sulfur compounds

can result in the production of sulfuric acid to be used for the chemical amelioration of the saline soils of Ararat Valley.

ОСОБЕННОСТИ ДЕГРАДАЦИИ ПОЧВ РА ПОД ВОЗДЕЙСТВИЕМ КИСЛОТНЫХ ОСАДКОВ

М. П. АВАГЯН
Доктор сельскохозяйственных наук, профессор ГГУ
Декан факультета естествознания ГГУ

Накопленные в атмосфере серные и азотные соединения являются причиной образования кислотных дождей, что приводит к ухудшению свойств почвы. В результате изменения pH падает биологическая активность почвы, создавая неблагоприятные условия для почвенных микроорганизмов, в частности, для нормальной жизнедеятельности азотофиксирующих бактерий.

В результате развития горно-металлургической промышленности РА и выброса выхлопных токсичных газов транспортных средств увеличилась интенсивность кислотных дождей, в особенности в северо-восточных регионах Армении, что привело к деградации почвы. В целях нейтрализации отрицательного воздействия кислотных дождей необходимо внедрить современные технологии в горно-металлургическую промышленность, что предотвратит выброс азотно-серных соединений, загрязняющих атмосферу. Из серных соединений возможно получить серную кислоту, которую можно использовать при мелиорации солончаков.

ԲՆԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ՏՈՒՐԻԶՄԻ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՈՐՈՇ ՀԱՐՑԵՐ

Լ. Ա. ՄԿՐՏՉՅԱՆ
ԳՊՀ դասախոս

Զբոսաշրջության զարգացումը համարվում է բազմաթիվ երկրների տնտեսության զարգացման հիմքը: Հայաստանի Հանրապետությունում ևս տուրիզմի զարգացումը համարվում է տնտեսության զարգացման գերակա ուղղություններից մեկը, սակայն այն ունի ինչպես դրական, այնպես էլ բացասական նշանակություն:

Զբոսաշրջության ազդեցությունը շրջակա միջավայրի վրա կարող է լինել ուղղակի, անուղղակի և խթանող, ինչպես նաև դրական և բացասական: Զբոսաշրջությունը չի կարող զարգանալ առանց շրջակա միջավայրի հետ փոխազդեցության, սակայն զբոսաշրջության զարգացման, կառավարման և հստակ պլանավորման միջոցով հնարավոր է կրճատել բացասական ազդեցությունը և ավելացնել դրականը: 20-րդ դարի 70-ական թվականների վերջերին և 80-ականների սկզբներին հետազոտողները նշեցին զբոսաշրջության՝ բնական միջավայրի վրա ունեցած բացասական ազդեցության մասին: Զբոսաշրջային արտադրանքի ծավալի քանակական աճի տեմպերի նվազումը և հասարակական «էկոլոգիական» գիտակցության ուժեղացումը արևմտաեվրոպական երկրներում 80-ական թվականների կեսերին պայմանավորեցին անցումը զբոսաշրջության զարգացման նոր մեթոդի: Ամբողջ աշխարհում բանավեճ սկսվեց տնտեսության մեջ զբոսաշրջության օգուտների և վնասների, բնապահպանության և հասարակության վերաբերյալ այն դեպքում, երբ նախկինում խոսվում էր միայն տնտեսության մասին: Զբոսաշրջության մեթոդաբանության զարգացման մեջ զգալի ներդրում կատարեցին շվեյցարական և արևմտագերմանական գիտնականները՝ Ի. Կրիպպենդորֆը, Ռ. Յունկը և Խ. Վայսը: 1975 թվականին շվեյցարացի Ի. Կրիպպենդորֆը առաջին անգամ բարձրացրեց բնական միջավայրի վրա զբոսաշրջության զարգացման բացասական հետևանքների հիմնախնդիրը, 1980 թվականին տպագրվում են Ռ. Յունկի, իսկ 1981 թվականին՝ Խ. Վայսի հոդվածները[1]: Վերջին տարիներին լույս են տեսել մի շարք գիտական աշխատություններ՝ նվիրված զբոսաշրջության հետ կապված սոցիալական և բնապահպանական հիմնախնդիրներին: Կատարված հետազոտությունների արդյունքների հիման վրա ձևավորվում և կարևոր նշանակություն է ստանում, այսպես կոչված, «փափուկ» զբոսաշրջության հայեցակարգը: Միջազգային զբոսաշրջության հայեցակարգի դրական բաղադրիչը ներառում է պատմական հուշարձանների պահպանությունը և վերականգնումը, ազգային այգիների ստեղծումը, լողափերի և ծովային ժայռերի պաշտպանությունը, անտառների պահպանումը, արգելոցների ստեղծումը և այլն:

Բազմաթիվ զարգացող երկրներում, այդ թվում նաև ՀՀ-ում, անհրաժեշտ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով ոչ մի լուրջ քայլ չի կատարվել բնության և շրջակա միջավայրի պահպանության և պաշտպանության ուղղությամբ, ավելին՝ սոցիալական դժվարությունների պատճառով տարիներ շարունակ անխնա կտրատվել են անտառները, ոչնչացվել է կենդանական աշխարհը, ավերվել են բնական և պատմական հուշարձանները: Իսկ զբոսաշրջությունից ստացվող եկամուտները ներդրվել են տնտեսապես ավելի շահութաբեր ոլորտներում: Շրջակա միջավայրի վրա զբոսաշրջության ազդեցությունը գնահատելու ժամանակ կարևոր է, թե ինչ տեսանկյունից է այն գնահատվում, քանի որ այն, ինչն ըստ զբոսաշրջիկի դրական է, կարող է բացասական լինել տեղական բնակչության համար: Օրինակ՝ արգելոցների ստեղծումը կարող է արոտավայրերի կրճատման, հետևաբար սննդամթերքի արտադրության կրճատման պատճառ դառնալ[2]:

Զբոսաշրջության անվերահսկելիությունը պոտենցիալ սպառնալիք է ամբողջ աշխարհում շատ բնական տարածքների համար: Տվյալ տարածքի վրա հսկայական ճնշումները կարող են հանգեցնել մի շարք բացասական երևույթների, ինչպիսիք են հողի էրոզիան, աճող աղտոտվածությունը, արտանետումների պատճառով ջրի աղտոտումը, բնական ապրելատեղերի կորուստը, կենդանական և բուսական վտանգված տեսակների վրա աճող ճնշումը և անտառային հրդեհները:

Զբոսաշրջության ճնշումը բնական ռեսուրսների վրա հատկապես մեծ է այն տարածքներում, որտեղ ռեսուրսներն արդեն իսկ սակավ են:

Այս ոլորտը հիմնականում գերօգտագործում է ջրային ռեսուրսները հյուրանոցների, լողավազանների, գոլֆի դաշտերի և զբոսաշրջիկների անձնական օգտագործման համար: Օրինակ՝ Միջերկրածովյան շրջանում ջրի պակասության հարցը բավականին մտահոգիչ է, քանի որ այստեղ, տոթ եղանակի հետ մեկտեղ, շատ են նաև զբոսաշրջիկները, ովքեր օրական 400 լիտր ջուր են օգտագործում տարբեր նպատակներով[3]:

Քանի որ տուրիստական ոլորտը Հայաստանի Հանրապետությունում ունի սեզոնային բնույթ, տվյալ տարածքի վրա տուրիստների քանակը սեզոնի ամենաթեժ ժամանակ մի քանի անգամ ավելի է «մեռյալ» սեզոնից, հետևաբար բնական միջավայրի և տեղացիների վրա ճնշումն այդ ընթացքում մեծանում է (EEA, 2003): Դա տեղի է ունենում հետևյալ գործոնների արդյունքում.

1. ջրային և հողային ռեսուրսների ինտենսիվ օգտագործում,
2. էներգիայի անխնա օգտագործում,
3. տուրիստական համալիրների և ենթակառուցվածքների կառուցման հետևանքով լանդշաֆտի փոփոխություն,
4. հանգստյան գոտիների և օդի աղտոտում,
5. բույսերի վնասում,
6. տեղաբնիկների և ֆաունայի խանգարում:

Տուրիստների թվի աճը զգայուն բնական գոտիներում կարող է վտանգի տակ դնել այդ վայրերի բնական ռեսուրսները: Ինչպես նաև տուրիստական գործունեությունը մրցակցության մեջ է մյուս ոլորտների, օրինակ, գյուղատնտեսության և անտառտնտեսության հետ,:

Նկատելի է նաև տուրիզմի բացասական ազդեցությունը կենսաբազմազանության վրա: Խոցելի տեղում են հողերն ու անտառները: Շինարարության պատճառով շատ հաճախ անտառահատումներ են կատարվում, ոչնչացվում են գեղատեսիլ լանդշաֆտները: Օրինակ՝ Հայաստանի Հանրապետության մի շարք վայրերում՝ Դիլիջանում, Ծաղկաձորում և այլուր, հյուրանոցային տնտեսություններ կառուցելու համար հատում են անտառները, որոնք զբաղեցնում են ՀՀ տարածքի 6 %-ից էլ քիչ տարածք և համարվում են հիմնականում 1-ին և 2-րդ կարգի անտառներ: Անտառահատումներն առաջացնում են այնպիսի բազմաթիվ խնդիրներ, ինչպիսիք են հողերի էրոզիան, սողանքների և սելավների ակտիվացումը, անտառաբնակ կենդանիների ոչնչացումը:

Գեղարքունիքի մարզում հիմնականում խաթարվում է Սևանա լճի էկոլոգիական հավասարակշռությունը: Ափամերձ հատվածներում հյուրանոցների, հյուրատների ու քոթեջների կառուցումը նպաստում է ջրի աղտոտվածությանը: Բացի դրանից՝ Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման ներկա փուլում նախկինում կառուցած գրեթե բոլոր շինությունները մնալու էին ջրի տակ, ուստի շատերն ապամոնտաժվեցին, սակայն, այնուամենայնիվ, կառուցապատված որոշ հատվածներ անցան ջրի տակ՝ աղտոտելով լիճը:

Տուրիզմը բացասական ազդեցություն է թողնում նաև ջրային ռեսուրսների վրա:

Ջուրը, հատկապես քաղցրահամ, մեր մոլորակի ամենաանհրաժեշտ բնական ռեսուրսներից մեկն է: Տուրիստական տնտեսությունները սովորաբար անխնա օգտագործում են ջրային ռեսուրսները հյուրանոցների, ջրավազանների, գոլֆի հրապարակների, տուրիստների ուղղակի օգտագործման համար, որը կարող է հանգեցնել ինչպես ջրային ռեսուրսների դեֆիցիտի, այնպես էլ հեռացվող ջրերի ծավալի մեծացմանը, որը սովորաբար ակտուալ է Սևանա լճի և ՀՀ այլ ջրային տարածքների համար, որտեղ ջրային ռեսուրսները սահմանափակ չեն, բայց աղտոտման պատճառով դառնում են ոչ պիտանի: Ամեն տարի մեկ մարդու հաշվով տուրիստներն օգտագործում են 300 լիտրից մինչև 800 լիտր (հինգաստղանի հյուրանոցներում) և արտահանում մոտ 180 լիտր հեռացվող ջուր (EEA, 2003):

Կապված տուրիզմի և հանգստի կազմակերպման հետ՝ բնակավայրերի, ճանապարհների, օդանավակայանների ինտենսիվ շինարարությունը, որպես շինարարական նյութ՝ հողային ռեսուրսների օգտագործումը հանգեցնում է հողի հյուծման և դեգրադացիայի: Դա վերաբերում է ինչպես վերականգնվող, այնպես էլ չվերականգնվող ռեսուրսներին: Այդպես նաև անտառային ռեսուրսները, որոնք տուժում են տուրիստական գործունեությունից:

Տուրիստների թվի մեծացումը իր հետ բերում է օդային, ավտոմոբիլային, երկաթուղային փոխադրումների մեծացում: Օդային փոխադրումների 60%-ը կապված է տուրիզմի հետ, հետևաբար տուրիզմը պատասխանատվություն է կրում ածխաթթու գազով օդի աղտոտման համար: Տրանսպորտային միջոցներից արտանետված գազերը և արտադրական թափոնները, էներգիայի օգտագործումը առաջացնում են թթվային անձրևներ, հանգեցնում են կլիմայի փոփոխության և օդի լոկալ աղտոտվածության: ՀՀ-ում՝ մասնավորապես Գեղարքունիքի մարզում, դեռ զբոսաշրջությունը չի հասել այնպիսի չափերի, որ բացասաբար ազդի օդային ավազանի վրա, այնուհանդերձ տուրիզմի բացասական ազդեցությունը օդային ավազանի վրա տարեցտարի մեծանում է:

Հյուրանոցներն օգտագործում են մեծ քանակությամբ ջուր և էլեկտրաէներգիա: Օրինակ՝ տուրիստն օգտագործում է 1/3-ով ավելի ջուր, քան տեղացիները: Էլեկտրաէներգիայի օգտագործումը միաստղանի հյուրանոցի 1մ^2-ի վրա կազմում է 157 կվտ/տարի(EEA,2003):

Որոշ տուրիստական կազմակերպություններ արդեն միջոցներ են ձեռնարկում էներգիայի խնայողության համար: Օրինակ՝ Մեծ Բրիտանիայում 1997-1999թթ. ընթացքում «խնայել են» 9000 տ ածխաթթու գազ:

Հյուրանոցային և ժամանցային համալիրների շինարարությունը հաճախ հանգեցնում է ջրահեռացման համակարգի ծանրաբեռնվածության: Մաքրող կայանները սեզոնի գագաթնակետին չեն հասցնում ամբողջությամբ մաքրել ջրերը, և հոսող ջրերը լճեր ու ծովեր են տանում թափոնները՝ բացասաբար ազդելով ֆլորայի և ֆաունայի վրա:

Ջրի աղիության փոփոխությունը բացասաբար է ազդում մերձափնյա միջավայրի վրա: Վնասում են նաև մարդկանց: ՀՀ-ում այս տեսանկյունից հատկապես մեծ վտանգի առաջ է կանգնած Սևանա լիճը՝ իր էկոհամակարգով: Լիճ թափվող գետերն ու գետակներն իրենց հետ մեծ քանակությամբ աղտոտված ջուր են տանում դեպի լիճ, եթե դրան էլ գումարվեն հյուրանոցների, հյուրատների և քոթեջների կոյուղաջրերը, ապա լճի ջրի աղտոտվածությունը կհասնի ահռելի չափերի, և լճի էկոհամակարգը կհայտնվի ոչնչացման վտանգի տակ: Այս ուղղությամբ ՀՀ կառավարությունը շատ անելիքներ ունի՝ Սևանա լճի աղտոտումը հետագայում թույլ չտալու և կանխելու համար:

Որոշ տարածքներում ավանդական տուրիստական գործունեությունը պայքարի մեջ է բնության և տեղական ճարտարապետության հետ: Հայտնի կուրորտային համալիրները կարող են տեղաբաշխված լինել ցանկացած վայրում, բայց դա չի նշանակում, որ նրանք ներդաշնակության մեջ են տեղանքի հետ:

Տեսարժան բնական գոտիներում, որտեղ բարձր է տուրիստների կենտրոնացումը, ակտուալ հիմնախնդիր է համարվում թափոնների հեռացումը: Աղբանոցների ոչ ճիշտ տեղաբաշխումը կարող է անդրադառնալ տարածքի գեղագիտության վրա: Պինդ թափոնները և աղբը բացասաբար են ազդում ջրային ռե-

սուրսների և առափնյա գծի գրավչության վրա: Քիչ չեն նաև պատմական և բնական հուշարձանների քայքայման երևույթները՝ դրանցից քարեր պոկելու, դրանց վրա ստորագրություններ թողնելու հետևանքով և այլն:

Այսպիսով, տուրիզմը դարձել է աշխարհի բազմաթիվ պետությունների տնտեսության զարգացման հիմնական ուղղություններից մեկը, սակայն, այնուամենայնիվ, չպետք է մոռանալ նաև տուրիզմի բացասական հետևանքների մասին: Այդ իսկ պատճառով տուրիստական ենթակառուցվածքների կառուցումն ու հետագա շահագործումը պետք է իրականացվի պետության խիստ հսկողության ներքո, և ամեն ինչ պետք է արվի էկոլոգիական հավասարակշռությունը պահպանելու համար: Պետք է բնության վրա զբոսաշրջության ազդեցությունը կանոնակարգվի օրենքով սահմանված կարգով:

Բանալի բառեր՝ *զբոսաշրջություն, էկոլոգիական գիտակցություն, «փափուկ» զբոսաշրջություն, «մեղմալ» սեզոն, էսթետիկ աղտոտվածություն, հողերի դեգրադացիա, թթվային անձրև, էներգիայի օգտագործում:*

Օգտագործված գրականություն

1. Сапрунова В. Б., Туризм: эволюция, структура, маркетинг, М., Ось-89, 1997г., с. 49.
2. Մկրտչյան Մ.,Հաջոյան Ռ., Զբոսաշրջության բնապահպանական նշանակությունը:
3. www.regent.am

SOME ISSUES ON NEGATIVE IMPACT OF TOURISM ON THE NATURAL ENVIRONMENT

L. A. MKRTCHYAN
GSU lecturer

Tourism has become one of the main directions of the economic development in many countries; however, the negative impacts of tourism should not be forgotten as well. That is why the construction of the tourism infrastructures and their further usage should be implemented under the strict control of government and everything should be done to preserve the ecological balance.

О НЕКОТОРЫХ ВОПРОСАХ НЕГАТИВНОГО ВЛИЯНИЯ ТУРИЗМА НА ЕСТЕСТВЕННУЮ СРЕДУ

Л. А. МКРТЧЯН
Преподаватель ГГУ

Туризм стал основным направлением экономического развития во многих странах, однако, не следует забывать о негативном влиянии туризма. Поэтому, строительство туристической инфраструктуры и ее использование должно осуществляться под строгим контролем государства, и все должно быть сделано для поддержания экологического баланса.

НАЦИОНАЛЬНАЯ ИДЕЯ В МИФОТВОРЧЕСТВЕ

В. Г. ТУНЯН
Доктор исторических наук, профессор,
преподаватель ГГУ

Строительство армянской государственности в конце XX - начале XXI в. в условиях противостояния с Азербайджаном сопровождается разными посылами, месседжами и мифами, которые требуют осмысления.

16 октября 2010 г. президент Республики Армения С. Саргсян в г. Горисе, в ходе встречи с журналистами диаспоры, представил отношение к вопросу самоопределения Арцаха. Проблема политического статуса Нагорного Карабаха представлена предметом психотропной войны Азербайджана против Армении, охарактеризованная как экстермистская националистическая позиция". Президентом Саргсяном сделано обобщение: "В Азербайджане академические гуманитарные науки превратились в генератор милитаристских заявлений. Даже трудно определить, где заканчивается наука и начинается угодничество марионеток".[1]

Спустя десять дней выдвинутые президентом Саргсяном положения стали предметом осмысления руководителем администрации президента Азербайджана академиком Рамизом Мехтиевым в публикации "Горис-2010: сезон абсурда", представленная вначале газетой "Бакинский рабочий",[2] а затем помещенная в сборнике об узловых аспектах нагорно-карабахского конфликта кафедры истории ближнего зарубежья исторического факультета МГУ и информационно-аналитического центра по изучению постсоветского пространства.[3]

[1] Выступление президента Армении Сержа Саргсяна на встрече с журналистами армянской Диаспоры (Горис, 16 октября-2010 г.). - http: //www.armtoday. info//? Lang= Ru&NewsID= 33106

[2] Рамиз Мехтиев "Горис 2010: сезон театра абсурда". - http://www.1news.az/artic les.php? secid= 4&itemid= 2010102810464704

[3] Полный анализ дан Б.Арутюняном. - В кн. Вопросы истории и исторической географии восточных регионов Армении и Агванка, Ереван, 2016, с. 320-345.

Таблица № 1

Аргументация С. Саргсяна	Аргументация Р. Мехтиева
1.”Азербайджан сам начал войну, сам же проиграл”. 2.Армяне - коренной народ. 3.НКР - второе армянское государ-ство. 4.Антиармянский фашизм в Азербай-джане. 5.Экстермизм Азербайджана. 6.Право Арцаха на самоопределение 7.Решение Карабахского конфликта путем мирных переговоров	1.”Армянский мятеж в Османской Турции”. 2.Азербайджанцы - древний народ. 3.Нарушение принципа самоопре-деления наций. 4.Ст.Шаумян-экспансионист,органи-зовал мартовскую трагедию 1918 г. 5.Оккупация 7 районов Арменией. 6.Военные действия неизменны. 7.Армения -“бессменный чемпион мира по фальсификациям”.[1]

Интерес представляет позиция по поводу опровержения проигрыша Карабахской войны аргументом об “Армянском мятеже” в Османской империи, представляющий тюркскую ментальность о Геноциде армян: “Сами же предали свое государство, сами нанесли ему удар в спину, сами перешли на сторону противника, сами первыми начали истреблять мусульманское население на востоке страны - и сами же несут ответственность за последствия”.[2]

Следует отметить, что Геноцид армян являлся запланирован младотурецкой партией “Иттихиад” с 1910 г. и осуществлен совместно с правительством Османской империи в ходе Первой мировой войны.[3] В Турции существуют причины отказа от признания Геноцида армян. По мнению профессора стамбульского университета Сабанчи Халил Берктая они напрямую связаны с проблемой возмещения: “ Правительство Турции не знает, что произойдет, если они признают, что был геноцид…Правда, ни одно турецкое правительство не пойдет на территориальные уступки. Поэтому, возможно, прежде чем предпринять какой-то шаг, они захотят узнать намерения Армении. С другой стороны, пока Армения продолжает не раскрывать свои карты, признание Геноцида еще долго будет продолжаться”.[4]

Мехтиев представляет Армению “бессменным чемпионом мира по фальсификациям” в миротворческой среде. Но реальная позиция Армении представлена Бишкеским протоколом перемирия от 5 мая 1994 г., где зафиксировано поражение Азербайджана. В нем указывалось: “Поддержав Заявление Совета глав-государств СНГ от 15 апреля 1994 года, высказали готовность оказать полную поддержку

[1] От Майендорфа до Астаны. Принципиальные аспекты армяно-азербайджанского конфликта. М,, 2011, с. 9-14.
[2] Там же, с. 14.
[3] Тунян В.Г., Младотурки: причины Геноцида армян и способ осуществления.- http://genhist. sjoa.am/179 /1/ 2940.pdf; Мифы младотуркизма о Геноцида армян (1915 – 1918 гг.). – http: //hpj.asj-oa.am/6114/1/7.pdf
[4] Сасунян А., После попытки переворота турецкая интеллигенция заговорила о Геноциде армян.- http://www.lragir.am /index/rus/0/society/view/50699

усилиям глав и представителей исполнительной власти по прекращению вооруженного противоборства и ликвидации его последствий путем скорейшего заключения соответствующего соглашения".

Под протоколом стоят подписи представителей трех противоборствующих сторон: Азербайджана, Нагорно-Карабахской Республики и Армении – А. Джалилова (подпись Р. Гулиева), К. Бабуряна, Б. Араркцяна, а также посредников - В. Шумейко, М. Пермикулова, В. Казимирова и М. Кротова.[1] Как вскоре выяснится, ошибкой армянской стороны явился отказ от дальнейшего продолжения военных действий для принуждения Азербайджана к заключению мира.

Выдвижение принципа историзма родины и принципа самоопределения свидетельствует о наличие межэтнического конфликта, где одна сторона стремится сохранить свое господство, а другая - самоопределиться. Последний, как средство самозащиты требует признания за собой собственной территории и возможности саморазвития. Отсюда использование понятий коренной и пришлый народы. После присоединения Карабахского ханства к Российской империи национальный состав имел следующий вид: "По происхождению, обитатели Карабаха суть: армяне, татары, курды и несториане". Дана характеристика армян: "Армяне суть потомки древнейшего народа в Азии, и одного из первых, просветившихся светом Христианской веры".[2]

Отмечается наличие в Карабахе "кочевые татары":[3] "Татары, называющие себя мусульманами, в отличие от персиян, которых именуют кизил-башами, арахли, каджарами, и турок, коих называют Османами, состоят из разных племен: дживаншир, дерчасаили, подразделяющиеся на такля и муганли, Джибраили, Саржали, Соуфли, Гягили, Ходжал-Сахли, Джинли, Делагарда, Кенгерли, Имирли и друг. Названия эти заимствованы или от имен их родоначальников, и от ремесел, коими они прежде занимались".[4] Наличие "мусульманских кочевых племен" в Карабахе постпред Азербайджана в ООН счел недопустимым, в послании к генеральному секретарю.[5]

Тезис об "втором армянском государстве" имеет основание. АзЦИК Советов от 31 июля 1923 г. в республике вводился трехьязычный статус: тюркский -государственный, русский -делопроизводственный, армянский - в Нагорном Карабахе. В декрете отмечалось: "Языком сношения с Автономной Карабахской областью является армянский".[6] На это Советский Азербайджан пошел, чтобы не допустить создание Зангезуро-Карабахской Республики, подчиненной руководству ЗФСР.[7] Между тем Азербайджан стал на путь деармензации Нагорного Карабаха: от 300 тыс. армян (с учетом выделенного армянского населения Нагорного Карабаха) оно

---

[1] Бишкекский протокол. - http://www.nkr.am/ru/the-bishkek-protocol/43/

[2] Обозрение Российских владений за Кавказом,в статистическом, топографическом и финансовом отношениях, СПб.,1836, ч. III,с. 274.

[3] Там же, с. 256.

[4] Там же, с. 274, 275.

[5] Баку жалуется в ООН на слова Саргсяна о "мусульманских кочевых племенах" в Карабахе.- http: // www. epress. am/ru/ 2010/11/06/.html

[6] Нагорный Карабах в международном праве и мировой политике, Сост. Барсегов Ю. Г. т. 1, М. , 2008, N 705, с. 653.

[7] Там же, N 702, с. 650.

в 1979 г. составило 140 тыс.[1] Соответственно вся территория Нагорно-Карабахской Республики, существующей с 1991 г. является не оккупированной, а ее пространством.[2]

Отказ от принципов историзма и самоопределения ведет к политической имобильности, выключения этнической группы из процесса национальной идентификации и самоопределения. Тем более, что Закавказский Азербайджан требует применение этих принципов к Иранскому Азербайджану, поднимая тему "разделенного народа".[3] Между тем, Мехтиев стремится представить Азербайджан божьим одуванчиком, т.е. беззащитным государством.[4]

Несостоятелен тезис Мехтиева об изоляции Армении в международных отношениях, поскольку она участвует во всех международных структурах. В то же время он говорит говорит о приобретении оружия Азербайджаном, что привело к четырехдневной войне 2-5 апреля 2016 г. Вопреки всему заявляется о наличие у армян туркофобии и ненависти к азербайджанскому этносу.[5] Между тем за три дня боевых действий азербайджанские части использовали свыше 20 тыс. снарядов, тогда как в войне 1992-1994 гг. около 100 тыс. Задействованы 200 танков, артиллерийские системы и беспилотные летательные аппараты.[6]

Установки Мехтиева, как руководителя администрации президента Азербайджана, получили развитие. Спустя год ведущий научный сотрудник центра стратегических исследований при президенте Азербайджанской республики Гюндуз Шабанов уделил внимание "национальной идее" армянского народа. В её генезисе выделены компоненты развития.

Таблица № 2

Национальная идея	Воплощение
1.Национальная идея продукт новейшей истории. 2.Цель-построение "Великой страны". 3.Освободительная борьба. 4. Инертность армян до XIX в. 5.Возникновение Армянского вопроса. 6. Ведущая роль армянской церкви. 7.Черты армянского национализма. 8.Активизация Армянского вопроса. 9.Геноцид армян.	1.Армяне руководствуются теорией жизненного пространства. 2. Ожидаемый крах Армении. 3.Цель - национальное государство. 4.Активизация армян во 2 п. XIX в. 5.Утрата национального государства. 6.Аполитичность позиции к России. 7.Отсутствие благородства. 8.Первая мировая война и террор. 9. "Объединяющее начало.

По мнению Шабанова национальная идея "цель и смысл бытия этноса – народа, нации, в настоящем и будущем. С учетом прошлого исторического опыта и опыта

[1] Золян С., Карабахский конфликт в контексте СССР. - http://armenianhouse. org/ zolyan/nf- ru/ karabakh/3.html
[2] Нагорный Карабах: Ключи урегулирования.- http://ru.aravot.am/2014 /05/19/179569
[3] Абасов А., Азербайджан и Иран: противоречия и перспективы развития отношений. - http:// theanalyticon.com/?p=478&lang =ru
[4] Там же, с.9-14.
[5] Рамиз Мехтиев, "Горис…,с. 13,35.
[6] Министр обороны НКР освежает память. - http://www.golosarmenii am/article/ 41797

других народов".[1] Между тем, национальная идея это форма бытия и экстраполяция развития нации в конкретно-исторической эпохе, которая может видоизменяться и развиваться. Доминантой тенденцией является патриотизм, стремление ответить на вызовы времени, определить формы жизнедеятельности. Подпитывается национализм историческим прошлым, национальными достижениями и надеждой на устроенное будущее.

Шабанов считает чертой армянского национализма борьбу за жизненное пространство (lebens raum). Армения представляется геополитическим поборником уже изжитого подхода, который не сулит ей ничего хорошего: "Что же касается Армении, видимо элита этой страны не делает выводов из истории и ждет краха, который неизбежен, в случае, если национальная идея армянства будет построена на мести за мифические прошлые обиды и расширении своих земель за счет сформировавшихся и признанных в своих границах мировым сообществом государств".[2]

Суть Армянского вопроса как национальной идеи сведена к простому выживанию: "Что такое армянский вопрос? Месть за геноцид и плач по утраченным землям". Хотя демонстрирует знания армянской историографии, в частности сайта http:// www. geno-cide. ru/enc/arm-question.htm, рассматривающий его как комплекс проблем политической истории армянского народа, направленный на воссоздание государственности на исторической родине и консолидацию путем национально-освободительной борьбы.

На взгляд Шабанова, армяне были инертной массой до XIX в. в составе Османской империи. Лишь во второй половине происходит формирование Армянского вопроса на международном уровне Берлинским конгрессом 1878 г. Поэтому поводу отмечается: "Искусственно созданный армянский вопрос стал составной частью Восточного вопроса, и занял определенное место в геополитике великих держав на Ближнем Востоке, их борьбе за сферы влияния в Османской империи и раздел ее владений. Армянский вопрос как термин вошел в обиход дипломатии и историческую литературу после русско-турецкой войны 1877-78".

Определение Армянского вопроса как дипломатической проблемы со всеми последствиями взято из армянской историографии, которая различает национальное движение и интересы ведущих держав в разделе наследства Османской империи. Первое Шабанов игнорирует, называя армян "разменной монетой" великих стран. При этом не забывает набросить на русско-армянские отношения тень меркантилизма: "Характерно, что борьба армян не охватывала границы Российской империи. Поэтому российские власти считали армян аполитичным, благодарным, и поэтому благонадежным народом, чем имеющих недавнее государственное прошлое и очевидные амбиции азербайджанцев и грузин". В то же игнорируется создание Закавказского Азербайджана в 1918 г.

В национальном движение, в чисто марксистском духе, движущими силами представлены национальная буржуазия, "лишенная дворянского благородства" и интеллигенция, которые испытывали "комплекс неполноценности" к соседним народам: "Армянская буржуазия представляла собой недавно разбогатевших

[1] Шабанов Г., Армянская национальная идея - вперед в прошлое? – http://xronika. az/azerbaijan/ 18600
[2] Там же.

провинциалов, пытающихся получить современное образование. При этом у них был развит комплекс неполноценности и зависти к своим соседям - азербайджанцам, грузинам и туркам".[1]

При чем тут азербайджанцы, которые известны были как "закавказские татары" и до сих пор не могут определиться, кто они: азербайджанские турки, азербайджанцы или потомки албанцев. В то время как армяне были соседями Шумера и Аккада, создали Ванское и Араратское царство, образовали державу Тиграна Великого и противостояли экспансионистским поползновением Римской и Парфянской империй. Своя богатая история для армян драгоценнее, чем мифотворчество ангажированных друзей.

Все вину за армянскую трагедию Шабанов возлагает на партии "Гнчак" и "Дашнакцутюн", которые являлись порождением исторической эпохи и были настолько наивны, что романтизм национальной борьбы не подкрепили реальной политикой. Все это проецируется на современность, сквозь призму последствий развязанной Карабахской войны с 1988 по 1994 гг. Автор отмечает: "Возвращение армян на исторические территории и создание единого армянского государства с обязательным выходом к морю (аннексия азербайджанских земель и собственно идея Миацума (воссоединения) является составной частью реализации так называемой национальной идеи армянства)".

Несостоятельно утверждение Шабанова о причастности Республики Армения к деятельности АСАЛА.[2] Сам Азербайджан в Карабахской войне использовал чеченцев, турок и мохаджиров из Афганистана, поскольку азербайджанские солдаты не проявляли задора борьбы.Республика Армения не ставит цель построить "Великую Армению", а борется за выживание и обеспечение развития.

Прикрывая экспансионизм Азербайджана и Турции Шабанов постарался найти что-нибудь адекватное идеологическое и нашел в виде учения Гарегина Нжде (нждеизма), которым руководствуется правящая Республиканская партия Армении: "Это, по сути фашистская идеология, взявшая за основу язычество и национализм".[3]

Претензия Шабанова исходит из роли Нжде в сохранение Сюника от захвата Азербайджана в 1920-1921 гг., что никак не могут ему простить. Созданное учение основано на двух постулатах: "цехакронутюн" (почитание нации), являющейся реакцией на геноцид армян, и "таронакронутюн", требующая возврата армян на историческую родину. Главное в учение опора на собственные силы, а не ненависти к туркам Об этом свидетельствует и оставленные высказывания о несправедливости мира: "Душа моя и мысли восстают против этого людоедского мира. Того мира, который на протяжении тысячелетий преследовал, мучил и четвертовал проповедников возвышенных идеалов любви, справедливости и независимости'.[4] Республиканская партия, опираясь на церковь, стремится

---

[1] Шабанов Г., Армянская национальная идея…- http://xronika.az/azerbaijan/18600

[2] Армянские спецслужбы занимались подготовкой террористов. Эксперт ЦСИ. - http://1newz.az/politics/20110425075555990. htm

[3] Шабанов Г., Армянская национальная….- http: //xronika.az /azerbaijan/ 18600

[4] Гарегин Нжде, Цитаты, афоризмы, высказывания. - http://mudreishy.ru/ sitaty-i-aforizmy /source/garegin-nzhde

сформировать новый образ армянина, который займет достойное место в неспокойном мире.

Шабанов определяет политику Армении экспансионизмом: "Армяне сами себя приговорили жить во враждебном окружении, пытаясь воплотить в жизнь химерические планы, избрав путь конфронтации с Азербайджаном".[1] Высказывание представляет переформатирование исторической правды. Показательным является наличие пяти геноцидов азербайджанского народа, устроенных якобы армянским народом, основанных на указе Гейдара Алиева от 28 марта 1998 г. Примечательным является деятельность общества Европа-Азербайджан", расположенного в Лондоне, призванного сеять "обьективную информацию" о карабахском конфликте и Армении. Председатель общества Тале Гейдаров сетует о наличие трудностей в английской среде: "У людей сложилось такое ошибочное впечатление: в этом регионе был "геноцид армян", армяне подверглись агрессии, а агрессорами являются турки и азербайджанцы. Поэтому, когда мы говорим, что армяне совершили агрессию в отношении Азербайджана, хочешь не хочешь, это сбивало с толку людей. Иностранные студенты сами признавались, что им представляли дело так, что азербайджанцы совершили агрессию в отношении Армении".

В целом, национальная идея армян - возрождение Армении - прошла в XIX – XXI в. три стадии: 1) первая - нация в себя, занятая освобождением от иноверческого этноконфессионального господства, повседневным существованием и перспективой развития (1800-1877); 2) вторая - нация для себя, стремящаяся к независимости и созданию государственности (1978 - 1990); 3) нация для развития, которая решает формат деятельности, где первоочередной задачей становится жизненное и культурное пространство, развитое в глобальном мире.

Мифотворствуя Шабанов призывает Республику Армения к следованию демократическим установкам развитых стран и отказу от нждеизма. [2] Сладковатые призывы к миру и дружбе уже звучали неоднократно в предшествующие исторические времена и к чему они привели, мы также знаем. Более того, с 2-5 апреля 2016 г. Азебайджан предпринял наступление по всей линии фронта НКР для решения карабахского вопроса военным путем, что не состоялось.[3]

В июня 2016 г. президент Азербайджана И. Алиев без обиняков заявил суть собственной реальной политики в нагорно-карабахском конфликте: "Нагорный Карабах никогда не получит независимости, на исторических землях Азербайджана никогда не будет создано второе армянское государство. Это главный вопрос. Что касается статуса Нагорного Карабаха, это вопрос будущего. Конечно, определенный статус может быть предоставлен. В составе Азербайджана есть Нахичеванская Автономная Республика. В Европе, других странах имеется прогрессивный опыт и различные статусы. Но этот статус не должен нарушать территориальную целостность нашего государства".[4]

---

[1] Шабанов Г., Армянская национальная…- http: //xronika.az /azerbaijan/ 18600

[2] Там же.

[3]Министр Армии обороны НКР, ген.-лейт.Левон Мнацаканян.-http://ru.168. am/2016/05 /10/

[4] Тарасов С., Согласен ли Степанакерт стать "второй" Нахичеванью? – https://regnum.ru.news/polit2149630. html

Следовательно, есть мифы и реалии. Первые вдохновляют, а вторые отрезвляют. Мифотворческий подход является нормой для азербайджанских сказителей. В 2010-2011 г. состоялся обмен месседжами между армянской и азербайджанской сторонами об урегулировании нагорно-карабахского конфликта. Предложение руководства Республики Армения о мирном урегулировании было отвергнуто со стороны Азербайджана. Высокопоставленными мифотворцами Бакинского режима разработали конфронтационный миф об экспансионизме Армении. Результатом стало апрельская война 2016 г. между двумя странами.

Ключевые слова: *национальная идея, мифотворчество, Армения, Азербайджан, национально-освободительная борьба.*

Список использованной литературы

1. Абасов А., Азербайджан и Иран: противоречия и перспективы развития отношений. - http:// theanalyticon.com/?p=478&lang =ru

2. Армянские спецслужбы занимались подготовкой террористов. Эксперт ЦСИ. - http: // 1newz. az/politics/20110425075555990. htm

3. Арутюнян Б., Вопросы истории и исторической географии восточных регионов Армении и Агванка, Ереван, 2016.

4. Баку жалуется в ООН на слова Саргсяна о “мусульманских кочевых племенах” в Карабахе.- http: // www. epress. am/ru/ 2010/11/06/.html

5. Бишкекский протокол. - http://www.nkr.am/ru/the-bishkek-protocol/43/

6. Выступление президента Армении Сержа Саргсяна на встрече с журналистами армянской Диаспоры (Горис, 16 октября-2010 г.). - http: //www.armtoday. info//? Lang= Ru&NewsID=33106

7.Гарегин Нжде, Цитаты, афоризмы, высказывания. -http://mudreishy.ru/ sitaty-i-aforizmy / source/garegin-nzhde

8. Золян С., Карабахский конфликт в контексте СССР. - http://armenianhouse. org/ zolyan/nf-ru/ karabakh/3.html9.

9. Нагорный Карабах в международном праве и мировой политике. Сост. Барсегов Ю. Г., т. 1, М. , 2008.

10.Нагорный Карабах: Ключи урегулирования.-http://ru.aravot.am/2014 /05/19/179569

11. Министр обороны НКР освежает память. - http://www.golosarmenii am/article/ 41797

12. От Майендорфа до Астаны. Принципиальные аспекты армяно-азербайджанского конфликта. М., 2011.

13.Министр Армии обороны НКР, ген.-лейт. Левон Мнацаканян. - http:// ru.168. am/2016/05/10/

14.Обозрение Российских владений За Кавказом,в статистическом, топографическом и финансовом отношениях. СПб.,1836, ч. III.

15.Рамиз Мехтиев, “Горис 2010:сезон театра абсурда”.-http://www.1news.az/artic les.php? secid=4&itemid= 2010102810464704

16.Сасунян А., После попытки переворота турецкая интеллигенция заговорила о Геноциде армян. - http://www.lragir.am /index/rus/0/society/view/50699

17.Тунян В.Г., Младотурки: причины Геноцида армян и способ осуществления.- http://genhist.asjoa.am/179 /1/ 2940.pdf

18.Тунян В.Г., Мифы младотуркизма о Геноцида армян (1915-1918 гг.). – http: //hpj.asj-oa.am/6114/1/7.pdf

19. Шабанов Г., Армянская национальная идея-вперед в-прошлое? - http://xronika. az/azerbai- jan/ 18600

ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐԸ ՁԵՂԾԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վ. Գ. ԹՈՒՆՅԱՆ
Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս

Ադրբեջանի կողմից պատմատեղեկատվական պատերազմում մշակվել են մի շարք զեղծարարական հայեցակարգեր, որոնք հերքում են Հայաստանի ջանքերը՝ խաղաղ ճանապարհով լուծելու Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը: Զեղծարարների անմիջական մասնակցությամբ նախապատրաստվեց 2016թ. պատերազմը:

DEFALCATION OF THE NATIONAL IDEA

V. G. TUNYAN
Doctor of historical sciences, Professor
GSU lecturer

A number of defalcating concepts were developed by Azerbaijani authorities during the historical- informational war which deny Armenia's efforts on the peaceful settlement of Nagorno Karabakh problem. The April war started with the direct participation of the falcificators.

ԵՓՐԱՏ ԵՎ ՏԻԳՐԻՍ ԳԵՏԱՆՈՒՆՆԵՐԻ ՍՏՈՒԳԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ

Ա. Հ. ՂԱՐԱԳՅՈԶՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի դասախոս

Մերձավոր Արևելքի տարածաշրջանի նշանավոր գետերն են Եփրատն ու Տիգրիսը, որոնք սկիզբ են առնում Հայկական լեռնաշխարհից, հոսում միջագետքյան հարթավայրով և միմյանց միանալով՝ (Շատ-ալ-Արաբի) թափվում Պարսից ծոց[1]:

Եփրատ գետը կազմավորվում է երկու ճյուղից՝ *արևմտյան և արևելյան*:

Արևմտյան Եփրատը, որի երկարությունը 700 կմ է, սկզբնավորվում է *Ծաղկավետ* լեռների հարավային լանջերից: Գետի ակունքը հորդաբուխ աղբյուր է, որը տեղաբնիկների մոտ եղել է պաշտամունքի առարկա: Այն, հոսելով դեպի հարավ, աջ և ձախ կողմերից ընդունում է բազմաթիվ այլ աղբյուրների ջրեր՝ *Կարինի* մոտ առաջացնելով ընդարձակ ճահիճներ (*Շամբ Կարնո*): Պղտոր ջրի պատճառով գետի այդ հատվածը ստացել է իր *Սև ջուր* անունը[2]: Այնուհետև գետը թեքվում է դեպի արևմուտք՝ աջ կողմից ընդունելով *Շաղագոմք* վտակը: Դերջանի դաշտում ձախ կողմից միանում է համանուն գետը: Դերջանի գետաբերանից հարավ *Սև ջուրը* հասնում է *Երզնկայի դաշտ*, իսկ այնուհետև՝ *Կամախի բարձրավանդակ*: *Կամախից* հարավ-արևմուտք աջ կողմից ընդունում է *Տևրիկ գետը*, ապա ուղղվում դեպի հարավ-արևելք և *Խարբերդի դաշտի* արևմտյան մասում միանում *Արածանիին*: Մինչ այդ, անցնելով *Բյուրակն-Մնձուրյան* լեռնաշղթայի արևմտյան մասով, *Եփրատը Տավրոսյան լեռների* շրջանում առաջացնում է բազմաթիվ ջրվեժներ: Անցնելով *Տավրոսի* շղթան՝ գետը թեքվում է դեպի հարավ՝ մոտենալով *Տիգրիսին* և զուգահեռ հոսելով՝ միանում է նրան ու թափվում *Պարսից ծոց*[3]:

Եփրատ գետին է վերաբերում Հերոդոտոսի հետևյալ ուշագրավ տեղեկությունը. «Այս Բաբելոնում եղել են նաև այլ թագավորներ, նրանց մասին ես կխոսեմ Ասորեստանի մասին իմ պատմության մեջ, որոնք ևս բարեկարգեցին պարիսպները և սրբավայրերը: Նրանց թվում եղել են նաև երկու կանայք: Նրանցից

[1] Ըստ Ստրաբոնի՝ «...Տիգրիսն ու Յեփրատը, շրջապատելով Միջագետքը, միշտ հոսում են դեպի արևելք, հետո դառնում դեպի հարավ և մոտենում թե՛ իրար և թե՛ միաժամանակ Բաբելոնին...» (Ստրաբոն, քաղեց և թարգմանեց Հ. Աճառյան, Ե., 1940, էջ 21):

[2] Տե՛ս Հակոբյան Թ.Խ., Հայաստանի պատմական աշխարհագրություն, Ե, 1968, էջ 45: Վանի *Մենուա* (մ.թ.ա. 810-786 թթ) և *Արգիշտի Ի-ին* (մ.թ.ա. 786-764 թթ) թագավորների՝ դեպի *Խաթե* երկիր կատարած արշավանքի կապակցությամբ հիշատակվել է *Մելի(ա)* գետը: Ենթադրվել է, որ խեթական *Մալա* և ուրարտական *Մելիա* գետերը նույնն են և համապատասխանում են *Վերին Եփրատին*, մինչև *Եփրատի և Արածանիի* խառնուրդը, որը հունական աղբյուրներում կոչվել է *Մելաս* (սև), որից էլ առաջացել է թուրքական *Կարա - սու (Սև ջուր)* անունը (տե՛ս Ավետիսյան Հ.Մ., Հայկական լեռնաշխարհի և Հյուսիսային Միջագետքի պետական կազմավորումների քաղաքական պատմությունը, Ե., 2002., էջ 29):

[3] Տե՛ս Հակոբյան Թ.Խ., նշվ. աշխ., էջ 47:

առաջինը, որի անունն էր Սեմիրամիս, իշխել է երկրորդից հինգ սերունդ առաջ: Նա հարթավայրում պատնեշներ կառուցեց, որոնք տեսարժան էին, իսկ նախկինում գետը ողողում էր հարթավայրը և ամբողջապես ճահճացնում»[1]: *Եփրատ* գետանունը, ամենայն հավանականությամբ, բաղկացած է հայ. *արփ «եթեր, օդից այն կողմ մինչև հրեղեն երկինքն եղած միջոցը»*)[2] բառից, որի մեկ այլ տարբերակն է **երփ* (հմմտ. «Եճանան, տարբերակ՝ Աճանան[3]») և հնդեվրոպական *րատ* (data(*դուր*, հմմտ. *Atradata (Այրարատ*)[4] արմատից՝ արտահայտելով *եթերատուր* (*եթերածին*) իմաստը: Հետագայում **Երփրատը* ր-ի անկմամբ դարձել է *Եփրատ*:

Ըստ հունական դիցաբանության՝ *եթեր* «ասելով՝ հասկանում էին աշխարհի ամենաբարձր թաղանթը, որից առաջացել են արևը և աստղերը, որտեղ և ապրում են աստվածները»[5]: Այլաբանորեն նշանակել է «*մաքրագույն օդ*»[6], իսկ եթերային՝ «*թեթև, թափանցիկ*»[7]: Ըստ առայսօր կատարված ուսումնասիրությունների՝ սեպագիր արձանագրություններում վկայված շումերերեն *Բուրանուն(ա)*, աքքադերեն՝ *Փուրան*, խեթերեն՝ *Փուրունա*, խուռիերեն և ուրարտերեն՝ *Փուրանա* կամ *Փուրանադի*, շուբարական *Ուրութթու* կամ *Ուրաթթա* անվանաձևերը վերաբերում են *Եփրատ* գետին[8]: Հավանական է, որ նշված անվանումները ծագում են հնդեվրոպական puro- ((հայ. *հուր*) արմատից[9] և արտահայտել են *հրածին, արևածին* (իմա՛ եթերածին) իմաստները:

Եփրատի մեկ այլ անվանումն է *արամեերեն* Frat, Frot (իմա՛ «*քաղցր ջուր*») անունը[10], որը տրվել է գետին, անշուշտ, մ.թ.ա. XII դ. կեսերին Արաբական թերակղզուց *Ասորիք* և *Միջագետք* տեղափոխված *արամեացիների* կողմից[11]:

«Եւ մի գետ էր դուրս գալիս Եդէմից պարտէզը ջրելու համար, եւ այնտեղից բաժանվում ու չորս գլուխ էր դառնում: Մեկի անունը Փիսոն է, սա պատում է Եւիլայի բոլոր երկիրը, ուր որ ոսկին է. Եւ այն երկրի ոսկին ազնիւ է. այնտեղ է սուտակը եւ գահանակը: Եվ երկրորդ գետի անունը Գեհոն է. սա պտտում է Քուշի բոլոր երկիրը: Եւ երրորդ գետի անունը Տիգրիս է. սա գնում է Ասորեստանի առա-

---

[1] Հերոդոտոս, Պատմություն ինը գրքից, թարգմ. Ս Կրկյաշարյանի, Ե., 1986, էջ 75:
[2] Տե՛ս Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ.I, Ե., 1971, էջ 345:
[3] Տե՛ս Կարագեոզեան Յովհ., Սեպագիր տեղանուններ, Ե., 1998, էջ 190:
[4] Տե՛ս նույն տեղում, էջ 17:
[5] Տե՛ս Բոտվիննիկ Մ.Ն., Կոգան Մ.Ա., Ռաբինովիչ Մ.Բ., Սելեցկի Բ.Պ., Դիցաբանական բառարան, Ե., 1985, էջ 66:
[6] Տե՛ս նույն տեղում:
[7] Տե՛ս նույն տեղում:
[8] Տե՛ս Ավետիսյան Հ.Մ., նշվ.աշխ., էջ 29-30:
[9] Տե՛ս Աճառյան Հր., Հայերեն արմատական բառարան, հ.III, Ե., 1977, էջ 125: Ըստ Մ.Գավուքճյանի՝ «գոթերէն brunna, հին բարձր գերմաներեն brunno, անգլոսաքսոներէն burna, գերմաներէն Brunnen («աղբիւր») բառերը եւ նրանց նմանները պահում են Եփրատ գետի սուբարիական հնագույն (սումերերէնում պահուած) Buranun անուան յիշատակը: Սրա հետ երեւի պիտի կապել նաեւ յունարէն .φρεατα= φρητα ձեւերը, որոնք ուղղակի յիշեցնում են միջագետքեան-աքքադական սեպագրական purattu (ֆուրատ - Եփրատ ձեւը» (Գավուքճյան Մ., Ուսումնասիրություններ հայոց հնագույն պատմության, Ե., 2010, էջ 193):
[10] Տե՛ս https: | ru. Wikipedia.org /wiki/ Евфрат.
[11] Տե՛ս История древнего мира, Минск- Харвест, 1999, с. 401.

ջովը, Եւ չորրորդ գետը Եփրատն է»:[1] Հիշատակելի է նաև, որ «Սուրբ Գիրք ստէպ կը կոչեն զԵփրատ լոկ «գետ»… կամ «գետ մեծ»… »[2]:

Արևելյան Եփրատը կամ *Արածանին* սկզբնավորվում է *Ծաղկանց լեռների Թոնդրակ* գագաթի մոտից: Լեռան հյուսիսային լավայի փռվածքների հատվածում գետի ափերից բխում են ծծմբային տաք աղբյուրներ, որոնք թափվում են *Արածանին*: Նրանք հայտնի են *Վարշակի ջերմուկներ* անունով: *Արածանիի* ակունքի շրջանը նույնպես հանդիսացել է պաշտամունքի վայր[3], որտեղ կան բազմաթիվ սեպագիր արձանագրություններ[4]:

Թոնդրակ (իմա՛ *թոնիր* կամ *կրակարան, կրակի աղբյուր*) լեռնագագաթի, ինչպես նաև *Վարշակի ջերմուկներ* կոչվող հանքային աղբյուրների գոյությունը[5], որոնց անունը միանշանակորեն կապվում է Արև աստծո *Արշա* կամ *Վարշա* անվան հետ[6] և ենթադրել է տալիս, որ գետի անունը նշանակել է *Հրածին* կամ *Արևածին*:

Արածանի անունը վկայվել է նաև *Արսանիա, Արսանիաս, Արսանիս, Արսինոս, Արսինես* տարբերակներով[7], որոնց մեջ առկա է *Արշա* դիցանվան *Արս(ա)* ձևը:

Տիգրիսը Հայկական լեռնաշխարհի երկրորդ նշանավոր գետն է: *Այն* կազմվում է երկու ճյուղից՝ *արևմտյան* և *արևելյան*: *Արևմտյան Տիգրիսը* նույնպես ձևավորվում է երկու ճյուղից: Մեկը կոչվում է *Արղանա* (համանուն գյուղաքաղաքի անունով), իսկ մյուսը՝ *Ճիբենե:* Մինչև *Ամիդ* քաղաքն ընկած հատվածում գետը հոսում է դեպի հարավ, այնուհետև թեքվում դեպի արևելք: Այն, մինչև Արևելյան Տիգրիսին միանալը, երկու կողմերից ընդունում է բազմաթիվ վտակներ, որոնցից նշանավորը *Բաթման* (*Քաղիրդ, Նիմֆոս*) գետն է: Շարունակելով ընթանալ դեպի Արևելք՝ գետը *Սղերդ* քաղաքից հարավ-արևմուտք միանում է *Արևելյան Տիգրիսին* (*Կենտրիտես, Բոհտան-սու*):

Արևելյան Տիգրիսի ակունքները գտնվում են *Հայկական Տավրոսի և Կորդվաց լեռների* շրջանում: Սկզբնապես ընթանում է հյուսիսարևմտյան, այնուհետև արևմտյան ուղղությամբ: Մինչև *Արևմտյան Տիգրիսին* միանալը՝ գետն իր վերին հոսանքի շրջանում ձախ կողմից ընդունում է *Շահբուր,* այնուհետև աջ կողմից՝ *Մոկս*, իսկ *Սղերդ* քաղաքի մոտ՝ *Բաղեշ գետակները*: Երկու Տիգրիսների միանալու

---

[1] Աստուածաշունչ, Մատեան Հին եւ նոր կտակարանաց, եբրայական եւ հունական բնագրերից թարգմանված, Աստվածաշնչային լիգա, 2004, էջ 2:

[2] Բառարան Սուրբ Գրոց Հանդերձ պատկերօք, աշխարհացուցօք եւ Տախտակօք, Կոստանդնուպոլիս, 1881, էջ 194:

[3] Տե՛ս Հակոբյան Թ.Խ., նշվ. աշխ., էջ 46:

[4] Տե՛ս Կարագեոզեան Յովհ., նշվ.աշխ., էջ 317:

[5] «Գային հասանէին այնուհետ ի Ծաղկէոտն. և կամեցեալք առ վայր մի հանգչել ի ջերմկին որ կոչի Վարշակի…» (Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ թուղթ առ Վահան Մամիկոնեան, Թիֆլիս, 1907, էջ 291):

[6] Տե՛ս Ղարագյոզյան Ա.Հ., Հայոց հնագույն պատմության հարցեր, Ե., 2015, էջ 41, նույնի՝ Պատմաաշխարհագրական ուսումնասիրություններ, Ե., 2015, էջ 13:

[7] Տե՛ս Բարսեղյան Հ.Խ., Հակոբյան Թ.Խ., Մելիք-Բախշյան Ստ.Տ., Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. I, Ե., 1986, էջ 385:

հետևանքով ձևավորված գետն անցնում է *Քրդստանի* լեռները, դուրս գալիս *Միջագետք:* Այնուհետև *Տիգրիսը,* ձախ կողմից ընդունելով *Մեծ Զաբ* վտակը, շարունակում է ընթանալ դեպի հարավ՝ մինչև *Եփրատին* միանալը[1]: Տիգրիսի ակունքների մոտակայքում Ասորեստանի արքաները արձանագրություններ են թողել, որովհետև հնում գետերի ակունքները սուրբ էին համարվում[2]:

Սեպագրական շրջանից մեզ հասած տեղեկություններից մեկը վերաբերում է մ.թ.ա. IX դ.: Աշուրնասիրպալ II-ի (մ.թ.ա. 884/5-859 թթ.) տարեգրության մեջ նշվում է, որ «Ասորեստանի արքան անցել է *Ծուա* գետը՝ ճանապարհվելով դեպի Տիգրիս»[3]: Ենթադրվում է, որ *Ծուա* (ուրարտ.) sue - «լիճ», «ջուր») անվամբ վկայված է *Տիգրիսի* արևմտյան ակունքը կամ *Ծովք լիճը*»[4]: Ըստ հույն աշխարհագրագետ Ստրաբոնի՝ «մարերեն Տիգրիս նշանակում է նետաձգություն»[5]: «Շահնամե»-ում *Տիգրիսը* ((*Արևելյան Տիգրիս*) կոչվել է Arvand[6], որը *պրսկ.* «իբրև հասարակ անուն նշանակել է «*իղձ, փափագ*»[7]: Նկատենք նաև, որ սանս. Arvand արտահայտել է «*քաջընթացիկ, արագընթաց (ձի)*»[8] իմաստը*:*

Տիգրիս գետին են վերաբերում նաև *շումեր.* Idigna/ Idigina («*վազող ջուր*» կամ «*քաղցր ջուր*») և միջին *պրսկ.* վկայված Arvand Rud («*քաղցր ջուր*») անվանումները[9]:

Բանալի բառեր՝ *Եփրատ, Տիգրիս, գետանուն, Հայկական լեռնաշխարհ, վազող ջուր, քաղցր ջուր:*

TO THE ETYMOLOGY OF THE NAMES OF TIGRIS AND EUPHRATES RIVERS

A. A. GHARGYOZYAN
PhD in of Historical Sciences, Associate Professor
Lecturer of GSU History Chair

The article presents the ancient names and etymology of the Euphrates and Tigris rivers given by the people of the Ancient East.

---

[1].Տե՛ս Հակոբյան Թ.Խ., նշվ. աշխ., էջ 47-48:
[2] Տե՛ս Կարագեոզեան Յովի., նշվ.աշխ., էջ 318:
[3].Տե՛ս Ассиро-вавилонские источники по истории Урарту, ВДИ, М.-Л., 1951, N 2, 23 (III, 92).
[4]. Տե՛ս նույն տեղում, ծան. 66:
[5].Տե՛ս Ստրաբոն, էջ 59:
[6].Տե՛ս Գավուքճյան Մ., նշվ. աշխ., էջ 293:
[7].Տե՛ս Աճառյան Հր., Հայերեն անձնանունների բառարան, հ. Բ, Ե., 1944 , էջ 145:
[8].Տե՛ս նույն տեղում:
[9]. Տե՛ս https // en wikipedia. org/wiki/Tigris (Etimology).

К ЭТИМОЛОГИИ НАЗВАНИЙ РЕК ТИГР И ЕВФРАТ

А. А. КАРАГЕЗЯН
Кандидат исторических наук, доцент
преподаватель кафедры истории ГГУ

В статье представлены данные народами Древнего Востока древние названия рек Евфрат и Тигр и их этимология.

ՀԱՅԿԱԿԱՆ ՎԻՇԱՊԱԳՈՐԳԵՐԻ «ԳՈՒՀԱՐ» ԵՆԹԱԽՄԲԻ ՏԻՊԵՐՆ ՈՒ ԴՐԱՆՑ ՏԱՐԱԾՄԱՆ ԱՐԵԱԼՆԵՐԸ

Ա. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ
Պատմական գիտությունների թեկնածու,
ԳՊՀ պատմության ամբիոնի դասախոս

Հայկական վիշապագորգերի թվում գեղազարդման համակարգի առանձնահատկություններով ու հարստությամբ աչքի է ընկնում հայատառ, թվակիր ընդարձակ հիշատակարան ունեցող 1680 **«Գուհար»** գորգը: Մասնագիտական շրջաններում գորգն այսպես է անվանակոչված գործողի՝ Գուհարի պատվին: Նախկինում այս գորգը պահվում էր Լոնդոնի Վիկտորիա և Ալբերտ թանգարանում, որտեղ այն հայտնվել էր 1880-ական թվականներին: Մոտ մեկ դար անց՝ 1970-ական թթ., այն աճուրդի էր հանվել և հայտնվել էր տեխասյան մի մասնավոր հավաքածուի կազմում:

Դրա գեղազարդման համակարգում վիշապի ոճավորումները պատկերված են զույգերով՝ ուղղաձիգ, ստորին մասում միմյանց կցված, վերին մասերն իրարից հեռացած, իսկ միջնամասերում էլ պատկերվում են տարբեր տիպի զարդեր, ավելի հաճախ՝ բազմանիստում ամփոփված «կենաց ծառ»: Այս հորինվածքը հայտնի է դասական վիշապագորգերի որոշ նմուշների գեղազարդման համակարգից ու բնորոշվում է իմաստային խորը բովանդակությամբ. այն «կենաց ծառի» միջոցով խորհրդանշում է կյանքի հավերժության գաղափարը, իսկ վիշապապատկերներն էլ ներկայանում են որպես պահապան ուժեր: Դա ընդհանուր առմամբ ունի քնարաձև տեսք և մեր կողմից տարբերակված է **«Գուհարյան վիշապապատկեր»** անվանումով: Այս հորինվածքով բնորոշվող գորգերը համարվում են դասական վիշապագորգերի հետագա զարգացումներ և XIX –XX դարերի որոշ վիշապագորգերի նախատիպեր: Ընդ որում այս հորինվածքները կան նաև **«Ջրաբերդ»** խմբի վիշապագորգերի գեղազարդման համակարգում, և այդ հանգամանքը նկատի ունենալով՝ **Գուհարյան վիշապապատկերով** բնորոշվող գորգերը մենք առանձնացրել ենք դասական վիշապագորգերի **«Ջրաբերդ»** ենթախմբում:

«Գուհար» գորգի գեղազարդման համակարգում առկա են նաև շատ ավելի վաղ թվագրում ունեցող գորգերի գեղազարդման մանրամասեր: Քնարաձև հորինվածքների միջնամասում պատկերված է խաչաձև ուրվագծով կենտրոնական բարդ հորինվածք, որը, ըստ իս, հանդիսանում է Հայաստանի պատմության թանգարանում պահվող XIV դարով թվագրվող հանրահայտ գորգի հիմնական հորինվածքներից մեկի տարբերակը: Այս հորինվածքն էլ իր հերթին կրում է ծիսապաշտամունքային պատկերացումներ խորհրդանշող հնամենի զարդանախշեր ու ոճավորումներ: **«Գուհարի»** ծագման տարածաշրջանի կամ վայրի վերաբերյալ կան որոշակի տարակարծություններ: Ուսումնասիրողներից ոմանք այն վերագրում են պատմական Հայաստանի Վասպուրական նահանգին, ոմանք էլ՝

Արցախին[1]: Կարծում ենք, որ ի շարս այլ փաստարկների, դրա ծագման տարածաշրջանի բացահայտման հարցում էական նշանակություն ունի գորգի հիշատակարանը՝ **«ես Գուհարս մեղօք լի հոգովս տկար ես նօրհաս ձեռօք իմով գործեցի, ով կարդայ մեկ բերան օղորմի ասի թվին ՌՃԻԹ»:** Մասնավորապես, նկատի ունենք **«ով կարդայ, մեկ բերան օղորմի ասի»** բանաձևը, որը, մեր պրպտումների համաձայն, առավելապես բնորոշ էր նշված տարածաշրջաններին: Այն հատկապես ընդունված էր իբրև տապանաքարերի մակագրություն և բազմիցս հանդիպում է տարածաշրջանի բոլոր գավառներում, մասնավորապես Արցախի Վարանդա ու Դիզակ գավառների ուշ միջնադարյան գերեզմանոցներում[2]: Օրինակ՝ Ճարտարի Սուրբ Եղիշե եկեղեցու արձանագրություններից մեկում կարդում ենք **«..շինեցի այս եկեղեցիս ի ձեռամբ իմով, ով կարդա, մեկ բերան ողորմի ասէ**...»[3]**:** Այդպիսի հիշատակարաններ հայտնի են նաև Սիսականում: Անկախ այս գորգի տարբերակների տարածման արեալներից, որին մենք ստորև կանդրադառնանք, գտնում ենք, որ դրա ծագման առավել հավանական տարածքներն Արցախ-Սյունիքն են, հատկապես Վարանդա ու Դիզակ գավառների գորգագործական կենտրոնները:

Գորգագործական մշակույթի առանձնահատկությունների, մասնավորապես գորգի վերնախավային բնույթի և արհեստանոցային արտադրության հետ կապված հարցադրումներից ելնելով՝ կարծում ենք, որ դեռևս XVIII-XIX դարի առաջին կեսերին էլ գործված գորգերի գերակշռող մասի ծագումը կապված էր իշխանական տներին ու վանական համալիրներին կից եղած արհեստանոցային արտադրության հետ[4]: Այսպիսի եզրահանգման համար լավագույն հիմնավորումը ինչպես զարգացած, այնպես էլ ուշ միջնադարից պահպանված գորգերի և ասեղնագործությունների գեղազարդման համակարգի հորինվածքների համաչափությունը, գծաձևերի մշակվածությունն ու գույներանգների ներդաշնակությունն է: Դրանք իրականում ստեղծագործական խմբի՝ գորգանկարիչների, ներկանյութերի ստացման ու թելերի ներկման մասնագետների և, անշուշտ, նաև որակյալ գորգագործների աշխատանքի արդյունք են: Այս տեսակետը հիմնավորելու համար կան բավականաչափ տեղեկություններ, որոնց մենք անդրադարձել ենք մեր նախորդ ուսումնասիրություններում[5]: Անտարակույս, տեղի նկարիչների կողմից ստեղծված գորգերից բացի, այդպիսի արհեստանոցներում գործել են նաև այլ

---

[1] Gantzhorn V., Le Tapis Chretien Oriental, Koln,1991,էջ 350:

[2] Այս առումով տե՛ս, օրինակ, Սարգիս Ջալալեանց, Սարգիս արքեպիսկոպոս Ջալալեանց, Ճանապարհորդութիւն ի մեծն Հայաստան: Աշխատասիրութեամբ տեառն Սարգսի Սանահնեցւոյ Ջալալեանց թեմակալ արքեպիսկոպոսի հայոց Վրաստանի, Իմերեթի և այլն, մասն Բ, Տփղիս, 1858, էջք 202, 258, 331:

[3] Լալայան Եր., Վարանդա, Երկեր հինգ հատորով, հատոր 2, Եր.,1988, էջ 41, Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ (կազմեց՝ Պ.Չոբանյան), Եր., 1999, էջ 220:

[4] Մշակութային արժեքների ստեղծման հարցում իրենց ուրույն տեղն են ունեցել մենաստանները: Դրանցում ճգնող կույսերն ու կուսակրոնները զբաղվում էին տարատեսակ արհեստներով: Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցուն կից այդպիսի մի մենաստանի մասին, որտեղ կային մոտ երեք հարյուր դերձակներ, ոպես ականատես՝ տեղեկացնում է Էվլիա Չելեբին (տես՛ Էվլիա Չելեբի, Ուղեգրություններ: Թուրքական աղբյուրներ, Գ, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագր. Ա.Խ.Սաֆրաստյանի, Եր., 1967, էջ 257): Այս ուղեգիրը հայտնում է նաև Վանի բերդի քարայրներում գոյություն ունեցած մետաքսագործական արհեստանոցների մասին (տե՛ս էջ 232):

[5] Poghosyan Ashkhunj, Rug weaving Culture of Artsakh,Historico-Ethnographic illustrated study,«Scholars' Press», Saarbrücken, Germany, 2015:

կենտրոններում ստեղծված և ճանաչում ստացած այս կամ այն տիպի գորգեր, ստեղծել դրանց վերամշակված տարբերակները: Կարծում ենք, որ այս ճանապարհով են ստեղծվել ինչպես դասական վիշապագորգերի, այնպես էլ խնդրո առարկա ենթախմբի գորգերի տարբերակները: Տրամաբանական է ենթադրել, որ այդօրինակ արհեստանոցներից յուրաքանչյուրն ունեցել է իրեն բնորոշ տեսականին, գեղազարդման ու տեխնոլոգիական առանձնահատկությունները, որոնցով դրանք տարբերվել են համանման այլ հաստատությունների արտադրանքից: Տարբերակների ստեղծման հարցում գոյություն են ունեցել նաև այլ հնարավորություններ: Բանն այն է, որ արհեստանոցային արտադրանքը, բացի տվյալ հոգևոր կամ աշխարհիկ կենտրոնի պահանջների բավարարումից, նվիրատվությունների ու վաճառքի առարկա էր և հանգամանքների բերումով էլ կարող էր տարածվել, նաև ընդօրինակվել գորգագործական այլ կենտրոններում: Բայց մենք կարևորում ենք հատկապես այն, որ տվյալ կենտրոնին մերձ բնակավայրերում նույնպես կային վարպետ տնայնագործ գորգագործներ, որոնք, անհրաժեշտության դեպքում կատարելով հանդերձ որոշակի պատվերներ, հնարավորություն ունեին նաև ստեղծելու դրանց ինքնատիպ՝ իրենց կողմից որոշակի մանրամասներով լրացված տարբերակները: Հայոց, մասնավորապես Արցախի գորգագործական մշակույթի առումով այդպիսի բնակավայրերի համարում ունեին մելիքանիստ գյուղերը, հատկապես Խնձորեսկ, Գետաշեն, Փիփ, Ոսկանապատ, Ավետարանոց, Ճարտար, Մեծ Թաղեր, Տող, Տումի գյուղերը:

Նման ձեռնարկությունների առկայությունը նաև մահմեդական վերնախավի մոտ ավելի է մեծացնում տարբերակների ձևավորման ու դրանց տարածման հնարավորությունները: Ընդ որում մահմեդական վերնախավի համար որպես արհեստանոց մեծ մասամբ ծառայում էր իշխողի ապարանքի կանանց հարկաբաժինը, իսկ գորգագործուհիներն հարեմի կանայք էին[1]:

Ըստ էության, «Գուհար» վիշապագորգը, որն աչքի է ընկնում գեղազարդման տարրերի բազմազանությամբ, նախկինում ստեղծված տարբեր տիպերի վիշապագորգերին բնորոշ հորինվածքների վերամշակումներ կամ զարգացումներ են, որոնք էլ իրենց հերթին հիմք են ծառայել հետագա տարբերակների ձևավորման համար: Խնդրո առարկայի դեպքում ասվածը հատկապես վերաբերում է բուն վիշապապատկերի ոճավորմանը, որն ինքնին **«Ջրաբերդ»** խմբի դասական վիշապագորգերին բնորոշ զույգ վիշապապատկերի ոճավորված հորինվածքի մի ինքնատիպ տարբերակ է: Այդ հորինվածքն էլ, որը մենք տարբերակում ենք **«Գուհարյան հորինվածք»** անվանումով, հետագայում դարձել է ուշ վիշապագորգերի որոշ տիպերի գեղազարդման համակարգերի կազմավորման աղբյուր:

Գոյություն ունեն դասական վիշապագորգերի այլ տարբերակներ, որոնցում ներկայացված վիշապի ոճավորումները հնամենի նմուշներից քաղված վերարտադրություններ են: Այս դեպքում մենք նկատի ունենք ձկնակերպ վիշապապատկերներին, որոնցով գեղազարդված XVII դարին վերաբերող մի նմուշ էլ պահվում է Հայաստանի ազգային պատկերասրահում: Հատկանշական է այն հանգամանքը, որ այդ տարբերակների գեղազարդման համակարգի հիմնական տարրը **«Ջրա-**

[1] Չելեբի Է., նշվ. աշխ.,էջ 203, Մնձուրի Հ, Երկեր, Եր., 1986, էջ 497:

բերդ» ճաճանչազարդ հորինվածքն է: Կարևոր ենք համարում շեշտել, որ դասական և դրանց հետագա դրսևորումները հանդիսացող ուշ վիշապագորգերը, ըստ իրենց տեխնոլոգիական ու գուներանգային հատկանիշների, վերաբերում են գորգագործական մշակույթի ինագույն ավանդույթներով հայտնի պատմական Հայաստանի արևելյան և հյուսիս- արևելյան նահանգներին, մասնավորապես Ուտիքին, Արցախին, Սյունիքին, Պարսկահայքին ու Վասպուրականի արևելյան գավառների գորգագործական կենտրոններին: Նկատենք, որ դրանք պատմական Հայաստանի այն սակավաթիվ տարածաշրջաններից են, որոնցում հայոց պետականության անկումից հետո էլ շարունակում էին գոյություն ունենալ կիսանկախ իշխանական տներ, որոնց թվում առավել երկարակյացները Արցախի և Սյունիքի մելիքներն էին:

Հենց այս երկու տարածաշրջանների գորգագործական կենտրոններում էլ տարածված էին ուշ վիշապագորգերի բոլոր տիպերի, այդ թվում ստորև ներկայացվող խնդրո առարկա ենթախմբին պատկանող ուշ վիշապագորգերի ավանդույթները:

1. «Գուհար»: Ենթախմբի առանցքային տիպն է, բնորոշվում է դասական **«Գուհարյան հորինվածքի»** առկայությամբ և այդ հանգամանքով էլ պայմանավորված է դրան տրված այս անվանումը: Հիմնական հորինվածքի միջնամասում լինում է հորիզոնական դիրքով պատկերված երկայնաձիգ քառանիստ ուրվագծով մի երկայնաձիգ շրջանակ, որն իր գագաթներում ունենում է մեկական թիակաձև հավելված, իսկ շրջանակում էլ ամփոփված են լինում գծայնացված թռչնագլուխներով լրացված հնամենի մի բարդ ոճավորում: Հատկանշականը, սակայն, հիմնական հորինվածքն է՝ զույգ վիշապապատկերներից կազմված քնարաձև հորինվածքը, որը, ինչպես տեսանք, կենտրոնական տեղ էր գրավում նաև ուշ միջնադարին վերաբերող դասական վիշապագորգերի գեղազարդման համակարգում: Առավելապես բնորոշ են Արցախի ու Սյունիքի գորգագործական կենտրոններին:

Հայտնի է, որ **«Գուհարյան հորինվածքը»** բավականին լայն տարածում ունի նաև հարևան գորգագործական կենտրոններում, մասնավորապես Տավուշում, Ուտիքում, Շաքի-Շամախի տարածաշրջաններում: Ընդ որում դա այն տարբերակն է, որը բնորոշ է նաև Տավուշին: Այս դեպքում դրանք տարբերակվում են հատկապես գունային երանգներով և եզրագոտիների գեղազարդման մանրամասներով: Այդ հորինվածքը բնորոշ է նաև հյուսիսարևմտյան Իրանի գորգագործական մի շարք կենտրոնների, մասնավորապես այն «**Կարաջա»** կոչված գորգերի հիմնական հորինվածքներից մեկն է[1]: Ընդհանրապես գորգերի այդ տիպը ուշագրավ է այն առումով, որ դրա գեղազարդման համակարգի հիմնական հորինվածքը ընդունված է նաև գորգերի այլ տիպերի գեղազարդման համակարգում:

2.«**Սիսական»:** Այս տիպին պատկանող գորգերի գեղազարդման հիմնական տարրը դարձյալ **«Գուհար»** գորգին բնորոշ վիշապի ոճավորումներն են, ընդ որում հորինվածքներն իրարից սովորաբար տարանջատված են լինում նախորդ տիպի

[1] http://www.persiancarpetguide.com/swasia/Rugs/Persian/Karaja/Karaja_Rugs.htm:

գեղազարդման համակարգում տեղ գտած երկայնաձիգ քառանիստ ուրվագծով շրջանակով: Բայց ի տարբերություն նախորդի՝ վիշապի ոճավորումները ստորին մասում միացած ու քնարաձև տեսքով չեն: Այս դեպքում դրանք ունենում են աղեղնաձև տեսք, ներկայացվում են իրար հակադիր՝ ասիմետրիկ դիրքով, ծայրերը՝ միմյանց հակոտնյա և իրարից անջատ: Դրանց միջանկյալ տարածքում լինում է վարդակ կամ բազմանիստ զարդ: Այս տիպի տարածման արեալները բավականին շատ են, սակայն առավելապես բնորոշ են Արցախի, Սյունիքի և Ուտիքի գորգագործական կենտրոններին: Հայտնի են նաև Ղուբա-Շաքի-Շիրվան, ինչպես նաև Լենքորան- Աստարա թալիշաբնակ տարածաշրջանների գորգագործական կենտրոններում և առանձնանում են միայն գունային ու տեխնոլոգիական առանձնահատկություններով[1]: Այս տիպի գորգեր գործել են նաև Դաղստանի գորգագործական կենտրոններում: Հայտնի է, որ դա լայն տարածում ուներ կումիկներով բնակեցված գորգագործական կենտրոններում[2]: Նշենք, որ արցախյան գորգործական կենտրոններին բնորոշ միակ տիպը չէ այս նմուշը, որը լայնորեն ընդունված է հարավային Դաղստանի գորգագործական ավանդույթներ ունեցող ժողովուրդների մոտ, որոնց շրջանում լայնորեն հայտնի են նաև Ջրաբերդ հորինվածքով, աստղազարդերով, շեղանկյունազարդ հորինվածքներով արցախյան ծագումով գորգերի տիպերը: Համենայնդեպս, այստեղ զարմանալի ոչինչ չկա, որովհետև անընդմեջ ու ծավալուն են եղել Արցախի և հարավարևելյան Կովկասի աշխարհաքաղաքական ու մշակութային կապերը[3]: Շատ ավելի խնդրահարույց է այն, որ արցախյան գորգերի այս տիպը բավականին լայն տարածում ունի նաև Բալկաններում ու Տրանսիլվանիայում: Անշուշտ, չենք կարծում, որ դա կապված լինի Արցախ կամ Սյունիք թափանցած բալկանյան կամ տրանսիլվանյան ավանդույթների հետ: Համենայնդեպս, նման մի զանգվածային տեղաշարժ ու դրա հետ կապված մշակութային ագրեսիայի մասին տեղեկություն մեզ հայտնի չէ: Մինչդեռ պատմական Հայաստանից, մասնավորապես Արցախից և Սյունիքից Փոքր Ասիա, իսկ այնուհետև էլ Ղրիմ ու Բալկաններ տեղաշարժերի ու պատմամշակութային ներազդեցությունների մասին տեղեկությունները շատ են[4]: Ուստի ինչպես Դաղստանում և Թալիշում է, այնպես էլ Բալկաններում Գուհարյան հորինվածքի այդ տարբերակի հայտնի լինելը մենք բացատրում ենք հենց այդ գործոններով: Արցախ-սյունիքյան և ընդհանրապես հյուսիսարևելյան Հայաստանի գորգագործական կենրոններում էլ գորգերի այդ տիպը, իր տարբերակներով հանդերձ, հատկապես լայն տարածում ուներ Սյունիքի, հատկապես Սիսականի գորգա-

---

[1] Տես՝ M. Chazarian, Armenian Carpet, Los Angeles, 1988, էջք 108, 124, 132,144: http://www.jozan.net/distrikter/lenkoran.asp

[2] **Гаджиева С. Ш.,** Каякентские кумыки // Кавказский этнографический сборник, II, М., 1958, էջ 17:

[3] Այս մասին տե՛ս Poghosyan Ashkhunj, Rug weaving Culture of Artsakh, էջ 31-48, Պողոսյան Ա.Ա., Արցախյան գորգագործական ավանդույթների արեալային տարածման ու Կովկասի հարավ արևելյան գորգագործական կենտրոնների փոխառնչությունների մասին.- Բանբեր հայագիտության, 2015, թիվ 2-3, էջ 93-95:

[4] Աբրահամյան Ա.Գ., Համառոտ ուրվագիծ հայ գաղթավայրերի պատմության, Եր.,1964, էջ 248-260: Տե՛ս նաև Մ. Զուլալյան, Հայ ժողովրդի պատմության հարցերը ըստ եվրոպացի հեղինակների, XIII- XVIII դդ., Գիրք Ա., Քաղաքական պատմություն, Եր., 1990 էջ 109- 110: Հովհաննիսյան Ա., Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, Գիրք երկրորդ, Եր., 1959, էջ 65 /տեղեկությունը քաղված է Մատենադարանի թիվ 9223 ձեռագրի թիվ 27 պատառիկից/:

գործական կենտրոններում, ու այդ հանգամանքն էլ նկատի ունենք, որ գիտական շրջանառության մեջ ենք դրել **«Սիսական»** անվանումը:

3.«**Մասյացոտն»:** Այս տիպին պատկանող գորգերի գեղազարդման համակարգում առանցքային են «**Գուհարին»** բնորոշ կենտրոնական վարդակն ու դրա գագաթներին պատկերված վիշապի զույգ ոճավորումները[1]: Ընդհանրապես սրանք աչքի են ընկնում գեղազարդման համակարգի հարստությամբ, ոճավորված մանրամասերի ու տարբերակների բազմազանությամբ: Լինում են նաև ուղեգորգեր: 1908 թվականին գործված հայատառ թվակիր գրությամբ նման մի նմուշ պահվում է Հայաստանի ազգագրության պետական թանգարանում[2]: Այս տիպն ունի մի շարք տարբերակներ, ընդ որում հատկանշական տարբերակիչը կենտրոնական հորինվածքի պատկերման ձևն է. լինում է ձևավոր վանդակում կամ առանց դրա: Կարծում ենք, որ հենց այդ հատկանիշն էլ անհրաժեշտ է նկատի ունենալ տվյալ նմուշի տեղայնացման հարցում: Բնորոշ են Արցախին, Սյունիքին ու Արաքսպարին, Վասպուրականի հյուսիսարևելյան գավառներին: Որոշակի առանձնահատկություններով տարբերակվող նմուշներ վերաբերում են Բագրևանդ, Ճակատք, Կոգովիտ և Մասյացոտն պատմական գավառների գորգագործական կենտրոններին: Ժողովրդագրական հայտնի տեղաշարժերի արդյունքում էլ այն, ըստ էության, XIX դարի կեսերից էլ տարածվել է նաև Սևանի ավազանի գորգագործական կենտրոններում: Մեր ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս ասելու, որ այս տիպի գորգերի հնամենի տարբերակները վերաբերում են Մասիսի շրջակա գորգագործական կենտրոններին՝ Կոգովիտին, Մասյացոտնին և ընդհանրապես Վասպուրականի հյուսիս- արևելյան գավառներին: Ենթադրում ենք, որ Վասպուրականի գորգագործական կենտրոններում է ստեղծվել նաև Հայաստանի պատմության պետական թանգարանում պահվող XVIII դարին վերաբերող, դասական վիշապագորգերի ու Գուհար գորգի ավանդույթներն արտահայտող հայտնի նմուշը, որը ֆրանսահայ Ալբեր Աշճյանի կողմից այդ թանգարանին նվիրած գորգերից մեկն է:[3]Այս ամենը նկատի ունենալով է, որ մենք ուշ վիշապագորգերի այս տիպին պատկանող գորգերը անվանել ենք «**Մասյացոտն»** տեղանունով:

Հանուն արդարության պետք է շեշտել, որ գորգերի այս տիպը լայն տարածում ուներ նաև քրդական գորգագործական կենտրոններում՝ Քարվաճառում և Բերդաշենում կամ Բերձորում: Արտերկրի մասնագետներից ոմանք այս գորգը համարում են քրդական[4]: Այդ հանգամանքով է բացատրվում գորգերի այդ տիպին տրված **«Կասմ ուշաղ»** անվանումը, որը լայն տարածում է գորգի առևտրականների ու նաև արտերկրի հետազոտողների շրջանում[5]: Լ.Քերիմովն այդ գորգերի ծագումը իրավացիորեն կապում է XVIII դարով թվագրվող վիշապագորգերի հետ,

---

[1] M.Chazarian, նշվ. աշխ.,նկ. 99, 119, 145:
[2] Տես՝ ՀԱՊԹ, գ/h 6938/87:
[3] ՀՊԹ գ/h UN 10101-2:
[4] Richard E. Wright and John T. Wertime, Caucasian Carpets and Covers the weaving culture, Hali Publications Limited, 1995, էջ 96:
[5] Տե՛ս, օրինակ, Bennet Jan, Oriental and African Rugs and Carpets.- Rugs & Carpets of the World, Edited by Bennet Jan, London, 1981,էջ 150:

որոնք բնորոշվում են Գուհար և Ջրաբերդ հորինվածքներով:[1] Իհարկե, այս հեղինակը որևէ կերպ չի հիշատակում այդ գորգի ծագման հարցում հայոց մասնակցություն ունենալու-չունենալու հարցը, սակայն նա հիշատակում է կոնկրետ **«Կասմ ուշաղ»** անվանման հետ կապված ավանդություններ, որոնք առավելապես մեզ համար են մեծ կարևորություն ներկայացնում, և, ըստ էության, հաստատում են կովկասյան վիշապագորգերի ծագման հայկական տեսակետը: Նա շեշտում է, որ Կասմը, անկասկած, եղել է հարգված անձնավորություն, որը ինչ-որ ժամանակ ապրել է Լաչինի /Բերձոր/ շրջակա քրդաբնակ գյուղերից մեկում: Իսկ դրանց այդտեղ հայտնվելու մասին էլ ծանոթության տեսքով ներկայացնում է տեղացի քրդերից լսած մի պատմություն, ըստ որի՝ քրդական երկու ցեղ մոտ հինգ դար առաջ հյուսիսային Իրաքից ամեն ամառ իրենց հոտերով գալիս էին այդ բարձրադիր ամառային արոտատեղիներն ու ժամանակի ընթացքում էլ հաստատվում այդ վայրերում՝ պատմական Արցախի Քարվաճառ ու Բերձոր գավառներում[2]:

4. «**Գարդման»**: Գուհարյան ենթախմբին ենք դասում նաև գորգերի մի տիպ, որում վիշապի ոճավորումները կորավուն են, ծայրերն իրար ուղղված, իսկ լրացուցիչ զարդերն ու ոճավորումներն էլ տեղադրված են դրանց միջնամասում: Վերջիններս հիմնականում կենդանակերպ ոճավորումներ ու բուսանախշեր են: Ընդհանրապես այս տիպին պատկանող գորգերը, շատ ավելի մոտ լինելով «**Սիսական»** տիպի գորգերին, աչքի են ընկնում պատկերագրման յուրահատուկ դրսևորումներով[3]: Առանձնահատուկ է նաև վիշապապատկերների միջանկյալ տարածքի գեղազարդման մանրամասերի նկարագիրը: Եթե առաջինում պատկերվում է «կենաց ծառ» պարունակող ու կեռիկներով երիզված բազմանիստ զարդ, ապա այս դեպքում ներկայացվում են վերն ասված երկրաչափականացված բուսանախշերն ու կենդանակերպ ոճավորումները: Այս տիպի գորգերի վաղ նմուշները հայտնի են XVII դ.[4]: Քիչ է տարածված, հայտնի է սակավաթիվ նմուշներով, և եղած նմուշներն էլ վերաբերում են Գարդմանի գորգագործական կենտրոններին: Վերոնշյալը նկատի ունենալով՝ այս տիպի վիշապագորգերի տարբերակման համար գիտական շրջանառության մեջ է դրված «**Գարդման»** պատմական տեղանունը՝ որպես տեսակի անվանում:

Վերջերս արտերկրում լույս տեսած մի քանի ուսումնասիրություններում հրապարակվել են այս տիպին վերաբերող մի քանի նմուշներ, որոնք վերագրված են քրդերին, իսկ ծագման տարածաշրջանն էլ ներկայացված է պատմական Վասպուրականի Աղբակ՝ ներկայումս քրդաբնակ տարածաշրջանը: Շատ ուշագրավ մի հատկանիշ են պարունակում այդ նմուշները. դրանց գեղազարդման համակարգը որևէ առանձնահատկությամբ աչքի չի ընկնում վերն արդեն ներկայացված նկարագրից, սակայն գունային երանգների հարցում ակնհայտ է քրդական ցեղերին բնորոշ գույների առկայությունը[5]:

---

[1] Керимов Л., Азербайджанский ковер, т.3, Б., 1983, էջ 223:
[2] Керимов Л., նշվ.աշխ.,էջ 221:
[3] Անդ, էջ 45, 46, Murrey Ejland, Oriental Rugs, New- York, 1976, նկ.148.
[4] Ganzhorn V., Le Tapis Chretien Oriental, Koln,1991, նշվ. աշխ., էջ 380:
[5] Հրապարակված մի քանի նմուշներ վերագրված են քրդական ցեղերին, և, ի դեպ, դրանց գունային երանգավորումներն էլ հիմնականում բնորոշ են այդ ցեղերի գեղագիտական պատկերացումներին:

5.«Ջրաբերդ»: Այս տիպը պատկանում է գորգերի **«Ջրաբերդ»** խմբին, բայց թեմատիկ ու գեղազարդման հիմնական տարրերի առումով անմիջականորեն կապված է դասական վիշապագորգերին ու մասնավորապես «**Գուհար»** ենթախմբին: Տիպը բնորոշվում է ճառագայթազարդ մեկ կամ մի քանի հորինվածքով և այն երկու կողմից երիզող Գուհարյան հորինվածքներով: Ընդ որում այդ հորինվածքը՝ քիչ ավելի փռված տեսքով, և երկու վիշապապատկերները այստեղ կազմում են մի ամբողջություն: Արցախում այս տիպը առավելապես բնորոշ է Խաչենի ու Քարվաճառի գորգագործական կենտրոններին[1]: Ընդ որում Քարվաճառում գործված այս տիպի գորգերի մեծ մասը վերագրվում է այդտեղ 1740-50-ական թվականներից տեղավորված քրդական ցեղերին ու առանձնանում է գունային ու տեխնոլոգիական բնույթի տեղական առանձնահատկություններով: Արցախից դուրս այն շատ տարածված է Զանգեզուրի գորգագործական կենտրոններում: Նկատի ունենալով **«Ջրաբերդ»** խմբի գորգերի արեալային տարածման լայն ընդգրկումը՝ հնարավոր ենք համարում վիշապագորգերի այս տիպի հայտնի լինելը Արցախ-սյունիքյան մշակութային ավանդույթների ընդգրկման ողջ տարածքում: Այս առումով ուշագրավ են փոքրասիական Սպարտա-Բուրդուր գորգագործական կենտրոններին վերաբերող XVII-XVIII դդ. նմուշները[2]: Դրանք պատմական Փոքր Հայքի գորգագործական կենտրոններում XVII-XVIII դդ վիշապակարպետներ գործելու վերաբերյալ Արշակ Ալպոյաճյանի հավաքած տեղեկությունների հետ միասին մատնանշում են բնօրրանային ավանդույթների շարունակական լինելը և մշակութային նոր միջավայրերում դրանց հարատևման փաստը:

6. «**Փյունիկ»**: Այս գորգերի գեղազարդման համակարգի հիմնական տարր հանդիսացող վիշապի ոճավորված պատկերը, մեր կարծիքով, «**Գուհարյան հորինվածքի»** առավել հնամենի տարբերակներից է, ու այդ առումով այս տիպը մեծ կարևորություն է ներկայացնում վիշապագորգերի պատմության ուսումնասիրման գործում: Դրա գեղազարդման առանցքը կազմում է ոճավորված զույգ վիշապապատկերով և «կենաց ծառ» նախշով /կամ դրա տարբերակով/ կազմված բարդ հորինվածքը, ընդ որում կենաց ծառն այստեղ քառաճյուղ է և ունի խաչաձև տեսք : Այն իր ուրվագծով նմանվում է նաև **«Ջրաբերդ»** խմբի գորգերին բնորոշ ճաճանչազարդ հորինվածքի գծայնացված տարբերակներին: Մասնագիտական շրջաններում տարբերակված է **«Ղուբա»** և **«Բիջով»** անվանումներով[3]: Այս վերջինս կապված է Շամախի քաղաքի մերձակայքում գտնվող Բիջով՝ նախկինում հայաբնակ գյուղի անվան հետ:

Բանալի բառեր՝ *Գուհար, վիշապագորգ, գուհարյան վիշապապատկեր, Սիսական, ուշ վիշապագորգ:*

---

[1] Թաթիկյան Վ., Արցախի տոհմագորգերը, Եր., 2004, պատկեր 8,9, 15,16,17,18:
[2] Ejland L. Murray, նշվ. աշխ, տեսնաև՝ Hali, International Magasine of Antique Carpet and Textile Art, 1ssue, no. 98, London, 1998, էջ 143:
[3] **КеримовЛ.**,նշվ.աշխ.,h.3, էջ 45-47

THE TYPES AND AREAL DISTRIBUTION OF ARMENIAN DRAGONRUGS OF «GUHAR» SUBTYPE

A. A. POGHOSYAN
PhD in of historical sciences,
Lecturer of GSU History Chair

The rug «Guhar», woven in 1680 and bearing an extended Armenian inscription, is of special significance among Armenian Dragon rugs: **«I, Guhar, wove this rug with sinful feeble soul and immature hands; who reads may utter a blessing».**

«Guhar» is one of two main patterns of "Jraberd" subgroup of classic dragonrugs and served as a basis for the formation of several types of late Dragon rugs.The Dragon rugs of this subtype are ubiquitous inside cultural traditions of Artsakh-Syunik.

ТИПЫ И АРЕАЛЫ ПОДГРУППЫ «ГОАР» АРМЯНСКИХ ВИШАПАГОРГОВ

А. А. ПОГОСЯН
Кандидат исторических наук,
преподаватель кафедры истории ГГУ

Обширная надпись на ковре «Гоар» гласит- «*Я, Гоар, грешная и слабая духом, собственными недавно научившимися руками соткала этот ковёр. Тот, кто прочтет эту надпись, пусть замолвит слово Господу обо мне.* ***В*** *1149* ***(1680) году.*** Эта композиция является одним из двух главных изображений подгуппы классических вишапагоргов «Джраберд» и послужила основой формирования поздних вишапагоргов. Нами выявлено, что ковер «Гуар» соткан в ковроткацких центрах Арцах-Сюника. В надписи ткачиха ковра называет себя и указывает год завершения работы.

ՄԻՋԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԵՎ ՆԵՐԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԿԱՊԵՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Ք. Խ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
ԳՊՀ պատմության ամբիոնի ասիստենտ, դասախոս
Ս. Մ. ԳԱԼՈՅԱՆ
ԳՊՀ պատմության բաժնի մագիստրատուրայի 1-ին կուրսի ուսանող

Հաշվի առնելով այժմյան աշխարհի հարափոփոխ քաղաքական գործընթացները, նրանց ազդեցությունը փոքր ազգերի պատմության և հետագա զարգացման վրա՝ կարևորվում է ոչ միայն սեփական, այլև համաշխարհային պատմության, հատկապես խոշոր գերտերությունների պատմական անցյալի և քաղաքակրթությունների ուսումնասիրությունը: Առանց պատմության մանրազնին ուսումնասիրության դժվար է պատկերացում կազմել յուրաքանչյուր պետության էության, նրա ներքին և արտաքին քաղաքականության մասին: Պատմությունն է, որ մեզ հուշում է, թե ինչպիսի պետության և քաղաքակրթության հետ գործ ունենք, որտեղից են գալիս այդ պետության խնդիրների քաղաքական արմատները, և ուր է տանում նրա այժմյան կողմնորոշումը: Պատմությունն է, որ թույլ է տալիս կառուցել մեր սեփական ազգի և այլ ժողովուրդների ապագայի տեսլականը, քանի որ առանց պատճառի չկա հետևանք: Այսպիսով, պատմության ուսուցումը հույժ կարևոր գործընթաց է, առանց նրա ճիշտ կազմակերպման հնարավոր չէ հասնել սեփական ազգի պատմության կերտմանը, հայրենասիրության սերմանմանը, ինքնության գիտակցմանը, դաստիարակել սեր դեպի սեփական ազգը, հայրենիքը, մշակույթը:

Հայաստանի Հանրապետության կրթության մասին օրենքը (14.04.1999թ.) հիմնավորում է պատմական կրթության նոր կառուցվածքի և բովանդակության անցման անհրաժեշտությունը, որը պետք է ապահովի դպրոցականների՝ լիարժեք գիտելիքներ ստանալու գործընթացը կրթության բոլոր փուլերում: Հայաստանի Հանրապետության բոլոր տիպի ուսումնական հաստատություններում գոյություն ունի պատմության դասավանդման միասնական համակարգ: Պատմության ուսուցումը հիմնականում տեղի է ունենում միասնական ծրագրերով և դասագրքերով, որը հնարավորություն է տալիս սովորողին՝ ստանալու անհրաժեշտ ծավալով պատմական գիտելիքներ, և ապահովում է ուսուցման հաջորդականությունն ու շարունակականությունը:

Ինչպես վերը նշվեց, պատմության ուսուցման հիմնական նպատակը սովորողներին ոչ միայն ամբողջական գիտելիքներ տալն է, այլև որոշակի արժեհամակարգի ձևավորումը մարդասիրության, հայրենասիրության, արդարության, համամարդկային և սեփական մշակութային արժեքների ճշմարիտ ներկայացման ու գնահատման ոգով: Այս խնդիրների լուծումը մեծ մասամբ պայմանավորված է պատմության դասավանդման մեթոդիկայի ճիշտ դրվածքով և կիրառությամբ:

Պատմության դասավանդման մեթոդիկայի խնդիրն է օգնել դասավանդողին ուսուցման համապատասխան մեթոդների և եղանակների գործադրմամբ հասնել նախանշված նպատակին և ելքային արդյունքների կատարմանը: Պատմության դասավանդման մեթոդիկան, լինելով մանկավարժական գիտություն, կարևորում է ոչ միայն բուն պատմության ուսուցումը, այլ նաև կապը ինչպես օժանդակ պատմական առարկաների (Համաշխարահային պատմություն, Պատմական հայրենագիտություն, Հայ եկեցեղու պատմություն), այնպես էլ հարակից առարկաների (Մաթեմատիկա, Հայոց լեզու, Հայ գրականություն, Ֆիզիկա, Քիմիա, Անատոմիա և այլն) հետ՝ ստեղծելով ներառարկայական և միջառարկայական կապեր:

Միջառարկայական և **ներառարկայական** կապերի ստեղծումը էապես բարձրացնում է պատմության ուսուցման արդյունավետությունը: Այդ կապերի բացահայտումը նպաստում է աշակերտների՝ խորը և բազմակողմանի գիտելիքներով զինմանը, մղում նրանց ինքնուրույն ստեղծագործ աշխատանքի և նպաստում պատմական մտածելակերպի ձևավորմանը: Առանց ներառարկայական և միջառարկայական կապերի բացահայտման շատ դեպքերում հնարավոր չէ ճիշտ հասկանալ ընդհանրապես մարդկության և մասնավորապես առանձին ազգերի պատմությունների զարգացման տրամաբանությունը, գնահատել հայ ժողովրդի պատմության դերն ու նշանակությունը համաշխարհային պատմության համատեքստում, բացատրել միջպետական հարաբերությունների ձևավորման և զարգացման ներքին և արտաքին շահագրգռություններն ու մեխանիզմները:

Ներառարկայական են կոչվում այն կապերը, որոնք ստեղծվում են տվյալ առարկայի շրջանակներում տարբեր բաժինների, թեմանների, ենթաթեմանների կամ ուսումնասիրվող համապատասխան հարցերի միջև: Դասավանդողն ունի լայն հնարավորություն դասի ընթացքում բազմապիսի ներառարկայական կապեր ստեղծելու և իրականացնելու համար:

Ներառարկայական կապերի ապահովումը դասավանդման ընթացքում մեծապես նպաստում է հարցի բազմակողմանի լուսաբանմանը, աշակերտների ինքնուրույնության ու ակտիվության զարգացմանը:

Օրինակ՝ Ուսուցիչը VI դասարանի հայոց պատմության հնագույն շրջանի ուսումնասիրության ժամանակ (թեմա՝ «Նախնադարի հասարակության պատմությունը Հայկական լեռնաշխարհում») անմիջապես ներառարկայական կապ է ստեղծում նաև «Հին աշխարհի պատմություն» դասընթացի համապատասխան թեմայի հետ՝ փորձելով համեմատության և համադրման մեթոդների միջոցով գտնել պատմական զուգահեռներ և բացահայտել՝ արդյոք հնագույն շրջանը միակերպ և համաժամանակյա զարգացում է ունեցել տարբեր քաղաքակրթություններում և աշխարհամասերում, թե ոչ

Հայոց պատմություն դասընթացը ներառարկայական կապի մեջ է «Համաշխարհային պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն», «Հասարակագիտություն», «Հայկական հարցի պատմություն», «Մշակույթի պատմություն» դասըն-

թացների հետ և հակառակը՝ նշված դասընթացները ներառարկայական կապի մեջ են «Հայոց պատմություն» դասընթացի հետ:

Օրինակ՝ Ուսուցիչը, VII դասարանի «Հայոց պատմություն» դասընթացից անցնելով «Արշակունիների հաստատումը Հայաստանում» թեման, անմիջապես ներառարկայական կապ է հաստատում «Հայոց եկեղեցու պատմություն» դասընթացի հետ, որտեղ նույն դասարանում ուսումնասիրում են «Քրիստոնեության մուտքը Հայաստան» թեման: Առանց այս երկու դասընթացների ներառարկայական կապերի հաստատման հնարավոր չէ ամբողջական դարձնել և՛ առաջին, և՛ երկրորդ թեմաները, քանի որ մեկը մյուսին լրացնող փաստեր են ներկայացնում:

Դասն ավելի հետաքրքիր և արդյունավետ դարձնելու նպատակով բարձր դասարաններում կարելի է հարցեր տալ նախորդ տարիներին անցած թեմաներից և ներառարկայական կապ ստեղծել անցածի և նորի միջև: Ուսուցման այս ձևը խիստ նպատակային է, օգտակար և արդյունավետ: Կարող ենք ասել, որ այն մի ընդհանուր համակարգի է բերում տարբեր դասարաններում տարբեր առարկաների և տարբեր ժամանակներում անցած նյութերը: Աշակերտները հասկանում և գիտակցում են, որ բոլոր երկրների ազգերն ու ժողովուրդներն ունեն ինչպես տարբեր, այնպես էլ ընդհանուր շատ գծեր, շահեր և խնդիրներ, պատմական զարգացման ընթացք:

Միջառարկայական կապերի ստեղծումը նորույթ չէ: Դեռևս Յան Ամուս Կոմենսկին (1592-1670) իր «Մեծ դիդակտիկա» աշխատության մեջ անդրադարձել է միջառարկայական կապերին՝ նշելով, որ բնության մեջ բոլոր առարկաներն ու երևույթները գտնվում են փոխադարձ կապի մեջ, ուստի տարբեր առարկաների վերաբերյալ գիտելիքներն էլ պետք է ուսուցանվեն միմյանց լրացնելու միջոցով: Կոմենսկին միջառարկայական կապերը համարել է «գիտությունների մեծ հարստություններ ձեռք բերելու լավագույն միջոց»[1]:

Երբ սովորողներին մատուցվում են նեղ առարկայական գիտելիքներ, վերջիններիս յուրացման արդյունավետությունը խիստ ընկնում է: Սովորողը, որը ուզում է ամբողջ նյութը ըմբռնել և յուրացնել, այսօրինակ բացատրությունից մնում է չբավարարված, կորցնում է երևույթների միջև կապերը տեսնելու և համարժեք վերլուծություններ կատարելու ընդունակությունները: Նպատակահարմար է գիտելիքների հաղորդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով լայնորեն օգտագործել նսաև միջառարկայական կապերը: Արդի կրթական համակարգի ինտեգրումը թույլ է տալիս բացառել ուսումնական առարկաների մատուցման միակողմանի մոտեցումները և իրագործել միջառարկայական կապեր ամենատարբեր ուսումնական առարկանների թեմանների միջև: Այն նախատեսում է համապատասխան մեթոդների, միջոցների և ձևերի ընտրության միջոցով ուսումնասիրվող երևույթների խորը, բազմակողմանի վերլուծություն, ուսուցում:

[1] Տե՛ս Յան Ամուս Կոմենսկի, Մեծ Դիդակտիկա, Երան, 1962թ., էջ155,194-195:

Միջառարկայական կապերի ապահովման գործընթացում կարևորվում է դասավանդողի իրազեկվածության մակարդակը, այն է.

✓ Ուսումնամեթոդական աշխատանքի հիմնական սկզբունքների իմացություն:

✓ Ժամանակակից կրթության մեջ միջառարկայական կապերի դերի և հեռանկարների գիտակցում և գնահատում:

✓ Դիդակտիկ համակարգի ճիշտ կառուցում ու իրականացում:

✓ Միջառարկայական կապերի իրականացման ձևերի, մեթոդների և միջոցների իմացություն:

Ուսուցման արդյունավետության ապահովման գործում կարևորվում է մանկավարժի փորձարարական ունակությունների և հմտությունների մակարդակը: Պատմության ուսուցչի խնդիրն է ուսուցումն այնպես կազմակերպել, որ բնության և հասարակական կյանքի բոլոր օրենքները, որոնք քննարկվում են տարբեր ուսումնական առարկանների ծրագրերում, դիտվեն միասնության ու փոխադարձ կապի մեջ:

Պատմության դասավանդման ընթացքում ավելի հաճախ միջառարկայական կապեր կարելի է ստեղծել գրականության հետ: Մինչև պատմության այս կամ այն թեմայի ուսումնասիրությունը, նախօրոք ուսուցիչը իր ձեռքի տակ պետք է ունենա թեմային համապատասխան գեղարվեստական նյութը՝ հիմնված պատմական փաստերի վրա, որը մանկավարժը կարող է հանձնարարել աշակերտներին կարդալ: Դա կլրացնի և ամբողջական կդարձնի նոր նյութի ուսումնասիրությունը, կնպաստի նրա պատկերավոր յուրացմանը:

Օրինակ՝ Դերենիկ Դեմիրճյանի «Վարդանանք», Րաֆֆու «Սամվել», «Դավիթ-Բեկ», Մուրացանի «Գևորգ Մարզպետունի», Ստեփան Զորյանի «Հայոց բերդը», «Պապ թագավոր», «Վարազդատ» և այլ հայ գրողների պատմավեպերը, որոնք գրված են պատմական փաստերի և սկզբնաղբյուրների (Փավստոս Բուզանդ, Ագաթանգեղոս, Մովսես Խորենացի, Եղիշե և այլք) հիման վրա, շատ են օգնում տեսական նյութի յուրացմանը:

Պատմության ուսուցիչը լայն հնարավորություններ ունի միջառարկայական կապ ստեղծելու նույնիսկ մաթեմատիկայի հետ:

Օրինակ 1. Պատմության յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի ժամանակագրության ուսուցումը: Առանց ժամանակագրության, ինչպես նշել է ժամանակին Մովսես Խորենացին, չկա պատմություն: Ժամանակագրական հաջորդականությունն է, որ սրեղծում է կապ անցյալի և ներկայի միջև և թույլ տալիս գտնել պատճառահետևանքային կապերը: Առանց մաթեմատիկական ճշգրիտ տվյալների դժվար կլինի պատկերացում կազմել ժամանակագրության մասին:

Օրինակ 2. Մեկ դարը հարյուր տարի է, դարն ունի երկու կես, չորս քառորդ: Դարը վերածել թվականի և հակառակը, ինչու՞ են նվազման կարգով գրվում Քրիստոսից առաջ կատարված իրադարձությունները և աճման կարգով՝

Քրիստոսից հետո կատարվող իրադարձությունները: Պատմության մեջ երբեմն հանդիպում ենք թվերի, որոնք գրված են հայոց թվականով: Աշակերտներին պետք է բացատրել, որ ըստ Անանիա Շիրակացու՝ հայկական մեծ թվականության սկիզբը համարվում է 551 թվականը, քանի որ այդ թվականին Դվինի եկեղեցական ժողովով մեր օրացույցը անջատվեց Հռոմի եկեղեցական օրացույցից: Ուստի երբ հանդիպում ենք հայոց թվականով տարեթվի, ապա այդ տարեթվին գումարում ենք 551 և ստանում ենք ճիշտ թվականը: Այսպես, Ստեփանոս Օրբելյանի «Սյունյաց աշխարհը» աշխատության մեջ հաճախ ենք հանդիպում տարեթվերի, որոնք նշված են հայոց թվականով. եթե դեպքը տեղի է ունեցել հայոց ՋԿԲ թվականին , ապա դա համապատասխանում է 1513 տարեթվին (962 +551=1513) :

Հայոց պատմության դասավանդման ընթացքում միջառարկայական կապ կարող ենք հաստատել ֆիզիկայի, քիմիայի, կենսաբանության հետ:

Օրինակ 3. Պատմական արժեք ներկայացնող պեղված և գտածո իրերի ճշգրիտ թվականը որոշելու համար օգտվում են ֆիզիկայից՝ որպես ֆիզիկական երևույթ, և քիմիայից՝ որպես քիմիական նյութ: Հնագիտական նյութի բացարձակ թվագրության համար կիրառվում են ռադիոկարբոնային, կալիում-արգոնային, ածխածնի ռադիոակտիվ իզոտոպների մեթոդները (C^{14}): Պատմության դասավանդման ընթացքում, երբ ուսումնասիրում ենք արմենոդիների մարդկային տիպը, առանց կենսաբանության և անատոմիայի աշակերտին դժվար է պատկերացում կազմել տվյալ երևույթի մասին:

Ուսուցիչը միջառարկայական կապեր կարող է ստեղծել երաժշտության հետ: Հայկական ժողովրդական երգացանկում կան բազում հայրենասիրական, ազգագրական երգեր, որոնք նկարագրում են մեր հայրենիքի գեղատեսիլ պատմական վայրերը, հայ ժողովրդի տարբեր ժամանակներում ապրած ցավը, վիշտը, կրած տառապանքները: Երգեր կան, որոնք ներկայացնում են կոնկրետ մարդկանց ու դեպքեր՝ ձեռք բերելով սկզբնաղբյուրի արժեք:

Օրինակ 4. «<u>Գետաշեն» երգը</u> արտացոլում է Լեռնային Ղարաբաղի հակամարտությունը, մասնավորապես Գետաշենի համար մղվող պայքարը: «Զարթի՛ր, լա՛ո» երգը նվիրված է ֆիդայական շարժմանը: Այդպիսի օրինակները շատ են:

Երաժշտությունը օժտված է մարդկանց մտքի և զգացմունքների վրա ներգործելու անսահման հնարավորություններով: Ժողովրդական - ազգագրական երգերի ճակատագրերը ամբողջովին նման են մեր բազմաչարչար ժողովրդի ճակատագրին: Նրանք ստեղծվել են մեր անցած պատմական ճանապարհի թելադրանքով ու գիտակցությամբ և արտացոլում են այդ ճանապարհին մեր ժողովրդի տեսածն ու զգացածը:

Այսպիսով, ամփոփելով վերը նշվածը, կարող ենք ասել, որ միջառարկայական և ներառարկայական կապերի ապահովումը պատմության դասավանդման ընթացքում ունի մեկ գերնպատակ՝ սովորողին տալ համակարգված, համակող-

մանի և խորը գիտելիքներ, նրան մղել ինքնուրույն պատմական մտածելակերպի և ստեղծագործ աշխատանքի:

Բանալի բառեր՝ *ներառարկայական կապ, մեթոդ, միջառարկայական կապ, համադրում, համեմատություն, հայրենասիրություն, կրթություն:*

Օգտագործված գրականության ցանկ

1. Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար.Հայոց պատմություն, 6-7-րդ դասարաններ, Երևան, 2008:
2. Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար.Հայոց պատմություն, 8-9-րդ դասարաններ, Երևան, 2008:
3. Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար.Ընդհանուր պատմություն, 6-7-րդ դասարաններ, Երևան, 2008:
4. Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար.Նոր և նորագույն պատմություն, 8-9-րդ դասարաններ, Երևան, 2008:
5. Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար. Հայոց պատմություն /ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր/, Երևան, 2009:
6. Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար. Հայոց պատմություն /հումանիտար հոսքեր/, Երևան, 2009:
7. Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար. Ընդհանուր պատմություն /Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքեր/, Երևան, 2009:
8. Մեթոդական ձեռնարկ ուսուցչի համար. Ընդհանուր պատմություն /հումանիտար հոսքեր/, Երևան, 2009:
9. Է. Այվազյան, Մաթեմատիկական ապացուցումների ուսուցման մեթոդաբանության հիմունքները, Երևան, 2004:
10. Թադևոսյան Պ., Միջառարկայական կապերը պատմության ուսուցման պրոցեսում, Երևան, 1984:
11. Ղևոնդյան Հր., Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2001:
12. Ղարագյոզյան Ի., Միջառարկայկան կապերի օգտագործումը պատմության դասերին, Երևան, 1982:
13. Յան Ամուս Կոմենսկի, Մեծ Դիդակտիկա, Երևան, 1962:
14. Вагин А. А., Методика обучения истории в средней школе, М., 1972.
15. Настольная книга учителя истории. 5-11 классы /Авт.–сост. М.Н. Чернова, М. , 2006.
16. Степанищев А.Т. Методика преподавания и изучения истории, М., 2002,Ч. 1.
17. Шоган В.В., Методика преподавания истории в школе. Уроки истории нового поколения, Ростов– на– Дону, 2005.
18. Шоган В.В. Методика преподавания истории в школе. – Ростов – на- Дону., 2007.
19. Короткова М.В. , Наглядность на уроках истории, М., 2001.

CREATION OF INTERDISCIPLINARY AND INTRADISCIPLINARY CONNECTIONS DURING THE TEACHING OF HISTORY

Q. KH. HAYRAPETYAN
Teacher, Laboratory Assistant of History Chair of Gavar State University
S. M. GALOYAN
1st year Master Student of History Chair of Gavar State University

The article aims at discovering the interdisciplinary and intradisciplinary relations while teaching History which enables the professor to make the teaching process more interesting and meaningful through both auxiliary and related History subjects.

ВНУТРИПРЕДМЕТНЫЕ И МЕЖПРЕДМЕТНЫЕ СВЯЗИ В ПРОЦЕССЕ ОБУЧЕНИЯ ИСТОРИИ

К. Х. АЙРАПЕТЯН
Преподаватель, асистент кафедры История ГГУ
С. М. ГАЛОЯН
Студентка 1-ого курса магистратуры отделения История ГГУ

В статье рассматриваются межпредметные и внутрипредметные связи в процессе обучения истории, позволяющие преподавателю одновременно посредством смежных исторических и вспомогательных дисциплин сделать более эффективным и содержательным преподавание истории.

ՈԳԵՊԱՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՊՐՈՒԿՆԵՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Պ. Ա. ԲԱՐՍԵՂՅԱՆ
Փիլիսոփայական գիտությունների թեկնածու, դոցենտ

Կրոնագետների մեծ մասը ոգեպաշտությունը (անիմիզմ) համարում է նախնադարյան հավատալիքներից ամենավերացականը և ամենազարգացածը, քանի որ այն հանդես է գալիս բնությունն անձնավորող երևակայական ոգիների պաշտամունքի տեսքով, բովանդակում է վերացական մտածողության տարրեր և էապես տարբերվում է բնական երևույթների, առարկաների, իրերի, կենդանական և բուսական աշխարհի ներկայացուցիչների վերաբերյալ պարզունակ հավատալիքներից[1]: Ոգեպաշտության միջոցով մարդն իր շրջապատը «բնակեցրել է նախնիների» և տարերային այլ ոգիներով, իսկ խորհրդավոր բարի կամ չար բնական ուժերին վերագրվել են նոր հատկանիշներ, որոշակի «բնավորություն» և կերպավորում: Է. Թեյլորն անիմիզմը սահմանում է իբրև «հավատ հոգևոր էությունների» նկատմամբ, այն համարում է «կրոնի նվազագույն» միավոր[2]: Նա պնդում է նաև, որ «ոգեպաշտության տեսությունը բաժանվում է միասնական ուսմունք կազմող երկու դոգմայի», որոնցից առաջինը վերաբերում է առանձին էությունների **հոգուն,** մյուսը՝ մինչև աստվածների աստիճանի բարձրացած **ոգիներին**[3]: Ոգեպաշտական պատկերացումների առաջին շարքը ձևավորվել է երազի, տեսիլքի, հիվանդության, մահվան, ինչպես նաև տրանսի և հայտուցինացիայի ապրումների հիման վրա: Այդ ճանապարհով «նախնադարյան փիլիսոփան» **ուսմունք է մշակում մարդու մարմնում գտնվող և ժամանակ առ ժամանակ նրան լքող հոգու մասին:** «Հոգին նուրբ, ոչ առարկայական մարդկային պատկեր է, - գրում է Է. Թեյլորը,- ...նա կյանքի և մտքի պատճառ է այն էության համար, որը շնչավորում է: Այն անցյալում և ներկայում անկախ և անբաժան կերպով իր մարմնական տիրոջ մոտ անձնական գիտակցություն և կամք ունի: Այն ընդունակ է լքել մարմինը և արագորեն տեղից տեղ տեղափոխվել: ... Այն ընդունակ է թափանցել այլ մարդկանց, կենդանիների և անգամ իրերի մեջ, տիրապետել և ազդել նրանց վրա»[4]:

Հոգու մասին պատկերացումների զարգացման արդյունք է համարվում նաև անդրշիրիմյան կյանքի մասին պատկերացումների, իսկ արևելյան որոշ կրոններում՝ հոգիների վերամարմնավորման մասին ուսմունքները: Կրոնի նախնական ձևերի զարգացման գործում ոգեպաշտությունը շրջադարձային է հատկապես այն

---

[1] Տե՛ս **Пивоваров Ф. В.,** Философия религии. М., 2006, с. 351; **Религиоведение.** Энциклопедический словарь, (сост. и общ. ред.: Забияко А. П., Красников А. Н., Элбакян Е. С.). М., 2006, с. 45-46; **Всеобщая история религий мира,** с. 21-23; **Капустин С. Н.,** Особенности эволюции религии. с. 112. **Религия.** Энциклопедия, Мн., 2007, с. 73.
[2] Տե՛ս **Тейлор Э. Б.,** Первобытная культура. М., 1989, с. 210-211.
[3] Տե՛ս **նույն տեղում,** էջ 213:
[4] Տե՛ս **Тейлор Э. Б.,** Первобытная культура. М., 1989, էջ 422-455:

առումով, որ նրա շնորհիվ **բնության ուժերի անձնավորումից անցում է կատարվում մարդակերպությանը,** որն էլ հետագայում վերաճում է համեմատաբար զարգացած բազմաստվածային պաշտամունքի: Ձևավորվում է **նախնիների պաշտամունքը,** և իրենց կենդանության օրոք մեծ հեղինակություն վայելող մարդիկ սերունդների կողմից օժտվում են գերբնական հատկանիշներով, ձեռք բերում մշակութային հերոսներին և աստվածություններին բնորոշ գծեր, նրանց մասին սկսում են առասպելներ և լեգենդներ հյուսվել: Այդ ազդեցությամբ էլ վաղ շրջանի համեմատաբար զարգացած կրոններում աստվածությունները հիմնականում մարդակերպ են, և անորոշ ոգու տեսքով պաշտամունքային օբյեկտներ հազվադեպ են հանդիպում:

Հայ իրականության մեջ ոգեպաշտությունը դրսևորվել է բավականին վաղ, ներթափանցել է հին հայերի աշխարհայացք և կրոնապաշտամունքային համակարգ: Այդ փաստն են վկայում ավանդությունների և բանահյուսության միջոցով մեզ հասած **ոգեպաշտության** մասին բազմաթիվ հիշատակությունները: Նախնիների և ոգիների պաշտամունքի ձևով դրանք հստակորեն ուրվագծվում են դեռևս ժայռապատկերներում, որոնք «...կարծես, հաստատում են այն իրողությունը, որ նախնադարյան սրբավայրերում, աչքի ընկնող տեղերում փորագրված մարդկային ֆիգուրների ու աստղազարդ կամարների պատկերներն արվում էին նախնիների ու մեռյալների ոգիներին երկրպագելու համար: Այս երևույթը դիտվում է աշխարհի տարբեր մասերում հայտնաբերված ժայռապատկերների կապակցության մեջ և համընդհանուր է նախնադարյան հավատալիքների ու կրոնի համար»[1]:

Այդ համատեքստում, ինչպես Լ. Լևի-Բրյուլն է նշում, հիմնահարցի «... արմատը բովանդակվում է նախնադարյան մտածողության խորհրդապաշտության և խրատական բնույթի մեջ»[2]: Սակայն դրանից ամենևին էլ չի հետևում, թե իբր «նախնիների պաշտամունքում շատ ավելի մեծ չափով, քան բնության պաշտամունքում, «հիմնավորվում է» արտաքին հանգամանքներին մարդու ենթակայության անխուսափելիությունը»[3]: Անշուշտ, այս հարաբերություններում առկա է նաև ենթակայության գործոնը, բայց հիմնականը, ինչպես Մ. Էլիադեն է նշում, այն է, որ «...կրոնատած մարդու համար բնությունը երբեք ամբողջովին «բնական» չէ. այն նրա համար միշտ էլ որոշակի կրոնական նշանակություն ունի[4]»: Ըստ այդմ՝ նախնիների պաշտամունքն առաջին հերթին պետք է դիտարկել իբրև կենդանակերպ տոտեմների նկատմամբ մարդակերպ աստվածների և հերոսների հաղթանակ: Այդ տեսանկյունից է Մովսես Խորենացին տեղեկություններ հաղորդում Հայաստանում տեղ գտած նախնիների պաշտամունքի մասին՝ մատնանշելով հերոս-նախնիների շարքը (Հայկ և Արամ նահապետներից մինչև հայոց Արտաշեսյան և Արշակունի թագավորները):

---

[1] **Հ. Մարտիրոսյան,** Քարի դարից Ուրարտու, Երևան, 1971, էջ 46:
[2] **Леви-Брюль Л.,** Сверхестественное в первобытном мышлении. М., 1994. с. 345.
[3] **Капустин С. Н.,** Особенности эволюции религии (на материале древних верований и христианства)., М., 1984. с. 113.
[4] **Элиаде М.,** Священное и мирское. М., 1994. с. 75.

Մեզ հասած տեղեկությունները հավաստում են, որ հայերի նախնիների կողմից պաշտամունքի է արժանացել և վերապրուկների տեսքով մինչև մեր օրերը հասել դրական և բացասական, բարի և չար ոգիների մի ստվար զանգված, ինչն էլ հիմք է տալիս պնդելու, որ **բնապաշտության շրջանում հայերի նախնիները շնչավորել էին ոչ միայն նյութական աշխարհը՝ բնական երևույթները, կենդանիներին և բույսերին:** Մ. Խորենացին, Ե. Կողբացին, Փ. Բուզանդը և այլ մատենագիրներ մատնանշում են հայերի կողմից պաշտամունքի արժանացած բարի և չար ոգիների մի ստվար խումբ՝ քաջք, պայ, պարիկ, հուշկապարիկ, շահապ, դև, վիշապ, արալեզ (առլեզ) և այլն[1]: Հեթանոս հայերը հետմահու կյանքի վերաբերյալ ստեղծել էին նաև յուրօրինակ պատկերացումներ, որոնք, ի վերջո, խտացված ձևով հանդես եկան հայոց հեթանոսական աստվածներից մեկի՝ Սանդարամետի պաշտամունքում:

Հայ պատմիչների հիշատակած պաշտամունքային ոգիների շարքում առաջին հերթին առանձնանում են **քաջքերը**, որոնց դիցապաշտ միտքը բնակեցրել է Մասիս լեռան քարայրներում: Դրանց մասին Դավիթ Անհաղթը գրում է հետևյալը. «Քաջ՝ է ոգի բացարձակ ի հողեղէն մարմնոյ (այսինքն՝ անմարմին- Պ.Բ.) ըստ ինքեան գոլով բարի»[2]: Ըստ Ղ. Ալիշանի՝ **քաջքերի հիմնական առաքելությունն արդարության հաստատումն էր և չարին պատժելը,** որի պատճառով «… ավելի ահարկու են եղել քան զզվելի»[3]: Հենց նրանք են, ըստ Խորենացու, Մասիսի անձավներում շղթայակապ պահում «չարի մարմնավորում» համարվող արքայազն Արտավազդին, որը պիտի դուրս գա և կործանի աշխարհը[4]: Պաշտամունքային այս ոգիների մասին պահպանված տեղեկությունների վերլուծությունը հնարավորություն է տալիս նաև փաստելու, որ ժամանակի ընթացքում քաջքերը ենթարկվել են դիվացման (երբ բարի հերոսը «վերածվում է» չարի), իսկ քրիստոնեության ընդունումից հետո վերապրուկների տեսքով պահպանվել են բացառապես «չար» որակով:

Այսպես, Ղ. Ալիշանը մեջբերում է Վարդան վարդապետի մի հիշատակություն, որտեղ քաջքերը նույնացվում են հայերի հավատալիքներում ավանդաբար չարը մարմնավորող վիշապի հետ, բնակվում են լեռների վրա և ունեն տաճարներ. «…ասեն տեսեալ ոմանց Քաջաց և վիշապաց տաճարս ի Լերինս բարձունս և բակութիւնս, ուր և զԱղեքսանդր կապեալ ունին ի Հռոմ, և զԱրտաւազդ Հայոց թագաւոր ի Մասիս, և զԵրուանդ ի գետս ի մռայլս…»[5]: Այս մոտեցման և Եզնիկ Կողբացու ու Մ. Խորենացու հիշատակությունների մեջ առկա է որոշակի հակասություն, քանի որ չար դև Արտավազդին (ըստ առասպելի՝ Արտավազդին մանուկ հասակում գողացել և նրա փոխարեն դև են դրել)[6] Մասիսի անձավներում փակող

---

[1] Տե՛ս **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, Երևան, 1990, էջ 110, **Փավստոս Բուզանդ,** Պատմություն հայոց, Երևան, 1987, էջ 363, **Եզնիկ Կողբացի,** Երևան, 1970, Եղծ աղանդոց, էջ 76, 78 և այլն:
[2] **Ղ. Ալիշան,** Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, Երևան, 2002, էջ 101:
[3] **Նույն տեղում,** էջ 102:
[4] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, էջ 125:
[5] **Ղ. Ալիշան,** Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, էջ 103:
[6] **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, էջ 125:

և նրա չարագործություններից հայոց աշխարհը փրկող քաջքերը չէին կարող համեմատվել դևի կամ վիշապի հետ: Ուստի մնում է եզրակացնել, որ այս պարագայում առնչվում ենք ուղղակի դիվացման կոնկրետ փաստի հետ: Նմանատիպ երևույթի հանդիպում ենք նաև Արտավազդի մասին պատմվող առասպելներում, որոնք մեզ հասել են երեք տարբերակով: Եզնիկ Կողբացին Արտավազդին հիշում է որպես բարի հերոս. «Արտավազդ անունով մեկը բանտարկված է դևերի կողմից, որը մինչև այժմ կենդանի է, նա էլ ելնելու և տիրելու է աշխարհը»[1]: Երկրորդ տարբերակում Խորենացին հիշատակում է, որ Արտավազդը և՛ բարի է (կռվում է վիշապազուն Արգավանի դեմ), և՛ չար (պիտի դուրս գա և կործանի աշխարհը)[2], իսկ երրորդում նա ուղղակի ներկայացվում է չար (Արտավազդ Շիդար)[3]:

Քաջքերի մասին հիշատակություններ պահպանվել են հատկապես հեքիաթներում: Դրանցում այդ ոգիները ներկայացված են և՛ իրենց նախնական գծերով (բարի), և՛ փոփոխված ձևով (չար), որը, բնականաբար, քրիստոնեական շրջանի լրացում է: Այս եզրահանգման օգտին պետք է վկայակոչել այն, որ որպես քաջ, արի, վիշապամարտ հերոսներ՝ քաջքերին հանդիպում ենք և՛ իրենց առանձին երկրում (Քաջանց երկիր), և՛ թագավոր ունեցող հերոսների տեսքով, որոնք, եթե բացասական գծերով են օժտված, շատ անգամ դեմ են դուրս գալիս գլխավոր հերոսին, իսկ եթե դրական գծերով են օժտված, օգնում են նրան[4]:

Այսպես, Մասիսի քաջքերը (հեքիաթում քաջեր), որոնք զենք ու զրահի կարիք չունեն, բարի աչքով են նայում «Արևազանց» ցեղի ներկայացուցիչներին. «Որով-հետև դու Արևազանց ցեղիցն ես, քեզ վնաս չենք տալ, բայց եթե Վիշապազանց ցեղիցը լիներիր, մեծ կտորդ ականջդ կթողնեինք», իսկ եթե վնասում են, ապա գցում են «մի խոր ու մութ այրի մեջ» այնպես, ինչպես դարեր առաջ Արտավազդին[5]: Քաջանց հերոսների հանդիպում ենք նաև «Սասնա ծռերում», որի գլխավոր հերոսուհիներից մեկը՝ Քառսուն-Ճուղ-Ծամ Դեղձուն-Ծամը նույնպես Քաջանց ցեղից է, նրանց թագավորի աղջիկն է՝ օժտված վիշապամարտ հատկանիշներով[6]: Ավելորդ չենք համարում նշել նաև, որ Հայաստանում պահպանվել են այս ոգիների պաշտամունքի հետ կապված բազմաթիվ տեղանուններ՝ Քաջարան, Քաջավազ դաշտ, Քաջունիք, Քաջաքար լեռ և այլն:

Պաշտամունքային բարի ոգիներ են եղել նաև կենդանակերպ **արալեզները**: Ղ. Ալիշանը նրանց դասում է կենդանական հրեշների շարքում, «...որոնք իրենց մեծությամբ կամ փոքրությամբ, անդամների այլաձևությամբ՝ ծանոթ բնականից դուրս կերպարանք ունեն կամ տարբեր տեսակի կենդանիների խառնուրդ են, կամ

---

[1] **Եզնիկ Կողբացի,** Եղծ աղանդոց, էջ 81:
[2] Տե՛ս **Մովսես Խորենացի,** Հայոց պատմություն, էջ 125:
[3] Տե՛ս **Հուշարձան,** Գրական ժողովածու, Վիեննա, 1911, էջ 238:
[4] Տե՛ս **Հայ ժողովրդական հեքիաթներ,** հ. 13, Երևան, 1985, էջ 40, **Հայ ժողովրդական հեքիաթներ,** հ. 3, Երևան, 1962, էջ 85:
[5] Տե՛ս **Ղ. Աղայան,** Արեգնազան կամ կախարդական աշխարհ, Հայ դասականների գրադարան, Երևան, 1976, էջ 425:
[6] Տե՛ս **Սասունցի Դավիթ**, Երևան, 1981, էջ 127:

էլ կիսով չափ ոչ բանական են, կիսով չափ բանական կենդանակերպ»[1]: Արալեզների մասին տեղեկություններ են պահպանվել Մ. Խորենացու, Փ. Բուզանդի, Ե. Կողբացու, Սեբեոսի, Վանական Վարդապետի և այլոց մոտ: Ըստ այդ հիշատակությունների՝ առլեզները կամ արալեզները շնակերպ կենդանիներ են, որոնք, ըստ հավատալիքների, կռվի դաշտում ընկած հերոսների վերքերը լիզելով, նրանց վերակենդանացնում էին. «Ոչ էլ շնից սերված ու ինչ-որ աներևույթ էակների հետ ապրող որևէ բան կա, որ երբ մեկը պատերազմում վիրավորված ընկնի, (նրան) լիզի ու առողջացնի»[2]: Ըստ ավանդության՝ արալեզներն են վերակենդանացնում կռվի դաշտում ընկած Արա Գեղեցիկին: Դրա հետ էր կապված Լեզք գյուղի առասպելը. «Լեզքը յուր անունով և հին պատմությամբ հայտնի է. ուր Շամիրամի աստուածները մեր Արա գեղեցկին մեռած մարմինը լզեր ու կենդանացուցեր են եղեր. և Արալեզք անունով կուռք ու աստված շինեցին պաշտեցին այն ժամանակ հայեր այս գեղի բարձր գագաթին վրա, ուր այժմ Ամենափրկչի մատուռն է...»[3]: Քրիստոնեության ընդունումից հետո անգամ այս էակների պաշտամունքը պահպանվել էր: Դրա վկայությունը Փավստոսի այն տողերն են, որ Մուշեղ սպարապետին սպանելուց հետո, հարազատները նրա դին տեղափոխում են Ողական ամրոց և «...գլուխը կարելով կցեցին իրանին և հանեցին մի աշտարակի երդիկը դրին՝ ասելով. «որովհետև քաջ մարդ էր՝ առլեզները կիջնեն ու սրան կկենդանացնեն»[4]: Բերված փաստերը թույլ են տալիս եզրակացնել, որ արալեզների պաշտամունքը հին Հայաստանում ոգեպաշտության ամենազարգացած երևույթներից մեկն էր:

Պահպանված վավերագրերը վկայում են, որ ոգեպաշտական վերապրուկների հանդիպում ենք անգամ 20-րդ դարի սկզբին: Այդ շրջանի հայ ժողովրդական ավանդություններում և բանահյուսական ժանրի ստեղծագործություններում հիշատակվում են մի շարք պաշտամունքային ոգիներ և նրանց պաշտամունքի հետ կապված ծիսական արարողություններ ու տեղանուններ: Դրանց մեծ մասը մեզ է հասել նախնական կամ համեմատաբար քիչ փոփոխությունների ենթարկված տեսքով: Հանդիպում ենք նաև այնպիսի փաստերի, երբ դրանց վերագրվում են նոր հատկանիշներ և որակներ, որոնք իսլամական առասպելաբանության մեջ տարածված ոգիների փոփոխված և ներմուծված տարբերակներ են: Նման վերապրուկներից են **Լևենտը** (լևենտ՝ մայր դև, որն ուտում է մարդկանց, այստեղից էլ՝ արագ ուտող շատակերին անվանում էին լևենտ), **Տան դովլաթը**, որը համարվում էր ընտանիքի բախտն անձնավորող էակ կամ ոգի, **Փերին**, որին անվանում էին երազախաբ կամ սատանախաբ, **Թըբղը**, որը մանուկներին խեղդող երևակայական էակ էր և միաժամանակ կանացի հիվանդություն (թըբղոտ), **Ալը**, որը երեխաների կերածը փորից քաշում տանում էր՝ մատնելով շնաքաղցի և նույնանում էր նաև շատակերի (Լևենտի) հետ, ախոռներում բնակվող **Շվոտը**,

---

[1] **Ղ. Ալիշան,** Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, էջ 90:
[2] **Եզնիկ Կողբացի**, Եղծ աղանդոց, էջ 78:
[3] **Գ. Սրվանձտյանց,** հ. 1, Երևան, 1978, էջ 52:
[4] **Փ. Բուզանդ,** Հայոց պատմություն, էջ 363:

Խիպիլիկը, **Գաբուսը**, որը քնի մեջ մարդկանց կրծքերը ճնշում և շնչահեղձություն էր պատճառում, **Գոռնափշտիկը**, **Շնոֆորը** կամ **Շնոհվորը**, որը հաճախ նույնացվում էր գրողին՝ կարող էր մարդկանց հարվածել, հոգիներն առնել և այլն[1]:

Այդ ամենը վկայում են, որ 20-րդ դարի սկզբին այդ ոգիների վերաբերյալ հյուսված պատմությունները և ավանդություններն ունեին աշխարհաճանաչողական նշանակություն: Օրինակ՝ Գ. Հալաջյանը նշում է, որ Աստղաբերդի շրջակայքում ապրող հայերն Օրոր ջրի հանկարծակի անհետանալն ավանդաբար վերագրում էին վիշապին՝ իբր թե վիշապն է ջրի հոսանքը խափանել և ուղղությունը փոխել. «Աժդահայի կերպարը ցույց տվող մի փորվածք կար քարի վրա, որը փակել էր ջրի ճամփան, և նրան նվիրված աղոթքների և մատաղների շնորհիվ Աժդահայից ազատագրված ջուրը վերադառնում էր իր նախկին հուն» և «Նույն Վիշապն է, որ ոչխարների հոտի, կթվորների ու հովիվների հետ միասին բերդի ավերակներից հետո քարացել է Վիշապասարի ժայռերի վրա և այդ թվականից ի վեր Օրորը չի փոխել իր ընթացքը»[2]:

Դևերի՝ իբրև պաշտամունքային էակների մասին վկայություններ են պահպանվել վաղ միջնադարից սկսած: Եզնիկ Կողբացին գրում է, որ դևն, ի տարբերություն մի շարք այլ երևակայական էակների (համբարու, պարիկ, հուշկապարիկ, արալեզ և այլն), իրականում գոյություն ունի և սատանայի մեկ այլ տարբերակն է, որն անմարմին է, ինչպես հրեշտակները[3]: Այդ պաշտամունքի վերապրուկ է Րաֆֆու «Սալբի» վեպում «խլվլիկի» մասին պատմությունը, որն իր սյուժեով և բովանդակային առումով ընդհանրություն ունի Մշո Ս. Կարապետի՝ կաղ դևի մասին ավանդության հետ[4]: Հետքրիստոնեական շրջանում դևերի և սատանաների նույնացումը հանգեցրել է նրան, որ բանահյուսության մեջ մենք հանդիպում ենք այս ոգիների երկու տիպի՝ դևեր, որոնք ապրում են բերդերում, սարերում, ամրոցներում, և սատանա-դևեր, որոնք մտնում են մարդկանց մեջ և դարձնում դիվահար: Երկրորդ տիպը հիմնականում ներկայանում է վնասաբեր գործունեությամբ:

Ընդհանրացնելով այդ ամենը՝ կարող ենք փաստել, որ հին Հայաստանում ոգեպաշտությունը բավականին տարածված է եղել, որի դրսևորումները սնապաշտական վերապրուկների ձևով պահպանվել են նաև մեր օրերում:

Բանալի բառեր. *անիմիզմ, հավատալիք, վերապրուկ, ավանդություն, հեքիաթ, ոգի, արալեզ, քաջք, դև, վիշապ:*

---

[1] Այս ոգիների մասին հիշատակությունները տե՛ս **Ղ. Ալիշան,** Հայոց հին հավատքը կամ հեթանոսական կրոնը, էջ 101-122, տե՛ս նաև՝ **Հալաջյան Գ.,** Դերսիմի հայերի ազգագրությունը / **Հայ ազգագրություն և բանահյուսություն,** հ. 5, Երևան, 1973, էջ 20:

[2] **Հալաջյան Գ.,** Դերսիմի հայերի ազգագրությունը**,** էջ 20:

[3] Տե՛ս **Եզնիկ Կողբացի,** Եղծ աղանդոց, էջ 76:

[4] Տե՛ս **Րաֆֆի**, Սալբի, Երկերի ժողովածու, հ. 2, Երևան, 1983, էջ 25, տե՛ս նաև **Մովսիսյան Ս. (Բենսե),** Հարք (Մշո Բուլանըխ) / **Հայ ազգագրություն և բանահյուսություն:** Նյութեր և ուսումնասիրություններ, Երևան, 19720, հ. 3, էջ 58:

ANIMISM REMNANTS IN ANCIENT ARMENIA

P. A. BARSEGHYAN
PhD in of Philosophical Science, Assistant Professor

Animism is one of the earliest and most developed forms of early belief. It is manifested in the form of belief in numerous good and evil spirits', ancestral worship triggered from ancient times and in more evolved mythodological characters. Development of Animism entailed to the formation of worship of various deities of polytheistic religions. There are a great many evidences of Animism in Ancient Armenia and of its remnants. The widely known spirits of The Armeninan early belief are aralezner (perpetual lickers), qajqer, devils and etc.

ПЕРЕЖИТКИ АНИМИЗМА В ДРЕВНЕЙ АРМЕНИИ

П.А. БАРСЕГЯН
Кандидат философских наук, доцент

Анимизм-одна из ранних и наиболее развитых форм верований. Анимизм проявляется в виде верований в существование многочисленных добрых и злых духов, поклонении предков и более развитых мифологических персонажей. Развитие анимизма привело к образованию культа различных божеств политеистических религий. Сохранились многочисленные древние свидетельства о проявлениях и более поздних пережитках анимизма в древней Армении. Известными духами армянских верований были аралезы, каджки, демоны и другие.

3.	ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ECONOMICS ЭКОНОМИКА

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ՝ ԿԱՊՎԱԾ ՈԼՈՐՏԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԻ ՀԵՏ

Ս. Գ. ԱՄԻՐԽԱՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի դեկան
Մ. Մ. ԹՈՎՄԱՍՅԱՆ
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի «Ֆինանսներ»
բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի

ՀՀ ագրարային հատվածում այսօր առկա են հանրային մեծ կարևորություն ունեցող և առաջնահերթ լուծում պահանջող խնդիրներ: Առանց դրանց լուծման հնարավոր չէ ձևավորել ագրոպարենային համակարգի հետագա կայուն զարգացման անհրաժեշտ նախադրյալներ, ինչպես նաև նոր թափ հաղորդել տնտեսության ագրարային հատվածի բարեփոխումներին[1]: Դրան մեծապես կարող է նպաստել գյուղատնտեսության վարկավորումը, իսկ գյուղատնտեսական վարկերը, ֆինանսական շուկայի զարգացմանը զուգընթաց, վարկավորման ոլորտի առաջխաղացման կարևոր տարրերից են: Դրանք այն վարկատեսակներն են, որոնք տրամադրվում են հետևյալ նպատակներով.

1. գյուղատնտեսական նշանակության տարածքների հիմնում, ձեռքբերում,
2. գյուղմթերքների ձեռքբերում,
3. ցանքատարածությունների մշակում,
4. գյուղատնտեսության մեջ օգտագործվող կենդանիների ձեռքբերում,
5. մեքենաների, սարքավորումների, տարբեր գործիքների ձեռքբերում,
6. գյուղատնտեսական արտադրական և առևտրային կարիքների ֆինանսավորում և այլն:

Վարկատեսակները հնարավորություն են ընձեռում ինչպես ֆիզիկական անձանց, այնպես էլ անհատ ձեռնարկատերերին և իրավաբանական անձանց ներդրումներ կատարելու վերոհիշյալ ոլորտում, զարգացնելու գյուղատնտեսությամբ զբաղվող գործող տնտեսությունները, ընդլայնելու ցանքատարածությունները, բարձրացնելու դրանց արդյունավետությունը, ավելի եկամտաբեր դարձնելու արտադրությունը:

[1] Սարգսյան Հ., Մարկոսյան Ա., ՀՀ տնտեսության վերափոխումները և վերելքի հեռանկարները, Երևան, 2014, էջ 354-355:

ՀՀ-ում գործող բանկերի և վարկային կազմակերպությունների մեջ առաջատարներից մեկը համարվող «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ն տրամադրում է գյուղատնտեսական մի շարք վարկեր[1], որոնք գործում են արդեն մի քանի տարի, և բանկը, իր միջոցներով հանդերձ, պետական սուբսիդավորում է ստանում և խթանում ՀՀ-ում գյուղատնտեսության զարգացմանը: Վարկատեսակները հնարավորություն են տալիս կատարելու ինչպես կարճաժամկետ (սերմացուի, անասնակերի ձեռքբերում, անասնագլխաքանակի ավելացում, անասնագոմերի վերանորոգում և այլն), այնպես էլ երկարաժամկետ ներդրումներ (այգիների հիմնում, անասնագոմերի և ջերմատների կառուցում, գյուղտեխնիկայի ձեռքբերում և այլն): Վարկերը հնարավորություն են տալիս առանձնացնելու տվյալ տնտեսվարող սուբյեկտների դրամական հոսքերը, հաշվի առնելու տվյալ գործունեության առանձնահատկությունները, սեզոնայնությունը, ըստ այդմ՝ սահմանելու սուբյեկտի համար հարմար մարման գրաֆիկ, հնարավորություն տալու սկզբնական շրջանում վճարելու միայն տոկոս: Հիշյալ վարկատեսակները տրամադրվում են գրավադրմամբ կամ երաշխավորությամբ:

«Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ[2] առևտրային կոոպերատիվը նույնպես հնարավորություն է տալիս գյուղմթերքների արտադրությամբ և վերամշակմամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձանց ստանալ վարկեր իրենց գործունեության կազմակերպման, զարգացման, ընդլայնման նպատակներով: ՈՒՎԿ-ի յուրաքանչյուր վարկառու համարվում է կոոպերատիվի անդամ-փայատեր:

«Քարդ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ-ն տալիս է «Ուրախ ֆերմեր» տեսակի վարկը[3], որի նպատակն է խթանել մատակարարի՝ խանութներից բույսերի պաշտպանության համար նախատեսված ապրանքների, պարարտանյութերի, սերմերի, ընտանի կենդանիների և անասնակերի, գյուղատնտեսական փոքր մեքենաների և սարքավորումների, կաթիլային ոռոգման համակարգերի, ջերմոցների և այլ գյուղատնտեսական կառույցների ձեռքբերումը, միջատասպան նյութերի, բուսական և կենդանական յուղերի ու ճարպերի արտադրությունը, անասնաբուժության, պատվաստման, սերմնավորման գործողությունների կատարումը և այլն: «Քարդ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ-ն իր վարկատեսակներով հնարավորություն է տալիս նաև բարձրարժեք գյուղատնտեսական մշակաբույսերի աճեցմամբ, պտղատու այգիների հիմնմամբ, հետբերքահավաքի գործընթացների կազմակերպմամբ, վերամշակմամբ և շուկայահանմամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտներին ունենալու ներդրման համար անհրաժեշտ միջոցներ:

Գավառ քաղաքում գործող գրեթե բոլոր բանկերն ու վարկային կազմակերպությունները նույնպես տրամադրում են գյուղատնտեսական նշանակության վարկատեսակներ («Ակբա- Կրեդիտ Ագիրիկոլ բանկ» ՓԲԸ-ի մասին արդեն նշվեց), ինչպես, օրինակ, «Արդշինբանկ» ՓԲԸ-ում գործող «Ագրո էքսպրես»

[1] https://www.acba.am/hy/farmers
[2] http://www.fca.am/services/agloans.html
[3] http://agrocredit.am/hy/happy-farmer-2/

վարկատեսակը, «ՍԵՖ ինթերնեյշնլ», «Ֆինքա», «Կամուրջ», «Արեգակ» ՈՒՎԿ-ների կողմից տրամադրվող գյուղատնտեսական վարկերը, որոնք տրամադրվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային եղանակներով, բանկերի կողմից ոսկյա իրերի գրավադրմամբ տրամադրվող գյուղատնտեսական վարկատեսակներ և այլն:

ՀՀ կառավարության գործունեության ռազմավարական ծրագրերի[1] մեջ է մտնում տնտեսական աճ ապահովող նախագծերին աջակցումը: Գյուղատնտեսության զարգացումը նույնպես տնտեսական աճի ազդակ է համարվում, այդ իսկ պատճառով գյուղացիական տնտեսություններին աջակցելու նպատակով 2011թ. մարտի 31-ի N349-Ն որոշմամբ ՀՀ կառավարությունը հաստատել է «Գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման կարգը», ըստ որի՝ սահմանվել է թիրախային տարածաշրջանների համայնքներում գյուղատնտեսության համար առաջնահերթ համարվող ոլորտներում զբաղված ֆիզիկական և իրավաբանական անձանց տրամադրվող վարկերի տոկոսադրույքի մասնակի սուբսիդավորման կարգը և դրվել գործողության մեջ: Գործող տոկոսադրույքը սահմանելով 14 %՝ կառավարությունը 4-6 %-ով իր վրա է վերցնում տվյալ վարկատեսակի սուբսիդավորումը: Սուբսիդավորման տոկոսը կախված է նրանից, թե տվյալ վարկառուն որ տարածաշրջանում է բնակվում:

Վերոնշյալ վարկատեսակների տրամադրման պայմաններին առավել մանրամասն ծանոթանալով և ՀՀ կառավարության սուբսիդավորման ծրագրերը ուսումնասիրելով՝ թվում է, թե հարմարավետ պայմաններ են ստեղծված գյուղոլորտի զարգացման, աճի խթանման համար, և խնդիրները տվյալ ոլորտում զբաղված մարդկանց համար պետք է որ լինի նվազագույն: Սակայն անգամ համեմատաբար մատչելի վարկերը գյուղացիների համար դառնում են պատուհաս, դատարանում հայտնվելու առիթ: Դրա պատճառը ՀՀ տնտեսության անկայուն վիճակն է, տարբեր տարածաշրջանների բնակլիմայական առանձնահատկությունները, արտագաղթի հետևանքով գյուղատնտեսությամբ զբաղվողների թվաքանակի նվազումը, որոնք մեկնում են արտագնա աշխատանքի՝ առաջնորդվելով «քիչ չարչարվել, շատ վաստակել» կարգախոսով, որը ոչ միշտ է իրեն արդարացնում: Գյուղատնտեսական վարկերը չմարելու հետևանքով դատարանում հայտնվելու պատճառներից մեկը մարդկանց կողմից «ծանոթ-բարեկամ-հարևան» սկզբունքով վարկ վերցնելն է: «Մեխանիզմը» հետևյալն է. գյուղացին, ով ավելի շատ է բավարարում տվյալ վարկատեսակի պայմաններին (ունի լավ վարկային պատմություն, բացի գյուղատնտեսությունից՝ ունի նաև փաստաթղթերով հիմնավորվող եկամուտ և այլն), վերցնում է վարկը, որը կամ չի օգտագործում նախանշված նպատակների համար, կամ դրա շատ քիչ մասն է օգտագործում, գումարը տրամադրում է իր մտերիմ մարդուն, որը բնականաբար մեծացնում է վարկի մարման ռիսկը կամ էլ վարկառուները բավարար չափով չեն ծանոթանում վարկատեսակի պայմաններին, ինչքան էլ որ աշխատակիցները փորձում են

[1] http://www.gov.am/am/gov-program/

մանրամասնել պայմանները, այնուամենայնիվ, շատերին դա տվյալ պահին այնքան էլ չի հետաքրքրում: Մարումները կատարելու ժամանակ, եթե ինչ-ինչ պատճառներով իրական շահառու համարվող անձի դրամական հոսքերի հետ կապված խնդիր է ի հայտ եկել (այդպիսի պատճառները կարող են լինել ինչպես օբյեկտիվ՝ կարկտահարություն, սառնամանիք և այլն, այնպես էլ սուբյեկտիվ, օրինակ, տվյալ անձի պատասխանատվության ցածր մակարդակ), գրանցվում են ուշացումներ, որը ազդում է տվյալ անձի վարկային պատմության վրա, հետագայում հանգեցնում է տույժերի կիրառման՝ ընդհուպ մինչև ԴԱՀԿ ծառայության միջամտության: Այսպիսով, ստացվում է, որ համեմատաբար ավելի հարմար պայմաններով տրամադրվող վարկատեսակը լուրջ խնդիրների առաջ է կանգնեցնում առանց այն էլ ֆինանսապես ոչ այնքան բարվոք վիճակում գտնվող գյուղացուն:

Գյուղացու կողմից ակնկալվող բերքի չստանալը չպետք է հիմք հանդիսանա գյուղատնտեսությամբ զբաղվելուց հրաժարվելուն:

Այստեղ դրական դեր կարող է խաղալ տարբեր երկրներում բավական զարգացած գյուղատնտեսության ապահովագրության պրակտիկան: Հարկ է նկատել, որ ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության ներդրման գործընթացը կարելի է իրականացնել միայն պետական մակարդակով մշակված երկարաժամկետ ծրագրի հիման վրա: Պետությունն ինքը պետք է նախաձեռնի ապահովագրության ներդրման գործընթացը և այն իրականացնի մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ:

Ամեն դեպքում հաշվի առնելով ՀՀ տնտեսության ներկայիս վիճակը, գործազրկության մակարդակը, տվյալ վարկատեսակների համար սահմանված տոկոսադրույքները, վարկի և տոկոսի ժամկետանց մասի նկատմամբ կիրառվող տույժերը, դատական գործընթացները՝ վարկի պայմանները կարելի է մեղմել ի շահ գյուղացու: Բնական է՝ պետք է հաշվի առնել այն փաստը, որ բանկերն ու վարկային կազմակերպությունները մասնավոր սեփականություն են համարվում և չեն կարող բարեգործական հիմունքներով գործունեություն ծավալել, բայց և այնպես անզեն աչքով էլ երևում է, որ ֆինանսական կառույցները այնպիսի շահույթ են ապահովում իրենց գործունեության արդյունքում, որ միայն գյուղատնտեսական վարկատեսակների պայմանների բարելավումը չի հանգեցնի վերոնշյալ կառույցների գործունեությունը վնասելուն:

Գյուղատնտեսության հետ կապված խնդիրների լուծման համար կարևոր նշանակություն ունի պետական միջամտությունը, որը կատարվում է տարբեր մեթոդներով՝ նոր ձևավորվող ֆերմերային տնտեսություններին աջակցություն, հարկային բեռի թեթևացում, ընտանեկան ձեռնարկությունների ֆինանսավորում, ինչպես նաև գյուղատնտեսական վարկերի սուբսիդավորում[1]:

[1] Саргсян Г., Маркосян А., Трансформационные аспекты феномена рыночного хозяйства, Ереван, 2016.

Հաշվի առնելով, որ ժամանակակից պայմաններում գյուղատնտեսական ոլորտի տնտեսվարող սուբյեկտները միջոցների ներգրավման խնդիր ունեն, պետությունը կարող է հանդես գալ ի շահ գյուղացու՝ գյուղվարկավորման ոլորտում իր միջամտությունը դարձնելով ավելի նկատելի տոկոսադրույքների սուբսիդավորման մասով, որը կարելի է ապահովել ֆինանսական կառույցներին ավելի ցածր տոկոսադրույքների թելադրմամբ:

Առաջարկում ենք Կենտրոնական բանկի միջոցով սահմանել հաշվարկային դրույքաչափ կոնկրետ գյուղվարկավորման ոլորտում, որի, օրինակ, 1.5-ապատկից ավելի ոչ մի բանկ կամ վարկային կազմակերպություն չկարողողանա սահմանել իր կողմից կիրառվող տոկոսադրույքը:

Բացի դրանից՝ այստեղ շատ կարևոր է նաև նույն ԿԲ-ի միջոցով սահմանել վերահսկողություն բանկերի կողմից կիրառվող <<թաքնված տոկոսադրույքների>> վրա: Խոսքը միջնորդավճար, սպասարկման, տրամադրման, կոմիսիոն վճարներ կոչվող և փաստացի վարկառուի գրպանից վերցվող գումարների մասին է, որը, չհակասելով վարկատեսակների հաշվարկային դրույքաչափի (12%) կրկնապատիկը չգերազանցելու ԿԲ-ի պահանջին, մարդկանց դնում է ավելի թանկ վարկ վերցնելու վտանգի առաջ, քանի որ բանկերը և վարկային կազմակերպությունները, մինչև 24 % սահմանելով իրենց տոկոսադրույքները, այնքան այլ վճարներ են վերցնում, որ փաստացի տոկոսադրույքը տարեկան կարող է հասնել ավելի քան 30-ի: Գյուղվարկերի մասով կարելի է պետական վերահսկողությամբ արգելել կամ նվազագույնի հասցնել այդ վճարների գանձումը, որը թույլ կտա մարդկանց ավելի շատ վստահություն ունենալ տվյալ կառույցի, պետության՝ իրեն աջակցելու քաղաքականության հանդեպ: Բացի դրանից՝ մարդիկ առավել շահավետ պայմաններ ու միջոցներ կունենան իրենց հետագա գործունեության ծավալման և բարելավման համար:

Գյուղատնտեսությամբ զբաղվող տնտեսվարող սուբյեկտների համար կարելի է սահմանել նաև այնպիսի մեխանիզմ, որը թույլ կտա տվյալ վարկատեսակը ստացող և պարտաճանաչ կերպով մարումներ կատարող հաճախորդներին հետագայում տվյալ վարկի համար դիմելիս ստանալ ավելի մեծ սահմանաչափով վարկ, տվյալ բանկում կամ վարկային կազմակերպությունում գործող մեկ այլ տեսակի վարկատեսակից օգտվել առավել ցածր դրույքաչափով, այլ միջոցներից օգտվել արտոնյալ պայմաններով:

Պետության կողմից գյուղատնտեսական վարկերի վերահսկման նպատակով կարելի է ստեղծել կոնկրետ տվյալ ոլորտի ուսումնասիրման համար գործող աուդիտորական կազմակերպություն, որը կարող է լինել ինչպես առանձին իրավաբանական անձ, այնպես էլ ԿԲ-ին կից գործող, հաճախակի այցելություններ կատարել տարբեր տարածաշրջաններում գործող բանկեր և վարկային կազմակերպություններ, ծանոթանալ տրամադրված գյուղատնտեսական վարկերի ընթացիկ պայմաններին, մարումների վիճակագրությանը, իրականացնել հանկարծակի մոնիթորինգ տվյալ ֆինանսական կազմակերպության վարկային բաժնի

աշխատակիցների հետ կամ առանձին, պարզել՝ արդյոք նպատակային են օգտագործվում տվյալ միջոցները, եթե ոչ, ապա պարզել ֆինանսական կառույցի աշխատակցի շահագրգռվածության աստիճանը տվյալ վարկի տրամադրման հարցում (արդյո՞ք վարկը ի սկզբանե նպատակային է տրամադրվել աշխատակցի կողմից, իրականացվե՞լ է համապատասխան վերլուծություն և այլն), այցելել տվյալ տնտեսվարող սուբյեկտներին: Կարելի է նաև տվյալ կազմակերպության մասնաճյուղեր ստեղծել տարբեր մարզերում (սկզբնական շրջանում կարելի է 3-4 մարզերի համար մեկ մասնաճյուղ ունենալ՝ պետական ծախսերի խնայման նպատակով, հետագայում հնարավորության դեպքում ընդլայնել): Այստեղ շատ կարևոր է նաև «Բանկային գաղտնիքի մասին» ՀՀ օրենքի վերանայումը, քանի որ տվյալ իրավաբանական անձը պետք է բացառության կարգով ստանա թույլտվություն բանկերում, գյուղացիական տնտեսություններում վարկի նպատակայնությունն ու գյուղատնտեսական վարկերի մասով վիճակագրական տվյալներն ազատ ստանալու համար: Այս ամենը հնարավորություն կտա նվազագույնի հասցնել բանկի կամ վարկային կազմակերպության աշխատակիցների կողմից տրամադրվող գյուղատնտեսական վարկերի ոչ նպատակային տրամադրումը, բացի դրանից՝ տնտեսվարող սուբյեկտների վրա էլ կլինի կրկնակի վերահսկողություն ինչպես տվյալ ֆինանսական կառույցի, այնպես էլ պետության կողմից, կնպաստի տարբեր համայնքների տնտեսվարող սուբյեկտների գործունեության զարգացմանը, հնարավոր կլինի խուսափել մարդկանց կողմից չգիտակցված քայլերի հետևանքով առաջացած խնդիրներից, դատական քաշքշուկներից: Այդպես ֆինանսական կառույցները ավելի շատ կարող են զսպել իրենց ֆինանսական ռիսկերը, մյուս կողմից էլ տնտեսվարող սուբյեկտները ավելի բարենպաստ պայմաններում կծավալեն իրենց գործունեությունը:

Բանալի բառեր՝ *գյուղատնտեսություն, գյուղատնտեսության զարգացում, գյուղատնտեսական վարկ, ֆինանսական շուկա, վարկավորման պայմաններ:*

Օգտագործված գրականության ցանկ

1. «Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ-ի պաշտոնական կայքէջ:
2. «Ֆարմ Կրեդիտ Արմենիա» ՈՒՎԿ առևտրային կոոպերատիվի պաշտոնական կայքէջ:
3. «Քարդ Ագրոկրեդիտ» ՈՒՎԿ-ի պաշտոնական կայքէջ:
4. www. abcfinance.am

AGRICULTURAL DEVELOPMENT OPPORTUNITIES IN CONNECTON WITH THE MAIN PROBLEMS OF FIELD'S LENDINGS

S. G. AMIRKHNANYAN
PhD in Economics, Associate Professor
Dean of the Faculty of Economics of GSU
M. M. TOVMASYAN
Fourth Year student at the Department of Finance,
Faculty of Economics of GSU

Nowadays the agricultural sector of the Republic of Armenia has some problems of great public importance that require urgent solution. Without solving this kind of problems, it is impossible to form a stable basis for further development of the agro-food system. The development of financial market with the possibility of granting agricultural loans is seen as a system that ensures development prerequisites.

ВОЗМОЖНОСТИ РАЗВИТИЯ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА, СВЯЗАННЫЕ С ОСНОВНЫМИ ВОПРОСАМИ КРЕДИТОВАНИЯ ОТРАСЛИ

С. Г. АМИРХАНЯН
Кандидат экономических наук, доцент
Декан Экономического факультета ГГУ
М. М. ТОВМАСЯН
Студентка 4-ого курса отделения ,,Финансы"
Экономического факультета

В сельскохозяйственном секторе Республики Армения актуальны проблемы, имеющие большое общественное значение и требующие безотлагательного решения. Без их решения невозможно формировать необходимые предпосылки для дальнейшего устойчивого развития аграрно -продовольственной системы. В качестве системы, обеспечивающей предпосылки развития, рассматривается развитие финансового рынка с возможностью предоставления сельскохозяйственных кредитов.

ՏՈԿՈՍԱՅԻՆ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ «ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ» ՓԲԸ-Ի ՕՐԻՆԱԿՈՎ

Մ. Ն. ՀԵՐԳՆՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ տնտեսագիտական ֆակուլտետի փոխդեկան
Լ. Մ. ՂՈՒՐՇՈՒԴՅԱՆ
ԳՊՀ մագիստրատուրայի «Ֆինանսներ» բաժնի շրջանավարտ
Գ. Հ. ՀԵՐԳՆՅԱՆ
ԳՊՀ «Հաշվապահական հաշվառում» բաժնի 2-րդ կուրսի ուսանող

Բանկային համակարգի կայունությունը ցանկացած երկրի տնտեսության զարգացման համար կարևոր նախապայման է, որը թույլ է տալիս կանխատեսել բանկերի գործունեության ընդլայնման հեռանկարը և բարձրացնել նոր հաճախորդներ ձեռք բերելու գրավչության աստիճանը: Դա որոշվում է ոչ միայն մրցակցության, այլև ռիսկի համընդհանուր մակարդակով: Այս առումով բանկային գործունեությունը կապված է ռիսկերի, հատկապես տոկոսային ռիսկի կառավարման հիմնախնդիրների հետ: Բանկերը պետք է կարողանան հստակ որոշել ռիսկի մակարդակը, որպեսզի խուսափեն չհիմնավորված գործողություններից՝ միաժամանակ պահպանելով հավասարակշռությունը ռիսկայնության և շահութաբերության միջև: Ռիսկային գործարքների կանխատեսումը թույլ է տալիս մշակել հաջորդական քայլեր՝ ռիսկերի նվազման և արդյունավետ կառավարման ուղղությամբ:

Նշենք, որ տոկոսային ռիսկի կառավարումը բանկի ռազմավարական ուղղվածություններից մեկն է: Այս ռիսկը համարվում է կարգավորվող, բայց կրում է նաև սպեկուլյատիվ բնույթ, քանի որ տոկոսադրույքի փոփոխությունները կարող են բերել ինչպես վնասներ, այնպես էլ լրացուցիչ եկամուտներ:

«Տոկոսային ռիսկը բանկի կողմից կորուստներ կրելու հավանականությունն է՝ պայմանավորված շուկայում տոկոսադրույքների անբարենպաստ փոփոխություններով: Այն արտահայտվում է ներգրավված միջոցների դիմաց վճարվող տոկոսագումարների ավելացմամբ կամ տեղաբաշխված միջոցներից ստացվող եկամուտների նվազմամբ»[1]: Նկատի ունենալով, որ բանկերի եկամուտների և ծախսերի հիմնական մասը կազմում են տոկոսային եկամուտները և ծախսերը, ակնհայտ է դառնում տվյալ ռիսկի ներգործության աստիճանն ու կառավարման կարևորությունը:

Որպես տոկոսային ռիսկին վերաբերող նորմատիվաիրավական փաստաթուղթ՝ ՀՀ ԿԲ կանոնակարգ 2-ի «Շուկայական ռիսկի հաշվարկը» բաժնում տրված է տո-

[1].Բադանյան Լ., Աբգարյան Կ., Սալնազարյան Ա. և ուրիշներ, Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ, Եր., 2007, էջ 474:

կոսային ռիսկի հաշվարկման կարգը: Այն ներկայացվում է տոկոսադրույքի հատուկ ռիսկի և ընդհանուր ռիսկի հանրագումարի միջոցով և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ՏՌ = ՏՀՌ+ՏԸՌ \quad (1)$$

որտեղ ՏՌ-ն տոկոսադրույքի ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով, ՏՀՌ-ն տոկոսադրույքի հատուկ ռիսկն է՝ ամսվա միջին օրական հաշվարկով, ՏԸՌ-ն տոկոսադրույքի ընդհանուր ռիսկը՝ ամսվա միջին օրական հաշվարկով:

Տոկոսադրույքի հատուկ և ընդհանուր ռիսկերը հաշվարկվում են շահույթ/վնասով վերաչափվող իրական արժեքով հաշվառվող և վաճառքի համար մատչելի արժեթղթերի նկատմամբ: Ընդ որում պարտքային արժեթղթերը դիրքերի հաշվարկում ընդգրկվում են ընթացիկ շուկայական արժեքով[1]:

Ընդհանուր առմամբ տոկոսային ռիսկը բաղկացած է երեք ենթառիսկերից.

1.Ժամկետների անհամապատասխանության ռիսկն առաջանում է տոկոսադիրների փոփոխության կամ բանկի ակտիվների և պասիվների մարման ժամկետների անհամապատասխանության կամ տարբերության պատճառով, երբ ակտիվների ու պասիվների տոկոսադրույքների վերանայման (վերականգնման) ժամկետները չեն համընկնում:

2.Բազիսային ռիսկը կապված է տոկոսադրույքների կառուցվածքի փոփոխության հետ: Այն ի հայտ է գալիս, երբ բանկի ներգրավված և տեղաբաշխված տոկոսադրույքներն ունեն կառուցվածքային տարբերություն: Տվյալ ռիսկն առաջանում է տարբեր տեսակի տոկոսադրույքների ապագա փոփոխությունների անկանխատեսելիության հետևանքով:

3.Օպցիոնային ռիսկն առաջանում է բանկի ակտիվներում և պասիվներում առկա օպցիոններից (հնարավորություններից)՝ ժամկետից շուտ փոխառուների կողմից փոխառությունները մարելու կամ ավանդատուների կողմից ավանդները հետ վերցնելու հետևանքով:

Տոկոսային ռիսկի կառավարումն այնպիսի մեթոդների պլանավորումն ու իրականացումն է, որոնց միջոցով կարող են չեզոքացվել կամ փոխհատուցվել հնարավոր կորուստները: Միջազգային բանկային պրակտիկայում կիրառվում են տոկոսային ռիսկի գնահատման և կառավարման հետևյալ մոդելները.

- տոկոսադրույքի մարժայի և դրա սպրեդի գործակցի մակարդակի ու դինամիկայի գնահատում,
- մարման ժամկետների մոդել (ճեղքվածքի կամ GAP-ի վերլուծություն),
- դյուրացիայի մոդել (տևողության վերլուծություն),
- վերագնահատման մոդել (սիմուլյացիոն վերլուծություն),
- իմիտացիոն մոդելավորում:

Տոկոսադրույքի փոփոխություններից օգուտներ ստանալու և վնասներ չկրելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կազմակերպության ակտիվների և

[1] «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները», կանոնակարգ 2, հաստատված 2007թ.-ի փետրվարի 9-ին, հավելված 4, կետ 8:

պասիվների պորտֆելի այն բաղադրիչների վրա, որոնք առավել զգայուն են տոկոսադրույքների փոփոխությունների հանդեպ: Այն հաշվեկշռի ակտիվների մասով ներառում է վարկերը և արժեթղթերում ներդրումները, պասիվների մասով՝ փոխառությունները: Տոկոսադրույքների փոփոխություններից ակնկալվող եկամուտները պաշտպանելու համար ղեկավարությունը պետք է կայուն պահի ֆինանսական կազմակերպության զուտ /նետտո/ տոկոսային մարժան (NIM-net interest margin), որը հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$NIM=\frac{\text{Վարկերից և ներդրումներից ստացվող տոկոսային եկամուտներ} - \text{Ավանդներ և այլ փոխառու միջոցների հետ կապված տոկոսային ծախսեր}}{\text{Զեռք բերված ընդհանուր ակտիվներ}} X\ 100\%$$

(2)

Եթե փոխառված ֆինանսական միջոցների տոկոսադրույքը/արժեքը/ բարձրանում է ավելի արագ, քան վարկերից և արժեթղթերից ստացված եկամուտը, ապա ֆինանսական կազմակերպության զուտ տոկոսային մարժան փոքրանում է՝ հավանական բացասական ազդեցություն ունենալով եկամուտների վրա: Եթե վարկերի և պարտատոմսերի տոկոսադրույքներն իջնեն ու պատճառ դառնան, որ դրանցից ստացված եկամուտները նվազեն ավելի արագ, քան փոխառված միջոցների տոկոսադրույքների փոփոխությունից առաջացող ծախսերը, ապա կազմակերպության զուտ տոկոսային մարժան կրկին կնվազի: Դա վկայում է այն մասին, որ եկամտաբերության կորագծերը ժամանակի ընթացքում չեն շարժվում զուգահեռ, քանի որ փոխառությունների արժեքի և տոկոսադրույքներից ակնկալվող եկամուտների միջև տարբերությունը երբեք հաստատուն չէ: Աղյուսակ 1-ում ներկայացված է NIM հաշվարկը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի օրինակով:

Աղյուսակ 1[1]

NIM հաշվարկ

	Տոկոսային եկամուտներ	Տոկոսային ծախսեր	Ընդհանուր ակտիվներ	Զուտ տոկոսային եկամուտ/ծախս	Զուտ տոկոսային մարժա / NIM/-%
2004	2.722.644	-1.005.985	39.924.053	1.716.659	4.30%
2005	3.396.752	-1.543.419	41.359.852	1.853.333	4.48%
2006	3.725.363	-1.457.561	45.649.236	2.267.802	4.97%
2007	4.762.554	-1.649.599	69.376.716	3.112.955	4.49%
2008	9.588.677	-3.260.637	99.216.769	6.328.040	6.38%
2009	11.028.146	-4.783.819	118.953.110	6.244.327	5.25%
2010	12.179.266	-4.311.194	127.440.897	7.868.072	6.17%
2011	17.246.793	-6.669.127	182.574.133	10.577.666	5.80%

[1] www. vtb.am

2012	23.047.042	-10.514.759	211.301.320	12.532.283	5.93%
2013	30.474.503	-15.286.669	302.274.757	15.187.834	5.02%
2014	38.086.308	-17.726.654	361.147.193	20.359.654	5.63%

Տոկոսային ռիսկի գնահատման մեկ այլ տարածված մոտեցում է սպրեդի գործակցի նկատմամբ վերահսկումը: Այս գործակիցը կապված է տոկոսային ռիսկի այնպիսի գործոնի հետ, ինչպիսին է բանկի վարկերի տրամադրման և ավանդների ներգրավման տոկոսային քաղաքականության համադրումը, որի հաշվարկը կատարվում է հետևյալ մեթոդաբանությամբ.

$$Գ_{սպրեդ}=\frac{S_{Վ}}{Վ}-\frac{S_{ա}}{Ա} \quad (3)$$

որտեղ Գ-ն սպրեդի գործակիցն է, $S_{վ}$ –ն՝ բանկի կողմից տվյալ ժամանակահատվածում վարկերից ստացված տոկոսները, Վ-ն՝ տվյալ ժամանակահատվածում վարկերի գծով պարտքերի միջին մնացորդը, $S_{ա}$-ն՝ բանկի կողմից տվյալ ժամանակահատվածում ներգրավված ավանդների դիմաց վճարված տոկոսները, Ա –ն՝ տվյալ ժամանակահատվածում բոլոր տեսակի ավանդային միջոցների միջին մնացորդը:

Նախատեսված ժամանակահատվածում բանկը պետք է որոշի սպրեդի գործակցի նորմերը: Վերջինիս համար կողմնորոշիչ են գործակցի փաստացի մակարդակը և միջազգային չափորոշիչները (1.25%):

Տոկոսադրույքի փոփոխության հետևանքով բանկի սպասվող հավանական կորուստները կամ օգուտները գնահատելու համար հաճախ օգտագործվում է GAP մոդելը: GAP մոդելով վերլուծության արդյունքում գնահատվում է տոկոսադրույքի փոփոխության ազդեցությունը զուտ տոկոսային եկամտի վրա: Տոկոսադրույքի ռիսկը գնահատելու նպատակով տոկոսադրույքի փոփոխման նկատմամբ զգայուն պարտավորությունները հանվում են ակտիվներից՝ յուրաքանչյուր ժամանակահատվածի ճեղքվածքը (GAP) հաշվարկելով հետևյալ բանաձևով.

$$GAP = ISA – ISL \quad (4)$$

որտեղ ISA–ն տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվներն են, ISL–ը տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն պասիվներն են:

Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվներից են կարճաժամկետ արժեթղթերը, տրամադրված միջբանկային վարկերը, լողացող տոկոսադրույքով փոխատվությունները և այն փոխատվությունները, որոնց դեպքում, պայմանագրի համաձայն, նախատեսված է տոկոսադրույքների վերանայում: Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն պասիվներն են լողացող տոկոսադրույքով դեպոզիտները, արժեթղթերը, որոնց համար նախանշված են լողացող փոխարժեքներ, ներգրավված միջբանկային վարկերը, ցպահանջ ավանդները, դեպոզիտային պայմանագրերը (որոնց համար պայմանավորվածությամբ նախատեսված է տոկոսադրույքի վերանայման ժամկետ):

Տոկոսադրույքի փոփոխության նկատմամբ զգայուն ակտիվների և պասիվների համադրման արդյունքում առաջանում է ճեղքվածք, որը կարող է ունենալ դրական, բացասական կամ զրոյական նշանակություն: Այսպես.

- երբ GAP > 0, տոկոսադրույքների աճը նպաստում է բանկի եկամուտների աճին,
- երբ GAP < 0, տոկոսադրույքների աճը հանգեցնում է բանկի եկամուտների նվազման,
- երբ GAP= 0, տոկոսադրույքների փոփոխությունները չեն ազդում բանկի եկամուտների վրա:

Բացարձակ GAP-ից բացի՝ ընդունված է հաշվարկել նաև հարաբերական GAP-ը: Այն ISA-ի և ISL-ի միջև առկա ճեղքվածքի գործակիցն է և հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ISR=\frac{ISA-ISL}{ISA}\ ;\ \frac{ISA}{ISL} \quad (5)$$

որտեղ ISR -ը տոկոսադրույքի նկատմամբ զգայունության գործակիցն է:

GAP-ի վերլուծության հիման վրա տոկոսային ռիսկի հաշվարկը «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի օրինակով ներկայացված է աղյուսակ 2-ում:

Տոկոսային ռիսկի աստիճանի գնահատման համար օգտագործվում են GAP-ի վերլուծության հետևյալ մոտեցումները.

1.GAP-ի գործակցի հաշվարկ, դրա մեծության և դինամիկայի գնահատում: GAP- ի գործակիցը կարող է ստանալ հետևյալ ցուցանիշները՝ ISR>1, ISR<1, ISR=1: Որքան ISR-ը շատ է շեղվում 1-ից, այնքան մեծ է տոկոսային ռիսկը:

2.GAP-ի հիման վրա տոկոսային մարժայի (զուտ տոկոսային եկամտի՝ NII) փոփոխության հաշվարկ: Բանկի տոկոսային մարժայի (NII) փոփոխությունը կախված է տոկոսադրույքների մակարդակի (i) փոփոխությունից և բանկի՝ տվյալ ժամանակահատվածում տոկոսադրույքի նկատմամբ զգայուն ակտիվների ու պասիվների միջև առկա (GAP) ճեղքվածքից.

$$\Delta NII = GAP X \Delta I \quad (6)$$

3. Կուտակային GAP-ի հաշվարկ: Կուտակային GAP-ը որոշակի ժամանակահատվածի վերջում հաշվարկվում է որպես նշված ժամանակահատվածում առանձին ժամանակահատվածների բացարձակ GAP-երի հանրագումար:

Միջազգային բանկային պրակտիկայում ընդունված է գործակցի գնահատման հետևյալ չափանիշները.

- երբ GAP / ակտիվներ < 10%, համարվում է նորմալ դիրք,
- երբ 10% < GAP / ակտիվներ < 12%, համարվում է տակտիկական դիրք,
- երբ 12% < GAP / ակտիվներ < 15%, համարվում է ռազմավարական դիրք,
- երբ GAP / ակտիվներ > 15%, համարվում է սպեկուլյատիվ դիրք[1]:

[1] Материалы X региональной научно-технической конференции “Вузовская наука – Северо-Кавказскому региону”, СевКавГТУ 2006, стр. 32-33.

Փոփոխվող տոկոսադրույքները ոչ միայն կարող են հանգեցնել զուտ տոկոսային մարժայի կորուստների, այլև լուրջ վնաս հասցնել ֆինանսական կազմակերպության գործունեության մեկ այլ կողմին՝ դրա զուտ արժեքին (բաժնետերերի ներդրումների արժեքին): Սակայն տոկոսային ռիսկից զուտ տոկոսային մարժայի պաշտպանված լինելը դեռևս չի նշանակում, որ ֆինանսական կազմակերպության զուտ արժեքը նույնպես պաշտպանված է կորուստներից, և կազմակերպությունների մեծամասնության համար զուտ արժեքն ավելի կարևոր է, քան զուտ տոկոսային մարժան: Սա պահանջում է մեկ այլ կառավարչական գործիքի կիրառում, որը ներկայացվում է GAP-ի տևողական կառավարման կամ դյուրացիայի մոդելով:

Դյուրացիան (duration (լատին.)-տևողություն) ներկա արժեքով կշռվող դրամական միջոցների հոսքերի միջին ժամանակահատվածն է, որը հաշվի է առնում ակտիվների գծով բոլոր ներհոսքերի և պասիվների բոլոր արտահոսքերի ժամանակացույցները: Դյուրացիան չափում է այն միջին ժամանակահատվածը, որը պահանջվում է ներդրումների վրա ծախսված ֆինանսական միջոցները վերադարձնելու համար: Այն արտահայտում է ակնկալվող ապագա կանխիկ դրամական հոսքերի (ֆինանսական ներհոսքեր և արտահոսքեր) մարումների միջին ժամկետը:

Աղյուսակ2[1]

GAP վերլուծության վրա հիմնված «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի տոկոսային ռիսկի հաշվարկ

31.12.2015թ.ի դրությամբ	Գործիքի մարման ժամկետը											
Հոդվածի անվանումը	մինչև 1 ամիս		1-ից մինչև 3 ամիս		3-ից մինչև 6 ամիս		6-ից մինչև 1 տարի		1-ից մինչև 5 տարի		5 տարուց ավելի	
Տեղաբաշխված միջոցներ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ	դրամ	արտարժույթ
Պահանջներ բանկերի և այլ ֆին. կազմ. նկատմամբ, այդ թվում՝	**0**	1,179,779	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**	**0**
վարկեր		708,340										
ավանդներ		471,439										
ֆատկորինգ												
լիզինգ												
հետգնման պայմանագրեր												
այլ												
Հաճախորդներին տրված վարկեր, փոխատվություններ, այդ թվում՝	35,977,909	33,607,788	4,169,835	3,398,336	7,579,133	5,879,893	9,396,374	7,016,728	24,198,690	28,004,640	**11,301,980**	**14,035,403**
վարկեր	35,866,787	24,979,101	4,167,359	3,397,408	7,575,384	5,878,503	9,388,939	7,013,827	24,173,344	27,992,207	11,301,980	14,035,402
ավանդներ												
ֆատկորինգ	107,418	8,628,223										

[1] www.vtb.am

լիզինգ	3,702	463	2,475	926	3,748	1,390	7,434	2,900	25,346	12,432		
հետգնման պայմանագրեր												
այլ												
Առևտրային նպատակով պահվող և վաճառքի համար մատչելի արժեթղթեր, այդ թվում՝	18,501,967	1,757,560										
երկարաժամկետ պարտք. գործիքներ												
կարճաժամկետ պարտք. գործիքներ	840,537	1,757,560										
վաճառքի համար մատչելի արժեթղթեր	17,661,429	-										
կապիտալի գործիքներ												
Մինչև մարման ժամկետը պահվող արժեթղթեր												
Տեղաբաշխված այլ միջոցներ	-	3,642,114										

Ընդամենը	54,479,875	40,187,241	4,169,835	3,398,335	7,579,132	5,879,893	9,396,373	7,016,727	24,198,690	28,004,640	**11,301,980**	**14,035,402**
Պարտավորություններ բանկերի և այլ ֆին. կազմ.-ների նկատմամբ, այդ թվում՝	40,221,441	138,159	50,303	-	81,244	1,814,063	203,701	1,814,063	3,713,231	3,628,125	**26,832,296**	**241,489**
վարկեր	16,255,711	-	50,303		81,244	1,814,062	203,700	1,814,062	3,713,230	3,628,125	26,832,296	

Աղյուսակ 2-ի շարունակություն

ավանդներ	3,458,439	138,159										
ֆակտորինգ												
լիզինգ												
հետգնման պայմանագրեր	20,507,290											
այլ												
Պարտավորություններ հաճախորդների նկատմամբ, այդ թվում՝	75,564,233	100,293,546	0	4,900	284,365	7,030	278,807	11,781	307,376	10,648	**3,257**	***0***
ավանդներ	75,564,233	100,293,546		4,900	284,365	7,030	278,807	11,781	307,376	10,648	3,257	
հետգնման պայմանագրեր												
այլ												
Բանկի կողմից թողարկված արժեթղթեր, այդ թվում՝	10,227,362	0	0	0	0	0	0	0	0	0	**0**	**0**
փոխարկելի արժեթղթեր												

հիփոթեքային պարտատոմսեր												
այլ պարտատոմսեր												
ստորադաս փոխառություններ	10,227,362											
Ներգրաված այլ միջոցներ	982,483											
Ընդամենը	126,995,520	100,431,705	50,303	4,900	365,609	1,821,093	482,507	1,825,843	4,020,606	3,638,773	**26,835,553**	**241,489.00**
Տոկոսային ռիսկի ցուցանիշներ												
Բացարձակ GAP, հազ.դրամ	(72,515,644)	(60,244,463)	4,119,531	3,393,435	7,213,523	4,058,799	8,913,865	5,190,883	20,178,083	24,365,866	**(15,533,573)**	**13,793,913**
Հարաբերական GAP	-	-	-	-	-	-	-	-	-	-	**-**	**-**
1) (ISA-ISL) / ISA x 100%	(133%)	(150%)	98.8%	99.8%	95.2%	69%	94.9%	74	83.4%	87%	**(137.4%)**	**98.3%**
2) ISA/ISL	0.43	0.4	83	693	20.7	3.2	19.5	3.8	6	7.7	**0.4**	**58.12**
Կուտակային GAP, հազ.դրամ	(72,515,644)	(60,244,463)	(68,396,113)	(56,851,028)	(61,182,590)	(52,792,229)	(52,268,725)	(47,601,396)	(32,101,648)	(23,235,532)	**(47,635,221)**	**(9,441,619)**

Առանձին ֆինանսական գործիքների (վարկ, արժեթղթեր, ավանդ կամ ոչ ավանդային փոխառություն) դյուրացիան (D) հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$D = \frac{\sum_{i=1}^{n} t_i \times \text{սպասվող} CF \times t_i/(1+YTM)^{t_i}}{\frac{t_i \text{սպասվող} CF}{(1+YTM)^{t_i}}} \quad (7)$$

որտեղ D-ն գործիքի տևողությունն է տարիներով կամ տարվա չափամասերով, t_i -ն այն ժամանակահատվածն է, որի ընթացքում ակնկալվում է գործիքից ստանալ կանխիկի մուտքեր, ինչպիսիք են տոկոսադրույքից կամ շահաբաժիններից ստացվող եկամուտները, CF-ը յուրաքանչյուր t_i ժամանակահատվածում սպասվող կանխիկի մուտքի գումարն է, YTM-ը գործիքի ընթացիկ մարման եկամտաբերությունն է:

Հաշվի առնելով, որ վերոնշյալ բանաձևի հայտարարը հավասար է գործիքի ներկա շուկայական արժեքին, դյուրացիայի բանաձևը կարող է կրճատվել և ստանալ հետևյալ տեսքը[1].

$$D = \frac{\sum_{i=1}^{n} \text{սպասվող } CF \times t_i/(1+YTM)^{t_i}}{\text{ընթացիկ շուկայական արժեք կամ գին}} \quad (8)$$

Տոկոսային ռիսկի կառավարման միջազգային մոտեցումներում (ստանդարտներում) նշվում է, որ բանկերը կարող են իրականացնել տոկոսային ռիսկի հաշվարկ ինչպես յուրաքանչյուր ժամանակահատվածի համար կշռման ստանդարտ գործակիցների կիրառմամբ, այնպես էլ բանկի կողմից յուրաքանչյուր ակտիվի, պարտավորության, հետհաշվեկշռային դիրքի համար առանձին դյուրացիայի ինքնուրույն հաշվարկմամբ:

Տոկոսային ռիսկի նվազեցման համար գործնականում կիրառվում է ակտիվների և պասիվների ժամկետների ճեղքվածքի սահմանափակում: Սահմանափակում կարող է կիրառվել ակտիվների և պասիվների յուրաքանչյուր խմբի համար՝ ելնելով այդ խմբերի տոկոսադրույքների շարժման հանդեպ բանկի սպասելիքներից:

Բանկն իր գործունեության ժամկետների ճեղքվածքի ավելի մեծ չափերի դեպքում կարող է խնդիրներ ունենալ ոչ միայն տոկոսային ռիսկի իրացվելիության, այլև չհավասարակշռված իրացվելիության ռիսկի հետ: Իրացվելիության խախտումը բանկին ստիպում է ներգրավել թանկ միջոցներ, որը վերջին հաշվով հանգեցնում է կորուստների:

Այսպիսով, բանկային ռիսկերի կառավարման ընթացքում բանկի համար նախընտրելի է վերոնշյալ մեթոդներն օգտագործել միաժամանակ, քանի որ հեռանկարային առումով բանկին առաջին հերթին հետաքրքրում է իր կայունությունը, իսկ ընթացիկ գործունեության մեջ՝ եկամուտների ստացումը:

[1] Rose Peter S., Hudgins Sylvia C., Bank Management & Financial Services, Eighth international edition, NY 2010, p. 223.

Բանալի բառեր՝ *բանկային համակարգի կայունություն, ռիսկային գործարքների կանխատեսում, փոկոսային ռիսկ, փոկոսադրույքի մարժա, դյուրացիայի մոդել, իմիտացիոն մոդելավորում, սպրեդի գործակից:*

Օգտագործված գրականություն

1. Ասատրյան Բ., Բանկային գործ (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2004:
2. Բայադյան Ա. Հ., Ֆինանսական վերլուծություն, Երևան, 2009:
3. Գրիգորյան Ռ. Լ., Ռիսկի կառավարում (ուսումնական ձեռնարկ), Երևան, 2010:
4. Սիմոնյան Ա. Դ., Ռիսկի տնտեսական հասկացությունը և դրա դերը բանկային գործում, Երևան, 2007:
5. Грюнинг Х., Анализ банковских рисков, М., Издательство«Весь Мир», 2007.
6. Greuning van Hennie, Analyzing banking risk, A Framework of The World bank, Washington D.C. 2001.
7. Homaifar Ghassem A., Managing global financial and foreign exchange rate risk, USA 2004.

Օրենսդրական և ենթաօրենսդրական ակտեր

1. «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները», կանոնակարգ 2 (հաստատված 2007թ.-ի փետրվարի 9-ին):
2. ՀՀ ԿԲ տարեկան հաշվետվություն, Երևան, 2013:

Համացանցային կայքեր

www.cba.am,
www.vtb.am,
www.cba.am,
www.banker.am,
www.bis.org:

THE EFFICIENCY OF INTEREST-RATE RISK MANAGEMENT BY THE EXAMPLE OF VTB BANK (ARMENIA), CJSC

M. N. HERGNYAN
PhD in of Economics, Associate Professor
Vice Dean of the Faculty of Economics, GSU
L. M. GHURSHUDYAN
Graduate of GSU master's program
of the Department of Finance
G. H. HERGNYAN
2nd year student of the Department
of Accounting, GSU

The stability of banking economy is an important prerequisite for the economic development of any country in market economy. It enables to foresee the perspective of the expansion of bank activity and to raise the opportunity of attracting new customers.

The particular mechanisms, as well as the established procedures in managing interest- rate risk in VTB Armenian Bank, CJSC, are presented in the article. They provide effective management of interest- rate risk in the Bank.

ЭФФЕКТИВНОСТЬ УПРАВЛЕНИЯ ПРОЦЕНТНЫМ РИСКОМ НА ПРИМЕРЕ ЗАО «ВТБ - БАНК АРМЕНИЯ»

М. Н. ЕРГНЯН
Доцент, кандидат экономических наук
Замдекана экономического факультета ГГУ
Л. М. КУРШУДЯН
Выпускник отделения «Финансы» магистратуры ГГУ
Г. А. ЕРГНЯН
Студент 2-ого курса ГГУ отделения «Бухгалтерский учёт»

В условиях рыночной экономики стабильность банковской системы является важной предпосылкой для экономического развития любой страны, позволяющая предвидеть перспективы расширения банковской деятельности и повысить уровень привлекательности новых клиентов со стороны банков.

В статье представлены установленные процедуры и особые механизмы управления банковским риском, разработанные в банке «ВТБ банк Армения» ЗАО, обеспечивающие эффективное управление банка.

ՀԱՐԿԱՅԻՆ ԲԵՌԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Գ. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ
ԳՊՀ դասախոս

Շուկայական տնտեսության պայմաններում հարկը պետական եկամուտների ձևավորման հիմնական միջոցն է: Մասնագիտական գրականության մեջ կարելի է հանդիպել հարկային բեռի գնահատման տարբեր մեթոդների: Մինչև 20-րդ դարի 2-րդ կեսը հարկման ներքին հայեցակետերը գործնականում մշակված չէին: Հարկային բեռի հաշվարկումը այդ ժամանակ անհնար էր, քանի որ չկային համապատասխան վիճակագրական տվյալներ, իսկ առանձին հարկատեսակների մասով գործընթացները մշակման փուլում էին:

Տնտեսագիտության հետագա զարգացումը, վերլուծության նոր մեթոդների առաջացումը, ֆինանսական վիճակագրության և հարկերի մասին տեսությունների զարգացումը հետագայում նպաստեցին հարկային բեռի նոր մեթոդների և ցուցանիշների կիրառման հնարավորությունների ընդլայնմանը: Մշակվեցին տարբեր մեթոդներ, որոնք հնարավորություն էին տալիս հաշվարկել հարկային բեռը ոչ միայն ամբողջ տնտեսության, այլ նաև կազմակերպությունների մակարդակով:

Հարկային բեռն ըստ ընդգրկվածության աստիճանի նպատակահարմար է դասակարգել հետևյալ կերպ.

1. **Հարկային բեռը մակրոմակարդակում.**
- պետական,
- տարածքային:
2. **Հարկային բեռը միկրոմակարդակում.**
- կազմակերպություններ,
- ֆիզիկական անձինք:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մակրոմակարդակում հարկային բեռի հաշվարկման ժամանակ խնդիրներ գրեթե չեն ծագում: Հակասական կարծիքներ են ձևավորվել միկրոմակարդակում հարկային բեռի հաշվարկման մեթոդների շուրջ: Այս հոդվածում կանդրադառնանք գործնականում իրենց արդյունավետությունն ապացուցած մեթոդներին:

Կազմակերպությունների հարկային բեռի հաշվարկման ամենատարածված մեթոդը բոլոր հարկերի վճարած գումարի և իրացման հասույթի հարաբերությունն է: Սակայն այս ցուցանիշը ցույց չի տալիս հարկերի ազդեցությունը կազմակերպության ֆինանսական կայունության վրա, քանի որ հաշվի չի առնում յուրաքանչյուր հարկի կառուցվածքը հասույթի մեջ:

Ինչպես վերը նշեցինք, մասնագիտական գրականության մեջ հարկային բեռի մեթոդաբանության շուրջ չկա միասնական կարծիք հատկապես տնտեսվարող

սուբյեկտների մակարդակով: Անդրադառնանք հարկային բեռի հաշվարկման մի քանի մեթոդների:

1. Ամենատարածված մեթոդն այն է, որի դեպքում հարկային բեռը հաշվարկվում է որպես բոլոր վճարած հարկերի և արտաբյուջետային ֆոնդերի գումարի և իրացման հասույթի հարաբերություն:

2. Հարկային բեռի հաշվարկման հաջորդ մեթոդն առաջարկել է ռուս տնտեսագետ Մ. Ն. Կրեյնինան[1]: Նա իր մեթոդի հիմքում դրել է հարկը և նրա վճարման աղբյուրը: Հարկի յուրաքանչյուր խումբ, կախված նրա վճարման աղբյուրից, որի հաշվին կատարվում է վճարումը, ունի հարկային բեռի գնահատման իր չափանիշը: Այս մոտեցումը բացառում է այն կարծիքը, որ ինքնարժեքի մեջ ներառված հարկերը ձեռնտու են կազմակերպությանը, քանի որ նվազեցնում են շահույթը, հետևաբար՝ շահութահարկի գումարը: Դա բացատրվում է նրանով, որ շահույթի նվազման մասով հատուցում է ոչ միայն կազմակերպությունը՝ ստանալով ավելի քիչ ազատ միջոցներ, այլև բյուջեն՝ ստանալով պակաս գումարի հարկ: Ըստ այս մեթոդի՝ հայտարարը, որին հարաբերում է բոլոր վճարված հարկերի գումարը, կազմակերպության շահույթն է: Մ. Կրեյնինան ներկայացնում է այն իրավիճակը, երբ կազմակերպությունը ընդհանրապես չի վճարում հարկեր և համեմատել է այն իրական վիճակի հետ: Հարկային բեռը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$\frac{\text{Â}-C_p-П_ч}{\text{B}-C_p} * 100 \quad (1.2)$$

կամ

$$\frac{\text{Â}-C_p-П_ч}{П_ч} * 100 \quad (1.3)$$

որտեղ B-ն իրացումից ստացված հասույթն է (ինքնարժեք+շահույթ), C_p-ն՝ իրացված արտադրանքի արտադրությանն ուղղված ծախսերը՝ առանց հարկերը հաշվի առնելու, $П_ч$-ն՝ փաստացի շահույթը, որը մնում է կազմակերպությանը հարկերը վճարելուց հետո:

Բանաձևը ցույց է տալիս, թե քանի անգամ է վճարված հարկերի ընդհանուր գումարը տարբերվում կազմակերպության ստացած շահույթից:

Հարկ է նշել, որ այս մեթոդն ունի ինչպես առավելություններ, այնպես էլ թերություններ: Մեթոդի առավելությունն այն է, որ ցույց է տալիս կազմակերպության ֆինանսական կայունության վրա ուղղակի հարկերի ազդեցությունը, իսկ թերությունն այն է, որ ամբողջապես չի գնահատում անուղղակի հարկերի ազդեցությունը: Ակնհայտ է, որ այս մեթոդն ունի խոցելի կողմեր: Նախ, որ անուղղակի հարկերը (ԱԱՀ-ը և ակցիզային հարկը) կազմակերպության շահույթի վրա չեն ազդում և չեն դիտարկվում որպես հարկ, ապա ընդհանուր հայտարարը, որին հարաբերվում են հարկերը, կազմակերպության շահույթն է: Բացի դրանից՝ ԱԱՀ և ակցիզային հարկի հարկային բեռ հաշվարկելիս անհրաժեշտ է այն հարաբերել կրեդիտորական

[1] Տե՛ս Крейнина М. Н., Финансовое состояние предприятия. Методы оценки, М., ИКЦ «ДИС¦,1997, էջ 28:

պարտավորությունների կամ էլ արտարժույթի հաշվեկշռի վրա: Այս մեթոդը արդյունավետ միջոց է՝ պարզելու կազմակերպությունների ֆինանսական գործունեության վրա ուղղակի հարկերի ազդեցությունը, սակայն ակնհայտ է այն, որ չպետք է թերագնահատել անուղղակի հարկերի դերը: Այս հարկերը նույնպես ազդեցություն են ունենում կազմակերպության շահույթի մեծության վրա: Նշված թերություններով հանդերձ՝ այս մեթոդն ունի լայն կիրառություն: Շատ տնտեսագետներ էլ, մասնավորապես Ս. Ն. Ռագիմովը, այս մեթոդի նկատմամբ ունեն իրենց տեսակետը: Ս. Ռագիմովը գտնում է, որ անուղղակի հարկերը կազմակերպության համար դիտվում են չեզոք: Օրինական չէ ապրանքի իրացման ծավալում և վճարումների մեջ հաշվել հարկերը, որոնք թեկուզև բարձրացնում են գները՝ ապրանքի իրացման մասով ստեղծելով բարդություններ, սակայն փաստացի վճարում է վերջնական սպառողը[1]:

Ակնհայտ է, որ անուղղակի հարկերի սահմանը պայմանավորված է պահանջարկի վճարունակությամբ: Եթե գինը՝ ներառած հարկը, շատ բարձր լինի, ապա պահանջարկը կկրճատվի, սպառողների մեծ մասը կանցնի փոխարինող ապրանքների կամ էլ կհրաժարվի տվյալ ապրանքի սպառումից: Ուստի կազմակերպությունը հարկի գումարի չափով կնվազեցնի իր շահույթը՝ պահպանելով ապրանքի արժեքը, որպեսզի չկորցնի սպառողին:

3. Հարկային բեռի հաշվարկման հաջորդ մեթոդն առաջարկել են Ա. Կադուշինը և Ն. Միխայլովան[2]: Հարկային բեռը, ըստ նրանց, պետք է հաշվարկել որպես կազմակերպության կողմից ստեղծված և պետությանը տրվող ավելացված արժեք: Ըստ հեղինակների՝ ավելացված արժեքը կազմակերպության եկամտի աղբյուր է, հետևաբար՝ հարկի վճարման աղբյուր: Ընդ որում ավելացված արժեքը դիտարկվում է օգտակարության տեսանկյունից, այսինքն՝ շուկան պատրաստ է վճարելու կազմակերպությանը ապրանքի այն գինը, որը համապատասխանում է այդ ապրանքի օգտակարությանը: Այսպիսով, կազմակերպությունը, որը ձգտում է մեծացնել իր հասույթը, վերջին հաշվով պետք է ձգտի բարձրացնել ավելացված արժեքի օգտակարության շուկայական գնահատականը, որը եկամտի և հարկերը վճարելու աղբյուրն է: Այս ցուցանիշը թույլ է տալիս համեմատել տնտեսության տարբեր ոլորտների հարկային բեռը:

Նրանց կողմից առաջարկվող մեթոդի էությունը հետևյալն է. Կազմակերպության համախառն հասույթը բաղկացած է հետևյալ տարրերից.

ա)Նյութական ծախսեր – ՆԾ,

բ) Ավելացված արժեք – ԱԱ, որն իր մեջ ներառում է.

1) ամորտիզացիոն հատկացումներ - Ա,
2) աշխատավարձի գծով ծախսեր - ԱԾ,
3) ավելացված արժեքի հարկ - ԱԱՀ,

---

[1] Տե՛ս Рагимов С. Н., Размышления о налоговом бремении // Налоговый вестник, 1996, N 12, էջ 6-8: Вылкова Е.С., Расчет налогового бремени в современных условиях // Налоговый вестник, 2003, N 1, էջ 136-136:

[2] Տե՛ս Кадушин А. Н., Михайлова Н. М., Насколько посильно налоговое бремя в России (попытка количественного анализа) // Финансы, 2005, N 7, էջ 16:

4) շահույթ – Շ:

Հիշյալ ցուցանիշների մասնաբաժինը տարբեր կազմակերպություններում տարբեր է, հետևաբար հեղինակները առաջարկում են համակարգային գործակիցներ (ԽՍ).

Ko = ԱԱ/Հասույթ, որը ցույց է տալիս ավելացված արժեքի տեսակարար կշիռը համախառն հասույթում:

KաՄ =ԱԾ/ԱԱ, որը ցույց է տալիս ավելացված արժեքում աշխատավարձի գծով ծախսերի մասնաբաժինը:

KաՁ=Ա/ԱԱ, որը ցույց է տալիս ամորտիզացիոն հատկացումների մասնաբաժինը ավելացված արժեքում:

Այնուհետև հաշվի է առնվում յուրաքանչյուր հարկատեսակի մասնաբաժինը ավելացված արժեքում՝ հաշվի առնելով գործող դրույքաչափերը (ԱԱՀ, շահութահարկ, եկամտահարկ և այլն):

Հարկ է նշել, որ այս մեթոդը ևս ունի առավելություններ ու թերություններ: Մեթոդի կիրառման սահմանափակություն այն է, որ հեղինակները հաշվի չեն առնում գույքահարկը և նրա տեսակարար կշիռը ավելացված արժեքում: Նրանք հիմնավորում են իրենց տեսակետը նրանով, որ գույքահարկը էական ազդեցություն չի կարող ունենալ կազմակերպության հարկային բեռի վրա: Այս մեթոդի առավելությունն այն է, որ հարկի և վճարումների տեսքով պետությանը տրամադրվող ավելացված արժեքը իրենից ներկայացնում է նյութական, ամորտիզացիոն, աշխատավարձի գծով ծախսերի և շահույթի ամբողջություն: Եվ անշուշտ, դա հնարավորություն է տալիս հաշվարկել հարկային բեռը՝ կիրառելով տարբեր փոփոխականներ: Այդ բանաձևը հաշվի է առնում հարկի դրույքաչափը, նյութական ծախսերը և կազմակերպության շահութաբերության մակարդակը:

4. Հարկ է նշել, որ ռուս տնտեսագետ Ե. Ա. Կիրովան գտնում է, որ իրացումից ստացված հասույթը հարկային բեռի հաշվարկման գործում կիրառելն այնքան էլ նախընտրելի չէ:

Ընդ որում նա տարբերակում է «բացարձակ» և «հարաբերական» հարկային բեռ հասկացությունները:

«Բացարձակ» հարկային բեռ հասկացության դեպքում նա ընդունում է բյուջե և արտաբյուջետային ֆոնդեր՝ հաշվարկված հարկային վճարների և հարկերի մասով ապառքների գումարները, այսինքն՝ տնտեսավարող սուբյեկտների հարկային պարտավորությունների բացարձակ մեծությունը[1]: «Բացարձակ» հարկային բեռի հաշվարկման ժամանակ Ե. Կիրովան հաշվի չի առնում ֆիզիկական անձանց եկամտահարկը և անուղղակի հարկերը:

«Հարաբերական» հարկային բեռը կիրառվում է, քանի որ բացարձակ հարկային բեռը չի արտացոլում հարկային պարտավորությունների չափը:

---

[1] Տե՛ս Кирова Е. А., Методология определения налоговой нагрузки на хозяйствующие субьекты // Финансы, 1998, N 9, էջ 31:

«Հարաբերական» հարկային բեռի մեթոդի ժամանակ հաշվի է առնվում նրա բացարձակ մեծության հարաբերությունը նոր ստեղծված արժեքին կամ այլ կերպ ասած՝ հարկերի և վճարների բաժինը նոր ստեղծված արժեքում: Այսպիսով, այս դեպքում տարբեր կազմակերպությունների հարկային բեռի համեմատության համար առաջարկվում է ոչ թե ավելացված, այլ նոր ստեղծված արժեքը: Նոր ստեղծված արժեքն իրենից ներկայացնում է ավելացված արժեքի և ամորտիզացիայի գումարի տարբերություն:

Այսպիսով, ըստ Ե. Կիրովայի մեթոդի՝ առանձին կազմակերպությունների համար նոր ստեղծված արժեքն հաշվարկվում է հետևյալ կերպ.

$$ВСС = В- М3 - А + ВД- ВР \quad (1.4)$$

կամ

$$ВСС = ОТ + СО + П + НП \quad (1.5)$$

որտեղ ВСС-ն նոր ստեղծված արժեքն է, В-ն՝ ապրանքների, ծառայությունների, աշխատանքի իրացումից ստացված հասույթը, М3–ն՝ նյութական ծախսերը, А-ն՝ ամորտիզացիան, ВД-ն՝ արտահիրացումային եկամուտները, ВР-ն՝ արտահիրացումային ծախսերը, ОТ-ն՝ աշխատավարձի գծով ծախսերը, СО-ն՝ սոցիալական ապահովության ֆոնդերին հատկացումները, НП-ն՝ հարկային վճարումները, П-ն՝ կազմակերպության շահույթը:

Հարաբերական հարկային բեռը հաշվարկվում է հետևյալ բանաձևով.

$$ОНН = \frac{НП+СО}{ВСС} * 100 \quad (1.6)$$

կամ

$$ОНН = \frac{НП+СО}{ОТ+СО+НП+П} * 100 \quad (1.7)$$

Այս մեթոդի գլխավոր առավելությունն այն է, որ հարկային վճարումները հարաբերվում են նոր ստեղծված արժեքին, որը հնարավորություն է տալիս համեմատել կոնկրետ կազմակերպությունների հարկային բեռն անկախ նրա ճյուղային պատկանելությունից: Այսինքն՝ նոր ստեղծված արժեքի մեծությունը թույլ է տալիս համեմատել կազմակերպությունների հարկային բեռն անկախ նրանց ճյուղային պատկանելությունից: Եվ բացի դրանից՝ հարկային բեռի հաշվարկման ժամանակ հաշվի են առնվում այն հարկերը, որոնք անմիջականորեն վճարում է կազմակերպությունը: Այս մեթոդը շատ պարզ է և հարմար, քանի որ թույլ է տալիս հաշվելու առանձին կազմակերպության հարկային բեռը: Սակայն հարկ է նշել, որ մեթոդը, իր պարզությամբ հանդերձ, ունի էական թերություն: Այսպես, ցույց չի տալիս կազմակերպության տնտեսական ակտիվության և ֆինանսական կայունության վրա առանձին հարկատեսակների ազդեցության մակարդակը, քանի որ ցուցանիշը ընդհանուր հարկային վճարումներն են:

5. Ե. Կիրովան և Յու. Ֆոկինը առաջարկում են հարկային բեռի հաշվարկման մեկ այլ մեթոդ[1]: Ընդ որում նրանք առաջարկում են տարբերակել «բացարձակ» և «հարաբերական» հարկային բեռ հասկացությունները: «Բացարձակ» հարկային բեռի դեպքում դիտարկում են կազմակերպության բոլոր հարկերը, որոնք գանձվում են պետության կողմից անվերադարձելիության սկզբունքով: Ինչ վերաբերում է «հարաբերական» հարկային բեռին, ապա այն հաշվարկվում է՝ այս դեպքում «բացարձակ» հարկային բեռը հարաբերելով վարձու աշխատողների և սեփականատերերի աշխատանքի վճարմանը՝ ներառյալ շահաբաժինները[2]: Սակայն այս ցուցանիշը հարկային բեռի մասին լիարժեք տեղեկություն չի տալիս:

6. Հարկային բեռի հաշվարկման հաջորդ մեթոդը Մ. Ի. Լիտվինի կողմից առաջարկվող մեթոդն է[3]: Մ. Լիտվինը մանրամասնորեն բնութագրում է «հարկային բեռ» հասկացությունը, որը ներառում է հետևյալ տարրերը՝ հարկերի և այլ պարտադիր վճարների քանակը, հարկերի կառուցվածքը, հարկերի գանձման մեխանիզմը և կազմակերպությունում հարկային բեռի մեծությունը: Այսպիսով, հարկային բեռը բնութագրելու համար կարևոր է ոչ միայն քանակը, այլ նաև վճարվող հարկերի կառուցվածքը: Ամենադժվարը, ըստ Մ. Լիտվինի, այն հարկային վճարումներն են, որոնք վճարվում են անկախ ստացվող եկամտից, օրինակ՝ գույքահարկը, հողի հարկը: Նա հարկային բեռը առաջարկում է հաշվարկել հետևյալ բանաձևով.

$$T = \frac{ST}{TV} * 100 \quad (1.8)$$

որտեղ T- ն հարկային բեռի ցուցանիշն է՝ արտահայտված տոկոսներով, ST – ն հարկերի գումարն է, TV – ն՝ հարկի վճարման աղբյուրի գումարը:

Անհրաժեշտ է ընդգծել, որ հաշվարկված և բյուջե վճարված հարկերի մեջ մտնում են անխտիր բոլոր տեսակի հարկերը (ԱԱՀ և ակցիզային հարկը) և պարտադիր վճարները: Որպես ապացույց՝ նա բերում է այն փաստարկը, որ բոլոր հարկերը վճարվում են դրամական մուտքերի հաշվին: Հարկային վճարումների ընդհանուր ցուցանիշի դերում (ST) Մ. Լիտվինը առաջարկում է կիրառել ավելացված արժեքը, քանի որ այս ցուցանիշը համեմատելի է երկրի համախառն ներքին արդյունքի հետ, որի հիման վրա որոշվում է ընդհանուր հարկային բեռը:

Նրա կարծիքով՝ կազմակերպության ավելացված արժեքը աշխատավարձի, ամորտիզացիոն հատկացումների, զուտ շահույթի և հարկերի գումարն է:

Անդրադառնանք այս մեթոդի առավելություններին և թերություններին: Նշված մեթոդը թույլ է տալիս ստանալ շատ հետաքրքիր և արժեքավոր տեղեկություններ կազմակերպությունների հարկային բեռի մասին: Ակնհայտ է դառնում, թե որքան են հարկերը խլում ավելացված արժեքից, բաշխված շահույթից, որքան են կազմում

[1] Տե՛ս Киров Е.С., Фокин Е.С., Налоговая нагрузка: проблемы и пути решения // Экономист, 2009, N 5, էջ 89:

[2] Տե՛ս Фокин Ю., Кирова Е., Налоговая нагрузка: проблемы и пути решения // Экономист, 1998, N10, էջ 53:

[3] Տե՛ս Литвин М. И., Налоговая нагрузка и экономические интересы предприятий // Финансы,1998, N 5, էջ 29-31:

աշխատավարձի մեծությունը, ամորտիզացիան, զուտ շահույթը և հարկերը ստեղծված ապրանքի յուրաքանչյուր միավորում: Հիշյալ մեթոդի առանձնահատկությունն այն է, որ հաշվի են առնվում ԱԱՀ-ն և եկամտահարկը:

Հարկ է նշել, որ տնտեսագիտական հետազոտություններում այս մեթոդն ունի առավել լայն կիրառություն, և դրա հիման վրա ստացված հարկային բեռի գնահատումներն ավելի իրատեսական են:

7. Հարկային բեռի հաշվարկման իր յուրահատուկ մեթոդն ունի Տ. Կ. Օստրովենկոն: Նա առաջարկում է կազմակերպության հարկային բեռի հաշվարկման համար անհատական ցուցանիշներ: Դրանց հաշվարկման համար հիմք է ընդունում «հարկային ծախս» հասկացությունը, որը պետական գանձարան մուծված կազմակերպության հարկերի և վճարների ընդհանուր գումարն է: Ընդ որում այս մեթոդն հետաքրքիր է նրանով, որ հարկային ծախսերի մեջ հաշվի են առնվում տույժերն ու տուգանքները, եթե անհրաժեշտություն է առաջանում որոշելու կազմակերպության գործունեության արդյունավետությունը հարկային օրենսդրության պահանջներին համապատասխան, և հաշվի են առնվում միայն զուտ հարկային ծախսերը, եթե անհրաժեշտություն կա պարզելու հարկային համակարգի կոշտությունը և արդյունավետությունը[1]: Հեղինակն առանձնացնում է հարկային բեռի հաշվարկման ընդհանրացված և մասնավոր ցուցանիշներ:

Ընդհանրացված ցուցանիշները ցույց են տալիս բոլոր տեսակի հարկերի և վճարների մակարդակը ֆինանսական ռեսուրսներում:

1.Կազմակերպության եկամուտների հարկային բեռ = $\frac{\text{Հարկային ծախսեր}}{\text{Իրացումից հասույթ}}$ (1.9)

2.Շահույթը մինչև հարկումը հարկային բեռ = $\frac{\text{Հարկային ծախսեր}}{\text{Շահույթ մինչև հարկումը}}$ (1.10)

Մասնավոր ցուցանիշների հաշվարկման ժամանակ Տ. Օստրովենկոն հարկային ծախսերը հարաբերում է նրանց վճարման աղբյուրին:

1. Իրացման հարկային բեռ = $\frac{\text{Հարկային ծախսեր}}{\text{Իրացման ծավալ}}$ (1.11)

2. Ինքնարժեքի հարկային բեռ = $\frac{\text{Հարկային ծախսեր}}{\text{Իրացված արտադրանքի ինքնարժեք}}$ (1.12)

3. Համախառն շահույթի հարկային բեռ = $\frac{\text{Հարկային ծախսեր}}{\text{Համախառն շահույթ}}$ (1.13)

4. Զուտ շահույթի հարկային բեռ = $\frac{\text{Հարկային ծախսեր}}{\text{Զուտ շահույթ}}$ (1.14)

[1] Տե՛ս Островенко Т. К. Налоговая нагрузка на предприятия: обобщающие и частные показатели системы // Аудиторские ведомости, 2001, N 9, էջ 5:

Որպես այս մեթոդի առավելություն՝ կարելի է նշել, որ այն թույլ է տալիս քանի որ հարկային ծախսերը իրացման մասով առաջին հերթին ներառում են անուղղակի հարկերը:

Այսպիսով, ամփոփելով հարկային բեռի գնահատման առավել լայն կիրառություն ունեցող մեթոդները, կարող ենք արձանագրել, որ դրանք բոլորն էլ ունեն խոցելի կողմեր՝ իրենց առավելություններով հանդերձ: «Հարկային բեռ» հասկացությունը օգտագործվում է տնտեսագիտական գրականության մեջ երկու իմաստով՝ տնտեսական կատեգորիա և ցուցանիշ: Որպես տնտեսական կատեգորիա՝ հարկային բեռն արտահայտում է հարկման ազդեցությունը տնտեսության և մասամբ տնտեսավարող սուբյեկտների վրա: Որպես ցուցանիշ՝ հարկային բեռը ցույց է տալիս ՀՆԱ-ում հարկերի տեսակարար կշիռը: Այս ցուցանիշի միջոցով որոշվում է պետության միջամտության սահմանը ՀՆԱ-ի վերաբաշխման գործընթացում: Սակայն հարկային բեռի հաշվարկման համար բավարար չէ կիրառել հարկային մուտքեր ՀՆԱ հարաբերակցությունը, քանի որ այն մակրոտնտեսական ցուցանիշ է:

Ամփոփելով՝ կարող ենք արձանագրել, որ հարկային բեռի ներգործության շրջանակները բավականաչափ ընդգրկուն են ու պայմանավորված են բազմազան գործոններով: Այս տեսանկյունից դիտարկելով ներկայացված գնահատման մեթոդները՝ պետք է փաստել, որ հիմնական նպատակը իրատեսական հարկային բեռը գնահատելն է՝ հաշվի առնելով բազմաթիվ գործոններ և ցուցանիշներ: Այդ ցուցանիշներից **առաջինը համախառն ներքին արդյունքն է**, որը մակրոտնտեսական ցուցանիշ է, **երկրորդը ավելացված արժեքն է**: Պետք է նշել, որ վերջին ժամանակներում դրանք համարվում են ամենատարածված և ընդունելի ցուցանիշները, քանի որ ավելի ճշգրիտ պատկերացում են տալիս հարկային բեռի մասին: Անհրաժեշտ է նկատել, որ ցուցանիշներն իրենց մեթոդաբանության մեջ կիրառում են Ա. Կադուշինը, Ն. Միխայլովան, Ե. Եգորովը, Յու. Պետրովը և Մ. Լիտվինը: **Երրորդը նոր ստեղծված արժեքն է**: Այս ցուցանիշի հարկային բեռի հաշվարկման մեթոդաբանության մեջ կիրառում է Ե. Կիրովան, որն իր տեսակետը հիմնավորում է այն դրույթով, որ հարկի վճարման աղբյուր է նոր ստեղծված արժեքի մի մասը: **Չորրորդը հարկի վճարման աղբյուրն է**: Ըստ Ե. Կիրովայի և Յու. Ֆոկինի՝ հարկային բեռը պետք է հաշվարկել ըստ ապրանքի ինքնարժեքի, տնտեսվարող սուբյեկտի շահույթի, իրացված արտադրանքի գնի: Ստացվում է գործակիցների մի խումբ, որը թույլ է տալիս հաշվարկել ընդհանուր հարկային բեռը՝ հնարավորության սահմանում ճշգրիտ: **Հինգերորդը շահույթն է**: Այս ցուցանիշի կիրառումն այնքան էլ նպատակահարմար չէ, քանի որ արտասահմանյան շատ երկրներում այս ցուցանիշի կիրառմամբ հաշվարկը էապես բարձրացնում է հարկային բեռը: Բացի դրանից՝ լինում են դեպքեր, երբ կազմակերպությունը աշխատում է առանց շահույթի, բայց վճարում է հարկեր, հետևաբար հարկերը զրոյական ցուցանիշի վրա հարաբերելը մաթեմատիկորեն համարվում է անընդունելի:

Բանալի բառեր՝ *հարկային բեռ, ավելացված արժեք, իրացումից հասույթ, կազմակերպությունների հարկային բեռ, հարաբերական հարկային բեռ:*

TAX BURDEN ASSESSMENT METHODS, ANALYSIS ON THEIR ADVANTAGES AND DISADVANTAGES

G. A. KHACHATRYAN
PhD in Economics,
GSU lecturer

Real tax burden's definition is considered to be the basic problem of the state's economic policy. Therefore, it is both necessary and important to assess tax burden not only at macro-level but also at micro-level in the context of the economic development peculiarities.

This article covers the tax burden's assessment methods, their advantages and disadvantages.

МЕТОДЫ ОЦЕНКИ НАЛОГОВОГО БРЕМЕНИ, АНАЛИЗ ИХ ПРЕИМУЩЕСТВ И НЕДОСТАТКОВ

Г. А. ХАЧАТРЯН
Кандидат экономических наук,
преподаватель ГГУ

Определение реального налогового бремени является основным стержнем экономической политики государства. Поэтому необходимо и, одновременно, важно рассчитать налоговое бремя не только на макроуровне, но и на микроуровне, указывая особенности в контексте экономического развития.

В статье рассматриваются методы оценки налогового бремени, их преимущества и недостатки.

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ՄՈԴԵԼՆԵՐԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

Վ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
valeriaraqelyan@ysu.am

Արտադրանքի մրցունակության մակարդակի գնահատումը հանդիսանում է արդյունավետ մրցակցային ռազմավարության մշակման փուլ: Հայտնի է, որ ցանկացած ապրանք իր հատկություններով պետք է բավարարի սպառողների արտադրական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական պահանջմունքները, ուստի անհրաժեշտ է մշակել և կիրառել ապրանքի մրցունակության բարձրացման այնպիսի մոդելներ, որոնք հնարավորություն կտան իրագործել արդյունավետ մրցակցային ռազմավարություն:

Ակնհայտ է, որ պոտենցիալ ապրանքի վրա ուշադրություն դարձնելիս սպառողը դիտարկում է այն իր պահանջմունքների առավել ամբողջական բավարարման տեսակետից: Եթե ապրանքի ոչ բոլոր բնութագրիչներն են համապատասխանում սպառողի պահանջմունքներին, ապա դա նշանակում է, որ արտադրանքը տվյալ սպառողի համար մրցունակ չէ: Ուստի նա նմանատիպ այլ ապրանքների շարքից գտնում է այն ապրանքը, որը լավագույնս կբավարարի իր պահանջմունքները: Եթե շուկայում այդպիսի ապրանքը բացակայում է, ապա սպառողը ստիպված է լինում փոխել իր պահանջմունքները և կրկին որոնել անհրաժեշտ ապրանքը: Նման որոնումը շարունակվում է մինչև սպառողի ցանկությունները և առաջարկվող ապրանքների սպառողական հատկանիշները համընկնեն:

Շուկայում սպառողի վարքի այդպիսի մոդելից հետևում է, որ պահանջմունքն ունի հիերարխիկ կառուցվածք, որտեղ պահանջմունքի որոշ տարրեր մյուսներից ավելի կարևոր են:

Սպառողի ընտրության վրա ազդող առանձին գործոնների կարևորության բացահայտման հետազոտությունների արդյունքները բերված են աղյուսակ 1 – ում:

Աղյուսակ 1

Սպառողի ընտրության վրա ազդող գործոնները

Մրցունակության ցուցանիշ, գործոն	Կշռային գործակից
Որակ	0,21
Գին	0,18
Արտադրանքի յուրահատկություն	0,12
Գեղագիտական դիզայն	0,08
Մատակարարման հուսալիություն	0,06
Վաճառողի հետ կապեր	0,16
Հետվաճառքային սպասարկում	0,06

Հարկ է նշել, որ այս և նմանատիպ հետազոտությունների արդյունքները գործիք են ինչպես առանձին ապրանքների մրցունակության գնահատման, այնպես էլ ապրանքի ընդհանուր մրցունակությունը ձևավորող ցուցանիշների առանձին խմբերի կարևորությունը և կշիռը որոշելու համար:

Ակնհայտ է, որ պահանջմունքի տարրերի հիերարխիային համապատասխան առաջանում է այդ պահանջմունքը բավարարող ապրանքի առանձին բնութագրիչների հիերարխիա:

Ինչպես երևում է աղյուսակ 2 - ի տվյալներից, սպառողի որոշումների կայացման վրա ամենամեծ ազդեցությունն է թողնում արտադրանքի որակը:

1. Համաձայն արտադրանքի որակի ցուցանիշների կառուցվածքի՝ «որակ» հասկացության մեջ ներառնված են նաև այնպիսի ցուցանիշներ, ինչպիսիք են «գեղագիտականը» և «արտադրանքի յուրահատկությունը»: Այսպիսով, ապրանքի ընդհանրացված որակի ազդեցությունը դառնում է գերակշռող այլ գործոնների նկատմամբ:

Արդյունաբերական կազմակերպության գործունեության հաջողության ապահովման գործոնները.

Աղյուսակ 2

Հաջողության գործոնները	Տվյալ գործոնի մասնաբաժինը կազմակերպությունների գործունեության հաջողությունը ապահովող գործոնների համախմբում(%)	
	2014 թ.	2015 թ.
1. Արդյունքի որակ	96	98
2. Պատվիրատուի սպասարկում	94	97
3. Նոր տեխնոլոգիաների ներդրում	90	92
4. Բարձր որակավորում ունեցող նոր կադրերի ներգրավում	88	92
5. Նոր արտադրանքի մշակում	87	91
6. Նոր արտադրանքի շուկա դուրս գալու ժամկետների կրճատում	86	89
7. Կազմակերպության կազմակերպչական կառուցվածքի կատարելագործում	75	84
8. Կազմակերպության մտավոր սեփականության պաշտպանում	60	62
9. Համագործակցությունը մատակարարների հետ	62	70
10. Արտադրանքի դուրս բերումը արտաքին շուկաներ	63	79

Աղյուսակ 1 և 2-ի տվյալների համեմատումը ցույց է տալիս կազմակերպության մրցունակության ձևավորման գործոնների տեսակետների էվոլյուցիան:

Ապրանքի հաջող իրացման հարցում բացառիկ կարևորություն ունի արտադրողի և գնորդի կապը, որը առավելապես հատուկ է արտադրա-տեխնիկական նշանակության արտադրանքների համար: Երկարաժամկետ օգտագործման արտադրանքը, առավել ևս արտադրական նշանակության ապրանքները, վաճառքի կազմակերպման և հաճախորդների հետ կայուն հուսալի ուղիների ձևավորման համար մեծ ջանքեր են պահանջում:

Արտադրատեխնիկական նշանակության արտադրանքների առումով գնորդը հատկապես կարևորում է մատակարարի հուսալիությունը: Դա նշանակում է, որ պահանջվող որակի ապրանքը համապատասխան փաստաթղթերով կմատակարարվի ճիշտ ժամկետներում, գովազդին և մատակարարի ներկայացուցչի խոսքերին անխոս կարելի է վստահել, արտադրության կառավարման կազմակերպատեխնիկական համակարգը և անձնակազմի որակավորումը երաշխավորում են արտադրանքի սպառողական հատկանիշների կայունությունը և այլն:

Հուսալի մատակարարի ապրանքները հաճախ գնում են ավելի բարձր գներով, քան մրցակիցների ապրանքները, հաճախորդները գնի բարձրացման դեպքում (գնաճի կամ այլ պատճառներով) չեն հրաժարվում գնումից:

Գնորդի և արտադրողի կապի արդյունավետությունը շատ դեպքերում որոշվում է նրանով, թե որքանով է առաջարկվող արտադրանքի սպառողական բնութագրիչների մակարդակը բավարարում սպառողի կոնկրետ կարիքները:

Այստեղից հետևում է, որ արտադրանքի մրցունակությունը կարող է որոշվել միայն իր հիմնական տարրերի և որպես հիմք ընդունված ապրանքի նմանատիպ բնութագրիչների օբյեկտիվ համեմատության միջոցով:

Ընդ որում անհրաժեշտ է հաշվի առնել, որ լավագույն նմանակ (էտալոն) կարող են հանդիսանալ սպառողի պահանջմունքները, ում համար մշակվում, արտադրվում և իրացվում է այդ ապրանքը:

Նոր ապրանքի իրացման ապահովման համար խիստ անհրաժեշտ է իրականացնել մարքեթինգային մանրամասն հետազոտություններ՝ ստանալու սպառողների կոնկրետ խմբի պահանջմունքների վերաբերյալ տեղեկատվություն: Այդ պահանջմունքները պետք է բավարարվեն արտադրվող ապրանքների օգնությամբ:

Եթե դիտարկվող ապրանքը հայտնի դասի է, և շուկայում առկա են նմանատիպ ապրանքներ, ապա մրցունակության գնահատման խնդիրը հանգելու է նմանատիպ ապրանքների շարքից չափանմուշային ապրանքի ընտրության խնդրին:

Այսպիսով, ընտրված չափանմուշը հանդես է գալիս նյութականացված պահանջների տեսքով, որոնց հետ համեմատվում է շուկայի այս կամ այն մասին հավակնող նոր ապրանքի ցուցանիշները:

Հարկ է նշել, որ շուկայում, որպես կանոն, գոյություն ունեն նաև տվյալ դասի բազմաթիվ ապրանքներ, որոնցից յուրաքանչյուրը, ունենալով այս կամ այն առա-

վելությունները, համապատասխանում է սպառողների որոշակի խմբի պահանջներին՝ գրավելով շուկայում մոնոպոլ դիրք: Այդ պատճառով մրցունակության վերլուծությունը պետք է տարվի բավականին մեծ խումբ կազմող մի քանի նմուշի հիման վրա, ընդ որում այդ խումբը ավելի համապարփակ է արտացոլում սպառողների պահանջմունքները, քան մեկ, անգամ ավելի կատարյալ նմուշ:

Նմուշների խմբի ընտրությունը մրցունակության վերլուծության առավել պատասխանատու փուլերից է: Որպեսզի համապարփակ արտացոլի սպառողների պահանջմունքները, այդ խումբը պետք է ընտրվի մի շարք ցուցանիշների հիման վրա: Այս պահանջը կապված է բարդ հիմնախնդրի հետ, որը պետք է լուծել նմուշների ընտրության ժամանակ:

Արտադրանքի մրցունակության գնահատումն ըստ նմուշի իմաստ ունի իրականացնել այն դեպքում, երբ համեմատվող ապրանքները բավարարում են միևնույն պահանջմունքը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ բավարարման աստիճանների տարբերությունը կազմում է մրցունակության հիմքը: Այն, որ տվյալ ապրանքը կոչված է բավարարել որակապես և քանակապես որոշված կոնկրետ պահանջմունք, ապացուցվում է որոշ հատկանիշներով, որոնք առանձնացնում են տվյալ ապրանքը մյուսներից: Որպես կանոն, այդպիսի հայտանիշները մեկ կամ մի քանի դասակարգված չափորոշիչներ են: Այսպիսով, երկու ապրանք կարող են համադրվել ըստ մրցունակության, եթե համընկնում են դրանց չափորոշիչները: Սակայն իրականում միայն բացառիկ դեպքերում է հնարավոր գտնել ամբողջությամբ համարժեք ապրանքներ: Այդ պատճառով հաճախակի ընտրում են այնպիսի նմուշներ, որոնք դասակարգված հատկանիշներով համադրելի չեն վերլուծվող արտադրանքի հետ: Այդ կապակցությամբ առաջանում է հետևյալ հարցը, թե ինչպես է ազդում նման անհամադրելիությունը մրցունակության գնահատման ճշգրտության վրա:

Գնահատման մեջ մեծ շեղումների բացառման համար անհրաժեշտ է ապահովել բազային և վերլուծվող նմուշի չափորոշիչների առավել նմանությունը: Շեղումները չպետք է գերազանցեն թույլատրելի սահմանները, որոնք որոշվում են կոնկրետ շուկայի վերլուծությամբ:

Երկրորդ պահանջը, որ պետք է բավարարվի, դրանց ներկայացուցչության հաշվառումն է շուկայում, քանի որ վերլուծվող նմուշը, ըստ էության, մրցակից է, որի հաշվին վաճառողը ձգտում է գրավել շուկայի այս կամ այն մասնաբաժինը: Մասնաբաժնի չափը կախված է ներքին արտադրական և իրացման հնարավորություններից: Այսպիսով, նմուշի ներկայացուցչությունը կախված է շուկայի մասնաբաժնի այն ծավալների հետ, որոնք համապատասխանում են արտադրողի նպատակներին և հնարավորություններին: Այս առումով մրցունակությունը միջոց է, որը հնարավորություն է ընձեռում իրացնել մշակված ռազմավարությունը և գոյություն ունեցող հնարավորությունները:

Արտադրական հնարավորությունների ընդլայնումը, իրացման ձևերի ու մեթոդների կատարելագործումը կարող են անարդյունավետ լինել, եթե արտադրանքի

ցուցանիշների և շուկայի պահանջների միջև գոյություն ունի անհամապատասխանություն: Նշված հանգամանքը անհրաժեշտ է հաշվի առնել արտադրանքի մշակման սկզբնական փուլում, ավելի կոնկրետ՝ սպառողի պահանջմունքը բավարարող նմուշների ընտրության և դրանց նկատմամբ պահանջների ներկայացման փուլում, քանի որ, որպես կանոն, մրցունակ արտադրանքի մշակման ծախսերը մի քանի անգամ ավելի փոքր են դրանց արտադրության ծախսերից: Ավելին, հետազոտությունների ընթացքում կատարված տնտեսումը չի կարող համեմատվել այն կորուստների հետ, որոնք առաջանում են արտադրության կարողության և առաքման ծավալների միջև:

Այս հարցը կարևոր է նաև շուկայում արդեն իրացվող արտադրանքի մրցունակության մակարդակի ընթացիկ վերահսկման համար, քանի որ այն թույլ է տալիս գնահատել մրցակցային իրավիճակի փոփոխությունը, ճիշտ որոշել հին ապրանքի փոխարինման պահը նորով: Եթե նոր արտադրանքը շուկա է ներկայացվել վաղաժամկետ, ապա արդյունավետ իրացվող հին արտադրանքի պահանջարկը կարող է նվազել, ուստի նման փոխարինումը նպատակահարմար չէ: Միաժամանակ իրացվող արտադրանքի պարբերաբար համեմատությունները մրցակիցների հետ հնարավորություն է տալիս հետևություններ անել, թե որքանով են մրցակիցները ազդում կազմակերպության դիրքի վրա, ինչ չափով է հնարավոր կրճատել հին արտադրանքի մրցունակությունը մինչև այն կփոխարինվի նորով:

Երրորդ պահանջը, որը պետք է բավարարվի նմուշի ընտրության ընթացքում, ժամանակի գործոնի հաշվառումն է: Մրցունակությունը լինելով արտադրանքի դինամիկ բնութագրիչ, այն փոփոխվում է այլ (ֆիզիկական) չափորոշիչներից անկախ, քանի որ նրա մեծության վրա ազդում են բազմաթիվ գործոններ, որոնցից հիմնականը գիտատեխնիկական առաջընթացն է:

Մրցունակության մակարդակի ապահովումը դեռ չի երաշխավորում, որ մոտ ապագայում չի հայտնվի մրցակից արտադրանք, որն ունի ավելի բարձր ցուցանիշներ:

Ակնհայտ է, որ եթե շուկայում ապրանքի իրացումը պետք է կրի երկարաժամկետ բնույթ, անհրաժեշտ է, որ բարձր լինի նրա սկզբնական մրցունակությունը, այսինքն՝ այն պետք է լինի ավելի կատարյալ: Իսկ երբ խոսքը վերաբերում է կրկնակի նախագծվող ապրանքին, ապա արտադրության (իրացման) փուլին պետք է ավելացվի նաև մշակման և արտադրության նախապատրաստման փուլերը, որն էլ ավելի է բարդացնում խնդիրը: Այս դեպքում լավագույն նմուշ-տարբերակով կողմնորոշվելը չի կարող հեռանկարում մրցունակության անհրաժեշտ մակարդակ ապահովել: Ուստի երկարաժամկետ նպատակների իրագործման համար անհրաժեշտ է ներառել տեխնիկական կատարելագործման հեռանկարային մակարդակի ապահովման կանխատեսումային ցուցանիշների վերլուծություն:

Դիտարկված պահանջները, մեր կարծիքով, ժամանակակից շուկայում կապահովեն կողմնորոշում դեպի բարձր պահանջարկ ունեցող առավել կատարյալ արտադրանքը: Ընդ որում մարքեթինգային ելակետ կարող է հանդիսանալ այն փաս-

տը, որ շուկայում առկա են սպառողների տարբեր խմբեր, որոնք ունեն տարբեր առաջնահերթություններ: Եվ այդպիսի շուկայում արտադրանքի իրացումը ապահովելու համար պետք է, որ այն բավարարի սպառողների պահանջմունքը:

Ինչպես նշել ենք, արտադրանքի տեխնիկական մակարդակի (որակի) ցուցանիշը՝ որպես նրա տեխնիկական կատարելագործման աստիճան, ձևականացված պատկերացում, կարևոր նշանակություն ունի արտադրանքի մրցունակության կառավարման գործընթացում: Դա կապված է այն հանգամանքի հետ, որ

- տեխնիկական մակարդակի բարձրացումը նորույթի ստեղծման անմիջական նպատակն է՝ ապահովելով պահանջարկի ավելի ամբողջական բավարարում և առևտրային հաջողություն:
- Աշխատանքի տեխնիկական մակարդակը համահարաբերակցվում է սպառողի կողմից ստացված արդյունավետության հետ, այսինքն՝ անուղղակի ձևով արտացոլում է նոր տեխնիկայի տնտեսական արդյունավետությունը:
- Այդ ցուցանիշը կարող է հստակ որոշվել արտադրանքի մշակման ամենավաղ փուլերում և որպես հետևանք՝ հանդիսանում է բարձրորակ և մրցունակ արտադրանքի արտադրության անհրաժեշտ պայման:
- Տեխնիկական մակարդակը ոչ միայն բնութագրում է զարգացման որոշակի փուլում գտնվող կոնկրետ արդյունքի պահանջմունքի բավարարման աստիճանը, այն նաև հանդիսանում է պահանջմունքի բավարարման հեռանկարային ուղղությունների մշակման արդյունավետ միջոց:

Աշխատանքի տեխնիկական մակարդակը, որը բնութագրվում է Pi [i = 1,n] չափորոշիչների բազմությամբ, արտահայտվում է

$K_{TY} = Y(P_i P_{i\delta}, \beta_i)$ բանաձևով,

որտեղ $P_{iδ}$ – ը i – րդ չափորոշիչի արժեքն է, β_i – ը՝ i – րդ չափորոշիչի կարևորությունը (կշիռը):

Արտադրանքի տեխնիկական մակարդակի գնահատումը հիմնվում է դիֆերենցիալ, համալիր և խառը մոտեցումների վրա: Գնահատման դիֆերենցիալ մեթոդը հիմնվում է միատարր ցուցանիշների օգտագործման վրա, որոնք բնութագրում են արտադրանքի տեխնիկական կատարելությունը:

Ընդ որում որոշվում են՝ արդյոք բավարար է ուսումնասիրվող նմուշի մակարդակը, թե ցուցանիշների գծով այն չի բավարարում, որ ցուցանիշներն են առավել շեղվում բազիսային արժեքներից:

Դիֆերենցիալ մեթոդի կիրառման ժամանակ հաշվարկվում են ցուցանիշների հարաբերական արժեքները հետևյալ բանաձևերով՝

$$q_i = \frac{P_i}{P_{i\delta}} \text{ կամ } q_i = \frac{P_{i\delta}}{P_i}$$

որտեղ i = [1,n]: Pi՝ արտադրանքի տեխնիկական կատարելիության i-րդ ցուցանիշն է, $P_{i\delta}$-ն i – րդ ցուցանիշի բազային արժեքն է, n – ը ընտրված ցուցանիշների քանակն է:

Բերված բանաձևերից հետևում է, որ հարաբերական արժեքի մեծացումը նշանակում է արտադրանքի տեխնիկական մակարդակի բարձրացում:

Եթե ցուցանիշների բազիսային արժեքները սահմանվում են նորմատիվա-տեխնիկական փաստաթղթերով և պայմանագրի հստակ պայմաններով, ապա q_i հարաբերական ցուցանիշները պետք է լինեն հավասար կամ մեկից մեծ ($q_i \geq 1$): Հակառակ դեպքում արտադրանքը չի բավարարի սպառողի կոնկրետ պահանջմունքները և չի կարող դիտարկվել որպես մրցունակ ապրանք: Սակայն երբ q_i – ին զգալի գերազանցում է 1 – ը, ապա դա նշանակում է, որ պահանջմունքի բավարարման աստիճանը չափից ավելին է, որի համար սպառողը դժվար թե համաձայնի վճարել: Հետևաբար գնահատվող արտադրանքի հարաբերական ցուցանիշների 1-ից մեծ կամ փոքր արժեքների դեպքում որոշումը, որպես կանոն, կարող է միանշանակ չլինել: Այդ պատճառով գնահատման դիֆերենցիալ մեթոդը բավարար արդյունքներ կտա միայն այն դեպքում, երբ գնահատող արտադրանքի տեխնիկական կատարելիությունը բոլոր ցուցանիշներով մեծ է, փոքր կամ հավասար է բազիսային նմուշին, և երբ արտադրանքի տեխնիկական կատարելիությունը կարելի է նկարագրել ցուցանիշների սահմանափակ քանակով (մեկ, երկու, երեք): Իսկ երբ ցուցանիշների քանակը մեծանում է, այդ դեպքում նպատակահարմար է օգտագործել արտադրանքի տեխնիկական մակարդակի (որակի) գնահատման համալիր մեթոդը: Այստեղ առանձնացվում են՝

- Միջին թվաբանական ցուցանիշ

$$K_{ty} = \sum_{i=1}^{n} q_i \beta_i$$

- Միջին երկրաչափական ցուցանիշ

$$K_{ty} = \prod_{i=1}^{n} (q_i)^{\beta}$$

- Միջին քառակուսային ցուցանիշ

$$K_{ty} = \sqrt{\sum_{i=1}^{n} q_i \beta_i}$$

որտեղ β_i-ն i – րդ ցուցանիշի կշիռն է: Ընդ որում պետք է պահպանվի $\sum_i \beta_i = 1$ պայմանը:

Տեխնիկական մակարդակի (որակի) գնահատումը իրականացվում է նաև հեռավորությունների հիպերբոլիկ մետրիկի մեթոդով հետևյալ հավասարման միջոցով.

$$S_i(R_i E_i) = In\left(\frac{Ai - Bi}{Ri - Bi} : \frac{Ai - Ei}{Ei - Bi}\right),$$

որտեղ Ai-ն, Bi-ն, Ei-ն և Ri-ն i – րդ չափորոշչի քանակական արժեքներն են՝ արտահայտված չափման ընդունված միավորով:

Bi - չափորոշչի սահմանային մեծությունն է, որի հասանելիությունը սահմանափակվում է կամ ֆունկցիոնալ օրենքներով հաստատուններով, կամ տեխնիկայի այդ դասի գիտատեխնիկական սահմանային հնարավորություններով:

Ei – նմանատիպ նշանակության արտադրվող կամ շահագործման օբյեկտի չափորոշիչի միջին արժեքը:

Ai – չափորոշիչի անթույլատրելի արժեքը, որը բնութագրում է ֆիզիկական կամ բարոյապես մաշված տեխնիկան:

Ri – վերլուծվող օբյեկտի չափորոշիչի արժեքն է:

Տնտեսական պրակտիկայում, երբ համեմատվում է վերլուծվող տեխնիկական որոշումը նմանօրինակի հետ, կիրառվում է հեռավորությունների պարզեցված հիպերբոլիկ մետրիկը:

$$S_i(R_iZ_i) = In(\frac{Ai - Ri}{Ri - Bi} : \frac{Ai - Zi}{Zi - Bi}) \ ,$$

որտեղ Zi – նմանօրինակի թվային արժեքն է:

Գնահատման այս ձևը հնարավորություն է տալիս միաժամանակ համեմատել վերլուծվող օբյեկտի չափորոշիչները օբյեկտիվորեն ընտրված բազիսային մեծությունների հետ:

Արդյունքը կլինի դրական, եթե Ri-ն ավելի լավն է քան Ei-ն, և բացասական, եթե Ri – ն ավելի վատն է Ei – ից: Հիպերբոլիկ մետրիկը ցույց է տալիս Ei և Bi միջև ու Zi և Bi միջև դիրքը գծի վրա ըստ բանաձևի: Այսինքն՝ Bi, Zi, Ei արտադրանքի տեխնիկական մակարդակի գնահատման ելակետերն են:

Առանձին դեպքերում կարելի է օգտագործել նաև պարզեցված կախվածությունը

$$S_i(R_iE_i) = In(\frac{Ei - Bi}{Ri - Bi}) :$$

Տեխնիկական մակարդակի համալիր գնահատումը չափորոշիչների ամբողջության համար իրականացնում է հետևյալ բանաձևով.

$$K_{Tj} = \sum_{j=1}^{n} \beta_j S_i(RiEi) \ ,$$

որտեղ i – ն դիտարկվող չափորոշիչի համարն է, իսկ β_j - ին՝ պարամետրի արժեքայնության գործակիցը:

Ինչ վերաբերում է տեխնիկական մակարդակի գնահատման խառը մեթոդին, ապա այս դեպքում տեխնիկական մակարդակի (q_i) բոլոր ցուցանիշները խմբավորվում են ըստ նմանատիպ հայտանիշներով առանձին խմբերում: Յուրաքանչյուր խմբում մեթոդներից մեկի միջոցով որոշվում է համալիր K_j ցուցանիշը և սահմանվում են β_j կշռային գործակիցները: Արտադրանքի տեխնիկական մակարդակը այս մեթոդով որոշվում է հետևյալ կերպ.

$$K_{Ty} = \sum_{j=1}^{n} K_j \beta_j :$$

Գործնականում β_j ցուցանիշի կշռի գնահատականները որոշվում են փորձագիտական մեթոդի միջոցով: Դժվարությունների դեպքում օգտագործվում է արդյունավետ նորմավորվող տիպի ֆունկցիան՝

$\beta_j = \alpha_o \gamma^{i-1} (\gamma \prec 1)$, որը օժտված է հետևյալ հատկանիշներով.

1. երբ i $\to \infty$, $\beta_j \to 0$

2. որը ամենակարևորն է $\sum \beta_ш = 1$:

Նորմավորվող ֆունկցիայի կիրառման ժամանակ բավական է դասավորել փորձագետների կողմից ընտրված արտադրանքի տեխնիկական մակարդակը բնութագրող ցուցանիշներն ըստ կարևորության աստիճանի և ապա հաշվարկել կշիռի գործակիցը, որը համապատասխանում է որոշակի ցուցանիշի տեղերին:

Որոշենք նորմավորվող ֆունկցիայի արտահայտությունը (գտնենք α_0 գործակցի մեծությունը): Դրա համար անհրաժեշտ է հաշվարկել հետևյալ գումարը.

$$S_n = \sum_{i=1}^{n} \beta_i = a^o + a_o \gamma + \ldots\ldots\ldots + a^o \gamma^{n-1} :$$

Երկրաչափական պրոգրեսիայի համար Sn-ը ունի հետևյալ տեսքը.

$$S_n = \frac{a_j \left(\gamma^n - 1\right)}{\gamma - 1} :$$

Եթե ընդունենք, որ $\gamma = \frac{1}{2}$, ապա

$$S_n = 2a_o (1 - 1/2^n) :$$

Հավասարեցնելով S_n=1՝ կստանանք

$$a_o = \frac{1}{2(1 - 1/2^n)} :$$

Տեղադրելով այս արտահայտությունը փնտրվող ֆունկցիայի մեջ և հաշվի առնելով նախնական i=1, $\beta_n = 1$ պայմանը՝ կստանանք նորմավորվող ֆունկցիայի արտահայտությունը:

$$\beta_i = \frac{1}{2(1 - 1/2^n)} \cdot 1/2^{i-1} ,$$

որտեղ n – ը որակի ցուցանիշների թիվն է:

Չափորոշիչների կշիռը որոշելու համար նորմավորվող ֆունկցիայի կիրառման բարդությունը γ գործակցի արժեքի ընտրության մեջ է, քանի որ (0 <γ<1) նրա տարբեր արժեքների համար β_i արժեքները զգալի տարբեր են: γ տարբեր գործակիցներին համապատասխանում են գնահատականի կշռի գործակիցների

տարբեր հարաբերակցություններ, որը կարող է զգալի ազդեցություն թողնել համալիր գնահատման հավաստիության վրա:

Ինչպես նշվեց, նորմավորվող ֆունկցիայի կիրառման տիրույթը սահմանափակ է: Մեթոդի ճշգրտությունը հնարավոր է մեծացնել փորձագիտական գնահատականի ճշգրիտ տվյալների առկայության դեպքում, որոնք ստացվում են նմանատիպ հետազոտությունների արդյունքում:

Այսպիսով, քննարկված մոդելների կիրառումը, մեր կարծիքով, հնարավորություն կընձեռի իրականացնել արտադրանքի մրցունակության տեխնիկական մակարդակի գնահատում և մշակել արդյունավետ մրցակցային ռազմավարություն:

Բանալի բառեր՝ *շուկա, մրցակցություն, մրցունակություն, չափորոշիչներ, մեթոդ, նորմավորվող ֆունկցիա, գործակիցներ, ապրանք, արտադրանք, սպառող, որակ, տեխնիկական մակարդակ, ռազմավարություն:*

Օգտագործված գրականություն

1. Առաքելյան Վ. Հ., Ղուլոյան Հ. Մ., Գրիգորյան Գ. Ռ., Մարտիրոսյան Ռ. Մ., Որակի կառավարումը բիզնեսում (փորձ և հիմնախնդիրներ), Եր., Նահապետ, 2014:

2. Гиссин В. И., Управление качеством, М. , Ростом, Март, 2003.

3. Быков В. А., Конкурентоспособность товара: научные основы, методы оценки, управление, М., Научная книга, 2003.

FORMATION OF THE MODELS OF TECHNICAL LEVEL OF PRODUCT COMPETITIVENESS

V. H. ARAKELYAN
PhD in of Economic Sciences, Associate Professor,
GSU lecturer

The article discusses the need to develop models for evaluation of technical level of product competitiveness in modern conditions.

It reveals the essence and features of differential, complex and mixed models of evaluation of competitiveness, as well as the requirements for improving the efficiency of their use. It discusses and proposes differential, complex and integral models of technical level's evaluation. According to the author, the use of proposed models makes possible the proper evaluation of product competitiveness.

ФОРМИРОВАНИЕ МОДЕЛЕЙ ТЕХНИЧЕСКОГО УРОВНЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ПРОДУКТА

В. О. АРАКЕЛЯН
Кандидат экономических наук, доцент
Преподаватель ГГУ

В статье рассматривается необходимость разработки моделей для оценки технического уровня конкурентоспособности продукта в современных условиях.

Выявляется суть и особенности дифференциальных, комплексных и смешанных моделей оценки конкурентоспособности, а также требования для повышения эффективности их использования. Обсуждаются и предлагаются дифференциальные, комплексные и интегральные модели оценки технического уровня. По мнению автора, применение предложенных моделей дает возможность правильно оценить конкурентоспособность продукта.

ՆՈՐ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԵՎ ԱՌԵՎՏՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՈՐՈՇ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Վ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
valeriaraqelyan@ysu.am
Ա. Ֆ. ՄԿՐՏՉՅԱՆ
ԵՊՀ ասիստենտ
mkrtchyananna@ysu.am

Նոր ապրանքի մշակման փուլերի առանձնահատկությունների քննարկումը իրականացնելու նպատակով անհրաժեշտ է սահմանել «նոր ապրանք» հասկացությունը: Նոր ապրանք ասելով՝ հասկանում ենք պոտենցիալ սպառողների կողմից որպես նոր ընկալվող ապրանքները, ծառայությունները և գաղափարները: Ուստի կարելի է առանձնացնել նոր ապրանքի մի քանի մակարդակ՝ սկսած ամբողջությամբ նոր ապրանքից մինչև նոր ապրանքանիշը կամ փաթեթավորումը: Ստորև բերվող աղյուսակում ցույց են տրված նոր ապրանքի մակարդակները.

Աղյուսակ 1.

Նոր ապրանքի մակարդակները


Նոր ապրանք	**Ռիսկ և կառավարչական հիմնախնդիրներ**
• Ամբողջությամբ նոր ապրանք	**Ռիսկի բարձր աստիճան**
• Բարելավված հատկանիշներով ապրանք	
• Ապրանքի նոր օգտագործում	
• Լրացուցիչ ֆունկցիաներով ապրանք	
• Ավելի քիչ ծախքերով ապրանք	
• Նոր դիզայնով ապրանք	
• Նոր ապրանքանիշ կամ փաթեթավորում	**Ռիսկի ցածր աստիճան**

Աղյուսակից երևում է, որ ամբողջությամբ նոր ապրանքի մշակումը առաջացնում է կառավարչական հիմնախնդիրներ և բարձր ռիսկ: Առավել կարևոր է մրցակցային շուկաների համար նոր ապրանքների մշակումը: Ակնհայտ է, որ այդ շուկաներում մրցակցային առավելության հասնելը բավականին բարդ է. Ապրանքը պետք է ոչ միայն նոր լինի, այլ նաև այն պետք է ունենա նոր տեսք, ցանկալի լինի և նման չլինի շուկայում առկա այլ ապրանքներին:

Ապրանքի մրցունակության ձևավորման ժամանակակից մոտեցումը ենթադրում է ապրանքի կյանքի ցիկլի բոլոր փուլերի համալիր կառավարում՝ սկսած կազմակերպության նոր ապրանքի գաղափարի առաջացման փուլից, ներառյալ

գիտահետազոտությունը և նախագծային աշխատանքները, արտադրության նախապատրաստումը մինչև առևտրային հաջողություն ունեցող ապրանքի կայուն սպառման փուլը (տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1. Նոր ապրանքի մշակման գործընթացի մոդել:



Ընդհանուր առմամբ նոր ապրանքի մշակման գործընթացը սկսվում է նոր ապրանքի մասին կազմակերպության զարգացման ռազմավարությանը համապատասխանող գաղափարների որոնմամբ:

Նոր ապրանքների մասին բոլոր գաղափարների ամբողջությունը, կախված ծագման աղբյուրից, կարելի է բաժանել 2 խմբի.

- առաջին խմբին են պատկանում այն գաղափարները, որոնք ձևավորվել են՝ ելնելով շուկայի պահանջարկից (հաճախորդների պահանջմունքների հետազոտության արդյունքում),
- ԳՀԿԿՄ (НИОКР) ոլորտում ձևավորված գաղափարներ՝ հիմնված հետազոտական հիմնարար (ֆունդամենտալ) և կիրառական լաբորատորիաների գործունեության արդյունքների վրա:

Նոր ապրանքների վերաբերյալ գաղափարների որոնումը և հավաքագրումը կարող է կատարվել տարբեր մեթոդներով, որոնք ի վիճակի են կանխատեսել շուկայի պահանջմունքների զարգացման միտումները: Դրանց շարքին կարելի է դասել հետևյալ մեթոդները.

- մեթոդներ, որոնք ուղղակի կամ անուղղակի հասցեագրված են սպառողներին՝ նպատակ ունենալով բացահայտել ապրանքների միջոցով անբավարար չափով լուծվող հիմնախնդիրները (շուկայի հետազոտության մեթոդներ),
- ֆունկցիոնալ հետազոտման (վերլուծություն) մեթոդներ՝ հետազոտություններ ապրանքի հնարավոր բարելավումների իրականացման նպատակով,
- ներքին և արտաքին աղբյուրներից առաջացող գաղափարների որոնման և ձևավորման ինտուիտիվ և էմպիրիկ մեթոդներ:

Այս փուլում կիրառելի են համարվում ինչպես ալգորիթմացված, այնպես էլ ստեղծագործական մեթոդներ: Բավականին արդյունավետ են տարբեր տեսակի հարցումները, հարցազրույցները, անկետավորումը (հետազոտության դաշտային մեթոդներ), երկրորդային տեղեկատվության վերլուծությունը (գրասենյակային հետազոտություններ), որոնք իրականացվում են սպառողների պահանջմունքների բավարարման եղանակների նկատմամբ շուկայի արձագանքի ստուգման նպատակով:

Արդյունաբերական նշանակության ապրանքների շուկաներում նոր ապրանքների գաղափարները առաջանում են հաճախորդների մոտ այն ժամանակ, երբ նրանք գիտակցում են հիմնախնդրի գոյությունը: Հարկ է նշել, որ արդյունաբերական ճյուղերում յուրաքանչյուր ճյուղի առաջատարների հետ սերտ կապը շատ օգտակար կարող է լինել նոր ապրանքի գաղափարը մշակելիս (տե՛ս աղ. 2):

Աղյուսակ 2

Նոր ապրանքի գաղափարների որոնում

Արդյունաբերական հաճախորդի պահանջմունքները	*Արտադրողի հնարավորությունները*	
	Սահմանափակ	*Լայն*
Գիտակցվող պահանջմունքներ: Լատենտ պահանջմունքներ:	Գերակշռում է հաճախորդի նախաձեռնությունը: Հաճախորդը ոչ մի նախաձեռնություն չի ցուցաբերում:	Համատեղ նախաձեռնություն: Գերակշռում է արտադրողի նախաձեռնությունը:

Ինչ վերաբերում է սպառողական ապրանքների շուկաներում նոր ապրանքների գաղափարների որոնման նախաձեռնությանը, ապա այն սովորաբար առաջանում է արտադրողի կողմից:

Գործընթացի արդյունավետության բարձրացման համար հնարավոր է տարբեր մեթոդների, մասնավորապես *ֆունկցիոնալ վերլուծության* կիրառումը: Այն իր մեջ է ներառում այնպիսի մեթոդներ, որոնք դիտարկում են պահանջմունքը՝ որպես գլխավոր, օժանդակ և լրացուցիչ (եթե այդպիսիք առկա են) ֆունկցիաների համախումբ: Ֆունկցիոնալ վերլուծության մեթոդները հիմնվում են ապրանքի օգտագործման կամ նրա բնութագրիչների համակարգային վերլուծության վրա: Հիմնախնդրի վերլուծությունը սկսվում է սպառողների վարքի ուսումնասիրությունից: Ապրանքի օգտագործման հետ կապված յուրաքանչյուր բացահայտված հիմնախնդիր կարող է ապրանքի կատարելագործման նոր գաղափար առաջացնել: Այդպիսի մոտեցումը հաճախ կիրառվում է սպառողների կազմակերպված խմբերի հետ, այսինքն՝ արդյունաբերական շուկաների վերլուծության ժամանակ:

Արտադրական պրակտիկայում կիրառվում է նաև բնութագրիչների *գույքագրման մեթոդը:* Այն ենթադրում է հիմնական բնութագրիչների ցանկի կազմում և դրանց համադրում՝ ապրանքի կատարելագործման նպատակով: Տվյալ մեթոդի շրջանակներում հնարավոր է լինում մշակել նոր գաղափարների առաջացմանը նպաստող հարցերի համախումբ, այն է՝ կարելի է արդյո՞ք օգտագործել տվյալ ապրանքը այլ նպատակով, հարմարացնել նրան, ինչպիսի նոր գործառույթներ կարելի է ավելացնել, և որոնք կարելի է վերացնել, որոնք՝ համախմբել, նվազեցնել, մեծացնել:

Ինչ վերաբերում է *ձևաբանական վերլուծությանը,* ապա այս դեպքում կատարվում է հիմնական պահանջմունքների բացահայտում, նրանց միջև գոյություն ունեցող կապերի վերլուծություն՝ նոր հեռանկարային համադրությունների բացահայտման նպատակով: Զույգ առ զույգ համադրությունները գնահատվում են նոր ապրանքի պոտենցիալ արժեքի տեսակետից: Ձևաբանական վերլուծության ժա-

մանակ անհրաժեշտ է աբստրահվել գոյություն ունեցող օբյեկտներից և կողմնորոշվել կոնկրետ պահանջմունքի բավարարման որոշ այլընտրանքային կառուցվածքների և եղանակների կառուցումով:

Նոր ապրանքների մշակման փուլերի գնահատման ֆունկցիոնալ վերլուծության մեթոդները նպատակահարմար է լրացնել *ծախսերի գնահատմամբ (ծախսերի տնտեսում)*, որը նոր ապրանքին լրացուցիչ ֆունկցիաներ վերագրելու կամ, ընդհակառակը, ավելորդ ֆունկցիաների բացառման արդյունք է հանդիսանում, ինչպես, օրինակ, ֆունկցիոնալ-արժեքային վերլուծությունը (ՓՇԱ):

Ֆունկցիոնալ-արժեքային վերլուծությունը օբյեկտի համընդհանուր տեխնիկատնտեսական հետազոտման մեթոդ է, որի նպատակն է զարգացնել նրա օգտակար ֆունկցիաները սպառողի համար դրանց կարևորության և դրանց իրականացման վրա կատարած ծախսերի օպտիմալ համադրության միջոցով: Ֆունկցիոնալ-արժեքային վերլուծությունը առավել արդյունավետ է ապրանքի՝ գոյություն ունեցող մոդելների կատարելագործման ուղղությունների մշակման ժամանակ: Ֆունկցիոնալ-արժեքային վերլուծության մեթոդոլոգիան հիմնվում է տվյալ պահանջմունքի բավարարման ֆունկցիաների հետազոտման, ծախսերի գնահատման, օբյեկտի ֆունկցիոնալ, արժեքային և ֆունկցիոնալ-արժեքային մոդելների կառուցման վրա: Այս վերլուծության ընթացքում ուշադրության կենտրոնում է ապրանքի սպառողական հատկությունների և դրանց ապահովմանն ուղղված ծախսերի արդարացվածության վերլուծությունը: Ֆունկցիոնալ-արժեքային վերլուծության ժամանակ առանձնացվում են գլխավոր, երկրորդային կամ ավելորդ ֆունկցիաները, ընդ որում ծախսերի բաշխվածությունը դրանց միջև պետք է կատարվի դրանց կարևորության ֆունկցիաներին համապատասխան: Վերլուծության ընթացքում կարող է պարզվել, որ ապրանքի ոչ բոլոր ֆունկցիաներն են կարևոր (արժեքային) սպառողների համար: Ավելորդ ֆունկցիաների վերացումը թույլ է տալիս կրճատել ապրանքի արտադրության ծախսերը՝ պահպանելով կամ բարձրացնելով որակի մակարդակը:

Ապրանքի սպառողական հատկանիշների, տեխնիկական բնութագրիչների, դրանց իրականացման ծախսերի բազմակողմանի ուսումնասիրության նպատակով նպատակահարմար է ֆունկցիոնալ-արժեքային վերլուծություն իրականացնող խմբում ներառել տարբեր մասնագետների՝ մարքեթոլոգների, կոնստրուկտորների, դիզայներների, տեխնոլոգների, արտադրության մասնագետների, տնտեսագետների: Դա թույլ կտա համընդհանուր ձևով գնահատել ապրանքի ֆունկցիաները և ծախսերը:

Ֆունկցիոնալ-արժեքային վերլուծության նպատակն է համապատասխան սահմանափակումների պարագայում առավելագույնի հասցնել նոր ապրանքի սպառողական արժեքը ծախսերի միավորի հաշվով, այսինքն՝

$$\frac{ՍԱ(Ո)}{Ծ} \rightarrow max \ (1)$$

ՍԱ (Ո) - սպառողական արժեքն է (որակը), որն ապրանքի սպառողական հատկանիշների համախումբն է,

Ծ - անհրաժեշտ սպառողական հատկանիշների ապահովման ծախսերն են:

Ապրանքի ամբողջ կյանքի ցիկլի համընդհանուր ծախսերի կանխատեսումից հետո հետագա նախագծման համար ընտրվում է առավել արդյունավետ տարբերակը, որն ապահովում է առավել օգտակար արդյունք՝ համընհանուր ծախսերի միավորի հաշվով:

Տնտեսական պրակտիկայում վերջին տարիներին լայն տարածում են ստացել *գաղափարների որոնման սրտեղծագործական մեթոդները,* որոնց կիրառումը հիմնված է երևակայության, ինտուիցիայի և տրամաբանության վրա: Ստեղծագործական մոտեցումը կարելի է մեկնաբանել որպես ինտելեկտուալ գործունեություն, որն ուղղված է նոր կառուցվածքի ստեղծման նպատակով տեղեկատվության անկանխատեսելի եղանակով մշակմանը: Հետազոտությունները ցույց են տալիս, որ գիտահետազոտական ոլորտում ստեղծագործական մոտեցումը հիմնականում հատուկ է «ինտուիտիվ-տրամաբանող էքստրավերտներին», որոնք աչքի են ընկնում հզոր ինտուիցիայով և հիմնախնդրի բազմակողմանի դիտարկման ունակությամբ:

Տվյալ մեթոդներով գաղափարների որոնումը իրականացվում է ինչպես առանձին անձի (գաղափարներ հավաքագրողի) գործունեության, այնպես էլ ամբողջ ստեղծագործական խմբի գործունեության միջոցով:

Ստեղծագործական խմբերի կողմից առավել կիրառվող մեթոդների շարքին է դասվում «ուղեղային գրոհը» (мозговой атаки), որը հիմնված է սիներգիայի էֆեկտի հիպոթեզի վրա, այն է՝ մարդկանց խումբն ավելի է հակված ստեղծագործական աշխատանքի, քան նրանցից յուրաքանչյուրն առանձին: Իրականում այդպիսի մոտեցումը հաճախ արդյունավետ է համարվում. հաճախ այնպես է պատահում, որ մեկ ժամ տևողություն ունեցող սեանսի ժամանակ խմբին հաջողվում է առաջարկել մի քանի տասնյակ նոր գաղափար: Սովորաբար գաղափարների ընտրության հիմնական նպատակը արագ և նվազագույն ծախսերով այն ծախսերն առանձնացնելն է, որոնք արժանի են հետագա դիտարկման: Հաճախ էմպիրիկ և տարերայնորեն ձևավորված գաղափարների պորտֆելը անհրաժեշտ է «մաքրել», ազատել այնպիսի գաղափարներից, որոնք անհամատեղելի են ձեռնարկության ռեսուրսների և նպատակների հետ կամ տեխնոլոգիապես հնարավոր չէ իրականացնել, կամ տնտեսապես շահավետ չեն, այլ խոսքով ասած՝ անհրաժեշտ է իրականացնել ընտրություն նախապես որոշված չափանիշներով՝ նախնական որակական և քանակական կամ դրանց համադրության գնահատականների հիման վրա:

Որակական գնահատականը թույլ է տալիս առանձնացնել այնպիսի գաղափարներ, որոնք ընդունելի են ձեռնարկության կողմից՝ ելնելով շուկայական, տեխնոլոգիական և կոմերցիոն հնարավորություններից:

Քանակական գնահատականը ենթադրում է նորարարության հաջողության հիմնական գործոնների բազային գնահատում, այն է՝

- յուրաքանչյուր ֆունկցիայի համար (մարքեթինգ, ֆինանսներ, արտադրություն, ԳՀԿԿՄ) կազմվում է հաջողության հիմնական գործոնների նոր ցուցակ,

- յուրաքանչյուր գործոնին կամ գործոնների խմբին, իր հարաբերական կարևորությանը համապատասխան, տրվում է կշիռ,
- փորձագետները նոր ապրանքի յուրաքանչյուր գաղափարի յուրաքանչյուր գործոնի համար սահմանում են բալեր (գնահատականներ):

Նոր ապրանքի մշակման գործընթացում անցումը մեկ փուլից մյուսին իրականացվում է նախնական գնահատական ստացած գաղափարներից դեպի նոր ապրանքի ձևավորման գաղափարը (կոնցեպտը) ընթացքով:

Կոնցեպտ ասելով՝ հասկանում ենք ստեղծվող ապրանքի և դրա շուկայական առավելությունների բազիսային պատկերացումների համակարգ: Ապրանքի կոնցեպտը ելնում է նրանից, որ նոր ապրանքը պետք է բավարարի սպառողների պահանջմունքները, որոնք կձևավորվեն ապրանքի շուկա դուրս գալու պահին: Այս դեպքում գործում է 2 մոտեցում՝ կանխատեսել և ձևավորել նոր պահանջմունքներ, կրճատել գաղափարի առաջադրման և նոր ապրանքի շուկա դուրս գալու միջև ժամանակահատվածը: Ընդ որում կոնցեպտի մշակման ժամանակ անհրաժեշտ է մեծ ուշադրություն դարձնել պահանջարկի կանխատեսմանը՝ շեշտը դնելով ոչ միայն նոր տեխնոլոգիաների կիրառման և տնտեսական բնութագրիչների վրա, այլ առաջնահերթությունը տալով շուկայական նորույթի ապահովմանը: Ապրանքները պետք է բավարարեն բացարձակապես նոր սպառողական պահանջմունք, ընդլայնեն ապրանքը գնել ցանկացողների շրջանակները:

Նոր ապրանքի գաղափարի ընդունումից հետո անհրաժեշտություն է առաջանում ուսումնասիրել տեխնիկական և նախագծային հաջողությունը, փորձարարական աշխատանքների, նոր արտադրության կազմակերպման վրա կատարվող ծախսերը, սահմանել աշխատանքների ավարտման ժամկետները, բացահայտել տարբեր բնույթի հնարավոր բարդությունները, իրականացնել շուկայի կանխատեսում, բացահայտել հնարավոր մրցակցության բնույթը, շուկայական սեգմենտները, կանխատեսվող գինը և դրա կախվածությունը մրցակիցների կողմից արտադրվող ապրանքների ծավալներից:

Կոնցեպցիայի մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում ապրանքի դիրքավորումը, այսինքն՝ շուկայում մրցակից ապրանքների շարքում նոր ապրանքի յուրահատկությունների որոշման համակարգը: Դիրքավորումը ենթադրում է նոր ապրանքի այնպիսի բնութագրիչների առանձնացում, որոնք հետագայում պոտենցիալ սպառողներին հնարավորություն կտան առանձնացնել այդ ապրանքները մրցակից-ապրանքների շարքից և, որն ամենակարևորն է, գնման ժամանակ նախապատվությունը տալ տվյալ ապրանքին:

Մարքեթինգային ռազմավարության իրականացումը ենթադրում է, որ ուշադրությունը նոր ապրանքի մշակման և արտադրության զուտ տեխնիկական (արտադրական) հնարավորություններից տեղափոխվում է դեպի շուկայական չափանիշները, այն է՝

- ու՞մ համար է նախատեսված ապրանքը,
- ինչպիսի՞ պահանջներ են ներկայացնում սպառողները ապրանքին,

- ինչպիսի՞ն է շուկայի տվյալ մասնաբաժնի (սեգմենտի) տարողությունը,
- ինչպիսի՞ն են վաճառքի հնարավոր ծավալները և այլն:

Ելնելով այդ չափանիշներից՝ տվյալ սեգմենտի սպառման ցանցի չափսերին, տնտեսական չափանիշներին համապատասխան պետք է ձևակերպվեն նոր ապրանքի սպառողական հատկանիշների մակարդակի, որոշ արտադրական հնարավորությունների նախապատրաստման պահանջները:

Նոր ապրանքի նախագծման համար տեխնիկական առաջադրանքի մշակման մարքեթինգային վերլուծության հիմք պետք է հանդիսանան շուկայի սեգմենտի, այսինքն՝ որոշակի ընդանուր (յուրահատուկ) հատկանիշներով օժտված շուկայի առանձնացված մասի հետազոտությունները: Մարքեթինգային ռազմավարության մշակման ժամանակ կազմակերպությունները ուսումնասիրում են նպատակային շուկայի չափը, կառուցվածքը և բնույթը, իրականացնում են դիրքավորում: Հաջորդ քայլով գնահատվում են վաճառքի ծավալները, շուկայի մասը, շահույթը, ընտրվում են իրացման ուղիները: Անհրաժեշտ է նշել, որ կանխատեսվող արդյունքները շատ դեպքերում կրում են կողմնորոշող բնույթ: Սակայն, այդուհանդերձ, դրանց կիրառումը անհրաժեշտ է:

Այնուհետև իրականացվում է *սպառողների (պահանջմունքների) հետազոտություն*: Ապրանքի գաղափարի մշակման ժամանակ շեշտադրումը կատարվում է նրա այն բնութագրիչների վրա, որոնք նշանակալի են սպառման պահանջմունքների բավարարման ժամանակ, այսինքն՝ այն օգուտների և այն արդյունքի վրա, որոնք կստանա սպառողը ստեղծվող ապրանքի օգտագործման ժամանակ: Պոտենցիալ սպառողների պահանջմունքները կարելի է դիտարկել տարբեր կողմերից՝ արտադրական, տնտեսական, սոցիալական, մշակութային և այլն: Այսպիսով, մարդկային պահանջմունքները բազմազան են և բազմաթիվ, սակայն դրանք նաև պայմանավորված են հասարակության տնտեսական զարգացածությամբ:

Սպառողների պահանջմունքների ձևավորման վրա իրենց ազդեցությունն են թողնում բազմազան գործոններ՝ սոցիալ-տնտեսական պայմաններ, արտադրության զարգացման մակարդակը, պատմականորեն ձևավորված սովորությունները, կյանքի, կենցաղի և աշխատանքի պայմանները, ազգային յուրահատկությունները, աշխարհագրական և կլիմայական պայմանները, ժողովրդագրական գործոնները և այլն: Պահանջմունքների վերլուծության շրջանակներում որոշվում է տվյալ ձեռնարկության ապրանքների շուկայում սպառողական նախասիրությունների կառուցվածքը, այսինքն՝ մարդկանց ճաշակը և սովորությունները, նրանց արձագանքը այս կամ այն ապրանքների և ծառայությունների նկատմամբ:

Պետք է հստակ ճանաչել այն պոտենցիալ սպառողներին, որոնք կարող են գնել տվյալ ձեռնարկության ապրանքները, ինչ էին նրանք նախկինում գնում, ինչ են գնում այժմ, ինչպիսին է նրանց կողմից գնվող այս կամ այն ապրանքի ծավալը (քանակը), ինչպես են նրանք դրանք տնօրինում, ինչպիսի պայմաններում են օգտագործում (շահագործում) ապրանքները՝ հետագայում ձևավորելով սպառող-

ների տվյալների բազա, որը հնարավորություն կտա իրականացնել հաճախորդների հետ փոխհարաբերությունների կառավարում (CRM):

Շուկայի վերլուծության շրջանակներում կարևոր տեղ է զբաղեցնում սպառողների եկամուտների չափման ուսումնասիրությունը: Այս գործոնը կարևոր նշանակություն ունի ինչպես ապրանքների գնի ձևավորման համար, այնպես էլ նրա սպառման ծավալների որոշման համար:

Սպառողների ուսումնասիրության ժամանակ անհրաժեշտ է նաև ուսումնասիրել նրանց վարքի շարժառիթները, այսինքն՝ ուսումնասիրում են ոչ միայն պահանջմունքները, ցանկությունները, ճաշակները և սովորությունները, ավանդույթները և հակումները, այլ նաև բացահայտվում են այդպիսի վարքի պահանջները, որը թույլ է տալիս կանխատեսել սպառողների որոշ խմբերի վարքի առանձնահատկությունները ապագայում:

Ակնհայտ է, որ նոր ապրանքների հետազոտումը տեղեկատվություն է տալիս այն մասին, թե ինչ է ուզում ունենալ սպառողը, ինչպիսի չափանիշներ/պարամետրեր/ է նա ավելի արժևորում՝ դիզայն, տեխնիկական մակարդակ, հուսալիություն, ծառայության ժամկետ և այլն, իսկ մյուս կողմից՝ ինչպես ներկայացնել նոր ապրանքը պոտենցիալ սպառողներին, որ բավարարվի աճող սպառումը, որ չափանիշները պետք է կարևորել գովազդային արշավը իրականացնելիս, ովքեր են կազմելու գովազդի նպատակային լսարանը, ինչպիսի նոր հնարավորություններ են ունենալու սպառողները և այլն:

Ապրանքի հետազոտությունը բաղկացած է բազմաթիվ միջոցառումներից և սերտ կապված է մարքեթինգի այլ տարրերի հետ:

Այս դեպքում անհրաժեշտ է նաև որոշել ապրանքի ապագա գինը, գնահատել, թե որքանով շահավետ կլինի տվյալ հատվածում աշխատանքների իրականացումը:

Շատ դեպքերում՝ նոր ապրանքի մակարդակի գնահատման ժամանակ, որոշումները ընդունվում են զուտ տեխնիկական բնութագրիչների հիման վրա, օրինակ, արագություն, հզորություն, արտադրողականություն և այլն:

Նախագծման տեխնիկական առաջադրանքի սահմանման ժամանակ խորհուրդ է տրվում սահմանել տնտեսական ցուցանիշներ, որոնց միջոցով կորոշվեն ապրանքի կյանքի ցիկլի բոլոր փուլերի ծախսերի մակարդակը՝ նախագծման և արտադրության (ինքնարժեք), իրացման գին, մրցակից ապրանքների տնտեսական առավելությունները և այլն:

«Գնային մարքեթինգի» ռազմավարության իրականացման ժամանակ արտադրանքի գինը դոմինանտ նշանակություն է ձեռք բերում ապրանքի մշակման, արտադրման և իրացման գործընթացների ժամանակ: Այդ դեպքում նոր ապրանքի ֆունկցիոնալ բնութագրիչները դառնում են ածանցյալ գնի (ծախքերի) սահմանած մակարդակից:

Ապրանքի հետազոտությունը օգտագործվում է նաև իրացման պլանավորման և կազմակերպման ժամանակ: Կարևոր է, որ յուրաքանչյուր ապրանք իրացվի

բաշխման այն ուղիներով, որտեղից սպառողը մեծ հավանականությամբ այն ձեռք կբերի:

Այնուհետև իրականացվում է իրացման ուղիների բացահայտման և նոր արտադրանքի դեպի շուկա առաջխաղացման հետազոտություն: Տվյալ հետազոտության նպատակը ձեռնարկության համար հասանելի հատվածի և դրա յուրացման եղանակների բացահայտումն է:

Նոր արտադրանքի մշակման գործընթացի կարևորագույն փուլերից է հիմնական մրցակիցների ուսումնասիրությունը: Տվյալ վերլուծության իրականացման ժամանակ ձեռնարկության ղեկավարությունը պետք է գնահատի շուկայի ընտրված հատվածում մրցակցային պայքարից հաջող դուրս գալու իր հնարավորությունները: Կարևոր է որոշել, թե ով կարող է ապագայում դառնալ մրցակից, որոնք են նրա ուժեղ և թույլ կողմերը, սեփական համեմատական առավելությունները մրցակցային պայքարում, որքանով է պատրաստ հետազոտական, ինժեներական, արտադրական և իրացման հարցերով զբաղվող անձնակազմը տվյալ հատվածում արդյունավետ առաջխաղացում ապահովել, որքանով են նրանք պատրաստ մրցակցային պայքար վարելու, տնտեսական գործունեության որ ուղղությունների վրա է անհրաժեշտ կենտրոնացնել հիմնական ջանքերը և ռեսուրսները՝ ուժեղ կողմերի էլ ավելի հզորացման և թերությունների վերացման նպատակով և այլն: Անհրաժեշտ է գնահատել նաև, թե որքանով է ուժեղ մրցակցությունը շուկայի տվյալ հատվածում, ինչպիսին են տվյալ սեգմենտի յուրացման լրացուցիչ ծախսերը:

Նոր ապրանքների նկատմամբ պահանջների սահմանումը պետք է իրականացվի վերը նշված մարքեթինգային հետազոտությունների, նախկինում արտադրված նմանատիպ ապրանքների շահագործման արդյունքների վերլուծության, տվյալ ոլորտում գիտատեխնիկական առաջընթացի զարգացման ուղղությունների դիտարկումների հիման վրա:

Նոր ապրանքի մշակման ուղղությունների ընտրության ժամանակ հիմնական շեշտը պետք է դրվի գոյություն ունեցող ապրանքների համեմատ նոր արտադրանքի շահագործման բնութագրիչների շատ անգամ բարելավումն ապահովող սկզբունքորեն նոր լուծումների վրա: Ընդ որում պետք է ապահովվի նոր արտադրանքի գնի հարաբերական իջեցումը, այսինքն՝ նրա գինը պետք է աճի շահագործման հիմնական ցուցանիշներից ավելի դանդաղ:

Ապրանք մշակողը պետք է ոչ միայն ապահովի սպառողի պահանջմունքների բավարարումը, այլ նաև որոշ չափով պետք է ձևավորի նրա պահանջմունքները՝ առաջարկելով սպառողին իր առջև ծառացած խնդիրների լուծման համար ավելի հեռանկարային և առաջադիմական որոշումներ: Նման հարցադրումը պայմանավորված է նրանով, որ զանգվածային արտադրությամբ բնութագրվող արդյունաբերության ճյուղերում, հատկապես առաջատար ճյուղերում ապրանքի մշակողը սովորաբար արտադրողից և առավել ևս սպառողից ավելի լավ է տեղեկացված լինում գործունեության տվյալ ոլորտում գիտական և տեխնիկատնտեսական միտումներից և ավելի է ունակ հիմնախնդիրներին տալ որակավորված լուծումներ:

Հարկ է նշել, որ հետազոտությունների իրականացման ընթացքում անհարժեշտ է կիրառել ինչպես հայրենական, այնպես էլ արտասահմանյան առաջատար երկրների առաջավոր փորձը:

Որպեսզի նոր արտադրանքը արտադրության պահից ի վեր համապատասխանի համաշխարհային լավագույն նմուշներին, անհարժեշտ է, որ մշակման աշխատանքներով զբաղվողները կողմնորոշվեն որակի հեռանկարային մակարդակով: Հակառակ դեպքում արտադրանքը կամ տեխնոլոգիական գործընթացները արդյունաբերական արտադրության կամ տեխնիկական յուրացման պահին արդեն կլինեն հնացած: Նման բացասական երևույթի կանխարգելման նպատակով արտադրատեխնիկական նշանակության կամ լայն սպառման ապրանքների որակի հեռանկարային օպտիմալ մակարդակի կանխատեսման հետազոտությունները պետք է լինեն մինչնախագծային փուլի պարտադիր բաղկացուցիչ, իսկ կանխատեսման արդյունքները պետք է հիմք հանդիսանան նախագծման տեխնիկական առաջադրանքի մշակման և ապագա արտադրանքի փորձնական նմուշների ստեղծման համար:

Պահանջների հեռանկարային մակարդակի ձևավորումը պետք է հիմնվի անհրաժեշտ տեսական և փորձարարական հետազոտությունների վրա, որոնք ընդհանուր առմամբ բաղկացած են հետևյալ աշխատանքներից.

- սպառողների պահանջմունքների հետազոտություն,
- հայրենական և արտասահմանյան արտադրանքի որակական և տեխնիկական տեղեկատվության հետազոտություն,
- տվյալ խմբի համասեռ արտադրանքի պատենտային և հայտնագործությունների հետազոտություն,
- տեսական հետազոտության անցկացում, այդ թվում նաև սպառողական պահանջարկի օբյեկտիվորեն ձևավորվող միտումների կանխատեսում, դրա հիման վրա արտադրանքի կատարելագործում, նոր արտադրանքի չափանիշների օպտիմալացում,
- Նոր արտադրանքի տեխնիկական մակարդակը, որակը, արդյունավետությունը և տնտեսապես արդարացվածությունը որոշող ցուցանիշների կոնկրետ արժեքների ստացման և տեսական հետազոտության արդյունքների հաստատման համար անհրաժեշտ փորձարարական աշխատանքների իրականացում:

Գիտության և տեխնիկայի ժամանակակից մակարդակին համապատասխանող արտադրանքի մշակման կարևորագույն պայման է հայրենական և արտասահմանյան արտադրանքի՝ գոյություն ունեցող և կանխատեսվող միջազգային տեխնիկական մակարդակի վերաբերյալ տեղեկատվության ստացման համակարգի կազմակերպումը:

Նոր արտադրանքի մշակմամբ զբաղվող ձեռնարկությունում պետք է կենտրոնացվի նմանատիպ նշանակության ապրանքների հեռանկարների, գիտահետազոտական և փորձարարակոնստրուկտորական մշակումների, արտադրանքի բոլոր փորձարկումների արդյունքների, հայրենական և արտասսհմանյան լավագույն նմուշների բնութագրիչների, արտադրության և շահագործման մասին ամբողջ

տեղեկատվությունը: Տեխնիկայի զարգացման միտումների ավելի հստակ բացահայտման և նրա հեռանկարային տեխնիկական մակարդակի որոշման համար անհրաժեշտ է տվյալ արտադրանքը արտադրող բոլոր առաջատար ձեռնարկություններից իրականացնել տեղեկատվության պարբերաբար հավաքագրում:

Արդեն արտադրվող և շուկայի կողմից ընդունված, մինչարտադրական փուլում գտնվող արտադրանքի տեխնիկական մակարդակի և որակի վերաբերյալ տվյալները տեղեկատվական հիմք են տարբեր մեթոդներով հեռանկարային նորմերի և պահանջների կանխատեսումների իրականացման համար:

Նոր ապրանքի ստեղծման եզրափակիչ փուլերից մեկը դրա փորձարկումն է շուկայում կամ փորձնական մարքեթինգը: Փորձնական մարքեթինգը ապրանքի կամ մարքեթինգային ծրագրի փորձարկումն է շուկայական ռեալ պայմաններում: Դրա նպատակն է գնահատել ապրանքը և մարքեթինգային ծրագիրը՝ գինը, գովազդը, ապրանքանիշը, փաթեթավորումը, ծառայությունները, մինչ լայնածավալ արտադրության սկիզբը և պարզել, թե ինչպիսին կլինի սպառողների և միջնորդների արձագանքը: Փորձնական մարքեթինգի արդյունքները կարող են օգտագործվել վաճառքի ծավալների և շահույթի կանխատեսման համար: Սպառողական ապրանքների փորձնական մարքեթինգի ժամանակ կիրառում են հետևյալ մեթոդները.

- շուկայի ստանդարտ թեստավորում, որի նպատակն է ստացված արդյունքների կիրառումը վաճառքի ծավալների կանխատեսման ժամանակ, ինչպես նաև արտադրության և մարքեթինգային պրոբլեմների բացահայտումը,
- շուկայի վերստուգիչ թեստավորում. որոշակի վճարի դիմաց որոշակի խանութներ իրենց մոտ կատարում են նոր ապրանքի վաճառք՝ տարբեր մեթոդների կիրառմամբ,
- իմիտացիոն թեստավորում. ապրանքի արձակումը կատարվում է իրական շուկայական պայմաններին մոտ մոդելավորված պայմաններում:

Վերջնական փուլում՝ կոմերցիոն արտադրությունը կազմակերպելու ժամանակ, արտադրողը պետք է ճիշտ որոշի շուկա դուրս գալու ժամանակը, տարբեր շուկաներում իրականացվող գործողությունների հաջորդականությունը և ծավալները, բաշխման և առաջխաղացման առավել արդյունավետ մեթոդները, մշակեն մարքեթինգային գործունեության օպերատիվ մանրակրկիտ պլան:

Այսպիսով, նմանատիպ մոտեցումը, մեր կարծիքով, կնպաստի նոր արտադրանքի նախագծման, արտադրության և իրացման արդյունավետ գործընթացի իրականացմանը:

Բանալի բառեր՝ *նոր ապրանք, շուկա, սեգմենտ, նախագծում, արտադրություն, գործընթաց, ռազմավարություն, մարքեթինգային գործունեություն, արդյունավետություն, սպառողների հետազոտություն, գնային քաղաքականություն:*

THE ACTUAL PROBLEMS OF FORMING NEW PRODUCT DEVELOPMENT AND COMMERCIALIZATION STAGES

V. H. ARAQELYAN
PhD in Economics,
Associate Professor,
GSU lecturer
A. F. MKRTCHYAN
YSU Assistent

The basic problems of new product development and market promotion in current conditions are described in this article.The article indicates new product specifics, modern analysis methods and new products evaluation with a focus on functional-value analysis. New approaches were suggested to promote new produc in both existing and new markets to provide competitive advantages for companies.

СОВРЕМЕННЫЕ ЗАДАЧИ ФОРМИРОВАНИЯ ЭТАПОВ РАЗРАБОТКИ И КОММЕРЦИАЛИЗАЦИИ НОВЫХ ПРОДУКТОВ

В. О. АРАКЕЛЯН
Кандидат экономических наук, доцент
Преподаватель ГГУ
А.Ф. МКРТЧЯН
Ассистент ЕГУ

В статье о современных проблемах разработки нового товара и процеса формирования этапов коммерциализации обсуждаются главные задачи разработки нового товара и его продвижения на рынке в современных условиях. Обсуждены особенности этапов разработки нового продукта, были предложены современные методы анализа и оценки нового продукта, при этом акцент был поставлен на функционально-стоимостный анализ. Были предложены такие подходы, которые позволят вывести новый продукт как на действующие рынки, так и на новые, что позволит хозяйствующим субъектам иметь конкурентные преимущества.

ԱՊՐԱՆՔԻ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Վ. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
Հ. Հ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս
Ա. Ս. ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԳՊՀ դասախոս

Ապրանքն իր հատկանիշներով և ուղեկցվող ծառայություններով պետք է առավելագույնս բավարարի գնորդի պահանջմունքները՝ արտադրական, տնտեսական, սոցիալական, հոգեբանական և այլն: Ընդ որում պետք է հաշվի առնել, որ յուրաքանչյուր պահանջմունք օժտված է որակի հատկանիշներով, և սպառումը իրականացվում է որոշակի պայմաններում, որոնք սահմանում են որոշակի միջակայք: Այդ առումով կարելի է խոսել սպառման գործընթացը բնութագրող պայմանների առկայության մասին: Այդ համախումբը ընդգրկում է սպառումը տնտեսական, տեխնիկական և այլ կողմերը բնութագրող ցուցանիշներ, որոնք ենթադրում են գոյության տիրույթը, վերջնական նպատակը և պահանջմունքի բավարարման պայմանները:

Այս կամ այն ապրանքը գնելիս սպառողը կողմնորոշվում է նրա ֆունկցիոնալ հատկանիշներով, ինչպես նաև գնման ակտի այլ կողմերով՝ որքան կարժենա ձեռքբերումը, որքան են ապրանքի շահագործման հետ կապված ծախսերը, ինչպիսին կլինի տվյալ ապրանքի գնման տնտեսական էֆեկտը: Այսպիսով, ապրանքի մրցունակության գնահատման հարցում կարևոր տեղ են զբաղեցնում տնտեսական ցուցանիշները:

Այս հասկացությանը պատկանող բոլոր ցուցանիշները ունեն արժեքային հիմք, որոշում են սպառման տարրերի արժեքը, այսինքն՝ սպառողի կողմից տվյալ ապրանքի ձեռքբերման և օգտագործման ծախսերը:

Արդյունաբերական արտադրանքի մրցունակության գնահատման ժամանակ օգտագործվող տնտեսական ցուցանիշների ցանկի ձևավորման ժամանակակից մոտեցումները բնութագրվում են սպառողի ամբողջական ծախսերի կառուցվածքով, որը որոշվում է ապրանքի ձեռքբերման, օգտագործման, տվյալ շուկայում վաճառքի պայմանների և ավանդույթների յուրահատկություններով:

Սպառողի ամբողջական ծախսերը ընդգրկում են ապրանքի ձեռքբերման և հետագա շահագործման ծախսերը ապրանքի ծառայության ամբողջ ժամանակահատվածի համար՝

$$Ц_{սպառ} = Ц_{աստ} + \sum З_{շահագ}\,\tau / \tau_i$$

Ապրանքի մրցունակության գնահատման ժամանակ սպառման գնի հաշվառումը կապված է այն հանգամանքի հետ, որ սպառման գինը տարբերվում է ձեռքբերման գնից: Սպառման գնի առանձին տարրերի չափը և նրանց տեսակարար կշիռը տարբեր խմբերի մոտ տարբեր է: Օրինակ՝ անձնական սպառման ապրանքների մեծամասնության համար հետագա շահագործման և լիկվիդացման ծախսերը հարաբերականորեն ցածր են, քան արտադրական նշանակության ապրանքներինը: Ընդ որում ապրանքների մեծ խմբի համար ծախսերի բաղկացուցիչը ապրանքի շահագործման ողջ ընթացքում ավելի բարձր է լինում ձեռքբերման գնից: Այդ պատճառով այլ հավասար պայմաններում ավելի մրցունակ է ոչ թե այն ապրանքը, որն ունի վաճառքի ցածր գին, այլ այն, որի սպառման գինը ծառայության ողջ ժամանակահատվածում նվազագույնն է: Ուստի սպառման գնի կառուցվածքի և առանձին տարրերի մակարդակի միջև առկա տարբերությունները նույնիսկ նմանատիպ ապրանքի շրջանակներում զգալի չափով կարող են ազդել ապրանքի մրցունակության վրա:

Առաջինը, ինչին սպառողը բախվում է ապրանքի բնութագրիչների հետ ծանոթանալուց հետո, ապրանքի գինն է: Անգամ չլինելով տեխնիկայի տվյալ բնագավառի մասնագետ՝ որակի մասին նա դատում է գնի միջոցով:

Որպես կանոն՝ սպառողը դրական է արձագանքում թանկարժեք, բայց նմանատիպ ապրանքի համեմատ ավելի բարձր որակ ունեցող ապրանքի ձեռքբերմանը, այսինքն՝ որակը նախընտրում է գնից: Դա ոչ միայն համապատասխանում է սպառողի վարքին, այլ պայմանավորված է զուտ տնտեսական հանգամանքներով: Բարձրորակ է համարվում այն ապրանքը, որը տարբերվում է մյուս նմանատիպ ապրանքներից ավելի բարձր հուսալիությամբ, ենթակա է հեշտ վերանորոգման, շահագործման ընթացքում ավելի քիչ ծախսեր է պահանջում: Չնայած այդ ապրանքը վաճառվում է ավելի բարձր գնով, սակայն սպառողը նախընտրում է տվյալ ապրանքը՝ ելնելով ծախսերի զգալի տնտեսումից, և դրանով իսկ նվազեցնում ապրանքի սպառման գինը:

Պրակտիկայում նկատվում է սպառողի վարքի մեկ այլ դրսևորում, երբ նա ապրանք է ձեռք բերում ավելի ցածր գնով: Ակնհայտ է, որ այստեղ նույնպես գերակշռողը որոշակի ժամանակահատվածում իր պահանջմունքը միջոցների ծախսի նվազագույն մակարդակով կատարելն է:

Գործնականում ապրանքի գինը կախված է ոչ միայն դրա սպառողական հատկանիշներից, այլ նաև մի շարք շուկայական գործոններից՝ առաջարկի և պահանջարկի հարաբերակցությունից, շուկայում մրցունակության բնույթից, հարկման, ապահովագրման համակարգից և այլն:

Միևնույն որակի ապրանքը կարճ ժամանակաընթացքում տարբեր գործոնների ազդեցության տակ կարող է վաճառվել միմյանցից զգալի տարբերվող գներով նույնիսկ այն դեպքում, երբ կազմակերպության կողմից սահմանված գներում տարբեր տեսակի զեղչեր են արվում՝ քանակի, դիլերային, կանխիկ վճարելու համար: Հետևաբար գնի և սպառողական հատկանիշների մակարդակի

կախվածությունը բացահայտող հուսալի միջոց կարող է հանդիսանալ տարբեր արտադրող կազմակերպությունների կողմից կոնկրետ շուկայում իրացված և իրացվող տվյալ տիպի ապրանքների որակական և գնային բնութագրիչների մասին տեղեկատվությունը:

Ինչպես արդեն նշվեց, ապրանքի մրցունակության տնտեսական կողմը բնութագրող ցուցանիշը սպառողների ընդհանուր ծախսերն են, որոնք կապված են արտադրանքի ձեռքբերման (միանիշ ծախսերը) և շահագործման ծախսերի հետ:

Արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի միանվագ ծախսերը ներառում են ապրանքի ձեռքբերման ծախսերը (պայմանագրային գին), ինչպես նաև փոխադրման, տեղավորման, եթե դրանք ներառված չեն պայմանագրային գնի մեջ: Երբեմն ընդգրկում են նաև շինությունների ծախսերը, որոնց անհրաժեշտությունը պայմանավորված է արտադրանքի պահանջներով:

Ձեռքբերման ծախսերը որոշվում են պայմանագրային գնով, որը նախատեսված է պայմանագրով կամ պայմանագրահիրավական այլ փաստաթղթերով:

Փոխադրման ծախսերը կապված են բեռնման, առաքման, բեռնաթափման, սպասարկման պահպանման հետ: Այն դեպքում, երբ իրականացվում են մոնտաժման, ապամոնտաժման, կարգավորման, մեքենայի կամ սարքավորման փորձարկման աշխատանքներ, ապա այդ ծախսերը նույնպես ընդգրկվում են բերված ծախսերի մեջ:

Ապրանքի (մեքենա կամ սարքավորում) շահագործման հետ կապված ծախսերը իրենց հերթին բաղկացած են մեքենայի աշխատանքի հետ կապված (այսինքն՝ սպառողական էֆեկտի ստեղծման, ինչպես նաև ապրանքի կորցրած հատկանիշների վերականգնման և լիկվիդացման) ծախսերից: Շահագործման (ընթացիկ) ծախսերի մեջ են ներառվում անձնակազմի աշխատանքի վարձատրության, վառելիքի և էներգիայի, վերանորոգման (միջին կապիտալ), տեխնիկական և շահագործման փաստաթղթերի ձեռքբերման, անձնակազմի ուսուցման և այլ ծախսերից:

Հարկ է նշել, որ սպառման գնի մեծությունը մասամբ կարող է փոխհատուցվել ապրանքի շահագործման ժամկետի ավարտին նրա վաճառքից ստացվող հասույթով:

Ընդհանուր առմամբ սպառման գնի կառուցվածքը կարելի է ներկայացնել հետևյալ տեսքով.

$$Ա_{սպառ} = Ա_{գնում} + З_{տեղափ} + З_{նյութ} + З_{վերն.} + З_{փատ..} + З_{սպա} + З_{լիկ.} - D_{եկամ.},$$

որտեղ $Ա_{գնում}$-ը արտադրանքի գնման պայմանագրային թիվն է,

$З_{տեղափ}$ – բեռնման, առաքման, բեռնաթափման ծավալը,

$З_{նյութ}$ – վառելիքի, էներգիայի, հումքի, նյութերի ծավալներն են,

$З_{վերն.}$ – վերանորոգման ծավալն է (միջին կապիտալ),

$З_{փատ.}$– սպառողի ծավալն է՝ կապված տեխնիկական և շահագործման փաստաթղթերի ձեռքբերման, անձնակազմի ուսուցման հետ,

$З_{սպա}$ – արտադրանքի լիկվիդացման հետ կապված ծախսերն են,

$D_{եկամ.}$ – շահագործումից հետո արտադրանքի վաճառքից ստացված եկամուտն է:

Ակնհայտ է, որ արտադրանքի սպառման ձևի մակարդակի որոշումը դեռևս լրիվ պատկերացում չի տալիս մրցունակության վերաբերյալ: Այդ հարցը կարելի է պարզաբանել տարբեր ապրանքների տվյալ պահանջմունքի բավարարման ծախսերի համեմատման միջոցով: Այլ հավասար պայմաններում սպառողի նվազագույն ծախսերը ապահովող տարբերակը համարվում է ամենաարդյունավետը: Այսպիսով, տարբեր ապրանքների տեխնիկական չափորոշիչների համընկման դեպքում ավելի մրցունակ է այն, որի

$$Ц_{սպառ} \rightarrow \min$$

կամ

$$i_{սպ.\ գին} = \frac{Ц_{սպառ}}{Ц_{սպառδ}}$$

որտեղ $i_{սպ.\ գին.}$ սպառման գնի ինդեքսն է,

$Ц_{սպառ}$-վերլուծվող ապրանքի սպառման գինն է,

$Ц_{սպառδ}$– մրցակցի ապրանքների սպառման թիվն է:

Այսպիսի մոտեցումը, մեր կարծիքով, հնարավորություն է ընձեռում ճիշտ գրանցել ապրանքի մրցունակությունը:

Բանալի բառեր՝ *ապրանք, մրցունակություն, սպառման գին, մրցակից, ծախսեր, արդյունավետություն, սպառող, արտադրանք, գնահատում:*

Օգտագործված գրականություն

1.Առաքելյան Վ. Հ., Սիմոնյան Մ.Դ., Նորամուծությունների կառավարումը բիզնեսում (փորձ և հիմնախնդիրներ), Եր., Նահապետ, 2014:

2. Зобьялов П., Конкуренция – неотъемлемое свойство развитого рынка Маркетинг, 1997.

THE STRUCTURE OF ECONOMIC INDICATORS OF COMPETITIVE PRODUCT

V. H. ARAKELYAN
PhD in of Economic Sciences, Associate Professor
GSU lecturer
H. H. KHACHATRYAN
PhD in of Economic Sciences, Associate Professor
GSU lecturer
A. S. AVETISYAN
GSU lecturer

The article includes the discussion of formation of modern economic system features, including indicators, that are related to competitiveness of products. Approaches to formation of economic indicators, used in assessing the competitiveness of industrial products are introduced. The method of calculating the total consumer expenses was also introduced including both purchase of the products and future operating costs.

СТРУКТУРА ЭКОНОМИЧЕСКИХ ПОКАЗАТЕЛЕЙ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ ТОВАРА

В. О. АРАКЕЛЯН
Кандидат экономических наук, доцент
Преподаватель ГГУ
А. А. ХАЧАТРЯН
Кандидат экономических наук, доцент
Преподаватель ГГУ
А. С. АВЕТИСЯН
Преподаватель ГГУ

В статье обсуждаются особенности формирования современной экономической системы показателей конкурентоспособности товара. Представляются современные подходы к формированию экономических показателей, используемые при оценке конкурентоспособности промышленной продукции. Был введен метод расчета полных расходов потребителей, который включает в себя как приобретение товаров, так и дальнейшие эксплуатационные расходы.

ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Ա. Պ. ԲԱՂԻՆՅԱՆ
ԳՊՀ դասախոս

ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Տնտեսական զարգացմանը զուգընթաց մարդկությունն էլ ավելի է գիտակցում ապահովագրության անհրաժեշտությունը, որի արդյունքում էլ ապահովագրությունը լայն տարածում է գտել ոչ միայն զարգացած երկրներում, այլև զարգացող երկրներում: Զարգացած երկրներում այն ունի երկար տարիների պատմություն և մեծ ձեռքբերումներ, ուստի բնական է, որ զարգացող երկրները կիրառում են հենց նրանց փորձը այս բնագավառում: Հայաստանի Հանրապետությունում գործող ապահովագրական ընկերությունները փորձում են առաջարկվող ապահովագրական ծառայությունները սկզբունքայնորեն և բովանդակային առումով համապատասխանեցնել միջազգային խոշոր ապահովագրական ընկերությունների կողմից առաջարկվող ծառայություններին: Ապահովագրությունը՝ որպես ծառայություն, տարբեր երկրներում որակապես կարող է տարբերվել, սակայն սկզբունքորեն՝ ոչ: Ապահովագրության սկզբունքներն են՝

1. ապահովագրողը պետք է հատուցի վնասի ճիշտ չափը,
2. ապահովադիրը (ապահովագրվողը) ապահովագրությունից շահույթ չի կարող հետապնդել,
3. ապահովադիրը (ապահովագրվողը) պետք է շահագրգռված լինի ապահովագրված գույքի պահպանման հարցում,
4. ապահովագրողը և ապահովադիրը պետք է բարեխղճորեն մոտենան ապահովագրության հետ առնչվող հարցերին:

Ապահովագրությունը Հայաստանի Հանրապետությունում կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, միջազգային պայմանագրերով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, Ապահովագրության մասին ՀՀ օրենքով, այլ օրենքներով և դրանց հիման վրա ընդունված Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով: Ըստ ապահովագրության մասին ՀՀ օրենքի (ընդունված 2007 թվականի ապրիլի 9-ին)՝ ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրությունը դասվում է ոչ կյանքի ապահովագրության տեսակների շարքին: Այն համարվում է ապահովագրության ամենատարածված տեսակներից մեկը ոչ միայն Հայաստանի Հանրապետությունում, այլև ամբողջ աշխարհում: Ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի և ապահովադրի (ապահովագրվողի) միջև գրավոր պայմանագիր (ապահովագրության վկայագիր) կնքելու միջոցով: Ապահովագրության

պայմանագիրը կնքվում է ապահովադրի գրավոր կամ բանավոր դիմումի հիման վրա: Պայմանագիրը պետք է պարունակի օրենքով սահմանված տեղեկատվությունը: Այն պետք է պարտադիր ունենա համապատասխան կանոններ (ապահովագրության պայմաններ), որը ամբողջությամբ նշվում է պայմանագրի մեջ կամ կցվում նրան՝ այդ մասին կատարելով հատուկ գրառում պայմանագրի մեջ: Ապահովագրության պայմանագրում հիմնականում նշվում է տեղեկատվություն ապահովագրողի, ապահովադրի, շահառուի, ապահովագրված անձանց (եթե այդպիսիք կան), ապահովագրվող օբյեկտի, ապահովագրական գումարի, ապահովագրական արժեքի, ապահովագրավճարի (նաև վճարման կարգի), սակագնի, ապահովագրության ժամկետի, ֆրանշիզայի, ապահովագրվող ռիսկերի, բացառությունների, ընտրված ապահովագրության ծրագրի (եթե այդպիսիք կան), կողմերի իրավունքների և պարտականությունների (սա հիմնականում նշվում է կանոններում) մասին:

Հայաստանի Հանրապետությունում ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության բնագավառում գործում են երեք կամավոր և մեկ պարտադիր ապահովագրության տեսակներ:

Կամավոր ապահովագրության տեսակներն են.

1. ավտոմեքենաների «Կասկո» ապահովագրություն,
2. ավտոմեքենաների սեփականատերերի քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրություն,
3. ավտոմեքենաների վարորդների և ուղևորների՝ դժբախտ պատահարներից ապահովագրություն:

Պարտադիր ապահովագրությունն է՝

1. ԱՊՊԱ (Ավտոտրանսպորտային միջոցների օգտագործումից բխող պատասխանատվության պարտադիր ապահովագրություն):

1.ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ «ԿԱՍԿՈ» ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«Կասկո» ապահովագրության դեպքում ապահովագրության օբյեկտ է հանդիսանում ապահովագրվող ավտոմեքենան և դրա վրա տեղադրված լրացուցիչ սարքավորումները: Ապահովագրողը հատուցում է ապահովագրված ավտոմեքենայի և դրա վրա տեղադրված սարքավորումների կորուստը և վնասը, որոնք առաջացել են հետևյալ ռիսկերից.

- ՃՏՊ (Ճանապարհատրանսպորտային պատահար),
- գողություն (հիմնականում ապահովագրողը հատուցում է բռնի ուժի կիրառմամբ իրականացված գողության հետևանքով հասցված վնասը կամ կորուստը),
- հրդեհ, ինքնաբռնկում, պայթյուն,
- բնական աղետներ (ուժեղ քամիներ, փոթորիկ, ջրհեղեղ և այլն),
- երորրդ անձանց կողմից անօրինական, չարամիտ գործողություններ,

- այլ ռիսկեր:

ՃՏՊ-ի դեպքում ապահովագրողը կարող է պահանջել ապահովադրից ներկայացնել պատահարի փաստը հավաստող փաստաթղթերը՝ տրված ՃՈ-ի կողմից: Ապահովագրողը կարող է կոնկրետ ժամանակահատված նշել կանոններում, որի ընթացքում ապահովադիրը պարտավոր է տեղեկացնել ապահովագրողին ապահովագրական պատահարի մասին: Այս կետը կանոններում նշվում է այն բանի համար, որ ապահովագրողի ներկայացուցիչը հնարավորություն ունենա տեղում պարզել պատահարի առաջացման պատճառները, պարզել վարորդի սթափության աստիճանը (արդյո՞ք վարորդը գտնվել է ալկոհոլի կամ թմրանյութերի ազդեցության տակ): Անկախ ապահովագրական պայմանագրի կանոններում նշված բացառություններից, որոնց դեպքում ապահովագրողն ազատվում է հատուցում վճարելուց, օրենքով արգելվում է հատուցել այն վնասները, որոնք առաջացել են վարորդի՝ ալկոհոլի կամ թմրանյութերի ազդեցության տակ գտնվելու հետևանքով: Օրենքով արգելվում է նաև ապահովադրի կամ շահառուի դիտավորությամբ կամ կանխամտածված գործողությամբ առաջացած վնասների հատուցումը: Ապահովագրողը չի հատուցում նաև պատերազմների, քաղաքացիական ապստամբությունների, ընդվզումների, միջուկային զենքի կիրառման և նմանատիպ այլ գործողությունների հետևանքով ապահովագրված ավտոմեքենային պատճառված վնասները:

Գողության ռիսկը ապահովագրելիս ապահովագրողը հարցաթերթիկի միջոցով կարող է պարզել ռիսկայնության աստիճանը՝ գիշերային ժամերին ավտոմեքենայի կայանման վայրը (ավտոտնակում, բակում, հատուկ պահպանվող տարածքում), ավտոմեքենայի վրա տեղադրված հակակողոպտչային ազդանշանային համակարգի սարքի առկայությունը և այլն:

Հրդեհի ռիսկից ապահովագրելու դեպքում ապահովագրողը կարող է ապահովադրից պահանջել պահպանելու հակահրդեհային անվտանգության կանոնները, ավտոմեքենայում ունենալ օգտագործման համար պիտանի կրակմարիչ:

Եթե ավտոմեքենայի «Կասկո» ապահովագրությունն իրականացվում է վերը նշված բոլոր ռիսկերից, ապա այդպիսի ապահովագրությունը կոչվում է լրիվ կասկո, իսկ եթե ապահովագրությունն իրականացվում է մեկ կամ երկու ռիսկերից, ապա կոչվում է ոչ լրիվ կասկո: Կասկոյի պայամանգրում կարող է կիրառվել նաև ֆրանշիզա (չհատուցվող գումար) հասկացությունը: Ֆրանշիզան ապահովադրի մասնակցության չափն է ապահովագրական հատուցմանը (վնասի վերականգնմանը), որը պայմանգրում նշվում է սահմանված գումարով կամ տոկոսային հարաբերակցությամբ ապահովագրական գումարի նկատմաբ (ֆրանշիզա՝ 50 000դ կամ ապահովագրական գումարի 1%-ը): Ֆրանշիզան լինում է պայմանական կամ ոչ պայմանական: Պայմանական ֆրանշիզայի դեպքում ապահովագրողն ազատվում է փաստացի վնասների կամ կորուստների հատուցման պարտականությունից, եթե այդ վնասի չափը չի գերազանցում պայմանագրով սահմանված չհատուցվող գումարի չափը (օրինակ՝ ֆրանշիզան սահմանվել է 100 000դ, իսկ

վնասի չափը կազմել է 80,000դ, այս դեպքում ապահովագրողն ազատվում է հատուցում վճարելու պարտականությունից): Եվ պարտավորվում է վճարել ապահովագրական հատուցումն ամբողջությամբ, եթե վնասի չափը գերազանցում է վնասի գումարի չափը (օրինակ՝ ֆրանշիզան սահմանվել է 100 000դ, իսկ վնասի չափը գնահատվել է 120 000դ, այս դեպքում ապահովագրողը կհատուցի 120 000դ): Ոչ պայմանական ֆրանշիզայի դեպքում Ապահովագրողն ազատվում է պայմանագրով սահմանված ֆրանշիզայի գումարի չափով հատուցում իրականացնելուց անկախ վնասի և կորստի չափից: Ֆրանշիզայի կիրառելիության նպատակն այն է, որ ապահովադիրը նույնպես շահագրգռված լինի ապահովագրված գույքի պահպանման հարցում, քանի որ ապահովագրական պատահար տեղի ունենալու դեպքում, ինքը նույնպես մասնակցություն է ունենալու ապահովագրական հատուցմանը (ֆրանշիզայի գումարի չափով):

«Կասկո» ապահովագրությանը զուգահեռ արևմտյան երկրներում ապահովագրողներն առաջարկում են նաև լրացուցիչ ծառայություններ, որը նրանք իրականացնում են՝ այլ կազմակերպությունների հետ համագործակցելով: Այդ դեպքում ապահովագրական սակագինը ավելի բարձր է լինում: Այդպիսի ծառայություններից են փաստաբանի տրամադրում, նոր ավտոմեքենայի տրամադրում մինչև վնասված ավտոմեքենայի վերանորոգումը և այլն:

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱՄԱՎՈՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս ապահովագրության դեպքում պայմանագիր են կնքում ապահովագրողը և ապահովադիրը, ովքեր հանդիսանում են պայմանագրի երկու կողմեր: Պայմանագրի կողմ չհանդիսացող ցանկացած ֆիզիկական կամ իրավաբանական անձ, ըստ պայմանագրի, համարվում է երրորդ կողմ: Այս ապահովագրության պայմանագրով ապահովագրության օբյեկտ է հանդիսանում երրորդ կողմի կյանքը, առողջությունը և գույքը: Այս ապահովագրության դեպքում ապահովագրողը պարտավորվում է հատուցել այդ ավտոմեքենայի շահագործման ընթացքում ապահովադրի կամ պայմանագրում նշված լիազորված վարորդի մեղքով երրորդ կողմի կյանքին, առողջությանը և գույքին հասցված վնասները: Եթե «Կասկո» ապահովագրության դեպքում ապահովագրական գումարը (ապահովագրության պայմանագրով ապահովագրողի պատասխանատվության առավելագույն սահմանաչափը) սահմանափակվում է ավտոմեքենայի իրական արժեքով, ապա երրորդ կողմի հանդեպ քաղաքացիական պատասխանատվության կամավոր ապահովագրության դեպքում ապահովագրական գումարը որոշվում է ապահովագրողի և ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ: Քանի որ Հայաստանի Հանրապետությունում օրենքով գործում է այս ապահովագրության պարտադիր տեսակը՝ ԱՊՊԱ-ն, որով սահմանված է ապահովագրական գումարների սահմանաչափերը գույքային և մարմնական վնասվածքների հատուցման համար, այդ պատճառով

այս կամավոր տեսակը ապահովադիրները ձեռք են բերում՝ հիմնականում երրորդ կողմի հանդեպ իրենց պատասխանատվությունն ավելի բարձր ապահովագրական գումարով ապահովագրելու համար: Այս տեսակի անվանը՝ ԱՊԿԱ, կարող ենք հանդիպել ապահովագրական ընկերությունների կայքերում: Քանի որ այս տեսակի գծով ՀՀ-ում գործում է պարտադիրը՝ ԱՊՊԱ-ն, ավելի մանրամասն կներկայացվի այդ վերնագրի ներքո:

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԱՐՈՐԴՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ՝ ԴԺԲԱԽՏ ՊԱՏԱՀԱՐՆԵՐԻՑ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Այս ապահովագրության պայմանագրով ապահովագրության օբյեկտ է համարվում ավտոմեքենայում գտնվող վարորդի և ուղևորների կյանքն ու առողջությունը: Ապահովագրողը հատուցում է ճանապարհատրանսպորտային պատահարի հետևանքով վարորդի և ուղևորների կյանքին և առողջությանը հասցված վնասների ծախսերը ապահովագրական գումարի սահմաններում: Որպես կանոն, դժբախտ պատահարներից ապահովագրությունը ներառում է հետևյալ ռիսկերի փաթեթը.

- մահ դժբախտ պատահարի արդյունքում,
- մշտական անաշխատունակություն դժբախտ պատահարի արդյունքում,
- ժամանակավոր անաշխատունակություն դժբախտ պատահարի արդյունքում:

Վարորդի կամ ուղևորի մահվան դեպքի համար ապահովագրական գումարի չափը սահմանվում է ապահովագրության պայմանագրով ապահովագրողի և ապահովադրի փոխադարձ համաձայնությամբ: Եթե այդ գումարի մեծությունը պայմանագրում առանձին սահմանված չէ, ապա ընդունվում է, որ յուրաքանչյուր մարդու մահվան դեպքում ապահովագրողի պատասխանատվության չափը հավասար է ընդհանուր ապահովագրական գումարին: Եթե պատահարի արդյունքում մահացել են մի քանի մարդ, ապա նրանց բոլորի համար վճարվող հատուցման չափը հավասար կլինի ապահովագրական գումարին:

Սովորաբար ապահովագրության պայմանագրում նշվում է ընդհանուր և ամեն մարդու մահվան դեպքում ապահովագրական գումար (օրինակ՝ ընդհանուր ապահովագրական գումարը 8 000 000դ., իսկ ամեն մարդու մահվան դեպքում՝ 2 000 000դ): Պայմանագրում կարող է սահմանվել նաև ընդհանուր ապահովագրական գումար ինչպես մեկ տարվա, այնպես էլ մեկ տարվա ընթացքում ամեն մի պատահարի համար (օրինակ՝ մեկ տարվա ապահովագրական գումար 5 000 000դ և մեկ տարվա ընթացքում ամեն մի պատահարի համար՝ 2 500 000դ): Անկախ պատահարների քանակից և վնասների չափից՝ ապահովագրողը պայմանագրով սահմանված ընդհանուր ապահովագրական գումարից ավելի չի կարող հատուցել:

ՃՏՊ-ի արդյունքում մշտական անաշխատունակությունը ապահովագրված անձի առողջական այնպիսի վիճակ է, երբ նա կարիք ունի մշտական խնամքի

(օգնության կամ հսկողության) կամ կարող է իրականացնել աշխատանքային գործունեության միայն առանձին տեսակներ՝ հատուկ կազմակերպված անհատական պայմաններում և բժշկասոցիալական և փորձաքննության մարմինների որոշմամբ ստանում է 1-ին, 2-րդ կամ 3-րդ խմբի հաշմանդամի կարգավիճակ:

ՃՏՊ-ի արդյունքում ժամանակավոր անաշխատունակությունը ապահովագրված անձի այնպիսի առողջական վիճակն է, երբ նա ժամանակավորապես կորցնում է որևէ աշխատանքի նկատմամբ ունակությունները, որոնք վերականգնելի բնույթ ունեն, ստանում է ամբուլատոր կամ ստացիոնար բուժում համապատասխան բժշկական հաստատությունում և չի ստանում հաշմանդամության որևէ կարգ: Մինչև 16 տարեկան ապահովագրված անձի դեպքում անաշխատունակության ժամանակավոր կորուստ է համարվում վերջինիս առողջության ժամանակավոր կորուստը:

Ապահովագրողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով հատուցում է նաև դժբախտ պատահար տեղի ունենալու օրվանից հետո 1 տարվա ընթացքում ի հայտ եկած այն վնասվածքների ծախսերը, որոնք առաջացել են տվյալ պատահարի հետևանքով՝ անկախ պայմանագրի գործողության ավարտված լինելու փաստից:

Ապահովագրողն ապահովագրական հատուցում չի իրականացնում հետևյալ դեպքերում.

- պարզվում է, որ վարորդի կողմից օգտագործվել է ալկոհոլ, թմրադեղեր, հոգեմետ և այլ տոքսիկ նյութեր,
- ՃՏՊ-ի հետևանքով առաջացած առողջական խնդիրները չբուժելու, բժիշկի խորհրդին չհետևելու կամ ոչ ամբողջությամբ հետևելու, ինչպես նաև առաջացած առողջական խնդիրների բուժումից հրաժարվելու կամ բուժումն ուշացնելու պատճառով առաջացած առողջական խնդիրների բարդացման, ինչպես նաև դրա հետևանքով նոր վնասվածքների առաջացման դեպքում,
- քաղաքացիական հուզումների, պատերազմների, զորաշարժերի կամ ռազմական այլ գործողությունների, ահաբեկչական գործողությունների դեպքում,
- միջուկային պայթյունի, ճառագայթման կամ ռադիոակտիվ վարակի ազդեցության տակ առաջացած ՃՏՊ-ի դեպքում,
- ապահովադրի, ապահովագրված անձի կամ շահառուի կողմից կանխամտածված հակաիրավական հանցավոր գործողությունների կատարման կամ մասնակցության դեպքում, որոնք ուղղակի պատճառահետևանքային կապի մեջ են ապահովագրական պատահարի հետ,
- ապահովագրության պայմանագրի պայմաններով նախատեսված այլ դեպքերում:

ԱՊՊԱ (ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԻՑ ԲԽՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

ԱՊՊԱ պայմանագիրը ծածկում է երրորդ անձանց (հետիոտների, այլ մեքենայի վարորդի, տվյալ մեքենայի և այլ մեքենայի ուղևորների) պատճառված գույքային և անձնական վնասվածքները: ԱՊՊԱ պայմանագիրը չի ծածկում մեղավոր վարորդի կյանքին, մեքենային և այլ գույքին պատճառված վնասները, ինչպես նաև վարորդի ընտանիքի անդամների գույքային վնասները:

Անձնական վնասներ են համարվում տուժողի առողջությանը պատճառված վնասները և դրանց հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտներ), ինչպես նաև տուժողի մահը:

Տուժողի կրած անձնական և գույքային բնույթի վնասները հատուցում է այն ապահովագրական ընկերությունը, ում հետ ԱՊՊԱ պայմանգիր է կնքել տուժողը, որից հետո տուժողի ապահովագրական ընկերությունը հատուցված գումարի չափով հետ է ստանում մեղավոր կողմի ապահովագրական ընկերությունից: Եթե վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցը կամ դրա վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքելու պարտականություն ունեցող անձն անհայտ է, ապա տուժած անձինք կարող են հատուցում ստանալ միայն առողջության վերականգնման և մահվան ծախսերի դիմաց, այն էլ Ավտոապահովագրողների բյուրոյի երաշխավորման ֆոնդի հաշվին: Բացի վերը նշվածից՝ Ավտոապահովագրողների բյուրոյի երաշխավորման ֆոնդի հաշվից կարող են հատուցում ստանալ տուժած անձինք հետևյալ դեպքերում.

- վնաս պատճառված ավտոտրանսպորտային միջոցի գծով պատահարի պահին չկա գործող ԱՊՊԱ պայմանագիր,
- վնասը պատճառվել է հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի օգտագործմամբ,
- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի վերաբերյալ ԱՊՊԱ պայմանագիր կնքած ապահովագրական ընկերությունը ճանաչվել է անվճարունակ (սնանկ):

Տուժող չի համարվում և ապահովագրական հատուցում ստանալու իրավունքից չի օգտվում.

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատերը՝ ապահովադիրը, և վնաս պատճառած անձը, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ևս այլ անձանց պատկանող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործմամբ այլ անձանց կողմից պատճառվել է վնաս,
- այն անձինք, ովքեր գտնվել են հափշտակված կամ առանց հափշտակության նպատակի ապօրինաբար տիրացած ավտոտրանսպորտային միջոցի մեջ, բացառությամբ այն դեպքերի, երբ այդ անձինք տեղյակ չեն եղել, որ ավտոտրանսպորտային միջոցը հափշտակված կամ առանց հափշտակության նպա-

տակի ապօրինաբար տիրացած է եղել, կամ ավտոտրանսպորտային միջոցի մեջ գտնվել են իրենց կամքին հակառակ,

- վնաս պատճառած ավտոտրանսպորտային միջոցի սեփականատիրոջ կամ օրինական հիմքով այն տիրապետող այլ անձի ընտանիքի անդամները գույքին պատճառված վնասների մասով, բացառությամբ այն դեպքերի, երբ նրանց ևս այլ անձանց պատկանող ավտոտրանսպորտային միջոցների օգտագործմամբ այլ անձինք վնաս են պատճառել:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԳՈՒՄԱՐ (ԱՊԱՀՈՎԱԳՐՈՂԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ՍԱՀՄԱՆԱՉԱՓ)

Ապահովագրական գումարն ապահովագրական պատահարի դեպքում ապահովագրական ընկերության կողմից տուժողին վճարման ենթակա ապահովագրական հատուցման առավելագույն չափն է: ԱՊՊԱ-ի գծով ապահովագրական գումարի առավելագույն մեծություններն են.

1. Անձնական վնասների դեպքում՝

- Մեկ ապահովագրական պատահարի համար 33 000 000 ՀՀ դրամ
- Յուրաքանչյուր տուժողի համար 3 300 000 ՀՀ դրամ

2. Գույքային վնասների դեպքում՝

- Մեկ ապահովագրական պատահարի համար 18 000 000 ՀՀ դրամ
- Յուրաքանչյուր տուժողի համար 1 800 000 ՀՀ դրամ

Եթե անձնական վնասներ են կրել մեկից ավելի անձինք, և վնասների ընդհանուր գումարը գերազանցում է յուրաքանչյուր ապահովագրական պատահարի համար սահմանված ապահովագրական գումարը, ապա՝

- յուրաքանչյուր տուժողի կհատուցվի վնասների ընդհանուր գումարում նրան պատճառված անձնական վնասների չափին համամասնորեն, բայց ոչ ավելի քան 3 300 000 ՀՀ դրամը,
- տուժողներից մեկի (մի քանիսի) համար համամասնորեն հաշվարկված գումարը (գումարներից յուրաքանչյուրը) գերազանցում է 3 300 000 ՀՀ դրամը, ապա գերազանցող մասով (մասերով) հատուցվում են մյուս տուժողներին պատճառված վնասները այդ վնասներին համամասնորեն, բայց ոչ ավելի, քան 3 300 000 ՀՀ դրամը:

Նույն համամասնության մեխանիզմով հատուցվում է նաև գույքային վնասները գույքայինի համար նախատեսված ապահովագրական գումարի սահմաններում:

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԱՀԱՐ

Ապահովագրական պատահար է համարվում ՀՀ և ԱՀ տարածքներում ավտոմեքենայի օգտագործման հետևանքով տուժող անձին կամ անձանց պատճառված գույքային և անձնական վնասները:

ԱՊՊԱ-ի կանոններով՝ ապահովագրական պատահար չեն համարվում հետևյալ դեպքերը.

1. անհաղթահարելի ուժի (ֆորս մաժոր) հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,
2. ահաբեկչական, ռազմական գործողությունների, խռովությունների կամ զանգվածային անկարգությունների հետևանքով առաջացած պատահարի արդյունքում պատճառված վնասները,
3. վտանգավոր թափոնների տեղափոխման ժամանակ պատճառված վնասները, եթե դրանք կապված են բացառապես վտանգավոր թափոնների հետ,
4. տուժողի դիտավորության հետևանքով տվյալ տուժողին պատճառված վնասները,
5. պետական սեփականություն համարվող բուսական կամ կենդանական աշխարհին, օդին, մակերևութային կամ ստորգետնյա ջրերին, ընդերքին պատճառված վնասները,
6. արվեստի գործերին, թանկարժեք զարդերին, քարերին կամ մետաղներին պատճառված վնասները,
7. բեռների փոխադրման պայմանագրով փոխադրվող բեռներին պատճառված վնասները:

Ավտոտրանսպորտային միջոցների ապահովագրության տեսակներով կնքվող ապահովագրության պայմանագրերի դրույթների մասին ավելի մանրամասն տեղեկատվություն նշվում է ապահովագրության պայմանագրերին կցվող կանոններում, մասնավորապես կողմերի իրավունքներն ու պարտականությունները, ապահովագրավճարների վճարման ժամկետներն ու կարգը, հատուցումների տրամադրման ժամկետները, վեճերի լուծման կարգը և այլ դրույթներ:

Բանալի բառեր՝ *ֆրանշիզա, «ԿԱՍԿՈ» ապահովագրություն, ԱՊՊԱ ապահովագրություն, վարորդի և ուղևորների ապահովագրություն, ապահովագրվող ռիսկեր, չհատուցվող դեպքեր:*

Օգտագործված գրականություն

www.paap.am

1. ՀՀ օրենքը ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին (ընդունված 9-ը ապրիլի, 2007թ):
2. ՀՀ օրենքը ԱՊՊԱ-ի մասին (ընդունված 18-ը մայիսի, 2010թ.):
3. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 54:

AUTOMOBILE INSURANCE IN THE REPUBLIC OF ARMENIA

A. P. BAGHINYAN
GSU Lecturer

The article describes automobile insurance in Armenia, the current principles and the importance of insurance. Voluntary types of insurance, such as CASCO insurance, insurance of civil liability, insurance of drivers and passengers against accident, and compulsory insurance type CTP, are described in detail. The insurance objects, insurance risks, exceptions, the principles of calculating insurance amounts, policy points, the value of the franchise, types of franchise and their purpose of applicability are described for each type.

АВТОМОБИЛЬНОЕ СТРАХОВАНИЕ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

А. П. БАГИНЯН
Преподаватель ГГУ

В статье рассмотрено автомобильное страхование в Армении, действующие принципы, важность страхования. Подробно описаны добровольные виды страхования в этой области: КАСКО страхование, добровольное страхование гражданской ответственности, страхование водителей и пассажиров от несчастного случая и обязательное страхование - ОСАГО. Для каждого вида описаны обьекты страхования, риски страхования, исключения, принципы расчета страховых сумм, пункты полисов, значение франшизы, виды франшизы и цели их применимости.

«ՍԵՎԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ՊԱՐԿԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՈՐՊԵՍ ԷԿՈՏՈՒՐԻԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՋՈՑ

Դ. Լ. ԹՈՐՈՍՅԱՆ
Սևանի զբոսաշրջության գրասենյակի պատասխանատու,
ԳՊՀ դասախոս

Ակնհայտ է, որ Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունեն բոլոր նախապայմանները զբոսաշրջությունը զարգացնելու ուղղությամբ: Եթե ՀՀ կառավարությունը զբոսաշրջությունը հայտարարել է տնտեսության գերակա ճյուղ՝ նպատակ ունենալով զարգացնել զբոսաշրջությունը, ապա հնարավորություն կստեղծվի այն դարձնել տնտեսության շարժիչ ուժը: ԽՍՀՄ կազմում բավական բարեկեցիկ դիրքեր ունեցող մեր հանրապետությունը հաջողության էր հասել՝ զարգացնելով արտադրության ոլորտը: Ներկայումս թերևս դժվարություններ կան այդ ոլորտում, սակայն հիանալի հնարավորություն է բացվել ծառայությունների ոլորտի, մասնավորապես զբոսաշրջության համար: Այս ոլորտի զարգացման էական դրդապատճառը շահույթ հետապնդելն է: Հայտնի է, որ այսօր ձեռնարկատերերն իրենց հիմնական շահույթը ստանում են մայրաքաղաքից, իսկ մարզերը շարունակում են առաջվա պես մնալ անիրապույր՝ շահույթ ստանալու տեսակետից: Զբոսաշրջության ոլորտը, զբոսաշրջության տեսակներով հանդերձ, կոտրում է այս կարծրատիպը և հնարավորություն ընձեռում շահույթ ակնկալելու և ստանալու նաև մարզերում՝ այդպես փորձելով դիվերսիֆիկացնել կենտրոնից զատ նաև ՀՀ տարածքի հյուսիսն ու հարավը, արևելքն ու արևմուտքը:

Անդրադառնալով ՀՀ ամենամեծ վարչատարածքային հատվածին՝ Գեղարքունիքի մարզին, նշենք, որ այն գտնվում է կենտրոնական հիանալի խաչմերուկում, որտեղով անցնում են պետական, համայնքային, միջհամայնքային ճանապարհներ՝ ակամայից ուղղորդելով նաև զբոսաշրջային հոսքերը: Մարզում զբոսաշրջության զարգացմանը խոչընդոտում են տարատեսակ հանգամանքներ՝ սկսած ոլորտին անհրաժեշտ կրթված մարդկային ռեսուրսներից մինչև սեզոնայնություն և այլն: Առաջին լուծումը բանիմաց կադրերով զբոսաշրջության ոլորտը համալրելն է, որի դեպքում առաջարկվում է օգտվել Սևանի պետական քոլեջի «Սպասարկման կազմակերպումը հյուրանոցներում և զբոսաշրջային համալիրներում» բաժնի, ինչպես նաև Գավառի պետական համալսարանի «Սերվիս» բաժնի շրջանավարտների ծառայություններից: Սեզոնայնության լուծումը բարդություններ ունի. լիարժեք իրականացվում է միայն ամառային լողափնյա հանգիստը, սակայն բաց է մնում ամբողջական զբոսաշրջային ծառայություններ մատուցելու շուրջտարյա հնարավորությունը: Չնայած ենթակառուցվածքների թերզարգացությանը, այնուամենայնիվ, որոշակի թվով զբոսաշրջիկներ հետաքրքրություն են ցուցաբերում ձմեռային ակտիվ հանգստի կազմակերպման նկատմամբ Սևան քաղաքում: Հետևաբար եթե կա պահանջարկ, պետք է լինի նաև համապատասխան առա-

ջարկ: Նշված պահանջարկը ձևավորվել է Սևանի զբոսաշրջային տեղեկատվական գրասենյակի երկար տարիների աշխատանքի արդյունքում: Պահանջարկի լուծումը հնարավոր է տեղական ինքնակառավարման մարմինների, մարզպետարանի, ներդրումների և զարգացման, սփյուռքի նախարարությունների, արտգործնախարարության, կառավարության, հասարակական դոնոր կազմակերպությունների և բարերարների միջոցով:

Եվս մեկ կարևոր պահանջարկ է նկատվում նաև զբոսաշրջային բուն սեզոնի ընթացքում: Տվյալ պահանջարկի հիմքում ընկած է էկոտուրիզմի զարգացումը: Ինչպես հայտնի է, Հայաստան այցելող զբոսաշրջիկների գերակշիռ մասը կազմում են հենց պատմամշակութային տուրիզմի սիրահարները, որոնք, սակայն, մի քանի օր անց հոգնում են միօրինակությունից և պահանջում տուրիզմի որևէ այլ տեսակից օգտվելու հնարավորություն՝ առաջինը նշելով էկոլոգիական տուրիզմի հավանականությունը: Անդրադառնալով էկոտուրիզմի հնարավորություններին Սևանա լճի շրջակայքում՝ կարելի է առանձնացնել «Սևան» ազգային պարկի և Սևանի բուսաբանական այգու հնարավորությունները: Էկոտուրիզմի գաղափարն ավելի ճիշտ պատկերացնելու համար նշենք, թե դրան ինչ սահմանում է տրվել Էկոտուրիզմի միջազգային կազմակերպության (The International Ecotourism Society) կողմից. «Էկոտուրիզմը… պատասխանատու ճանապարհորդություն է դեպի բնության տարածքներ, որը պահպանում է շրջակա միջավայրը և ապահովում տեղի ժողովրդի բարեկեցությունը»:

Հայկական էկոտուրիզմի ասոցիացիան էկոտուրիզմը բնութագրել է հետևյալ կերպ. «Տուրիզմ, որը նպաստում է բնական և մշակութային ժառանգության ճանաչմանն ու հասկանալուն և բերում է տեղի բնակչությանն այնքան շահույթ, որպեսզի մարդիկ գնահատեն ու պահպանեն շրջակա միջավայրը՝ որպես եկամուտի աղբյուր»:

Թե՛ առաջին և թե՛ երկրորդ սահմանումներում խոսքը բնության, շրջակա միջավայրի պահպանման մասին է:

Այս առումով կարևոր դեր կարող է խաղալ «Սևան» ազգային պարկն ընդհանրապես: Այն հիմնադրվել է Հայկական ՍՍՀ Կոմկուսի կենտկոմի և Մինիստրների խորհրդի որոշմամբ դեռ 1978 թվականի մարտի 14-ի թիվ 125 որոշմամբ՝ Սևանա լճի բնական էկոհամակարգը պահպանելու նկատառումներից ելնելով: Գտնվելով Գեղարքունիքի մարզում՝ այն շրջապատված է Արեգունու, Սևանի, Փամբակի, Գեղամա և Վարդենիսի լեռնաշղթաներով և Սևանա լճի հայելու հետ միասին ընդգրկում է 147.456 հա տարածք: Արևային ժամերի քանակը տարեկան տատանվում է 2600-2800-ի միջև: Առավելագույն ջերմաստիճանը գրանցվում է հուլիս-օգոստոս ամիսներին՝ կազմելով +28 աստիճան C, իսկ նվազագույնը՝ հունվար-փետրվար ամիսներին: Տարվա միջին ջեմաստիճանը տատանվում է 5-6 աստիճան C-ի միջև: Ձմռանը Փոքր Սևանում օդի միջին հարբերական խոնավությունը կազմում է 70-75%, Մեծ Սևանում՝ 80-85%, իսկ ամռանը՝ 65% Փոքր Սևանում և 75% Մեծ Սևանում: Ավազանում քամիների միջին տարեկան արագությունը տատանվում է 1.5-6.0 մ/վրկ, ձնածածկը ձևավորվում է նոյեմբերի կեսերին, իսկ

կայուն ծածկը՝ դեկտեմբերի սկզբին, հալոցքների սկիզբը համարվում է մարտի սկզբից ապրիլի վերջն ընկած ողջ ժամանակաշրջանը: Ազգային պարկի հիմնական տարածքն զբաղեցնում է Հարավային Կովկասի խմելու ջրի պաշարատեղի հանդիսացող Սևանա լիճը: Սևանա լիճ են թափվում 28 գետ և գետակներ, որոնցից 4-ը՝ Փոքր Սևան, 24-ը՝ Մեծ Սևան: 5 գետեր սկիզբ են առնում Գեղամա լեռնազանգվածից, 9-ը՝ Վարդենիսի, 11-ը՝ Սևանի, 2-ը՝ Արեգունու լեռնաշղթաներից, իսկ Ձկնագետը՝ Փամբակից: Լճից դուրս եկող միակ գետը Հրազդանն է: Ազգային պարկի ֆլորան կազմված է 28 ծառատեսակներից, 42 թփերից, 866 բազմամյա խոտաբույսերից, 209 միամյա ու երկամյա բուսատեսակներից, որոնցից շուրջ 60 բուսատեսակ օգտագործվում է որպես դեղաբույս, և շուրջ 100-ն էլ համարվում են ուտելու համար պիտանի: Ազգային պարկի և պահպանական գոտու տարածքն ընդգրկող հատվածում հնարավոր է հանդիպել 23 էնդեմիկ բուսատեսակի, որոնցից 13-ը համարվում են Սևանի ֆլորիստիկ շրջանի էնդեմիկներ: Սևանի ավազանում հանդիպում են 267 տեսակի թռչուններ՝ խայտաբադ, կարմիր բադ, կոնչան բադ, կարմրակտուց սուզաբադ, սև փարփար, սպիտակապոչ արծիվ, կիվիվ, ճահճաճուռակ, ծիծեռնակ, փայտփոր, հայկական որոր և այլն: Վերջինս՝ հայկական որորը (Laurus armenicus), էնդեմիկ տեսակ է համարվում: Որսի տեսանկյունից հետաքրքրություն են ներկայացնում սովորական տատրակը, լորը, թխակապույտ աղավնին, քարակաքավը և այլն: Պարկն ունի 4 տարածքագործառական գոտիներ՝ արգելոցային, արգելավայրային, ռեկրեացիոն և տնտեսական: Արգելոցային տարածքներն են՝ Արտանիշ, Գիլլի, Լիճք-Արգիչի և Նորաշեն: Վերջինս զբաղեցնում է 839 հա մակերես, որի ցամաքային տարածքը կազմում է 341 հա, իսկ ջրայինը՝ 498 հա: Արգելոցի երկարությունը կազմում է 3.9 կմ, իսկ լայնությունը՝ 3.0 կմ: Արգելոցի հիմնական նպատակը հայկական որորի վերարտադրությունն է: Արգելոցն առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում թռչնադիտարկումների սիրահարների համար: Արգելոցի տարածքում կառուցվել են տեսադիտակներ, որոնց շնորհիվ զբոսաշրջիկները հնարավորություն են ստանում առանց շտապելու հետևել թռչունների տեղաշարժին, վարքի տարբեր դրսևորումներին, երբեմն, կախված սեզոնայնությունից, ականատես լինելու նաև հազվադեպ հանդիպող չվող թռչունների:

Սևանա լճի ավազանի լեռնային մաքուր օդն ու կլիման, խոնավությունն ու արևշատությունը, օպտիմալ ջերմաստիճանները, ինտենսիվ ուլտրամանուշակագույն ճառագայթումը և հանքային բուժիչ ջրերը հսկայական առողջարարական պաշարներ են: Բժշկական տուրիզմով զբաղվողներին կհետաքրքրեն նաև «Սևան» և «Լիճք» հանքային ջրերը, որոնք հիանալի օգնում են աղեստամոքսային տրակտի բուժմանը: Հաշվի առնելով Վարդենիսի, Լիճք-Մարտունի և Գավառ-Նորատուսի բնական բուժիչ պաշարների առկայությունը (դրանք են՝ հանքային ջրի պաշարները, ցեխը և տորֆը)՝ կարելի է զարգացնել շուրջտարյա գործունեություն ծավալող առողջարանային համալիրներ՝ փորձելով վերացնել սեզոնայնություն հասկացությունը Գեղարքունիքի մարզում:

Հայաստանի Հանրապետությունում գոյություն ունի 24.000 պատմամշակութային հուշարձան, որից «Սևան» ազգային պարկի և դրա պահպանական գոտու տարածքներում հաշվվում է 1489 պատմության և մշակույթի անշարժ հուշարձան, այդ թվում՝ 5 քարե դարի բնակատեղի, 78 ամրոց, 2 աշտարակ, 2 քարավանատուն, 3 սեպագիր արձանագրություն, 135 եկեղեցի, 8 վանական համալիր, 89 մատուռ, 107 դամբարանադաշտ և այլն: Այս ամենի շնորհիվ Գեղարքունիքի մարզը հիմնականում օգտագործվում է որպես պատմամշակութային տուրիզմը ներառող հիմնական տարածաշրջաններից մեկը: Սակայն հաշվի առնելով նույն հնարավորությունները՝ պետք է փորձել զարգացնել նաև էկոտուրիզմը: Ծանոթ լինելով Ճայերի կղզու հնարավորությանը՝ շատ հեշտորեն կարելի է գործածության մեջ դնել թռչնադիտական (birdwatching) տուրերը, որոնք ընդունված և տարածված են արտասահմանյան զբոսաշրջիկների շրջանում, որոնք հետաքրքրված են հատկապես բնության հետ կապված զբոսաշրջությամբ: Տեղի բնակչությունը դեռևս բավականաչափ հետաքրքրություն չի ցուցաբերում այս տուրերի նկատմամբ, սակայն արտասահմանցիները պատրաստ են նույնիսկ վճարել և հերթ կանգնել տոմսերը ձեռք բերելու համար: Այս տուրերի ժամանակ առանցքային դերակատար է համարվում մասնագետ ուղեկցորդը (birdwatching guide), որը պետք է ուղեկցի այցելուներին թռչունների գտնվելու ճշգրիտ վայրերը և հանդես գա իր մեկնաբանություն-բացատրություններով: Զբոսաշրջության ոլորտում առանձնահատուկ տեղ են գրավում բացատրելու, մեկնաբանելու, ներկայացնելու ունակությունները: Այդ իսկ պատճառով անհրաժեշտ է կազմակերպել հատուկ դասընթացներ՝ մասնագիտացված, բարձր որակավորում ունեցող ուղեկցորդներ պատրաստելու համար: Այդ դասընթացներում պետք է ուշադրություն դարձվի օտար լեզուների ուսուցմանը, ներգրավվեն նման տարածքների մերձակա համայնքների ներկայացուցիչները, մասնագիտացված տեղական կամ միջազգային ուղեկցորդներ և այլն: Նմանատիպ վայրերում զբոսաշրջության զարգացման գործընթացները պետք է հետապնդեն հետևյալ նպատակը՝ գտնել զբոսաշրջային տնտեսության մեջ ինտեգրվելու ուղիներ, որպեսզի զբոսաշրջիկների կողմից ծախսվող գումարներից մասնաբաժին ստացվի և արդյունավետ կառավարվի ոլորտը՝ կանխարգելելով շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունը:

ՀՀ ԳԱԱ բուսաբանական այգու Սևանի բաժանմունքը հիմնադրվել է 1944 թվականին Սևան քաղաքի հյուսիս-արևելյան հատվածում՝ բնական դենդրոֆլորայից զուրկ տարածքի վրա:

Այգին գտնվում է ծովի մակարդակից 2000 մետր բարձրության վրա՝ զբաղեցնելով 6.5 հա տարածք: Այգու նպատակն է երկրագնդի տարբեր բուսաաշխարհագրական շրջաններից բարձր, գեղազարդ և տնտեսապես արժեքավոր բուսատեսակների ներմուծումը, ցուցադրական գիտական հավաքածուի ստեղծումը, գոյության նոր պայմաններում բույսերի հարմարվողականության բացահայտումը՝ կանաչապատման ու անտառաբուծության մեջ օգտագործելու նպատակով: Բուսաբանական այգում հավաքածուները տեղաբաշխված են 4 ծառուղիների (բարդի-

ների, արոսենիների, սոճիների, կաղնիների, հացենիների և կեչիների) և էքսպոզիցիոն հողամասերի ձևով: Այգու դենդրոհավաքածուն կազմված է 38 ընտանիքի 155 ցեղի պատկանող մոտ 443 տեսակից, որոնցում ընդգրկված է փշատերևների 50 տեսակ, տերևավորների 339 տեսակ, մշտադալարների 5 տեսակ: Այգում ներկայացված են նաև ծառերի 235 տեսակ, թփերի 208 և լիանների 14 տեսակ:

Հատկապես հարուստ տեսակային կազմով են ներկայացված հետևյալ ընտանիքները. նոճազգիներ (Cupressaceae)՝ կենսածառ արևելյան (Biota orientalis), գետնանոճի լավսոնի (Chamaecyparis lawsoniana), գիհի սովորական (Jiuniperus comunis), թույա արևմտյան (Thuja occidentalis) և այլն:

Սոճազգիներ (Pinaceae)՝ եղևնի արծաթափայլ (Picea glauca), եղևնի փշոտ (Picea pungens), եղևնի կովկասյան (Abies nordmaniana), սոճի կովկասյան (Pinus hamata), սոճի Ղրիմի (Pinus ponderosa) և այլն:

Թխկազգիներ (Aceraceae), կեչազգիներ (Betulaceae), լոբազգիներ (Fabaceae), վարդազգիներ (Rosaceae) և այլն:

Այգում ստեղծված է ծաղկազարդ բույսերի և դեկորատիվ ծաղիկների գեղեցիկ հավաքածու: Այգին նաև ուսումնական բազա է տարածաշրջանի տարբեր կրթական և ուսումնական հաստատությունների համար:

Բնության և բնական պարկերի եվրոպական ֆեդերացիան (FNNPE, European Federation for Nature and Natural Parks) նախանշել է զբոսաշրջության համապատասխան խնդիրները տարբեր ոլորտներում պահպանվող տարածքներում: Ստորև ներկայացվում է դրանցից մի քանիսը:

Բնապահպանական խնդիրներ. էկոլոգիապես մաքուր միջավայրի պահպանություն:

Մշակութային խնդիրներ. տեղական բնակչության և այցելուների մոտ շրջակա միջավայրի վերաբերյալ գիտելիքների մակարդակի և իրազեկության բարձրացում:

Սոցիալական խնդիրներ. տեղական բնակչության կենսամակարդակի բարելավումը և մասնագիտական որակավորման բարձրացում:

Տնտեսական խնդիրներ. տարածքների պահպանության համար աճող եկամուտների ապահովում:

Հայաստանի Հանրապետությունում բնության հատուկ պահպանվող տարածքներում (ԲՀՊՏ) զբոսաշրջության զարգացման առկա իրավական հիմքերն են.

1) ԲՀՊՏ-ների հիմքի վրա գործող ՊՈԱԿ-ների կանոնադրության մեջ թույլատրելի ձեռնարկատիրական գործունեության տեսակների շարքում ամրագրված զբոսաշրջության և գիտաճանաչողական զբոսաշրջության դրույթը,

2) «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքը,

3) «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքը:

Ակնհայտ է, որ թվարկված իրավական հիմքերը բավարար չեն էկոտուրիզմի զարգացման ու կազմակերպման համար, այստեղ կարիք կա աշխատանքներ կազմակերպել ավելի խորը հիմքեր ձեռք բերելու ուղղությամբ, այն է՝ ունենալու Ազգային ռազմավարություն, որը բխում է ՀՀ կառավարության՝ կենսաբազմա-

զանության մասին Կոնվենցիայի շրջանակներում ստանձնած պարտավորություններից:

Հաշվի առնելով Սևանի տարածաշրջանում «Սևան» ազգային պարկի, ՀՀ ԳԱԱ բուսաբանական այգու Սևանի բաժանմունքի գործունեությունը, ինչպես նաև Վարդենիսի, Լիճք-Մարտունու և Գավառ-Նորատուսի բնական բուժիչ պաշարների առկայությունը՝ կարելի է համոզված ասել, որ Գեղարքունիքի մարզում կան բոլոր անհրաժեշտ նախապայմանները ողջ տարվա կտրվածքով զբոսաշրջությունը զարգացնելու ուղղությամբ և պատմամշակութային տուրիզմից արդեն բավականաչափ հոգնած զբոսաշրջիկներին ուղղորդելու դեպի տեղական էկոտուրիստական ու առողջարարական արժեքներ ունեցող վայրեր:

Բանալի բառեր՝ *զբոսաշրջություն, էկոտուրիզմ, «Սևան» ազգային պարկ, սեզոնայնություն*

Օգտագործված գրականություն

1. «Զբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, հոդված 4:
2. «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենք:
3. «Հայաստանի բնության հատուկ պահպանվող տարածքների զարգացման պետական ռազմավարություն և գործողությունների ազգային ծրագիր», ՀՀ բնապահպանության նախարարություն, 2003:
4. «Սևան» ազգային պարկ (ուղեցույց), ՀՀ բնապահպանության նախարարություն, 2007:
5. «Սևան» ազգային պարկի բուսական և կենդանական աշխարհը (ուղեցույց), 2010:
6. Սևանի բուսաբանական այգի (ուղեցույց), ՀՀ ԳԱԱ բուսաբանության ինստիտուտ:
7. Ժաննա Գալյան, Էկոտուրիզմը բնության հատուկ պահպանվող տարածքներում, պլանավորման և կառավարման ձեռնարկ, 2007:
8. Գեղարքունիքի մարզի ուղեցույց, 2012:
9. Գեղարքունիքի մարզի ուղեցույց, 2016:
10. www.mineconomy.am
11. www.sevanpark.am
12. www.ecotourismarmenia.com
13. www.bird-hide.co.uk
14. www.wildlifewatchingsupplies.co.uk

"SEVAN" NATIONAL PARK'S OPPORTUNITIES AS A TOOL FOR ECOTOURISM DEVELOPMENT

D. L. TOROSYAN
Manager of the tourism center of Sevan
GSU Lecturer

The vast majority of tourists visiting Armenia are history and culture lovers but after a couple of days they get tired of monotony and require another type of tourism. Ecotourism is mentioned as the first choice. As an ecotourism area around the lake Sevan, we can mention the opportunities of "Sevan" National Park and Sevan's botanical garden. In particular, the "Sevan" National park's Norashen's reserve might be interesting for lovers of bird watching. About 443 species of trees and bushes can be seen in the botanical garden of Sevan.

ВОЗМОЖНОСТИ НАЦИОНАЛЬНОГО ПАРКА "СЕВАН" КАК ИНСТРУМЕНТА РАЗВИТИЯ ЭКОТУРИЗМА

Д. Л. ТОРОСЯН
Руководитель Туристического Центра г. Севан
преподаватель ГГУ

Большинство туристов, посещающих Армению, - любители культурно-исторического туризма, которые, однако, через некоторое время устают от однообразия и ищут другие сферы туризма, в основном проявляют интерес к тем областям, которые затрагивают экологию. Вокруг озера Севан есть возможность экологического туризма. В частности можно выделить Национальный парк "Севан", а так же ботанический сад, где можно будет увидеть около 443 вида деревьев и кустарников. Любители орнитологии могут посетить Норашенский заповедник.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ա. Վ. ՄԱՐԴՈՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԵՄՀ «Կառավարում և SS» ամբիոնի վարիչ,
ԳՊՀ դասախոս

Տնտեսական զարգացման ժամանակակից գիտական գնահատումները վկայում են, որ բնապահպանական և բնօգտագործման վճարների համակարգը դասվում է շրջակա միջավայրի պահպանության և ռացիոնալ բնօգտագործման կառավարման թերևս ամենաարդյունավետ տնտեսական լծակների շարքը, որի հիմնական նպատակը տնտեսվարող սուբյեկտների կողմից բնական ռեսուրսներին և շրջակա միջավայրին հասցված վնասի փոխհատուցումն ու բնապահպանական գործունեության խթանումն է: Շուկայական տնտեսության անցման շրջանում տնտեսական զարգացումն ու տնտեսական աճը դարձել են յուրաքանչյուր երկրի տնտեսական քաղաքականության երկարաժամկետ և կարևորագույն նպատակ:

Տնտեսական աճը հաճախ ձեռք է բերվում ի հաշիվ բնական ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման և շրջակա միջավայրի որակի անցանկալի փոփոխությունների: Գիտական ուսումնասիրություններից հայտնի է նաև, որ գոյություն ունի սերտ կապ շրջակա միջավայրի որակի և տնտեսական զարգացման ցուցանիշների միջև: Ընդ որում շատ դեպքերում այդ կապը հակադարձ է, իսկ տնտեսական զարգացման ցուցանիշների աճը հանգեցնում է շրջակա միջավայրի որակի վատթարացման: Դա բացատրվում է նրանով, որ գործունեության գրեթե բոլոր տեսակներում հիմնականում գերակա է տնտեսական շահը՝ առանց հաշվի առնելու այդ գործունեության հետևանքով շրջակա միջավայրին հասցված հնարավոր էկոլոգիական վնասը: Համաձայն ժամանակակից գիտական գնահատումների՝ որպես տնտեսական զարգացման էկոլոգիական հետևանքներն արտահայտող ցուցանիշ է դիտարկվում «էկոլոգիական հետքը»:

Վերջինիս կարևորությունն այն է, որ ազգային և համաշխարհային մակարդակներում նմանատիպ գործիքների օգտագործումը հնարավորություն է տալիս բարձրացնելու կառավարման արդյունավետությունը շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունեցող գործունեության բոլոր ոլորտներում՝ ապահովելով յուրաքանչյուր երկրի բնակչության էկոլոգիական անվտանգությունը:

Հայտնի է, որ 21-րդ դարի առաջին տասնամյակը ՀՀ տնտեսական բարձր աճի ժամանակաշրջան էր: Տնտեսության գրեթե բոլոր հատվածների զգալի զարգացումները նպաստեցին 2000-2008 թթ. ընթացքում համախառն ներքին արդյունքի աճին: Սակայն 2008թ. համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը լրջորեն վտանգեց Հայաստանի Հանրապետության տնտեսական կայունությունը, և արդեն 2009 թվականին արձանագրվեց տնտեսության 14.1% անկում, և թեև 2010 թ. ՀՆԱ-ն վերականգնեց աճի միտումը (2.2%) , տնտեսության մի շարք առաջատար ճյուղեր դեռևս մինչ այժմ ճգնաժամ են ապրում: 2016 թվա-

կանին ևս Հայաստանի Հանրապետության տնտեսությունում նկատվել են ճգնաժամային դրսևորումներ, և դա հատկապես պայմանավորված է արևմտյան երկրների կողմից Ռուսաստանի Դաշնության նկատմամբ կիրառվող պատժամիջոցներով:

ՀՀ-ում վերջին տասնամյակում տեսչական, վերահսկողական աշխատանքների արդյունավետության բարձրացմանը և երկրի տնտեսության զարգացմանը զուգընթաց զգալիորեն ավելացել են բնապահպանական և բնօգտագործման վճարների գծով պետական բյուջեի մուտքերը՝ նպաստավոր պայմաններ ստեղծելով ՀՀ-ում բնապահպանական հիմնախնդիրների լուծմանը նպատակաուղղված ծրագրերի և միջոցառումների ֆինանսավորման համար:

Գծապատկեր 1

Բնօգտագործման և բնապահպանական վճարներն ըստ տարիների (մլն. դրամ)

	2009	2010	2011	2012	2013	2014	2015
Բնօգտագործման	2 788.4	4 073.5	4 792.7	1091.9	1224.7	1 539.4	1806.4
Բնապահպանական	591.1	735.1	803.4	546.5	706.1	1 430.4	1 215.4
Ընդամենը	3 379.5	4 808.6	5 596.1	1 638.3	1 930.8	2 969.8	3 021.8

Ինչպես երևում է գծապատկեր 1-ից, 2009-2011թթ բնապահպանական և բնօգտագործման վճարներում աճ է նկատվել, 2012 թվականից կտրուկ անկում է արձանագրվել, իսկ 2013 թվականից նկատվել է աճ: Չնայած ՀՆԱ-ի հինգ տարիների ընթացքում աճ է արձանագրվել, սակայն ՀՆԱ դեֆլյատորը ունեցել է նվազում և 2009-2015թթ. ունեցել է համապատասխանաբար 2.6, 7.8, 4.3, -1,2, 3.2, 2.3, 1.2 %: ՀՆԱ-ի դեֆլյատորը, չնայած ՀՆԱ-ի աճին, 2012թվականից արձանագրել է անկում, որն արտահայտվել է բնօգտագործման և բնապահպանական վճարների ծավալի վրա: Փաստենք նաև, որ ՀՆԱ-ի աճի վրա էական ազդեցություն է ունեցել նաև ինֆլյացիան: Համաձայն «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» ՀՀ օրենքի՝ բնապահպանական վճարը բնապահպանական միջոցառումների իրականացման համար անհրաժեշտ դրամական միջոցների գոյացման նպատակով պետական բյուջե վճարվող պարտադիր վճարն է: Առանձնացվում են բնապահպանական վճարի հետևյալ տեսակները.


1. վնասակար նյութերը շրջակա միջավայր (օդային և ջրային ավազան) արտանետելուվճար,
2. արտադրության և սպառման թափոնները շրջակա միջավայրում սահմանված կարգով տեղադրելու վճար,
3. շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների վճար:

Հիմք ընդունելով այդ դասակարգումը՝ նշենք, որ 2014 թ., օրինակ, ջրային ավազան թափված աղտոտիչ նյութերի դիմաց վճարը կազմել է բնապահպանական ընդհանուր վճարների 15.5%-ը, արտանետման անշարժ աղբյուրներից մթնոլորտ արտանետված վնասակար նյութերի դիմաց վճարը՝ 9.2%-ը: Ինչ վերաբերում է ՀՀ-ում արտադրված և իրացված, շրջակա միջավայրին վնաս պատ-

ճառող ապրանքների դիմաց վճարին, ապա այն կազմել է բնապահպանական ընդհանուր վճարների 70.8%:

Գրաֆիկ 1

Բնապահպանական վճարներն ըստ ուղղությունների, 2015թ.




Դժվար չէ նկատել, որ բնապահպանական վճարների կառուցվածքում առավել մեծ տեսակարար կշիռ (գրեթե 71%) ունեն ՀՀ-ում արտադրված և իրացված, շրջակա միջավայրին վնաս պատճառող ապրանքների դիմաց կատարված վճարները: Օդային ավազանի աղտոտման վճարների աճը պայմանավորված է եղել շարժական աղբյուրներից օդային ավազան վնասակար նյութերի արտանետման ծավալների ավելացմամբ, որոշ տեսակների գծով բնապահպանական վճարների դրույքաչափերի բարձրացմամբ, ինչպես նաև նոր վճարատեսակների կիրառմամբ (օրինակ՝ հին ավտոմեքենաների ներմուծման ժամանակ ներդրված բնապահպանական վճարների համակարգը): Այնուամենայնիվ, մթնոլորտային օդի որակական ցուցանիշների դրական միտումներն աննշան են հատկապես շարժական աղբյուրների բացասական ազդեցության մասով: Ինչ վերաբերում է ջրային ավազանի աղտոտման գծով վճարներին, ապա կարող ենք նկատել, որ 2007-2013թթ. ցուցանիշների դրական տեղաշարժը 2014 թ. փոխարինվել է վճարների կտրուկ աճով՝ պայմանավորված ջրային ավազանն աղտոտող նյութերի քանակական ավելացմամբ:

Համաձայն վիճակագրական տվյալների՝ ՀՀ-ում բնօգտագործման վճարների 54%-ից ավելին պատկանում է ոչ մետաղական հանածոների արդյունահանման դիմաց վճարին: Հետևապես՝ առաջնային է ընդերքօգտագործման վճարների շարժընթացի վերլուծությունը (գրաֆիկ 2):

Գրաֆիկ 2

Բնօգտագործման վճարներն ըստ ուղղությունների, 2015թ.



Այստեղ պետք է հավելել, որ անկախ եկամտաբերության և ընդերքօգտագործման վճարների աճից՝ ընդերքօգտագործումը շրջակա միջավայրի և դրա բնառեսուրսային ներուժը խախտող առավել ազդեցիկ տնտեսական ճյուղերից չէ: Ըստ բնապահպանական իրավախախտումների՝ առաջին տեղը գրավում է բուսական աշխարհի գծով խախտումները (543), այնուհետև կենդանական աշխարհին հասցված խախտումներն են (7), իսկ ընդերքի գծով խախտումների քանակը ամենաքիչն է արձանագրվել, ընդամենը՝ 3:

ՀՀ 2015 թ. պետական բյուջեով բնապահպանության նախարարությանը ծրագրվել էր հատկացնել 2610.9 մլն դրամ, ևս 686.9 մլն դրամ լրացուցիչ ֆինանսավորում նախատեսվել է տարվա ընթացքում, իսկ նախարարության համակարգի ՊՈԱԿ-ների գործունեության ֆինանսավորման նպատակով պետական բյուջեից դրամաշնորհի ընդհանուր գումարը կազմել է 892.3 մլն դրամ: ՀՀ բնապահպանության նախարարության վերահսկողության տակ գտնվող բնապահպանական և բնօգտագործման վճարների մասով պետական բյուջե կատարված գանձումները կազմել են 2300.6 մլն դրամ՝ 2013 թ. 1658.2 մլն դրամ գումարի համեմատ: «Ընկերությունների կողմից վճարվող բնապահպանական վճարների նպատակային օգտագործման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ 11 համայնքի տրամադրվել է սուբվենցիա՝ ավելի քան 245.0 մլն դրամի չափով: 2015 թ. պետական բյուջեով նախատեսված սուբվենցիաների գումարը կազմում է 296.9 մլն դրամ, ընդ որում բնապահպանական ծրագրերի իրականացման համար սուբվենցիա կտրամադրվի 14 համայնքի:

Այստեղ հարկ է նշել, որ վերջապես հանքարդյունաբերության ուղղությամբ արձանագրվեց դրական քայլ, և 2015 թվականի հունիսի 22-ին Ազգային ժողովի կողմից ընդունվեց փոփոխությունների փաթեթ, որով «Ընդերքի մասին» օրենսգրքում մտցվեց «պոչամբար» և «ընդերքօգտագործման թափոններ» հաս-

կացությունները: Մինչ այժմ պոչամբարները համարվում էին տեխնածին հանքավայրեր, սակայն այժմ պոչամբարը տարանջատվում է տեխնածին հանքավայրից, առանձին տրվում է պոչամբար հասկացության նկարագիրը. օգտակար հանածոների հարստացման արդյունքում առաջացած պինդ կամ հեղուկ թափոնների պահման հիդրոտեխնիկական կառուցվածք, իսկ ընդերքօգտագործման թափոններ համարվելու են օգտակար հանածոների ուսումնասիրության, արդյունահանման, վերամշակման և հարստացման արդյունքում առաջացած մակաբացման ապարները և այլ թափոններ:

Նշենք, որ այս փաթեթի հաստատման հաջորդ օրը՝ հունիսի 23-ին, ընդունվեց նաև «Ողջիի, Փխրուտի, Արծվանիկի պոչամբարներում կուտակված եւ կուտակվող, ինչպես նաև «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» փակ բաժնետիրական ընկերության գործունեության արդյունքում գոյացած և գոյացող արտադրական լցակույտերի մշակման ներդրումային ծրագրի մասին» օրենքը: Նախատեսվում է իրականացնել ներդրումային ծրագիրը, որը ենթադրում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարներում կուտակված արտադրական լցակույտերի վերամշակում: Միայն Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատի պոչամբարներում եղած մոտ 300 մլն տոննային տարեկան ավելանում է ևս 18-20 մլն տոննա, ինչը բնապահպանական մեծագույն խնդիր է: «Ալյոտիգ» ՍՊԸ-ն հանդիսանում է օրենքի իմաստով ծրագիր իրականացնող, որը մտադիր է կառուցել տարեկան 12.5 մլն տոննա արտադրողականությամբ ֆաբրիկա՝ վերամշակելու համար ներկայումս չօգտագործվող այդ լցակույտերը: Նախատեսվում է նաև կառուցել կոմպոզիտային նյութերի գործարան, որը նույնպես որպես հումք օգտագործելու է պոչամբարի խյուսը: Առաջին փուլում ներդրվելու է մոտ 240 մլն ԱՄՆ դոլարին համարժեք դրամ: Երկրորդ փուլն ընդգրկելու է 2019-2025թթ., երբ գործարանի հզորությունը կհասցվի տարեկան մինչև 25 մլն տոննայի վերամշակման: Արդեն առաջին փուլում բացվելու է մոտ 1000 մշտական և 500 ժամանակավոր աշխատատեղ, լուծվելու են տնտեսական և բնապահպանական մի շարք հարցեր:

Բանալի բառեր՝ *բնօգտագործում, բնապահպանություն, աղտոտում, տնտեսական աճ, արդյունավետություն, պահպանում:*

Օգտագործված գրականություն

1. Панфилов Е.И. Малый бизнес в недропользовании // Маркшейдерия и недропользование, № 2, 2001.
2. Мелехин Е.С. Экономика недропользования: практика, проблемы и развитие, М., ГУП «Облиздат», Калуга, 2000, 212 с.
3. http://www.armstat.am

A COMPARATIVE STUDY OF ENVIRONMENTAL PROTECTION AND NATURAL CONSUMPTION PAYMENTS IN THE REPUBLIC OF ARMENIA

A. V. MARDOYAN
PhD in Economics
Associate Head of the Chair of Management and Information Technology of "Eurasia" International University
GSU Lecturer

The article presents an analysis of the system of environment protection and nature consumption payments, as well as the structure and rise of the payments. Special attention has been drawn to the publications presented by National Statistics Service and to the current legislative area. In the framework of the article, there have been analyzed the problems currently available in the area of environment protection and natural consumption. The article offers some solutions which may help to make this area more effective.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ ЭКОЛОГИЧЕСКИХ И ПРИРОДОПОЛЬЗОВАТЕЛЬСКИХ ПЛАТЕЖЕЙ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

А. В. МАРДОЯН
Кандидат экономических наук , доцент
Заведующий кафедрой менеджмента и информационных технологий международного университета «ЕВРАЗИЯ»,
преподаватель ГГУ

В статье рассмотрена текущая система экологических платежей в Республике Армения, ее структура и динамика. Особое внимание уделено докладам Национальной статистической службы и нынешнему законодательному полю. В статье изучены имеющиеся вопросы экологии и использования ресурсов, предложены решения, которые позволят повысить эффективность сферы.

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ («ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆՁԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ» ՓԲԸ-ի ՕՐԻՆԱԿՈՎ)

Ա. Վ. ՄԱՐԴՈՅԱՆ
Տնտեսագիտության թեկնածու, դոցենտ,
ԵՄՀ «Կառավարում և ՏՏ» ամբիոնի վարիչ,
ԳՊՀ դասախոս

Հայաստանի Հանրապետության հանքարդյունաբերության ոլորտը ազգային տնտեսության մեջ ունի առանցքային մասնաբաժին: Երկրից արտահանվող նյութերի առնվազն մեկ երրորդը բաժին է ընկնում հանքային խտանյութերին և մետաղներին, որոնք երկրից արտահանվող արտադրանքների ցուցակում առավել կարևոր տեղ են զբաղեցնում: Օգտակար հանածոների պաշարների պետական հաշվեկշռում ներկայումս հաշվառված է հաստատված պաշարներով պինդ օգտակար հանածոների ավելի քան 670 հանքավայր, այդ թվում՝ 30 մետաղական: Նշված հանքավայրերից շահագործվում են շուրջ 400-ը, որից 22-ը՝ մետաղական: Մետաղական օգտակար հանածոների թվում կան 7 պղնձամոլիբդենային, 4 պղնձի, 14 ոսկու և ոսկի-բազմամետաղային, 2 բազմամետաղային, 2 երկաթահանքային և 1 ալյումինահանքային հանքավայր: Պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերի հանքաքարերում, բացի հիմնական մետաղներից, բացահայտված է հազվադեպ և ցրված տարրերի առկայություն՝ ռենիում, սելեն, թելուր, կադմիում, ինդիմում, հելիում, թալիում, բիսմութ և այլն: Բացի գնահատված և պետական հաշվեկշռում գրանցված հանքավայրերից՝ Հայաստանի Հանրապետության տարածքում հայտնաբերված են տարբեր մետաղների 115 երևակումներ[1]:

Ներկայումս Հայաստանի Հանրապետության լեռնամետալուրգիական համալիրի համար վերջնական արտադրանք են հանդիսանում հիմնականում խտանյութերը (պղնձի, մոլիբդենի, ցինկի, որոշ դեպքերում՝ ոսկու և արծաթի բարձր պարունակությամբ, մոտ հեռանկարում՝ նաև կապարի խտանյութեր), որը թույլ չի տալիս ամբողջովին օգտագործել հանքավայրի տնտեսական ներուժը: Երկրում արդյունահանվող մետաղական օգտակար հանածոների վերամշակման արտադրության կազմակերպումը փակ և ավարտուն ցիկլերով՝ հանույթից մինչև պատրաստի արտադրանքի ստեղծումը, հնարավորություն կտա բարձր արժողությամբ արտադրանքի ստացման, որն էլ կապահովի ՀՆԱ-ի աճ: Պաշտոնապես Հայաստանի Հանրապետության տարածքում կա օգտակար հանածոների հանքավայրերի շահագործման ընթացքում առաջացող թափոնների կուտակման 15 պոչամբար /ոչ պաշտոնապես՝ 21/, որոնց ծավալները անցնում են մի քանի մլն. խոր. մ-ից և զբաղեցնում են մոտ 700 հա ընդհանուր մակերես[2]: Ներկայումս պոչամբարներում

[1] http://minenergy.am/page/472
[2] https//www.unece.org/fileadmin/DAM/env/eia/meetings/2016/pdf

կուտակված օգտակար հանածոների արդյունահանման և վերամշակման արդյունքում առաջացած արտադրական թափոնները չեն օգտագործվում, չնայած դրանք պարունակում են մեծ քանակությամբ բազմամետաղներ:

Այսօր օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է 503 թույլտվություն, այդ թվում՝ մետաղական օգտակար հանածոների 27, ոչ մետաղական օգտակար հանածոների 450, հանքային ջրերի 26 թույլտվություն: Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրամադրված է ընդերքի երկրաբանական ուսումնասիրությունների 88 թույլտվություն, այդ թվում՝ մետաղական երևակումների 63, ոչ մետաղական երևակումների 25 թույլտվություն: Տրված է նաև ընդերքի երկրաբանական ուսումնասիրության համաձայնության 2 և նավթի ու գազի հայտնաբերման նպատակով երկրաբանական ուսումնասիրության 3 իրավունք[1]:

Մետաղների արդյունահանումը հին պատմություն ունի Հայաստանում, իսկ պղնձի արդյունահանումը սկսվել է Հայաստանի հյուսիսային շրջանում գտնվող Ալավերդիում 1770-ականներից: 1840-ականներին Կապանում սկսել են արդյունահանել պղինձ, իսկ XX դարի կեսերին սկսել է գործել Քաջարանի ավելի խոշոր պղնձամոլիբդենային հանքը: Վերջին 50 տարում բացվել են ուրիշ ավելի փոքր հանքեր, որոնցից մի քանիսը գործում են առայսօր (օրինակ՝ Ագարակի պղնձամոլիբդենային հանքը և Շահումյանի բազմամետաղական հանքը): Չնայած հանքարդյունահանման երկարամյա պատմությանը՝ երկրում չի զարգացել դիվերսիֆիկացված խոշոր հանքարդյունաբերություն՝ բացառությամբ խոշոր և կայուն աշխատող մեկ հանքի՝ Քաջարանի[2]:

Ընդհանուր առմամբ պղինձն ու ոսկին Հայաստանում արդյունահանվող հիմնական մետաղներն են: Հակառակ տարածված կարծիքի՝ մետաղական հանածոների արդյունահանման ընդհանուր ծավալում մոլիբդենի մասնաբաժինը փոքր է (արդյունահանված ծավալի 1 տոկոսից պակաս): Ցինկը, կապարը և արծաթը նույնպես փոքր մասնաբաժին ունեն ընդհանուր արտադրանքում, սակայն դրանց նշանակությունը կարևոր է տեղական մակարդակում, գլխավորապես՝ Շահումյանում:

Քաջարանի պղինձ-մոլիբդենային հանքավայրը գտնվում է Կապանի շրջանում, տեղադրված է Զանգեզուրի լեռնաշղթայի արևելյան լանջի վրա՝ Ողջի գետի վերին հոսանքներում: Գանձասար լեռը, որը ներառել է Քաջարանի հանքավայրը, Ողջի գետի հունից բարձր է 350-400մ, որն էլ նպաստել է հանքավայրի հետախուզմանն ու շահագործմանը:

Քաջարանի հանքավայրի երկրաբանական կառուցվածքում առկա են ստորին էոցենի հասակի հրաբխանստվածքային ապարներ, որոնք պատռված են

[1] http://minenergy.am/page/422

[2] «Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում. Հայաստան», Համաշխարհային բանկ, 2016, էջ 7:

խորքային ծագման գրանիտոիդների խմբին պատկանող մոնցոնիտներով, պորֆիրանման գրանիտներով և գրանոդիորիտներով:

Քաջարանի հանքավայրում հանք պարունակող գլխավոր ապարները մոնցոնիտներն են, որոնք գրանոդիորիտ-պորֆիրային երականման մարմինների երկայնքով ենթարկվել են ջրաջերմային ուժգին փոփոխության և պարունակում են պղինձ-մոլիբդենային հանքայնացում: Խորքային ծագման երականման մարմինները ներկայացված են գրանիտ-պորֆիրային, գրանոդիորիտ-պորֆիրային, սիենիտ-պորֆիրային, դիորիտ-պորֆիրային և այլ կազմության ապարներով, որոնք որոշիչ դեր են կատարել հանքավայրի հանքայնացման գործում: Առանձին տեղերում գրանոդիորիտ-պորֆիրային երակները պարունակում են պղնձի և մոլիբդենի մեծ կուտակներ, իսկ դրանց երկայնքով և դրանց միջև ընկած տարածքում էլ կենտրոնացված է Քաջարանի հիմնական արդյունաբերական հանքայնացումը, որը ներկայացված է երակիկացանային տիպով:

Առաջին հետախուզական աշխատանքները Քաջարանի հանքավայրում սկսվել են 1931 թվականին, իսկ մանրազնին հետախուզական աշխատանքները՝ 1938 թվականին և առանձին փոքր ընդմիջումներով շարունակվել են մինչև 1985թ.:

Քաջարանի հանքավայրը գործարկվել է 1951 թ.-ին, իսկ 1958թ-ին, տեղի ավանները կոմբինատի շուրջ համախմբելով, ստեղծվել է Քաջարան քաղաքը, որն այսօր ունի մոտ 7000 բնակիչ[1]:

ՀՊՄԿ-ը շահագործում է Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրը բաց եղանակով՝ արդյունահանելով տարեկան 12,8 մլն տոննա հանքաքար[2]: Փաստենք, որ ԽՍՀՄ օրոք դա հասնում էր 8 մլն տոննայի: Կոմբինատում աշխատողների թիվը հասնում է 3500-ի, որից 1800-ը Քաջարան քաղաքի բնակիչներ են[3]:

Արդյունահանված հանքաքարը վերամշակվում է ՀՊՄԿ հարստացուցիչ ֆաբրիկայում, որտեղ արտադրվում են մոլիբդենի և պղնձի խտանյութեր, որոնք հետագայում վերամշակվում են Հայաստանում և այլ երկրներում:

Քաջարանի հանքաքարերի մեջ օգտակար տարրերի միջին պարունակությունները 1987թ. հաստատված արդյունաբերական պաշարներում կազմել են. Պղնձինը՝ 0.222%, մոլիբդենինը՝ 0.0273%, ռենիումինը՝ 0.18գ/տ, ոսկունը՝ 0.028գ/տ, արծաթինը՝ 1.56գ/տ, սելենինը՝ 1.62գ/տ, տելլուրինը՝ 1.35գ/տ, բիսմուտինը՝ 2գ/տ, երկաթինը՝ 0.3%, վանադիումինը՝ 163գ/տ, սկանդիումինը՝ 5.36գ/տ, պլատինինը՝ 0.00037գ/տ, պալադիումինը՝ 0.0009գ/տ:

2001թ. կազմված Քաջարանի հանքավայրի շահագործման տեխնիկատնտեսական հիմնավորման համաձայն՝ հանքավայրի ընդերքից նախատեսվում էր արդյունահանել 9 մլն տ. հանքաքար, որի հարստացումից պետք է ստացվեին պղնձի խտանյութ՝ 50910 տ՝ պղինձ մետաղի 28% պարունակությամբ, մոլիբդենի խտանյութ՝ 7200 տ՝ մոլիբդեն մետաղի 50% պարունակությամբ: Արդյունահանվող

[1] http://syunik.mtad.am/history/
[2] http://www.zcmc.am/arm/our-metals/
[3] http://www.zcmc.am/eng/our-company/doing-business-with-us/

9 մլն տ հանքաքարից ստացվելիք կիսաարտադրանքների ընդհանուր քանակը պետք է կազմեր 58110 տ, այսինքն՝ արդյունահանվող և մշակման ուղարկվող հանքաքարերի 0.65%: Տվյալ պարագայում պոչանքներ թափվող «հանքաքարերի» քանակը պետք է կազմեր 8.942 մլն տ (ընդհանուրի 99.35%-ը):

Տարեկան 9 մլն տ հանքաքար արդյունահանելու ու մշակելու պարագայում պոչանքներ անցած տարրերի քանակները (բացարձակ, կշռային միավորով արտահայտած) կարող են կազմել՝ պղնձինը (8942000x0.07:100)՝ 6259.4տ, մոլիբդենինը՝ 1073տ, ռենիումինը՝ 518.6կգ, ոսկունը՝ 80.5կգ, արծաթինը՝ 4363,7 կգ, սելենինը՝ 4578.3կգ, տելլուրինը՝ 3818.2կգ, բիսմուտինը՝ 5651.3կգ, երկաթինը (մագնետիտ հանքանյութի հետ կապված)՝ 26826 տ, վանադիումինը՝ 1457,5տ, սկանդիումինը՝ 47929 կգ, պլատինինը՝ 1.05կգ, պալադիումինը՝ 2.55 կգ, ծծմբինը՝ 21000 տ:[1]

Ըստ 2006թ.-ին իրականացված վերջին ուսումնասիրությունների՝ Քաջարանի հանքավայրի B+C1 պաշարները կազմում են՝

Հանքաքար	2,21 մլրդ տոննա
Պղնձի պարունակություն	5,22 մլն. տոննա
Մոլիբդենի պարունակություն	0,72 մլն տոննա[2]

Պաշարների գտնվելը տվյալ լեռնային տեղանքում տալիս է հանքին այնպիսի բնական առավելություն, ինչպիսին է միասեռ շերտավորումը, որից սովորաբար տարբերվում են հանքաքարը և դատարկ ապարները: Առավելությունների թվում են նաև արդյունավետ կառավարումը և ձեռնարկության աշխատակիցների բարձր մասնագիտական գիտելիքները, ձևավորված կորպորատիվ մշակույթը, պահուստների առկայությունը, հորատող մեքենաների և էքսկավատորների ռեզերվային հնարավորությունները, որը մեզ թույլ է տալիս թողարկել բարձրորակ արտադրանք և պլանավորել արտադրության հետագա ընդլայնումը:

Հանքում հանքաքարի և դատարկ ապարների արդյունահանման համար օգտագործվում է հորատապայթեցման մեթոդը, որից հետո հանքաքարը հանքուղով երկաթգծի օգնությամբ կամ անմիջապես ավտոինքնաթափերով տեղափոխվում է խոշոր ջարդման արտադրամաս: Դատարկ ապարները բեռնատարներով տեղափոխվում են դատարկ ապարների թափուկավայր:

Այսօր ՀՊՄԿ-ի բեռնատարների ավտոպարկում կան 37-134 տոննա բեռնատարողությամբ բազմաթիվ “Բելազ” և “Կատերպիլլար” բեռնատարներ, կիրառվում են նշված ընկերությունների մի քանի անվավոր ապարաբարձիչներ: Էքսկավատորների շերեփների բեռնատարողությունը 5-8 խոր. մետր է: Բացի դրանից՝ օգտագործվում է մեծաքանակ օժանդակ տեխնիկա, մասնավորապես բուլդո-

[1] Հ. Ս. Ավագյան, ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատում, Երևան, 2008թ, էջ 8:
[2] Հ. Ս. Ավագյան, ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատում, Երևան, 2008թ, էջ 45:

զերներ՝ հանքաստիճանների հարթեցման և դատարկ ապարների հավաքատեղում աշխատանքների համար, բազմաֆունկցիոնալ տրակտորներ, ջրցան մեքենաներ, ավտոկռունկներ, շարժական վերանորոգման արհեստանոցներ և այլն:

Ստորգետնյա ջրերի մակարդակը հանքավայրում ցածր է, ինչը նշանակում է, որ անհրաժեշտ է հեռացնել միայն տեղումներից առաջացած և շրջակա գետերի ու վտակների ջրերը: Այդ պատճառով քիչ է չորացնող սարքավորումների անհրաժեշտությունը: Ներկայումս հանքավայրը հաջողությամբ ջրազրկվում է գործող դրենաժային համակարգի օգնությամբ, որը կազմված է լանջային առուներից, ստորգետնյա ջրուղիներից և խողովակաշարերից:

Հարստացուցիչ ֆաբրիկայում կատարվում է հանքաքարի՝ ավանդական եղանակով աղացում և փրփրային ֆլոտացիա: Ֆլոտացիոն գործընթացը ներառում է պղնձի և մոլիբդենի կոլեկտիվ ֆլոտացիան, որից հետո կատարվում են մոլիբդենի և պղնձի ընտրակորզիչ (սելեկտիվ) ֆլոտացիաներ: Հարստացուցիչ ֆաբրիկան ներկայումս վերամշակում է տարեկան 12,8 մլն. տոննա հանքաքար:

ԶՊՄԿ-ի ֆաբրիկայի հին և փոքր ֆլոտոմեքենաներն 2005-2009թթ. Փոխարինվել են ավելի մեծ ծավալի պնևմամեխանիկական ֆլոտոմեքենաներով: Նոր ֆլոտոմեքենաներն աշխատում են ցածր ճնշման օդով և ունեն մակարդակի կառավարման ավտոմատ համակարգ:

Պղնձի և մոլիբդենի խտանյութերը ջրազրկվում և չորացվում են առանձին տեղամասերում: Որակի վերահսկողությունը կատարվում է ժամանակակից սարքավորումներով համալրված քիմիական և հետազոտական լաբորատորիաներում, որտեղ կատարվում են հանքաքարի նմուշների և ֆլոտացիայի անալիզներ, ինչպես նաև այլ կարգի հետազոտություններ: Հարստացուցիչ ֆաբրիկան ունի աճի մեծ հնարավորություններ, որոնք ձեռք են բերվում պահպանման պատշաճ միջոցառումների միջոցով:

Փաստենք, որ 2017 թվականի հունվարից «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» (ԶՊՄԿ) ՓԲԸ-ն շուրջ 10 միլիոն տոննայով կավելացնի Քաջարանի հանքաքարի արդյունահանման ծավալները՝ 12.5 միլիոն տոննայից հասցնելով 22 միլիոն տոննայի: ՀՀ բնապահպանության նախարարությունը դրական եզրակացություն է տվել ընկերության կողմից ներկայացված «Քաջարանի պղնձամոլիբդենային հանքավայրի պաշարների արդյունահանման նախագծի փոփոխություն (ներառյալ՝ արդյունահանման ծավալների փոփոխությունը, ընդերքի տեղամասի ընդլայնումը, թուլտվության ժամկետի երկարաձգումը)» ՇՄԱԳ հաշվետվությանը:

Նման արտադրողականության դեպքում Արծվանիկի պոչամբար լցվելու է տարեկան 21809.2 հազար տոննա պոչ, ԶՊՄԿ-ի 3 լցակույտային տնտեսություններ՝ 84.3 մլն խոր. մ մակաբացման ապարներ: Սակայն այս տնտեսությունները կարող են ծառայել շուրջ 10 տարի, այնուհետև կպահանջվի կամ նոր պոչամբարի և լցակույտային տնտեսության կառուցում, կամ գործող պոչամբարի և լցակույտային տնտեսությունների տարածքների ընդլայնում: Նախագծով Քաջարանի հանքավայրը նման ծավալներով շահագործվելու է 25 տարի:

Ներկայումս կոմբինատի Արծվանիկի պոչամբարի տարողությունը 325.0 միլիոն խոր. մ է, որտեղ տեղակայված են 212 միլիոն խոր. մ պոչեր: Բացահանքի արտադրական կարիքների համար օգտագործվելու է Գեղի ջրամբարի, Ողջի, Սակքար գետերի ջուրը: Կոմբինատի ջրապահանջը կկազմի 68.84 միլիոն խոր. մ:

Նախագծի համաձայն՝ ընդհանուր առմամբ մթնոլորտ կարտանետվեն բացահանքի տարածքից 357.7 տոննա/տարեկան, իսկ ֆաբրիկայի տարածքից՝ 47.7 տոննա/տարեկան վնասակար նյութեր: Հաշվի առնելով բացահանքում իրականացվող պայթեցման աշխատանքները՝ մթնոլորտ արտանետվող վնասակար նյութերի ընդհանուր քանակը բացահանքում կկազմի 1202.07 տոննա/տարեկան:1

Հարստացուցիչ ֆաբրիկայի պոչերը մի շարք ստորգետնյա և վերգետնյա խողովակաշարերի և ջրատարների միջոցով տեղափոխվում են հարստացուցիչ ֆաբրիկայից մոտ 32 կմ հեռավորության վրա տեղակայված Արծվանիկի պոչամբար: Փաստենք, որ չորս պոչամբարներից երեքը՝ Ողջիի, Փխրուտի և Դարազանիի, ռեկուլտիվացված են, այսօր գործում է միայն Արծվանիկի պոչամբարը, որն աշխարհում համարվում է իր ծավալով առաջինը: Պոչամբարում կատարվում է ծանր մետաղների նստեցում, իսկ մնացած ջրերը լցվում են մոտակա գետը: Այստեղ կարող ենք նշել նաև, որ պոչամբարի տեղակայման համար կոմբինատը վճարում է միայն վարձակալության վճար: Կոմբինատը իր տեխնիկական կարիքների համար ջուրը վերցնում է Ողջի և Գեղի գետերից, որոնք առաջին և երկրորդ դասի ջրեր են և օգտագործելուց հետո շրջակա միջավայր է լցնում ոչ պիտանի աղտոտված ջուր: Մեկ խորանարդ մետր ջրի համար կոմբինատը վճարում է ընդամենը 1 ՀՀ դրամ:

Հայաստանի Հանրապետությունում առկա է 21 պոչամբար, որոնցից 13-ը գործող են և բացի երկուսից՝ բոլորը գտնվում են Սյունիքի կամ Լոռու մարզում: Արծվանիկի պոչամբարն ամենախոշորն է, որի ներկայիս ծավալը կազմում է բոլոր պոչամբարների շուրջ 75 տոկոսը:

Ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ պոչամբարի շինարարական թույլտվությունը տրվել է առանց ռիսկի համապատասխան գնահատման, և դա մատնանշում է լուրջ բացթողումներ ինչպես ընկերության տեխնիկական կարողությունների, այնպես էլ կարգավորման դաշտի առումով: Ուսումնասիրության արդյունքում պարզվեց, որ պատերը հիմնականում հողային հիմք ունեն, և առաջին իսկ սեյսմիկ տատանումների արդյունքում հնարավոր է պատի փլուզում և սելավային հոսքով պոչամբարի աղտոտված ջրերը կարող են հասնել մինչ Կապան քաղաք: Այցելության ընթացքում անհնարին էր պարզել նաև, թե ընթացիկ շինարարական գործընթացը ինչ նախագծով է իրականացվել: Պատնեշի նախագծի և ռիսկի գնահատման համար պատասխանատու կառույց է

[1]http://ecolur.org/hy/news/mining/zcmc-to-make-its-productivity-22-million-nature-protection-ministry-issued-a-positive-opinion/8809/

հանդիսանում Արտակարգ իրավիճակների նախարարությունը: Ի դեպ այցելության ընթացքում նույնիսկ պոչամբարի տարածքում չգտնվեցին աշխատակիցներ, ովքեր առաջին իսկ արտակարգ դեպքի ժամանակ պետք է տեղեկացնեն պատկան մարմիններին, որոնք կարող էին կազմակերպել մոտակա համայնքներից բնակչության էվակուացիա:

Կարծում ենք՝ թափոնների վերամշակման գործընթացին պետք է վերադառնալ ավելի ուշ՝ մի քանի տասնամյակ հետո, երբ կմշակվեն առավել կատարյալ տեխնոլոգիաներ՝ դրանցից օգտակար տարրերը կորզելու համար, սակայն այս դեպքում թափոններում ու պոչանքներում պարունակվող տարրերը (դրանց զգալի մասը) մթնոլորտային տեղումների ու թթվածնի ազդեցության ներքո կամ կկորցնեն իրենց «ապրանքային» տեսքը, կամ ջրերի ու քամիների ազդեցությամբ կտարածվեն շրջակա միջավայր՝ աղտոտելով և վնասելով այն:

Կարելի է եզրահանգել, որ օգտակար հանածոների հանքաքարերում առկա օգտակար բաղադրիչները շատ ավելի ձեռնտու ու նպատակահարմար է կորզել սկզբնական փուլում՝ հիմնական տարրերի կորզմանը զուգընթաց: Այստեղ առկա է ևս մեկ կարևոր հանգամանք. հանքաքարերի համալիր օգտագործումը՝ հիմնական և հարակից բաղադրիչների զուգահեռաբար կորզումը, լեռնահանքային ձեռնարկությունների արտադրանքի տեսականու մեծացմանը զուգընթաց երկարացնում է ձեռնարկությունների «կյանքի տևողությունը», ավելացնում է արդյունավետությունը և նպաստում աշխատակիցների սոցիալական և կենցաղային պայմանների բարելավմանը:

Բանալի բառեր՝ *հանքարդյունաբերություն, արդյունավետություն, շրջակա միջավայր, աղտոտվածություն, պոչամբար:*

Օգտագործված գրականություն

1. “Հանքարդյունաբերության ոլորտի կայունության ռազմավարական գնահատում. Հայաստան”, Համաշխարհային բանկ, 2016թ., 147 էջ:
2. Ավագյան Հ.Ս., ՀՀ մետաղական օգտակար հանածոների գնահատում, Երևան, 2008թ, 214էջ:
3. http://ecolur.org
4. http://minenergy.am
5. https://www.unece.org
6. http://syunik.mtad.am
7. http://www.zcmc.am

CURRENT PROBLEMS IN THE MINING INDUSTRY (based on the case study of "Zangezur Copper Molybdenum Enterprise" CJSC)

A. V. MARDOYAN
PhD in Economics
Associate Head of the Chair of Management and Information Technology of "Eurasia" International University
GSU Lecturer

This article presents the current state, gaps and development prospects in the mining industry in the Republic of Armenia. The research is based on the field work carried out in "Zangezur Copper Molybdenum Enterprise" CJSC. The field work, documentation, surveys, as well as the website of the enterprise have disclosed the problems currently available in Kajaran mining camps. The researcher comes to certain conclusions and makes relevant suggestions.

ОСНОВНЫЕ ПРОБЛЕМЫ НЕДРОПРОМЫШЛЕННОЙ СФЕРЫ (на примере ЗАО "Зангезурский медно-молибденовый комбинат")

А. В. МАРДОЯН
Кандидат экономических наук, доцент
Заведующий кафедрой менеджмента и информационных технологий международного университета «ЕВРАЗИЯ»,
преподаватель ГГУ

В данной статье представлено нынешнее состояние недромромышленности в Республике Армения, имеющиеся недостатки и тенденции развития. Исследования проводились также в полевых условиях, в "Медномолибденовом комбинате Зангезура ", находящийся в марзе Сюник.

На основании полевых исследований, документов и информации, предоставленной на сайте компании, были выявлены проблемы рудника Каджарана. Сделаны соответсвующие выводы и предложения.

ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Գ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Երևանի պետական համալսարանի հայցորդ

Մրցունակությունը կապված է գնորդի որոշման հետ: Նա իրեն առաջարկվող մի շարք ապրանքներից ընտրում է այն, որն ավելի է համապատասխանում իր կոնկրետ պահանջմունքին: Մի կողմից նա գնահատում է տվյալ ապրանքներից յուրաքանչյուրի օգտագործումից ստացված էֆեկտը, իսկ մյուս կողմից՝ ծախսերը: Այդ գործընթացում է բացահայտվում ապրանքի մրցունակությունը: Գնորդի որոշման վրա հաճախ ազդում են ոչ միայն սպառողական էֆեկտի և ծախսերի բացարձակ բնութագրիչները, այլ նաև դրանց հարաբերակցությունը, երբ միավոր աշխատանքի կատարման ծախսերը (էֆեկտի միավորները) տվյալ արտադրանքի օգնությամբ նվազում են:

Այսպիսով, որոշումների կայացման ժամանակ ստեղծվում է ծախսերի միավորի հաշվով օգտակար էֆեկտի ցուցանիշի օգտագործման հնարավորություն:

$$j = \frac{\Pi_{\Sigma}}{З_{\Sigma}(Ц_{апарт})}$$

Կամ դրա հակառակ մեծությունը, որը բնութագրում է օգտակար միավորի հաշվով կատարված ծախսերը:

$$C = \frac{З_{\Sigma}}{\Pi_{\Sigma}}$$

Որտեղ Π_{Σ}-ն ծառայության ողջ ժամկետում արտադրանքի օգտագործման գումարային էֆեկտն է՝ բնական միավորներով:

$З_{\Sigma}(Ц_{апарт})$-ն կոնկրետ շուկայի պայմաններում արտադրանքի ձեռք բերման, շահագործման (օգտագործման) վրա սպառողի կողմից կատարված ծախսերն են:

Արտադրանքի շահագործման (օգտագործման) արդյունքում ստացված օգտակար էֆեկտ ասելով՝ հասկանում ենք ծառայության արդյունքում կատարվող աշխատանք կամ ստացված հատույց:

Հաճախ մրցունակության գնահատման ժամանակ, հատկապես երբ բարդ է կատարվող աշխատանքի մեծության որոշումը (օրինակ՝ էլեկտրոնային տեխնիկայի ապրանքների դեպքում) օգտակար էֆեկտի առկայությունը ասոցացվում է ապրանքի սպառողական հատկանիշների համախմբի հետ (տեխնիկական,

էրգոնումիկական, էսթետիկական և այլն), այսինքն՝ որակի ընդհանրացված ցուցանիշի հետ, որը որոշվում է կվալիմետրիկ գնահատման մեթոդով:

Արտադրանքի տեխնիկատնտեսական մակարդակ ասելով՝ հասկանում ենք ուսումնասիրվող արտադրանքի տեխնիկատնտեսական կատարելիության հարաբերական մեծությունը բազային (էտալոնային) նմուշի համեմատ

$$i_f = \frac{f}{f_\delta} = \frac{i\Pi_\Sigma}{i3_\Sigma}$$

$i_f \geq 1$ դեպքում արտադրանքի ուսումնասիրվող նմուշի կատարելիության տեխնիկատնտեսական բնութագրիչները բազայինի համեմատ ավելի բարձր են, այսինքն՝ տվյալ շուկայում այն օժտված է տեխնիկատնտեսական մրցունակությամբ:

Մեքենաշինական արտադրանքի համար, որի օգտակար էֆեկտը բնութագրվում է սպառողի մոտ կատարված աշխատանքով, տեխնիկատնտեսական մակարդակի ցուցանիշը որոշվում է հետևյալ կերպ՝

$$i_f = \frac{iB}{i3_\Sigma},\ i_B = \frac{B}{B_\delta}$$

որտեղ iB -ն մեքենայի տարեկան արտադրողականության ինդեքսն է.

iB_Σ -ն ընդհանուր ծախսերի ինդեքսն է:

Ընդհանուր ծախսերի հարաբերությունը համեմատվող արտադրանքի ձեռքբերման և շահագործման ծախսերին որոշվում է հետևյալ բանաձևով.

$$i_\Sigma = \frac{3_\Sigma}{3_{\Sigma\delta}} = \frac{3_c + \sum_{i=1}^{T}\sum_{i=1}^{n} 3T}{3c\delta + \sum_{i=1}^{T}\sum_{i=1}^{n} 3_{ti\delta}}$$

որտեղ $3c$, $3c\delta$ համապատասխանաբար գնահատվող և բազային նմուշի ձեռքբերման միանգամյա ծախսերն են:

$3it$, $3it\delta$ t-րդ տարում i-րդ հոդվածով շահագործման ծախսերն են.

n-ը շահագործման ծախսերի հոդվածների քանակն է:

T-ն օգտակար ծառայության ժամկետն է:

Նշենք, որ բերված բանաձևում հաշվի չի առնվում շահագործման ծախսերի հաշվարկային տարվա կտրվածքով բերման գործակիցը, քանի որ ընդհանուր ծախսերի հարաբերությունը զգալի չափով փոխհատուցվում է բերման գործակիցը if մեծությամբ:

Այն դեպքում, երբ, որպես օգտակար էֆեկտի ցուցանիշ, ընդունվում է ընդհանրացված տեխնիկական մակարդակի (որակի) ցուցանիշը, ապա կախվածությունը մոդիֆիկացվում է, և այն կվազիմետրայի տեսության մեջ անվանվում է որակի ինտեգրալ ցուցանիշ:

$$f = \frac{K}{З_{\Sigma}}$$

կամ ավելի ճիշտ

$$if = \frac{K}{iЗ_{\Sigma}}$$

Տնտեսական պրակտիկայում արտադրանիք տեխնիկատնտեսական կատարելիության փոփոխության տեմպի բնութագրման համար կիրառում են տեխնիկատնտեսական մակարդակի դինամիկ ցուցանիշը, այն որոշվում է հետևյալ կերպ.

$$i_f = \frac{f_t}{f_{\delta}}$$

Որտեղ f_t, f_{δ} համապատասխանաբար i-րդ և բազային տարիներում տեխնիկատնտեսական մակարդակի ցուցանիշներն են:

Այն դեպքում, երբ շահագործման ծախսերի մեծությունը փոքր է կամ բացակայում է, կատարելիության տեխնիկատնտեսական հարաբերական մեծությունը վերափոխվում է մի հարաբերակցության, որը որոշվում է օգտակար էֆեկտի ցուցանիշի (տեխնիկական մաակրդակի, որակի) և արտադրանքի գնի հարաբերակցությամբ.

$$i_f = \frac{K(\Pi_{\Sigma})}{iU}$$

Արտադրանքի տեխնիկատնտեսական կատարելիության դիտարկվող ցուցանիշը հանդիսանում է ապրանքի մրցունակության միջոց:

Ակնհայտ է, որ այդպիսի ցուցանիշը մոտ է ապրանքի մրցունակության ցուցանիշին: Կոնկրետ շուկայում որքանով է այն արտացոլում իրական պատկերը, կախված է դիտարկվող ապրանքի սպառողական հատկանիշների ընդգրկման լայնությունից և խորությունից, ընտրված նմուշներից և մրցունակության այլ գործոններից: Գործնականում անհրաժեշտ է հաշվի առնել, որ ճշգրտության մեծությունը կախված է լրացուցիչ ծախսերի հետ, որոնք միշտ չէ, որ հնարավոր է իրականացնել: Հետևաբար սկզբնական փուլում անհրաժեշտ է վերլուծություն իրականացնել լրիվ ծավալով՝ նպատակ ունենալով հետագայում փորձի և հետազոտական եղանակների կիրառման շնորհիվ ընդլայնել դիտարկվող հատկանիշների անալիտիկ հաշվարկային մեթոդների և տեղեկատվական աղբյուրների շրջանակները: Սակայն պետք է նկատի ունենալ, որ սկզբնական փուլում ճշգրտությունը պետք է ապահովվի մրցունակության վերլուծության արդյունքների պրակտիկ կիրառությամբ:

Արդյունաբերական նշանակության ապրանքների՝ սպառողների համար մրցունակության չափանիշը f ցուցանիշն է, ընդ որում ընտրությունը կատարվում է

այն արտադրանքի օգտին, որի տեսակարար օգտակար էֆեկտը առավելագույնն է բոլոր դիտարկվող նմուշներից.

$$f = \frac{\Pi_{\Sigma}}{З_{\Sigma}} \rightarrow max$$

Հետևաբար տեխնիկատնտեսական մրցունակության պայմանը կընդունի հետևյալ տեսքը.

$$i_f = \frac{f}{f_{\delta}}$$

$$i_f \rightarrow max$$

Որակի ինտեգրալ ցուցանիշը, մեր կարծիքով, կարող է արդյունավետ օգտագործվել նոր ապրանքների մրցունակության ռազմավարության մշակման ժամանակ:

Բանալի բառեր՝ *մրցակցություն, մրցունակություն, ապրանք, արտադրանք, մեթոդ, տեխնիկատնտեսական մրցունակություն, որակ, էֆեկտ:*

Օգտագործված գրականություն

1. Առաքելյան Վ.Հ., Ղուլոյան Հ.Մ., Գրիգորյան Գ.Ռ., Մարտիրոսյան Ռ.Մ., Որակի կառավարումը բիզնեսում (փորձ և հիմնախնդիրներ), «Նահապետ», 2014:

2. Выков В.А., Конкурентоспособность токара: Научные основы, методы оценки, управления, М., Научная книга, 2003,

3. Юдапов А.Ю., Конкуренция товара и практика // Учеб. практ. пособие, ГНОМ и Д., 2001.

EVALUATION METHODS OF TECHNICAL LEVEL OF COMPETITIVENESS

G. R. GRIGORYAN
Yerevan state university applicant

This article discusses actual problems of evaluation of technical level. Based on the research results, the author offers to evaluate the technical level of the product by the method of integral index. According to the author, this index can be used effectively during the development of the strategy to increase the competitiveness of the product. Moreover, the results of this index of products, consumers or competition may provide maximum specific useful effect.

МЕТОДЫ ОЦЕНКИ ТЕХНИЧЕСКОГО УРОВНЯ КОНКУРЕНТОСПОСОБНОСТИ

Г. Р. ГРИГОРЯН
Соискатель Ереванского государственого университета

В статье рассматриваются актуальные проблемы оценки технического уровня. Исходя из результатов исследований, автор предлагает оценивать технический уровень продукта с помощью интегрального показателя. По мнению автора, этот показатель может эффективно использоваться во время разработки стратегии для повышения конкурентоспособности продукта. Более того, результаты этого показателя продуктов, потребителей или конкуренции могут обеспечить максимальный удельный полезный эффект.

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի հայցորդ

Արտադրանքի տեխնիկական մակարդակը (որակը) բնութագրող շատ չափորոշիչներ չունեն բնական ֆիզիկական չափ, և հետևաբար դրանց անմիջական քանակական արտահայտումը կոնկրետ ֆիզիկական մեծությունների տեսքով անհնար է:

Ակնհայտ է, որ այդպիսի ցուցանիշները կապված են արտադրանքի էմոցիոնալ և գեղագիտական կողմերի հետ և առաջացել են սպառողների վրա թողած ազդեցության արդյունքնում: Դրանց թվին մասնավորապես պատկանում են գեղագիտական (ապրանքի և փաթեթավորման դիզայնը, արտահայտչությունը, ձևի և գունային գամմայի ամբողջականությունը և ռացիոնալությունը) և օրգանոլեպտիկ ցուցանիշները (գույն, համ, հոտ):

Որպեսզի այդ ցուցանիշները ներառվեն միասնական մեթոդոլոգիայի հիման վրա իրականացվող մրցունակության վերլուծության մեջ, անհրաժեշտ է, որ դրանք ունենան քանակական բնութագրում: Դա կարելի է իրականացնել՝ կիրառելով գնահատման փորձագիտական մեթոդներ, որոնք ձևավորվում են մարդու (փորձագետի) կողմից ապրանքի (արտադրանքի) այս կամ այն հատկանիշի ընկալման սուբյեկտիվ վերլուծության միջոցով և արտահայտում են արդյունքը քանակական գնահատականի (բալերի) միջոցով: Տվյալ մեթոդը օգտագործվում է փորձաքննությունների (փոխարկումների) կազմակերպման միջոցով, որոնց մասնակիցները գնահատում են արտադրանքի հատկանիշներն ըստ սահմանված սանդղակի: Ընդ որում կարևոր է, որ փորձարկման ենթարկվեն մի քանի ապրանք, որոնց թվում նաև դիտարկվող ապրանքն է: Օբյեկտիվ պատկեր ստանալու համար անհրաժեշտ է ապահովել մի շարք փորձագետների մասնակցությունը այդ գործընթացին, որպեսզի ապահովի ստացված արդյունքների հավաստիության անհրաժեշտ մակարդակը: Ստացված գնահատականների միջոցով կարելի է հաշվարկել մրցունակության գնահատման ժամանակ օգտագործվող ցուցանիշների մեծությունը: Այդպիսի մեթոդը, մեր կարծիքով, կարելի է կիրառել ոչ միայն առանձին ցուցանիշների, այլ նաև դրանց խմբերի գնահատման ժամանակ: Նման մոտեցումը բավականին օրինաչափ է և քիչ ծախսեր է պահանջում:

Հարկ է նշել, որ մրցունակության գնահատման ժամանակ անհրաժեշտ է կազմել գնահատման հետագա ընթացակարգում օգտագործվող բոլոր ցուցանիշների ցանկը:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունների արդյունքները, ոչ բոլոր կազմակերպություններն են ձգտում կազմել չափանիշների ամբողջական ցանկ: Արտասահմանյան հետազոտողների կարծիքով՝ ամերիկյան կազմակերպություն-

ներն օգտագործում են 3 և ընդհանուր օգտագործվող չափանիշներից ոչ ավելի, քան 6-7-ը, երբ հայրենական կազմակերպություններում այդ չափանիշների թիվը չի գերազանցում 5-ը:

Շատ քիչ կազմակերպություններ են կազմում բավականին մեծ ցանկ՝ բաց թողնելով արտադրանքի մրցունակության վրա հնարավոր ազդեցություն ունեցող շատ կարևոր չափանիշներ: Այս հանգամանքով կարելի է բացատրել այն, որ շատ դեպքերում նոր ապրանքը շուկայում կոմերցիոն հաջողություն չի ունենում:

Չափանիշների այդ ցանկը ընկած է ապրանքի մրցունակության ու «պրոֆիլի» կազմման հիմքում, որտեղ յուրաքանչյուր չափանիշ ստանում է բալերով արտահայտված փորձագիտական գնահատական:

Որպես կանոն, որակի սուբյեկտիվ գնահատականը տրվում է որոշակի սպառողների՝ ելնելով ապրանքին ներկայացվող պահանջներից: Ավելի կշռված գնահատական է ստացվում տվյալ ապրանքի վերաբերյալ այն դեպքում, երբ հաշվառումը կատարվում է սպառողների լայն շրջանակից հավաքագրված կարծիքների հիման վրա: Որակի գնահատման օբյեկտիվ մոտեցումը ենթադրում է դիտարկվող արտադրողի արտադրանքը համեմատել մրցակցի կողմից արտադրվող արտադրանքի հետ: Հարկ է նշել, որ համեմատությունը շատ հաճախ իրականացվում է ապրանքի սպառողական հատկանիշները արտացոլող չափորոշիչների շարքի համադրման միջոցով: Ապրանքի մրցունակության գնահատումը, որը իրականացվում է «պրոֆիլների» մեթոդով, հիմնվում է ապրանքի մրցունակության դիֆերենցիալ գնահատման մեթոդոլոգիայի հիման վրա:

Քանի որ մրցակիցների կողմից արտադրվող արտադրանքի նմանօրինակները բազմազան են և առանձին գործոնների ազդեցությունը մրցունակության վրա ունի տարբեր ուղղություններ, հնարավոր է իրականացնել արտադրանքի մրցունակության ընդհանուր գնահատում ըստ որակի և ըստ տնտեսական բնութագրիչների խմբային և ընդհանրացված ցուցանիշների:

Ակնհայտ է, որ իրական պայմաններում ընդհանուր գնահատականի մեջ յուրաքանչյուր չափանիշ տարբեր կշիռ ունի, ուստի ապրանքի մրցունակության «պրոֆիլ» մեթոդը կարելի է կիրառել գնահատման ժամանակ օգտագործվող բոլոր գործոնների հավասարակշռության պայմաններում:

Ցուցանիշների աստիճանակարգի հաշվառումը իրականացվում է բազային գնահատման համակարգի վերափոխման միջոցով: Այդ համակարգի առանձնահատկությունն այն է, որ ցուցանիշների առանձին խմբերին, կախված գնահատման ամփոփիչ արդյունքում զբաղեցրած տեղից, վերագրում են որոշակի աստիճանի բնութագրիչներ:

Տվյալ մոտեցման ժամանակ բացահայտվում են ապրանքների դիտարկվող խմբին սպառողների կողմից ներկայացվող պահանջներին բավարարող տարբեր չափանիշներ, դրանց աստիճանակարգը և համեմատական կարևորությունը (բնութագրիչների այն միջակայքի սահմաններում, որը կարող է նկատել և գնահատել սպառողը), իրականացվում է դիտարկվող ապրանքի և ապրանքների

սպառողական բնութագրիչների համեմատում: Ընդհանուր գնահատականը դուրս է բերվում ապրանքի մրցունակության բնութագրիչ հանդիսացող բալերի գումարից:

Փորձագիտական մեթոդների վերափոխված տեղերի գումարի մեթոդն է, որ օգտագործվում է միատեսակ օբյեկտների և համանման ցուցանիշների համեմատական վերլուծության ժամանակ: Ըստ յուրաքանչյուր ցուցանիշի՝ իրականացվում է օբյեկտների ռանժիրովկա և ըստ այդ ցուցանիշի՝ որոշվում է օբյեկտի տեղի համարը:

Ամփոփ կախվածությունը որոշվում է հետևյալ կախվածության միջոցով.

$$K=\sum Pi \cdot mi$$

mi-ը գնահատվող օբյեկտի տեղի համարն է՝ ըստ մասնավոր ցուցանիշի[1]:

Բանալի բառեր՝ *շուկա, մրցակցություն, ապրանք, արտադրանք, կախվածություն, փորձագիտական մեթոդ, մրցակցություն, մրցունակություն, արդյունավետություն:*

Օգտագործված գրականություն

1. Առաքելյան Վ.Հ., Ղուլոյան Հ.Մ., Գրիգորյան Գ.Ռ., Մարտիրոսյան Ռ.Ս., Որակի կառավարումը բիզնեսում (փորձ և հիմնախնդիրներ), Եր., Նահապետ, 2014:

2. Быков В.А., Конкурентоспособность товара: научные основы, методы оценки, управление, М., Научная книга, 2003.

3. Котов В.И., Татьянченко М.А., Методологические основы конкурентносбособности экспортной продукции, М., Экономика, 1988.

[1] Շուկայի հետազոտությունների ժամանակ փորձագիտական մեթոդների օգտագործումը, այդ թվում նաև որակի և մրցունակության վերլուծության ժամանակ, լայն տարածված է արտասահմանյան կազմակերպությունների պրակտիկ գործունեության մեջ (տես Котов В.И., Татьянченко М.А., Методологические основы конкурентоспособности экспортной продукции, М., Экономика, 1988): Այդ ոլորտում գործում են հետազոտական ընկերություններ, որոնք մասնագիտացված են նման հետազոտությունների անցկացման գործում: Օրինակ կարող է ծառայել «Штифтунг варентест» կազմակերպությունը, որը ԳՖՀ շուկայում իրականացվող ապրանքների համար առաջարկում է վերլուծական ծառայություններ: Այդ կազմակերպության կողմից օգտագործվող մեթոդոլոգիան ընդհանուր առմամբ հիմնված է տվյալ հոդվածում դիտարկված սկզբունքների վրա:

BEHAVIORAL METHODS FOR EVALUATION OF TECHNICAL LEVEL OF A PRODUCT

R. M. MARTIROSYAN
Yerevan state university applicant

This article discusses the problems of formation of behavioral models for evaluation of technical level of a product. It reveals the need to use behavioral models in the process of competitiveness evaluation. It discusses and proposes the application area of behavioral method. According to the author, this method is effectively applied in the analysis and evaluation of the quality and competitiveness of the final product.

ПОВЕДЕНЧЕСКИЕ МЕТОДЫ ОЦЕНКИ ТЕХНИЧЕСКОГО УРОВНЯ ПРОДУКТА

Р. М. МАРТИРОСЯН
Соискатель Ереванского государственого университета

В статье рассматриваются проблемы формирования поведенческих моделей для оценки технического уровня конкурентоспособности продукта. Выявляется необходимость применения поведенческих моделей в процессе оценки конкурентоспособности. Обсуждается и предлагается область применения поведенческого метода. По мнению автора, этот метод эффективно применять при анализе и оценке качества и конкурентоспособности конечного продукта.

ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ԱՐԴԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ռ. Մ. ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
Երևանի պետական համալսարանի հայցորդ

Որպեսզի շուկայական տնտեսության պայմաններում կազմակերպությունները դիմակայեն սուր մրցակցությանը և պահպանեն իրենց կայուն դիրքը շուկայում, պետք է մշակեն և իրականացնեն ճկուն գնային քաղաքականություն, քանի որ ներֆիրմային գնագոյացումը հանդիսանում է մրցունակության ապահովման լավագույն գործիք:

Ինչպես հայտնի է, արտադրանքի գնի ձևավորման վրա ազդում են երեք հիմնական գործոններ՝ արտադրանքի արտադրություն, սպառողական պահանջմունքի բավարարում և մրցունակություն: Հենց մրցակցության պայմաններում գինը որոշում է շուկան (սպառողը): Հետևաբար ապրանքարտադրողի ռազմավարության ելակետ պետք է հանդիսանա սպառողի կողմից ընդունելի գներով շուկա ապրանք ներկայացնելը: Այս դեպքում ապրանքի ստեղծման ծախսերի մակարդակը պետք է լինի ավելի ցածր, քան կազմակերպության կողմից սպասվելիք շահույթի մակարդակը: Այսպես մրցունակության մենեջմենթը, ի տարբերություն ծախսերի հաշվառման դասական մեթոդների, իր գնային ռազմավարության իրականացման նպատակով կատարում է ծախսերի նախնական հաշվառում: Ուստի արտադրանքի որակի ժամանակակից մոտեցումը դիտարկվում է ոչ միայն ապրանքի կատարելագործման գործընթաց, այլ այն իր մեջ ներառում է կազմակերպության գործունեության բոլոր բնագավառները, աշխատանքների որակի կառավարման ողջ համակարգը: Կազմակերպության մրցունակության բարձրացման գործընթացում առանձնահատուկ տեղ ունի որակի կառավարման համակարգում իրականացվող վերահսկողությունը, որն ապահովում է կազմակերպության շահութաբերության բարձրացման նպատակով իրականացվող տնտեսական գործունեության վերլուծություն և կառավարում: Վերջինս իր մեջ ներառում է բարձրորակ արտադրանքի ստեղծման ծախսերի օպերատիվ հաշվառում, վերլուծություն և գնահատում:

Ծախսերի հաշվառման համակարգի անհրաժեշտությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ ապրանքարտադրողի մոտ խոտանից և անորակ արտադրանքի արտադրության և առաքման հետ կապված կորուստների չափերը շատ մեծ են: Որակի ապահովման ծախսերի որոշման համակարգը, լինելով արտադրանքի որակի կառավարման արդյունավետ միջոց, զգալի չափերով թույլ է տալիս բացահայտել արտադրանքի որակի բարձրացման ուղղությամբ տարվող աշխատանքների հիմնական ուղղությունը՝ հաշվի առնելով այն առաջնահերթությունը, որտեղ կազմակերպությունը առավել վնաս է կրում և, հետևաբար, գոյություն ունեն ծախսերի կրճատման առավելագույն հնարավորություններ: Այդ համակարգը ապահովում է.

● կազմակերպության գործունեության արդյունքների անհրաժեշտ մակարդակի հասնելու համար ծախսերի նվազեցումը,


● յուրաքանչյուր աշխատատեղում, տեղամասում և արտադրամասում ծախսերի հաշվառման և որոշման միասնական ձևի կիրառումը,

● յուրաքանչյուր արտադրանքի գծով որակի արժեքային բնութագրիչների և իրականացվող միջոցառումների տնտեսական գնահատումը,

● ծախսերի և սպառողական հատկանիշներին համապատասխան մակարդակի օպտիմալ հարաբերակցության սահմանումը,

● արտադրանքի մրցունակության մակարդակի բարձրացումը:

Ծախսերի դասակարգումը և դրանց բովանդակության բացահայտումը խիստ կարևոր են ոչ միայն ծախսերի այս կամ այն բնույթի ընկալման համար, այլ նաև դրանց կրճատման հիմնական եղանակների հիմնավորման և դրանց ֆինանսավորման աղբյուրների որոշման համար:



Գծապատկեր 1. Որակի ծախսերի կառուցվածքը

Որակի արդյունավետ կառավարման նպատակով բոլոր ծախսերն ըստ նշանակության դասակարգվում են երկու խմբի՝ օպերատիվ և ռազմավարական (տե՛ս գծապատկեր 1):

Ռազմավարական ծախսերը կապված են որակի պոտենցիալ մակարդակի ապահովման հետ, ուստի դրանք հանդիսանում են թողարկվող արտադրանքի որակի բարձրացման երկարաժամկետ ռազմավարության պլանավորման ելակետային տվյալներ (նոր արտադրանքի մշակում, կոնստրուկտորային, տեխնոլոգիական աշխատանքների իրականացում, նոր արտադրատեսակների պատրաստման և վերահսկման միջոցների ստեղծում): Արտադրանքի արտադրության գործընթացում գնահատվող օպերատիվ ծախսերը օգտագործվում են որակի կարգավորման ժամանակ:

Հետևաբար այդ ծախսերի անվանացանկը պետք է լինի դինամիկ և ունակ՝ հաշվի առնելու հաշվառման ենթակա ծախսերի ընթացիկ փոփոխությունների միտումները: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հայրենական շատ կազմակերպություններում որակի ապահովման վրա կատարված ծախսերի հաշվառման համակարգը լրիվ ծավալով չի գործում: Հստակ չէ ծախսերի ցուցանիշների դասակարգումը, բացահայտված չէ դրանց բովանդակությունը: Որակի ապահովման ծախսերի օպտիմալացման հարցը չի ընդգրկում բոլոր բաղկացուցիչները և չի հանդիսանում կազմակերպությունների ղեկավարության կարևորագույն խնդիրը:

Մեր կարծիքով՝ ծախսերի դասակարգման համակարգի մշակման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել հետևյալ չափանիշները.

- համակարգը պետք է հստակեցնի ծախսերի բաղկացուցիչներն ըստ ծագման տեղի և պարբերականության,
- համապատասխանի միջազգային պահանջներին (ISO-9000), պետք է հնարավորություն ընձեռի ծախսերի հաշվառման և վերլուծության գործընթացների ավտոմատացման:

Ծախսերի դասակարգման ընդհանուր մեթոդոլոգիայի մշակման համար իրականացված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս այդ նպատակի համար օգտագործել ապրանքի կյանքի պարբերաշրջանի տեսակետը և որակի ապահովման ծախսերը դիտարկել այդ պարբերաշրջանի բոլոր փուլերում՝ մշակման, արտադրության և շահագործման՝

Зոր = Зմշակ + Зարտ + Зշան

Ակնհայտ է, որ որակի ապահովման ծախսերը տրամաբանորեն կապված են նախագծման, արտադրության և շահագործման գործընթացներում իրականացվող համալիր աշխատանքների հետ:

Արտադրանքի որակի ապահովումը պայմանավորված և պարբերաբար իրականացվող միջոցառումների համախումբ է, որը որակի պարույրի յուրաքանչյուր փուլի իրականացման համար անհրաժեշտ պայմաններ է ստեղծում (ըստ 150-9000) այնպես, որ արտադրանքը բավարարի ներկայացրած պահանջները: Այսպիսով, ծախսերի այս խմբին կարելի է դասել մրցունակ արտադրանքի մշակման, արտադրման, դրանց շահագործման հետ կապված բոլոր ծախսերը և կորուստները: Հարկ է նշել, որ այս ծախսերին կարելի է ավելացնել համապատասխան տույժերն ու տուգանքները:

Արտադրանքի մշակման ընդհանուր ծախսերի մեջ նախագծման փուլում որակի ապահովման ծախսերի խմբում ընդգրկվում են նաև կոնստրուկտորական, տեխնոլոգիական աշխատանքների իրականացման, նոր տեխնոլոգիական, վերահսկիչ – չափող, փորձարարական սարքավորումների ստեղծման, նոր նյութերի մշակման կամ օգտագործման, կոմպլեքսավորող արտադրանքի, ծրագրային ապահովման ծախսերը:

Արտադրական գործընթացում որակի ապահովման ծախսերի խմբին կարելի է դասել դետալների հանգույցների մուտքային վերահսկման, պատրաստի ար-

տադրանքի ընդունման, վերահսկման և փորձարկման, տեխնոլոգիական, վերահսկիչ-չափող և փորձարարական սարքավորումների ձեռքբերման, վերահսկման միջոցներով տեխնոլոգիական վերազինման և այլ ծախսերը:

Ծախսերի երրորդ խմբի մեջ են մտնում արտադրանքի շահագործման և կորուստների ծախսերը:

Որակի ապահովման ծախսերի որոշման ժամանակ առանձնահատուկ տեղ են զբաղեցնում կազմակերպամեթոդական բնույթի ծախսերը, որոնք առաջանում են որակի ապահովման գործընթացի կառավարման ժամանակ որոշակի կազմակերպչական համակարգի շրջանակներում:

Որակի ապահովման համակարգի կառավարումը, մեր կարծիքով, իրենից ներկայացնում է օպերատիվ բնույթի գործունեություն և մեթոդների ամբողջություն: Դրանք են արտադրանքի արտադրության կամ որակի կառավարման տարբեր բնույթի անհամապատասխանությունների բացահայտումը և դրանց պատճառների վերացումը:

Որակի կառավարման հետ կապված ցանկացած ընթացակարգերը և միջոցառումները, որպես կանոն, իրականացվում են որակի պարույրի և կառավարման փակ շղթայի բոլոր հատվածներում՝ վերամիավորման, հաշվառման վերլուծության և ինչպես օպերատիվ, այնպես էլ կուտակված տեղեկատվության հիման վրա որոշումների ընդունման:

Հարկ է նշել, որ երրորդ խմբին են դասվում նաև մարքեթինգային գործունեության, կազմակերպչական փաստաթղթերի մշակման, արտադրանքի որակի բարձրացման ծրագրերի և պլանների, արտադրանքի արտադրության և որակի համակարգի սերտիֆիկացման, աշխատակիցների որակական մակարդակի բարձրացման և այլ ծախսերը:

Ակնհայտ է, որ որակի ապահովման ծախսերի նման դասակարգումը հնարավորություն կընձեռի կազմակերպության ղեկավարությանը իրականացնելու ավելի արդյունավետ գնագոյացման ռազմավարություն:

Բանալի բառեր՝ *արտադրանք, ապրանք, գին, ռազմավարություն, արտադրություն, որակ, կառավարում, ծախսեր, գնահատում, մրցունակություն:*

Օգտագործված գրականություն

1. Առաքելյան Վ. Հ., Ղուլոյան Հ. Մ., Գրիգորյան Գ. Ռ., Մարտիրոսյան Ռ. Ս., Որակի կառավարումը բիզնեսում (փորձ և հիմնադիրներ), «Նահապետ», Երևան, 2014:

2. Шуляк П. Н., Цепообразование // Учебно-практическое пособие (Шулян П. И., 12 – ое издание, перераб. и доп., М., Издательско-торговая корпорация «Дашковик», 2010.

ACTUAL PROBLEMS OF QUALITY COST CLASSIFICATION OF A PRODUCT

R. M. MARTIROSYAN
YSU applicant

This article discusses actual problems of quality cost classification of a product. According to the author, the quality costs are divided into two groups – operational and strategic. Moreover, the strategic costs are connected with potential level of quality and operational costs are used during quality regulation. Afterwards, Cost calculation method is offered, which takes into account the quality cost assurance at all stages of the production cycle.

АКТУАЛЬНЫЕ ПРБЛЕМЫ КЛАССИФИКАЦИИ ЗАТРАТ НА ОБЕСПЕЧЕНИЕ КАЧЕСТВА ПРОДУКТА

Р. М. МАРТИРОСЯН
Соискатель ЕГУ

В статье рассматриваются актуальные проблемы классификации затрат на обеспечение качества продукта. По мнению автора, затраты на обеспечение качества продукта делятся на две группы – оперативные и стратегические. При этом, стратегические затраты связаны с обеспечением потенциального уровня качества. А оперативные затраты применяются при регулировке качества. Затем предлагается метод расчета затрат, который учитывает затраты обеспечения качества на всех этапах производственного цикла.

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԱՋԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Մ. Թ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հայցորդ

Կյանքի ցանկացած ոլորտում մեզ սպառնում են տարբեր ռիսկեր, սակայն անհրաժեշտ է տարբերել ընդհանուր և տնտեսական (ձեռնարկատիրական) ռիսկերը միմյանցից: Լայն իմաստով ռիսկը հատուկ է ցանկացած սուբյեկտին իր գործունեության ընթացքում, անկախ գործունեության բնույթից, որը պայմանավորված է արտաքին և ներքին միջավայրում առկա անորոշությամբ:

Ավելի նեղ իմաստով ռիսկը ձեռնարկատիրական գործունեություն իրականացնելու արդյունքում հնարավոր կորուստներ կրելու վտանգն է, այսինքն՝ նեղ իմաստով ռիսկը հենց տնտեսական ռիսկն է[1]: Տնտեսագիտության մեջ և առհասարակ տնտեսական գործունեությամբ զբաղվելիս նախ և առաջ առնչվում ենք ձեռնարկատիրական ռիսկի հետ:

Տնտեսագիտական գրականության մեջ «ռիսկ» հասկացությունը փոխկապակցված է «ռիսկային իրավիճակ» և «ռիսկի գիտակցում» հասկացությունների հետ: Ընդհանուր առմամբ «ռիսկային իրավիճակ» կամ «ռիսկային իրադրություն» ասելով՝ պետք է հասկանալ տարբեր հանգամանքների զուգորդում, որոնք ստեղծում են որոշակի անորոշ պայմաններ այս կամ այն բնույթի գործունեության համար, իսկ այդ պայմանները կարող են նպաստել կամ խոչընդոտել տվյալ գործունեությանը: Իսկ երբ սուբյեկտը գիտակցում է, որ գտնվում է այդ իրավիճակում, ապա վերջինս էլ անվանվում է «ռիսկի գիտակցում»:

Տնտեսագիտական գրականության մեջ հաճախ տարբերակում չի դրվում «ռիսկ» և «անորոշություն» հասկացությունների միջև, մինչդեռ դրանք տարբերվում են: Օրինակ՝ Լապուստան ռիսկը բնութագրում է իբրև մի իրավիճակ, երբ որևէ իրադարձության ի հայտ գալու հավանականությունը մեծ է և կարող է քանակապես գնահատվել: Մինչդեռ երկրորդի դեպքում նման իրավիճակի ի հայտ գալու հավանականությունը նախապես գնահատել հնարավոր չէ[2]:

Ըստ Շապկինի՝ ռիսկը ցանկացած եղանակով գնահատված հավանականությունն է, իսկ անորոշությունը այն է, ինչը գնահատման չի ենթարկվում[3]:

Եթե ռիսկը հիմնավորված չէ հաշվարկներով, այն մեծ մասամբ վերջանում է անհաջողությամբ և ուղեկցվում է որոշակի կորուստներով: Որպեսզի նվազեցնենք ռիսկի հետ կապված բացասական երևույթները, անհրաժեշտ է բացահայտել նրա հիմնական տեսակները, հատկանիշները, ծագման աղբյուրները, թույլատրելի մակարդակը, ռիսկի չափման և նվազեցման մեթոդները: Վերջինս իրականացնելու համար ներկայացնենք տարբեր դպրոցների կողմից «ռիսկ» հասկա-

---

[1] Половинкин П. Д., Риск в предпринимательской деятельности, М., 1999, с 128.

[2] Лапуста И. Г., Шаршукова Л. Г., Риск предпринимательской деятельности, Москва, 1998, с. 48.

[3] Шапкин А.С., Экономические и финансовые риски. Оценка, управление, портфель инвестиций// Монография, М., 2003, 544 с.

ցության մոտեցումներն ու մեկնաբանումները, որը հնարավորություն կտա «ռիսկը» տեսնել ու գնահատել իր բազմաչափության և բազմակողմության մեջ:

Տնտեսագիտական գրականության մեջ գոյություն ունեն տնտեսական ռիսկի մեկնաբանման երկու խոշոր տեսություններ՝ դասական և նոր դասական: Ռիսկի դասական տեսության հիմնադիրներ Ջ. Ց. Միլը, Մ. ՈՒ. Սենիորը, ինչպես նաև Ֆ.Խ. Նայթը ռիսկը սահմանում են որպես ցանկացած ձևով գնահատված հավանականություն[1]: Դասական տեսության հիմնական տարբերակիչ առանձնահատկությունն այն էր, որ այս տեսության ներկայացուցիչները տնտեսական ռիսկը մեկնաբանում էին որպես ձեռնարկատիրական գործունեության արդյունքում վնաս կրելու հավանականություն: «Տնտեսական ռիսկ» հասկացության միակողմանի ընկալման այս դպրոցի քննադատության արդյունքում ձևավորվում է ռիսկի նոր դասական տեսությունը, որի ներկայացուցիչներից էին Ա. Մարշալը, Ա.Ս. Պիգուն և սկանդինավյան դպրոցի ներկայացուցիչները: Վերջիններս ձեռնարկատիրական ռիսկը տեսնում էին սպասվելիք շահույթի տատանման մեջ[2]:

Ռիսկի նորդասական տեսությունը հետագայում զարգացվում է Տ. Բաչկայիի և Դ.Մեսսենայի աշխատություններում: Ըստ նրանց՝ ռիսկը հնարավորությունն է շեղվելու այն նպատակից, որին հասնելու համար ընդունվել է տնտեսական որոշումը[3]:

Մ.Մելքումյանը ռիսկը սահմանում է որպես ռեսուրսների պոտենցիալ հնարավոր կամ հավանական կորուստների վտանգ կամ սպասված եկամուտների չստացում: Այլ կերպ՝ սպառնալիք, որ ձեռնարկատերը վնասներ կկրի լրացուցիչ ծախսերի տեսքով կամ սպասվածից քիչ եկամուտ կստանա, որի արդյունքում կիջնի շուկայի պայմաններին նրա հարմարվողականության մակարդակը[4]:

Ըստ Յ. Շումպետերի՝ եթե ռիսկերն անտեսվեն տնտեսական առումով, ապա դրանք կդառնան մի կողմից շահույթի, մյուս կողմից՝ վնասի աղբյուր[5]:

Գ.Բ. Պոլյակը ռիսկը համարում է պոտենցիալ, թվաբանորեն չափելի կորուստների հնարավորություն: «Ռիսկ» հասկացությանը հատուկ է անորոշությունը, որը ենթադրում է որևէ ձեռնարկատիրական գործունեության ընթացքում ոչ բարենպաստ իրավիճակի ի հայտ գալը իր հետևանքներով[6] :

Նմանատիպ կարծիքի է Օ.Լ. ՈՒստենկոն, որը ռիսկը սահմանում է որպես գործունեության արդյունքում արժեքների կորստի հնարավորություն (ֆինանսական, նյութական, ապրանքային ռեսուրսներ), եթե գործունեության ընթացքում իրադրությունն ու պայմանները շեղվում են կանխատեսվածից ու հաշվարկվածից[7]:

Ելնելով վերը ներկայացված մոտեցումների քննական վերլուծության արդյունքներից՝ կարծում ենք՝ ռիսկը կարելի է սահմանել որպես օբյեկտիվ և սուբյեկտիվ հանգամանքներով պայմանավորված վտանգ այն բանի, որ ձեռներեցը կունենա նախատեսվածից շեղված արդյունք, որը, ըստ իր սուբյեկտիվ

---

[1] Сумцова Н. В., Экономическая теория, М, 2000, с. 311.
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] Бачкаи Т., Мессена Д., Мико Д., Хозяйственный риск и методы его измерения, М., Экономика, 1990, с. 82.
[4] Մելքումյան Մ,, Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, Երևան, 2014, էջ 176:
[5] Шумпетер И., Теория экономического развития, М., Прогресс, 1982, с.21.
[6] Поляк Г. Б., Финансовый менеджмент, М.,1997, с. 125.
[7] Устенко О. Л., Теория экономического ринка, Киев, 1997, с. 31.

գնահատականների, նյութական կամ ոչ նյութական կորուստ է: Այլ կերպ ռիսկը օբյեկտիվորեն կամ սուբյեկտիվորեն գնահատելի անորոշությունն է, որը նվազեցնում է վերջնական նպատակին հասնելու հավանականությունը:

Հարկ է նշել նաև, որ կախված մի կողմից ելակետային տեղեկատվության ծավալներից, մյուս կողմից՝ սուբյեկտից՝ հավանական իրավիճակները լրացվում են անորոշությամբ: Եվ, բնականաբար, որքան մեծ է անորոշությունը, այնքան փոքր է կանխատեսվածի ի հայտ գալու հավանականությունը:

Ընդունված է տարբելել ռիսկերի հեևյալ հիմնական տեսակները.

- քաղաքական ռիսկ,
- տեխնիկական ռիսկ,
- արտադրական ռիսկ,
- առևտրային ռիսկ,
- ֆինանսական ռիսկ,
- ճյուղային ռիսկ,
- ինովացիոն ռիսկ:

Քաղաքական ռիսկը պետական քաղաքականության հետևանքով կորուստների առաջացման կամ եկամտի կրճատման հավանականությունն է: Այս տեսակի ռիսկին ուշադրություն դարձնելը հատկապես կարևոր է ոչ կայուն օրենսդրությամբ, չկայացած ձեռնարկատիրական մշակույթով և ավանդույթներով երկրներում: Քաղաքական ռիսկը մշտապես հատուկ է ձեռներեցությանը, նրանից հնարավոր չէ խուսափել, փոխարենը պետք է հաշվի առնել և գնահատել:

Տեխնիկական ռիսկը գնահատվում է արտադրության կազմակերպման, սեփական ուժերով սարքավորումների վերանորոգման հնարավորությամբ: Տեխնիկական ռիսկերին են վերաբերում կորուստները՝ կապված գիտահետազոտական աշխատանքների բացասական արդյունքների հետ, սարքավորումների խափանման հետ, կոնստրուկտորատեխնոլոգիական մշակումների ընթացքում պլանավորված տեխնիկական պարամետրերին չբավարարելու հետ և այլն:

Արտադրական ռիսկերը պայմանավորված են ապրանքների և ծառայությունների արտադրության հետ՝ կապված հումքի և նյութերի ոչ արդյունավետ օգտագործման, ինքնարժեքի աճի, աշխատաժամանակի կորստի, արտադրության նոր մեթոդների անարդյունավետ կիրառման, շուկայում արտադրանքի (ծառայության) գնի նվազման, հիմնական ֆոնդերի բարոյական ու ֆիզիկական մաշվածության և այլն:

Առևտրային ռիսկն առաջանում է ապրանքների և ծառայությունների (որոնք գնվել կամ արտադրվել են տվյալ ձեռնարկությունում) իրացման ընթացքում՝ պայմանավորված իրացման ծավալների կրճատմամբ, մինչև վերավաճառումը տվյալ ապրանքի գնման գնի աճով, տեղափոխման ընթացքում որակի նվազմամբ և այլն:

Ֆինանսական ռիսկերը դրսևորվում են տնտեսվարող սուբյեկտների, բանկերի և ֆինանսական այլ կազմակերպությունների միջև տեղի ունեցող փոխհարաբերությունների ոլորտում, որտեղ ապրանքի դերում հանդես կարող են գալ արժույթը, դրամական միջոցները, արժեթղթերը և այլ ֆինանսական գործիքներ: Ֆինանսական ռիսկերին են վերաբերում արժութային ռիսկը, վարկային ռիսկը և

ներդրումային ռիսկը:

Արժութային ռիսկը ֆինանսական կորուստների հավանականությունն է փոխանակային կուրսի փոփոխության արդյունքում, որը կարող է տեղի ունենալ պայմանագրի կնքման և համապատասխան գործարքի իրականացման միջև ընկած ժամանակահատվածում:

Վարկային ռիսկը ծագում է այն դեպքում, երբ փոխառուն ի վիճակի չի լինում կատարել իր պարտականությունները:

Ներդրումային ռիսկը կապված է ձեռնարկության դրամական միջոցների՝ տարբեր ներդրումային նախագծերում ներդրման յուրահատկությունների հետ:

Ճյուղային ռիսկը հնարավոր կորուստներն են՝ պայմանավորված տվյալ ճյուղում տնտեսական իրավիճակի փոփոխություններով ինչպես ճյուղի ներսում, այնպես էլ այլ ճյուղերի համեմատ:

Նորամուծական ռիսկը հնարավոր կորուստն է՝ կապված նոր ապրանքների և ծառայությունների մշակման և արտադրման կամ նոր տեխնոլոգիայի կիրառման համար ձեռնարկության միջոցների ներդրմամբ, որոնք կարող են չփոխհատուցվել:

Տնտեսագիտական գրականության մեջ ձեռնարկատիրական ռիսկի հիմնական տեսակների առանձնահատկություններից և ընդհանուր հատկանիշներից ելնելով՝ դրանք դասակարգվում են ըստ որոշակի խմբերի[1] [2] [3] [4]: Այսպես.

- Ըստ ձեռնարկության ղեկավարության կամ առանձին անձի ընդունած որոշումների կիրառության մակարդակի՝ տարբերում են ռիսկի գլոբալ (մակրոտնտեսական) և լոկալ(միկրոտնտեսական) տարատեսակները:
- Կախված հնարավոր արդյունքներից՝ մաքուր(ստատիկ) և սպեկուլյատիվ(դինամիկ): Մաքուր ռիսկերը ենթադրում են բացասական կամ զրոյական արդյունքների ստացում: Սպեկուլյատիվ ռիսկերը ենթադրում են ինչպես բացասական, այնպես էլ դրական արդյունքների ստացում:
- Ռիսկերի առաջացման տևողությունից կախված՝ առանձնացնում են կարճաժամկետ, երկարաժամկետ և մշտական ռիսկեր: Կարճաժամկետի մեջ մտնում են այն ռիսկերը, որոնք ձեռներեցին սպառնում են հայտնի ժամանակահատվածի ընթացքում: Մշտական ռիսկին են դասվում այն ռիսկերը, որոնք մշտապես սպառնում են ձեռնարկատիրական գործունեությանը տվյալ աշխարհագրական տարածքում կամ տնտեսության տվյալ ճյուղում:
- Գրականության մեջ տարբերում են նաև հաշվարկային և ընթացիկ ռիսկերի տեսակները: Հաշվարկային ռիսկը գնահատվում է բիզնես պլանի նախապատրաստման փուլում, որտեղ հիմնավորվում են ձեռնարկատիրական ծրագրերը: Իսկ ընթացիկ ռիսկերը գնահատվում են բիզնեսպլանի (ծրագրի) իրականացման գործընթացում:
- Ֆինանսական կորուստներից կախված՝ տարբերում են ռիսկերի թույլատրելի, կրիտիկական և կատաստրոֆիկ տեսակները: Թույլատրելի ռիսկի պա-

[1] Մելքումյան Մ., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, Երևան, 2014թ.:
[2] Лапуста И. Г., Шаршукова Л. Г., Риски предпринимательской деятельности, М. 1998, с. 96.
[3] Խաչատրյան Գ., Ձեռնարկության էկոնոմիկա և կառավարում, Երևան, 2009, Էջ 537:
[4] И.К. Шевченко, Организация предпринимательской деятельности, Таганрог, 2004 г. Էջ 58

րագայում ձեռնարկատիրական գործունեությունը պահպանում է իր տնտեսական նպատակայնությունը, այսինքն՝ կորուստներ կան, բայց դրանք սպասվելիք շահույթը չեն գերազանցում: Կրիտիկական ռիսկի դեպքում հնարավոր կորուստները գերազանցում են սպասվելիք եկամուտները և ձեռնարկատերը վտանգի տակ է դնում գործունեության մեջ ներդրած ողջ միջոցները: Կատաստրոֆիկ ռիսկը բնութագրվում է սեփական կապիտալի կամ ձեռնարկատիրոջ ամբողջ ունեցվածքի կորստի վտանգով:

- Ապահովագրվելու հնարավորությունից կախված ռիսկերը բաժանվում են երկու մեծ խմբի՝ ապահովագրվող և չապահովագրվող: Ձեռնարկատերը կարող է ռիսկերը տեղափոխել տնտեսական այլ սուբյեկտների վրա՝ մասամբ ինքն իրեն ապահովագրելով և դրա համար իրականացնելով որոշակի ծախսումներ՝ ապահովագրական վճարումների տեսքով: Այդպիսի ռիսկեր կարող են հանդիսանալ սեփականության կորստի ռիսկը, հրդեհ բռնկվելու, վթարների ռիսկերը և այլն:
- Ըստ առաջացման ոլորտի՝ տարբերակվում են արտաքին (պայմանավորված ռիսկերի առաջացման արտաքին միջավայրի աղբյուրներով) և ներքին (ձեռնարկության ներքին սկզբնաղբյուրներով պայմանավորված) ռիսկեր:

Այսպիսով, ռիսկերի նման մեկնաբանումն ու դասակարգումը, մեր կարծիքով, հնարավորություն են ընձեռում բացահայտել ձեռնարկատիրական ռիսկերի առաջացման առանձնահատկությունները, որն էլ իր հերթին կնպաստի ռիսկերի կառավարման արդյունավետության բարձրացմանը:

Բանալի բառեր՝ *ձեռնարկատիրական ռիսկ, շուկա, կառավարում, արդյունավետություն, քաղաքականություն, ձեռներեցություն, հավանականություն, անորոշություն:*

Օգտագործված գրականություն

1. Лапуста И. Г., Шаршукова Л.Г., Риск предпринимательской деятельности, Москва, 1998г.
2. Шапкин А.С., Экономические и финансовые риски. Оценка, управление, портфель инвестиций // Монография, М., 2003г.
3. Половинкин П. Д., Риск в предпринимательской деятельности, М., 1999г.
4. Сумцова Н. В., Экономическая теория, М, 2000г.
5. Бачкаи Т., Мессена Д., Мико Д., Хозяйственный риск и методы его измерения, М., Экономика, 1990г.
6. Шумпетер И., Теория экономического развития, М., Прогресс, 1982г.
7. Поляк Г. Б., Финансовый менеджмент, М.,1997г.
8. Устенко О. Л., Теория экономического ринка, Киев, 1997г.
9. И.К. Шевченко, Организация предпринимательской деятельности, Таганрог 2004г.
10. Поляк Г. Б., Финансовый менеджмент, М.,1997, с. 125
11. Մելքումյան Մ., Ձեռնարկատիրական գործունեության կազմակերպում, Երևան, 2014:
12. Խաչատրյան Գ., Ձեռնարկության էկոնոմիկա և կառավարում, Երևան, 2009:

FEATURES OF ENTREPRENEURIAL RISKS IN CONTEMPORARY CONDITIONS

M. T. MKHITARYAN
Researcher of Armenian State University of Economics

The article discussed the specifics of the emergence of the entrepreneurial risk conditions of economy market. The approaches of the "risk" concept from the professional literature were discussed.

ОСОБЕННОСТИ ВОЗНИКНОВЕНИЯ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКИХ РИСКОВ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

М. Т. МХИТАРЯН
Соискатель Государственного экономического университета Армении

В статье рассмотрены особенности возникновения предпринимательского риска в условиях рыночной экономики. Обсуждаются существующие в профессиональной литературе подходы концепции «риска».

ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ՌԻՍԿԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ ՊԱՅՄԱՆԱՎՈՐՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Մ. Թ. ՄԽԻԹԱՐՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանի հայցորդ

Ռիսկային իրավիճակի առաջացումը պայմանավորված է տնտեսվարող սուբյեկտի շրջակա միջավայրի ներքին և արտաքին գործոններով: Արտաքին են համարվում այն գործոնները, որոնց վրա ձեռներեցը չի կարող ազդել կամ փոխել, մինչդեռ վերջիններս էապես կարող են ազդել ձեռներեցի գործունեության վրա, ուստի նա պարտավոր է դրանք հաշվի առնել:

Արտաքին գործոնները բաժանվում են երկու խմբի՝

- ուղղակի ազդեցության գործոններ,
- անուղղակի ազդեցության գործոններ:

Որպես ուղղակի ազդեցության գործոններ՝ կարելի է նշել՝

- ✓ հարկային համակարգը,
- ✓ գործընկերների հետ փոխհարաբերությունները,
- ✓ ձեռնարկատիրական հարաբերությունները կարգավորող օրենսդրությունը,
- ✓ մրցակցությունը ձեռներեցների միջև և այլն:

Տնտեսական պրակտիկան վկայում է, որ եթե հարկային բեռը կազմում է եկամտի 30%ը, ապա դա հենց այն շեմն է, որին հետևում է ներդրումների կրճատումը տնտեսության մեջ: Եթե հարկերը կազմում են եկամտի 40-50%ը, ապա դա անխուսափելիորեն տանում է ձեռնարկատիրական նախաձեռնության և արտադրության ընդլայնման շահագրգռվածության իսպառ վերացման[1]: Սակայն բացի հարկային բեռի ծանրությունից՝ ձեռնարկատիրական բնականոն գործունեությանը խոչընդոտում է նաև գոյություն ունեցող հարկային օրենսդրության անընդմեջ փոփոխումը՝ ընդ որում շատ հաճախ գործելով հետին թվով: Նմանատիպ փոփոխություններն ու լրացումները հարկային օրենսդրության մեջ զրկում են ձեռնարկատիրոջն իր գործունեության նկատմամբ վստահությունից: Եվ այսպիսով, ձեռնարկատիրական ռիսկը աճում է ոչ միայն հարկային բեռին, այլև հարկային օրենսդրության անկայունության աճին զուգընթաց:

Ինչ վերաբերում է գործընկերների հետ փոխհարաբերությունների ռիսկին, ապա այս առումով ռիսկայնությունն աճում է պայմանագրային պայմանների խախտման դեպքում, որը կարող է լինել ինչպես առաքիչների, այնպես էլ սպառողների կողմից: Պայմանագրերի խախտման պատճառներ կարող են հանդիսանալ կողմերի կամայականությունները, տնտեսական վիճակը, պետական անկայունությունը և այլն: Ռիսկայնությունը աճում է ոչ միայն պայմանագրային պայմանների խախտման, այլև համատեղ ծրագրերից գործընկերների դուրս գալով (օրինակ՝ գործընկեր կազմակերպության սեփականատերերի կամ ղեկա-

[1] Лапуста И. Г., Шаршукова Л. Г., Риски предпринимательской деятельности, М. 1998, էջ. 82.

վար մարմինների փոփոխությամբ) և դրա հետևանքով համատեղ ծրագրի նկատմամբ վերաբերմունքի փոփոխությամբ կամ պարզապես կոնֆլիկտի առաջացման հետևանքով:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ձեռնարկատիրական ռիսկի վրա էական ազդեցություն է թողնում պետական մարմինների գործունեությունը, որը իր բնույթով հակասական է, քանզի մի կողմից այն կարգավորում է ձեռնարկատիրական գործունեությունը (գնորդների և վաճառողների միջև փոխհարաբերությունները միշտ առնչվում են իրավական բազմաթիվ սահմանափակումների հետ, պետությունն է սահմանում այն բոլոր նորմատիվ ակտերը, որոնք կարգավորում են ձեռներեցի ֆինանսական և հարկային հարաբերությունները և այլն), մյուս կողմից՝ ձեռնարկատիրական գործունեությունը կարգավորող օրենսդրությունը երբեմն բնորոշվում է անորոշությամբ, տնտեսվարման պայմանների հանկարծակի փոփոխությամբ՝ դրանով իսկ ստեղծելով անբարենպաստ միջավայր ձեռներեցի համար՝ բարձրացնելով ձեռնարկատիրական ռիսկը:

Ձեռնարկատիրական ռիսկի վրա էական ազդեցություն է թողնում մրցակցությունը, քանզի ռիսկն ու մրցակցությունը միմյանց հետ սերտորեն կապված տնտեսական հասկացություններ են, որոնք փոխադարձաբար ազդում են միմյանց վրա, քանի որ ռիսկի դիմելով՝ ձեռներեցը մտնում է մրցակցային հարաբերությունների մեջ, որն էլ խթանում է մրցակցությանը և ստիպում ձեռներեցին կիրառել գործունեության նոր ձևեր և նոր արտադրանքով դուրս գալ նոր շուկաներ, որն էլ մեծացնում է ձեռնարկատիրական ռիսկը:

Ակնհայտ է, որ մրցակցային պայքարի վրա ազդում են տարբեր գործոններ. Այսպես, օրինակ՝ մրցակցությունը թեժանում է մասնակիցների քանակին զուգահեռ այն դեպքում, երբ նրանք հարաբերականորեն նման են իրենց մեծությամբ և հնարավորություններով: Ուստի որքան շատ են կազմակերպությունները, այնքան մեծ է նոր ռազմավարական նախաձեռնությունների քանակը: Եվ այն դեպքում, երբ այդ նախաձեռնությունները բերում են դրական արդյունքներ, բնականաբար մրցակից կազմակերպությունները հետաքրքրված են լինում օգտագործել այդ գաղափարներն իրենց օգտին՝ թեժացնելով մրցակցությունը: Մրցակցությունն ուժեղանում է նաև այն դեպքում, երբ տվյալ բիզնեսից դուրս գալը ավելի թանկ է նստում ձեռներեցի համար, քան մրցակցային հարաբերություններում պայքարը շարունակելը: Պայքարը շարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ բիզնեսից դուրս գալու դեպքում կրած կորուստները չեն փոքրանում մրցակցությունը շարունակելու համար անհրաժեշտ ծախսումներից: Մրցակցային հարաբերություններում հաջողությունների հասնելու համար անհրաժեշտ է, որ ձեռներեցը ուսումնասիրի իր մրցակիցների թույլ և ուժեղ կողմերը և դրանք անհրաժեշտորեն հաշվի առնի իր գործունեության ընթացքում:

Անուղղակի ազդեցության գործոնները շատ ավելի աննկատ են ազդում տնտեսական ռիսկի վրա ուղղակի գործոնների համեմատ: Մինչդեռ այդ ազդեցությունը կարող է շատ էական լինել, հետևաբար անհրաժեշտ է, որ ձեռներեցն այն հաշվի առնի իր գործունեության ընթացքում:

Անուղղակի ազդեցության հիմնական գործոններից են.

- ✓ տնտեսական իրավիճակը,
- ✓ քաղաքական իրավիճակը:

Վերջին տասնամյակը բնութագրվում է միջազգային առևտրի անկայունությամբ՝ պայմանավորված տարբեր երկրներում ինֆլյացիոն գործընթացների անհավասարաչափությամբ, էներգակիրների գների տատանմամբ: Նման պայմաններում որոշ երկրներ իրենց պահում են ֆինանսական թույլ պլանավորմամբ կազմակերպությունների նման՝ պարտք վերցնելով ֆինանսական միջոցներ և օգտագործելով այն ոչ արդյունավետ: Պարտքային պարտավորությունների աճին զուգահեռ պարտավորությունների ձեռքբերման պայմաններն ավելի կոշտ են դառնում, թուլանում է սեփական արդյունաբերության և առևտրի պաշտպանության հնարավորությունը, և գնային շոկը, որը ներքին գները մոտեցնում է համաշխարհայինին, դժվար իրավիճակի առջև է կանգնեցնում կազմակերպություններին: Ինֆլյացիոն գործընթացները խոչընդոտ են հանդիսանում մասնավորապես գիտատեխնիկական հիմքի վրա գործող արտադրության արդյունավետության համար, քանի որ նոր տեխնոլոգիաների ներդրումը ավելի ու ավելի թանկ է դառնում: Ավելի շահավետ է դառնում պահպանել հնացած, բայց հարաբերականորեն էժան սարքավորումները և աշխատատար տեխնոլոգիաները: Առանձին կազմակերպությունն ունակ չէ պայքարելու ազգային մասշտաբ ունեցող ճգնաժամի դեմ, բայց նա կարող է ճկուն քաղաքականություն վարել, որը կնպաստի ընդհանուր անկման բացասական հետևանքների նվազմանը:

Ինչ վերաբերում է քաղաքական անկայունությանը, ապա այն հանգեցնում է անվստահության աճի ոչ միայն ձեռնարկատիրական գործունեության արդյունքների նկատմամբ, այլև առհասարակ գործունեություն սկսելու նկատմամբ: Քաղաքական անկայունությունը թույլ չի տալիս կայուն և երկարատև հարաբերություններ ստեղծել գործընկերների հետ, որը հանգեցնում է գործընկերոջ ընտրության բարդացման (թե՛ առաքողի, թե՛ սպառողի), ազգային և միջազգային պայմանագրերի խզման, առաքման ժամկետների շեղման, որն էլ ռեսուրսների ոչ բավարար լինելու պարագայում հանգեցնում է արտադրության ցիկլերի խախտման և այլ ռիսկերի: Նման պարագայում քաղաքական անկայունությունը բերում է ձեռնարկատիրական ռիսկի աճ ոչ միայն երկրի ձեռներեցների, այլև արտերկրում իրենց գործընկերների մոտ:

Ձեռնարկատիրական ռիսկի վրա ազդող անուղղակի ազդեցության գործոններից են նաև միջազգային իրադարձությունները, գիտատեխնիկական առաջընթացը և այլն:

Ակնհայտ է, որ ձեռնարկատիրական ռիսկի վրա ոչ պակաս ազդեցություն են թողնում կազմակերպության ներքին գործոնները: Մասնագիտական գրականության մեջ ձեռնարկատիրական ռիսկի վրա ազդող ներքին գործոններից կարելի է առանձնացնել.

- ֆինանսներ,
- արտադրություն,
- մարքեթինգ,

- անձնակազմ,
- վերահսկողության կազմակերպում և այլն:

Պիտեր Դրուկերը իր «21-րդ դարի մենեջմենթի խնդիրները» աշխատությունում ֆինանսական տեղեկատվությունը օգտագործում է որպես բազային գործիք, որը թույլ է տալիս բնութագրել ֆիրմայի վիճակը: Ըստ Դրուկերի՝ եթե ֆինանսական բնութագրիչները չեն համապատասխանում նորմային, նշանակում է՝ կան որոշակի խնդիրներ, որոնք անհրաժեշտ է բացահայտել և վերացնել[1]:

Տնտեսագիտական գրականության մեջ ձեռնարկատիրական ռիսկի վրա ազդող գործոններից առանձնացվում են այն ֆինանսական ցուցանիշները, որոնք էական ազդեցություն են ունենում կազմակերպության ֆինանսական կայունության վրա, չնայած որ ֆինանսական ցուցանիշները չի կարելի համարել ռիսկային գործոններ, քանի որ նրանք հանդիսանում են գործարար միջավայրի ոչ թե պատճառ, այլ բնութագրիչ: Որպես ռիսկային գործոններ՝ «Ֆինանսներ» խմբի մեջ կարելի է ներառել դրամական միջոցները և համարժեքները, դեբիտորական և կրեդիտորական պարտքը, ֆինանսական ներդրումները, ավելացված արժեքի հարկը, որոնց անբարենպաստ փոփոխությունը կարող է հագեցնել ռիսկային իրավիճակի, ինչպես, օրինակ, լիկվիդայնության կորուստ կամ հակառակը՝ լիկվիդայնության ավելցուկ (սա նույնպես բացասական երևույթ է, քանի որ չեն օգտագործվում ազատ դրամական միջոցները), սնանկություն, ֆինանսական պարտավորությունների կատարման անկարողություն, ինքնարժեքի փոփոխություն և այլն:

Ներքին միջավայրի կարևոր ռիսկածին գործոններից են նաև արտադրական համակարգում գոյություն ունեցող հումքի, նյութերի, հետևաբար և արտադրանքի որակի անհամապատասխանությունը նախանշված պահանջներին, մեքենաների և սարքավորումների շարքից դուրս գալը, աշխատողների կողմից առևտրային գաղտնիքի տարածումը, տեխնոլոգիայի անհամապատասխանությունը գործարար միջավայրին (կլիմայական պայմաններին, անձնակազմի որակավորմանը) և այլն[2]:

Արտադրանքի որակի բարձրացումը գիտատեխնիկական զարգացման բարձր տեմպերի, արտադրության արտադրողականության աճի պայմաններում կազմակերպությունների մրցունակության ապահովման կարևորագույն միջոցներից մեկն է: Նույն կերպ թողարկվող արտադրանքի և մատուցվող ծառայությունների որակի անկումը հանգեցնում է մրցակցային շուկայում կազմակերպության դիրքերի, այսինքն՝ մրցունակության թուլացմանը և որպես դրա հետևանք՝ ռիսկի մակարդակի աճին[3]:

Արտադրանքի (ծառայության) որակ ասելով՝ պետք է հասկանալ արտադրանքի հատկությունների այն ամբողջությունը, որն ուղղված է սպառողի պահանջմունքների բավարարմանն իր նշանակությանը համապատասխան՝ հաշվի առնելով դրա ապահովման վրա կատարված ծախսումները:

---

[1] Друкер П., Задачи менеджмента в XXI веке // Друкер П., пер. с англ., М., Вильямс, 2002, էջ 272:

[2] Беляева Мария Александровна, Вестник Алтайского Государственного Аграрного Университета № 4 / Том 66 / 2010

[3] Лапуста И. Г., Шаршукова Л. Г., Риски предпринимательской деятельности, М., 1998, էջ 99.

Համաձայն «Սպառողների իրավունքների պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 1-ին գլխի 15-րդ հոդվածի 1-ին կետի՝ ապրանքի (աշխատանքի, ծառայության) կառուցվածքային, արտադրական, բաղադրագրային կամ այլ թերությունների հետևանքով սպառողի կյանքին, առողջությանը պատճառած վնասը ենթակա է հատուցման՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով: Գույքին պատճառված վնասը ենթակա է հատուցման՝ սույն օրենքով սահմանված կարգով[1]: Համաձայն նույն օրենքի 16-րդ հոդվածի 1-ին կետի[2]՝ սպառողը, որին վաճառվել է ոչ պատշաճ որակի ապրանք, և եթե վաճառողը դրա թերությունների մասին նախապայման չի սահմանել, իրավունք ունի իր ընտրությամբ պահանջել.

ա) ապրանքի թերությունների անհատույց վերացում կամ սպառողի կողմից դրանց վերացման ծախսերի հատուցում,

բ) գնման գնի համաչափ իջեցում,

գ) նմանօրինակ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում,

դ) այլ նմուշի (մոդելի, ապրանքատեսակի) ապրանքով փոխարինում՝ գնման գնի համապատասխան վերահաշվարկով,

ե) առքուվաճառքի պայմանագրի լուծում, որի դեպքում սպառողը պարտավոր է վերադարձնել թերություններով ապրանքը[3]:

Օրենքից ակնհայտ երևում է, որ որակի որոշակի նորմերից շեղումը կարող է լուրջ ռիսկի առաջ կանգնեցնել արտադրողին:

Որակի անկումը կարող է լինել ինչպես արտաքին (անորակ հումքի մատակարարում), այնպես էլ ներքին (տեխնոլոգիական ցիկլի խախտում) գործոններով պայմանավորված: Այդ պատճառով ձեռնարկությունում պետք է գործի որակի վերահսկողության կազմակերպված համակարգ՝ կողմնորոշված դեպի սպառողը:

Որակի համընդհանուր վերահսկողությունը, որն իրականացվում է ԱՄՆ-ի, Ճապոնիայի և Արևմտյան Եվրոպայի ֆիրմաների կողմից, առաջարկում է երեք կարևոր պայման[4].

- Որակը՝ որպես գործունեության հիմնական ռազմավարական նպատակ, ընդունվում է կառավարման բարձր օղակի կողմից: Քանի որ որակի նկատմամբ պահանջներ ներկայացնողները սպառողներն են, չի կարող լինել որակի ինչ-որ մշտական մակարդակ, այն անընդհատ աճելու միտում պետք է ունենա, հակառակ դեպքում արտադրանքի մրցունակությունը կիջնի:
- Արտադրանքի որակի բարձրացման գործընթացում պետք է ներառված լինեն ֆիրմայի բոլոր ստորաբաժանումները:
- Անձնակազմի անընդմեջ ուսուցման և մոտիվացման գործընթացի ապահովում:

---

[1] «Սպառողի իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 1-ին գլուխ, 15-րդ հոդված, 1-ին կետ:

[2] Տե՛ս նույն տեղում՝ 2-րդ գլուխ, 16-րդ հոդված, 1-ին կետ:

[3] Лапуста И. Г., Шаршукова Л. Г., Риски предпринимательской деятельности, М. 1998, էջ. 100.

Հարկ է նշել, որ արտադրական ռիսկերի մեջ իր ուրույն տեղն ունի առևտրային գաղտնիքի գործոնը, քանզի դրա արտահոսքը էական ազդեցություն է թողնում ձեռնարկատիրական ռիսկի մեծացման վրա: Մասնագիտական գրականության մեջ «առևտրային գաղտնիքի» տակ հասկացվում է պետական գաղտնիք չհանդիսացող այն տեղեկատվությունը, որը կապված է արտադրության, տեխնոլոգիայի, ղեկավարման, ֆինանսների և ձեռնարկության գործունեության այլ ոլորտների հետ, որոնց հրապարակումը կարող է հակասել ձեռնարկության շահերին: Առևտրային գաղտնիք չի համարվում այն տեղեկատվությունը, որոնց քողարկումը կարող է վնաս հասցնել հասարակությանը[1]:

Ինչ վերաբերում է «մարքեթինգ» խմբի մեջ մտնող ռիսկային գործոններին, ապա դրանք կապված են տվյալ կազմակերպության մարքեթինգային քաղաքականության հետ: Մարքեթինգի կարևոր գործառույթներից է պոտենցիալ գնորդների պահանջների կանխատեսումը և համապատասխան ապրանքներով (ծառայություններով) դրանց բավարարումը, նոր հաճախորդների գրավումը, գոյություն ունեցող հաճախորդների պահպանումը՝ մշտապես բավարարելով նրանց փոփոխվող պահանջները, քանի որ պահանջմունքի բավարարումը մարքեթինգի հիմնական խնդիրներից մեկն է:

Ակնհայտ է, որ մարքեթինգային ռազմավարությունից մեծապես կախված է ձեռնարկատիրական գործունեության թե՛ նախնական և թե՛ ընթացիկ հաջողությունները:

Մարքեթինգային գործունեության կարևոր հիմնախնդիրներից է նաև վաճառքի վայրի ճիշտ ընտրությունը: Վաճառքի վայրը համառոտ կերպով կարելի է գնահատել 3 չափանիշներով՝ որքանով է տնտեսող, կառավարելի (վերահսկողության հնարավորությունը) և փոփոխվող՝ տնտեսության պահանջներին համապատասխան:

Պարզ է, որ մարքեթինգային արդյունավետ քաղաքականությանը նպաստում է նաև գովազդը, որի արդյունավետությունը կարելի է բնութագրել սպառողների կողմից նրա հասկացվածության (թե արդյո՞ք հասկացվել է այն իմաստը, որը ի սկզբանե ներդրված է եղել գովազդում), ուշադրություն գրավելու, հիշվելու աստիճանով:

Վերոնշյալ բաղադրատարրերից յուրաքանչյուրի անբարենպաստ շեղումը կարող է հանգեցնել սպառողների գնային և որակային սպասելիքների չբավարարմանը, սխալ գնագոյացմանը, ապրանքի մրցունակության փոփոխությանը, գովազդի չհասկացվածությանը սպառողների կողմից և այլն, որոնք էլ իրենց հերթին ազդում են ձեռնարկատիրական ռիսկի վրա:

«Անձնակազմ» բաժնի մեջ մտնում են այնպիսի ռիսկային գործոններ, ինչպիսիք են կազմակերպության աշխատակիցները, նրանց մտավոր ունակություններն ու հմտությունները: Աշխատակիցների աշխատանքային խթանները կամ դրանց բացակայությունը անդրադառնում են նրանց աշխատանքի արդյունավետության (արտադրողականության), աշխատանքի նկատմամբ նրանց մոտիվացիայի,

[1] И. Г. Лапуста, Л. Г. Шаршукова, Риски предпринимательской деятельности, М. 1998, էջ. 96

գիտելիքների համապատասխանության վրա: Իսկ վերջիններս էական դեր են խաղում կազմակերպության գործունեության յուրաքանչյուր փուլում: Հետևաբար անհրաժեշտ է գնահատել և համապատասխան միջոցներ ու խթաններ գործադրել աշխատակիցների գործունեությունն ավելի արդյունավետ և նպատակային դարձնելու համար:

Հարկ է նշել, որ ձեռնարկատիրական ռիսկի վրա իր էական ազդեցությունն ունի նաև կազմակերպության «կորպորատիվ կառավարման համակարգի» (կազմակերպության նպատակները, առաքելությունը, ռազմավարությունը, կազմակերպչական կառուցվածքը, իրավունքների և պարտականությունների բաշխման օբյեկտիվությունը, ղեկավարման ոճը, աջակցման (պատժի) եղանակները, ֆիրմայի դերը աշխատակիցների համար) կատարելագործումը: «Կորպորատիվ կառավարման համակարգի» մասին կարելի է կարծիք կազմել՝ իրականացնելով այս տարրերի միաժամանակյա առկայության կամ բացակայության, համապատասխանության կամ անհամապատասխանության գնահատում: Օրինակ՝ համապատասխանու՞մ է արդյոք կազմակերպության ռազմավարությունն իր գործունեության նպատակին, արդյո՞ք բոլոր կառուցվածքային ստորաբաժանումներն ունեն հավասար իրավունքներ և պարտականություններ և այլն:

Հարկ է նշել, որ ռիսկային գործոնների դասակարգումը չի սահմանափակվում վերոնշյալով, քանի որ տնտեսության առանձին ճյուղերին կարող են բնորոշ լինել ռիսկային գործոնների առանձին տեսակներ:

Այսպիսով, ռիսկային գործոնների նման դասակարգումն ու մեկնաբանումը հնարավորություն է ընձեռում տնտեսվարող սուբյեկտին ճիշտ գնահատել ստեղծված իրավիճակը, բացահայտել ռիսկածին գործոնները և դրանք հասցնել նվազագույնի, որն էլ իր հերթին կնպաստի տվյալ տնտեսվարող սուբյեկտի գործունեության ռիսկայնության նվազեցմանը:

Բանալի բառեր՝ *ձեռնարկատիրական ռիսկ, շրջակա միջավայր, արտաքին միջավայրի գործոններ, ներքին միջավայրի գործոններ, ուղղակի և անուղղակի ազդեցության գործոններ, մրցակցություն, որակ, գնահատում:*

Օգտագործված գրականություն

1. Лапуста И. Г., Шаршукова Л. Г., Риски предпринимательской деятельности, М. 1998, с. 82.

2. Друкер П., Задачи менеджмента в XXI веке // Друкер П., пер. с англ., М. , Вильямс, 2002, с.272.

3. Беляева Мария Александровна, Вестник Алтайского Государственного Аграрного Университета, № 4,т. 66, 2010.

4. «Սպառողի իրավունքների պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք, 1-ին գլուխ, 15-րդ հոդված, 1-ին կետ:

5. http://www.grandars.ru, Маркетинг в современном мире

THE ASSESSMENT OF FACTORS UNDERLYING THE FORMATION OF ENTREPRENEURIAL RISKS

M. T. MKHITARYAN
Researcher of Armenian State University of Economics

In this article, the author classified and interpreted the internal and external factors of business risks. The uniqueness of their impact, the degree of predictability and manageability were revealed.

ОЦЕНКА ФАКТОРОВ, ОБУСЛОВИВШИХ ПОЯВЛЕНИЕ ПРЕДПРИНИМАТЕЛЬСКИХ РИСКОВ

М. Т. МХИТАРЯН
Соискатель Государственного экономического университета Армении

В данной статье автором классифицированы и интерпретированы внутренние и внешние факторы возникновения рисков в предпринимательской деятельности. Выявлены особенности их влияния, степень оценочности и управляемости.

ADVANTAGES AND DISADVATAGES OF UNCONDITIONAL BASIC INCOME

A. Z. GALSTYAN
EIU PhD Student

An Unconditional Basic Income (also called as Basic Income, Basic Income Guarantee, Citizen's Income, and Universal Basic Income) is a form of social security system when all residents of a country receive an unconditional sum of money systematically. Unconditional Basic Income can be structured to be received by citizens in addition to their other incomes or excluded by only one regularly Unconditional Basic Income. It can be organized as part of government obligation to their citizens. Unconditional Basic Income is not considered a welfare program. It is supposed to be a guarantee that every single human being in our society should have a shelter, food, and health care. A basic income would give real meaning to the promotion of human dignity. A person who has the assurance that his or her daily needs for food and shelter are met will not feel fearful of becoming dependent on others for bare survival. (1)

There are many positive and negative arguments about the idea of Unconditional Basic Income. Main arguments for the applying Unconditional Basic Income considered the thoughts about freedom and fairness, common ownership of the Earth (land as citizens of the particular country) and equal sharing in the benefits of technical progress, the fight against inhumane working conditions, autonomy from managers/bosses, as well as spouses, and of course promotion of education.

Through all history of the Basic Income in the world there were discussions and arguments regarding positive and negative effects of the Basic Income on society and its structure. Many philosophers, as well as economists were arguing about human ability and desire to work and create. Basic Income Unconditionally would give some freedom in life, but at the same time there won't be enough incentives to work. It is very difficult to help poor people to become self-sufficient. Basic Income idea, with a very simple structure, gives hope to help with poverty. One of the main ideas is to cut most social programs and instead use the money simply by sharing it among citizens of the country. But indeed, it is a very difficult task to complete without guarantees, that it will satisfy people. The main idea behind Basic Income is that all people should have a share in that, not only people in poverty. Some poor people could get many benefits from the social programs, whereas cutting them won't benefit them. They might prefer to continue using social programs instead of receiving monthly cash benefit. Many social/welfare programs provide specific services or benefits to help with needs (food, housing, healthcare, clothing). Choosing Basic Income for everyone may raise a negative wave from the poor who can question why should people in poverty and people not in poverty of the same society get the same amount of money, or we can call it "benefit from being a citizen of the country". At the same time, would people in poverty agree to trade-off their freedom of choice to be dependent on existing social programs? Is there any better alternative to help with poverty?

We analyzed and summarized the advantages and disadvantages of the implementation of Basic Income based on the world economists, politics and philosophers' discussions, as well as the results of the experiments have performed in different countries.

Advantages of Basic Income

1. Basic Income will give freedom of choice for everyone. While people work to earn money mandatory, they become tired and unsatisfied with their lives. While doing the work, which they choose voluntarily, they would perform better and at the same time feeling satisfied, spending their time on work that is meaningful to them. Also, we should mention that people can make their own choices how to spend money. Considering that given free money instead of the welfare/social programs, gives them more opportunity to use it for specific need, or maybe to save for the future. For example, as mentioned above, the experiment in India showed that people in villages started spending more on food and healthcare, as well as their personal savings tripled, and new business startups doubled.

2. Balanced Labor Market: If the Basic Income is implemented, then the desire to work for low wages (to meet their basic human needs, such as food and clothing) will be less. The working-class people probably would start demanding higher wages, and employers won't be able to provide their expectations. There is a probability that exploitative employment would be diminished and the workers would have greater freedom to pursue the employment that they choose. It can bring to a bigger problem, like employers could try to find ways outside of the country to continue their businesses (if it is a simple production of stuff). From one side, we are thinking that the businesses should bloom, but from the other side, it can be bad for the already established businesses, and they can be outsourced.

3. As it was mentioned above, based on the India's experiment, the entrepreneurship and small business will increase in case of Basic Income implementation. Basic Income gives opportunity for a new start. And we are talking mostly about poor people. Basic Income resulted in more work and economic activity. As it mentioned in 'INDIA: Basic Income Pilot Project releases an impressive list of findings.': "Cash grants led to an increase in own-account work, and a relative switch from wage labor to own-account farming and small-scale business. This was especially true for scheduled caste households and for women workers. Many families used cash grants to buy small items for production, such as sewing machines and seeds and fertilizer." (2)

Overall the economy will only benefit from more entrepreneurship. Considering that entrepreneurs are some of the most risk-averse people, they in general work extremely hard to reduce the risk of losing their invested money and time to a minimum. Providing Basic Income will guarantee constant cash income to meet basic human needs for people, wherefore the investment of time and money into the establishment of new businesses would be significantly more attractive and surely carry significantly less risk for them.

4. Having said that and considering the experiments in India and Namibia, we can add another advantage of Basic Income, which is more opportunity to work for women.

5. The opportunity for the rapid grow of the small business would make a more competitive market, which in its turn would resist to market shocks and provide a more stable economy. It would develop better, and we can call it healthier, capitalistic relationships and society.

6. Wealth Redistribution between citizens of the country. Poor and ordinary people spend more of their income than the wealthy people, and it is economically beneficial because of the Marginal Propensity to Consume. The economy will develop and grow faster if more wealth will be spent, than hoarded.

7. Having more cash money and knowing that it is unconditional, people will start spending more. More they spend, more economic growth will happen. More spending will bring to more demand, which will bring to more product production and demand for employees. That would transfer to increase in income of people. Of course, we mention this considering people would use their local products. Economic growth is more likely, when wealth would be distributed among poor, instead of the rich people. Poor people are more likely to spend, and rich people are more likely to save the money.

8. By implementation of Basic Income and basically eliminating poverty, crime rates will be reduced. Again, based on the experiment performed in Namibia, the crime rates fell significantly, by 42%. The basic assumption of many economist is: if person have enough money to survive and a little extra for discretionary spending, then there is less incentive to steal from others. Also, Income Inequality has a strong correlation to rates of crime and Basic Income serves to reduce the level of income inequality in a society.

9. Implementation of Basic Income will provide less bureaucracy and smaller government. It would reduce the economic burden of the social programs and welfare system through the elimination of almost all of them and associated bureaucracies. The only procedure will be to check if the person is a citizen of specific country. Because we are looking at the Basic Income for everyone, without consideration of age and gender, then there shouldn't be any other checks. It will provide of efficiency and simplicity.

10. Technology is developing rapidly and process automation is becoming more common in almost all industries. Automated robots are replacing workers faster than our economy could handle, and people would be no longer able to make money based on their usefulness in society. Basically, the requirement for labor in the economy falls. Basic Income could be a solution for those who would suddenly become unemployed.

11. Another argument is about Social justice on a country levels. While there were constant concerns regarding the people in need in one country, and suddenly all the needs of the those, mostly poor citizens, are met, then the global concerns and charities will shift to other countries, or other needs in the world. The world organizations would starts assisting the needy elsewhere in the world, rather than fighting to help with poverty in the country where the Basic Income was implemented.

12. Basic Income would provide a better welfare for poor people. People would be able to improve their living conditions, such as housing and sanitation, nutrition, and diets. These will transfer to a better health condition of people and that will cut medical expenses. Also, it would have an impact on a healthier life-style of kids, which will benefit the country with healthier new generation in future.

13. Basic Income would give people more peaceful mind, and they would be able to concentrate more on their kids' education. Instead of sending them to work, or simply keep them home, as experiments showed, school enrolment would increase. The spending on essentials for school, such as cloth, shoes, stationaries, etc., increased. As Gay Standing mentioned in "Unconditional Basic Income: Two pilots in Madhya Pradesh": "Grades over time taken from actual registers of schools showed that more children from cash transfer families were doing better than children of non-grant families." (3) And later kids would be able to go for a higher education, or simply saying, they will stay in school longer, because the costs of doing so will be less.

14. Experiments in India and Namibia showed that another advantage of Basic Income is growing birth rates. Basic Income provides some security for basic needs that would help parents to have more children. Also, the main idea of Basic Income consists of following, that everyone should receive it, child or an adult, which means that the newborn would receive Basic Income as well. From the other side, it can bring to a negative aspect of it: poor people would start having too many kids, which would provide them stable income. But it can be viewed as positive and as a negative side.

Disadvantages of Basic Income

1. One and the major disadvantage of the Basic Income idea and implementation is the unaffordability. Basic Income idea was and is constantly criticized, that it is utopian idea and it is impossible to fund it constantly. To prove, that it is affordable or unaffordable, economist James Tobin in 1970 produced a simple formula and calculated the flat tax that would be needed to fund Basic Income idea. The cost of it appeared too high.

2. How to set the rate for the Basic Income, so it will benefit everyone? By setting Basic Income too low and withdrawing other social and welfare benefits, it could end up hurting the very people it was designed to help most. If considering the program which was done in Iran, giving set equal amount to every head of household of every family, maybe should be a bit higher amount of cash, but only for the poor people. In that case, if the Government runs into financial shortage, it would still be able to provide for the poor people.

3. What are the guarantees that by cutting all the social programs and implementing Basic Income, government will continue to be able to provide Basic Income amount to people? The program in Iran showed, that even Iranian government thought they can afford to distribute extra cash to its population, but the reality proved opposite. After a year government start having problems with financing. Because of that, they slowly reduced population who was getting free cash.

4. Should Basic Income be an amount to change? Should it be flexible amount of money, so it would be in tune with inflation? Everytime when prices will rise for goods and services, should it be reflecting on rising the Basic Income? There should be guarantees, that Basic Income should rise proportionately to an inflation, so it will make sense to switch from all the social benefits to Basic Income from the beginning. In today's world, with or without inflation, people still have their social benefits.

5. One concern regarding Basic Income can be natural human greediness, which can bring to an Unnatural Inflation. As an example, we can discuss people's house renting or child care expenses. When it is a common knowledge that all people suddenly got some free money in their pockets, then the landlords can easily raise the renting prices for their houses, and people, instead of using the money for their other needs, would need to pay higher rents. Same is applicable for childcare and other expenses. Thomas G. Clark in "Universal Basic Income" brings an example of childcare in UK: "An example of this kind of rent seeking behavior can be seen in the UK childcare sector after the introduction of Child Tax Credits. The childcare providers knew that working families were getting a payment from the government to cover the cost of childcare, so they raised the cost of childcare so much that the UK now has the most expensive childcare in the developed world (33% of family income, as compared to the OECD average of just 13%) meaning that the Child Tax Credit allowance is nowhere near enough to cover the inflated cost of childcare.". (4)

6. Problem can appear with people's disagreement to pay all the citizens of the country: poor or rich. And it is a tricky argument – from one side the rich people are the ones who pay highest taxes (and those are the taxes which will be used to pay for the Basic Income), from the other side the whole idea of the Basic Income is about equality of benefits to all citizens. Poor always can argue and compare their simple needs for food, and the level of living of rich people. At the same time, rich people, or well-off people are the ones who make decisions to change a structure of the benefits in the country. And, of course, the whole idea of people's equality, citizens' equality is guaranteed Basic Income for everyone. In some countries, it is discussed it should be only for poor. But to make it work, need another bureaucratic process of constant evaluation people's level of living, which does have a cost. But those bureaucratic costs are one of the funding for Basic Income. So, if people will cut the benefits, but open another process of evaluation, then the logic behind these becomes questionable. But it would be simple with no additional cost if all the citizens would get a Basic Income.

7. Argument and concern against Basic Income called reciprocity, spending back money into the economy. People can spend it or save it. If they would spend it, then they would create economic demand. If people would save the money, then they would create the capital reserve, which in capitalistic system is required to fund the credit economy. Also, they can save it, keeping them in the country or transferring to another country, which will result in cash flow from country. Either way, saving can considered bad for the economy. There is no guarantee about how the saved money will be spent. We can assume that poor people will spend on food and clothing in the local economy,

but people with more stable income, who are not considered poor, could spend the money outside of the country, or simply save it.

8. One of the main argument against Basic Income is human's natural behavior of laziness. The easy given money can encourage mass idleness and mostly it can affect less educated and less skilled people. The objection of loss of work incentive is not supported by the experimental data in different countries, which showed that the vast majority of people continued to work, even if their basic human needs are met. The experiment, called 'Mincome', was done in 1970s by Canadian Government in the city of Winnipeg, rural Manitoba and Dauphin. The purpose of it was to assess the social impact of a Basic Income, including whether a program of this nature would cause disincentives to work for the recipients. The outcome of the experiment showed that the only two groups who worked significantly less were new mothers and teenagers working to support their families. As a contrary to see it as a disadvantage, we think that it is only an advantage to a society, that mothers spent their time with their infant children, and teenagers, who were working, put significant additional time into their schooling. The results showed, that the reduction of work effort was relatively small, about 1% for men, 3% for wives, and 5% for unmarried women. (5). Thomas G.Clark points in his article, that "trials in North America showed that the only demographics to significantly reduce their working hours were new mothers (to spend time with their babies) and teenagers/young adults (who spent additional time in education). The trial in Namibia actually showed a significant increase in economic activity, due to the increase in economic demand and the establishment of new businesses." (4) In other words we can assume, that the work reduction was largest for second earners in two-earner households and weakest for the main earner.

One more argument we can review, is how the amount of the Basic Income can influence the desire for the disincentive to work. If people need to work only to earn enough money for some necessities, like food, clothing and housing, then the available social and welfare programs could potentially give enough disincentives to work. From the other side, many people, who get such benefits, also work illegally, to provide more money for the living and supporting their family.

But let's look at the rich and successful people. There is a notion, that a person does not have to be educated to become rich. And a lot of times the richest people are seen as a proof of this notion. We can mention examples of Kirk Kerkorian, Bill Gates, Steve Jobs, Mark Zuckerberg and many others. But we should also take into consideration the fact of how hardworking those people were or are. They never stopped working. It is their zeal to work and create that made and make them to continue, despite their bank accounts. There is a notion that the rich people are best motivated by more money, but we can argue that they are more motivated by the ability and desire for hardworking. The notion of the poor people are best motivated by the threat of absolute destitution can be argued as well. Some people in poverty or extreme poverty are more inclined to think of themselves, that no more hope is there for them. There are many people, who are in extreme poverty, asking money on the streets. It is part of their life and it does

take their time and energy to ask and pursue people shamelessly for money. We can assume that unless the person himself is inherently lazy, then he/she would stop working after receiving Basic Income.

9. Negative argument is money for nothing. Why should people get money for doing nothing? People's incomes were taken care of without any productive work done. John Thornhill and Ralph Atkins in their article 'Universal basic income: Money for nothing' mention following: "It is notable that support for UBI is lowest in the predominantly German-speaking cantons of Switzerland where the work ethic is particularly strong." (7). This proves that people who are hard-working with strong incline to discipline, do not have a desire for extra free money. They don't want to accept of others getting paid for doing nothing. But the fact that the money comes instead of the benefits, which are going to get cut from those people, needs to get into an account.

10. Many poor people are in debt and the question raise, where would they spend their given money. Would they spend for good reasons, or pay-off their debt? And if so, then the collectors of the debt would use it as an opportunity to constantly collect and continue keeping people in debt, knowing upfront that those people have constant cash flow.

11. Basic Income implementation is more suitable for developed countries. As of today, only wealthy countries considering and discussing Basic Income to become part of their society rules. For many countries, that are already struggling to provide basic services and infrastructure such an idea is impossible.

12. The idea of Basic Income presumes people should receive equal basic benefits, and it should be a fair society. Meanwhile, Guy Standing mentioned in his overview of India's experiment that "critics believe it will worsen corruption, cost a vast amount, provide low-quality food and be unsustainable" (6). Simply the corruption won't go away.

13. The implementation of Basic Income would require complete restructuring of the social insurance system, the pension systems, and the taxation system, which in each turn would cost a significant amount of money.

Տեխնիկական տեսակետը պայմանավորված է ուսումնասիրվող օբյեկտի քանակական և որակական փոփոխություններով:

Ինժեներական տեսանկյունից որակը դիտարկվում է համեմատության մեջ: Ընտրված օբյեկտի բոլոր հատկությունները համեմատվում են նմանատիպ այլ օբյեկտի հատկությունների հետ: Տնտեսական առումով որակը դիտարկվում է որպես պահանջարկի կամ պահանջարկի արժեքի օբյեկտի ուսումնասիրման արդյունք:

Իրավական առումով որակը հանդես է գալիս տեխնիկական և նորմատիվ փաստաթղթերի տեսքով: Այս ասպեկտում որակը հանդես է գալիս որպես համընդհանուր տեխնիկական փաստաթուղթ, որն իր մեջ ներառում է նախատեսված նույնատիպ ապրանքների համար սահմանված չափորոշիչները և որակավորումները:

Մանրածախ առևտրի շուկայում արտադրողը և սպառողը սկսել են գնահատել ապրանքը, ծառայության որակը ոչ միայն արտադրական գործընթացում, այլ նաև օգտագործման ժամանակ[1]:

Այսպիսով, «որակ» հասկացությունը չի ձևավորվել միանգամից, այլ անցել է երկար զարգացման ճանապարհ՝ մշտապես փոփոխվելով և կատարելագործվելով, այնուամենայնիվ հիմա էլ մասնագետներին դեռևս չի հաջողվել տալ հիմնական սահմանում: Պատկերացումները որակի մասին ապրանքների, ծառայությունների

[1] Альбеков А., Согомонян С., Економика коммерческого предприятия // Учебное пособие, Ростов - на -Дону, Феникс, 2004г.

մրցունակության տեսակետից պետք է հիմնված լինի սպառողների ցանկությունների և պահանջների լիիրավ բավարարման վրա: Այդ իսկ պատճառով, համաձայն ՀՍՏ ԻՍՕ 9000:2008- ի, որակը ապրանքի հատկությունների համապատասխանությունն է պահանջարկին, սակայն տարբեր երկրների փորձը ցույց է տալիս, որ դա միայն պահանջարկին բավարարելը չէ:

Շուկայական տնտեսության պայմաններում այս համակարգի ամենակարևոր տարրը հանդիսանում է մանրածախ առևտրի ծառայությունների որակը, ընդ որում ծառայությունները շատ հաճախ հանդես են գալիս ապրանքների տեսքով, որոնց հիմնական նպատակը հասարակության պահանջարկի բավարարումն է: Այդ իսկ պատճառով «մանրածախ առևտրի ծառայությունների որակի» բնագավառում ուսումնասիրությունները պետք է կատարվեն «ծառայությունների որակ» հասկացության համատեքստում: Մանրածախ առևտրի ծառայությունների բնագավառում ուսումնասիրություններ կատարելը բավականին բարդ է, քանի որ այդ ոլորտում բավականաչափ գիտական հետազոտություններ կատարված չեն: Դա պայմանավորված է նրանով, որ հիմնականում այդ բնագավառը նույնացվում է «որակ» բազմաբնույթ հասկացության հետ, և դեռ կատարվում են աշխատանքներ այս երկու հասկացությունների տարանջատման հարցում:

Ըստ պրոֆեսոր Ս. Սկոբինի՝ ծառայությունների որակ ասելով՝ հասկանում ենք ծառայությունների հատկությունները և բնութագրական հատկանիշները, որոնք սպառողի մոտ առաջացնում են բավարարվածության զգացում: Համաձայնելով վերոնշյալի հետ՝ անհրաժեշտ է նշել, որ ծառայությունների որակի հետազոտությունների ժամանակ նախ և առաջ անհրաժեշտ է կենտրոնանալ սպառողների պահանջները բավարարելու վրա:

Այսպիսով, մանրածախ առևտուրը վաճառողի և գնորդի միջև փոխգործակցության արդյունք է, ինչպես նաև վաճառողի ինքնուրույն գործնեությունը՝ առքուվաճառքի ժամանակ գնորդի պահանջները բավարարելով: Այնուամենայնիվ, մանրածախ առևտրի ծառայությունների որակի ժամանակակից, ընդունելի և ավելի կոնկրետ սահմանումը կարելի է ձևակերպել հետևյալ կերպ. **նմանատիպ հատկություններով օժտված ծառայությունների հավաքագրում, որոնք իրականում կարող են բավարարել սպառողի պահանջները օգտագործման ժամանակ:**

Հաշվի առնելով վերոգրյալը, մանրածախ առևտրի ծառայությունների որակը իրենից ներկայացնում է ծառայությունները մատուցելու ժամանակ սպառողների պահանջների բավարարման ունակությունը՝ սահմանելով հետևյալ բնութագրերը՝ ապրանքների կամ ծառայությունների բավարար տեսականի, ծառայությունների մատուցման պայմաններ, գնորդի սպասարկման որակ, ապրանքենրի որակ և սպասարկման մշակույթ:

Բանալի բառեր՝ *որակ, մանրածախ առևտուր, կառավարման համակարգ, ծառայություններ, որակի կառավարման համակարգ:*

ANALYSIS OF QUALITY MANAGEMENT SYSTEM OF RETAIL TRADE SERVICES

L. A. GHAZARYAN
Researcher at the Armenian State University of Economics

The 21st century is said to be the era of high quality in everything to do with the quality of labor, goods and services, the environment, that is, it aims to implement a modern paradigm of civilized development.

Quality, as well as the quality concept, crossed the path of development, which is why there are different approaches, interpretations and explanations. According to some researchers, it is caused by various phenomena and relations, as well as formation of demand for consumer goods and production conditions. Different areas can be given an appropriate understanding of the concept of "quality".

АНАЛИЗ СИСТЕМЫ УПРАВЛЕНИЯ КАЧЕСТВОМ УСЛУГ РОЗНИЧНОЙ ТОРГОВЛИ

Л. А. КАЗАРЯН
Соискатель Армянского государственного экономического университета

Наступившему XXI веку предназначено быть веком высокого качества во всех его проявлениях - качество труда, продукции и услуг, качество окружающей среды, т.е. реализовывать современную парадигму цивилизованного развития.

Качество, как и его понятие, прошло многовековой путь развития, поэтому и существуют разнообразные подходы к его толкованию. Некоторые исследователи проблем качества считают, что «многообразие понятий качества вызвано многообразием явлений и взаимосвязей, обуславливающих процессы бытия людей, формирования потребностей, состояние производства и потребления товаров.

ՑԱՎԻ ՉԸՆԴՄԻՋՎՈՂ ԱՐՁԱԳԱՆՔԸ

Վ. Ռ. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հայոց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ,
ԳՊՀ դասախոս

Հայ ժողովրդի՝ մաքառումներով լեցուն գոյընթացը 20-րդ դարասկզբին բռնությամբ կասեցվեց: Պատմական Հայաստանի ընդարձակ տարածքի վրա ձևավորված ազգը ոչնչացվեց, իսկ փրկվածները սփռվեցին աշխարհով մեկ, Արևմտյան Հայաստանը դատարկվեց բնիկներից: Եղեռնը դարձավ ոչ միայն հայ գրականության կարևոր թեմաներից մեկը, այլև յուրօրինակ փորձաքար այդ գրականության համար:

Աղետից հետո ցեղասպանությունը ներկայացնող երկերը գերազանցապես պատմողական էին՝ զգացմունքային ծանրաբեռնվածությամբ, տառապանքն ի լուր աշխարհին հայտնելու ներքին մղումով, թեև ի հայտ եկան և այնպիսի գործեր, որոնցում զինված պայքարի կոչ էր արվում[1]: Ավելի համարձակ էին նրանք, ովքեր փորձեցին արհավիրքի մեջ նաև սեփական մեղքը տեսնել (Հակոբ Օշական՝ «Ծակ պտուկը», «Հաճի Ապտուլլահ», «Մնացորդաց»): Շահան Շահնուրը ևս ինքնաքննադատական հակումների մեջ խիստ էր (‹‹Նահանջը առանց երգի››):

Խորհրդային երկրում՝ Գուրգեն Մահարու, Ակսել Բակունցի, Եղիշե Չարենցի երկերում Եղեռնի արձագանքները խուլ ճիչի էին նման: Մահարին աքսորվեց, մնացածները զոհվեցին: Թեև Մահարին ստեղծեց այս թեմայով գրված լավագույն վեպը /‹‹Այրվող այգեստաններ»/ մեր գրականության մեջ, այնուհանդերձ այս ստեղծագործությունը նրան գերեզման տարավ: Մի խումբ գրագետներ գրողին վերագրեցին մեղքեր, որոնք կապ չունեին Մահարու հետ, ազգային շահը ոտնահարելու մեղադրանքը նրա համար շատ էր ծանր, եթե նկատի ունենանք, որ գրողը գրեթե ողջ կյանքն ապրեց ‹‹նացիոնալիստի» խարանը ճակատին:

Երբևիցե հայ գրողը կկարողանա՞ կերտել կատարյալ ստեղծագործություն, ուր կներկայացվի ցեղասպանությունն իր ողջ ծավալով ու բովանդակությամբ: Դա չի՛ լինելու երբեք: Չարենցի նման հանճարն անգամ անավարտ թողեց ‹‹Կապուտաչյա հայրենիք» պոեմը, որն անկատար վիճակով իսկ այս թեմայով գրված լավագույն

[1] Ս. Պարթևյան, Անմահ բոց, Զանգը հնչեց, Ալեքսանդրիա, 1917:

երկն է մեր գրականության մեջ: Չարենցն զգաց, որ անհնար է ընդգրկել անընդգրկելին: Ոճրագործության սահմաններն այնքան ընդարձակ են, որ անհնար է այն որևէ երկով, որևէ ժանրաձևով ‹‹մինչև հատակը,, ներկայացնել: Բայց կա նաև հոգեբանական կարգի խնդիր, որը դժվար, եթե չասենք՝ անհնարին է հաղթահարելը: Դա զոհաբերված զավակի ու զոհաբերված երկրի վրա լաց լինելու անընդունակությունն է կամ վատ լաց լինելը: Այն, ինչ հեշտ է Ֆրանց Վերֆելի համար («Մուսա լեռան քառասուն օրը»), առավել դժվար է մեզ համար: Հոգեբանական այս բարդույթը նկատի ունենալով է, որ Մեծն Մաթևոսյանը եղեռնի թեմայով գրված գործերը, անգամ հայտնի ստեղծագործությունները, հաջողված չի համարում և համոզված է, որ անբարոյականություն է այդ թեման թեկուզ աննշան չափով պայմանականության ենթարկելը, կեղծիքի թեկուզ աննշան չափաբաժին անընդգրկելի ողբերգությանը խառնելը:

Մեծ գրողի դիտարկման ֆոնին ցեղասպանության թեմայի բացահայտման ճանապարհին անփոխարինելի է հուշագրության դերը: Թերևս պատմական իրողությունները ներկայացնելու բացառիկ և արժանահավատ ուղին մնում է վավերագրությունը, որտեղ բացակայում է ամեն կարգի պայմանականություն, ուր վավերագրողն ինքն է մասնակից իրադարձություններին և սեփական աչքերով է տեսնում և զգում ամեն ինչ: Նա պատմության փոշին փաստերի վրայից սրբելու կարիքը չունի, քանի որ այդ ամենը վավերագրողի համար պատմություն չի դարձել, դրանք իրողություններ են, որ ականատեսը շոշափում է սեփական ձեռքերով և տեսածն ու զգացածը արտահայտում է հայրենիքը սիրող զավակի հոգևոր ներաշխարհի ողջ զորությամբ:

Այս իմաստով Երվանդ Օտյանը դառնում է հայոց Մեծ եղեռնի ժամանակագիրը, որ վկայում է ցեղի ապրած գողգոթան ու նաև ապրելու հույսը: Նա տեսավ ու խորությամբ ապրեց կործանման սարսափն ու սեփական ժողովրդի գերեզմանակուր տառապանքը: Օտյանն անցավ երկրային դժոխքի պարունակներով ու հետնորդներիս ժառանգեց խաթարված ժամանակի իրական դեմքը:

Գրողի հուշագրության մեջ («Արյունոտ հիշատակներ», «Տասներկու տարի Պոլսեն դուրս», «Գրական հիշատակներ», «Վերհիշումներ», «Տասնվեց տարի ետքը») առանձնահատուկ տեղ է գրավում «Անիծյալ տարիներ» վկայագրությունը՝ իր ընդգրկման սահմաններով, պատմական ժամանակի համապատկերային բնույթով: Երեքուկես տարվա աքսորից հետո՝ 1919-ին, երբ Օտյանը վերադարձավ Պոլիս, անմիջապես սկսեց գրել «Անիծյալ տարիները», որ լույս տեսավ Պոլսի «Ժամանակ» օրաթերթում 1919 թվականի փետրվարի 6-ից մինչև սեպտեմբերի 25-ը: Եթե «Տասներկու տարի Պոլսեն դուրս» հուշագրությունը զուգահեռել է «Ապտյուլ Համիտ և Շերլոք Հոլմս», «Սալիհա հանըմ կամ բանակը բռնավորին դեմ», «Ես դրսեցի չեմ առներ» թերթոնների ստեղծման հետ, ապա «Անիծյալ տարիները» գրվում է մինչև Օտյանի մեծ վեպերի հրապարակումը:

Պատմական իրողություններն արձանագրելու, մոռացությունից փրկելու պահանջը որոշակի առաջնահերթությամբ էր պայմանավորված: Անցած ճանապարհը ներկայացնելը նա համարում էր իր սրտի պարտքը:

Օտյանը պատմությունը երբեք չէր դիտում որպես գաղափարական պայքարի միջոց, նա այդ ամենը դիտում էր որպես պատմական իրողություն: Օտյանը գրեթե հարյուր տարի առաջ կանխազգաց, իսկ հետագա սերունդները հասկացան, որ մաքառման խաչն ուսերին առած ժողովրդին սպասվում է երկար, ծանր, բայց և անհրաժեշտ ընթացք պատմական ճշմարտության բացահայտման ճանապարհին: Իսկ դրա ծննդին անհրաժեշտաբար նպաստելու են բազմաթիվ փաստերն ու վկայությունները և առաջին հերթին Օտյանի «Անիծյալ տարիները», որ սկսվում է առաջին համաշխարհային պատերազմով և տարածվում գրողի դեպի աքսոր, իսկ իրականում դեպի կործանում ընթացող ժողովրդի անիծյալ երթուղու բոլոր արահետների վրա՝ Պոլիս-Գոնիա-Էրեյլի-Պոզանթի-Գավաքլը-Քյուլեկ Սթասիոն-Տարսոն-Օսմանիե-Հասան Պեյլի-Իսլահիե-Հալեպ-Սեպիլ-Շամ-Հալեպ-Համա-Հալեպ-Մեսքենե-Համմամ-Զիպնե-Թիպնե-Դեր-Զոր-Միատին-Էլ Պուսերա-Դեր-Զոր-Շամաթիա-Թիպնե-Մատեն-Սապքա-Համմամ-Ապու Հարար-Մեսքենե-Ասադ յուլ Տեքրե-Պլադ-Հալեպ-Իսլահիե-Ենիճե-Տարսոն-Ենիճե-Գոնիա-Յարմա-Սուլթանիե-Էրեյլի-Գոնիա-Իզմիտ-Պոլիս:

Այս աներևակայելի ճանապարհը հետևողական հալածանք է հայ մտավորականի հանդեպ, որ մշտապես փափագում է տուն վերադառնալ: Եղեռնը վերապրած մնացորդաց սերնդի ներկայացուցիչը կարողանում է չխելագարվել, անհավատալի ուղիներով անցնել, ապա նաև ապագային փոխանցել արհավիրքներով լեցուն պատմության վավերագրություն-փաստաթուղթը: Խաթարված ժամանակի լաբիրինթոսում չընդհատվող բանտարկությունների ու աքսորից փախուստի դիմելու փորձերը Օտյանի հուշերը համատեղում են անհատական մաքառումների միասնական սյուժետային գծի վրա, որտեղ ակնհայտորեն ընդգծված է վախի գործոնը: Կարդալով հուշագրությունը՝ չենք կարող չնկատել, որ Օտյանն իրեն ամեն պահի զգում է որպես պոտենցիալ, կանխորոշված զոհ: Այս հանգամանքով է պայմանավորված նրա անզոր, բայց և աշխարհի հանդեպ հանկարծակի դրսևորվող զայրույթը: «Մի՛ սպանիր», «Մի՛ գողացիր», «Սուտ վկայություն մի՛ տուր» և աստվածաշնչյան մյուս պատվիրանները, որոնց վրա դարերով հենվել էր մարդկությունը, փլվեց Օտյանի աչքերի առջև՝ նրան նետելով կործանման ստույգ սարսափի մեջ:

Հատկապես տպավորիչ է Պուսերայից Բաղդադ փախուստի փորձի նկարագրությունը, երբ թվում է՝ այլևս անխուսափելի է կործանումը, և վերջնականապես նրան լքել է ապրելու կամքը. «Աքսորանքիս մէջ առաջին անգամ ըլլալով, յուսահատութիւնն ու լքումը կը տիրեր վրաս: Կը մտածէի թէ ուժասպառ հո՞ն, ցախաստանին մէջ պիտի մնամ ու ջագալներուն կեր ըլլամ եւ բարձրաձայն «Ա՛լ կ՚օգտէ, ա՛լ կ՚օգտէ» կը պոռայի, խօսքս ուղղելով չեմ գիտեր ինչ անագորոյն աստուածութեան մը»:

Գերմարդկային տառապանքն ու հուսահատությունը հաղթահարելով՝ 1918-ի մարտի 10-ին աքսորյալ ընկերների հետ նա ձեռնարկեց վերջին փախուստը: Իսկ երբ վտանգը որոշ չափով թուլացել էր, քանի որ Օտյանն իր անհատական որակներով էր նվաճել անցաթուղթը՝ վեսիքան, նրա համար սեփական անձի փրկությունը չդարձավ նպատակ: Վտարանդու հանդուգն ձեռնարկումը՝ իզմիտցի 10-11 տարեկան որբին՝ Հակոբին, Պոլիս բերելը, միայն հոգու սովորական պարտք չէր. դա ժողովրդի ապագան փրկագործելու յուրահատուկ ձեռնարկում էր: Կործանումների համածավալ օվկիանոսում հանկարծ ոտքի տակ հենարան զգաց, ապրելու կամքը գերազանցեց կործանման բնազդին. կյանքը հաղթեց մահին:

Հոշոտված հասարակական մարմինը վերակենդանանալու ճիգեր է գործադրում, և ի վերջո դա տեղի է ունենալու սեփական երկրում, սեփական տանը: Այդպիսին է Օտյան հուշագիր-վավերագրողի ներքին միտումը, որ խոսքն ավարտում է իրականության առօրեականությունը ընդգծող հատվածով. «Երեք ու կէս տարուան բացակայութենէ ետքը վերստին կը գտնէի գրասեղանս և աթոռս:

Եւ նստայ առաջին յօդուածս գրելու»:

Այնուամենայնիվ, այս վավերագրության արժեքը միայն արժանահավատ փաստերը ճշգրտորեն ներկայացնելը չէ: Օտյանը տաղանդավոր գրող է և գիտե, որ առաջնայինը տվյալ դեպքում գեղարվեստական պատկերները չեն, այլ իրողությունը, կործանումների չընդհատվող շարանը սերունդներին փոխանցելը: Բայց նա չէր կարող անտեսել հուշագրությունից բխող եզրահանգումը, դրանից արտածվող փիլիսոփայությունը: Ահա թե ինչու անհնար է այդ խոսքի արժեքը սահմանափակել միայն նրա որոշակիությամբ. Դա կարևոր է, բայց ամբողջը չէ: Օտյանը իր հուշերով վերածվում է **հումանիստ հրապարակախոսի, հայ ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունը մարդկության դեմ ուղղված ոճրագործություն է, որ իր արժանի հատուցումը պիտի ստանա**: Հակառակ պարագայում ինչու՞ էր ամենայն մանրամասնությամբ վերակերտում օսմանյան կայսրության իրականացրած նախճիրի պատմությունը՝ մեկ անգամ ևս ապրելով տևական, չընդմիջվող ողբերգությունը: Այստեղ է գրական այս հուշարձանի կարևորագույն արժեքը; Խոսքը վերաբերում է **մասնակցային հոգեբանությանը,** որի կրողն է Օտյանը: Մ. Բախտինի բնութագրմամբ՝ մշակույթի, փիլիսոփայության ճգնաժամը պայմանավորված է այն սկզբունքային բեկումով, որ տեղի է ունեցել տեսական մտքի և պատմական իրողության միջև: Տեսական աշխարհը առանձնացավ կյանքի աշխարհից և փորձեց հանդես գալ որպես միակ ճշմարտություն: Այս դեպքում տվյալ դեպքը, իրողությունը կորցնում է իր իրական արժեքը, քանի որ բացակայում է անհատական վերապրումը:

Մասնակցային ներկայությունն է հաղթահարում իրողության և դրա ընկալման միջև եղած անջրպետը: Այս դեպքում միայն կարող ենք խոսել պատմական արժանահավատ դեպքերի մասին: Մասնակցային ներկայությամբ Օտյանի՝ անցյալի վերակերտումը երբեք չի կորցնի արժանահավատությունը, քանի որ նա՝ որպես տաղանդավոր գրող և հմուտ հուշագրող, անհատական վերապրումը

զուգահեռել է ամենակարևորով՝ **մանրամասնով կամ մանրամասնությամբ:** Պատմական իրողություններն արժանահավատ են դառնում մանրակրկիտության մեջ: Բայց սա ոչ միայն հուշագրությանը ներկայացվող կարևոր պահանջ է, այլ ընդհանրապես գեղարվեստական խոսքին ներկայացվող պահանջ: Մանրամասնությունն է արժանահավատ դարձնում խոսքը, մասնավորապես արդեն պատմություն դարձած խոսքը, մանրամասնությունն է բացահայտում եղելության և իրողության միջև եղած տարբերությունը: Վաղուց է հայտնի, թե ինչ բարբարոսությամբ թուրք խուժանը հոշոտեց Զոհրապին, բայց մինչ Օտյանի հուշերը չգիտեինք թուրքական պետության արձագանքն այս առիթով: Զոհրապը ոչ միայն տաղանդավոր գրող էր, այլև թուրքական պառլամենտի անդամ. այնպես որ «հարկադրված» էին որոշակի պատասխան տալ գոնե այս հարցում: Եվ դա արվում է նենգությամբ, արտաքին քաղաքավարական ժեստը պահելու հստակ մտադրությամբ.

«Զոհրապի մահը պաշտօնապէս իմացուցած էր Թալէաթ՝ անոր կնոջ:

«Ցաւելով կիմացնեմ որ ձեր ամուսինը Ուրֆայի մէջ սրտի հիւանդութենէ մեռած է»- հեռաձայնելով»: Ներքին գործերի նախարարն ու մեծ վեզիրը հո չէ՞ր ասելու, թե բարբարոսական միջոցներով իրենք հնարավորինս կասեցրին քաղաքակիրթ ժողովրդի գոյության ընթացքը: Մեղավորը զոհերն են, ովքեր չդիմացան դժվարություններին և սրտի հիվանդությունից պարզապես մեռան: Առանց այս կարգի վկայությունների՝ անհնարին է ամբողջական պատկերացում կազմել ոչ միայն տվյալ ողբերգության, այլև տարբեր ժողովուրդների հոգեբանության, նրանց՝ միմյանց հանդեպ ունեցած վերաբերմունքի, գործելակերպի, դահիճի ու զոհի փոխհարաբերության և ընդհանրապես քաղաքակրթության հանդեպ նրանց ունեցած մոտեցումների մասին:

Հուշագրության մյուս կարևոր որակը կապված է հեղինակի՝ զտարյուն կոսմոպոլիտի հոգեբանության, աշխարհայացքային ընկալումների հետ: Նա թեև գրում է իր ժողովրդի ողբերգության մասին, այսուհանդերձ չի անտեսում և մյուս ժողովուրդների, մասնավորապես հույների տառապանքները:

Հարկ է նկատի ունենալ և այն հանգամանքը, որ Օտյանը, տիրապետելով խոսքի նրբություններին, հազիվ թե սահմանափակվեր դեպքերի արտաքին նկարագրությամբ: Նա այդ ամենին նայում է որպես բարոյագետ և տառապագին մտորումներով իրականում գրում Բարու և Չարի, Սիրո և Ատելության, Ժողովրդի և Իշխանության, Կյանքի և Մահվան մասին: Հետևապես այն սովորական հուշերի շարան չէ, որ արձանագրում է միայն փաստերը: Դա մեծ գրողի, մեծ հայրենասերի՝ տառապանքով վերապրած ողբերգությունն է՝ կործանումներից հառնելու աննահանջ կեցվածքով:

«Անիծյալ տարիներ»-ն անհատի հոգում բեկված պատմություն է, որտեղ հեղինակը հուշագրության բոլոր էջերում հավատարիմ է մնում իր՝ մտավորականի կոչմանը: Որքանով անկեղծ է գրողը, այնքանով ուժգնանում է խոսքի ներգործող ուժը: Համածավալ կործանումների թվարկումները, դրանց համադրումներն ի

վերջո դառնում են ոչ թե անհատի ինքնախոստովանության միջոցներ, որին սովորաբար հանդիպում ենք հուշապատումներում, այլ դառնում են «**դարի ինքնախոստովանությունը**», որ մարդկությանը մշտապես հիշեցնելու է արհավիրքի մասին, հակառակ դեպքում սերունդները հարկադրված կլինեն նորից անցնել այդ ճանապարհը:

Գրողներ կան, ովքեր մշտապես մտավախություն ունեն, որ չեն կարող արտահայտել այն, ինչ ցանկանում են ասել: Օտյանն այդ մտավախությունն անպայման ունեցել է: Բայց գտել է անհրաժեշտ և նոր տոնայնությունը: Ընդամենը մեկ երկու բառ և արդեն հնչում է նոր, ուժեղ, մաքուր ձայնը, որ լռեցնում է մնացյալ ոչ կարևոր ձայները, ընդամենը կարճ, փոքր նախադասությունն անգամ կարող է բացահայտել ժամանակի, մարդկային կյանքի ողբերգությունը:

«Անիծյալ տարիները» միայն ժամանակի կարևոր վկայագիր չէ, այն նաև հուշարձան է առաջին ցեղասպանության զոհերի հիշատակին: Այժմ պատմական հայրենիքից զրկված տասնյակ միլիոնավոր մարդիկ սփռված են աշխարհով մեկ: Օտյանի այս գիրքը կարդացողը մշտապես պիտի հիշի այդ մասին:

Բանալի բառեր՝ *եղեռն, ցեղասպանություն, արհավիրք, աքսոր, հուշագրություն, հասարակական մարմին, կործանման բնազդ, վավերագրություն, փաստ, ինքնախոստովանություն:*

ECHO OF THE INCESSANT PAIN

V. R. GRIGORYAN
Doctor of Philology, Professor
Head of the Chair of Armenian Language and Literature
GSU lecturer

The article refers to the Armenian Genocide and the reactions in the literature. Both the works written in the first decades after genocide and significant ones written later are taken into account. It is shown that this topic has become a touchstone for Armenian literature. The Genocide of the 20th century is of incondensable character, therefore it becomes quite difficult, even impossible, to give a meaning artistically. Among the works of crime fiction, memoir stands out, in which the conventions of the artistic plan are absent. This shows the important role of memoirs in the way of revealing historical truth. The author emphasizes the importance of the memoir "The Damned Years" by Ervand Otyan, which has a special place in the Armenian literature.

ЭХО НЕСМОЛКАЕМОЙ БОЛИ

В. Р. ГРИГОРЯН
Доктор филологических наук, профессор,
Заведующий кафедрой армянского языка и литературы,
Преподаватель ГГУ

Статья посвящена Геноциду армян, нашедшему отражение в литературе. Имеются в виду выдающиеся произведения, написанные как в течение первого десятилетия после Геноцида, так и впоследствии. Автор статьи показывает, что данная тема в армянской литературе стала своеобразным испытанием. Геноцид начала 20 века по своему объёму носил всеобъемлющий характер, следовательно, его художественное осмысление оказалось довольно сложным, даже почти невозможным. Среди произведений, освещающих данное преступление, выделяются мемуары, в которых отсутствуют условности художественного плана. Это говорит о важной роли мемуаров на пути выявления исторической правды. Автор подчёркивает важность занимающих особое место в армянской литературе мемуаров Ерванда Отяна “Проклятые годы”.

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԶՈՀՐԱՊՅԱՆԸ ԵՎ ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԿԱՆՈՆԱՐԿՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Թ. Ա. ԱՍՈՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԲՖ դեկան, ԳՊՀ դասախոս

Գրական արևմտահայերենը՝ իբրև հայերենի նոր դրսևորում ու լեզվաորակ, հանդես է գալիս 18-րդ դարի սկզբում: Արևմտահայերենով գրվում և հրատարակվում են տարբեր բնույթի գրքեր: Այս առումով կարևոր դերակատարում ունեցան Մխիթարյան միաբանութան հայրերը, որոնք, սկսած Մ.Սեբաստացուց, զբաղվեցին արևմտահայերենի կանոնավորման և մշակման հարցերով: Նրանց հեղինակած գրքերի լեզուն պարզորոշ ցուցանում է արևմտահայերենի նախնական վիճակը և հետագայում լեզվական տարբեր մակարդակներում տեղի ունեցած փոփոխությունները: 18-րդ դարում արևմտահայերենով գրքեր հրատարակել են Մ.Սեբաստացին, Խ.Սյուրմելյանը և Ղ. Ինճիճյանը: 19-րդ դարի սկզբում աշխարհաբար գրքերի քանակն ավելանում է, որոնց մեծ մասը պատկանում էր Մխիթարյանների գրչին: Աշխատություններ են հրատարակում Ե.Թովմաճանյանը, Հ.Օղուլլուխյանը, Ի.Փափազյանը, Մ.Ավգերյանը, Ա.Ճարյանը, Մ.Բժկյանը և ուրիշ Մխիթարյաններ: Այս հեղինակների լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ արևմտահայերենը 19-րդ դարի սկզբում դեռևս կազմավորման շրջանում էր գտնվում. տեղաշարժեր էին կատարվում թե՛ բառապաշարում, թե՛ քերականական համակարգում:

Արևմտահայերենի ուսումնասիրության համար սկզբնաղբյուր է նաև Հովհաննես Զոհրապյանի «Պատմութիւն աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց» (Վենետիկ, 1803) աշխատությունը: Նա Վենետիկի Մխիթարյան միաբանության հայտնի բանասեր գործիչներից մեկն է եղել: Սովորել է Վենետիկի հոգևոր ուսումնարանում, ճանապարհորդել է Լեհաստանի, Ուկրաինայի, Մերձավոր Արևելքի հայկական գաղթօջախներում՝ հավաքելով բազմաթիվ ձեռագրեր ու փաստաթղթեր: 1817թ. դուրս է եկել միաբանությունից, տեղափոխվել է Ֆրանսիա և դարձել Փարիզի Ասիական ընկերության անդամ: Պատրաստել և հրատարակել է Աստվածաշնչի քննական բնագիրը: Արևմտահայ աշխարհաբարով է գրված վերը նշված աշխատությունը: Այն ունի նախաբան՝ «Ծանուցումն», որտեղ հեղինակը ներկայացնում է իր մտահղացման նպատակը, դրա աշխարհաբար հրատարակման կարևորությունը: Իր մտահղացումը հեղինակը հետևյալ կերպ է մեկնաբանում. «…շատոնցմէ տեսնելով, որ այսպիսի շահաւոր բանը մեր ազգին մէջը կըպակսի, պատրաստվեր էինք, որ տեղն ի տեղը ընդարձակ աս սուրբ պատմութիւնները մեր սովորական գրքի լեզուով շարադրած տպենք ի լուսաւո-

րութիւն ազգիս»[1]: Ինչպես երևում է, Հովի. Զոհրապյանը գործնական նպատակ է հետապնդել, սակայն միաժամանակ զգացել է, «որ այնպիսի գրաբառ շարադրած մեծ գիրք մը այնչափ օգտակար չի կրնար ըլլալ՝ մեր ազգին հիմակու որպիսութիւնը նայելով»[2]: Ժողովրդի մեջ «համարձակ գրաբառ հասկըցողը քիչ է, իսկ եթե հասկացողն էլ հասկանա, բուն Աստուածաշնչէն կրնա առներ»: Ելնելով ստեղծված իրավիճակից՝ Զոհրապյանը միանգամայն սթափ, իրատեսական հետևություն է անում. «Դարձուցինք համառօտ կերպով աշխարհաբառ ոճով ըրինք, որ գրաբար գիտցողն ալ լաւ հասկընալու, ու չի գիտցողը, որ կամ ամէնևին չէր լսեր աստուածաշունչի պատմութիւնները կամ մէկ քանի նահապետներուն գործքերը վեր ի վերանց միան լսած էր, ասկեց կատարեալը կիմանա»[3]: Իր նպատակը իրագործելիս Հովի. Զոհրապյանը մի անգամ ևս հաստատում է հասարակական լայն զանգվածներին գրաբարի անհասկանալի լինելը, միաժամանակ անուղակիորեն ցույց է տալիս, որ իր / ինչպես նաև մյուս Մխիթարյանների / առաջին ու գլխավոր նպատակը ժողովրդին կրթելն ու լուսավորելն էր, իսկ գրաբարի ու աշխարհաբարի փոխհարաբերությունների, դրանցից որևէ մեկի առաջնության ու կարևորության խնդիրը եղել է եթե ոչ երկրորդական, համենայն դեպս ոչ հրատապ, ուստի կրթական բնույթի / և ոչ գիտական-բանասիրական / բոլոր աշխատանքներն էլ, առանց երկմտելու, ներկայացրել են ժամանակին հասկանալի լեզվով՝ աշխարհաբարով:

Հովի. Զոհրապյանը հասկանում է նաև, որ գրաբար գրված և գրվող գրքերը իրենց անհասկանալի լինելու պատճառով ժողովրդին զրկում են շատ բան իմանալու հնարավորությունից: Այդ բացը հնարավոր էր լցնել միայն գրաբար գրությունները «աշխարհաբառ ոճով» վերակենդանացնելով, թեկուզև համառոտ-յալ: Հատկապես կրոնական բնույթի գրությունների աշխարհաբարով անուղղակիորեն վերաշարադրելու միտումը գալիս էր Մխ. Սեբաստացուց: Դրանք, կարծում ենք, կարելի է համարել վերապատմում – թարգմանություն, որտեղ չեն պահպանվում տեքստերի առանձնահատկությունները, բայց ազատ կերպով ներկայացվում է իմաստը՝ հաճախ օգտագործելով բառակապակցական այն կաղապարները, որ կան գրաբար տեքստերում:

Իր աշխատանքը և ընդհանրապես նման տիպի աշխատանքները Հովի. Զոհրապյանը արժեքավորում է բավականին լայն ընդգրկումով, քան մինչ այդ եղած մոտեցումներն էին: Նա կարծում է, որ «աստուածաշունչ գրքերը» մարդու միտքն ու հոգին լուսավորում են ոչ միայն հոգևոր, այլև բնական ու քաղաքական առումներով: Ահավասիկ. «…նաև այնպիսին / խոսքը իմացության նյութի մասին է, քանի որ շարունակում է նախորդ՝ մեր կողմից մեջբերված միտքը – Թ. Ա./, որ շատ պիտանացու գրաբար գրքերէն զրկվեր էր, աս մէկս կարդալով ու հասկընալով,

[1] Յովի.Զօհրապեան, Պատմութիւն Աստուածաշունչ գրոց…, Վենետիկ, 1803. էջ 3:
[2] Նույն տեղում, էջ 3:
[3] Նույն տեղում, էջ 3:

կըյուսանք, որ ըստ կարելութեան կրնա շատին տեղը լեցունել ոչ միայն հոգևորի կողմանէն, որ բոլոր քրիստոնեական ճշմարիտ ուսումը աստուածաշնչին ըսած-ներուն վրայ հաստատուած է, հապա նաև բնական ու քաղաքական ուսման դիէն, որ ան պատմութիւններում խելքը կըբացվի, կըլուսաւորվի ու անկեց ալ ուրիշ շատ բան կիմանա»[1],--գրում է նա:

«Ծանուցման» հաջորդ հատվածում Հովի. Զոհրապյանը ներկայացնում է աշխարհաբարի վիճակը և իր վերաբերմունքը այդ լեզվաորակի գործածության նկատմամբ:

Նախ՝ զգացվում է հեղինակի մտահոգությունը ժամանակի հայերենի վիճակի նկատմամբ: Նա ևս փաստում է հայերենի՝ այլևայլ ազգերի լեզուների լեզվատար-րերով իրար չհասկանալու աստիճան գերհագեցած լինելը: Այնքան մեծ է եղել տաճկերենի, պարսկերենի, «ֆռէնկերէնի» ազդեցությունը, « որ ասով շատ աւրեր է աշխարհաբար լեզունիս ու անանկ փոխվեր է, որ մէկ տեղացին մէկալին ըսածը դժվար կըհասկընա»[2]: Լեզվական այս տեսակ ազդեցությունը Զոհրապյանը բա-ցատրում է համապատասխան անբարենպաստ քաղաքական վիճակով ու ազդեցությամբ. «Ինչպէս որ հիմակու ժամանակս մեր ցիրուցան եղած ազգը ինչ ազգի հետ բնակեր է նէ, կամաց-կամաց անոր լեզուէն առեր խառներ է իր հայերէնին մէջը»[3] :

Սակայն, այսպիսով, հեղինակի որոշումը՝ իր աշխատանքը աշխարհաբարով ներկայացնել, դեռևս բավարար չէ նպատակին հասնելու համար, որովհետև «աշխարհաբառ» ասվածը դեռ կայացած, միօրինականացած երևույթ չէր: Հովի. Զոհրապյանը պետք է լուծեր նաև լեզվի՝ բոլոր հայերին հասկանալի լինելու խնդիրը, որովհետև «շատ աւրեր է աշխարհաբար լեզունիս, ու անանկ փոխվեր է, որ մէկ տեղացին մէկալին ըսածը դժվար կըհասկընա»: Եվ, բնականաբար, ջանում է, «որ այսպէս չըլլա, հապա որչափ կարելի է ամմէնքը հասկընան»: Նա նաև մտածում է լեզվի մաքրության մասին , ուստի առաջին հերթին հրաժարվում է այլազգի բառերի գործածությունից և ուզում է, «որ զուտ հայերէնը ըլլա, առանց այլազգի բառեր մէջը խառնելու»: Այնուհետև, ընտրում է «ըստամպօլցիի հայերէնի» ոճը, որովհետև, ինչպես ինքն է ասում, «բուն հայաստանցոց ալ աւելի մոտ է ու պարսկահայք ալ կըհասկընան»: Հիշենք, որ, «ըստամպօլցիի» հայերենին դիմում էին նաև մյուս Մխիթարյանները: Բայց դեռ սրանով խնդիրը չի լուծվում, ընդհակառակը, ծագում է նոր դժվարություն՝ օտար ու աշխարհաբարից պակասող բառերի փոխարեն ի՞նչ աղբյուրի դիմել: Հովի. Զոհրապյանը կողմնորոշվում է դեպի գրաբար. «ուր տեղ որ խօսքը այսպիսի աշխարհաբառէն կըպակսեր, ան տեղը գրաբառէն առած բանեցուցինք»: Այնուհետև հասկանալով, որ դա դեռևս ժողովրդին հասկանալի լինելու համար բավարար չէ, քանի որ շատերը կարող էին

[1] Նույն տեղում, էջ 4:
[2] Նույն տեղում, էջ 4:
[3] Նույն տեղում, էջ 4:

նաև գրաբարից վերցված բառերի իմաստը չհասկանալ, «ուստի տեղ տեղ ալ «այսինքն» մեկնելով՝ զուտ տաճկերէնը դրինք»: Գրաբար բառերը տաճկերենով բացատրելը մի հավելյալ նշանակություն էլ է ստանում: Զոհրապյանի կարծիքով՝ այդպես կարելի է նաև գրաբար սովորել. «ասով կարդացողներուն քիչ քիչ գրաբառի ալ դուռ բացվի»: Այնուամենայնիվ, շարադրանքից երևում է, որ այս վերջին միտքը կարելի է միայն ցանկություն համարել և ոչ թե պարտադիր նպատակ:

«Պատմութիւն աստուածաշունչ գրոց հին և նոր կտակարանաց» գրքի լեզվի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրա հեղինակը հասել է իր՝ «զուտ հայերէն» գիրք գրելու նպատակին: Այլ Մխիթարյանների համեմատ Հովի. Զոհրապյանի լեզուն բավականին մաքուր է, քիչ են գրաբարաբանությունները, սակավ են զուգահեռ ձևերի գործածությունները, որի հետևանքով էլ քերականական համակարգը «անխառն է»: Ազատորեն օգտվում է բարբառային և խոսակցական բառապաշարից: Քերականական ընդհանուր համակարգը բավականին կայուն է, ու շեղումներ չկան: Այսպես.

1.Հովի. Զոհրապյանը, ինչպես վերը տեսանք, իր գրվածքը մաքուր հայերեն արարելու համար, նախ, հրաժարվում է օտար բառերի հաճախադեպ գործածությունից և ապա՝ աշխարհաբարի բառապաշարի պակասը փորձում է լրացնել գրաբարի օգնությամբ: Սակայն սա չի նշանակում, որ դիմելով գրաբարին՝ նա չի օգտվում բարբառների, խոսակցական լեզվի ընձեռած հնարավորություններից: Հակառակը, նրա բառապաշարը հագեցած է նման բառերով ու արտահայտություններով, որոնք գրվածքը ոչ միայն հասկանալի են դարձնում, այլև կենդանի՝ ձերբազատելով այն գրաբարի գրքայնությունից: Բերենք այդպիսի բառերի մի շարք . *պզտիկ, կնիկ մարդ, ապսպրել, աղվոր փրցընել, էրիկ, քոցել /=գոցել/, խածնել, փղաբերք, առջինեկ, պաղել, կռնակ, քով, սեպել, խրկել, կանուխ, մանչ, ապուր, գաղտուկ, խախք անել, անօթի, շիկուկ /=շեկ/* և այլն:

2.Աշխարհաբարով գրելու ձգտումը ինչ-որ չափով արտահայտվել է նաև հայերենի հնչական վիճակի արտացոլմամբ: Հեղինակը գրանցել է բառերի այնպիսի արտասանական տարբերակներ, որոնցից երևում է բաղաձայնական համակարգում տեղի ունեցած տեղաշարժը՝ ձայնեղների խլացումը. օրինակ՝ *գունտ, նախանձիլ, գանկտիլ, սնտուկ, կանկուն:*

3.Արտացոլված է արևմտահայերենին բնորոշ ձայնավորների, երկհնչյունների հնչյունափոխական բազմազանությունը. *ըսվել, բաժնել, առջին, քառսուն /ա/, իրեք, իրիկուն, երսուն /ե/, ինկած /ը/, եղբար, լանք, միան, փափ, ծար, էգի, հար, մար, ձան, էրել /այ/, արուն, հարուր, եղջուր /իւ/, լուս, քուր /ոյ/, ժողվել /ո/, կանանչ / հնչյունի հավելում /, վլանալ, զուրցել / դրափոխություն /, ինջաւ / հավելում /:*

4.Հոլովական համակարգը զերծ է գրաբար-աշխարհաբար զուգաձևություններից: Բոլոր հոլովներում հանդես են գալիս աշխարհաբարյան հոլովակերտները թե՛ եզակի, թե՛ հոգնակի թվերում:

5. Այս, այդ, այն ցուցական դերանունները հանդես են եկել աս, ան, ատ ձևերով. *աս աշխարհքս /7/, աս դրախտ ըսածս /9/, աս տապանը /15/, աս բանիս վրայ /38/, ան տեղը պահեն /9/, ան արգելած պտուղին աղվորութիւնը /10/, ան բովանդակ կենդանիները /17/, ան օրհնութիւնը /38/, ատ կընկանը մէջը /11/, ատ քու երկիրէդ /20/, ատ ըրած գործիդ համար /33/, ատ ինչպէս շուտով գտար /39/, ատ ձեռքըդ /86/:* Սրանց գրաբարյան ձևերի զուգահեռ գործածությունները խիստ հազվադեպ են, մինչդեռ բաղադրություններում հակառակն է. բացառություններ են աս, ան, ատ ձևերի գործածությունը, և մեծ մասամբ հանդիպում են այս, այդ, այն ձևերը. *այսպէս որ եղաւ /11/, այնպէս հետերնին կխօսիմ /127/, այսպիսի ձան եկաւ /84/, այսպիսի ծանր հագուստներով /242/ և այլն:*

Անձնական դերանունները հանդես են եկել աշխարհաբարյան ձևերով՝ ինծի, քեզի, ձեզի, դուն: Օրինաչափություն է *ես* դերանվան հայցականի գործածությունը *իս* ձևով, առանց զ նախդիրի. *օձը իս խաբեց /10/, որ իս օրհնես /39/, հայր, իս ալ օրհնես /41/, աստուած իս ձեզի խրկեց /85/:*

Շատ գործածական են բարբառային անկէ, ասկեց, անիկա, ասիկա, ասկէ, ատիկա, անկեց ձևերը, օրինակ՝ *անկէ եւրև /11/, անկէ եօթն օրէն եւրև /16/, ասկէ եւրքը /82/, ասկէ ի զատ /120/, ասկէ եւրքը /122/, ասկէ հանէ /27/, անկեց բաժնեց /8/, անկեց կանչեց զինք /20/, անկեց առաւ բերեց /32/, ատիկա առնէ պահէ /82/, անիկա ինծի տվաւ /10/, անիկա բանի տեղ չի սեպեր /24/, անիկա թագաւոր օծէ /238/, ասիկա ալ քավութիւն կըսվէր /119/, ասիկա բռնեցին /122/, ասիկա իր հօրը առջի ճամբուն հետևեցաւ /362/, կըհրամայեմ, որ ատկեց ելլես /650/:*

Գործածված են անձնական և ցուցական դերանունների աշխարհաբարյան տարբեր հոլովաձևեր ևս: Օրինակներ՝

ասոր-ասոր հայտնեց /15/, ասոր նշան /24/, ասոր վրայ հասաւ /37/, ասոր վրայ /88/, անոր-անոր մէկ կողը /8/, անոր զաւակները /24/, անոր սուգը /33/, անոր խօսքը /88/,

ասոնք- ասոնք գերի բռնեցին /21/, տեսնելով ասոնք /27/, ասոնք առաւ Մովսէս /119/,

ասոնց- ասոնց միտքը /18/, ասոնց մէջէն /19/, ասոնց չարութիւն մը ընեն /27/, անոնք- անոնք եւր կենան /27/, հաշտեցունէ անոնք /83/, անոնք ալ…ելան /89/, անոնց-անոնց մեղքը /14/, լսելով անոնց հառաչանքը /84/, անոնց մահիճներու վրայ /91/, անոնցմէ-անոնցմէ վեցը /171/, խելմը ջարդեցին անոնցմէ /244/,

ատոր-ատոր երեսը /238/. / հազվադեպ է հանդիպում/, ատոնց-ատոնց պատճառով /95/. ուղղականը չի հանդիպում,

ասով-ասով բոլոր աշխարհքս գիտնա /243/, ասոր հարազատ մարը ըլլալը ցուցուց /293/,

անով-անով մխիթարվեցաւ /36/, անով ստակ կըվաստրկեին /650/,

ասանկ-ասանկ ըսէ անոնց /85/, ասանկ ըսածին պէս /94/, ասանկ ըսին /95/,

անանկ-անանկ սոսկալի պատիժներ կուտամ /89/, անանկ քարկոծելով /122/.

Ես դերանվան բացառականը գործածական է իսմէ ձևով.

Իսմէ չես ամըչնար /95/, խնդրէ իսմէ /291/, իսմէ խնդրեցիր /291/,

քեզմէ/քեզմով-քեզմէ առաջ բերաւ /40/, քեզմէ առաջ /291/, քեզմով օրհնվին /20/,

իրմէ-իրմէ թալլած բաները /22/, իրմէ թողութիւն խնդրելով /127/:

Զանգվածային կիրառություն ունեն *հոս, հոն* դերանունները, որոնք այլ Մխիթարյանների մոտ նույնիսկ չեն էլ հանդիպում.

հոս-հոս փեղս /20/, հոս մի գար /84/, ,մէնք ամմէնքս հոս ենք /650/,

հոն-հոն մտնելէն ետև /15/, բանը հոն հասաւ /27/, հոն մէկ սեղան մը շինեց /32/:

Չնայած քիչ, բայց կա նաև ինտոր-ի գործածությունը, որ այլոց մոտ չի հանդիպում. *ինտոր ըսի նէ /24/, ինտոր պիտոր ըլլա աս իրենց բանը /363/: Ասդին/անդին - ասդիս, անդին նայեցաւ /83/, մէկը ասդիէն, մէկալը անդիէն /119/:*

6. Բայական համակարգում Մ. Սեբաստացու հետևողությամբ պահպանում ու գործածում է - նինի –ով դերբայը: Եթե որոշ Մխիթարյաններ այս դերբայը բոլորովին չեն գործածում, ոմանք էլ ունեն հատուկենտ օրինակներ, ապա Հովի. Զոհրապյանը այն գործածում է առանց սահմանափակման. *երթալնինի /24/, հանգչելնինի /26/, պագնելնինի /40/, ընելնինի /122/, պառկելնինի /40/, փնտռելնինի /239/, արածելնինի /242/, պառկելնինի /252/, դնելնինի /658/* և այլն: Ասենք, որ այս դերբայը չկա Ինճիճյանի և Այուրմելյանի՝ նախորդ դարում տպագրված գրքերում:

Պիտի եղանակիչը գործածված է և՛ պիտի, և՛ պիտոր ձևերով:

Զոհրապյանը համամասնորեն համատեղում է սրանց գործածությունը.

պիտի-պիտի պատժէ /15/, պիտի տանջըվին /24/, պիտի բերէ /24/, պիտի ծառայ ըլլա /37/, պիտի մեռնիմ /38/, պիտի կատարեն /122/, պիտի չիգայ /292/,

պիտոր-պիտոր խալըսէ /15/, պիտոր տամ /20/, պիտոր տիրապետել տայ /23/, պիտոր գային /34/, պիտոր ելլէ /37/:

Խ. Սեբաստացու և Ղ. Ինճիճյանի գրքերում ներկայի կ - ով ձևերի գրությունը Սեբաստացու համեմատ փոփոխվել էր, և այդ փոփոխությունն, ըստ էության, կայունացել է 19-րդ դարասկզբում: Զոհրապյանն էլ իր նախորդների նման կու գրությունը պահպանում է միայն գալ, լալ, տալ բայերի դեպքում, իսկ ընդհանրապես կ – ով գրում է ձայնավորներից, կը – ով բաղաձայններից առաջ. */81/, կուզես /291/, կըներեմ /12/, կըմտածէր /30/, կըքարոզէր /658/: կառնէ /41/, կուլար*

Շարունակական ներկայի կոր – ով ձևերը Զոհրապյանի լեզվում կայուն երևույթ են: Այուրմելյանի և Ինճիճյանի մոտ այն ցայտուն արտահայտված չէր և շատ հազվադեպ էր հանդիպում. *որ կուգար կոր /36/, բռնէր կըծեծէր ու կըչարչարէր կոր /83/, չես տեսնա, որ Եգիպտոս ալ բոլորովին կըկորսվիկոր /95/, ցուպով ու քարով վրաս կուգասկոր /243/, հիմա ձեր առջևը կըդարվիմ կոր /655/*: Օրինակները ցույց են տալիս, որ կոր – ի գրությունը և՛ առանձնացած է, և՛ միասնացած, որը և պահպանում ենք:

Ժխտականի չ – ի գրությունը նման է նախորդների գրությանը՝ բաղաձայններից առաջ գրվում է չի, իսկ ձայնավորներից առաջ՝ չ. *չի մօրենաք /9/, չի մարեցաւ /12/, չիքաշեին /27/, չըլլա /27/:* Չի – ի գրությունը նույնպես մերթ միացած է, մերթ առանձին:

Պատճառական – *ուցան* ածանցը Զոհրապյանի մոտ հանդես է գալիս – *ցուն* ձևով: Նախորդների մոտ հանդիպում է - *ցն* ձևով. *մտցունել /13/, փախցունել /17/, կըցուցանեմ /20/, կըբազմացուցանեմ /33/:*

7.Պահպանված են արևտահայերենին բնորոշ մյուս լեզվական արտահայտությունները. *ա/ ալ - երկու ծառ ալ կային /9/, Ադամալ պատասխանեց /10/, գինիալ խմեց վրայէն /40/, Եսաւ ալ դարձաւ ըսաւ /41/: Սրանց գրությունն էլ անկանոն է: բ/ Մը - բարի որդի մը /13/, ագռավմը /16/, լաւ կերակուրմը շինէ /38/, մանչ զավակմը եղաւ /81, աղօթարան մըն էր /119/: Երբեմն հանդիպում է մի – ն. սպաննել մի կուզես /83/, հոս մի պիտի բերվին /124/: Բավականին կենսունակ է մէկ….մը կաղապարը. մէկ բարձր լեռմը /31/, մէկ կոյս աղջիկմը /34/, մէկ եբրայեցիմը /83/,մէկ սընտուկ մըն էր /119/: գ/ Նէ - ան ծառէն ուրեքնէ /9/, աղջիկը գալու չըլլանէ /34/,պենթութիւնը կըբռնէրնէ /238/, ինչ որ կուզեսնէ /291:*

8.Գալ բայի հրամայականը հանդես է գալիս եկո՛ր ձևով. *հոն եկո՛ր բնակէ /20/,մոտ եկո՛ր, որ քեզ բռնեմ /39/, եկո՛ր քեզ փարաւոն թագաւորին քովը խրկեմ /85, եկո՛ր, եկո՛ր, եկո՛ր մոտեցի՛ր քովս /243/:*

9.Հովի. Զոհրապյանի լեզվի առանձնահատկություններից մեկն էլ *պինտ* /=շատ/ բառի մակբայական հաճախակի կիրառությունն է, որ նախորդների մոտ չի հանդիպում, իսկ հաջորդներից բոլորը չէ, որ գործածում են. *պինտ առաջ հրամայեց /7/, պինտ բարձր լեռներուն ծարէն /15/, պինտ քիչ ժողվողը տասը քոռ բան դիզեց /125/, պինտ առջի դատաստանովը /292/:*

10.Շաղկապներից ամենից շատ գործածական է *ինչվան* շաղկապը. *տեղերնին կենան սպասեն, ինչվան որ ինքը տղին հետը անդին մեկ տեղմը երթան/31/, Եղիազար կարտորար, չէր ուզէր մնալ, ինչվան որ խօսքը Ռեբեկային ձգեցին /35/, չուտեն, չիխմեն, ինչվան որ Պողոսը մեռցունէն /656/:*

Կարելի է անել հետևյալ եզրակացությունը. Հովի. Զոհրապյանը, շարունակելով իր նախորդների ավանդները, մաքրում է արևմտահայերենի բառապաշարը, լայնորեն օգտվում բարբառների ծառայություններից, կայունացնում արևմտահայերենի պարզորոշ ուրվագծված քերականական համակարգը: Նրա լեզուն, համեմատած այլ հեղինակների լեզվի հետ, մաքուր է ու գեղեցիկ, զուրկ բազմաձևությունից ու խառնափնթորությունից, որ նկատելի է նույնիսկ նրանից հետո հրատարակված հեղինակներից ոմանց լեզվում:

Բանալի բառեր՝ *Մխիթարյաններ, աշխարհաբար. արևմտահայերեն, քերականություն, բառապաշար, հնչյունափոխություն, գրաբար, դերանուն, բայ:*

HOVH. ZOHRAPYAN AND REGULATION ISSUES OF WESTERN ARMENIAN

T. A. ASOYAN
PHD in Philology, Associate Professor,
Dean of the Faculty of Philology, GSU lecturer

Hovh. Zohrapyan is one of the prominent figures in Mekhitarist Congregation. Appearing at the beginning of the 19th century, he expressed his views on Grabar(the old Armenian language) and on Ashkharhabar (the modern Armenian language). Noting the advantages of Grabar, Zohrapyan also offers to have a caring attitude towards Ashkharhabar, to refine and enrich its vocabulary and to regulate the grammatical system. His works written in Ashkharhabar are also examined in the article; it is an attempt to present phonetic, lexical and grammatical features of Western Armenian at the beginning of the 19th century.

ОВ. ЗОГРАПЯН И ВОПРОСЫ РЕГУЛИРОВАНИЯ ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКА

Т. А. АСОЯН
Кандидат филологических наук, доцент
Декан филологического факультета, преподаватель ГГУ

Ов. Зограпян является одним из известных деятелей Мхитарианского ордена. Начав свою деятельность в начале 19 веке, он выразил свою точку зрения по поводу грабара и на счет ашхарабара. Принимая во внимание преимущества грабара, Зограбян также предлагает проявлять бережное отношение к ашхарабару, очистить и обогатить его словарный запас, регулировать грамматическую систему.

В статье также рассматривается язык книг, написанные Ов. Зограпяном. Это попытка так представить фонетические, лексические и грамматические особенности западноармянского языка 19-го века.

ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՑՈԼՈՒՄԸ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ ՊՈԵՄՆԵՐՈՒՄ

Ն. Կ. ՂԱԶԱՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս

Վտանգի ժամին հայրենիքը Չարենցի համար դառնում է հոգևոր որոնման առարկա: Դարձնելով ամենավերին չափանիշ՝ Չարենցը ցանկանում էր հայրենիքը տեսնել վերաձևված իր նախնական չափումներով: Խորհրդապաշտությունը առարկայական մոտիկն ու հեռուն վերափոխում է տեսլականի:

«Կապուտաչյա հայրենիք» պոեմում տեսլանում, բայց և հոգեապրումի մեջ անձնականանում է և մերձենում հայրենիքը: Հարազատ էակի պես մոտենում և հեռանում է հայրենիքը նույն պոեմում, որին զուգահեռ հստակ ընդգծվում է մերձեցման, վերադարձի, ամբողջացման տենչը:

Չարենցը հայրենիքի չարչարանաց ժամի մասին դեռևս սակավ է խոսում:

– Ու ժպտում է ինձ երկիրը տրտում,
Երկիրը ցավի, սուգի, արյունի...

Ս. Աղաբաբյանը նշում է, որ Չարենցը «տենչում էր մի ուրիշ հայրենիք, որը չկար, բայց կարող էր լինել, կարող էր մարմնանալ հեռաստանում»[1]:

Ամբողջականը հեթանոս, նախնական, միֆական հայրենիքն է, որը բանաստեղծը սրբացնում է.

– Հովիտներում հայրենի, հովիտներում սրբազան...

Միֆական հայրենիքի պարտադիր հայտանշան է շուրջպարի գործողությունը («Ու կպարեն հնամյա պարերը խենթ ու ճկուն»):

Պարի ծիսական գործողությունը «Կապուտաչյա հայրենիք»-ից անցնում է «Դանթեական առասպել» («Բոլորեց իսկույն մեր շուրջպարը հին»), «Սոմա» («Եկեք, մտեք շուրջպարը մեր», «Պար ենք բռնել խելագար»), «Մահվան տեսիլ» («Եվ շուրջը նրա խարույկի, բոլորած մի պար խելահեղ,//Ցատկոտում էին ու պարում ամբոխները այն դիվահար») պոեմներին:

Նախնական, միֆական հայրենիքի վերապրումը շարունակվում է «Կապուտաչյա հայրենիք» պոեմի ողջ ընթացքում:

Ճակատագրով դեպի կորուստն ընթացող պահը սրում է, որպես հակակշիռ, հայրենիքի միֆական, ամբողջական չափումների զգացողությունը: Բեկորվող հայրենիքի առայժմ տեսիլը սրբազնացնում է նրան, հեռապատկերը պահում վերադարձի ու կայացման գծում: Միախառնվում են երազի, ծեսի, սրբացման մտատեսլային գործընթացները:

«Միֆական դարաշրջանը առաջին առարկաների և առաջին գործողությունների դարաշրջան է. առաջին կրակը, առաջին նիզակը, առաջին տունը և այլն...

[1] Ս. Աղաբաբյան, Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, Եր., 1986, էջ 239:

անցյալի իմացությունը նույնացվում է իմաստության հետ»,– գրել է Ե. Մելետինսկին:[1]

«Կապուտաչյա հայրենիք» պոեմում «առաջին առարկաները» և «առաջին գործողությունները» սրանք են՝ ճամփաներ, այգի ու տնակ՝ գետի եզերքին, մայրը՝ սեղանն օրհնելիս, հնձվորներ, հողի մշակներ, վանք ու վանահայր և այլն, որոնք «սրբազան հայրենիքի» միֆական տարրերն են: Ծիսական նշանակություն ունեն մոր դուրս գալը տնակից, ջրի ափ ելնելը, թթենու օրորը: Մոր կերպարի հետ մեկտեղ, վաղնջական հայրենիքը մարմնանում է որպես աղջիկ կամ տնակ ու այգի («Աղջիկ ես դու, թե այն տնակն ու այգին». միֆին բնորոշ են փոխակերպությունները՝ նաև անձի ու առարկայի պարագայում):

Պոեմում դիմում-կրկնությունները հայրենիքի կայացումը պնդող նշանակություն են ստանում.

– Դու մի գիշեր պիտի իջնե՛ս, պիտի գաս,

Հավատացի, որ կտեսնեմ քեզ մի օր...

– Հասկացա, որ կա, կգա, կլինի...

Հաստատելու համար, որ «Կապուտաչյա հայրենիք» պոեմում Չարենցին հայրենիքի կորստյան վտանգն է թելադրել միֆականի, ամբողջականի որոնումը, նշենք, որ միֆի նշանակութունը մեծանում է հոգեկան ճգնաժամային վիճակների հաղթահարման դեպքում: Եվ քանի որ հայրենիքի ճակատագրի ճգնաժամը անընդհատ շարունակվում է, նրա միֆական որոնումը ևս չի դադարում (առավել ընդգծված ներքին հոսք է դառնում «Երկիր Նաիրի» վեպում):

«Կապուտաչյա հայրենիք» պոեմը և «Երկիր Նաիրի» վեպը միֆական հենքով առավել քան իրար կապված երկեր են: Պոեմում հայրենիքը մաքուր, անխառն միֆական դարձի ուղիներում է, իսկ վեպում պատկերված է ցեղասպանական իրադարձությունների և հայրենիքի որոնման թեմաների ներքին բախումը՝ որպես «անկախ» թեմաներ: Վեպում շարունակվում է Նաիրիի փնտրտուքի «ուղեղային մորմոքը»: Բանաստեղծի սրտում «չեղյալ» Նաիրին է, նրա «խորհրդավոր լեգենդը», «Գուցե «Նաիրի» նշանակում է ցնորք. ո՞վ իմանա»,– գրում է Չարենցը: Չարենցի բացատրությունը նույնն է, ինչ եթե ասենք՝ Նաիրին միֆ է. «և կա, և չկա»: Նաիրին անգո է, բայց գոյություն ունի բանաստեղծի արյան մեջ:

Հայտնության պահին այն առարկայանում է.

– Հասկացա, որ կա, կգա, կլինի...

Հայտնության պահին ներկան տարրալուծվում է նախնականի, ամբողջական հեռավոր պատկերում:

Հայրենիքի որոնումը մոտիկի և հեռավորի բազմամակարդակ շարժման մեջ է: «Տեսիլաժամեր» շարքում, որը նախորդում է «Կապուտաչյա հայրենիք» պոեմին, իշխում է հայրենիքի որոնման ներկա պահի տագնապը.

– Անցնում է որպես անմարմին տեսիլ

[1] Мелетинский Е. М., Поэтика мифа, М., 1976, с. 173.

Ու նորից միգում երևում է նա:

Ու նորից չկա: Ու նորից գիշեր –

Փողոցի վրա ու հոգուս վրա:

Դրան հակառակ, «Կապուտաչյա հայրենիք» պոեմում հայրենիքի որոնումը միֆի մշտական ժամանակի մեջ է, որը «մաքուր» է և սրբազան.

– Բայց երազի ուղիներով, հեռավոր

Դու մի գիշեր պիտի իջնես, պիտի գաս:

Հայրենիքի «իջնել»-ը, «գալ»-ը պայմանավորված է նախնական առարկաներով ու գործողություններով աշխարհի մոդելավորմամբ:

Խորհրդանշական ամուսնություն «կապուտաչյա սիրուհու»՝ հայրենիքի հետ՝ այսպես է ավարտվում պոեմը: Սա նոր սկզբի կանխատեսում է. քաոսը պետք է փոխարկվի վաղնջական կարգով:

Մեր կարծիքով՝ Չարենցը հարսանիքի խորհրդանիշն օգտագործել է Նիցշեի «Բարուց և չարից անդին» գրքի «Բարձր լեռներից» վերջերգի հետևյալ տողերի օրինակով.

– Եվ խավարի ու լույսի հարսանիքն հասավ փառահեղ...

Չարենցը գրում է.

– Կապուտաչյա սիրուհիս, ամուսնանանք պիտի մենք

Արևի տակ՝ հայրենի հովիտներում կանաչուն...

Հովիտներում հայրենի, հովիտներում սրբազան...

Հարսանիքիս խնջույքին փսփսալու են նրանք

Առասպելներ ապրված ու զրույցներ հնամյա...

«Ամուսնանալը» հոգևոր միության, հայրենիքի ճակատագրին տեր լինելու խորհրդանիշն է: Ծիսական գործողության վայրը «սրբազան» «հովիտներն» են, որտեղ աղջիկները «կպարեն հնամյա պարերը խենթ ու ճկուն»: Պատահական չեն «ապրված առասպելների» և «հնամյա զրույցների» հիշատակումները:

Միֆական հայրենիքի արտաքուստ խաղաղ, բայց ներքնապես տենդագին որոնումը թելադրված էր դանթեական դժոխքում հայտնված հայենիքի ճակատագրի ծանր զգացողությամբ:

«Դանթեական առասպել» պոեմին համընկնող մի քանի տողեր կային «Կապուտաչյա հայրենիք» պոեմում: Այսպես՝ «Երկիրն իմ որբ, արնաքամ ու ավերակ», «Օրերում այս տառապանքի ու մահի», «Երկիրը ցավի, սուգի, արյունի» և այլն: «Երկիրն իմ որբ, արնաքամ ու ավերակ» տողը փոքր տարբերությամբ պետք է կրկնվի «Ողջակիզվող կրակ» շարքում (1919-1920).

Իմ ավերակ, իմ որբ երկրում...

Ինչպես երկիրս անսփոփ, ինչպես երկիրս ավերակ...

«Դանթեական առասպել» պոեմի թեման պատերազմի ավերն է հայրենի երկրում, կյանքի ու մահի հակադրությունը: Գրված է պատերազմի դաշտից հիշողությունների ձևով: Մահն ու ավերը ներկայացվում են փաստացի ձևով: Ձինվորի ճամփին հայտնվում են դիակ, վարսեր կանացի, առանց մարմնի՝

ոսկրացած ձեռք, ցիրցան ատամներ, սառույցի վրա ընկած կին, խեղդամահ արված ծեր մարդ, ջրհորի դույլում՝ մարմնի կիսանեխ մասեր, արնաշաղախ ու մերկ կին և այլն: Փաստերի հաջորդականությունը ստեղծում է համատարած մահի ու արյան պատկերացում:

– Միայն Մա՛հն է տեր՝ անողոք ու մեծ...

Չարենցը «Դանթեական առասպել» պոեմում փաստերից գնում է դեպի ընդհանրացում, որն արտահայտվում է սիամանթոյական համընդգրկուն պատկերների լեզվով:

– Եվ մեռելների շուրջպարն էր թռչում
Լուսնահար, խելառ, տխուր, արնաներկ,
Հնչում էր նրանց երգը կարկաչուն՝
Սատանայական տագնապի մի երգ,–
Ու ցատկում էին խավարի միջում
Մարմինները մառ, սրունքները մերկ...

«Մահվան տեսիլ» պոեմում ցեղասպանությունը սիամանթոյական այս ընդհանրական պատկերներով է ներկայացվում. «Դանթեական առասպել»-ի էմպիրիկ պատումը նոր պոեմում տեղ չունի:

«Դանթեական առասպել»-ում մի գյուղ անվանվում է «մեռելաստան», Վանը՝ «Մեռած քաղաք»: Սիամանթոյական տեսլապատկերները սկիզբ են առնում Մեռած քաղաքում: Մեռելաստան, Մեռած քաղաք անունները անվանում են նաև ցեղասպանությունը: Թշնամու կողմից ամենուր մահ ու ամայություն է սփռվում:

– Զգում էինք, որ – չար ոսոխ կա մի,
Որ վերք է տալիս ու մահ է բերում:

Թշնամին ամենախոր բնութագրումն է ստանում «Մահվան տեսիլ» պոեմում:

– Բայց երկիրն արյամբ ողողեց տագնապած
Արքան այն գազան:
Հանելով բարբարոս հորդաներ – նա քանդեց
մեր շենները բոլոր,
Մեր մանկանց արյամբ արբեցավ՝ թաքնըված
որջում արքունի...

Բանաստեղծը հետահայաց նայելով երկրում իր անցած ճանապարհին՝ տեսնում է, որ «Քամին է միայն ոռնում ու կոծում,//Տոնելով վայրագ հարսանիքը մահի»:

«Դանթեական առասպել»-ը գրվել է ցեղասպանության ականատեսի աչքերով, ով իր տեսած սարսափներին հետո հաճախակի է անդրադառնալու:

«Դանթեական առասպել»-ին ժամանակագրորեն ամենամոտիկը «Վահագն» բալլադն է (1916 թ.): Նրանում տեսնում ենք ազգային միֆի պատկերազերծումը: Թշնամին մեր երկիրը դարձրել է փոշի. հայ կյանքի հիմները անդունդում են և արնոտ միգում ճարճատում են: Չարենցն աններում վերաբերմունք ունի ազգային թուլության հանդեպ: «Աթիլլա»-ում Չարենցը բորբոքում է վրեժի կրակը:

«Դանթեական առասպել» պոեմին հաջորդում է ծավալուն «Ազգային երազ» պոեմը (1917 թ.): Այս պոեմում եղեռնապատումը առաջ է տարվում ազգային կյանքում քաղաքական ուժերի ձախողակ գործունեության քննադատությամբ, երգիծական տեսանկյունով, ինչը առավել ընդհանրացված տեսնում ենք «Մահվան տեսիլ» պոեմում: Պոեմ, որը Չարենցի եղեռնապատումի վերլուծական տարերքի բարձրակետն է:

Ազգային ռոմանտիկական գաղափարախոսության քննադատությունը «Ազգային երազ» և «Գիրք ճանապարհի» ժողովածուի պոեմներից զատ, գտնում ենք «Երկիր Նաիրի» վեպում: «Ազգային երազ»-ը «Մահվան տեսիլ» պոեմի «նախագիծն» է:

Առաջինում երգիծատիպերը ռոմանտիկ գաղափարների և միամիտ արարքների մարդիկ են (Ահո, Վետերան), երկրորդում ներկայացվող անձինք նույնական գաղափարներով, սակայն ազգային նշանավոր գործիչներ են՝ անձնական ու ազգային ճակատագրի միասնականությամբ: Երկու պոեմներում նույնական է «ուխտը սրբազան»: Դա ժողովրդի փրկությունն է, որը երկուստեք վերածվում է «կրակահանդեսի»: «Մահվան տեսիլ»-ում բլուրի գագաթից գուժում և կանչում է շեփորը, «Ազգային երազ»-ում ահազանգը տրվում է զանգակատնից:

Այս պոեմում առկա է թշնամու սեղմ բնութագիրը.

– Ո՞վ չի իմացել, որ մեր թշնամին
Խաբող է ու նենգ, ու վախկոտ ու մութ...

Սա, թերևս, ռոմանտիկական աշխարհայացքով արված բնութագրություն է, երգիծանմանակում: Թե՛ «Ազգային երազ»-ում և թե՛ «Մահվան տեսիլ» պոեմում ժողովուրդը դեպի կրակն է գնում, դեպի զոհասեղանը:

– «Ու աշխարհից ցուրտ ու մութ
Հեռանում է անվերադարձ
Մի արնաքամ ժողովուրդ...»:
(«Ազգային երազ»)
Սրածված սերունդներ էին այդ անցնում,
քաղաքներ քանդած,
Հեղեղի պես պրծած, տեղահան, գնում էր
երկիր մի ամբողջ...
(«Մահվան տեսիլ»)

«Ամենապոեմ»-ում պատկերվում է ժողովրդի նույն վիճակը.

– Նորից քաղաքներ հնամյա
Դարձրին հողին հավասար –
Դաշտերում անթաղ մնաց
Ժողովուրդը՝ հազար-հազար:

Ժենյա Քալանթարյանը «Եղեռնապատում ըստ Եղիշե Չարենցի» գրքում, անդրադառնալով «Ամենապոեմ»-ին, նշում է. «Ըստ էության «Ամենապոեմում» առաջին անգամ եղեռնի մեղավորների ցանկում երևան է գալիս մի նոր կողմ՝

Ռուսաստանը»[1]: Մեջբերելով վաստակաշատ գրականագետի խոսքը՝ մենք ցանկացանք հիշեցնել, որ Չարենցը ներկայացնում է ցեղասպանության արտաքին միջազգային ուժերը («Ամենապոեմ», «Կապկազ թամաշա»):

Չարենցի եղեռնապատումի մեջ ուրույն տեղ ունի «Խմբապետ Շավարշը» պոեմը՝ հոգեբանական խոր շերտերով ու ներքին շարժուն զորեղ լիցքերով: Պոեմում մենք տեսնում ենք պատերազմի ու ցեղասպանության թողած ավերիչ հետագծերը փրկված մարդկային ճակատագրերում, որոնք երկրի ճակատագրի պես ամայանում են՝ հետևում թողած ազատագրական կռիվները: Ազատագրական կռիվների խմբապետը զորեղ անձնավորություն է, կռվել է թուրքերի դեմ, վրեժ լուծել նրանցից իրեն վայել ցասումով: Արևմտյան Հայաստանը կորցնելուց հետո, ոչ իր կամքով, դարձել է ճակատագրի հեգնանքի առարկա. նա և իր նմաններն արդեն «ավելորդ» են: Մենք ականատես ենք լինում ճակատագրի ու պատմական իրադարձությունների բախմանը՝ ողբերգական խոր հետևանքներով:

Չարենցի էպիկական պոեմը հագեցած է ողբերգություններին բնորոշ հոգեբանությամբ: Եզրակացությունը մեկն է՝ ցեղասպանությունը ջնջեց մի երկիր ու ժողովուրդ, ազատագրական շարժման հերոսի ճակատագիրը տարավ դեպի փակուղի, ավելի ճիշտ՝ դեպի ամայություն, որն իր ներսում զգում է հերոսը: Հերոսականից մինչև ավելորդ մարդու ինքնագիտակցում. ահա խմբապետ Շավարշի կերպարի վերածևման չարչարանաց ուղին: Կոտորածը, ավերը նախ և առաջ փլուզում են մարդու հոգին, պահպանում միայն գոյության բնազդը:

– Շատերը կորցրած տուն, տեղ,
Ընտանիք, երեխեք, հայր, մայր, –
Այժմ պատրաստ էին ամե՛ն ինչ քանդել...
(«Խմբապետ Շավարշը»)

– Եվ չէինք հիշում այլևս ոչինչ,
Եվ չգիտեինք ի՞նչ էինք անում,
Եվ շատերն էին ընկնում մեզանից
Եվ ոտքերի տակ մեր անշնչանում,
Չէինք տարբերվում վայրի գազանից՝
Աիի ու արյան այդ խառնարանում:
(«Դանթեական առասպել»)

Հարկ է անել մի կարևոր ընդհանրացում՝ ***ցեղասպանության հետևանքներով են չափվում Չարենցի պատմափիլիսոփայության եզրահանգումները:*** «Պատմության քառուղիներով» պոեմը անմիջականորեն չի անդրադառնում ցեղասպանությանը, սակայն մեր պատմության վերաարժեքավորումը, զայրալից խոսքերը «քաղցած», «քոսոտ», «անբուրդ», բզկտված կողերով, իր սարսափը աղեկտուր ոռնացող, «նիհար», «կողերը լերկ» գայլի մասին հետևանք են

[1] Ժենյա Քալանթարյան, Եղեռնապատում ըստ Եղիշե Չարենցի, Երևան, 2009, էջ 24:

ցեղասպանությունից հետո ազգային ինքնագիտակցության նոր պահանջի: Ցեղասպանությանը հաջորդած իրադրության գնահատականն է տրված հետևյալ տողերում.

– Եվ այսպես –պատմության քառուղիներով
Անցել ենք մենք անեղեկ ու անգաղափար,
Շառագունված անվերջ ուրիշների հրով
Եվ մեր ճանապարհը անփայլ
Եղել է ճանապարհ ունայնության, մահի...

Ցեղասպանությունն ստիպեց կասկած հայտնել ռուսական կողմնորոշման ճշգրտությանը «Դեպի լյառը Մասիս» պոեմում («Իսկ եթե չի ստում այն կասկածը//Եվ ստում է այս գիրքը...»): Այդ կասկածը գալիս է Աբովյանից, փոխանցվում Չարենցին:

«Պատմության քառուղիներով» պոեմում Չարենցն արտահայտել է նաև դեպի հյուսիս հայացքի վրիպումը.

– Դեպի հյուսիս, դեպի հյուսիսային որջի
Արջերը սառցասիրտ ու արնաթաթախ...

Չարենցը տեսել էր ռուսների կողմից Արևմտյան Հայաստանի լքումը և «Ամենապեմ»-ում գրել է.

– Մի հսկա հորձանքով ահեղ
Ջորքերը անսահման ռուսի
Վարարած ջրերի նման
Քաշվեցին Բասենից, Մուշից:

«Ջորքերը անսահման ռուսի». Չարենցը մատնանշում է ռուսի ուժը, որպեսզի ցույց տա նրանց հետ քաշվելու չպատճառաբանվածությունը, որին հաջորդում է ժողովրդի կոտորածը՝ լքվածության պարագայում:

Ցեղասպանությունն իր չափերով, պատմական հանգամանքներով ներկայացնում է «Մահվան տեսիլ» պոեմը: Չարենցը մեկ անգամ ևս անդրադառնում է ազգային ռոմանտիկական գաղափարախոսությանը՝ ցեղասպանության և նրա հետևանքների առանցքով: Սուրեն Աղաբաբյանը «Մահվան տեսիլ» պոեմի վերաբերյալ գրում է. «...Ազգային ազատագրության նահատակների տեսիլքը Չարենցի համար միայն շարժառիթ է ներկայացնելու հայ ժողովրդի դանթեական Դժոխքը, որը պոեմում սիմվոլացնում է կիսալուսնի տակի խավար, մթին անտառը...»: Ս. Աղաբաբյանը, այսպիսով, պոեմի նյութը համարում է Եղեռնը: Դժվար էր 20-րդ դարի երեսնական թվականներին մեծակտավ պատկերել Եղեռնը, որովհետև խորհրդային սոցիալիստական հանրապետություններում իշխանությունները սքողում էին ազգային հիմնահարցերը, արգելում դրանց մասին բարձրաձայնել: Ժամանակի հայ պատմափիլիսոփայությանը արգելված էր ցեղասպանության, ազգային այլ կորուստների թեման: Սփյուռքը չմոռացավ Եղեռնը, ազգային տարածքների կորուստը՝ բոլշևիկների համաձայնագրերով ու վճիռներով: Չարենցը դեմ գնաց պաշտոնական գաղափարախոսությանը,

մտահոգ եղավ ազգային գերխնդիրներով, չմոռացավ Եղեռնը և քաղաքական ամենաանբարեհույս պայմաններում «Մահվան տեսիլ» պոեմում նոր չափումներով արտացոլեց Եղեռնը՝ թեման զուգահեռելով ազգային ռոմանտիկական գաղափարախոսության ծանր հետևանքների բացահայտմանը:

Մեկ անգամ ևս ընդգծենք՝ ***Չարենցի պատմափիլիսոփայությունը ցեղասպանության և նրա հետևանքների շրջանակում է:***

Չարենցի պատմափիլիսոփայությունը եղավ ուղենշային:

Անցնենք բուն պոեմին: Բանաստեղծը Քերթության ու Խոհի դժվար ճանապարհով գնում է «դեպի ափը Մահվան ու Սարսափի»: Ազգային ազատագրության գաղափարախոսները՝ բանաստեղծներ, գրողներ, քաղաքական գործիչներ, երկրային դժոխքում են՝ Եղեռնի ծնունդ հանդիսացող: Տեսլապատկերի գրական հնարանքը թույլ է տալիս յուրաքանչյուրին ցուցադրել իր գործունեությամբ՝ միասնական բացասական արդյունքներով: Նման վերջնարդյունքը, ինչպիսին Եղեռնն է, չի արդարացնում հայ ռոմանտիկ գաղափարախոսությունը և գաղափարախոսներին: Մեծագույն արհավիրքի արդյունքով այդ գաղափարախոսությունը պսակազերծվում է:

– Եվ մտնում ենք ահա խավարով ու
ահով լեցուն մի անտառ:

Դանթեագետ Նատալինո Սապենյոն «Դժոխքի» մասին գրում է, որ «ամբողջ պոեմը հետապնդում է երկու հիմնական նպատակ՝ ցույց տալ մարդ Դանթեի փրկությունը իր մոլորություններից՝ մեղքի հետևանքները դիտելու և գիտակցելու միջոցով և համայն մարդկության փրկությունը անկման և անիշխանության վիճակից՝ այդ վիճակի պատճառները նշելու և վերացնելու միջոցով»[1]: Սապենյոյի պարզաբանումը հուշում է, որ Չարենցն իր հերթին փրկություն է որոնում «անկման ու անիշխանության վիճակից՝ այդ վիճակի պատճառները նշելու և վերացնելու միջոցով»: Նկատի ունենք ցեղասպանությունը, դրա պատճառների նշումը (արտաքին և ներքին) և վիճակի շտկումը (պոեմի ավարտին «երկնագույն մի լույսի» երևալը): Վերջինս տուրք էր ժամանակի քաղաքական միակ դոկտրինային:

Պոեմի «սյուժեն» «մթին անտառում» ազգային երևելիներին հաջորդաբար ի հայտ բերելն է և ի դեմս ամեն մեկի՝ ազգային անօգտակար գաղափարախոսության ժխտումը:

Րաֆֆին պատկերված է խարույկի մոխրի վրա: Մոխրի վրա նստելը զղջման և արած գործի համար ափսոսանքի, ձախորդության մեջ տրտում լինելու նշան է («Բառարան սուրբ գրոց»): Մոխրի վրա պատկերանում է Հոբը:

Գալիս է Ստ. Նազարյանցը՝ բռնած մի գանձարան, վրան գրված՝«Քաղաքական անոթ»: Դանթեի «Դժոխք»-ում «Ընտրության անոթ» է կոչվել Պողոս Առաքյալը, ինչպես «Գործք առաքելոց»-ում: Ըստ ավանդության՝ Պողոս Առաքյալը բարձրացել է Դրախտ, ապա իջել Դժոխք: Մեր կարծիքով՝ «ընտրության անոթ»-ի փոխարեն

[1] Դանթե Ալիգիերի, Աստվածային կատակերգություն, Եր., 1969, էջ 665:

Չարենցն օգտագործել է «քաղաքական անոթ» կապակցությունը՝ հուշելով Պողոս Առաքյալի նմանությամբ Ստ. Նազարյանցի՝ «դրախտ» բարձրացած և ապա «դժոխք» իջած լինելը:

«Մահվան տեսիլ» պոեմի ծանոթագրություններում (Երկեր, հ. 4, 1968, էջ 587) «քաղաքական անոթը» համարվում է քաղաքական հանգանակ, որի վրա ճախրում է «Աղավնու կերպարանք առած,//Սուրբ հոգու նման – մի փոքրիկ երկգլխանի արծիվ» (Նազարյանցը հռչակելու էր ռուսահայերին «քաղաքականապես ռուս»): Եվ ճիշտ հասկացվում է, որ Ստ. Նազարյանցը, «այդ անոթը բարձր պահած», գնում է դեպի փրկարար Ուխտը: Ստ. Նազարյանցի կերպարը հիշեցնում է Սիմանթոյի «Գիշեր մը» բանաստեղծության Ուխտավորներին, որոնց ձեռքերին արծաթե խնկամաններ են:

– Ու իրենց ձեռքերն արծաթե խնկամաններ բռնած...

Դեպի փրկարար Ուխտը ճամփա կելլեն:

Նման պատկերի հանդիպում ենք «Հանգրվանը և վաղորդայնը» քերթվածում.

– Ու ահավասիկ արծաթյա խնկամանները սրբազան...

Այսպես մեր անշարժ ձեռվընեուն բարձունքեն...

Այժմ Սիամանթոյի քերթվածների և Չարենցի «Մահվան տեսիլ» պոեմի առնչությունների մասին փոքր-ինչ հանգամանորեն: Ցեղասպանության տեսարանների ակունքը թե՛ Դանթեի «Դժոխքն» է և թե՛ Սիամանթոյի քերթվածները («Ավերումի գիշեր», «Թաղում», «Արյուն», «Անդրշիրիմյան աղաղակ», «Մեռելոցի օր», «Խավար», «Չարչարանքի երազ» և այլն): Ե. Չարենցը հայ ժողովրդի գաղափարախոսական և քաղաքական առաջնորդներին ծաղրանմանակորեն օժտել է Սիամանթոյի «Դյուցազնորեն» և «Հայորդիներ» շարքերի հերոսների որոշ գծերով՝ անկոտրում կամք, զոհի պատրաստակամություն, ուժ, քաջություն, հավատ ունեցող, գաղափարի նվիրյալ և այլն: Ընդհանուր հատկանիշով «Մահվան տեսիլ» պոեմի հերոսները Սիամանթոյի «ընդվզումի» «վարպետներն» են:

«Ու ձեր նայվածքին ու հավատքին փայլակները գերբնական...» – ազդարարում է Սիամանթոն: Չարենցի պոեմում Րաֆֆին «Նայում է շանթող աչքերով...», «Աչքերը շանթեր են թափում, ցայտում են կայծակներ...», «Աչքերում ամեհի մի հուր...»(Ալիշան) «Ոսկեշեփորիս ունկնդրեցեք...», – հրավիրում է Սիամանթոյի «Ճակատամարտը» քերթվածը: «Մահվան տեսիլ»-ում Ռ. Պատկանյանի մասին է՝ «Իր ձեռքի պղնձյա շեփորով շեփորեց նա պայքար ու կռիվ»: «Ըսե, որ շեփորներս հինավուրց հերոսներու հագագովը շեփորել տամ», – կրկին Սիամանթոն է («Դարերու վրեժը»): «Մահվան տեսիլ»-ից են՝ «Լսելով ձայնը շեփորի...», «Շռինդը ռազմի շեփորի...», «Բայց շեփորը՝ ռազմի ամպագոռ...»:

Չարենցը ճանապարհորդությունն սկսում է «մթին անտառից», ինչպես Դանթեի «Դժոխք»-ում է: «Մթին անտառը» խորհրդանշում է ճանապարհի դժվարությունները: Չարենցից առաջ «անտառը» դանթեական իմաստով օգտագործել է Սիամանթոն.

– Հուսահատորեն ու պանդխտորեն անտառը վերադարձա...

– Բայց իմ հոգիս, բայց իմ սգավոր հոգիս...
Անտառներուն սարսափին մեջը բանտարկված մնաց...
(«Թաղում»)

Չարենցի պոեմի շարադրանքը բարձրաշունչ է և հանդիսավոր, որը բնորոշ է ողբերգությանը: Սիամանթոյի ոճը նույնպիսին է: Չարենցի պոեմում հանդիսավորն ու բարձրաշունչը միջարկվում են երգիծանքով ու ծաղկումով:

Բերենք ազգային ռոմանտիկական հռետորության ոճի մի նմուշ.

«Բարձրացի՛ր, ելի՛ր խավարից, ով ռազմի երգերի գուսան,
Հնչեցրու՛ քնարդ կրկին, թող ձայնը նրա շառաչե,–
Թող մարտի՛ նա կոչե կրկին բանակները մեր սրբազան,
Եվ զենքերը թող որոտան, և ռազմի սրերը թող շաչեն»:

Ցեղասպանությունից հետո է՛լ ավելի անտեղի ու ավելորդ են հնչում «բանակները մեր սրբազան», «սրերը թող շաչեն» բարձրահունչ կապակցությունները:

Պաթետիկ են հնչում Քր. Միքայելյանի ուխտի խոսքերը. «ըմպել մի բաժակ բռնակալ Արքայի արյունից...»: Չարենցը այդ ուխտով Քր. Միքայելյանին հակադրում է Սիամանթոյի «Քավությունը» բանաստեղծության թուրք ծերունուն, որը հայ պարմանիի արյունն է ըմպում «քավիչ» բաժակով: Հիշենք նաև Սիամանթոյի «Իրենց երգը» բանաստեղծության թուրք արյունախումի այս կոչը. «Խմեցե՛ք սա բաժակես, թարմագեղ կույսերուն արյունն է այս...»:

Քր. Միքայելյանի ուխտը մնում է անկատար:

Արդեն ասել ենք, որ Չարենցը «Մահվան տեսիլ»-ում անհամեմատ լայն անդրադառնում է ցեղասպանությանը: Տեսլաշարերը մռայլ են, սարսափազդու: Չարենցը վարպետությամբ մրցում է Սիամանթոյի հետ:

– Գնում ենք անտառով երկար, և ինչքան
խորն ենք մտնում –
Լցվում է անտառը այնքան հառաչի ու լացի ձայներով,
Մանուկներն են կարծես զառանցում, ծերերն են
հռնդում մթնում,
Սերունդներն են կարծես կարկառում բազուկներ
գրկող ու գերող:
...Խարույկի շուրջը թափված մենք տեսնում ենք
զենքեր, ոսկորներ,
Մարդկային գանգեր, հնօրյա զրահներ,
մի հին հրացան:–
Եվ տեսնում ենք ապա, այլայլված հայացքով
նայում ենք երբ վեր–
Ծառերի ճյուղերից կախված կմախքներ՝
տապից չորացած:

Սիամաթոյի «Հոգիս» բանաստեղծության մեջ կան տողեր, որոնցում «գերեզմանոցները» «դեպի վե՛ր պիտի շրջին»՝ ընկած մարտիրոսներին ճանաչել տալու համար, այն, ինչ պոեմում անում է Չարենցը՝ ցուցադրելով ազգային «մարտիրոսներին»: Նմանության մեկ այլ փաստ. «Ան է, որ անդունդի մը մեջ՝ իր մոխիրին վրա ծնրադիր...»: Խոսքը հոգու մասին է: «Մահվան տեսիլ» պոեմում Րաֆֆին է նստած «կիսամութ խարույկի մոխիրի վրա», որը նշան է զղջումի և տրտմության:

Չարենցը առանձնահատուկ հետևողականությամբ «Մահվան տեսիլ»-ում պահպանում է մերձությունը Սիամանթոյի պատկերակարգին: Պատկերային նմանությունները շատ են, զուգահեռենք մի քանիսը ևս:

– Գլխատված մարմինները դեպի զիս կարշավեն...
(«Չարչարանքի երազ»)
– Գլուխները բռնած ձեռներին, վայրենի լացով ու ճիչով...
(«Մահվան տեսիլ»)
– Ինչ մեռելախումբ անտառներու հանգույն ոտքի...
(«Հիշատակ»)
–...Որ տեղափոխվող անտառներու ցնորք ունի...
(«Գիշեր մը»)
– Եվ անցնում էինք մենք դանդաղ այդ պարող անտառի միջով...
Անցնում էր արմատից պոկած, անխնա կտրած մի անտառ...
(«Մահվան տեսիլ»)
– Քալող անտառներու հանգույն կայծակները կտապալվին...
(«Զղջումի թափորը»)

– Եվ հիմա բովանդակ թափորը վճռական՝
Հորիզոնե հորիզոն՝ դեպի հողը կխոյանար:
(«Զղջումի թափորը»)
– Մոտեցավ թափորն ահա մեզ և դանդաղ սկսեց անցնել...
(«Մահվան տեսիլ»)
– Ագռավներու բոլոր քրքիջներուն դիմաց...
(«Հանգիստի իրիկուն»)
– Մեզ արդան ագռավն էր ծաղրում՝ իր լացի նման քրքիջով...
(«Մահվան տեսիլ»)

«Մահվան տեսիլ»-ի մարդկանց եղեռնական ընթացքի համանման արյունոտ ու մահաշունչ պատկերները մեզ արդեն ծանոթ են, ասենք, «Զղջումի թափորը» բանաստեղծությունից.

– Եվ այս բոլորը խելահեղված մոխրի,
հոգեվարքի և լացուկոծի քառուղիներեն անցան,
Անոնց հետ որ ավաղ կոտրտվելով, մեռնելով,

ջախջախվելով, արյունվելով կշտապեին…
Եվ օրերով և խավարներով սահմանե սահման
խուճապեցին,
Եվ կային որ կիսամեռ մարմիններ ուսերնուն վրա
և գետնաքարշ՝ կփախչեին,
Կային որ իրենց հաշմված ձեռքերեն և տրորված
սրունքներեն մաս առ մաս
Ճամփաներու քարերուն, հողակույտերուն և
մացառներուն վրա,
Եղերականորեն, արյունոտված լաթերուն պես՝
թափթփելով կշտապեին
Ընդվզումի շառաչներուն և հրդեհված
քաղաքներուն առջևեն…
Զարհուրալից աշավանքովը անապատներու
այն փոթորկին…
Որուն վայրագությանը վրա, քալող անտառներու հանգույն
կայծակները կտապալվեին…
(«Զղջումի թափորը»)
– Ի՞նչ խորտակում դագաղներու և ինչ խլրտում
ոտքի կեցող ոսկորներու…
Շրթնաթափ բերաններու դեմ և ավերյալ աչքերու
և փշրված կուրծքերու…
Եվ ահավասիկ մահազանգերն են, աղետավոր
մահազանգերը գիշերվա մեջ…
Եվ ահա ինչ-որ՝ կմախքե բերաններն այս
առավոտ մոլեգնաբար որոտացին…
(«Մեռելոցի օրը»)
– Արդեն մեռնող ճիչեր, արդեն մեռնող կյանքեր,
Ու նորեն այս գիշեր,
Տաճարներու մեջ անմեղներու դիակներ անհամար…
Օ՛, օգնության եկեք, գլխատված մարմիններ
դեպի զիս կարշավեն…
(«Հոգեվարքի իրիկուն»)

Չարենցը հետևում է Սիամաթոյին՝ որոշակիորեն պահպանելով թե՛ պատկերամտածողությունը, թե՛ ռիթմը: Բանաստեղծը կարծես թե «Հոգեվարքի և հույսի ջահեր» ժողովածուն դիտել է որպես միասնական պոեմ (կոտորածի տեսարանների միասնությամբ, բանաստեղծությունից բանաստեղծություն ծավալումով) և «Մահվան տեսիլ»-ը հղացել է շարքի ամբողջական տպավորության ազդեցությամբ: Տեղին կլինի նշել, որ որքան էլ խոսվեն Չարենցի կրած ազդեցությունների մասին, նրա ամեն ստեղծագործություն հանճարեղորեն ինքնակա է, ազդե-

ցությունը միայն խթանիչ, խոսքի նոր սահմաններ նվաճելու դեր ունի: Նման երևույթ մենք տեսնում ենք Չարենցի «Ի խորոց սրտի խոսք ընդ Աստծո» շարքում (նարեկացիական ոճաձևերի օգտագործում):

Ոչինչ չի խանգարում ցեղասպանությունը ներկայացնելու հզոր երևակայությամբ ու սիմվոլիկայով: Այս ամենը հետևանք էր ցեղասպանության աներևակայելի մասշտաբների, արյան ու ոսկորի աննկարագրելի «հունձքի»:

Պոեմում թեև բանաստեղծի առաջնորդը Դանթեն է, սակայն իրական ուղեկիցը, ականատեսն ու վկան Սիամանթոն է, ում հետ Չարենցը պատմում է նույնասարսափ և նույնալեզու: Սա պատմական զգացողության և գնահատման բացառիկ համընկնում է, որի պարագայում գեղարվեստական արժեքները մոտենում են համակշռության: Դանթեն մահվան աշխարհի Վարպետն է, Սիամանթոն և ապա Չարենցը՝ Ականատեսն ու Վկան:

Սուրեն Աղաբաբյանը ժամանակին նկատել է. «...Ազգային ազատագրության նահատակների տեսիլքը Չարենցի համար միայն շարժառիթ է՝ ներկայացնելու համար հայ ժողովրդի դանթեական Դժոխքը...»[1]: Հարկ է ավելացնել, որ Չարենցը լայն ու խոր, իրական չափումներին համարժեք բանաստեղծական մտածողությամբ ներկայացրեց Եղեռնը:

– Անտառ էր կարծես ճարճատում,
հրդեհված երկիր էր մխում,
Սփռելով բարբարոս մի բույր,
հանելով ճիչեր երկնահաս:
Ձիերի դոփյուն, զենքերի չարագույժ շառաչ,
մարդկային
Հեկեկանք, օգնության ճիչեր՝ շների կաղկանձ
հուսահատ.–
Մոտենում էր այսպես հեռվից արշավանքը
Արյան և Մահի...

Չարենցի պոեմում թափորը գնում է՝ բարձրանալու բլրի գագաթը, որտեղից ռազմի շեփորը «Ձայնում էր... ինչպես կոչ, երթի աղաղակ»:

– Իսկ դեմից, բլուրի գլխից, կանչում էր
շեփորն անընդհատ...
Եվ հոսում էին դեպի նա ամբոխները
այդ տեղահան՝
Դեպի լյառն էին շտապում՝
Մահու ու Արյան մի ծեսի...

Այստեղ երևույթները մանրամասնելու անհրաժեշտություն կա: Դաշնակցությունը բլուրի գլխին վառել է մի կրակ: «Տոնական խարույկ». սա ազատագրական պայքարի խորհրդանիշն է, որը պատճառ է դառնում «Մահու ու Արյան ծեսի»:

[1] Ս. Աղաբաբյան, Հայ սովետական գրականության պատմություն, հ. 1, Եր., 1986, էջ 320:

Հետևենք բանաստեղծի հետագա մեկնությանը: Կոնաձև բլուր էին բարձրանում «հաշմանդամ սերունդներ ամբողջ»՝ «Եղեռնի հնձանին ընծա...»: «Կապուտաչյա հայրենիք» պոեմի հնձվորները («հայրենիքի զինվորներ») այս պոեմում արդեն վերադառնում են «եղեռնի հնձից»: Չնայած արյունոտ արհավիրքին, Եղեռնի «հնձին»՝ «Դեռ շեփորը կանչում էր, կանչում այն Մահու և Արյան բլուրից»:

«Մահվան տեսիլ»-ում որոշակի տաբուներով ներկայացվում է հայ ռոմանտիկ գաղափարախոսության Արքան: Դեռևս պոեմի երրորդ հատվածում պատկերված էր բլուրի գլխին «բարձրաբերձ բոցով» կրակը: Ըստ պոեմի ծանոթագրություններից մեկի՝ «Այս և հաջորդ տողերով (ինչպես և պոեմի հաջորդ էջերի նման նկարագրություններով) Չարենցը նկատի ունի Դաշնակցության հիմնադիր Քր. Միքայելյանին»[1]:

Մենք Արքայի ձեռքում կտեսնենք փոքրիկ եռագույն դրոշ:

Պոեմում հիշատակվում է «արքան այն գազան»՝ սուլթանը: Այդ «արքան» «երկիրն արյամբ ողողեց տագնապած», «Հանելով բարբարոս հորդաներ – նա քանդեց մեր շենները բոլոր», «Մեր մանկանց արյամբ արբեցավ՝ թաքնված որջում արքունի»:

«Մահվան տեսիլ» պոեմում սուլթանը՝ «արքան այն գազան», և «բարձրաբերձ բոցով» կրակի արքան առանձնացվել են: Վերջինս, ինչպես նշել ենք, ազգային ռոմանտիկ գաղափարախոսության պարագլուխն է, ըստ ծանոթագրությունների՝ Քր. Միքայելյանը: Նա «սերած» է «Հրդեհի զարմից». Նաիրին կրակի երկիր է, սա Նաիրիի արքան է («Երկիր Նաիրի» վեպում զուգահեռը Մազութի Համոն է, որի գլխավերևում կախաղանից հետո փակցվում է «Արքա Նաիրի» տախտակը): Չարենցը Արքային անվանում է «Առաջնորդը նրանց կրակե»: «Նրանց» ասելով՝ բանաստեղծը նկատի է ունեցել ազգային ռոմանտիկ գաղափարախոսության հետևորդներին և քաղաքական գործիչներին:

Կրկին հիշեցնենք, որ Արքան «...բռնել է սեղմած բռունցքում – մի փոքրիկ եռագույն դրոշ»: Արքայի տեսքը փոխվում է՝ դառնալով «մի գայլի գլխով վարդապետ»:

«Բառարան սուրբ գրոց»-ում («Ապոլոն», 1992, էջ 108) նշված է. «Յալածիչք և սուտ վարդապետք միշտ «յափշտակող գայլեր» եղած են Քրիստոսի հօտին»: Ուրեմն Չարենցը «գայլի գլխով վարդապետ» ասելով՝ նկատի է ունեցել սուտ վարդապետի՝ մերժելով կրակե Արքայի քաղաքական վարդապետությունը: Իր արդյունքներով այդ վարդապետությունը եղավ ոչ միայն անօգուտ, այլև վնասակար, որովհետև ժողովրդին չփրկեց ցեղասպանությունից:

«Իբրև տուրք կամ զոհ սրբազան». ամբոխը դաշնակցական գործչի հետևությամբ, կտրած գլուխներ է նետում Արքայի ոտքերի առջև: Բարձրանում է գանգերի մի բուրգ՝ «Եղեռնի հնձանին ընծա»:

[1] Ե. Չարենց, Երկեր, հ. 4, Եր., 1968, էջ 586:

Պոեմում Չարենցը Սիամանթոյի և Վարուժանի սրտերը համարում է «այն ստին» ողջակիզված: «Սուտ»-ը, ըստ Չարենցի, ռոմանտիկ գաղափարախոսության Սուրբ Ուխտն է: Սուրբ Ուխտը, չունենալով փրկիչ զորություն, սուտ է, սնամեջ, դատարկ: «Այն ստին» ասելիս՝ մատնացույց է արվում «դժնի ու դեղին» կրակը (Սուրբ Ուխտի նշանը): Պոեմում ասվում է, որ Սիամանթոն և Վարուժանը իրենց «բոցավառ» հանճարը զոհ են մատուցել «այս պիղծ սեղանին»: Այս կապակցությունը Չարենցը օգտագործել է «պիղծ զոհասեղան» իմաստով: Պիղծ, որովհետև զոհաբերումի նպատակը չի արդարանում, կորստաբեր է, ընծաներ է տանում «Եղեռնի հնձանին»:

Ցեղասպանությունը վերջնականորեն ջնջեց ռոմանտիկական զոհաբերությունների բոլոր իմաստավորումները: Անտառի վերջում կորել էր «ուղի ու հավատ»: Վերջին՝ ամբողջական կործանման պահին անգամ «կանչում» էր «մահագույժ շեփորը», այն էլ՝ «դեպի նոր մի մեռյալ Երիքով»: Ինչո՞ւ Երիքով: Այն Հեսուի կողմից գրաված քանանացիների առաջին քաղաքն է, որի բնակիչները բնաջնջվել են: Հեսուն անեծք է կարդացել նրան, ով մտաբերեր նորից շինել այդ քաղաքը:

Արևմտյան Հայաստանը Չարենցին պատկերանում է որպես մեռյալ Երիքով, որի վերականգնելը խորհրդային ուժերի կողմից բանադրվել է: Արգելված է անգամ «նոր Երիքովը» մտաբերել:

Ե. Չարենցը վերջին անգամ ցեղասպանության թեմային դիմեց «Կոմիտասի հիշատակին» ռեքվիեմում: Պոեմը թվագրված է՝ 30.V.1936 – 30.XI.1936: Կոմիտասի աճյունի տեղափոխումը Հայաստան առիթ է հանդիսացել ազգային հանճարի և ժողովրդի ճակատագրի միաձուլմամբ պատկերելու ցեղասպանությունը և տալու գնահատականներ: Ասենք, որ Կոմիտասի աճյունի տեղափոխմանը առաջինն արձագանքել է Կոստան Զարյանը՝ «Կոմիտաս վարդապետին» ընդարձակ բանաստեղծությամբ: Բանաստեղծը օտար հողից բարի ճանապարհ է մաղթում: Նա դիակառքին ուղեկից է դիտում «ծամերը թափած» գարունը և «երկնակամարի //Սրինգների բյուրեղ ձայները»: Կ. Զարյանը հիշատակում է եղեռնի իրադարձությունները. «դառն վայրերից» անցնելիս մեռած հանճարին կկանչեն «մեծ աղաղակները»՝ նման «մահազանգ զարնող զուլումի», որոնք նրան կրկին կխենթացնեն: Զուլումն է «մորթել» հանճարի երգը: Վերադարձը, սակայն, փրկարար ափ է, որտեղ «պայծառ գմբեթն» է Հայոց աշխարհի: Եվս մեկ սքանչելի պատկեր՝ զվարթ գետերը կզարնեն ճառագայթների բամբիռը:

Ե. Չարենցի խնդիրը, նույնը լինելով, 1936-ին, երբ ազգայինը դիտվում էր նացիոնալիզմ, ռեքվիեմում հանճարի ազգային էությունը խորապես բացահայտելն է: Առաջնությունը տրվում է հայրենական ոգուն: Չարենցի աչքում Կոմիտասը ազգային հանճարի հազարամյա «տեսիլ» է: Բանաստեղծը բացահայտում է կերպարի ազգային խորհրդանիշները: Կոմիտասի վերադարձով Չարենցը ծառս է լինում արվեստի ապազգայնացման դեմ: Նա ազգային հանճարի գնահատման մեծագույն չափանիշներ է հաստատում:

– Լոկ ժողովուրդն է հյուսել

Քո դաշնությունը պայծառ…

Չարենցը բանաձևում է ազգային արվեստի լինելության կերպը.

– Բայց սերմն հոգու – միայն իր

Հայրենիքում է աճում…

Կոմիտասի ճակատագիրը հատվում է Եղեռնին, որը նրա կերպարը դարձնում է ողբերգական, ինչպես ողջ Արևմտահայաստանինը: Չարենցը ցեղասպանությունն անվանում է «չար ուրագան», որը մեծ երգահանին դարձնում է «քշված ոգի ու վկա»: Նա աններում գնահատականներ է տալիս «չար ուրագանին».

– Չար ուրագան մի շաչող,

Դաժան մրրիկ մի ահեղ–

Քշեց շյուղի նման չոր,

Հողմի նման խելահեղ,–

Եվ տերևներ ինչպես հին՝

Ծառից ընկած ու անկյանք –

Քշեց երախը մահի

Թե մայրերին, թե մանկանց…

Չարենցը հասնում է ամենամեծ ընդհանրացման. Կոմիտասը տեսնում է «Հրդեհ ու ջարդ ընդհանուր//Եվ գլխատում արևի…»: Նեռը՝ «մեր սև ոսոխը», «մահու գերանդիով» հունձ է կատարել,

– Որ շյուղ անգամ էլ չաճի –

Հնձել էր ձեռքն ահարկու…

Չարենցը «Մահվան տեսիլ»-ում պատկերել է ցեղասպանությունը, «Կոմիտասի հիշատակին» պոեմում տալիս է պատմության ամենամեծ ոճիրի գնահատականը:

Հարկ է ընդգծել, որ ***եղեռնապատումը Չարենցի պոեզիայի դիմորոշ թեմաներից մեկն է***: Այստեղ նա գեղարվեստական իր բարձրության վրա է և օրինակ՝ հետագա հայ բանաստեղծների համար:

Բանալի բառեր՝ *Սիամանթո, պատկերներ, պոեմ, ցեղասպանություն, Եղեռն, պատմություն, հայրենական ոգի, բանաստեղծ:*

THE REFLECTION OF GENOCIDE IN CHARENTS'S POEMS

N. K. GHAZARYAN
PhD in Philology, Associate Professor,
GSU lecturer

Yeghishe Charents witnessed the Genocide: he wrote several works on this topic, including the poems: "Dantesque Legend" and " The Vision of Death". Charents followed Siamanto in the works written on this topic, and particularly, the poem "The Vision of Death" by Siamanto. During difficult Stalin times Charents was able to speak about the Armenian Genocide by means of the poem "The Vision of Death". This poem is the most complex expression of the genocide issue.

ОТРАЖЕНИЕ ГЕНОЦИДА В ПОЭМАХ ЧАРЕНЦА

Н. К. КАЗАРЯН
Кандидат филологических наук, доцент
Преподаватель ГГУ

Будучи свидетелем Геноцида, Чаренц написал ряд работ, посвященных этой теме, в том числе ,,Дантову легенду'' и поэму ,,Видение смерти". В произведениях, написанных на эту тему, Чаренц подражал Сиаманто. Изображениями, перенятыми у Сиаманто, особенно выделяется поэма ,,Видение смерти". В жестокие сталинские времена Чаренц осмелился писать о Геноциде армян. Это поэма является самым сложным выражением темы геноцида.

ՕՐԱԳՐՈՂԻ ԿԵՐՊԱՐԸ ՖՐԱՆՑ ԿԱՖԿԱՅԻ ‹‹ՕՐԱԳՐԵՐՈՒՄ››

Ա. Հ. ԱՌԱՔԵԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր,պրոֆեսոր,
ԳՊՀ դասախոս

Օրագրողի կերպարով ամբողջանում և ի մի են գալիս «Օրագրերի» գեղարվեստականության գծերն ու հատկանիշները: Հայտնի է, որ անձի գեղարվեստական կերպարը միայն գրականության կանոնիկ ժանրերի սեփականությունը չէ: Նման խորհրդանշական կերպարներ ստեղծում են նաև պատմագրությունը, հուշագրությունը, ամեն տեսակի միջակա և փաստագրական ժանրերը: «Անձի երկու մոդելները, – գրում է Լ. Գինզբուրգը, – արհեստականը և բնականը (փաստագրականը) վաղուց ի վեր միմյանց հետ վիճարկում են գրողի և ընթերցողի ուշադրությունը»[1]: Դա միմյանց տարածքներ ներթափանցելու հնարավորություններից մեկն է, որից մշտապես շահում է գրականությունը: Փաստագրական արձակին «Օրագրերի» պատկանելությունը բնավ չի խանգարում, որ նրա հեղինակը ստեղծի ինքնադիմանկարի հազվագյուտ օրինակ, ընդ որում բացառապես փաստագրական ժանրի հնարավորությունների սահմաններում (գեղանկարչության լեզվով դա համապատասխանում է ոչ թե գունանկարին, այլ գրաֆիկական ինքնանկարին): Չկորցնելով փաստագրական արժեքը՝ Կաֆկայի «Օրագրերի» գրական հերոսը միաժամանակ օժտված է գեղագիտական այն ամբողջականությամբ, որն ի վիճակի է ներկայացնել որոշակի գաղափար, որոշակի միտում: Հենց անձնական փորձի և դրա գեղագիտական արտացոլման միասնության մեջ է «Օրագրերի» հերոսի արժեքը: Եվ եթե Կաֆկայի պատմվածքներում և վեպերում մենք տեսնում ենք ինքնակենսագրական գծերի ակնհայտ առկայություն, ապա «Օրագրերում» միանգամայն հակառակ երևույթն է. ինքնակենսագրական գծերը կերպարի են վերածում ոչ այլ ոքի, քան հենց իրեն՝ հեղինակին: Մի կողմից «Օրագրերի» հերոսի գեղարվեստական բարձր մակարդակը, մյուս կողմից Կաֆկայի գեղարվեստական երկերի ընդգծված ինքնակենսագրականությունը երբեմն հանգեցնում են մի իրավիճակի, երբ, օրինակ Գրիգոր Զամզայի կամ Յոզեֆ Կ-ի հետ պատահածը թվում է մաքուր իրականություն, իսկ ահա Կաֆկայի կյանքին՝ իբրև փաստ, չես հավատում: Այդ երևույթը որոշակիորեն պայմանավորված է Կաֆկայի օրագրային կերպարով:

Ինչպես գեղարվեստական երկերը, «Օրագրերը» ևս արտահայտությունն է նրա «երազանման ներաշխարհի»: Ու թեև օրագրողի կյանքը, ժամանակը տարածության մեջ հայտնի է, այնուամենայնիվ Կաֆկա կերպարը անկրկնելի է թե՛ իբեև փաստ, թե՛ իբրև մտահղացում:

«Օրագրերը» Կաֆկայի կյանքի վերջին մեկուկես տասնամյակի պատումն է: Այստեղ դասական կառուցվածքի հետ պահպանված են նաև կերպարի զարգացման արտաքին կողմերը: Այն ունի նախապատմություն՝ «Վերջապես, կյանքիս հինգ ամիսներից հետո, որոնց ընթացքում չկարողացա գրել մի բան, որով կարո-

[1] Гинзбург (2), 6.

ղանայի ուրախանալ…, վճռեցի խոսել ինքս ինձ հետ»[1], հանգույց՝ «Իմ այս երկու մասնագիտությունները (գրական աշխատանքը և պաշտոնական ծառայությունը՝ Ա.Ա.) բնավ տանել չեն կարող միմյանց… Այս երկվությունը գնալով ավելի ու ավելի ծանր է դառնում»[2], զարգացման ընթացք, որով նա աստիճանաբար մտնում է կերպարային ազատությունների և ձևերի մեջ՝ տալով անհրաժեշտ ճյուղավորումներ, և վերջապես, հանգուցալուծում՝ «Երեք օր անկողնում: Մահճակալիս մոտ փոքրաթիվ մարդիկ: Շրջադարձ: Կատարյալ պարտություն: Սենյակիս մեջ հավերժաբար փակված համաշխարհային պատմությունը»[3]: Թեև Կաֆկան այս գրառումից հետո ապրեց ևս շուրջ երկու տարի, այնուամենայնիվ դա ընկալվում է իբրև «վերջին խոսք», որով ավարտին է հասցվում կերպարի զարգացման սյուժետային թելը: Դա այն անխուսափելի ավարտն է, որի մասին, ոչ Կաֆկայի առիթով, Բախտինը գրում է. «Ներքին տարածական տեսողությունը և արտաքին տարածական պատկերացումը ունեն արժեքային կշիռ՝ իբրև միջավայր ու տեսադաշտ և իբրև մահկանացու կյանքի ընթացք: Եթե մարդը չլիներ մահկանացու, հուզական, կամային տոնը այդ ընթացքի, այդ Նախկինը և Հետոն, Դեռը և Արդենը, Այժմը և Այն ժամանակը, Միշտը և Երբեքը և ինչող ռիթմի կշիռն ու նշանակությունը կմարեին»[4]: Այնուամենայնիվ, Կաֆկայի պարագայում մենք գործ ունենք հերոսի մահվան մի տարբերակի հետ, որը, իրական լինելով, միաժամանակ մտահղացված է իր իսկ՝ հերոսի կողմից: Մահվան միջոցով կյանքը իմաստավորելու հակումը զգացվում է օրագրային առաջին գրառումներից. «…անվերջ կարելի է ինչ-որ բան պոկել այստեղից, ծղոտի իմ այս կույտից … որի ճակատագիրն է, երևի, ամռանը կրակի ճարակ դառնալը և այրվել ավելի շուտ, քան հանդիսականները կթարթեն աչքերը»[5]:

Սյուժետային զարգացման վերը նշված գծին կարելի է զուգադրել հերոսի հոգեբանական կերպարանափոխության ընթացքը, որը նույնպես դրսևորվում է աստիճանական երեք փուլերում՝ սկզբնական կամ որոնումների (ճանապարհորդություններ, թատրոն, Գյոթե, Շթայներ), երկրորդ՝ հակասության բարձրակետի (Ֆելիցա, ինքնաժխտում, Կյերկեգոր, թոքախտ), և վերջապես երրորդ՝ հաշտեցումի (Աստվածաշունչ, վերադարձի և հոգևոր դաշնության տրամադրություններ):

Կաֆկայի օրագրողը՝ իբրև բնավորություն, կապված է իրականության հետ, միևնույն ժամանակ ունի գծեր, որոնք, այսպես ասած, կաֆկայական ծագումնաբանություն ունեն և դրանց մեկնաբանության բանալին միմիայն Կաֆկայի անհատականությունն է: Դարաշրջանի, երկրի, ընտանիքի, միջավայրի գծերը կրելով հանդերձ՝ Կաֆկան առանձնատիպ երևույթ է (Phänomen): «Օրագրերում» նկատելի է ժամանակի խոր դրոշմը նրա մտածողության վրա: Իրականությունը նրա համար իռացիոնալ կառույց է, անընկալելի գաղտնիք, որ լի է խառնաշփոթով ու առեղծվածով: Իրականությունից իր կտրվածությունը Կաֆկան պատկերում է ճապոնական աճպարարների օրինակով, որոնք «մագլցում են ելարանը, որ

[1] T(1), 10.
[2] Նույն տեղում, 38-39:
[3] Նույն տեղում, 359:
[4] Бахтин (1), 141.
[5] T(1), 10.

դրված է ոչ թե գետնի վրա, այլ մեջքին պառկած մարդու ոտնաթաթերին և հենված է ոչ թե պատին, այլ օդորվում է օդում»[1]: Մարդիկ թշնամի են միմյանց, ուստի այս աշխարհը, որ շրջապատում է մեզ, թշնամական է: Իր համար ստեղծելով իրականության վերջնական պատկերը՝ Կաֆկան դրանով ստեղծում է խառնվածքային այն դոմինանտը, որից բխում են գրողի բնութագրական բոլոր գծերը: Ն.Գ. Ֆրեյը Ֆ. Կաֆկային՝ իբրև գեղարվեստական բնավորության տիպ (Modus), դասում է ողբերգականների շարքում[2]:

Կաֆկայի օրագրային կերպարը ընդգծված չափով հագեցած է տառապանքի և ինքնազննության գծերով: Դպրոցական և ուսանողական տարիների Կաֆկան, ինչպես վկայում են փաստերը, եղել է շփվող և կենսախինդ[3]: Այս տարբերությունը այսօր ընկալվում է սովորականի սահմաններում, սակայն կաֆկայականություն հասկացության հիմքում ավելի շատ ընկած են գրողի օրագրային կերպարի գծերը[4]:

«Օրագրերում» առկա հեղինակային ինքնանկարները համապատասխանում են լուսանկարների և կենսագիրների տվյալների հետ: Մենք հնարավորություն ունենք միմյանց համեմատելու Կաֆկայի օրագրային ինքնանկարը Թ. Մանի ստեղծած դիմանկարի հետ՝ արված գրողի վերջին լուսանկարի հիման վրա.

«Հենց նոր հայելու մեջ երկար նայեցի ինձ … Պարզ, հստակորեն գծված, համարյա գեղեցիկ եզրագծերով դեմք է: Մազերիս, հոնքերիս, աչքերիս փոսորակների սևությունը, կյանքի պես, թափացում է նաև խնամված մյուս մասերից: Հայացքս բոլորովին ամայացված չէ, նման բանի ոչ մի հետք, բայց այն նաև մանկական չէ, ավելի շուտ՝ անհավատալի չափով ավյունոտ է, հավանաբար դա միայն դիտող հայացք է…»[5]:

«Նրա վերջին, մահվանից քիչ առաջ պատրաստված նկարը ավելի շատ ներկայացնում է քսանհինգամյա մարդու, քան քառասունմեկ: Նկարում երևում է պատանեկան վեհերոտ խորաթափանց, մտախոհ դեմք ճակատին աճած գանգուր, սև մազերով, մուգ, խոշեր, թափանցիկ-երազկոտ փայլող աչքեր, ուղիղ, կախված քիթ, հիվանդությունից նիհարած այտեր և արտակարգ նրբորեն գծված բերան, որի անկյուններից մեկում խաղում է կիսաժպիտը»[6]:

Կենսագիրները վկայում են, որ նա ունեցել է մեղմ, մեղեդային ձայն: Երբ թեման գրավում էր, նա խոսում էր եռանդով՝ երկար խաղալով մատների հետ:

Կաֆկայի օրագրային կերպարում ամենաբնութագրական և գլխավոր գիծը, որը ընդհանրական է թե՛ նրա մարդկային և թե՛ ստեղծագործական վարքի համար, երկվությունն է: Ինչպես արդեն նշվեց, Կաֆկան այս իրականությունն ապրում է իբրև հակասություն, և այդ հակասության ամենաամբողջական արտահայտությու-

[1] T(1), 11.
[2] ЗЭТЛ, 240.
[3] Տես՝ Wagenbach, 26-42.
[4] Կաֆկայականություն (kafkaest) – 20-րդ դարի յոթանասունական թվականներից. այն ունի բառարանային գրանցում և հիմնականում գործածվում է պարադոքսի, առեղծվածայնության, անհիմն հալածվածության իմաստով (տե՛ս, օրինակ, Duden, 2014, 953):
[5] T (1), 214.
[6] Mann, 487.

նը նրա նկարագրի վրա, մեր կարծիքով, երկվությունն է: Երկվությունը դարաշրջանի դեմքն էր: Է. Բլեյլերի կողմից 1910 թ. շրջանառության մեջ դրված այս հասկացությունը, ունենալով իրական հիմքեր, լայն արձարձումներ է ստանում գիտական և գեղարվեստական գրականության մեջ: Լավագույն օրինակը Թ. Մանի «Դոկտոր Ֆաուստուս» վեպն է: Անդրիան Լեվերկյունը երկվության լիակատար կերպարն է և ուղակի նմանության եզրեր ունի Կաֆկայի հետ:

Իրականը և անիրականը, գիտակցականը և անգիտակցականը, երկրայինը և երկնայինը, չարը և բարին, զոհը և դահիճը, մեղքը և պատիժը… Սրանք այն ծայրակետ-անկյունաքարերն են, որոնց միջակայքում մշտական դատապարտվածությամբ տարուբերվում է Կաֆկայի ներաշխարհի ցուցիչ սլաքը: Բազմաթիվ են այն գրառումները, որոնցում նա խոսում է իր ներսում միմյանց դեմ կռվող բարու և չարի ներհակությունների մասին: 1913թ. սեպտեմբերին գրում է Ս. Բրոդին. «Երևակայության մեջ անհնարինությունները իրար են մոտենում այնքան, որքան իրականության մեջ: Ես չեմ կարող ապրել նրանց հետ և չեմ կարող ապրել առանց նրանց»[1]: Իբրև շարունակություն այս գաղափարի՝ «Աֆորիզմներում» կարդում ենք. «Նա ազատ և պաշտպանված քաղաքացին է երկրի, քանզի տեղավորված է … երկար մի շղթայի վրա, որպեսզի հնարավորություն տրվի նրան մոտենալու երկրային բոլոր տարածություններին, բայց երկար միայն այնքան, որպեսզի ոչինչ նրան չպոկի երկրի սահմաններից: Սիաժամւսնակ նա ազատ և պաշտպանված քաղաքացին է նաև երկնքի, քանզի տեղավորված է նաև երկնային շղթայի վրա՝ հաշվարկված նույն կարգով: Երբ նա մղվում է դեպի երկիր, նրան խեղդում է երկնքի շղթան, իսկ երբ մղվում է դեպի երկինք՝ երկրի շղթան: Այդուամենայնիվ, նա ունի բոլոր հնարավորությունները, և նա զգում է դա…»[2]: «Օրագրերում» այս գիտակցությունը վերածվում է նմանօրինակ պատկերի. «Այնպիսի զգացում ունեմ, կարծես շղթայակապ լինեմ, բայց և զգում եմ, որ եթե արձակեին, ավելի վատ կլիներ ինձ համար»[3]: Իրարամերժ զգացումներից, հակընդդեմ կողմերը հաշտեցնելու անկարողությունից ծնվում է մի հոգեվիճակ, որ Կաֆկան անվանում է «մթին անդունդ», «դիվային աշխարհ»: Այցելելով անտրոպոսոֆ Ռ.Շթայներին, նա ամենից շատ բողոքում է իր հոգին քրքրող երկվությունից:

Ահա, երկվության այս ընդհանուր հենքի վրա էլ ձևավորվում է Կաֆկայի ներաշխարհի առարկայացումը: «Նրա էությունը, – գրում է Վ. Ռոհները, – հայեցողական է, առանց որևէ եռանդի»[4]: Քանի որ Կաֆկան «գործի» մարդ չէ, ուստի «Օրագրերում» գրեթե ամբողջությամբ բացակայում է կենսագործունեության այն տարածքը, որ անհրաժեշտ է մարդուն: Ժամանակը «Օրագրերում» անհրաժեշտ է Կաֆկային, որպեսզի աստիճանական անցումներով ավելի ու ավելի խորացնի տառապանքի և ինքնազոհաբերման ընթացքը, իսկ տարածությունը որպեսզի փակի Կաֆկայի հայացքը արտաքին աշխարհի իրերի ու երևույթների դեմ: Ժամանակի ու տարածության Կաֆկայի ընկալումները, շեղվելով արտաքին, սովորական չափանիշներից,

[1] Kafka (1), 95.
[2] Kafka (1), 13.
[3] T(1), 23
[4] Rohner, 11.

գրեթե ամբողջությամբ տեղափոխվում են ներաշխարհային ոլորտ: Հասարակական շփումներից հեռու և ինքնաքննության սևեռումներով ապրող Կաֆկայի համար ոչ միայն երկվությունը, այլև կասկածը, վախը և այլն, դառնում են մշտական ուղեկիցներ, միևնույն երևույթի (մարդու) մեջ հակադիր ծայրահեղություններ տեսնելը սովորական է նրա համար: Նա այդպես է տեսնում ընկերներին («Մեր զգացմունքները տարբեր են, – գրում է ամենամոտ ընկերոջ՝ Մ. Բրոդի մասին»)[1], անգամ իր պաշտամունք Գյոթեին, որի գեղեցիկ ուրվանկարը առաջացնում է ոչ միայն հիացմունք, այլև հուսահատություն, նա ատում է Պրագան, բայց և չի կարող ապրել որևէ այլ քաղաքում:

Կաֆկայի երկվության դրսևորումներին առավել որոշակի, օրագրային և ինքնակենսագրական այլ փաստերի հիման վրա, մենք կարող ենք հետևել հայրական բարդույթի, օտարացման, մենակության և նրա հոգեբանության կառուցվածքում էական մյուս տարրերի քննությամբ:

Հայրական բարդույթը Կաֆկայի համար փոքր-ինչ լայն հասկացություն է, քան սովորական հոգեբանական գիծը: Մի շարք հեղինակներ (Վագենբախ, Բ. Նագել) նշում են, որ հայրական բարդույթը Կաֆկայի հոգեբանության մեջ ոչ միայն հիմնականն է, այլև այլ բարդույթների (օտարացում, թերարժեքություն և այլն) առաջացման պատճառ՝ «համաշխարային բարդույթի» նշանակությամբ: «Օրագրերը» և հատկապես «Նամակ հորը» ինքնակենսագրական փաստաթուղթը որոշակի հիմքեր տալիս են նման եզրակացություն անելու համար: Ակնհայտ է, սակայն, որ Կաֆկայի հայրական բարդույթի մեջ առկա են գծեր, որոնք ուղղակիորեն կապված են ոչ միայն հոր, այլև հասարակության կամ միջավայրի այլ անդամների հետ: «Իմ դաստիարակությունը շատ է վնասել ինձ, – կարդում ենք «Օրագրերում», – այս կշտամբանքը վերաբերում է բազմաթիվ մարդկանց …Նրանք այստեղ կանգնած են կողք կողքի և, ինչպես հին խմբանկարներում, չգիտեն, ինչպես վարվել միմյանց հետ, նրանց մտքով չի անցնում աչքերը կախել, իսկ ժպտալ սպասման լարվածությունից չեն հանդգնում»[2]: Սովորության համաձայն՝ Կաֆկան ստեղծում է հոր կերպար, և եթե «Նամակում» այդ կերպարը հասցված է կառուցիկ ավարտունության, ապա «Օրագրերում» միայն մանրամասներ կան այդ ամբողջությունից: Անժխտելի է, որ երեխաներին «իր ձևով ապրել տալու» հոր պարտադրանքը Կաֆկայի համար հիմք է դարձել ծանր հոգեկան դրամայի: «Այն բանից հետո, երբ ուժեղ սպառնալիքները չօգնեցին, Դու դուրս բերեցիր ինձ անկողնուց, տարար պատշգամբ և թողեցիր այնտեղ միառժամանակ, վերնաշապիկով, փակ դռան ետևում…»[3]: Մանկան ապրած ողբերգությունը ամենից առաջ հիասթափություն է հոր մասին ունեցած պատկերացումներից: Հայրը նրա համար ուժի, ամրության և իշխանության մարմնացում է. «Ես հիշում եմ, օրինակ, որ մենք հանվում էինք հանդերձախցիկում: Ես նիհար, թույլ, նեղ կրծքավանդակով, Դու՝ ուժեղ, մեծ, լայնաթիկունք…»[4]: «Նամակում» նա հոր մասին խոսում է ճիշտ այնպես, ինչպես կխոսեր մարդկու-

[1] T(1), 141.
[2] Նույն տեղում, 13:
[3] Кафка (3), 416-458.
[4] Նույն տեղում, 416-458.

թյան նախահոր մասին. «Քո բազկաթոռում նստած՝ Դու կառավարում էիր աշխարհը»[1], կամ՝ «Քո սպառնալիքը՝ չառարկել և դրա հետ մեկտեղ վեր բարձրացրած ձեռքդ ինձ ուղեկցում են անհիշելի ժամանակներից»[2]: Որքան խորն է ակնածանքը, նույնքան և խորն է հուսահատությունը. «Ես Քո առաջ կորցրի ինքնավստահությունս՝ փոխարենը ձեռք բերելով անսահման մեղքի գիտակցություն»[3]: «Օրագրերում» կարդում ենք. «Մայրիկը և քույրս Բեռլինում են: Երեկոյան հայրիկի հետ մենակ ենք լինելու: Ինձ թվում է՝ նա վախենում է վերև բարձրանալ: Ես նրա հետ թու՞ղթ պետք է խաղամ»[4]: Մանկական թշնամանքը աստիճանաբար վերածվում է կայուն և անփոփոխ օտարացման: «Կործանման ձևերը աներևակայելի են, – գրում է Կաֆկան, – վերջերս պատկերացնում էի ինձ, որ դեռ երեխա՝ հաղթվեցի հորիցս և ահա հետագա բոլոր տարիներին պատվախնդրությունից չեմ կարողանում թողնել մարտադաշտը, թեև ինձ հաղթում են նորից ու նորից»[5]:

Այնուհանդերձ, Կաֆկային յուրահատուկ է ոչ միայն ատելությունը հոր նկատմամբ (Vaterhass), այլև հայրորոնությունը (Vaterversuch): Այս վերջինը, որին Զ. Ֆրեյդը «ծնողական բարդույթ» անվանումն է տալիս, ուղղակիորեն կապված է առաջինի հետ: Ենթագիտակցական թշնամանքի հետ Կաֆկան ապրում է նաև գիտակցական երախտագիտություն: 1913թ. օգոստոսին նա գրում է Ֆ. Բաուերին. «Իմ հիացմունքը այդ մարդու հանդեպ (հոր՝ Ա.Ա.) այնքան մեծ է, որքան և վախը»[6]: Պատահական չէ, որ ուրիշ ոչ մեկի առաջ իր արդարացիությունը հաստատելու այնքան փորձեր չի անում Կաֆկան, որքան հոր: «Նամակ հորը» ինքնակենսագրական փաստաթղթում շատ տողեր կան, որոնցում նա խոստովանում է իր սերը հոր հանդեպ և փորձում նույնիսկ արդարացնել ու հասկանալ հոր խստապահանջությունը. «Դու նույնպես ապրել ես զանազան փուլեր, եղել ես, հավանաբար, ավելի կենսախինդ միչև այն պահը, երբ Քո երեխաները, հատկապես ես, չենք հիասթափեցրել Քեզ …բայց ես նորից ու նորից խնդրում եմ չմոռանալ, որ ես ամենափոքրագույն չափով անգամ չեմ հաշվել, որ Դու ինչ-որ բանում մեղավոր ես…»: «Լրիվ հնարավոր է, – շարունակում է Կաֆկան, – որ եթե մեծանայի Քո ազդեցությունից ազատ, միևնույն է … կլինեի թույլ, վեհերոտ, անվճռական, անհանգիստ մարդ»[7]: Նա Ֆելիցային թեև խոստովանում է, որ իրենց ընտանիքում ամենքը և ամեն ինչ օտար են իրեն, սակայն հենց հաջորդ պահին հիշում է, որ նրանք իր ծնողներն են, իր սեփական էության անբաժանելի մասը, իր ուժի մշտական աղբյուրները: «Իմ ամբողջ չարությամբ, վատթար սովորություններով, եսասիրությամբ, անսրտությամբ հանդերձ, – գրում է Կաֆկան, – ես միշտ դողացել եմ նրանց համար… հայրս և մայրս, անհրաժեշտությունից մղված, գրեթե ջարդել են իմ կամքը, սակայն միևնույն է՝ ես չեմ կարող, չընկնելով խելագարության մեջ, ըմբոստանալ

[1] Նույն տեղում, 416-458.
[2] Նույն տեղում, 416-458.
[3] Նույն տեղում, 416-458.
[4] T (1), 234.
[5] Նույն տեղում, 343:
[6] Кафка (1), 218.
[7] Նույն տեղում, 416-458:

բնության օրենքների դեմ, այսինքն՝ առիթ չեմ տալիս, որ ծնվի նոր ատելություն»[1]:

Երկվությունը առկա է նաև օտարացման բարդույթում: Կաֆկայի օտարացման առավել ամբողջական պատկերը ներկայացնում է Գ. Անդերսը. «Իբրև հրեա, – գրում է նա, – Կաֆկան յուրային չէր քրիստոնեական աշխարհում: Իբրև չեզոք հրեա, քանզի Կաֆկան այդպիսին էր սկզբում, նա յուրային չէր հրեաների միջավարում: Իբրև գերմաներեն խոսող մարդ՝ նա յուրային չէր չեխերի միջավայում: Իբրև գերմաներեն խոսող հրեա՝ նա յուրային չէր գերմանացիների միջավայում: Իբրև բոհեմացի՝ նա լիարժեք ավստրիացի չէր: Իբրև բանվորների ապահովագրական ծառայող՝ նա ամբողջովին չէր պատկանում բուրժուազիային: Իբրև բուրժուայի որդի՝ ամբողջովին չէր պատկանում բանվորությանը: Ծառայության մեջ էլ նա ամբողջովին չկար, քանզի իրեն զգում էր գրող: Սակայն գրող նույնպես չէր, քանի որ ուժերը տալիս էր ընտանիքին»[2]: Բայց ընտանիքում նա նույնպես ապրում էր «ավելի օտար, քան ամենաօտար մարդը»[3]:

Օտարացման այս տարբերակների իրական դրսևորումները առկա են «Օրագրերում»:

Կաֆկան ներկայացնում է իրի, առարկայի, կենդանու վերածվելու երևույթը, որը լավագույնս պատկերված է «Կերպարանափոխություն» պատմվածքում: Կաֆկան նույնպես ապրում է Գրիգոր Զամզայի ողբերգությունը. «…հիմա դեղձանիկները ինձ նորից հիշեցրին, – կարդում ենք «Օրագրերում», – թե պետք չէ՞ արդյոք դուռը մի փոքր բաց անել, օձի պես սողալ դեպի հարևան սենյակը և այդպես հատակից խնդրել իմ քույրերին ու նրանց աղախիններին, որ հանգիստ մնան»: Օրագրային մի գրառման մեջ նա իրեն համեմատում է փայտե կախիչի հետ. «Կարծես փայտից լինեմ, սենյակի մեջտեղ հրված կախիչ հագուստի համար»: Սեկ այլ գրառման մեջ՝ շան. «Ըստ էության ես անընդունակ և տգետ մարդ եմ, մարդ, որին, եթե չստիպեին դպրոց գնալ …ի վիճակի կլիներ ուղղակի շան նման նստել բնում և դուրս գալ այնտեղից այն ժամանակ միայն, երբ նրան են պարզում կերը, և մտնել ներս, երբ կերել պրծել է այն»(3): Կաֆկան ապրում է նաև ինքնիրենից օտարացում, որի մասին Անդերսը չի նշում. «Որքան հեռու են ինձնից, օրինակ, ձեռքիս մկանները»: Ինքնիրենից օտարման օրինակ կարելի է դիտարկել նաև Կաֆկայի բազմաթիվ երկխոսություններն իր ես-ի հետ, որն ուղղակիորեն երկվության արտահայտություն է:

Կաֆկայի մենակության զգացումը նույնպես ուղեկցվում է երկվությամբ: Այն երկու դեմք ունի, մենակություն, որին ձգտում է Կաֆկան, և մենակություն, որից փախչում է: «Ես ստեղծված չեմ մարդկային շփման համար»[4] և «Որքան էլ աննշան լինեմ ես, այնուամենայնիվ, չկա մեկն այստեղ, որ հասկանա ինձ…»[5] արտահայտությունները կարելի է ընկալել իբրև այդ երկվության դրսևորում:

Կյանքի բնականոն ընթացքը իր տարերքի մեջ երբեք չի առնում Կաֆկային: Շր-

[1] T (1), 321.
[2] Anders, 118.
[3] T (1), 200.
[4] Кафка (1), 208.
[5] T (1), 296.

ջագիծը, որ իր շուրջը ունի յորաքանչյուր մարդ, բնական այն սահմանն է, որը կտրել անցնելով՝ նա մտնում է հասարակություն: Կաֆկան ոչ միայն շատ հազվադեպ է կտրում-անցնում սահմանը, այլ անընդհատ և համառորեն վերադառնում է շրջագծի կենտրոն, որտեղ ինքն է: «Որջը» պատմվածքի կենդանու պես նա հաճույքով միայն իր ներաշխարհային տարածքներն է դիտարկում, իսկ ահա դրսում լինելու գիտակցությունը նրան մատնում է սարսափի: Նա ունի հասարակության մեջ լինելու պարտականություններ (աշխատանք, սեփական գործարան և այլն), սակայն կյանքի անմիջական մերձությունը, որ կլանված է դրամ վաստակելու հոգսով, զրկում է նրան տեսադաշտից. «Ասես ձորի մեջ լինեմ», – խոստովանում է Կաֆկան[1]: Ունի նաև հետաքրքրություններ (դաշնամուր, ջութակ, լեզուներ, գերմանագիտություն, սիոնիզմ, հակասիոնիզմ, հին հրեերեն, այգեգործություն, հյուսնություն, սեփական բնակարան, ամուսնական ծրագրեր), սակայն այդ բնագավառներում երբեք լրջորեն առաջ չի շարժվում՝ ամեն անգամ կանգնելով կես ճանապարհին: Նա մարդկանց հետ խոսելու, զրույց անելու լուրջ դժվարություններ է կրում: «Ինձ թվում է՝ խոսքը, – գրում է Ֆ. Բաուերին, – որոշակիութունից և լրջությունից զրկում է այն ամենը, ինչ ես ասում եմ: Ուստի ես լռակյաց եմ ոչ միայն բնավորությամբ, այլև համոզմունքով»[2]: Այս երևույթը, որ Հ. Գ. Գադամերն անվանում է խոսակցական անընդունակություն («Unfähigkeit zu Gespräch»), ոչ միայն Կաֆկայի, այլև հասարակական վարքի արտահայտություն է[3]: Կաֆկայի ձգտումը դեպի մենակություն փաստորեն փախուստ է ներկայից: Նա ավելի հաճույքով տրվում է անցյալի հիշողություններին և ապագա ծրագրերին, քան ապրում ներկայով. «Իմ կյանքն այստեղ անցնում է այնպես, կարծես համոզված լինեմ, որ երկրորդ կյանք եմ ապրելու, ասենք՝ Փարիզում անհաջող ապրելուց հետո հույս եմ փայփայում, որ նորից կվերադառնամ այնտեղ»[4] : Գյոթեի կամ Տոլստոյի օրագրողների պես նա չի ըմբոշխնում ներկան՝ իբրև ապրելու և առաջ նայելու հնարավորություն, այլ ընդհակառակը, քայքայում է այն: «Իմ հին սովորությունն է, – կարդում ենք «Օրագրերում», – մաքուր տպավորությունները, երբ արդեն հասել են իրենց մաքրության վերին աստիճանին, չթողնել, որ բարեշնորհաբար թափանցեն իմ ողջ էության ներսը, այլ աղավաղել դրանք»[5]:

Սա գոյաբանական գիտակցությանը բնորոշ երևույթ է:

Նրան պարտադրված (նույնն է, թե՝ նրա երազած) մենակությունը անսահման է: Նա ապրում է դրանով, ինչպես ոչ ոք: Մենակությունը այն ճանապարհն է, որով Կաֆկան մոտենում է տառապանքին, այսինքն՝ գրականությանը, իսկ վերջինս նրա ապրելու միակ պայմանն է: Չարչարանքով ստեղծված լռության կառույցի յուրաքանչյուր խախտում Կաֆկային պատճառում է ցավ: «Ինձ պետք է փայտով քշեն անապատ, – գրում է Մ. Բրոդին 1913թ. սեպտեմբերին[6], որովհետև մենակությունը

[1] Т (1), 284.
[2] Кафка (1), 218.
[3] Гадамер, 82-92.
[4] Т(1), 30.
[5] Т(1), 82.
[6] Кафка (1), 95.

իր միակ նպատակն է. աղետ է, երբ ճչում են երեխաները, երբ նամակ է ստացվել Օսկարից…»[1]: Նա դժգոհում է Մ.Բրոդից, որ Մուզիլին տվել է իր հասցեն, նաև Ֆելիցայից, որ հաճախակի է գրում. «Ես տառացիորեն ի վիճակի չեմ տանելու Ձեր ամենօրյա նամակները»[2]:

Կաֆկային բնորոշ է նաև թերարժեքության բարդույթը: Նպատակի մեծությունը (նա ուզում է մարդկանց համար բարի գործ կատարել և մաքրվել մեղքից (Katharsis) և իր հնարավորությունները նրան ուղղակի մատնում են հուսահատության: Տոլստոյի օրագրողը նույնպես թերաժեքության շրջաններ է ապրում («Ինքնին ես հիմար եմ, անճարակ, աննրբակիրթ, ես դյուրագրգիռ եմ, ուրիշների համար ձանձրալի…»)[3], սակայն նպատակի առկայությունը և հոգեկան ուժերի կենտրոնացումը տոլստոյական հուսահատությունը վերածում է ինքնամաքրման ընթացքի («Այսօր կարդացի օրագրիս այն էջերը, որտեղ զննում եմ ինքս ինձ և ուղի կամ եղանակ եմ փնտրում կատարելագործման»)[4]: Թեև Կաֆկան նույնպես «Օրագրերում» ունի նմանատիպ գրառումներ («Մի քիչ թերթեցի օրագրերը: Մի տեսակ պատկերացում կազմեցի նման կյանք կազմակերպելու մասին»)[5], սակայն քայլ անելու ձգտումը մնում է միայն կեցվածք: Նա թերարժեքությունն ու հուսահատությունն ապրում է իրական նպատակի և իրական հույսի բացակայությամբ: Նա բացահայտորեն ատում է իրեն և իր թուլությունը: Նա իր մարմինը զգում է իբրև կաշկանդող պատյան՝ Գրիգոր Զամզայի օրինակով. «Կասկած չկա, որ իմ առաջընթացի հիմնական խոչընդոտը մարմնիս վիճակն է: Նման մարմնով ոչնչի չես հասնի»[6]: Օրագրային շատ գրառումներում Տալստոյի նմանությամբ նա բաց, խոստովանական ճշմարտություններ է ասում. «Դատարկ սափոր եմ, դեռ ամբողջական, սակայն արդեն բեկորների ենթակա… Լիքն եմ ստով, ատելությանմբ և նախանձով: Լիքն եմ ծուլությամբ, խեղճությամբ անօգնականությամբ»[7], «Եվ անմտորեն դատարկ եմ, ոնց որ … գիշերը լեռներում կորած ոչխարի նման լինեմ կամ այն ոչխարի, որ վազելով գնում է կորածի ետևից…»[8]:

Ինքնաժխտումի ոգին Կաֆկայի մեջ ամենից ավելի երևում է կանանց հետ առնչություններում: Սեռի և սիրո խնդիրներին նա նայում է ոչ սովորականի և ոչ բնականի տեսանկյունից: Կանայք նրա համար «կյանքի ներկայացուցիչներ են», և առնչվել նրանց հետ, նշանակում է կյանքի շարունակության հնարավորություն ստեղծել, իսկ դա Կաֆկայի համար մերժելի է, որովհետև կյանքի այս կերպը նա չի ընդունում: Գրականության մեջ նրա կին հերոսները սեռական բավականությունից դուրս գրեթե այլ իմաստ չունեն: Գ. Գունտերմանը թվարկում է ութ կանանց անուն,

---

[1] Նույն տեղում, 148:
[2] T(1), 164.
[3] Толстой, 125.
[4] Толстой, 140.
[5] T(1), 274.
[6] Նույն տեղում, 105:
[7] Նույն տեղում, 261:
[8] Նույն տեղում, 206 (Հմմտ՝ Աստվածաշունչ, Եսայի, 53.6: Հատկանշական է նաև, որ ինքնաբնութագրումների առումով Ֆրանց Կաֆկան շատ մոտ է Գրիգոր Նարեկացուն, որի «Մատյանում» այդպիսիք հանդիպում են ամենուրեք):

որոնց հետ Կաֆկան այս կամ այն կերպ մտերմություն է ունեցել[1]: Դրանցից երեքի (Ֆ. Բաուեր, Յ. Վոխրիչեկ, Մ. Եսենսկա) մտերմությունը կարող էր ավարտվել ամուսնությամբ, սակայն Կաֆկան նախընտրում է մենակությունը՝ մատնելով իրեն ամուրիի ողբերգության:

Կաֆկայի օրագրային կերպարին չափազանց բնորոշ է վախը, որ հաճախ հասնում է սարսափի («Վախեցած վեր թռա խոր քնից: Սենյակի մեջտեղում … մոմի լույսի տակ նստած էր մի մարդ…»)[2]: Գոյության երկյուղը իր տարբեր չափերով մշտապես առկա է Կաֆկայի հոգեբանության մեջ և առարկայանում է զանազան մարդկանց ու երևույթների հանդեպ վախի դրսևորումներով (հայր, կանայք, գրականություն, հասարակություն, գիշերային ժամեր, պաշտոնական դռներ և այլն): «Որտեղից այս անսպասելի համարձակությունը, – գրառում է Կաֆկան «Օրագրերում», – միայն թե չանցներ: Եթե կարողանայի իբրև մարդ, թեկուզև հազիվ դիմանալով ոտքերիս վրա, մտնել և դուրս գալ բոլոր դռներից: Սիայն չգիտեմ՝ ուզում եմ դա, թե՞ ոչ»[3]:

Օտարացման, մենակության, թերարժեքության և վախի հակակշիռները, որ «Օրագրերում», իբրև երկվության մարդ, ստեղծում է Կաֆկան, սերն է դեպի կյանքը, մարդկանց հետ շփման անհրաժեշտությունը, ինքնավստահությունը և հույսը, որ ուժեղանում են կյանքի վերջին շրջանում: Որքան մեծանում է կյանքի ողբերգականության գիտակցությունը, նույնքան իրեն զգացնել է տալիս իրական կյանքի կարոտը: «Եթե ես դատապարտված եմ, – գրում է Կաֆկան, – ապա դատապարտված եմ ոչ միայն կործանման, այլև այն բանին, որ մինչև վերջ դիմադրեմ»[4]: Նա միտումնավոր կտրել է սերունդների շղթան, որի համար ապրում է անխուսափելի զղջում. «Առանց նախնիների, առանց ամուսնության, առանց ժառանգների, անկոտրում ծարավով՝ դեպի նախնիները, ամուսնությունը, ժառանգները»[5]: Կաֆկան պատրաստ է վերադարձի և չի կորցնում հույսը: Դա այն հույսն է, որ ծագում է մորթվելու կանգնած Յոզեֆ Կ-ի հոգում. «Պատուհաններից մեկից կարծես լույս ժայթքեց: Փեղկերը հետ գնացին, հեռու՝ վերևում, թույլ ու հազիվ երևացող մի մարդ թափով առաջ կախվեց և ավելի առաջ պարզեց ձեռքերը: Ո՞վ էր նա: Բարեկա՞մ էր: Բարի մա՞րդ: Կարեկցո՞ղ: Այդ մարդը օգնե՞լ էր ուզում: Մ՞ի մարդ էր, թե բոլորն էին: Դեռ հնարավո՞ր էր օգնել»[6]: Վերջին գրառումներում իշխող այս հուսահատ կենսասիրությունը («Ինչ երջանկություն է՝ լինել մարդկանց հետ») ընկալվում է իբրև կյանքի հաղթանակ: Եվ գոյի այն կողմից դեպի այս կողմը եկող իր գիտակցության ընթացքը նա համեմատում է ետընթաց գետի հետ[7]:

Կերպարային և սյուժետային զարգացման այս նոր մակարդակում չարի և բարու, երկնքի և երկրի, փախուստի և վերադարձի, հույսի և անելանելիության, դրսի և ներսի ժամանակների և երկվությունը խորհրդանշող ծայրակետերի միջակայ-

[1] Guntermann, 41.
[2] T(1), 343.
[3] Նույն տեղում, 205:
[4] Նույն տեղում, 316:
[5] Նույն տեղում, 348:
[6] Դատավարություն, 170:
[7] T(1), 359.

քում տարուբերվող Կաֆկան կատարում է քայլ, որ նրան տեղավորում է դրանց միջակայքում, որտեղ ապրում են Սպասումը, Քնաթաթախ-Երազայինը, Հաշտությունը, Ամուփիի կյանքը, Աբսուրդը, Տառապանքը և Գրականությունը: «Մենակության և շփման միջև առկա սահմանային գոտին ես կտրում- անցնում էի միայն հազվադեպ, – գրում է նա 1921թ. հոկտեմբերի 29-ին, – այդ միջակայքում ես տեղավորվել էի նույնիսկ ավելի հիմնավոր, քան մենակության մեջ»[1]: Կաֆկան հաշտ է աբսուրդի հետ և, ի տարբերություն Համլետի կամ Ռասկոլնիկովի, խռովություն չի ապրում: Ինքնաճանաչման այս մակարդակում Կաֆկայի համար ինքնասպանությունը իբև ելք, դառնում է ավելորդ, թեև մինչ այդ նա մտքով փորձել է ինքնասպանության գրեթե բոլոր հնարավոր տարբերակները: Հաշտեցումի ոգին, որ իշխում է Կաֆկային, նրան մղում է այլ խորհրդածությունների. «Նախանձում եմ երջանիկ, անսպառ և այդուհանդերձ անհրաժեշտաբար (հենց ինձ նման) աշխատող բնությանը, որ մշտապես կատարում է հակառակորդի պահանջները: Եվ այդքան հեշտ, այդքան երաժշտական»[2]: «Կաֆկայի հետ, – գրում է Է. Կանետտին, – աշխարհ եկավ ինչ-որ նոր, ավելի հստակ զգացում կասկածի՝ միախառնված, սակայն, ոչ թե ատելության, այլ կյանքի հանդեպ ակնածանքի հետ: Հուզական վերաբերմունքի այս երկու տեսակների միավորումը, կասկած և ակնածություն միևնույն պահին, հազվագյուտ բան է»[3]:

Խոսել Կաֆկայի օրագրային կերպարի մասին, նշանակում է ինչ որ չափով խոսել նաև Կաֆկայի գեղարվեստական կերպարների մասին: Եվ եթե նրա կյանքը գնահատենք իբրև նրա գրականության նախնական ցուցադրություն, ապա «Օրագրերի» հերոսի մեջ կարելի է տեսնել կերպարների և գաղափարների այն ամբողջ գամման, որ ձգվում է «Դատավճիռը» պատմվածքից մինչև «Որջը»: Ուստի Կաֆկան ինքը՝ իբրև օրագրային հերոս, գրողի ստեղծած հերոսներից ամենաողբերգականն է, քանի որ իր մեջ, սեփականից բացի, կրում է նաև մյուս հերոսների ճակատագիրը:

Բանալի բառեր՝ *փաստագրական և գեղարվեստական կերպար, օրագրող, երկվություն, վախ, օտարացում, թերարժեքություն, ողբերգական գիտակցություն, մենակություն,, աբսուրդ, տառապանք:*

[1] Նույն տեղում, 341-342:
[2] T(1), 359.
[3] Канетти, 300.

THE IMAGE OF THE DIARY WRITER IN FRANZ KAFKA'S "DIARIES"

A. H. ARAKELYAN
Doctor of Philology, Associate Professor
GSU lecturer

The author of the article tries to investigate the boundaries and features of the author's "I", based on Franz Kafka's "Diaries". The image of Kafka as a diary writer, being documentary, is also distinguished by artistic lines, which stretch from duality to fear, from self-annihilation to alienation, from loneliness to an acute existential sense of guilt. In this aspect, Kafka's diary writer creates obvious parallels with his artistic images.

ОБРАЗ ДНЕВНИКОПИСЦА В ПРОИЗВЕДЕНИИ ФРАНЦА КАФКИ ‹‹ДНЕВНИКИ››

А. Г. АРАКЕЛЯН
Доктор филологических наук, профессор, доцент
Преподаватель ГГУ

В статье автор пытается исследовать границы и особенности авторского <<я>> Франца Кафки на основании его <<Дневников>>. Образ Кафки в роли дневникописца, являясь документальным, одновременно выделяется художественными линиями, которые от двойственности тянутся к страху, от самоненависти до отчуждения, от одиночества до острого экзистенциального чувства вины. В этом аспекте дневникописец Кафки создает очевидные параллели с его художественными образами.

ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԵՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Լ. ԿԱՏՎԱԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, դոցենտ,
ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի տնօրեն,
ԳՊՀ դասախոս

Ներկայումս հայապահպանական, լեզվագիտական ու մշակութաբանական առաջնահերթ խնդիրներից է արևմտահայերենի պահպանության, ուսումնասիրության, ուսուցման և զարգացման հարցը: Հայերենի դրսևորման այս եղանակը հայ ժողովրդի լեզվամշակույթի անբաժանելի մասն է, բացառիկ կարևորության ազգային արժեք, որը թեև զրկված է գործառության բնականոն պայմաններից, սակայն հաղորդակցման միջոց լինելուց բացի ձեռք է բերել նաև համազգային նշանակություն ունեցող այլ գործառույթներ: Արևմտահայերենը ոչ միայն ազգապահպան դեր ունի Սփյուռքում, այլ նաև ապահովում է Հայաստանի Հանրապետության լեզվական ներկայությունը աշխարհի բազմաթիվ երկրներում, կատարում է լեզվական դեսպանի յուրահատուկ դեր՝ հնարավորություն ստեղծելով աշխարհում ճանաչելի դարձնել մեր մշակույթը, ազգային ինքնատիպությունը: Այս առումով, խնդիրը ոչ միայն ազգային, այլ նաև պետական նշանակություն ունեցող առաջնահերթություն է:

Իր բնօրրանից զրկված և աշխարհով մեկ սփռված հայության տարբեր զանգվածների ընդհանուր հաղորդակցման լեզվի՝ արևմտահայերենի առջև ծառացել են մի շարք մարտահրավերներ:

Արևմտահայերենի հիմնական խնդիրը եղել և մնում է հայրենիքից դուրս և ոչ միասնական գոյությունն ու գործառությունը: Այս խնդրի լուծման եղանակները ներկայումս դժվար է կանխորոշել: Սակայն խնդրից բխող մարտահրավերներին դիմակայելու ուղիներ և եղանակներ պետք է որոնել և գտնել: Այս առումով հարկավոր է հասարակության մեջ ամրապնդել այն բանի գիտակցումը, որ արևմտահայերենը համազգային արժեք է, որը պետք է իր տեղն ունենա հայաստանյան իրականության մեջ, այստեղ պետք է արմատներ ձգի, ամրապնդվի և հայրենիքից իր կենդանարար ավյունը մղի սփյուռք: Հայրենիքում արևմտահայերենի ամրապնդմանը կարող են նպաստել հայերենի այդ տարբերակով ռադիոհեռուստատեսային հաղորդումների, պարբերականների, ֆիլմերի ստեղծումը, բուհական ու դպրոցական ծրագրերում արևմտահայերենի համակարգված ուսուցման ընդգրկումը, նաև հնարավոր այլ միջոցների օգտագործումը, հատկապես՝ Հայաստանում արևմտահայերենով կրթական ծրագրեր իրականացնող բարձրագույն ուսումնական հաստատության ստեղծումը: Ի վերջո, հայերենի դրսևորման բոլոր տարբերակները՝ արևմտահայ և արևելահայ գրական լեզուները, խոսակցական լեզուն և բարբառները միասնական համակարգի անտրոհելի բաղադրիչներ են, և

այդ դրսևորումներից յուրաքանչյուրի խնդիրները ընդհանուր հայերենի, այսինքն՝ ՀՀ պետական լեզվի խնդիրներն են:

Հայրենիքից դուրս, տիրապետող այլախոս հասարակություններում գործառող ցանկացած լեզու ստիպված է դիմակայել բազում մարտահրավերների: Մասնավորապես, տվյալ երկրի լեզվի նկատմամբ իրավական անհավասար վիճակը, համաշխարհայնացման գործընթացները, այլալեզու միջավայրին հարմարվելու նոր սերնդի բնական մղումը օբյեկտիվ իրողություններ են, որոնք մշտապես առկա են լինելու և մշտապես ձգտելու են նեղացնելու արևմտահայերենի գործառության շրջանակները: Արևմտահայերենը ենթակա է այլ լեզուների տարաբնույթ ազդեցությունների, և բացի այդ՝ նոր սերնդի շարքերում հայախոսների թվի շարունակական նվազումը վտանգ է ներկայացնում ոչ միայն լեզվապահպանական, այլ նաև հայապահպանական առումներով: Մերօրյա արևմտահայերենի մասին Ռ. Տեր-Մերկերյանը գրում է. «Արևմտահայ տարբերակով բոլոր հաղորդակցվողները երկլեզվանի են, և նրանց համար առաջին լեզուն ընդունող երկրի լեզուն է, որը ժամանակի ընթացքում իր ազդեցությունն է թողնում. դա առաջին հերթին ակնհայտ է հատկապես արտասանության մեջ (չնայած բառապաշարի վրա նույնպես այդ ազդեցությունը շոշափելի է): Այսպէս, այսօրվա դրությամբ կարելի է զանազանել հունահային ամերիկահայից, ֆրանսահային պոլսահայից, արգենտինահային լիբանանոհայից: Հեռու չէ այն ժամանակը, երբ կզանազանենք նաև ֆրանսահայերենը պոլսահայերենից, ամերիկահայերենը հունահայերենից, լիբանանահայերենը իսպանահայերենից»: Այս պայմաններում հայոց պետականությունը և սփյուռքյան համազգային կազմակերպությունները պետք է համադրեն իրենց ջանքերը՝ շարունակաբար տարածելու և ամրապնդելու ազգային ու լեզվական միասնության գաղափարները հատկապես հայ երիտասարդության շրջանում՝ իրապես ողջ հայության համար սրբագույն արժեք դարձնելով մայրենին:

Այսօր լրջագույն խնդիր է Սփյուռքի հայկական դպրոցների պահպանությունը, դրանցում հայերենի, հայագիտական մյուս առարկաների ուսուցման մակարդակի բարձրացումը: Ցավոք, առկա է որակյալ մանկավարժական կադրերի մեծ պակաս, օբյեկտիվ պատճառներով գործածական չեն միասնական կրթական ծրագրեր և դասագրքեր[1]:

Կարևոր խնդիրներից է արևմտահայերենի գիտական ուսումնասիրությունը: Ճիշտ է, տասնամյակների ընթացքում կատարվել են առանձին հետազոտություն-

[1] Որքան էլ ՀՀ սփյուռքի նախարարությունը ջանում է աջակցել սփյուռքահայ դպրոցին, ձեռնարկում է գործուն միջոցներ, գործակցում է ազգային կառույցների, հայ եկեղեցու, պետական այլ մարմինների հետ, շարունակ որոնում, գտնում ու գործադրում է սփյուռք-հայրենիք կապերի ամրապնդման նորանոր, բազմազան ու արդյունավետ եղանակներ, նպաստում հայաստանյան գիտակրթական համակարգում արևմտահայերենի ուսուցման և ուսումնասիրության կենտրոնների ձևավորմանը, արևմտահայերենի դասագրքերի և ձեռնարկների ստեղծմանը, հայրենիք եկած մեր ազգակիցների խնդիրների կարգավորմանը և այլն, այնուամենայնիվ, թվում է, անհրաժեշտ է պետական նպատակադիր քաղաքականություն և հիմնավոր ծրագիր՝ արևմտահայերենի խնդիրների համալիր ընդգրկմամբ:

ներ, գրվել քերականություններ, սակայն գիտական առումով 19-րդ դարավերջի ուսումնասիրությունների համեմատ էական առաջընթաց տեղի չի ունեցել, և եղած քերականությունները հիմնականում հետապնդել են ուսուցողական նպատակներ: Ներկայումս անհրաժեշտ է գիտական հիմնավոր ուսումնասիրություններով ստեղծել արևմտահայերենի ակադեմիական լիարժեք քերականություն, ինչպես նաև ամբողջական բացատրական բառարան: Նման աշխատանքները կնպաստեն նաև արևմտահայերենի կանոնարկմանը, կդառնան այն աղբյուրը, որից կբխեցվեն արևմտահայերենի ուսումնական ձեռնարկներն ու դասագրքերը՝ ըստ տեղային առանձնահատկությունների:

Արևմտահայերենի բնականոն զարգացմանը մեծապես վնասում է այն իրողությունը, որ այն զրկված է բարձրագույն կրթության, գիտության լեզվի իր դերից, դպրոցական համալիր ուսուցման, պետական, հասարակական կյանքի տարբեր ոլորտներում համընդգրկուն և միասնական հաղորդակցման միջոց լինելու գործառույթներից: Գիտության տարբեր բնագավառների, կրթական համակարգի զարգացումը չի արտահայտվում արևմտահայերենով, հայերենի այդ տարբերակով չի հրապարակվում գիտական, գեղարվեստական, այլ բնույթի հարուստ գրականություն, արևմտահայերենի գիտական տերմինաբանությունը բնականոն զարգացում չի ունենում, բացի այդ՝ հաճախ ստեղծվում են արհեստական, որևէ կիրառական արժեք չունեցող բառային միավորներ ու տերմիններ, մյուս կողմից՝ արևմտահայերենի անգամ բառարաններում առկա բազմաթիվ տերմինները մնում են անգործածելի՝ նաև համապատասխան միջավայրի բացակայության պատճառով: Այդ ամենը էականորեն բացասական ազդեցություն են ունենում լեզվական համակարգի հետագա զարգացման վրա

Արտաքին անբարենպաստ պայմանները ժամանակի ընթացքում պատճառ են դարձել արևմտահայերենի ուղղագրական, բառապաշարային, քերականական ու ոճական բազմաթիվ զուգաձևությունների ու աղավաղումների, որոնք իրենց հերթին խոչընդոտում են լեզվի ուսուցմանը, կիրարկմանն ու տարածմանը: Մեծ քանակությամբ բառեր տարբեր համայնքներում ունեն գրության, կազմության, քերականական հատկանիշների բազմաձևություններ: Լեզվական միասնականության հասնելու կամ եղած բազմազանությունները ըստ հնարավորին նվազեցնելու համար անհրաժեշտ է հետևողական աշխատանք, նպատակադրում ու կամք՝ ոչ միայն գտնելու, գիտականորեն հիմնավորելու և առաջարկելու միասնական ու ընդհանուր ձևեր, այլ նաև դրանք ընդունելի դարձնելու Սփյուռքի բոլոր համայնքներին ու խավերին: Այս իմաստով խիստ կարևոր կարող է լինել հայաստանյան գիտակրթական հանրության ու սփյուռքյան համապատասխան կառույցների, մասնավորապես՝ Արամ Ա կաթողիկոսի հովանավորությամբ գործող Արևմտահայերենի պաշտպանության խորհրդի ազգաշահ համագործակցությունը:

Արևմտահայերենի պահպանումը հայերենի պահպանումն է, արևմտահայերենը մեր հոգևոր հայրենիքի անբաժանելի, բայց վտանգված մի մասն է, և ինչպես անթույլատրելի է նահանջը երկրի սահմաններից, այդպես էլ անթույլատրելի է

նահանջը լեզվական սահմաններից: Հայերենը սրբորեն պահպանող միլիոնավոր սփյուռքահայերը, հայ եկեղեցու կառույցները, սփյուռքյան բազմաթիվ միությունները, կազմակերպությունները, պարբերականներն ու հանդեսները, կայքէջերը, ռադիոհեռուստաընկերությունները, գիտակրթական օջախները մեր հոգևոր հայրենիքի սահմանապահներն են, որոնց խիստ անհրաժեշտ է իրական հայրենիքի աջակցությունը: Արևմտահայերենի գոյությունն ու գործառությունը անհրաժեշտ է նաև արևելահայերենի բնականոն զարգացման համար: Շատ կարևոր խնդիր է նաև ընդհանուր հայերենի միասնականության պահպանումը, գրական երկու ճյուղերի ըստ հնարավորին մերձեցումը, փոխներթափանցումն ու փոխհարստացումը: Հատկապես բառապաշարի և տերմինաբանության առումով առկա են փոխլրացման բազում օրինակներ և լայն հեռանկարներ: Այս ամենը ենթադրում են զարգացման միասնական հեռանկարի և փոխհամաձայնեցված կանոնարկման ու փոխհարստացման ուղիների մշակում և դրանց գործադրում այն գիտակցումով, որ իր տարբերակային բոլոր դրսևորումներով հանդերձ հայերենը մեկ միասնական լեզու է, որի բոլոր իրողություններն ու միավորները շաղկապված են իրար՝ անկախ տարբերակային վերաբերությունից:

Բանալի բառեր՝ հայերեն, արևմտահայերեն, լեզվամշակույթ, հայրենիք, միասնական լեզու, սփյուռք, հոգևոր հայրենիք:

ON ISSUES OF THE WESTERN ARMENIAN LANGUAGE

V. L. KATVALYAN
Doctor of Philology, Associate Professor,
GSU lecturer

The Western Armenian language has encountered a number of extra-linguistic and linguistic issues such as the non-unity of its existence and application outside its motherland, globalization processes, the new generation's natural desire for adaptation to a foreign language environment, the difficulties of preserving Armenian schools in the Diaspora, the fact of being insufficiently studied by the scientific society, having a great number of parallel forms and distortions, as well as difficulties associated with its regulation and so on.

These problems can be solved only by a consistent cooperation with Armenian state authorities, scientific and educational professionals and the relevant organizations in the Diaspora all acting together for the sake of the national interest.

О ПРОБЛЕМАХ ЗАПАДНОАРМЯНСКОГО ЯЗЫКА

В. Л. КАТВАЛЯН
Доктор филологических наук, доцент,
Преподаватель ГГУ

В сфере западноармянского языка возник ряд таких языковых и внеязыковых проблем, как разобщенность существования и функционирования вне родины, процесс глобализации, стремление нового поколения адаптироваться в иноязычной среде, сложности сохранения армянских школ Диаспоры, недостаточный уровень научной изученности, наличие многочисленных искажений и двойственности, сложности, связанные с канонизацией и т.д. Существующие проблемы могут быть решены в результате последовательного сотрудничества с соответствующими структурами государственных органов Армении, научного и образовательного общества и Диаспоры, в пользу нации.

ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՆԱՀՅՈՒՍԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ ԲԱՆԱԳԵՏ - ԲԱՆԱՀԱՎԱՔՆԵՐԻ ԳՐԱՌՈՒՄՆԵՐՈՒՄ

Լ. Խ. ՂՈՒՋՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ԳՊՀ դասախոս

Ժողովրդի հոգևոր մշակույթի անբաժանելի մասն է կազմում բանահյուսությունը, որը, ստեղծվելով դեռևս անհիշելի ժամանակներում, սերնդեսերունդ, բերնեբերան փոխանցվելով, հասել է մինչև մեր օրերը և շարունակում է իր գոյությունը պահպանել, քանի դեռ կա և ապրում է ազգը:

Ինչպես գիտության յուրաքանչյուր բնագավառ, այնպես էլ հայ բանագիտությունը ձևավորման, զարգացման որոշակի շրջափուլեր է անցել, հաղթահարել բազում դժվարություններ և այդ ճանապարհին ձեռք բերել բանահյուսության արժևորման, բանահյուսական նյութերի գրառման, հրատարակման հստակ եղանակներ ու ավանդույթներ, որոնցով հայ բանագետներն առաջնորդվել և առաջնորդվում են առայսօր:

Բանագետ – բանահավաքները բանահյուսական նյութերը կորստից փրկելու առաջնային խնդիրը միշտ էլ ծառայեցրել են ոչ միայն աշխարհով մեկ սփռված հայ ժողովրդի տարանջատ հարվածների հոգևոր մերձեցման, այլև նրանց հնագույն քաղաքակրթության բազում խնդիրների բացահայտման կարևոր գործին:

Հայ ժողովրդական բանահյուսության գրառման և ուսումնասիրման բուն պատմությունը սկսվում է XIX դարի 70-ական թվականներից, երբ հանդես են գալիս փորձառու բանահավաքներ, մամուլում պարբերաբար հրատարակվում են բանահյուսական նյութեր: Հայ բանահավաքչության ռահվիրա է դառնում Գ.Սրվանձտյանցը, որի առաջ բերած բանահավաքչական մեծ շարժումը հիմք է դնում ժողովրդական կենդանի բանահյուսության նմուշների հավաքմանն ու հրատարակմանը:

Մեր նպատակն է ի մի բերել և ներկայացնել Նոր Բայազետի բանահյուսական և ազգագրական մշակույթը բանագետ – բանահավաքների գրառումներում՝ սկսած 19-րդ դարի երկրորդ կեսերից մինչև մեր օրերը:

Ինչպես հայոց ազգագրական մյուս շրջանների, այնպես էլ Նոր Բայազետ քաղաքի և ամբողջ գավառի ազգագրության ու բանահյուսության հանդեպ հետաքրքրությունն սկսվում է ազգային ինքնագիտակցության զարթոնքի ու վերելքի հետ միասին: Պատմական այս ժամանակահատվածը նշանավորվում է ժողովրդի հոգևոր և նյութական մշակույթի հանդեպ ունեցած բուռն հետաքրքրությամբ:

Նոր Բայազետի բանահյուսությունից որոշ նմուշներ առաջին անգամ հրապարակել է անվանի բանագետ – բանահավաք Տիգրան Նավասարդյանը: Խոսելով հնագիտական հուշարձանների պատմական արժեքի մասին՝ Տ.Նավա-

սարդյանը նույնքան կարևոր է համարում նաև ժողովրդական բանավոր ստեղծագործությունը կորստից փրկելու խնդիրը: «… Ոչ պակաս հնագիտական նյութ են և մի ազգի ժողովրդական, այսպես ասած, խոսուն հնությունները, որոնք իբրև նորա մտքի և երևակայության ծնունդ, նորա անցյալ կյանքի, մտավոր զարգացման կենդանի պատկերներն են արտացոլում իրենց մեջ: Այդ հնությունները ժողովրդյան բանավոր վեպերն են, հեքիաթները, ազգային հին երգերը, առակները, հանելուկները, շուտասելուկները, օրհնությունները և այլն, որոնք իբրև սրբազան ժառանգություն, բերնեբերան հասել են մինչև մեր օրերը: Հայերիս մեջ, ցավոք սրտի, պետք է ասել, նոքա դեռևս ռամիկ դասի սեփականությունն են,որոնք հետզհետե զոհ են դառնում ժամանակի անգութ ժանիքներին: Ահա այդ աչքի առաջ ունենալով, այս մի քանի տարի շարունակ իր թույլ ուժերը նվիրել եմ և այսուհետև էլ նվիրելու եմ այդ նպատակին ծառայելուն»[1]:

Բանահյուսական նյութեր հավաքելու նպատակով Տ.Նավասարդյանը լինում է Վաղարշապատում, Գանձակում, Նոր Բայազետում և այլուր: Նա միաժամանակ նամակներով, մամուլում հրատարակած կոչերով քաջալերում է հայ մտավորականներին՝ հավաքելու և կորստից փրկելու հայրենի բառն ու բանը: Եվ բանահյուսական հուշարձանների պատմամշակութային արժեքները անդառնալի կորստից փրկելու կոչին արձագանքելով՝ նրան բանահյուսական և ազգագրական նյութեր են ուղարկում հինբայազետցի Յակ. Նազարյանցը և նորբայազետցի Ստեփան Բատիկյանը:

1883 թ. Երևանում լույս է տեսնում Տ.Նավասարդյանի «Հայ ժողովրդական ավանդություններ» ժողովածուն, որտեղ ներառված են բանահյուսական տարբեր ժանրեր՝ հանելուկներ, անեծքներ, օրհնանքներ, երդումներ, շուտասելուկներ, փաղաքշական խոսքեր, առածներ, հարսանեկան, ծիսական երգեր:

Հենց այս ժողովածուում են տեղ գտել նորբայազետցի Ս.Բատիկյանի կողմից գրառված նորափեսային և նորափեսայի մորն ուղղված հարսանեկան երգերի որոշ նմուշներ:

Տ. Նավասարդյանի «Հայ ժողովրդական հեքիաթներ» 5-րդ գրքում տեղ է գտել «Ուստա Նաջարի աստվածը» ավանդությունը, որի հերոսը իր արտասովոր արարքով դարձել է կենցաղային զրույցի կամ ասույթի կերպար – խորհրդանիշ:

Ըստ այդմ՝ ուստա Նաջարի գեղեցկուհի կնոջը տիրանալու համար փաշան Նաջարի առաջ պայման է դնում, որ վերջինս պետք է մինչև առավոտ ութ բեռ սղոցի թեփ տա, այլապես կզրկվի գլխից: Մինչև կեսգիշեր Նաջարն աշխատում է, բայց ոչինչ դուրս չի գալիս: Կինը հանգստացնում է նրան՝ ասելով, թե «Աստուած մեկ է՝ հազար դուռ ունի»: Առավոտյան գալիս են փաշայի «չաուշները» և ասում. «Ուստա՛յ, փաշէն մեռաւ, հարի նաշը (դագաղ) շինա՛»: Նաջարը փառք է տալիս Աստծուն, վերցնում ուրագն ու սղոցը և ուրախ – ուրախ գնում է դագաղը շինելու:

[1] ՏիգրանՆավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, Թիֆլիս, 1882, էջ 1:

Եվ եթե մեկը հայտնվում է նեղ, անելանելի վիճակում ասում է. «Եա՛ ուստայ – Նաջարի Ասւաձ»[1]:

Պատմահնագիտական և տեղագրական նյութերի հետ մեկտեղ Նոր Բայազետ գավառի և քաղաքի վերաբերյալ ազգագրական և բանահյուսական հարուստ ու հավաստի նյութ է պարունակում Սարգիս Փիլոյանի «Կորած մարգարիտ» (Թիֆլիս, 1888) վեպը: Հեղինակն ուշագրավ տեղեկություններ է հայտնում նորբայազետցիների կրոնական ծեսերի, արարողությունների մասին և մանրամասն ներկայացնում է տեղացիների ուխտագնացությունները Նորատուսի Սուրբ Նշան, Ղուլալուի Սուրբ Աստվածածին վանքերի և Բայազետ քաղաքից դեպի արևելք գտնվող Սուրբ Հովհաննեսի վանք:

Նյութական մշակույթի արժեքներին անդրադառնալիս վեպում նշվում են Նորատուսի խաչարձանները, Պառավի կամ Իլիկի վանքը, Հովանավանքը՝ դրանց հետ կապված ավանդություններով: Ըստ ավանդության՝ Քյուսաճղ գյուղից փոքր-ինչ բարձր լեռան լանջին կա մի փոքրիկ գմբեթազարդ եկեղեցի, որի մոտ՝ մի հասարակ գերեզման: Ըստ ավանդության՝ գերեզմանում թաղված է այն բարեպաշտ պառավը, որ իլիկ մանելով փող է վաստակել և այս վանքը կառուցել, որն էլ կոչվել է Պառավի կամ Իլիկի վանք: Վանք են այցելում հատկապես ջերմ հիվանդությամբ տառապողները, որոնք բժշկվում են:

Ս.Փլիոյանն իր վեպում անդրադարձել է նորբայազետցի երեխաների շրջանում տարածված մանկական խաղ – կատակերգերին, որից մի հատված ներկայացնում ենք ստորև.

- Տե՞րն ես,- հարցնում է մի երիտասարդ մյուսին.

- Տերն եմ,- պատասխանում է վերջինս:

- Կաժ տամ, բարակ մանես, թիակ տամ, դուռը քրթես, օխտը աման մի հետ չրթես, ասա, տե՞րն ես:

- Տերն եմ:

- Ընես հավեն, իջնես թավեն, չը պրծնես ատամացավեն, մահրում մնաս գինու գավեն, ասա՛, տե՞րն ես:

- Տերն եմ:

- Ցավ ու չոռի հիլլեն ուտես, ջոչ թվանքի գիլլեն ուտես, տեր Սահակի սիլեն ուտես, ասա՛, տե՞րն ես:

Վերջացնելուն պես առաջին հարց տվողը ապտակում է «տերն եմ» պատասխանողին, վերջինս անմիջապես վեր է կենում ու փախչում ներկաների ծիծաղի ուղեկցությամբ:

Նոր Բայազետի և նրա հարակից շրջանների ու գյուղերի բնակիչների հոգևոր և նյութական կյանքի մասին արժեքավոր տեղեկություններ են առկա Մեսրոպ

[1] Տե՛ս Տ.Նավասարդյան, Հայ ժողովրդական հեքիաթներ, գ.5, Տփխիս, 1889 էջ 79: Նյութը Նավասարդյանին է տրամադրել հինբայազետցի Յակ.Նազարյանցը:

արքեպիսկոպոս Սմբատյանցի «Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի, որ այժմ Նոր Բայազետի գավառ» գրական-պատմական աշխատությունում (1895թ.), որը պարունակում է պատմական, աշխարհագրական, հնագիտական, ազգագրական, վիմագրական հարուստ տեղեկություններ ոչ միայն Գեղարքունիքի, այլև հարևան գավառների վերաբերյալ:

Լինելով բարեկիրթ և ուսյալ հոգևորական՝ Սմբատյանցն իր պարտքն է համարել հայությանը ինչպես հոգևոր արժեքներ հաղորդել, այնպես էլ կորստից փրկել, պահպանել, վերականգնել հայկական եկեղեցական, կրթական, մշակութային հաստատությունները, ձեռագիր մատյանները, ընդօրինակել դարերի ընթացքում եղած, անտարբերության մատնված վիմագրերը և այլն: Եվ այս ամենին զուգընթաց նա գրի է առնում նաև տվյալ վայրերի ազգագրական և բանահյուսական նյութերը՝ ավանդությունը, ծեսերը, հավատալիքներ:

Աշխատության մեջ, խոսելով տարածաշրջանի ձեռագիր ու հին Ավետարանների, սուրբ մասունքների և դրանց հետ կապված հավատալիքների մասին, կանգ է առնում մի արծաթե ոսկեզօծ քառաթև խաչի վրա, որին տեղացի բնակիչները «Հազարափրկիչ» են անվանել, որ « հասարակաց տկարութեան, փորձութեան, նեղութեան, վշտի և ցասման և ամենայն Աստուածառաք պատուհասի ժամանակ հոգևորականք թափօրով շրջեցնում են գիւղօրայքը, որով և բարեպաշտ և սուրբ խաչին հաւատով և յուսով դիմող ժողովուրդը ստանում է բաւականութիւն և փառաւորում է Աստուծոյ անունը, որ այնպիսի հզօր պաշտպան է տուել իրեն»[1]: Այնուհետև բերում է մի ավանդություն, ըստ որի այդ հին խաչը մասն է այն կոնքի (լական), որի մեջ լվացել են Քրիստոսին մանկության ժամանակ, որը և բերել է Թադևոս Առաքյալը [2]:

Նոր Բայազետի և ընդհանրապես Հայաստանի տարածքում ամենից հաճախ հանդիպող ժողովրդական սրբավայրերն են Թուխ Մանուկները, որոնք իրենց նախնական ձևերով հիշատակում է Մ.արք. Սմբատյանցը և կանգ է առնում Նոր Բայազետ քաղաքի և Սբ. Կարապետ եկեղեցու մոտ գտնվող «Սպիտակ Մանուկ» անունով ուխտատեղիի վրա. « Յիրավի «Սպիտակ Մանուկ», որ առաջին անգամ է լսւում, ընդ որում մինչև ցայսօր լսածներս «Թուխ Մանուկ» էին: Մատուռի սպիտակության շնորքը տարածվել էր մատուռի մոտ բնակվող Բադէի Աղոյի որդիների վրա…, որոնց դեմքն ու մազերը այնքան սպիտակ էին, որ տեսնողը կարծում է ծերացած լինեն»[3]:

Սմբատյանցի աշխատության մեջ ընդգրկված են նորբայազետցիների կրոնական ծեսերն ու արարողությունները, որ կատարում էին ուխտավորները հատկապես կիրակի օրերին՝ ուղևորվելով Նորատուսի Սուրբ Նշան, Ղուլալիի Սուրբ Աստվածածին և Նոր Բայազետ քաղաքի Սուրբ Կարապետ վանքերը.

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 45:
[2] Նույն տեղում:
[3] Տե՛ս նշվ. աշխ., էջ 447:

«…անցնում են մէկը միւսի յետևից կանանց խումբեր, զարդարուած հարս ու աղջիկներ, հացն ու երեխէքը վերցրած՝ գնում են ուխտ Ղուլալուայ Աստուածածինը: Աւելի պարզն ասած, գնում են խեղճ կանայքը հարսն ու աղջիկները, երիտասարդներն ու տղայքը մի փոքր հանգիստ վայելելու, մի փոքր զբօսնելու, կանայք ոմանք իրէնց որդւոց նշանադրուած հարսանցուն տեսնելու և ուրախանալու: Վերջապէս երիտասարդները և հասած աղջիկները միմեանց տեսնելու, հաւանելու և առնելու… օրինուի Պայազցւոց սովորութիւնը»[1]:

Ավանդապաշտ կանայք իրենց սովորության համաձայն տղամարդկանց հետ սեղան չեն նստել: Մայրն անգամ իր հասակ առած որդու հետ հաց ուտելն անպատշաճ է համարել. «Մենք կնիկ արմատ ենք, որ տղամարդի պատիվը չճանաչենք, Աստուծուն էլ չենք ճանաչի. տղամարդը որ կայ՝ գլուխ ա, իսկ կնիկ արմատը՝ ոտ »[2]:

Խոսելով Նորատուս գյուղից վերև գտնվող հին գերեզմանատան խաչարձանների մասին, որոնք հեռվից նայողին հեծելազորքի խմբեր են հիշեցնում, մեջբերում է տեղական այն ավանդությունը, ըստ որի թշնամին փորձել է հարձակվել գյուղի վրա, սակայն հեռվից տեսնելով խաչարձանները՝ կարծել է, թե զորքեր են, ուստի թողել ու փախել է:

Այնուհետև նկարագրում է Նոր-Բայազետի հարսանեական արարողությունը՝ սկսած խնամախոսությունից, նշանդրեքից և այլն, վերջացրած բուն հարսանեկան հանդեսով, որտեղ ավելի տեսանելի են դառնում նոր բայազետցիների սովորությունները, բնավորությունը, լեզուն և, ինչպես հեղինակն է գրում, « չափաւորութիւնն»: Նկարագրված բոլոր ծեսերը բնականաբար զուգակցվել են տվյալ արարողությանը բնորոշ հատուկ կարճասույթ բանաձևերով (օրինանք- բարեմաղթություններ, բաժակաճառեր և այլն): Հեղինակը նկարագրել է նաև մանկական երկու ձեռնախաղի երգ և մեկ երգ՝ հայ նահապետական կյանքի սոցիալ – բարոյական խնդիրներից, այսինքն՝ ջերմ վերաբերմունքը տղա և բացասականը՝ աղջիկ երեխայի նկատմամբ: Ահա մի հատված.

Տղա՛յ, տղա՛յ ոսկէ ջղայ, Աղջի՛կ, աղջի՛կ, քարէ չղջիկ,

Ա՛ռ քո ճաներ, գնա՛ խաղա, Առ՛, քո տիկնիկ, գնա՛ խաղա,

Ալուր մաղեմ, գամ քէ պախեմ: Ալուր մաղեմ, գամ քէ թաղեմ:

Բացառիկ է նաև ականավոր ազգագրագետ, բանագետ ու հնագետ Երվանդ Լալայանի դերը Նոր Բայազետի ազգագրության և բանահյուսության կայացման և հետագա զարգացման գործում:

Լալայանն իր բազմահարուստ և բազմաբովանդակ գործունեությամբ և իր իսկ կողմից հիմնված «Ազգագրական հանդես» գրքերում և այլուր պատմական Հայաստանի մեծ մասի վերաբերյալ ազգագրական և բանահյուսական նյութերի հրատարակումով հիմք դրեց Հայաստանի պատմաազգագրական շրջանների

[1] Տե՛ս նշվ. աշխ., էջ 457:
[2] Տե՛ս նշվ. աշխ., էջ 456:

համալիր և բազմակողմանի տարածքային հետազոտության մեթոդին, որի արդյունքը նրա «Ջավախք», «Վարանդա», «Զանգեզուր», «Նոր Բայազետի գավառ» և այլ աշխատություններն են:

Ե. Լալայանի կողմից Բայազետից հավաքված մեծ քանակությամբ բանահյուսական, ազգագրական, ժողովրդագրական նյութերը՝ ժողովրդական վեպ, հեքիաթներ, ավանդություններ, հավատալիքներ, ծիսական երգեր, ժողովրդական բժշկություն, ժողովրդագիտական և տեղագրական բազմաթիվ այլ նյութեր տպագրված են «Ազգագրական հանդեսի» XIV – XVIII գրքերում:

Բանագետ – բանահավաքն իր գրառումներում մեկտեղել է ազգագրական և բանահյուսական նյութերը՝ քաջ գիտակցելով, որ դրանք մեկը մյուսի լրացումն ու ամբողջացումն են: Ուստի «Ազգագրական հանդեսի» վերոնշյալ գրքերի էջերում ընդգրկված են ոչ միայն ընտանեկան վարքուբարքի, ծեսերի, հավատալիքների, ժողովրդական բժշկության, նշանավոր տոների (Սբ. Սարգիս, Սբ. Կարապետ, Տեառնընդառաջ, Մեծ պահս) վերաբերյալ նյութեր, այլև բույսերի, կենդանիների, թռչունների, երկնային լուսատուների, բախտի, ճակատագրի, «գարի գցելու», «բալնիք դնելու», երազի, տեսիլքի ու թովչության վերաբերյալ հավատալիքների, ինչպես նաև երեխաների «պահապան հրեշտակների», «տաք հացի», «թոնրի շուրջ սավառնող բարի հրեշտակների», սրբերի մասին պատմվող ավանդազրույցներ:

Ժողովածուի XVI գրքում «Ընտանեկան բարք» խորագրի ներքո ընդգրկված են Նոր Բայազետի ներընտանեկան հարաբերությունների, հարսանյաց սովորությունների, վարքուբարքի վերաբերյալ վկայություններ, նախապաշարմունքներ, որոնք հիմնավորվում են ասութային բանահյուսության որոշ տեսակների՝ բարեմաղթանքների, աղոթք-խնդրանքների, անեծք – օրհնանք – երդումների, կենացների բանաձև - ընդհանրացումներով, ինչպես, օրինակ, աղջիկ ուզելիս խնամախոսը, երբ մոտենում էր աղջկա տան դռանը, կանգնում և ասում էր.

- Էկայ հա, աջ ոտքս եմ քցում:
- Բարով ես էկեր ես, Աստուած խերլի (շահաւէտ) անա,- պատասխանում էին աղջկա ծնողները՝ ներս հրավիրելով: Կամ երբ նշանդրեքին փեսացուն մատանին դնում էր հարսի աջ ձեռքի մատին, բոլորը ձայն էին տալիս. « Աստուած շնորհաւոր անէ, աչքներդ լուս լինի»: Հարսանիքի ժամանակ երկու մատռվակ հարսանիքի մասնակիցներին շարունակ օղի էին հրամցնում: Ամեն մեկը վերցնում էր բաժակը և բարեմաղթում. «Կենդանութիւն, Աստուած շնորհաւոր անի», ապա դիմում էին փեսացուի հորը. «(այսինչ) ջա՛ն, աչքներտ լուս ըլլնի, Աստուած միասին ծերացնի», փեսացուին «(այսինչ) ջա՛ն, բարով վայելեն», ապա կրկին դիմում էին բոլոր հարսանիքի մասնակիցներին. «Էս ուրախութիւնը ամէն հայ քրիստոնէի տանը կամենայ Աստուած»:

Կնոջ երկունքի ցավերը սկսվելիս տատմայրը նախ և առաջ սկսում էր աղոթել. «ս. Աստուածածին, քո ծնունդի, քո անարատ ծնունդի սատաղէն դու բարի

ազատութիւն տաս իմ տղոցկանին, կալած կապած բաղչէն բանաս՝ որդին մօրից բաժանես»:

Նոր ծնված երեխային լողացնելիս տատմայրը շարունակ աղոթել և բարեմաղթել է. «Քրիստոսի ական ջուրն հլնի, դրախտի ջուրն հլնի, ջրի ղայդի լի ապրես, աջողակ հլնես, ջանով հլնես» կամ « Լուռ արեգակ, դու էս էրեխին ղսմաթ տաս, հօրն ու մօրը սաղ ջան տաս» [1]:

Ե. Լալայանի գրառումներում տեղ են գտել նաև խնամիական – ազգակցական աստիճանակարգերը բնութագրող հետևյալ անվանումները. նորափեսա, նորահարս, քավոր, քավորի պըլընգ, ազապ – պաշի, խնամի, սկեսուր, սկեսրայր, տատմայր: Ուշագրավ է նաև որոշ ծեսերի, սովորությունների անվանաձևերի վկայակոչումները. բէշքերթմա, աղջկատես, խոսք առնել, խնամախոս, նշանդրեք, փեսախոսմ, հարսահանեք, փայ, ղալան կտրել, քավորի թամբա, տաշտադրեք, եզմորթեք, թագվոր նստել, խնամապաչ, գլուխ լվացել, ջհեզ և այլն:

Նոր Բայազետում մինչ օրս տարածված է «զոքանչի ձվածեղ» արտահայտությունը: Հարսի մայրը՝ զոքանչը, հարսնատես եկած փեսային հյուրասիրել է ձվածեղով, որի վրա մի քանի կաթիլ իր մեզից է սրսկել, որպեսզի փեսայի սերն իր հարսնացուի հանդեպ սաստկանա[2]: Այս նախապաշարման իմաստն ակնարկված է հետևյալ ժողովրդական երգում.

Փեսէն էկաւ տեղ արէք, Շռով ձուաձեղ արեք [3]:

Փեսացուի մայրն իր հերթին, որպեսզի ապահոված լինի որդու առնականությունը, մի կողպեք և մի դանակ է թաթախում եզան արյան մեջ և փակում: Կողպեքը փեսացուի մայրը պահում է իր մոտ և բաց է անում «թագվերացից» հետո, իսկ դանակը փեսացուն դնում է իր գրպանը և բաց անում առագաստի գիշերը, այլապես փեսացուի թշնամիները կարող էին պսակ գնալու ժամանակ մի կողպեք ու մի դանակ փակել և այդպիսով նորափեսային «կապ» գցել:

Ընդունված է եղել հարսնացուի տանից խուփ, շերեփ, գդալ և գաթա գողանալը, որպեսզի նորահարսը խուփի պես բերանը «խուփ»՝ անխոս լինի, շերեփի պես՝ բաժանարար, տնտես, գաթայի պես՝ «ղսմթավոր»[4]:

Հարսին առաջին անգամ ճաշ տալիս սկզբից մածուն են կերցրել, որ նա պարզերես դուրս գա:

Հայ նահապետական ընտանիքում տղա երեխայի (մանավանդ եթե առաջնեկն էր) ծնունդը մեծ ուրախություն էր, որովհետև «առջինեկը յառաւօտ է, կը լինի կխասնի խօր քոմակին», մինչդեռ «աղջիկը դըսի պատ ա», «աղջկայ ոտներն աւազան, գլոխը՝ գերեզման» պիտի լինի: Տղան կոչվում էր «վարդաշալակ», աղջիկը՝ «քաքաշալակ»: Եվ արու երեխային լողացնելիս կաթսայի մեջ մի քանի

[1] Նմանատիպ օրինակներ տե՛ս «Ազգագրական հանդես», գ. XVI, 1907, Թիֆլիս, էջ 9-65:
[2] Նույն տեղում:
[3] Նշվ. աշխ., էջ 14:
[4] Նշվ. աշխ., էջ 25:

թաս ջուր էին թողնում, որպեսզի հաջորդ երեխան ևս տղա լիներ, իսկ աղջկա դեպքում՝ բոլոր ջուրը թափում էին, որպեսզի «ինչպէս ջուրը կտրվում է, այնպես էլ աղջկայ քոքը կտրվի»[1]:

Նորբայազետցիների կենցաղում նշվում էին համահայկական ծիսահավատալիքային համակարգում հայտնի հետևյալ տոները՝ Նոր տարին, Ծնունդը, Համբարձումը, Ծաղկազարդը, Մեծ պասը, Սբ. Կարապետի պասը, Աթոռքի պասը, Վարդանի պասը (այս պասը հատկապես պահում էին հոդացավ ունեցողները՝ ս. Վարդանի վանքից բժշկություն հայցելու հույսով) և այլն:

«Ազգագրական հանդես»-ի XVII գրքում «Հավատք» խորագրի ներքո Ե.Լալայանն անդրադարձել է լեռների, քարերի, կրակի, ջրերի, շեմքի, կենդանիների, թռչունների պաշտամունքին: «Տարրերի և ֆիզիկական երևույթների պաշտամունք» ենթավերնագրի ներքո ընդգրկել է երկրի, արևի, լուսնի, աստղերի, ամպերի, որոտի, ծիածանի, երկրաշարժի մասնի ավանդազրույցները:

«Չար ոգիներ» ենթագլխում բանահավաքը գրում է Նոր Բայազետի և նրա հարակից գյուղերում (Ղուլալի, Նորատուս) գտնող այն տեղավայրերի (Տիկնածոր, Խազնի ձոր, «Սարա ղայա» բլուր) մասին, որոնք հայտնի են իբրև սատանաների բնակարաններ, և ներկայացնում է բազմաթիվ ավանդազրույցներ թե՛ սատանաների, թե՛ սատանա բռնող կանանց մասին: Եվ խոսելով սատանաների չար և «թարս» բնավորությունների ու կերպարների մասին եղած ժողովրդական ընկալումներից՝ մեջբերում է խոսակցության ժամանակ գործածվող հետևյալ դարձվածքները. «Սատանից օխտ օր յառէջ ա հելէ», «Փորը լիքը սատանայ ա», այսինքն՝ խորամանկ է, «Սատանա նալող ա» և այլն[2]:

Այս նույն ենթագլխում գրում է նաև նորածիններին հափշտակող ջաջերի և ախոռի գաբուզ կոչվող չար ոգիների ու ողջ ձմեռ մարդկանց բնակարաններում բնակվող շվոտների, «գրողի գզիր» դարձած պառաված կանանց և առանց եկեղեցական ծիսակատարության թաղված մեռելների՝ գոռնադաքերի (իմա՛ գոռնափշտիկ) մասին՝ հիմնավորելով համապատասխան ավանդազրույցներով [3]:

«Կախարդություն» ենթավերնագիրը ամփոփում է «Հավաճմայություն», «Կենդանիների և մարդկանց միջոցով գուշակության», «Մարդու բնազդական շարժումների միջոցով գուշակություն» (օր. երբ երեսը այրվում է, ասում են, թե իրեն բամբասում են կամ երբ քիթը քոր է գալիս՝ հյուր է գալու, երբ երեխան անընդհատ լաց է լինում, նշանակում է մի դժբախտություն է պատահելու, ուստի մայրը խփում է նրա գլխին՝ ասելով. «Ուտա քո գլոխ»), «Անշունչ առարկաների միջոցով գուշակության», «Եղունգ յիշկելու», «Մոմ թափելու», «Թիզ չափելու», «Մաղ պտտեցնելու», «Լայլուղ յիշկելու», «Դև կապելու», «Բթիկ անելու» և այլնի վերաբերյալ հավատալիքներ:

---

[1] Նշվ. աշխ., էջ 9-65:
[2]. «Ազգագրական հանդես». գիրք XVIII, Թիֆլիս, 1909, էջ 107:
[3]. Տես Նշվ. աշխ., էջ 108:

«Սնոտիապաշտություն» ենթաբաժնում Լալայանը ներկայացրել է ավանդական կյանքին ներհատուկ ծեսեր, հավատալիքներ և չափածո աղոթքներ:

Ուշագրավ է թոնիր վառելու, հաց թխելու ժամանակ կատարվող հետևյալ սովորույթը. «Երբ թոնիրը լավ չի վառվում, տանտիկինները ակից շորով քամի են տալիս, «բորբում են» ասելով.

Չը՛խ, չը՛խ, չը՛խ, Աղ բարձէք,
Մուխը բռնէք, Չը՛խ, չը՛խ, չը՛խ:

Երբ հացառը (ռաֆաթա) առաջին անգամ խփում են թոնրին, ասում են.

Թազա – խաց – խացի հրեշտակներ, Դուք իմդադ (օգնական) հլնէք,
Չարը բարին դարձնեք: («ԱՀ»,121)

Երբ հացը թոնրի մեջ «տժտժում» է, հացթուխը ասում է.

Խէր, խէր,
Խացին հեժնութեն,
Մահին թանգութեն,
Իմ խօրն ու մօրը
Արքայութեն: («Ա.Հ.»,121)

Հաց թխելու ավարտին գրտնակողը գրտնակը համբուրում, դնում է գլխին, իսկ հացթուխը խաչակնքում է հացառն ու թոնիրը՝ ասելով.

Հաց խացի խրիշտակներ,
Պաղ սուփրայ, տաք թունդրի,
Արդար եզան վաստակ,
Բարեխօս հլնէք Աստծուն.
Աշխարքին խէր խաղաղութեն տաք,
Աղքատ խօքուս օղորմանանք: («Ա.Հ», 121)

Այսպիսով, Նոր Բայազետի և նրա շրջակա գյուղերից գրառված նյութերը, որոնք ընդգրկված են «Ազգագրական հանդեսի» XIV – XVIII գրքերում, մինչ օրս չեն կորցրել իրենց արդիականությունն ու կարևորությունը և պատմամշակութային բացառիկ արժեք են ներկայացնում հայ բանագիտության ասպարեզում:

Նոր Բայազետի շրջանից բանահյուսական և ազգագրական նյութերի գրառումը նոր թափ է ստանում 20-րդ դարի 70-80-ական թթ: Գեդեոն Միքայելյանի և Ռոզա Գրիգորյանի համառ ու տևական ջանքերի շնորհիվ գրի են առնվում մեծ քանակությամբ բանահյուսական և ազգագրական նյութեր (հեքիաթներ, զրույցներ, ավանդություններ, զվարճախոսություններ, խաղիկներ,

առած – ասացվածքներ, ազգագրական, ծիսական երգեր և այլն), որոնք լույս են տեսնում «Հայ ազգագրություն և բանահյուսություն» մատենաշարի 11-րդ և 14-րդ հատորներում՝ «Նոր Բայազետ» և «Գեղարքունիք» խորագրով:

Գեդեոն Միքայելյանի «Նոր Բայազետ» ժողովածուում ընդգրկված են հրաշապատում, կենցաղային հեքիաթներ, որոնք հիմնականում հայտնի հեքիաթների նորբայազետյան տարբերակներն են, ընդհանուր զրույցներ, իրապատում զրույցներ, որոնց մի մասն ունի ընդհանուր հայկական բնավորություն, մի մասն էլ զուտ տեղական ծագում ունի և ստեղծված է Նոր Բայազետում ապրող այս կամ այն անձի շուրջ:

Ժողովածուում զետեղված են սիրային, զինվորի և հայրենասիրական թեմաներով բազմաթիվ երգեր, մանկական խաղերգեր: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում ենոքների ու խաչատուրների մասին հորինված կատակերգերը:

Ներկայացված են նաև տեղական բնույթի ավանդություններ (4 միավոր), բազմաթիվ առածներ, ասացվածքներ, անեծք – օրհնանքներ, դարձվածքներ:

«Ազգագրություն» բաժնում ներկայացված են տեղական խաղեր, ժողովրդական հավատալիքներ և բժշկություն:

Ռոզա Գրիգորյանի «Գեղարքունիք» ժողովածուն ընդգրկում է հարուստ բանահյուսական և ազգագրական նյութեր՝ գրառված Սևանի ավազանի շրջաններից՝ Սևան, Կամո (նախկին Նոր Բայազետ, այժմ՝ Գավառ), Մարտունի, Վարդենիս:

Ժողովածուի «Վիպական բանահյուսություն» բաժնում ներկայացված են Կամոյի շրջանից գրառված կենցաղային, իրապատում զրույցներ, մանկապատում զվարճախոսություններ (18 միավոր): Առանձին շարքով ներկայացված են ինչպես հայտնի զվարճախոս, բայազետցի Գառզոյի Արամի մասին անեկդոտներ, այնպես էլ բայազետցի հայտնի վաճառական, բարերար Կոլոտ Հայրապետի մասին զրույցներ: «Բանաձևեր» բաժնում զետեղված են բազմաթիվ առածներ, անեծքներ, օրհնանքներ, հմայական աղոթքներ:

1970-ական թվականներին Սարգիս Հարությունյանի կազմակերպած բանահավաքչական գործունեության շնորհիվ գրի է առնվում «Սասնա ծռեր» ժողովրդական վեպի 81 նոր տարբերակ, որոնցից չորսը գրառվում են Նոր Բայազետից [1]:

Այսօր՝ գիտության և տեխնիկայի զարգացման դարաշրջանում, կորստյան վտանգի առաջ են կանգնած ժողովրդական բանարվեստի նմուշներն ու պատառիկները, իսկ ավանդական բանահյուսությունն իր ժանրային համակարգով (վեպ, հեքիաթ, երգ և այլն) աստիճանաբար զիջում է ավելի փոքրածավալ տեսակներին՝ անեկդոտ – զվարճախոսություններին, ավանդական զրույցներին և ասույթներին, մինչդեռ սիրող բանահավաքները, կորստյան վտանգից փրկում են հոգևոր մշակույթի ոչ նյութական հուշարձանները: Համայնքապետարանների և

[1]. Տե՛ս «Սասնա ծռեր», հատ. Գ, պատ. ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԴ, Երևան, 1979:

տեղացիների աջակցությամբ հրատարակվում են Գեղարքունիքի մարզի տեղավայրերի մասին առանձին գրքեր (Քյավառ, Նորատուս, Սարուխան, Արծվաքար, Կարմիրգյուղ, Մարտունի, Լիճք, Վաղաշեն և այլն), որոնցում առավել կամ պակաս չափով ներկայացված են տվյալ բնակավայրերի բանահյուսական և ազգագրական նյութեր:

Բանալի բառեր՝ *բանահյուսություն, ազգագրություն, բանագետ, բանահավաք, նորբայազետցի, պատմամշակութային, ավանդազրույց, պատմահնագիտական, գավառ, ասույթ*:

Օգտագործած գրականության ցանկ

1. Ազգագրական հանդես, XIV գիրք, Թիֆլիս, 1906:
2.Ազգագրական հանդես, XVI գիրք, Թիֆլիս, 1907:
3.Ազգագրական հանդես, XVII գիրք, Թիֆլիս, 1908:
4.Ազգագրական հանդես, XVIII գիրք, Թիֆլիս, 1909:
5.Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 11, Գ.Միքայելյան, Նոր Բայազետ, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1980:
6.Հայ ազգագրություն և բանահյուսություն, հ. 14, Ռ.Գրիգորյան, Գեղարքունիք,Երևան,ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1983:
7.Հայ ժողովրդական ավանդություններ, Տիգրանայ Նավասարդեանց, I գիրք, Թիֆլիս, 1883:
8.Նավասարդյան Տ., Հայ ժողովրդական հեքիաթներ, գ. 5, Տփխիս, 1889:
9.Սասնա ծռեր, աշխատասիրությամբ՝ Ս.Հարությունյան, Ա.Սահակյան, հ. Գ,ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երևան, 1979:
10.Սմբատյան Մ.արքեպ., Տեղագիր Գեղարքունի Ծովազարդ գավառի, որ այժմ Նոր Բայազետի գավառ, Վաղարշապատ, 1895:
11.Փիլոյան Ս., Կորած մարգարիտ, Թիֆլիս, 1888:

ETHNOGRAPHIC AND FOLKLORE CULTURE OF NOR BAYAZET IN THE RECORDS OF FOLKLORISTS

L. KH. GHREJYAN
PHD in Philology, Associate Professor,
GSU lecturer

The last quarter of the 19th century of the history of Armenian social life was marked by unprecedented interest to the spiritual and material culture of the people. National rite and custom, the epic poem and the fairy tale, as well as games were regarded as national axiological original manifestations and evidence and as the most important factors of self-affirmation and self-preservation of the nation. The books by T. Navasardyan: "Traditions of the Armenian people," vol. 1 and "Armenian folk tales" vol.5

contain rich and reliable material on ethnography and folklore of the inhabitants of Nor Bayazet. There is valuable information about the spiritual and material life of Nor Bayazet in literary and historical works published by S. Piloyan and Archbishop M.Smbatyants.

E. Lalayan paid special attention to Gavar from a demographic standpoint, folklore and ethnographic heritage of which is of exceptional historical and cultural value. Folklore collections had a new impulse in the 60-80s of the 20th century, the results of which are summarized in the 11th and 14th volumes of the Armenian Ethnography and Folklore series. This movement is still ongoing by folklore fans, and by us as well.

ФОЛЬКЛОРНАЯ ЭТНОГРАФИЧЕСКАЯ КУЛЬТУРА НОР-БАЯЗЕТА В ЗАПИСЯХ ФОЛЬКЛОРИСТОВ

Л. Х. КРЕДЖЯН
Кандидат филологических наук, доцент
Преподаватель ГГУ

В истории армянской общественной мысли последняя четверть 19 века была отмечена невиданным ранее всплеском большого интереса к духовной и материальной культуре народа. Народные обряды и обычаи, эпос и сказка, игры рассматривались как аксиологические национально-самобытные проявления и свидетельства, как важнейшие факторы самоутверждения и самосохранения нации. Богатый и достоверный материал об этнографии и фольклоре жителей Нор-Баязета содержится в книгах Т. Навасардяна “Традиции армянского народа” т.1 и “Армянские народные сказки” т.5. Ценные сведения о духовной и материальной жизни Нор-Баязета содержатся в литературно-исторических трудах, опубликованных С. Пилояном и архиепископом М.Смбатянцем. С демографической точки зрения Гавар был удостоен особого внимания Е.Лалаяна, чье фольклорное и этнографическое наследие представляет собой исключительную историко-культурную ценность. Собирание фольклора получило новый толчок в 60-80-е годы 20 века, результаты которого обобщаются в 11 и 14 томах обозрения Армянская этнография и фольклор. Это дело продолжается до сих пор как со стороны любителей фольклористов, так и с нашей.

ԱՐԱԲԵՐԵՆԻՑ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԺՇԿԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԵՐԸ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ «ՋԵՐՄԱՆՑ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆ» ԵՐԿՈՒՄ

Ն.Վ.ՊԱՐՈՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դասախոս
nairaparonyan@ysu.am

Միջնադարյան գիտական մատենագրության մեջ իրենց բովանդակությամբ և լեզվական իրողություններով աչքի են ընկնում հատկապես բժշկագիտական աշխատությունները[1]: Դրանք հիմնականում կրում են արաբական գիտության ազդեցությունը: Հայ բժիշկները, արաբական բժշկության նվաճումներն օգտագործելով, չեն դառնում կրկնօրինակողներ, այլ ստեղծում են ինքնատիպ երկեր, որոնց մեջ առանձնանում է հատկապես Մխիթար Հերացու ‹‹Ջերմանց մխիթարութիւն›› աշխատությունը: Մխիթար Հերացին ծնվել է 12-րդ դարի առաջին քառորդում պատմական Մեծ Հայքի Պարսկահայք նահանգի Հեր քաղաքում (այժմ՝ Խոյ): Նրա բժշկական, մանկավարժական և գիտական գործունեությունն ընթացել է Կիլիկիայում: Հերացին հաճախ մեկնել է հեռավոր երկրներ՝ հիվանդություններ ու բուժման եղանակներ ուսումնասիրելու, դեղաբույսեր և այլ դեղամիջոցներ որոնելու: 12-րդ դարի 60-ական թվականներին ստեղծել է մի շարք արժեքավոր գործեր, որոնց մեծ մասը հայ ժողովրդի ողբերգական ճակատագրի բերումով կորստի է մատնվել: Իր ստեղծած ծանրակշիռ գիտական աշխատությունների համար էլ ժամանակակիցների կողմից արժանացել է ‹‹Մեծ բժշկապետ››, ‹‹Իմաստուն բժիշկ››, ‹‹Մեծ Մխիթար›› կոչումներին[2]:

12-րդ դարի 80-ական թվականներին ձեռնամուխ է եղել գլխավոր գործի՝ ‹‹Ջերմանց մխիթարութիւն›› գրքի շարադրմանը, որի համար երկար տարիներ նյութեր է հավաքել՝ ոչ միայն ուսումնասիրելով հույն ու արաբ բժիշկների աշխատությունները, այլև շրջելով Դաշտային Կիլիկիայի ճահճոտ վայրերն ու բուժելով այդտեղ տարածված դողէրոցքը և այլ տենդային հիվանդություններ: ‹‹Ջերմանց մխիթարութիւն›› ինքնատիպ գիտական երկը նվիրված է ‹‹ջերմերի››, այսինքն՝ սուր վարակիչ հիվանդությունների ուսումնասիրությանը: Աշխատության մեջ արտացոլված է տենդային հիվանդությունների հարուցիչ գործոնի խոր գիտական ըմբռնումը ‹‹Մեծ բժշկապետի›› կողմից, որի արդյունքը եղավ ինքնատիպ մի տեսություն՝ այսպես կոչված ‹‹բորբոսի›› գաղափարը: Հերացին իրավացիորեն նկատում է, որ բորբոսը սկզբում կուտակվում է օրգանիզմի որևէ տեղում, և երբ բորբոսանքը քանակապես աճում է ու վերափոխվում նոր որակի, իրենից ար-

[1] Տե՛ս Ռ. Ս. Ղազարյան, Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981, էջ 213:
[2] Տե՛ս Կծոյան Ս. Ս., Մխիթար Հերացի, Երևան, Բժիշկ XII դարու,Ծննդյան 850-ամյակի առթիվ,Երևան,1968,էջ 3-12:

ձակում է օրգանիզմի համար օտար տաքություն՝ հիմք դառնալով հիվանդության առաջացման համար: Սա նոր տեսություն էր վարակի էության վերաբերյալ, որը զարգացավ հետագայում՝ եվրոպական վերածննդի դարաշրջանում:[1]

Մխիթար Հերացին իր բժշկարանը շարադրել է միջին հայերենով. ‹‹Եւ արարի զսա գեղջուկ և արձակ բարբառով, զի դիւրահաս լիցի ամեն ընթերցողաց››[2]: Այսպես, սուր վարակիչ հիվանդությունների առաջացումը քննարկելիս բազմակողմանիորեն ներկայացնում է մարդու օրգանիզմի վրա բացասաբար ազդող արտաքին միջավայրի գործոնների նշանակությունը՝ երկրի աշխարհագրական դիրքը, կլիմայական պայմանները (ցուրտը, քամիները, տաքությունը, խոնավությունը), սննդամթերքի ու ջրի որակը, աշխատանքի բնույթը, ինչպես նաև հիվանդի տարիքը, խառնվածքը, սովորությունները, մարմնի ուժն ու կառուցվածքը, հոգեկան ապրումները և այլն: Հերացին մշակել էր բուժման մի այնպիսի ամբողջական համակարգ, որը հիմնված էր դեղային բուժման, մասնավորապես բուսաբուժության, ինչպես նաև սննդաբուժման, ֆիզիկական և հոգեկան բուժման վրա: Դեղաբուժության մեջ Հերացին առաջնային տեղը տալիս էր բուսաբուժությանը՝ ելնելով ինչպես հայկական բժշկության, այնպես էլ Արևելքի զարգացած երկրների դարավոր փորձից: Ուստի պատահական չէ, որ ‹‹Ջերմանց մխիթարութիւն›› երկում գործածված են մեծ թվով բուսանուններ, որոնց մի մասը փոխառված է այլ լեզուներից, մասնավորապես արաբերենից, պարսկերենից ու հունարենից: Այդ լեզուներին տիրապետելու և դրանցով ստեղծված գրականությանը ծանոթ լինելու մասին երկի առաջաբանում վկայում է ինքը՝ Հերացին. ‹‹Ես… ի մանկութենէ սիրող եղէ իմաստութեան եւ բժշկական արուեստից եւ վարժեցայ ի դպրութիւն արաբացւոց եւ պարսից, եւ հելենացւոց, տեսի յընթերցումն, որ առ նոսա գրոցն, զի ունէին զարուեստ բժշկութեան լի եւ կատարեալ ըստ առաջին իմաստնոցն… ››[3]: Հերացին չի սահմանափակվել փոխառյալ բառերի ու եզրերի սոսկ արձանագրումով, այլև փորձել է տալ դրանց համապատասխան թարգմանությունները կամ հայերեն անվանումների օտար համարժեքները: Այսպես, օրինակ, ‹‹Զայս ջերմս անուանէ հոռոմն ըկտիկօն, զոր տաճիկն դրկ, որ թարգմանի հալևմաշ›› (35): ‹‹…Եւ ապա ասեմք զտէտռատէօսն՝ որ է երկու օր ընդ մէջ ջերմն›› (56): ‹‹Ա՛ռ … փառիս աւուշան՝ որ է ձարխոտ›› (52): ‹‹Ա՛ռ … և բօրակ՝ զոր նիտրօն ասեն›› (54): ‹‹Ա՛ռ ափիոն և կակիկայ , որ է աղի ծաղիկ›› (74): ‹‹Ա՛ռ… և կերակուր լաբլաբ, որ է պատատուկ›› (117): Արաբական գիտությունը, միջնադարում հասնելով էական բարձունքների, մեծ դեր է կատարել հայ գիտական մտքի զարգացման գործում: Միջին հայերենի փոխառությունների մեծագույն մասը կազմում են հենց արաբերեն բառերը: Հաճախ հնարավոր չէ ճշգրիտ որոշել մի ամբողջ շարք բառերի փոխառության անմիջական աղբյուրը,

[1] Տե՛ս Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000, էջ 93-101:
[2] Տե՛ս Մխիթարայ բժշկապետի Հերացւոյ, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832, էջ 2:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 1:

այսինքն՝ տվյալ բառը ուղղակիորեն արաբերենից կամ պարսկերենից, թե՞ այդ լեզուներից որևէ մեկի միջնորդությամբ է հայերենին անցել: Այն բառերը, որոնք պարսկերենում և արաբերենում ունեն համարժեքներ, ինչպես նաև միջին հայերենում չեն դրսևորվում տառադարձության տարբեր արտահայտություններով, մենք համարել ենք արաբական փոխառություններ՝ նկատի ունենալով արաբական գիտության այն մեծ ազդեցությունը, որ կար ‹‹Ջերմանց մխիթարութիւն›› երկը ստեղծելու ժամանակաշրջանում: Այդ բառերը թվով 5-ն են՝ ըսթար < istar, թութիայ < tūtiiyā, թուխմայ < tuxma, լատան < lādan, շաֆ < šaf: Մխիթար Հերացու նշված երկում արաբական փոխառությունները թվով ամենաշատն են՝ 164 բառ (270-ից) , որը կազմում է վկայված փոխառությունների շուրջ 60 %-ը: Դրանցից մենք կքննենք բժշկագիտությանը վերաբերող բառերը: Հերացին խնդրո առարկա երկում գործածել է մեծ թվով արաբերենից փոխառված բժշկագիտական բառեր, որոնք ոչ միայն տարբեր հիվանդություններ նշանակող, այլև կազմախոսության և դեղագործության բնագավառներին առնչվող անվանումներ են:

ա) Հիվանդություններ (թվով՝ 20):

դեկ (4) ‹‹հյուծող տենդ›› < diqq (ՄՀԲ, էջ 164),

զուգամ (29) ‹‹հարբուխ›› < zukām (ՄՀԲ, էջ 209),

թաշանուճ (12) ‹‹հյուսվածքի կամ մարմնի որևէ մասի կծկում, ստնգանք›› < tāšanuj (ՄՀԲ, էջ 2),

թուխմայ (25) ‹‹ստամոքսի խցանում›› < tuxma (ՄՀԲ, էջ 250),

խումրայ (72) ‹‹մաշկային սուր բորբոքային հիվանդություն. Կարմիր քամի›› < humra (ՄՀԲ, էջ 333),

կոլինջ (148) ‹‹որովայնի սուր ցավ›› < ğulinj (ՄՀԲ, էջ 379),

հումայի մուհրիղայ (6) ‹‹այրող ջերմ, տենդ›› < humma al-muhriqa (ՄՀԲ, էջ 437),

հումմայի եաիմիայ (7) ‹‹միօրյա ջերմ›› < humma al-yaumiya (ՄՀԲ, էջ 437),

հարսանիթէ (79) ‹‹կարմրուկ›› < harasān (ՄՀԲ, էջ 415),

ղպնայիպայ (97) ‹‹եռօրյա օրընդմեջ ջերմ›› < ğəblazima (ՄՀԲ, էջ 464),

նոպայ (4) ‹‹հիվանդագին պրոցեսի հանկարծակի սրացում›› < nauba (ՄՀԲ, էջ 578),

նուզլայ (29) ‹‹հարբուխ›› < nazla (ՄՀԲ, էջ 577),

շահմի (32) ‹‹ճարպային ուռուցք›› < šahmi (ՄՀԲ, էջ 589),

շատրալ ըղբ (109) // շատր ալ ղիպ ‹‹ընդմիջվող ջերմ›› < šatr al-ğob (ՄՀԲ, էջ 590),

շաւսայ (54) ‹‹լանջամիզի բորբոքում›› < šausa (ՄՀԲ, էջ 592),

սավտայի (4) ‹‹սիրուց խելագարված›› < sevdayi (ՄՀԲ, էջ 688),

սարաթան (113) ‹‹քաղցկեղ›› < saratān (ՄՀԲ, էջ 689),

սիլ (43) ‹‹թոքախտ›› < sill (ՄՀԲ, էջ 699),

սքթայ (8) ‹‹ուղեղի կաթված›› < sakta (ՄՀԲ, էջ 723):

բ) Կազմախոսություն (թվով՝ 2):

կիֆալ (30) ‹‹երակ, որից արյուն են առնում, կեֆալիկ երակ›› < qīfāl (ՄՀԲ, էջ 375),

սափն (133) ‹‹սաֆեն երակ›› < sāfn (ՄՀԲ, էջ 692):

գ) Դեղագործություն (թվով՝ 22):

ակրաբադին (84) // ախրապատին ‹‹դեղագիրք›› < aqrābadīn (ՄՀԲ, էջ 21),

այարիճ (89) ‹‹բաղադրյալ դեղ›› < āyārij (ՄՀԲ, էջ 41),

ափիոն // աֆիոն (29) ‹‹ափիոն›› < afiyūn (ՄՀԲ, էջ 101),

եարիճփեկրայ (118) ‹‹մի տեսակ դեղախյուս›› < ayarij-fiqra (ՄՀԲ, էջ 178),

թրպութ (32) ‹‹ուժեղ ներգործող լուծողական›› < turbud (ՄՀԲ, էջ 254),

իսվիտաճ (45) // սպիտաճ ‹‹սպիտակադեղ›› < isbidaj (ՄՀԲ, էջ 716),

կուրս (7) // ղուրս ‹‹գնդիկաձև դեղահատ,պաստիլ›› < qurs (ՄՀԲ, էջ 464),

հապ (32) ‹‹հաբ, դեղահատ›› < habb (ՄՀԲ, էջ 409),

ճուարիշ (85) ‹‹խյուս›› < juvāriš (ՄՀԲ, էջ 478),

մաճուն (19) ‹‹դեղախյուս›› < mājun (ՄՀԲ, էջ 489),

մտպուխ (32) ‹‹եփուկ, խաշուկ›› < matbūx (ՄՀԲ, էջ 540),

մորհամ (75) ‹‹քսուք, ծեփոն, սպեղանի›› < marham (ՄՀԲ, էջ 528),

նուկրայ (148) ‹‹դեղորայք եփելու աման›› < nuqra (ՄՀԲ, էջ 578),

նուսխա (44) ‹‹դեղատոմս›› < nusxa (ՄՀԲ, էջ 578),

սուք (96) ‹‹պատրաստուկ›› < sūk (ՄՀԲ, էջ 714),

սղուտ (120) ‹‹քիթը քաշելու դեղամիջոց›› < su’ūt (ՄՀԲ, էջ 706),

սփուփ (150) ‹‹դեղափոշի›› < sufūf (ՄՀԲ, էջ 722),

տապաշիր (7) ‹‹հնդկեղեգի մոխիրը՝ թրջած և գնդաձև չորացրած›› < tābašir (ՄՀԲ, էջ 748),

տլէ (72) ‹‹կակղացուցիչ դեղամիջոց, սպեղանի›› < ṭala (ՄՀԲ, էջ 761),

տիմէտ (96) ‹‹ջերմախյուս, տաք ծեփելիք›› < dimād (ՄՀԲ, էջ 759),

շիպ[1] (6) ‹‹շիբ›› < šabb (Աճ, ՀԱԲ, 3, 542),

շարապ (20) ‹‹օշարակ›› < šarāb (ՄՀԲ, էջ590):

Մխիթար Հերացին իր բժշկարանում գործածել է արաբերեն այլ բառանուններ, որոնք վերաբերում են ընդհանուր բժշկագիտությանը: Այդ կարգի բառերից են.

բուխար (68) ‹‹գոլորշի›› < buxar (ՄՀԲ, էջ 125),

բուրհան (1) // բուհրան ‹‹ճգնաժամ›› < buhrān (ՄՀԲ, էջ 125),

թպտիր (23) // թտպիր ‹‹բուժում›› < tedbir (ՄՀԲ, էջ 253),

խլտ (48) ‹‹հեղահյութ›› < xld (ՄՀԲ, էջ 322),

կարուրայ (1) ‹‹միզաման›› < qārūrā (ՄՀԲ, էջ 367),

հոկնա (3) ‹‹հոգնա, կլիզմա›› < hoqna (ՄՀԲ, էջ 433),

մաճաս (11) ‹‹զարկ, պուլս›› < majassa (ՄՀԲ, էջ 489),

---

[1] ‹‹Շիպ›› բառը՝ որպես միջինհայերենյան փոխառություն, վկայված չէ ՄՀԲ-ում, իսկ ՆՀԲ-ում բացակայում է գւռ. նշումը, սակայն Ռ. Ղազարյանը իր ‹‹Միջին գրական հայերենի բառապաշար››-ում այն համարում է միջինհայերենյան փոխառություն (էջ 103):

մուփառեհ (19) // մուֆառեհ ‹‹1. ա. կազդուրիչ, 2. գ. կազդուրիչ դեղամիջոց›› < mūffarreh (ՄՀԲ, էջ 536),
շառոտել // շառտել (73) ‹‹կտրվածք անել›› < šart ‹‹նշտար›› (ՄՀբ, էջ588),
պալղամ (3) // պլղամ ‹‹լորձ, մաղձ›› < balğam (ՄՀԲ, էջ 656),
սփրայ (90) ‹‹դեղին մաղձ›› < safrā (ՄՀԲ, էջ 693),
փատլայ (13) ‹‹մարմնի մեջ մնացած ավելորդ, անպետք նյութերը›› < fadla (ՄՀԲ, էջ 782):

Ինչպես նկատում ենք, Մխիթար Հերացին տենդեր է առանձնացրել՝ միօրյա տենդ(հումմայի եաիմիայ), եռօրյա օրընդմեջ ջերմ(ղպնայիպայ), ընդմիջվող ջերմ(շատրալ ըղբ), այրող ջերմ(հումայի մուհրիղայ), հյուծող տենդ(դեկ): Հարբուխի համար երկու տարբեր բառ է գործածում՝ զուգամ, նուզլայ, որոնք հոմանիշ են և անցել են պարսկերենին:

Այսպիսով, արաբերենից փոխառյալ բժշկական բառ-եզրերը թվով 56-ն են: Ըստ բառարաններում եղած վկայությունների՝ դրանք առաջին անգամ հանդիպում են ‹‹Ջերմանց մխիթարություն›› երկում: Այդ բառերից ընդամենը 8-ը գործածված չեն հետագա մատենագրության մեջ՝ այարիճ, դեկ // դըկ, եարիճփեկրայ, հումայի մուհրիղայ, հումմայի եաւմիայ, շաւսայ, սղուտ, փատլայ: Պետք է նշենք նաև, որ բժշկարանում գործածված շուրջ հինգ տասնյակ արաբերեն բժշկագիտական բառ-եզրերից միայն հատուկենտ բառեր են վերապրել ժամանակակից գրական հայերենում՝ հապ (հաբ), հոկնայ // հուկնայ (հոգնա), նոպայ // նոպէ (նոպա), շիպ (շիբ)[1]:

Բանալի բառեր՝ *բժշկագիտություն, արաբերենից փոխառյալ բժշկագիտական բառ-եզրեր, դեղագործություն, ջերմեր, հիվանդություններ, կազմախոսություն:*

Օգտագործված գրականություն

1. Աղայան Էդ., Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Երևան, 1976:
2. Կծոյան Ս. Ս., Մխիթար Հերացի, Բժիշկ XII դարու, Ծննդյան 850-ամյակի առթիվ, Երևան, 1968:
3. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ., Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:
4. Մխիթարայ Բժշկապետի Հերացւոյ, Ջերմանց մխիթարութիւն, Վենետիկ, 1832:
5. Վարդանյան Ս., Հայաստանի բժշկության պատմություն, Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը, Երևան, 2000:

[1] Տե՛ս Էդ. Աղայան,Արդի հայերենի բացատրական բառարան, հ. 1-2, Երևան, 1976:

THE MEDICAL ENTRIES BORROWED FROM ARABIC IN "JERMANTS MKHITARUTYUN" WORK BY MKHITAR HERATSI

N. V. PARONYAN
PHD in Philology, YSU lecturer of the Chair of Armenian History

"Jermants Mkhitarutyun" work reflects the scientific perception of the initiating agent of febrile diseases by "The Great Head Doctor" which brought about a unique theory, the so-called "the concept of mold". Heratsi used a great deal of medical words borrowed from Arabic in the work in question. Such words are not only the names denoting various diseases but also the names associated with anatomy and pharmaceutical spheres, in particular: Dek "Exhausting fever", Zugam "Influenza", Tukhmay "Stomach obstruction", Humayi Muhrighay "Burning temperature, fever", Hummayi Eaimiay "One-day fever", Saratan "Cancer", Sil "Tuberculosis", Morham "Ointment, wax, plaster", Nuskha "Prescription", Matchas "Pulsation", Hokna "enema" etc.

Mkhitar Heratsi distinguished the following types of fever: one-day fever (Hummayi Eaimiay), three-day uninterrupted temperature (Dpnayipay), interrupted temperature (Shatral Yghb), Burning temperature (Humayi Muhrighay), Exhausting Fever (Dek). Two different words are used for influenza – Zugam, Nuzlay which are synonyms and assimilated in Persian.

Therefore, there are 56 medical entries borrowed from Arabic. According to the dictionaries, they are encountered in "Jermants Mkhitarutyun" work for the first time.

ЗАИМСТВОВАННЫЕ ИЗ АРАБСКОГО ЯЗЫКА МЕДИЦИНСКИЕ ТЕРМИНЫ В СОЧИНЕНИИ МХИТАРА ГЕРАЦИ «ДЖЕРМАНЦ МХИТАРУТЮН» (УТЕШЕНИЕ ПРИ ЛИХОРАДКАХ)

Н. В. ПАРОНЯН
Кандидат филологических наук,
ассистент кафедры "История армянского языка",
преподаватель ЕГУ

В сочинении «Джерманц Мхитарутюн» "Великий врач" отражает научное восприятие возбудителя лихорадочных заболеваний, результатом которого стало уникальное учение о так называемом «плесневом» факторе. Гераци в сочинении применил множество заимствованных из арабского языка медицинских слов, которые являются не только наименованиями со значением разных болезней, а также относятся к анатомической и фармацевтической отрасли: дек "изнуряющая

лихорадка”, зугам “насморк”, тухмай “закупорка желудка”, гумаи мугригай “сжигающий жар, лихорадка”, гуммаи епимиай “однодневный жар”, саратан “рак”, сил “чахотка”, мургам “мазь, порошок, бальзам”, нусха “рецепт”, мачас “удар, пуль”, окна “клизма” и.т.д.

Мхитар Гераци делит лихорадку на следующие виды: однодневный жар (гуммаи епимиай), трехдневный жар (каждый третий день) (кпнаипсай) прерывающийся жар (шатрал ихб), сжигающий жар (гумаи мугрикай), изнуряющий жар (дек). Для насморка он использует два разных слова – зугам, нуглай, которые являются синонимами и перешли в персидский язык. Таким образом, заимствованных из арабского медицинских терминов всего 56. Согласно сведениям в словарях они впервые встречаются в сочинении “Джерманц мхитарутюн”.

ԱԼԻՍ ՄՈՆՐՈՅԻ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՊԱՏՈՒՄԸ (ՆԱՐԱՏԻՎԸ)ԿԱՆԱԴԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Լ. Ա. ՀԱՅԹՅԱՆ
ԵՊՀ դասախոս

Քսաներորդ դարում գրականությունը մարդու համար ոչ միայն գեղագիտական և հետաքրքիր պատմություններ ընթերցելու հնարավորություն ստեղծեց, այլ այն բացեց մի լայն հորիզոն՝ հոգեբանական տարրերով լեցուն: Դարի հեղինակներն սկսեցին արտահայտել այն ամենը, ինչ զգում ու ապրում են ֆիզիկական, հոգեկան և հոգեբանական ասպեկտներում: Աշխարհի տարբեր մասերում գրականության ջատագովները սկսեցին առաջ մղել իրենց սեփական ներաշխարհի խնդիրները՝ դարձնելով այդ ամենը համամարդկային հարթության վրա միավորելի երևույթ: Գրականությունն առաջինն էր, որ փորձեց իր ուսերին կրել աշխարհաքաղաքական խնդիրներն ու ներկայացնել դրանք մարդկությանը: Ստեղծագործող հեղինակները ոչ միայն ներկայացնում են մարդկությանը հուզող խնդիրները, այլ նաև փորձում են գտնել դրանց հստակ լուծումները: Կանադական գրականությունը նույնպես զերծ չի մնում համամարդկային մի շարք խնդիրները բովանդակալից ներկայացնելուց:

20-րդ դարի սկզբներին կանադական գրականության զարգացումը պայմանավորված է այն հանգամանքով, որ առավելապես մեծացան մարդկության դեմ ծառացած խնդիրները, սանձազերծվեցին պատերազմներ, աղետալի երևույթներ և ոչ մարդկային վերաբերմունքի դրսևորումներ: Այս ամենն հարուցեցին մի շարք հոգեկան և հոգեբանական խնդիրներ, որոնք էլ դարձան շատ ու շատ ստեղծագործությունների ուսումնասիրությունների թեմաները:

Ալիս Մոնրոն (1931) ժամանակակից կանադացի պատմվածագիր է, ով 2013 թ. արժանացել է Նոբելյան մրցանակի՝ ժամանակակից պատմվածքների վարպետության համար: Նա առաջին կանադացի գրողն է, ինչպես նաև 13-րդ կին հեղինակը, ով արժանացել է Նոբելյան մրցանակի: Նրա ստեղծագործությունները բնութագրվում են որպես հեղաշրջված կառուցվածքայնություն ունեցող պատմվածքներ, որոնցում խախտված է ժամանակի բնականոն ընթացակարգը: Նրա ստեղծագործություններն առավել պատմում են, քան հայտարարում, և առավել բացահայտում են, քան ցուցադրում[1]: Վերջինիս պատմվածքները պարզաբանում և ցույց են տալիս մարդկային զգացողությունների բարդություններն ու դրանց արտահայտումը տարբեր հասարակություններում և տարբեր գիտակցական մակարդակներում:

Կանադական գրականության մեջ գրեթե յուրաքանչյուր հեղինակ պարտադիր անդրադառնում է Կանադայի աշխարհագրական դիրքին և նրա գեղեցիկ

[1] New,W. H., Messenger, W. E., Literature in English, Prentice Hall, 1992, P. 1006

բնությանը: Ա.Մոնրոն յուրահատուկ գեղեցկությամբ է ներկայացնում բնության պատկերները, որոնք իր կերտած հետաքրքիր կերպարների հետ ստեղծում են հիասքանչ պատկերավորում, որը հասկանալու համար ոչ միայն կարդալ է պետք, այլ ունկնդրել և պատկերացնել: Նրա պատմվածքներում զարմանալիորեն կենսունակ են բոլոր կերպարներն ու երևույթները: Նրա գրեթե բոլոր պատմվածքների հիմքը մարդու հոգեբանական էության ուսումնասիրությունն է, քանի որ Մոնրոն առաջին հերթին գնահատում է զգացմունքային ճշմարտացիությունը, այն հոգեվիճակները, իրավիճակներն ու սոցիալական պայմանները, որոնք պայմանավորում են մարդկանց վարքն ու գիտակցական դրսևորումը: Իր ստեղծագործություններում նա, անշուշտ, խոսում է սիրո և ատելության մասին, ինչպես նաև պատկերում նրանց, ովքեր աշխարհ են բերում այդ երկու երևույթները, որոնք էլ ծնում են աշխարհում առկա մյուս երևույթները[1]:

Ա. Մոնրոն երբեմն իր պատմությունները սկսում է աննշան նոտայով, թվացյալ իդեալական կյանքով ապրող հերոսների նկարագրությամբ, սակայն շուտով պարզ է դառնում, որ ամեն բան չէ, որ իդեալական է, և միգուցե այդ հիասքանչ տեսարանի խորքում հոգեպես և ֆիզիկապես ոչ առողջ մարդիկ են, ովքեր, չնայած իրենց առջև ծառացած խնդիրներին, այնուամենայնիվ, կարող են ինչ-որ բան փոխել: Նա հոգեբանական մանրամասնությամբ և հստակությամբ է ճանաչում խոցելի խմբերին՝ երեխաներին, ծերերին, ամուսնալուծված և չսիրված կանանց: Նրա նկարագրություններն ու զգացմունքային արտահայտումներն այնքան պատկերավոր են , որ թվում է, թե այդ ամենը նա հենց ինքն է զգում կամ էլ հենց այդ պահին ընթերցողը: Հենց այդ է պատճառը, որ Ալիս Մոնրոն գրեթե միշտ առանձնանում է կանադական գրականության մեջ. «Ոչ ոք չի կարող նկարագրել կանացի սրտի գաղտնիքներն այնպես, ինչպես դա անում է Ալիս Մոնրոն, և նա այդ ամենն անում է առանց որևէ չափազանցված զգացմունքայնության, այլ որոշակի պարզությամբ»[2]:

Ա. Մոնրոն իր ստեղծագործություններում ընդգծում է հոգեբանական ասպեկտը, որտեղ դիտարկվում են կնոջ հոգեկան ներաշխարհն ու նրա ապրումները: Նա փորձում է մանրակրկիտ նկարագրել կնոջ յուրաքանչյուր արարք և զգացողություն: Հեղինակի ֆեմինիստական գաղափարները արտահայտված են զուտ կնոջը՝ որպես անհատի, առանձին ինքնության և արժանապատվության տեր անձի ներկայացնելու մեջ, ով նույնպես կարող է լինել խելացի, հաջողակ, վստահ և ինքնուրույն: Այստեղ հեղինակն ընդգծում է մարդկանց՝ միմյանց հանդեպ պատասխանատվության գաղափարը: Հավանաբար Մոնրոն նաև ջանացել է նկարագրել շատ տղամարդկանց իդեալական աշխարհը, որտեղ իրենք են իշխում և ունեն բացարձակ տնօրինելու իրավունք, իսկ կինն, ավաղ, պարզապես մի հեզ,

[1] Howells, Coral, A., Private and Fictional Words: Canadian Women Novelists of the 1970s and 1980s, London, 1987, P. 88

[2] Gittings, C. E., Constructing a Scots-Canadian Ground: Family history and cultural translation in Alice Munro, Newberry, 1997, P. 27

խոնարհ ու համաձայնող էակ է: Այս պատմվածքներում հստակ ընդգծվում են, որ կանայք չեն կարող մրցել տղամարդկանց հետ՝ ցույց տալով իրենց բարձր ինտելեկտը: Ըստ հեղինակի՝ սա վախկոտների և թույլերի իդեալական աշխարհ է, որտեղ այդ աշխարհի տիրակալները չեն ընդունում կնոջ ինտելեկտն ու խելամտությունը: Խնդիրը ոչ միայն կանանց մեջ է, այլ տղամարդկանց, քանի որ նրանց ոչինչ չի մնում անել, քան ինքնահաստատվելու կանանց հաշվին: Ահա հենց այս երևույթներն են, որոնք արտացոլված են Մոնրոյի խորը հոգեբանական ստեղծագործություններում: Առհասարակ Մոնրոյի բոլոր ստեղծագործությունների հիմքում ընկած է առօրյա սրընթաց կյանքից ու բազմաթիվ ճգնաժամերից խուսափելու, մարդկանց կյանքում հրաշքներին մի փոքր տեղ ազատելու ձգտումը:

Ինչպես վերը նշեցինք, Մոնրոյի պատմվածքներում լավագույնս արտացոլվում են անձի ոչ միայն հոգեկան ներաշխարհի դրսևորումները, այլ նաև ինքնության և էթնիկ մտածողության գաղափարները: Եթե շատ գաղթականներ ընդունում են նոր մշակույթը, նոր կենսակերպը, պարզապես պատկանելության զգացում ձեռք բերելու, նաև սոցիալապես ամրապնդվելու համար, ապա Մոնրոյի հերոսները, ովքեր գտնվում են անվերջ փնտրտուքների մեջ, վերամշակում են այդ նորը և հարմարեցնում հնի հետ՝ ներկան միահյուսելով անցյալին:

Մոնրոյի «Ատելություն, ընկերություն, սիրատածում, սեր, ամուսնություն» պատմվածքների ժողովածուն համարվում է նրա լավագույն աշխատանքներից մեկը, որի յուրաքանչյուր էջում արտացոլված է հեղինակի՝ առօրյա կյանքը հոգեկան և ֆիզիկական ներդաշնակության մեջ ներկայացնելու տաղանդը: Հեղինակն այս գրքում ջանում է ցույց տալ, թե իրականում որքան հետաքրքիր և արտասովոր կարող է լինել կյանքը (թեև բազմաթիվ խնդիրներով լի), եթե մարդիկ կտրվեն իրենց առօրյա հոգսերից և փորձեն տեսնել իրենց շրջապատող բնությունը, որը երևի միակ կենդանի և շնչող երևույթն է, որը մշտապես նրանց շրջապատում է: Մոնրոյի բոլոր ստեղծագործություններում մշտապես փառաբանվում է բնությունն ու բնական երևույթները, քննադատվում նյութապաշտ աշխարհը: Հեղինակն իր գրվածքների միջոցով անընդհատ ջանում է հիշեցնել, որ նյութական աշխարհից զատ առավել կարևոր է մարդու հոգեկան աշխարհը[1]:

Ա. Մոնրոն իր պատմվածքներում ներկայացնում է հրաշալի սիրո և սրտի անսահման ցանկության բնական մի վիճակ, երբ ընթերցողը կարծես զգում է հերոսների սերն ու ցանկությունը, ընթերցողի մոտ առաջանում է հերոսին ճիշտ ուղին հուշելու միտքը: Սա նշանակում է, որ հեղինակին հաջողվել է ընթերցողին տեղափոխել այդ իրականություն: Մոնրոն առավել զարգացնում է ոչ միայն սիրային, այլ առավել իրական և արծարծուն թեմաներ, որոնք առկա են ներկա դարում. կանանց բռնություն, մարդու իրավունքների ոտնահարում և տարատեսակ հիվանդությունների տարածում:

[1] Steele, A., Tener, J. F., *The Alice Munro Papers: Second Accession,* University of Calgary Press, 1987, P. 44

20-րդ դարում կործանման եզրին էր հայտնվել անգամ մարդու կենսաբանական էությունը, որն ի սկզբանե կոչված էր արժևորելու կյանքի գույներով հարուստ ճշմարիտը, բարին և գեղեցիկը: Դարի հասարակությունը մոռացել էր իր երկդիմի էության այդ մեծարժեք կողմի գոյությունը և տրվել մարդու սոցիալական բնույթից ծնունդ առնող անբարո քաղաքակրթությանը: Հենց այդ էր պատճառը, որ անհրաժեշտություն առաջացավ խոսելու և ներկայացնելու բոլոր առկա խնդիրներն ու զգացողությունները, որոնք ցույց կտային իրականության աներկբա խոչընդոտներն ու արհավիրքները, որոնք, ցավոք, տեղի են ունենում հենց մեր աշխարհում:

Հետարդիական ժամանակաշրջանում պատերազմական սարսափներ տեսած հասարակության համար անհրաժեշտ էին ոգևորվածության, չարի նկատմամբ բարու հաղթանակի վերարժևորման, գիտատեխնիկական նվաճումներին համարժեք նոր մոտեցումներ, որոնք էլ նպաստեցին կանադական գրականության զարգացմանն ու համաշխարհային գրականության մեջ հստակ դեր ունենալուն:

Բանալի բառեր՝ *Ալիս Մոնրո, կանադական գրականություն, պատմվածք, հոգեբանական նարատիվ, ֆիզիկական ու հոգեբանական ասպեկտներ:*

THE PSYCHOLOGICAL NARRATIVE OF ALICE MONROE IN THE CONTEXT OF CANADIAN LITERATURE

L. A. HAYTYAN
Lecturer of Yerevan State University

The present article is devoted to the presentation and analysis of the Canadian Literature, which is evaluated in the context of the development of this literature and which is observed with the help of examination of Canadian Nobel Prize winner Alice Monroe's psychological narrative.

ПСИХОЛОГИЧЕСКИЙ НАРРАТИВ АЛИС МОНРО В КОНТЕКСТЕ КАНАДСКОЙ ЛИТЕРАТУРЫ

Л. А. АЙТЯН
Преподаватель Ереванского государственного университета

Статья посвящена представлению и анализу канадской литературы, который производится посредством рассмотрения литературной эволюции, а также изучения психологического нарратива лауреата Нобелевской премии Алис Монро.

ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԱՇՏԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԽՆԴԻՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՀԱՄԱՑԱՆՑԱՅԻՆ ԼՐԱՏՎԱՄԻՋՈՑՆԵՐՈՒՄ

Ի. Վ. ՄԱՐՏԻՆՅԱՆ
ԵՊՀ Ժուռնալիստիկայի ֆակուլտետի մամուլի տեսության և պատմության ամբիոնի ասպիրանտ

Լրատվամիջոցների ամենակարևոր առանձնահատկություններից մեկը ինտերակտիվությունն է: համացանցային լրատվամիջոցներում այն արտահայտվում է մեկնաբանությունների դաշտի առկայությամբ, երբ, օրինակ, ընթերցողները կարող են մուտքագրելով իրենց էլեկտրոնային հասցեն կամ պարզապես սոցիալական ցանցի էջով նյութի տակ թողնել մեկնաբանություններ: Ու եթե տպագիր մամուլի դեպքում ընթերցողների արձագանքը տեղ հասնելու համար կարող են օրեր պահանջվել, ապա համացանցային լրատվամիջոցների դեպքում այս ամենը վայրկյանների հարց է. նյութը տեղադրում ես, և րոպեներ անց հայտնվում են մեկնաբանությունները:

Հայկական լրատվական կայքերի մի մասը չունի մեկնաբանությունների դաշտ՝ այդպես խուսափելով իրավական խնդիրներից եւ քաշքշուկներից, որոշներն էլ կարգավորում են իրենց մեկնաբանությունների դաշտը, այսինքն՝ սահմանել են խաղի կանոններ, որոնցից դուրս մեկնաբանությունները չեն հաստատվում մոդերատորի կողմից: «Հարգելի այցելուներ, այստեղ դուք կարող եք տեղադրել ձեր կարծիքը տվյալ նյութի վերաբերյալ՝ օգտագործելուվ Facebook-ի ձեր account-ը: Խնդրում ենք լինել կոռեկտ եւ հետևել մեր պարզ կանոներին. արգելվում է տեղադրել թեմային չվերաբերող մեկնաբանություններ, գովազդային նյութեր, վիրավորանքներ եւ հայհոյանքներ: Խմբագրությունն իրավունք է վերապահում ջնջել մեկնաբանությունները՝ նշված կանոնները խախտելու դեպքում»,-ասված է «Մեդիամաքսի» կայքում[1]:

Կայքեր կան, որտեղ մեկնաբանությունների դաշտը բաց է, ով ինչ ուզում, գրում է, և եթե ժամանակին չտեսնել մեկնաբանությունները, ապա կարող են հայհոյանքներ և վիրավորանքներ գրել ֆորումին մասնակցողները: Հաճախ լինում են դեպքեր, երբ լրագրողները հայտնվում են «պատերազմի» մեջ ոչ թե նյութի, այլ նյութի ներքևում արված մեկնաբանությունների պատճառով: Վատ մեկնաբանություններից ապահովագրված չեն ինչպես տվյալ նյութի հերոսը, այնպես էլ լրագրողներն ու խմբագիրները: Օրինակ՝ շատ լրատվամիջոցներ սկզբունք են որդեգրել. մեկնաբանությունների դաշտից ջնջում են միայն հայհոյանքներն ու վիրավորանքները, մյուս «վատ» խոսքերը, բարոյախրատական ճառերը՝ հաճախ լրագրողներին եւ լրատվամիջոցներին ուղղված, բաց են եւ տեսանելի բոլորի համար:

[1] http://www.mediamax.am/am/

ՄԻԵԴ նախադեպային որոշումը եւ Հայաստանում ձեռնարկված քայլերը: Համացանցային լրատվամիջոցներում տեղադրված նյութի տակ հայտնված մեկնաբանության համար լրատվամիջոցը կարող է հայտնվել դատարանում ու խիստ պատժի արժանանալ: Հայաստանում նման նախադեպ կարող էր լինել. 2011 թվականին ընթերցողների մեկնաբանությունների համար «Հրապարակ» օրաթերթին դատի տվեց փաստաբան Արթուր Գրիգորյանը. փաստաբանը լրատվամիջոցից 18 միլիոն դրամ էր պահանջում՝ որպես վիրավորանքի եւ զրպարտության փոխհատուցում, դատարանը մերժեց՝ այն համարելով անհիմն:

Մեկնաբանությունների դաշտի իրավական կարգավորման առումով շրջադարձային եղավ ՄԻԵԴ որոշումը Delfi-ն ընդդեմ Էստոնիայի (Delfi AS v. Estonia) գործով[1]:

2006 թվականի հունվարին էստոնական Դելֆի լրատվական պորտալը լաստանավային ընկերություններից մեկի մասին նյութ էր գրել, որի տակ ընթերցողները վիրավորական մեկնաբանություններ էին թողել: Կայքը հրապարակումից 6 շաբաթ անց՝ 2006 թվականի մարտին, ընկերության իրավաբանի խնդրանքով հեռացրել էր վիրավորական մեկնաբանությունները: Սակայն լաստանավային ընկերությունը 2006 թվականի ապրիլին դիմել էր դատարան: Էստոնիայի դատարանը որոշել էր, որ մեկնաբանությունները զրպարտչական էին, եւ Դելֆին պատասխանատվություն է կրում դրանց համար՝ լրատվամիջոցից գանձելով 320 եվրո հօգուտ հայցվորի:

Էստոնիայի դատարանը գտել էր, որ Դելֆիի դերը՝ որպես տեղեկատվական հանրությանը ծառայություն մատուցող, զուտ տեխնիկական, պասիվ եւ չեզոք չէ, եւ որ պորտալը վերահսկողություն է իրականացնում մեկնաբանությունների հրապարակման համար:

Դելֆին դիմել էր Մարդու իրավունքների եվրոպական դատարան (ՄԻԵԴ): Դատարանը, քննելով գործը, որոշել է, որ ներպետական դատարանի վճիռը արդարացի է և համաչափ, քանի որ մեկնաբանությունները ծայրահեղ վիրավորական էին, իսկ պորտալը չէր կարողացել կանխել դրանց հանրային դառնալը, օգուտ էր ստացել դրանց գոյությունից եւ թույլ էր տվել դրանց հեղինակներին մնալ անանուն: Եվրոպական դատարանը որոշեց, որ քոմենթները հեռացնելու պարտականությունը լրատվամիջոցի համար ծագել էր ոչ թե ծանուցումը ստանալու պահից, այլ այն պահից, երբ ընկերությունը տեղյակ էր դարձել դրանց գոյության մասին: ՄԻԵԴ-ն իր որոշման մեջ նշեց, որ համացանցում ազատ արտահայտվելու իրավունքի իրականացման համար խիստ կարևոր է անանուն մնալու և իրենց ինքնությունը չբացահայտելու հնարավորություն տալ օգտատերերին, սակայն համացանցի զարգացումը, նաև հավանականությունը (իսկ որոշ դեպքերում նաև վտանգը), որ համացանցում մեկ անգամ հրապարակայնորեն տարածված խոսքը

[1] http://www.media.am/Delfi-vs-Estonia-ruling-by-ECHR-impact-on-Armenian-media

կարող է ընդմիշտ մնալ որպես այդպիսին և անդադար տարածվել, պահանջում է զգոնություն ցուցաբերել:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մեծ պալատը վերահաստատել է Դելֆին ընդդեմ Էստոնիայի գործով որոշումը[1], համաձայն որի՝ լրատվամիջոցը պատասխանատվություն է կրում իր կայքում ընթերցողների թողած վիրավորական և զրպարտչական մեկնաբանությունների համար: Դելֆիի գործը նախադեպային նշանակություն ունի կայքերի համար, որտեղ ընդունված է հրապարակել ընթերցողների մեկնաբանությունները: Ամենակարևոր նկատառումն այն է, որ ՄԻԵԴ-ը սահմանել էր, որ օգտատերերի անթույլատրելի մեկնաբանությունները՝ քոմենթները (օրինակ՝ ատելության խոսք կամ բռնության կոչ պարունակող) հեռացնելու պարտականությունը լրատվամիջոցի համար ծագում է ոչ թե ծանուցում ստանալու, այլ այն պահից, երբ ընկերությունը տեղեկանում է դրանց գոյության մասին:

Այս որոշումից հետո թե՛ միջազգային, թե՛ տեղական լրատվամիջոցներում փորձագետները, իրավաբանները, խմբագիրները սկսեցին քննարկումներ, թե ինչ հետևանքներ կարող է ունենալ այս գործը: ԵԱՀԿ Մամուլի ազատության հարցերով ներկայացուցիչ Դունյա Միյատովիչը մտահոգություն էր հայտնել[2], որ ՄԻԵԴ-ի որոշումը կարող է բացասական ազդեցություն ունենալ խոսքի և մեդիայի ազատության վրա: «Տվյալ գործով ՄԻԵԴ-ի որոշումը չպետք է մասնակից երկրների կողմից օգտագործվի որպես թույլտվություն՝ ներկայացնելու պատասխանատվության ենթարկման անորոշ կարգավորումներ, որոնք կարող են սահմանափակել համացանցում առցանց (օնլայն) մեդիայի խոսքի ազատությունը: Այն նաև չպետք է օգտագործվի համացանցում բաց քննարկումները եւ գաղափարների տարածումը սահմանափակելու նպատակով»,- ասել է նա: Դունյա Միյատովիչն ասել է, որ պետք է պահպանել և պաշտպանել համացանցում մեդիայի ազատությունը անհարկի միջամտությունից և ավելորդ կարգավորումներից՝ մեդիայի ինքնասահմանափակումներից և բացասական ազդեցությունից խուսափելու համար:

Հայաստանյան խմբագիրները ևս լուրջ մտահոգություն հայտնեցին՝ նշելով, որ այս նախադեպը կանաչ լույս կվառի դատարանների համար լրատվամիջոցների դեմ որոշումներ կայացնելու գործում: Հայաստանյան խմբագիրները կարծում են, որ վիրավորական մեկնաբանությունները տեսնելուց հետո տվյալ լրատվամիջոցին դիմելով և մեկնաբանությունները հեռացնելով կարելի է հարցը լուծել, ոչ թե դատարան դիմել:

ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմինն էլ 2015թ մշակել և ընդունել է առաջարկություններ Հայաստանի այն լրատվամիջոցների համար, որոնք իրենց

[1] http://hudoc.echr.coe.int/eng?i=001-155105
[2] http://www.osce.org/fom/164836

ընթերցողներին հրապարակումների մեկնաբանությունների՝ քոմենթների հնարավորություն են տալիս: Դրանք են.

1. նկատի ունենալ, որ խմբագրություններն այլ հեղինակների մեկնաբանությունների համար պատասխանատվությունից ազատվում են միայն այն դեպքում, եթե կարող են հիմնավորել, որ տեղյակ չեն եղել և օբյեկտիվորեն չէին կարող տեղյակ լինել նման գրառումների առկայության մասին,

2. թեպետ ՄԻԵԴ-ի որոշումը մեկնաբանությունների մոդերացիա չի պարտադրում, այնուհանդերձ, խորհուրդ ենք տալիս հնարավորության դեպքում մոդերացնել դրանց հրապարակումը՝ հետևելով, որ մեկնաբանությունների սյունակներում չհայտնվեն ակնհայտ ատելության խոսք, բռնություն եւ օրենքով արգելված այլ գործողություններ քարոզող, ակնհայտ վիրավորանք պարունակող գրառումներ,

3. եթե, այնուամենայնիվ, հայտնվում են նման գրառումներ, ապա հայտնաբերելու դեպքում ավելի նպատակահարմար է դրանք որքան հնարավոր է արագ հեռացնել, քան ձևականորեն սպասել և ծանուցում ստանալուց հետո միայն հեռացնել,

4. եթե լրատվամիջոցը մեկնաբանություններում չի նկատել ակնհայտ ատելության խոսք, բռնության կոչ կամ ակնհայտ վիրավորանք պարունակող գրությունները, սակայն անձը, որի հասցեին եղել են դրանք, այդ մասին ծանուցել է խմբագրությանը, ապա խորհուրդ ենք տալիս ծանուցումից հետո ողջամիտ ժամկետում հեռացնել նման մեկնաբանությունները[1]:

ՄԻԵԴ-ի որոշումից հետո փորձեցին կանոնակարգում մտցնել նաև հայաստանյան օրենսդրության մեջ: ԱԺ պատգամավորներ Արփինե Հովհաննիսյանը, Դավիթ Հարությունյանը, Էդմոն Մարուքյանը, Նաիրա Զոհրաբյանը, Էլինար Վարդանյանը, Թևան Պողոսյանը, Արմեն Ռուստամյանը, Ստեփան Դեմիրճյանը, Գագիկ Ջհանգիրյանը և Հեղինե Բիշարյանը հանդես եկան նոր նախաձեռնությամբ, ըստ որի՝ պետք է պատասխանատվության ենթարկել լրատվամիջոցներին՝ հրապարակումների տակ ընթերցողների թողած վիրավորական և զրպարտչական բնույթի մեկնաբանությունները չհեռացնելու համար: Պատգամավորների հեղինակած օրինագիծը նախատեսում էր փոփոխություններ Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում, այն ստացել է ««Ֆեյքերի» մասին օրինագիծ» անվանումը[2]:

Օրինագծի նախնական տարբերակով առաջարկվում էր սոցիալական ցանցերի անհայտ օգտատերերի գրառումները հրապարակող լրատվամիջոցներին ենթարկել պատասխանատվության, եթե որևէ անձ այդ նյութերում իր համար վիրավորական կամ զրպարտչական բնույթի արտահայտություն է գտնում, 12 ժամվա ընթացքում այն հեռացնելու և հեղինակի նույնականացման տվյալները բացա-

[1] http://ypc.am/wp-content/uploads/2015/09/Guidelines_Delfi-AS-v.-Estonia-ECHR-Judgment_arm.pdf
[2] http://www.parliamentmonitoring.am/news/265.html#.WCQlUtJ97cs

հայտելու պահանջով դիմում է լրատվամիջոցին, բայց վերջինս չի կատարում այդ պահանջը:

Այս օրինագիծը վատ ընդունվեց մեդիափորձագետների և խմբագիրների կողմից, նրանք այս ամենի մեջ խոսքի ազատությունը սահմանափակելու, լրատվադաշտը վերահսկելու, գրաքննություն մտցնելու միտում տեսան: Արձագանքը չուշացավ. 9 լրագրողական կազմակերպություններ հայտարարություն տարածեցին՝ կոչ անելով չընդունել օրինագիծը:

«ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում փոփոխություններ կատարելու՝ ՀՀ Ազգային ժողովի մի խումբ պատգամավորների օրենսդրական նախաձեռնությունը, որը կոչված է հակազդելու այսպես կոչված «ֆեյք հաշիվներին» (անանուն, կեղծ օգտատերերին), ԶԼՄ-ների և համացանցի ակտիվ օգտատերերի շրջանում լուրջ մտահոգություն է առաջացրել: Մեր համոզմամբ՝ այդ նախաձեռնությունը ոչ այնքան լուծում է իրական հիմնախնդիրները, որքան նորերն է ստեղծում: Կոնֆլիկտային այն իրավիճակների գերակշիռ մասը, որոնց կարգավորմանը նպաստելուն են կոչված վերոնշյալ օրենսդրական փոփոխությունները, կարող են լուծում գտնել ինչպես գործող օրենսդրության, դատական նախադեպերի, ՀՀ վճռաբեկ դատարանի համապատասխան մեկնաբանությունների շրջանակներում, այնպես էլ սոցիալական ցանցերում առկա բողոքարկման մեխանիզմներով: Միևնույն ժամանակ, այս օրենսդրական նախաձեռնությունն իր մեջ խոսքի ազատության, տեղեկատվություն ստանալու և տարածելու՝ քաղաքացիների իրավունքի իրացման, ինչպես նաև անձնական տվյալների պաշտպանության համար սպառնալիքներ է պարունակում: Այն ի զորու չի լինելու էական ազդեցություն գործել զրպարտություն, վիրավորանք, մասնավոր կյանքի միջամտություն պարունակող տեղեկատվական հոսքերի վրա: Դրա հետ մեկտեղ, օրենքի փոփոխությունները կկաշկանդեն տեղեկատվական գործընթացների բարեխիղճ մասնակիցներին, համացանցի հայաստանյան օգտատերերին կստիպեն «արտագաղթել» վիրտուալ տիրույթի՝ ազգային իրավազորության ենթակայությունից դուրս սեգմենտներ, պայմաններ կստեղծեն օրենքների ընտրողական կիրառման և քաղաքացիներին սուբյեկտիվ դրդապատճառներով պատասխանատվության ենթարկելու համար: Թեև օրինագիծը սոցիալական ցանցերի օգտատերերի վարքի կարգավորման հարցում որոշակի կոնկրետացում է մտցնում, սակայն դրա հնարավոր դրական ազդեցությունն անհամաչափ է այն վտանգների հետ, որն օրինագիծը պարունակում է ոչ միայն խոսքի ազատության համար, այլ նաև՝ Հայաստանում հաղորդակցական տեխնոլոգիաների, հոսթինգային ծառայությունների, ազգային դոմեյնային տիրույթի զարգացման, ժամանակակից բիզնեսի առավել դինամիկ ուղղություններից՝ էլեկտրոնային կոմերցիայի ոլորտներում ձեռնարկատիրության զարգացման համար: Կոչ ենք անում.

- օրենսդրական նախաձեռնության հեղինակներին՝ օրինագիծը հանել շրջանառությունից,

- ՀՀ Ազգային ժողովին՝ մարտի 31-ին նախատեսված խորհրդարանական լսումները նվիրել համացանցի կարգավորման հայեցակարգային մոտեցումներին, քանզի առանց դրանց՝ օրենսդրական առանձին նախաձեռնություններ չեն կարող արդյունավետ լինել,

- ՀՀ օրենսդիր և գործադիր իշխանություններին՝ ժամանակակից հաղորդակցությունների ոլորտին առնչվող օրենսդրությունը ձևավորել բացառապես եվրոպական ինստիտուտների կողմից մշակված և ընդունված նորմերի համատեքստում և դրանց հետ լիակատար համապատասխանությամբ,

- բոլոր շահագրգիռ անձանց և կազմակերպություններին՝ գիտակցել տեղեկատվական ասպարեզում ինքնակարգավորման կարևորությունը և իրենց ներդրումն ունենալ Հայաստանում դրա մեխանիզմների զարգացման գործում:

Քննադատություններից հետո հեղինակները նախագծում փոփոխություններ կատարեցին և սոցցանցերում անհայտ օգտատիրոջ փոխարեն ամրագրեցին «տեղեկատվության աղբյուր» արտահայտությունը: Բայց միևնույն է, այն իր մեջ կրկին կարող է ներառել նույն «ֆեյքերի» գրառումներն ու անգամ լրատվամիջոցում հրապարակված նյութի տակ թողնված մեկնաբանությունները: «Հրապարակային էլեկտրոնային կայքի իրավատիրոջ կողմից վիրավորանք կամ զրպարտություն պարունակող մեկնաբանությունը հեռացնելու վերաբերյալ պահանջը չկատարելու դեպքում տուժողը իրավունք ունի դատական կարգով հրապարակային էլեկտրոնային կայքի իրավատիրոջից պահանջել հետևյալ միջոցներից մեկը կամ մի քանիսը՝ հրապարակային ներողություն խնդրել, հեռացնել վիրավորանք կամ զրպարտություն պարունակող մեկնաբանությունը և վճարել վիրավորանքի կամ զրպարտության սույն հոդվածով նախատեսված չափի փոխհատուցում՝ անկախ մեկնաբանության հեղինակին պահանջ ներկայացնելու հանգամանքից»,- նշված է նախագծի մեկ այլ դրույթում: Նախագծի հեղինակներն իրենց առաջարկությունը հիմնավորում են լրատվական ոլորտը կարգավորող օրենսդրությունն ավելի հստակեցնելու անհրաժեշտությամբ, մինչդեռ ընդդիմախոսները կարծում են, որ գործող օրենսդրությունն ամբողջությամբ կարգավորում է ոլորտը, և նոր նախագիծ ներկայացնելու կարիք չկա: Նախագծի հեղինակները վկայակոչում են Ֆրանսիայի, Անգլիայի, ԱՄՆ-ի, Իտալիայի փորձը, ընդդիմախոսները հակադարձում են, թե աշխարհին այդ ուղղությամբ առաջին քայլերն է անում, և պետք է սպասել ու տեսնել, թե դրանք ինչ արդյունքի կբերեն:

«Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպությունը ևս խիստ անհանգստացած էր Հայաստանի խորհրդարանում քննարկվող, Քաղաքացիական օրենսգրքի 1087.1 հոդվածում փոփոխություններ ենթադրող օրինագծով:«Թեև խորհրդարանականների նշած նպատակը գովելի է, սակայն այս օրինագիծը լուրջ վտանգներ է պարունակում Հայաստանում առցանց տեղեկատվության ազատության նկատմամբ: Օրինագծի անհստակ և տարընթերցումների տեղիք տվող ձևակերպումները դատավորներին ընձեռում են օրինագիծը մեկնաբանելու չափազանց լայն հնարավորություններ: Սակայն խնդիրն ավելի մեծ է, քան միայն

ձևակերպումները: Լրատվամիջոցները չեն կարող պատասխանատու լինել այն բովանդակության համար, որն իրենք չեն ստեղծել, իսկ առցանց անանունությունը համացանցի՝ որպես բանավեճի և ազատորեն հաղորդված տեղեկատվության հարթակի հիմնարար սկզբունքներից է: Մենք խորհրդարանականներին հորդորում ենք հանել այս օրինագիծը և խրախուսել ինքնակարգավորում: Հայաստանը 180 երկրների մեջ 78-րդն է «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության 2014թ.-ի մամուլի ազատության վարկանիշային աղյուսակում: Ըստ կազմակերպության կայքի՝ այս օրինագծի ընդունումը հավանաբար բացասաբար կազդի 2015թ.-ի աղյուսակում Հայաստանի դիրքի վրա»,- ասել է «Լրագրողներ առանց սահմանների» կազմակերպության Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի բաժնի ղեկավար Իոհան Բիհրը[1]: Այս արձագանքներից հետո օրինագծի հեղինակները հայտարարեցին, թե քննարկումը հետաձգվում է մեկ տարով՝ սպասելով Դելֆիի գործով հանգուցալուծմանը, իսկ հետո հայտնի դարձավ, որ այդ օրինագիծն անորոշ ժամանակով է մի կողմ դրվել, այսպես լրագրողական հանրության ըմբոստությունը արդյունք տվեց: Սակայն այս հարցը օրակարգում է և վաղ թե ուշ կարող է հանգուցալուծվել:

Մեկնաբանությունների դաշտի լուծման ուղիները: Մեկնաբանությունների դաշտի կանոնակարգումը անխուսափելի է և անհրաժեշտ, սակայն պետք է գտնել այն իրագործելու ճիշտ ուղիները՝ հաշվի առնելով շահագրգիռ բոլոր կողմերի տեսակետները: Առաջին հայացքից կարող է թվալ, թե խնդրի լուծման լավագույն տարբերակը պարզապես մեկնաբանությունների դաշտից հրաժարվելն է, սակայն լրագրողները եւ խմբագիրները լավ գիտեն դրա առավելությունները: Այսպես, մեկնաբանությունների դաշտը բաց թողնելը ոչ միայն ընթերցողին գրավելու միջոց է, այլև ինֆորմացիայի աղբյուր: Հաճախ ընթերցողները նյութերի տակ կարևոր ինֆորմացիաներ են գրում իրենց մեկնաբանություններում, որոնք օգտակար են լրագրողներին, հետևաբար նրանք չեն ցանկանում զրկվել հավելյալ տեղեկատվությունից: Օրինակ՝ «Հրապարակում» 2016թ շարք է հրապարակվել՝ «Ազգուտակով՝ պաշտոնյա», որտեղ հետգրությամբ խնդրել էին տվյալ պաշտոնյայի պաշտոնյա հարազատների մասին տեղեկություն փոխանցել, ընթերցողները տեղեկությունները հաճախ զետեղում էին մեկնաբանություններում: Բացի տեղեկատվության աղբյուր լինելուց՝ լրագրողների համար մեկնաբանությունների դաշտը առաջին թարմ արձագանքն է իրենց աշխատանքին, հաճախ այնտեղ տրվում է տվյալ լրագրողի աշխատանքի գնահատականը, դրվատանքի խոսքեր լրագրողին եւ լրատվամիջոցին, որը ոգևորող է մեդիայի ներկայացուցիչների համար: Իհարկե, «կոմպլիմենտներից» բացի՝ նույն լրատվամիջոցների հասցեին վիրավորանքներ և հայհոյանքներ ևս կարելի է կարդալ: Ուստի հաշվի առնելով մեկնաբանությունների դաշտի առավելությունները, առանձնահատկությունները, ՄԻԵԴ նախադեպային որոշումը եւ միջազգային փորձը՝ Հայաստանում ևս պետք է

[1] https://rsf.org/en/news/bill-poses-danger-online-freedom-information

հասնել դաշտի կանոնակարգմանը՝ հիմքում դնելով ՀՀ քաղաքացու իրավունքները, սահմանադրությունը, մասնավորապես որևէ մեկին չվիրավորելու և չզրպարտելու հանգամանքը:

Համացանցում տեղեկության տարածվելու դյուրինությունը, նաև այդ տիրույթում մեծ ծավալով տեղեկությունների առկայությունը դժվարացնում են համացանցում վիրավորական կամ զրպարտող բնույթի հայտարարությունները հայտնաբերելն ու հեռացնելը: Այս խնդիրը լուծելիս կան մի քանի ուղիներ: Օրինակ՝ մոդերատորի աշխատանքի ընդունելը, մեկնաբանությունները հաստատելն ու թողարկելը: Սակայն վիրավորական մեկնաբանությունները վերահսկելու գործում անգամ մոդերատորին աշխատանքի ընդունելը 100 տոկոս արդյունավետ չի կարող լինել, օրինակ՝ օրական մոտ 100 նյութ տեղադրող լրատվամիջոցի դեպքում մեկնաբանությունների դաշտը մի հոգի չի կարող կանոնակարգել, մի քանի մոդեռատոր ունենալն էլ խմբագրության համար ֆինանսական առումով ճոխություն է, տեխնիկապես դժվար կլինի այդքան մեկնաբանությունները վերահսկելը :Իսկ մեկնաբանությունները հրապարակվելուց հետո դրանք խմբագրելը չի կարող լուծել խնդիրը, հնարավոր է՝ մինչև ջնջվելը ինչոր մեկը այն արդեն տեսած լինի, «սքրինշոթ» անի ու դիմի դատարան: Խնդրի լուծման տարբերակներից կարող է լինել համապատասխան ծրագրի մշակումը, կոնկրետ բանալի բառերի ընտրությունը, երբ այդ բառերը մեկնաբանություններում լինելու պարագայում ծրագիրը ավտոմատ չի թողարկի տվյալ օգտատերի մեկնաբանությունը: Այսպես, մեկնաբանությունների դաշտը փակելը կարող է ճակատագրական լինել լրատվամիջոցի համար լսարան կորցնելու առումով, դրանից բացի՝ որոշ կայքերի կառուցվածք թույլ չի տալիս մոդերացնել մեկնաբանությունները նախքան հրապարակվելը, ուստի պետք է գտնել հարցի լուծման տեխնիկական տարբերակներ, այլապես տրամադրելով բաց դաշտ կարծիք հայտնելու համար՝ լրատվամիջոցները կարող են հայտնվել դատարանում՝ վիրավորանքի եւ զրպարտության համար:

Բանալի բառեր՝ *մեկնաբանությունների դաշտ, դատական պրակտիկա, ՄԻԵԴ որոշում, Delfi-ն ընդդեմ Էստոնիայի գործ, «Ֆեյքերի» մասին օրինագիծ, ԶԼՄ-ների էթիկայի Դիտորդ մարմնի առաջարկություններ:*

Հղումներ

1. http://ypc.am/wp-content/uploads/2015/09/Guidelines_Delfi-AS-v.-Estonia-ECHR-Judgment_arm.pdf
2. http://www.osce.org/fom/164836
3. https://rsf.org/en/news/bill-poses-danger-online-freedom-information
4. http://hudoc.echr.coe.int/eng?i=001-155105

THE ISSUE OFCOMMENT FIELD REGULATIONS OF INTERNET MEDIA

I. V. MARTINYAN
YSU Faculty of Journalism,
Chair of Media Theory and History
Post-graduate student

In the article "The issue of Comment field regulations of internet media in Armenia" we have referred to the response of readers to the need for comment field regulations, ECHR case decision and the Armenian practice. We have also presented the processes taking place in our reality, the proposals, bill and the ensuing discussions, also the interested parties' opinions in favor and against.

ПРОБЛЕМА РЕГУЛИРОВАНИЯ ПОЛЯ КОММЕНТАРИЕВ В АРМЯНСКОМ ИНТЕРНЕТ-СМИ

И. В. МАРТИНЯН
Аспирант кафедры теории и истории
прессы факультета журналистики ЕГУ

В статье "Проблема регулирования поля комментариев в армянском интернет-СМИ " мы затронули вопросы и задачи, касающиеся реакции читателей, необходимости регулирования комментариев, прецедентного решения ЕСПЧ и армянской практики. Представили также процессы, происходящие в нашей реальности, поступившие предложения и развернувшиеся вокруг них обсуждения, мнения "за" и "против" заинтересованных сторон.

ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի ԳՐԱՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Բ. Ժ. ԳԱԼՍՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ
Հ. Պ. ԿԱՐԱԳՈՒԼՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ

Էկզիստենցիալիստական գրականության մեջ իր ուրույն տեղն ունի ամերիկյան էկզիստենցիալիզմը: ԱՄՆ-ի գրողներն ու գրաքննադատները էկզիստենցիալիզմը տարբեր կերպ էին ըմբռնում և հարմարեցնում իրենց գաղափարախոսությանը: Շատ ու շատ ամերիկացի քննադատների համար էկզիստենցիալիստական փիլիսոփայությունը վերածվում է տեսության, ավելի շուտ՝ տեսությունների տեսության, որի վրա էլ ձևավորվում են զանազան նոր տեսություններ, որոնք հիմնավորում էին կոնֆորմիստական, հակառեալիստական, նիհիլիստական ուղղությունները ինչպես գաղափարական, այնպես էլ գեղարվեստական և ոճական առումով: 20-րդ դարի 40-50-ական թթ. Էկզիստենցիալիզմը դառնում է ճանաչված և ազդող գրական հոսանք: Այդ տարիներին Էկզիստենցիալիզմի առավել ճանաչված ներկայացուցիչներն էին Պաուլ Տիլիխը, Ուիլյամ Բարրետը և Ջոն Ուալդը, որը 1962 թվականին հիմնադրեց Էկզիստենցիալիստական փիլիսոփայության ֆենոմենոլոգիայի ընկերություն: Ջոն Ուալդը փորձեց մասսաներին մեկնել Էկզիստենցիալիզմը, բացատրել նրա էությունը, ներկա ժամանակներում նրա անխուսափելի դերը: Նա չէր բավարարվում Էկզիստենցիալիզմի մասին գոյություն ունեցող տեսակետներով ու մեկնություններով, աշխատում էր յուրովի ներկայացնել այն, հնարավորինս մատչելի: Ջոն Ուալդի գրչին են պատկանում «Ոչ ռացիոնալ մարդը», «Ինչ է Էկզիստենցիալիզմը», աշխատությունները, վերջինս էլ դարձավ իր և իր գաղափարակիցների մանիֆեստը: Մինչ օրս էլ ամերիկյան գրականության մեջ Էկզիստենցիալիզմի ներթափանցման մասին կան տարբեր կարծիքներ, որոնք հենված են նախնական փիլիսոփայական ակունքների վրա և չեն առնչվում գրական փաստերին և կատեգորիաներին: Այսպես, Սիդնի Ֆինկելստայնը իր աշխատության մեջ առաջին անգամ օգտագործում է Էկզիստենցիալիստական ոճ տերմինը: Նա ամերիկյան գրականությունը ուսումնասիրում է ամերիկյան ավանդույթներից, ազգային և համաշխարհային գրականությունից դուրս: «Լինել փիլիսոփա,- գրում է Ֆինկելստայնը,-նշանակում է սիրել իմաստությունը, որպեսզի կարողանաս ապրել նրա թելադրանքով, վարել պարզ, անկախ, մեծահոգի և ճշմարտացի կյանք, իսկ դա նախ և առաջ նշանակում է հաղթահարել կյանքի դժվարությունները ոչ միայն տեսականորեն, նաև՝ գործնականորեն»:[1]

[1] Финкельстайн С., Экзистенциализм в американской литературе, М., Прогресс, 1967, с. 49.

«Էկզիստենցիալիզմը ամերիկյան գրականության մեջ» աշխատության մեւջ Ֆինկելստայնը Էկզիստենցիալիզմը համարում է Ամերիկա ներմուծվող «ապրանք», որը կարճ ժամանակահատվածում ստանում է համակողմանի իրավունք:

60-ական թթ. սկսած՝ ամերիկյան գրականության և գրականագիտության մեջ Էկզիստենցիալիզմի շուրջ աշխուժացումներ են սկսվում: Գրողներն ու գրականագետները կրկին ու կրկին անդրադառնում են Էկզիստենցիալիզմին, փորձում գտնել նրա ակունքները, յուրովի մեկնաբանել և հիմնավորել այն: Բ. Կաուֆմանը («Էկզիստենցիալիզմը Դոստոևսկուց դեպի Սարտր» 1965) Էկզիստենցիալիզմը Դոստոևսկուց դեպի Սարտր է տանում, Լ. Գամալյանը և Ֆ. Կարլը («Էկզիստենցիալ երևակայություն» 1963)՝ Շեքսպիր, Ֆ. Պապերսը (Հոդվածների ժողովածու, 1972)՝ Էդգար Պո, Լ. Ռուտոլոն («Վեց Էկզիստենցիալ հերոսները» 1973) այն փորձում է գտնել Վ. Վուլֆի մոտ՝ իր ուշադրությունը սևեռելով անգլո-ամերիկյան գրականության ընդհանուր երևույթներին, իսկ Ռ. Լեանուն («Վտանգավոր բախումներ» 1973) այն գտնում է ամերիկան և ֆրանսիական գրականությունների փոխազդեցության մեջ:

Քննադատ Հ. Բարնսը իր «Գրականության հնարավորությունները» (1959) աշխատության «Հումանիստական Էկզիստենցիալիզի հետազոտություններ» գլխում լուսաբանում է Էկզիստենցիալիստական փիլիսոփայության հատկապես այն կողմերը, որոնցուում քննվում է ոչ թե մարդու՝ դեպի ընդվզումն ունեցած ոգևորությունը, այլ նրա կողմից համբերատարորեն տարվող կյանքի բոլոր դժվարությունները, որոնք տրվում են մարդուն դժվարին իրավիճակներում և հասարակական գոյության պայմաններում անհատականության հարմարվողականության ձևերի հաջողակ ընտրությամբ: Նա հատկապես համոզված է, որ դրանով է պայմանավորված մարդու ազատագրումը և նրա ինքնապաշտպանությունը: Հ. Բարնսը հաստատում է. «Էկզիստենցիալիզմը հենց հումանիզմն է, դա տեսություն է մարդու մասին և մարդու համար, իսկ գրականությունը՝ այդ փիլիսոփայության խոստովանությունը, որ հաճախ համարվում է գրական հնարավորություն»:[1] Այդ հնարավորությունը կարելի է հասկանալ ոչ սոցիալական իմաստով, ինչպես ենթադրվում է. գլխավոր դերը կյանքում տրված է ոչ թե աստծուն և կառավարությանը, այլ մարդուն երբևիցե ունեցած գաղափարական միտումներից, գիտական-փիլիսոփայական ազդեցություններից, գաղափարական-ոճական սովորույթներից հեռանալու և երրորդ՝ սոցիալական ռեալիզմի ակունքներից և էպիկական արձակից հեռանալու իմաստով: Այս բազմանշանակ իմաստները միավորվում են Հ. Բարնսի թեզում: Դրանք հեղինակի կամքով, բավականին ազատ ձևով վերցված են կյանքի տարբեր իրավիճակներից և ոչ մի սոցիալական պարտադրույթով պարտադրված չեն և ամբողջովին ուղղված են

[1] Barnes H. The Literature of Possibility. A Study in Humanistic Existentialism. Lincoln. 1959. p. 373

դեպի անհատական ճշմարտության. «պատասխանատվություն իրավիճակի համար, որի մեջ ազատությունը պետք է ընտրի իր ճանապարհը»:[1]

Հ. Բարնսը Էկզիստենցիալիստական գրականությունը թեքում է դեպի ռեյատիվիզմ: Ռեյատիվիստական ընտրության սուբյեկտիվությունը հեղինակին հնարավորություն է տալիս չպատկերել սոցիալական իրականության տիպիկ կողմերը, չտրվել դիմանկարների, մտքերի, զգացմունքների պատկերմանը, դրանք պետք է փոխադրվեն երկրորդական պլան կամ պարզապես պետք է դուրս մղվեն գրողի տեսադաշտից: Ստեղծագործությունը Բարնսը նմանեցնում է ֆիլմի բաց թողած կամ խառնած կադրին: «Հաճախ գրողը,- գրում է Բարնսը,- ֆիքսում է դիտողի աչքով անգամ անտեսանելի, անընկալելի մասնիկներ: Ամենահետաքրքիրն այն է, որ այս ամենը շարժող ուժը առասպելն է, և էկզիստենցիալիստական գրականությունը շարժվում է իրապաշտությունից դեպի առասպել, որպեսզի կրկին լուսավորի մարդկային իրավիճակները, բացահայտի համեմատաբար հին մետաֆիզիկական խնդիրների նոր ընտրության հնարավորությունը և դրա հետ մեկտեղ այդ ընտրություններին կոնկրետություն տա՝ շնորհիվ այսօրվա իրականության մեջ նրանց ունեցած առանձնահատուկ այլ ընտրանքների հարաբերակցության»:2

Էկզիստենցիալիստական փիլիսոփայության միջոցով ամերիկյան ծայրահեղականները հուսով էին, որ կկարողանան անհատապաշտությունից և առասպելահռետորությունից ազատագրել անհատին և գրականությունը: Իսկ երբ խոսվում է մարդկային իրավիճակները լուսաբանող առասպելի մասին, այսինքն՝ դեպի հավերժ արխետիպիկ մետաֆիզիկ խնդիրներ, էկզիստենցիալիզմն իր փիլիսոփայությամբ չի կարող գեղագիտական միտքը ազատագրել առասպելի վրա հենված գաղափարախոսությունից, որը հումանիստական է և ունի անհատական ռեյատիվիստական աշխարհընկալում:

«Էկզիստենցիալիզմը բացում է ես-ի գոյը և նրա միակ պատասխանատվությունը ինքն իր առջև, ազատ ամեն տեսակ սոցիալական պայմանականություններից՝ չստանալով այլևս աջակցություն թե՛ վերացական անորոշությունից, թե որոշությունից,-գրում է Գ. Մյուլլերը,- դա կյանքի ողբերգական զգացմունքն է: Այն հայտնաբերում է իրական գոյությունը ամբողջական կործանման վիճակում, որն առաջ թվում էր ամուր: Յուրաքանչյուր կյանք աշխարհում եթե պարփակված է իր տարածքում, ապա դատապարտված է կործանման, քանդման, մահվան, մոռացության, իսկ եթե իրականությունը համեմատվում է իր տարածքում պարփակված կյանքին, և եթե չկա ելք, այդ դեպքում արդյունքը դառն է և «ապստամբությունը» աննպատակ, -ելք չկա»:[3] Այդ սահմանափակումն էլ հենց նիհիլիզմն է, որն էլ տարածված է 20-րդ դարի ամերիկյան գրականության մեջ:

---

[1] Barnes H. The Literature of Possibility. A Study in Humanistic Existentialism. p. 373

[2] Barnes H. The Literature of Possibility. A Study in Humanistic Existentialism . p. 376.

[3] Mueller G. Philosophy in the Twentieth century, American Novell, II Journal of Aesthetics and Art Griticism. 1958. June. V. XVI. N 4, p. 471

Գ. Մյուլլերը էկզիստենցիալիզմի մեջ կարևորում է «գիտակցության ազատությունը»: Նա Ջ.Լոնդոնին, Թ.Դրայզերին, Ս.Լյուիսին, Թ.Վուլֆին, Է.Հեմինգուեյին համարում է «գիտակցության ազատության» կրողներ, այն պարզ պատճառով, որ նրանք ազատ են ամեն տեսակ գաղափարախոսական և սոցիալական պարտավորվածություններից: Էկզիստենցիալիզմով հրապուրվելու տարիներին գոյության փիլիսոփայության վերաբերյալ իր տեսակետն է արտահայտել ճանաչված քննադատ Չ.Գլիկսբերգը: Նա իր մի շարք հոդվածներում և «Անհատը ժամանակակից գրականության մեջ» գրքում ցույց է տալիս, թե ինչպես էկզիստենցիալիզմի տարածման շնորհիվ եվրոպական մի շարք երկրների և ամերիկյան գրականություններում նկատվում է մարդուն ներսից պատկերելու մեծ ցանկություն, և դա այսպես է բացատրում Գլիկսբերգը. «Մարդը նահանջում է իր անհատի ամրոցը միայն նրա համար, որպեսզի պարզի, որ չի ճանաչում ինքն իրեն»:[1] Մարդուն օգնելու համար գրողը առաջ է քաշում իրողությունը ճիշտ ըմբռնելու, կյանքում ճիշտ կողմնորոշվելու տեսակետ: Գլիկսբերգը առաջարկում է վերանայել մարդու հանդեպ մինչ այդ իշխող հայացքները և նրան դիտել որպես սոցիալական մարմինը ղեկավարող մի մասնիկ: Գլիկսբերգի համար կարևորը, ինչպես ինքն է նշում, «շեշտի տեղափոխությունն է գլխավորապես դեպի ներքին կյանք, դեպի սուբյեկտիվություն, դեպի գիտակցության ներհոս»:[2] Իսկ ահա «Մոդեռնիստական գրականություն» աշխատության մեջ նա, հենվելով 19-20-րդ դարերի ամերիկյան և եվրոպական գրականության առաջավոր փորձի վրա, խորապես ուսումնասիրելով Ա. Բերգսոնի և Ռ. Ջեյմսի էկզիստենցիալիստական փիլիսոփայական հայացքները, առաջ է քաշում էկզիստենցիալիզմի ստոիկ հումանիզմը: «Հիմնական կոնֆլիկտը,-գրում է Գլիկսբերգը,-այսօր բացահայտվում է և՛ դրամայում, և՛ արձակում ոչ թե մարդու և հասարակության, անհրաժեշտության և ազատության, այլ կյանքի և մահվան սովորական մրցակցության: Բայց միշտ ինչպիսի սուր իրավիճակում էլ որպես զոհ հայտնվի ժամանակակից մարդը, նա շարունակելու է կյանքի իմաստի և անհատի ճշմարտության որոնումները»:[3]

Ամերիկացի գրողների ստեղծագործություններում հաճախ պատկերում են ինքնաբերաբարությունը, հոսունությունը, անհատի՝ պատահական իրավիճակներում հայտնվելը, բազում անհատների կողմից նրա կործանման ընթացքը: Դա այսպես է բացատրում Չ. Գլիկսբերգը. «Հոսունությունը նոր դժվարություններ է ավելացրել անհատների ուսումնասիրության գործընթացում: Անհատի իրական լինելը այժմ չես ընկալում դաժան հայացքների միջոցով և գիտության վերացականությամբ: Բնավորության «ճշմարտությունը» ինչպիսին էլ որ նա լինի, հայտնաբերվում է հիշողության հոսքում, անցյալի հիշողություններում: Եթե նրան ներսից նայես, ապա կտեսնես, որ 20-րդ դարի բնավորությունները փոփոխական

[1] Glicksberg Ch. The Self in Modern Literature, Pennsylvania, 1963, p.11.
[2] Glicksberg Ch. The Self in Modern Literature, p.15.
[3] Glicksberg Ch. The Self in Modern Literature, p.15.

են, անհնազանդ, ոչ մշտական: Դրանք իրենց սոցիալական վերապրած դիրքերից զարմանալի ձևով տարբերվում են»: [1]

Չ. Գլիկսբերգը չի թաքցնում, որ այդպիսի «ճշմարտության» ետևում թաքնված են փիլիսոփայական ռելյատիվիզմը, դրական չափանիշների բացակայությունը, չնայած այդ որակավորումները արդարացնում են ժամանակակից մարդու աշխարհայացքի բնորոշ հատկանիշները:

«Գրականության մեջ հարաբերականություն նշանակում է,- գրում է Չ.Գլիկսբերգը,- վերջնական ճշմարտության բացակայություն, իրական կյանքի պատկերի բացակայություն: Յուրաքանչյուր մարդ ընկալում է միայն համընդհանուր իրական ճշմարտության մի մասը, որը տեսնում է իր ոլորտի տարածքային տեսադաշտից: Իրականությունը բաժանվում է անհատական հատվածների, ըստ որում՝ կոտորակային և շերտավորված հեռանկարների»:[2]

«Շերտավորված հեռանկարների» հետևորդները համառորեն պնդում էին, որ իրավիճակային ռելյատիվիզմը թե՛ գաղափարական բովանդակություն է, թե՛ ծրագիր, թե՛ սուբյեկտիվ աշխարհընկալման պատրանք: «Աշխարհը տեսանելի է անուղղակի գիտակցության միջոցով, որը գրողը ցանկանում է մանրակրկիտ դարձնել իրական, ճշմարիտ և երբեմն էլ այն համեմատում է սեփական գիտակցության հետ: Մոդեռնիստական «գիտակցության հոսքի տեխնիկան,- պարզաբանում է գրականագետ Ն. Բալաքյանը իր հոդվածների ժողովածուի(1963) «Ստեղծագործական ներկան: Նոթեր ժամանակակից ամերիկյան արձակի մասին» խորագիրը կրող նախաբանում,- առանց հոսքի տարօրինակությունների, ներքին ուղղվածության, առանց զուգորդումների փորձում է իր ձևավորման ընթացքում ֆիքսել բանականությունը»:[3]

Այս տեխնիկայի էությունը միայն այն չէ, որ ընթերցողը պետք է որոշի՝ ով է ճիշտ, ով սխալ, գոյություն ունեն, թե գոյություն չունեն ճշմարտությունն ու սուտը, այլ նաև այն, որպեսզի ցույց տա «ճշմարտության անորոշությունը և նրա իրականությանը չհամապատասխանելը, որին մենք ճանաչում ենք ըստ փորձի»: Եվ ի պատասխան այն հակառակորդների, որոնք գտնում էին, որ այդպիսի տեխնիկան լի է գաղափարական և գեղագիտական վիպական ժանրերի կործանմամբ, Ն. Բալաքյանը հոդվածաշարում հաստատում է իր այն տեսակետը, ըստ որի մնայուն բնավորությունների և սոցիալական ռեալիզմի հիմունքով պայմանավորված են ազատագրական գիծը, հավատի ուժը, «ներքին ձայնի զգացողությունը, որը կենդանի է մնում նույնիսկ անհաջող փորձի ժամանակ և հաստատում է իրականությունը իրենից դուրս»: «Վիպական ժանրերը չեն մահանում, - գրում է Ն. Բալաքյանը,- մահանում են միայն սոցիալական արձակի ժանրերը և ոչ թե նրա համար, որ մեր արագ փոփոխվող հասարակության մեջ

[1] Glicksberg Ch. The Self in Modern Literature, p. 15.
[2] Glicksberg Ch. The Self in Modern Literature, p. 72.
[3] The Creative Present.Notes on Contemporary Fiction/Ed.by N. Balakian and Ch.Simmons, New York, 1963, p. 11.

գրողը չունի ավանդական հենք, որից նա նայում է մարդկային կատակերգությանը, այլ այն պատճառով, որ նա դադարել է հավատալ նրան, որ սոցիալական աշխարհը բացում է մարդկային հոգու ուղղվածությունը»:

Ամերիկյան էկզիստենցիալիզմը անցել է դժվարին, բայց և հետաքրքիր ճանապարհ, ունեցել է ներքին հակադրություններ և հակասություններ, որոնք տարիների ընթացքում մեծ մտածողների, գրողների՝ Շ. Անդերսոնի, Ջ. Դ. Պասոսի, Ֆ. Ս. Ֆիցջերալդի, Ջ. Սթայնբեքի, Մ. Քաուլիի, Է. Կոլդուելի և ուրիշների կողմից հղկվել, մշակվել և դարձել է առաջնային գրական ուղղություն:

Բանալի բառեր՝ Էկզիստենցիալիզմ, փիլիսոփայություն, մեկնաբանել, հիմնավորել, ներթափանցել, ամերիկյան գրականություն, անհատապաշտություն:

Օգտագործված գրականության ցանկ

1. Финкельстайн С., Экзистенциализм в американской литературе, М.,Прогресс, 1967, с. 49.

2. Barnes H. The Literature of Possibility. A Study in Humanistic Existentialism, Lincoln, 1959.

3. Mueller G. Philosophy in the Twentieth century, American Novell, II Journal of Aesthetics and Art Griticism, 1958. June, V. XVI. N 4.

4. Glicksberg Ch. The Self in Modern Literature. Pennsylvania, 1963,

5.The Creative Present.Notes on Contemporary Fiction/Ed.by N.Balakian and Ch.Simmons, New York, 1963.

EXISTENCIALIZM AND US CRITICISM

B. J. GALSTYAN
PhD in Philology
H. P. KARAGULYAN
Candidat of Philology

American existentialism had a long period of development, in which we see internal contradictions and contrasts. American writers and literary critics have treated existentialism from different perspectives. American existentialism became a theory for American US critics, through which they have tried to explain the literary phenomenon in the American literature in the 20th century.

ЭКЗИСТЕНЦИАЛИЗМ И КРИТИКА США

Б. Ж. ГАЛСТЯН
Кандидат филологических наук, доцент
А. П. КАРАГУЛЯН
Кандидат филологических наук, доцент

Американский экзистенциализм имел длительный путь развития, в котором мы видим внутренние противоречия и контрасты. Американские писатели и литературные критики по - разному трактавали суть экзистенциализма. Для американских критиков США американский экзистенциализм стал теорией, которой они старались объяснить все литературные явления в литературе США в 20-ом веке.

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՆԻՇՆԵՐԻ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒՄՆԵՐԸ

Ա. Մ. ԻԳԻԹՅԱՆ
Երևանի պետական համալսարանի
թարգմանության տեսության և պրակտիկայի ամբիոնի հայցորդ

Անդրադարձն ընդհանրապես լեզվի (մասնավորապես՝ գեղարվեստական լեզվի) բնորոշիչն է, առանցքային այն հատկանիշը, որ մի հեղինակի լեզուն տարբերում է մեկ այլ հեղինակի լեզվից: Այն կարծես հայելի է, որ անդրադարձնում է հեղինակի աշխարհընկալումն ու ճակատագրական իմաստավորում ունեցող դրամատիկ տրամադրությունը: Խոսքը առավելապես վերաբերում է խորհրդանիշների անդրադարձմանը, այս դեպքում՝ դրանց շեքսպիրյան կիրառումներին:

Վ. Յա. Զադորնովան, խոսելով շեքսպիրյան բառի երկիմաստ բնույթի մասին, նշում է, որ, օրինակ, “fortune” (ճակատագիր, բախտ) բառը տեքստային տարբեր դիրքերում մերթ նշանակում է մարդու կամքից անկախ՝ վերին զորությամբ պայմանավորված իրադարձությունների տարերային ելք, մերթ երջանիկ պատահար, հաջողություն, մերթ էլ՝ ունեցվածք, ապերջանկություն և այլն (տես՝ Гаспарян С. К., 2008): Նկատի ունենալով այս հանգամանքը՝ շեքսպիրյան բառ ու բանի բազմիմաստությունը և բազմապլանայնությունը, անհրաժեշտ է դրանք վերլուծել իրենց բանասիրական համատեքստում լեզվաբանաստեղծական վերլուծության մեթոդով, որն էլ թույլ է տալիս երևան բերելու օրգանական կապը ստեղծագործության գաղափարական, գեղագիտական ու ճանաչողական ողջ համալիրի հետ: Այդ կապը երևան բերելու համար հարկ է ճանաչել՝ լեզվամշակութային ինչպիսի ավանդույթների հետևանք է տվյալ արքետիպային զուգորդությունը, որքանով է այն հարազատ տվյալ ավանդույթներին և որքանով է այն թարգմանելի այլ լեզվով կամ որքանով է այն անթարգմանելի: Ինչպես հայտնի է, շատ զուգորդություններ արմատներով կապ ունեն տվյալ ազգամշակութային հանրության անցած ճանապարհի հետ, իրենց մեջ կրում են լեզվամշակութային որոշակի ավանդույթներ ու յուրահատկություններ: Իրենց մեջ ներդրված ազգային, պատմական լեզվամշակութային հիշողության առումով նման զուգորդությունները կարելի է համեմատել թերևս դարձվածքների՝ լեզվամշակութային այդ յուրօրինակ ցուցանշագրումների (մարկերների) հետ, որոնք, ինչպես նշվում է “Фразеология в конктексте культуры” գիտական հոդվածների ժողովածուում (1999թ.), յուրօրինակ խտացված տեղեկատվություններ են նյութական և ոչ նյութական մշակույթների, հավատալիքների, տվյալ ժողովրդի վարչական ու ֆիզիկական աշխարհագրության և այլ որոշիչ նշանակություն ունեցող տարաբնույթ գործոնների մասին: Վերջիններիս թարգմանությունը պահանջում է գիտելիքների լայն ֆոն, ազգային լեզվամշակութային իրողությունների և լեզվական ինքնությունների խորը ճանաչում:

Քանի որ շեքսպիրյան դրամաներն ունեն իրենց արքետիպային դրսևորումները, ուստի դրանցում կարելի է ցույց տալ բովանդակության և ձևի միասնության արքետիպային դրսևորումները: Գաղափարական առումով ակներև է Շեքսպիրի դրամաներում կիրառած աստվածաշնչյան հասկացությունների առկայությունը և դրանց առաջնահերթ լինելու հանգամանքը: Խոսքը վերաբերում է մասնավորապես այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են սերը, սիրտը, պատիվը, խիղճը, խանդը, հավատքը, կասկածը, ոճիրը պատիժը, զղջումը, դրախտի և դժոխքի ընկալումը, դրանց դրսևորման ձևերն ու կերպերը հասարակության, սոցիումի, մարդ էակի անձնական կյանքում և այլն: Այս առումով շեքսպիրյան դրամաները («Համլետ», «Օթելլո», «Մակբեթ», «Ռոմեո և Ջուլիետ», և այլն) գեղարվեստորեն արձագանքում են Աստվածաշնչին: Օրինակ՝ «Համլետ»-ում արծածվող ոճրի թեման հիշեցնում է Ծննդոցի սյուժեն: Ինչպես որ Աստծո ստեղծած մարդը դրախտում թունավորվեց և հավերժական կյանքի համար մահացավ բանսարկու սատանայի դրդմամբ, այնպես էլ թագավորական պարտեզում Համլետի թագավոր հայրը մահացավ եղբոր ձեռքով՝ ականջը կաթեցրած թույնի միջոցով: Կամ ինչպես Կայենը սպանեց իր եղբորը՝ Աբելին, այնպես էլ Համլետի հորեղբայրը, թագավոր դառնալու համար, սպանեց իր եղբորը՝ Համլետի հորը: Եվ ինչպես Աբելի արյունն էր բողոքում մինչև երկինք իրեն բաժին հասած անօրեն մահվան համար (And the Lord said, “What have you done? The voice to your brother’s blood is crying to me from the ground. And now you are cursed from the ground, which has opened its mouth to receive thy brother’s blood from thy head to hand” (Genesis, 4:10-11), այնպես Էլ սպանված թագավորն է՝ որպես ուրվական, բողոքում իր անօրինակ դաժան մահվան համար: Կատարվել է այնպիսի մի ոճիր, որի հետևանքով մահ են ճաշակում շատերը՝ թագավորի որդին՝ Համլետը, նրա մայրը, հորեղբայրը, Լաերտը: Այս «մահվան շքերթում» Համլետը կարծես քավության նոխազի դեր է կատարում՝ փորձելով շտկել ժամանակը, որն իր «շավղից» դուրս է սայթաքել: Դրաման կարծես թե մարդ արարածին ազդարարում է հետևյալը. մենք բոլորս հայտնվել ենք ոչ ուղիղ, ոչ շիտակ ժամանակներում: Մեզ մերձեցել է մահվան թունավոր սուրը: Մեզ կարող է փրկել միայն երկնային նոխազը, Գառն Աստծո, ով մորթվեց մեր բոլորի մեղքերի քավության համար և հարություն առավ Աստծու Սուրբ Հոգու զորությամբ: Ով մա՛րդ արարած, հիշելով այդ Զոհը՝ լա՛ց եղիր, որ մաքրագործվես, որ փրկվես շարունակաբար տարածվող դառը մահվանից: Այսպիսով, դրամայի գործող անձիք և նրանց գործերն ու խոսքերը ունեն խորհրդանշային բնույթ: Իր բովանդակությամբ՝ թեմայով և գաղափարական ուղղվածությամբ, դրաման հիշեցնում է Աստվածաշնչյան համապատասխան դրվագները, որոնց գեղարվեստական փոփոխակները կամ փոխակերպումները արտահայտելու համար կիրառվել է դրամայի ողբերգության ժանրը և վերջինիս հատուկ լեզվաոճական-լեզվաարտահայտչական ձևերը՝ դրանով իսկ դրսևորելով բովանդակության և ձևի

միասնությունը: Գրականագետները նշում են, որ «գեղարվեստական ձևը պատկերման և արտահայտչական այն բոլոր միջոցների ամբողջությունն է, որոնք ծառայում են բովանդակության մարմնավորմանը» (Ջրբաշյան Էդ. Մախչանյան Հ.,1980 :58), իսկ դրանք են՝ երկի կոմպոզիցիան, դեպքերի շաղկապման և զարգացման՝ դրանց պատկերման եղանակը (սյուժեն), ստեղծագործության լեզվի և ոճի բնորոշ գծերը, ժանրային առանձնահատկությունները, խոսքի ռիթմիկան, հնչերանգը և այլն:

Վերը նշված հասկացույթները՝ սերը, սիրտը, խղճմտանքը, նախանձը, հավատքը և այլն, առնչվում են հենց երկի թեմատիկ-գաղափարական հիմքի հետ, իսկ դրանց պատկերումը որոշակի սյուժեի, որոշակի լեզվաոճական միջոցների և որոշակի ժանրային առանձնահատկությունների դրսևորման միջոցով՝ առնչվում է արտահայտության պլանի կամ, որ նույնն է, գեղարվեստական ձևի հետ: Շեքսպիրյան դրամաների թեմատիկ-գաղափարական հիմքերը և դրանց գեղարվեստական դրսևորման ձևերը քննարկելիս բախվում ենք այն ակներև իրողությանը, որ դրանք ունեն իրենց արքետիպային-աստվածաշնչային նախօրինակները: Ուստի միջտեքստայնության և դրա դրսևորման ձևերի՝ այլուղիների (գրական տարաբնույթ անդրադարձների) մասին խոսելիս անպայման պետք է հաշվի առնել, որ դրանք կարող են դրսևորվել նաև թեմատիկ-գաղափարական հիմքերի և դրանց մարմնավորման գեղարվեստական ձևերի անդրադարձմամբ՝ անշուշտ, ենթարկվելով որոշակի փոխակերպումների: Այդ փոխակերպումները վերաբերում են գեղարվեստական երկի և այդ երկի համար արժետիպ հանդիսացող բնագրերի միջև եղած ընդհանրությունների և տարբերությունների 1)գրանցմանը, 2)որոշարկմանը, 3)փոխակերպման հիմք հանդիսացող գաղափարագեղագիտական ազդակների բնորոշմանը. ընդ որում երկրորդը վերաբերում է գեղարվեստական երկի (բնագրային տեքստի) և դրա թարգմանական տարբերակների մատնանշմանը, դրանց բնութագրմանը՝ կապված մի շարք լեզվամշակութային գործոնների դրսևորման հետ:

Եթե «Համլետ» դրամայի թեմատիկ գաղափարական հիմքը աստվածաշնչային (=արքետիպային) մեղք, ոճիր, հատուցում հասկացույթներն էին և դրանց գեղարվեստական պատկերացումները դրամայի ժանրի միջոցով, ապա «Օթելլո» դրամայում այդ հիմքը նունպես աստվածաշնչային է և առնչվում է «սատանայական դավադրություն», «մոլորեցնող», «խանդ» գաղափարների հետ: Դրամայում հին, աստվածաշնչյան, արքետիպային Օձի՝ սատանայի սոցիալական դրսևորումն է Յագոն և հասարակական այն միջավայրը, որը փաստորեն համակցված է «յագոիզմով» կամ «յագոյականությամբ»: Եթե Աստվածաշնչում՝ Ծննդոց գրքում, բանսարկու օձը՝ սատանան է որ մոլորեցնում է (գայթակղում) առաջին մարդուն, ապա շեքսպիրյան դրամայում Յագոն է (օձականությամբ համակված մարդը), որը մոլորեցնում, մահ է մատուցում սիրահար ամոլին՝ Օթելլոյին և Դեզդեմոնային: Եթե նույն Ծննդոցում սատանան գայթակղում է

Եվային (նրա միջոցով՝ Ադամին) «ակնահաճո պտղով», ապա «Օթելլոյում» գայթակղության քար է դառնում նվիրական թաշկինակը, որը Դեզդեմոնային է նվիրել Օթելլոն: Նվիրական այդ «մանրուքն» էլ դառնում է ողբերգության, ավելի ստույգ՝ ողբերգական շփոթության պատճառ: Օթելոն խեղդում է Դեզդեմոնային՝ վերջինիս մեղադրելով անհավատարմության մեջ: Թաշիկնակն այստեղ սիմվոլացնում է սերը, այն չպետք է տրվի ուրիշի, քանզի այն պատկանում է միայն տիրոջը (Օթելլոյին) և տիրուհուն (Դեզդեմոնային): Այս առումով թաշկինակը՝ որպես սիրո առհավատչյա, կատարում է յուրատեսակ «արգելված պտղի» դեր: Ակնհայտ է, այսպես ասած, նվիրագործական առարկան ուրիշին, օտարին (խորքում՝ սատանային) փոխանցելու արգելանքի խախտման թեման, որի զուգահեռն է Աստվածաշնչյան պատվիրանը՝ տրված Ադամին ու Եվային՝ չճաշակել բարու և չարի գիտության ծառի պտուղը: Սա է դրամայի թեմատիկ-գաղափարական նախահիմքը (=արքետիպային բովանդակությունը), որն արտահայտվել է դրամայի ժանրի միջոցով:

«Ռոմեո և Ջուլիետ» դրամայի համար կարող է, օրինակ, որպես գաղափարական հիմք դիտարկվել աստվածաշնչյան հանրահայտ ասույթները.

Set me as a seal upon your heart,
as a seal upon your arm;
for love is strong as death,
Jealousy is cruel as the grave.
Its flashes are flashes of fire,
A most vehement flame.

(Song of Solomon, 8:6)

Հայերենը՝ ըստ Աստվածաշնչի եբրայական կանոնի.
«Ձիս քու սրտիդ վրայ կնիքի պէս,
Քու բազուկիդ վրայ կնիքի պէս դիր.
Վասն զի սէրը՝ մահուան պէս զօրաւոր
Ու նախանձը գերեզմանի պէս խիստ է.
անոր կայծերը սաստիկ բոցավառ
Կրակի կայծեր են»

(Երգ երգոց, 8:6)

Շեքսպիրյան դրամայում, ինչպես գիտենք, գործում է հենց այս *«մահուան պէս զօրաւոր»* սերը: Շեքսպիրն ուզում է ասել, որ այդ զորավոր սերը մարդկային հասարակությունում, հակամարտություններով լեցուն սոցիումում կարծես տեղ չունի. այդ սերը, վեր բարձրանալով սոցիալական, կաղապարային բնույթի նորմերից, դատապարտվում է ողբերգական մահվան: Այս գաղափարը, իհարկե, լավագույն ձևով կարող էր արտահայտվել դրամայի ժանրի միջոցով, որն էլ վերջինիս թեմատիկ- գաղափարական բովանդակության դրսևորման գեղարվեստական ձևն է, հեղինակի ասելիքի մարմնավորման համապատասխան եղանակը: Դրամայում

խորհրդանշանի դեր է կատարում, մասնավորապես, սիրո կորսված առհավատչյան՝ թաշկինակը, Դեզդեմոնային ընծայված:

Այսպիսով, կարելի է փաստել, որ աստվածաշնչյան սկզբնատիպերի շեքսպիրյան կիրառումները՝ երբեմն նույնությամբ, երբեմն մոտավոր կերպով, երբեմն էլ տարբեր փոխակերպումներով, լեզվաբաններին և գրականագետներին հիմք են տվել այդօրինակ փոխակերպումները կամ «շեղումները» բնութագրել իբրև «շեքսպիրիզմներ»: Պետք է ասել, որ նման փոխակերպումները պայմանավորված են մի շարք հանգամանքներով, ինչպիսիք են ժամանակի գործոնը, աշխարհիկացման բուռն գործընթացը, որն ընդգրկել էր ոչ միայն Անգլիան, այլև ողջ Եվրոպան և քրիստոնյա աշխարհը, հեղինակի աշխարհայեցողությամբ և քննախույզ ոգով և այլն:

Բանալի բառեր՝ աստվածաշնչյան խորհրդանիշ, հասկացություն, կիրառություն, ստեղծագործություն, նույնությամբ, փոխակերպում, շեքսպիրիզմ, զուգադրական վերլուծություն, թարգմանվածք:

Օգտագործված գրականություն

1. Գասպարյան Ս. Մուրադյան Գ. Գասպարյան Ն, Գործառական ոճագիտություն, Ե. «ԵՊՀ», 2011:
2. Գիրունյան Գ. Ս., Գրական անդրադարձի՝ որպես արտահայտչական հնարի մեկնողական ընդգրկումը, բ. գ. թ. ատենախոս., Ե. 2005:
3. Խաչատրյան Ա. Վ., Բառախաղերի թարգմանության խնդիրը Շեքսպիրի «Ռոմեո և Ջուլիետ» ողբերգության հիման վրա, բ.գ.թ. ատենախոսություն, Ե. 2003:
4. Խաչատրյան Ա. Վ., Մշակույթի դերը թարգմանության մեջ, «Աստղիկ», Ե., «Սահակ Պարթև», 2010-2011:
5. Պողոսյան Պ. Մ., Խոսքի մշակույթի և ոճագիտության հիմունքներ, Ե., ԵՊՀ հրատ., 1990:
6. Սեֆերյան Ս., Հովհաննիսյան Լ., Խաչատրյան Ա., Գաբրիելյան Ս., Համառոտ ակնարկ թարգմանության, Ե., «Սահակ Պարթև», 2012:
7. Гаспарян С. К., Лингвопоэтика образного сравнения, Е., “Лусакн” 2008.
8. Конурбаев М. Э., Библия Короля Иакова в лингвопоэтическом освещении, М.,”Диалог” – МГУ, 1998.
9. Лосев А. Ф., Очерки античного символизма и мифологии, Москва, 1993.
10. Полубиченко Л. В., Филологическая топология в английской классической поэзии, М., изд. МГУ, 1988.

SHAKESPEAREAN USAGE OF BIBLICAL SYMBOLS

A. M. IGITYAN
Researcher of the Chair of Translation Studies
of Yerevan State University

The article touches upon the usage of biblical symbols in the works by Shakespeare. Such symbols as love, honour, heart, conscience have been analyzed. The study has shown that these symbols are sometimes used in the way they are, sometimes with a slight deviation and sometimes in quite a transformed way. This transformed usage is often termed as "shakespearianism". Contrastive analysis has been applied to reveal common features and differences in the original and in the Armenian translation.

ШЕКСПИРОВСКИЕ ПРИМЕНЕНИЯ БИБЛЕЙСКИХ СИМВОЛОВ

А. М. ИГИТЯН
Соискатель кафедры теории и практики перевода
Ереванского государственного университета

В статье рассматриваются библейские символы в произведениях Шекспира. В частности, были рассмотрены такие символы как *любовь, сердце, честь, совесть, преступление* и т.д., и их проявления в личной жизни человека. Исследование показало, что эти символы порой употребляются без изменений, иногда с небольшими отклонениями, и иногда в преобразованном виде, их можно называть "шекспиризмами". Был проведен также сопоставительный анализ с целью выявления общих черт в оригинале и в армянском переводе.

ԱՍՏՎԱԾԱՇՆՉՅԱՆ ԼԵԶՎԱՈՃԱԿԱՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՇԵՔՍՊԻՐՅԱՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Մ. ԻԳԻԹՅԱՆ
Երևանի պետական համալսարանի թարգմանության և տեսության ամբիոնի հայցորդ

Ընդհանուր առմամբ լեզվաոճական միավորները դիտարկվում են իբրև ազգամշակութային կյանքի արտահայտիչներ կամ հասկացույթներ: Գաղափարական առումով ակներև է Շեքսպիրի դրամաներում կիրառած աստվածաշնչյան հասկացույթների առկայությունը և դրանց առաջնահերթ լինելու հանգամանքը: Խոսքը վերաբերում է մասնավորապես այնպիսի հասկացությունների, ինչպիսիք են սերը, սիրտը, պատիվը, խիղճը, խանդը, հավատքը, կասկածը, ոճիրը, պատիժը, զղջումը, դրախտի և դժոխքի ընկալումը, դրանց դրսևորման ձևերն ու կերպերը հասարակության սոցիումի, մարդ էակի անձնական կյանքում և այլն: Այս առումով շեքսպիրյան դրամաները («Համլետ», «Օթելլո», «Մակբեթ», «Ռոմեո և Ջուլիետ», և այլն) գեղարվեստորեն արձագանքում են Աստվածաշնչին: Օրինակ՝ «Համլետում» արծարծվող ոճրի թեման հիշեցնում է Ծննդոցի սյուժեն: Ինչպես որ Աստծո ստեղծած մարդը դրախտում թունավորվեց, հավերժական կյանքի կամար մահացավ բանսարկու սատանայի դրդմամբ, այնպես էլ թագավորական պարտեզում Համլետի թագավոր հայրը մահացավ եղբոր ձեռքով ականջը կաթեցրած թույնի միջոցով: Կամ ինչպես Կայենը սպանեց իր եղբորը՝ Աբելին, այնպես էլ Համլետի հորեղբայրը թագավոր դառնալու համար սպանեց իր եղբորը՝ Համլետի հորը: Եվ ինչպես Աբելի արյունն էր բողոքում մինչև երկինք իրեն բաժին հասած անօրեն մահվան համար. “And the Lord said, “What have you done? The voice to your brother’s blood is crying to me from the ground. And now you are cursed from the ground, which has opened its mouth to receive thy brother’s bold from thy head to hand” (Genesis, 4:10-11), այնպես էլ սպանված թագավորն է, ուրվականի կերպ առած, բողոքում իր անօրինակ դաժան մահվան համար: Կատարվել է, մի խոսքով, այնպիսի մի ոճիր, որի հետևանքով մահ են ճաշակում շատերը՝ թագավորի որդին՝ Համլետը, նրա մայրը, հորեղբայրը՝ Լաերտը: Այս «մահվան շքերթում» Համլետը կարծես քավության նոխազի դեր է կատարում՝ փորձելով շտկել ժամանակը, որն իր «շավղից» դուրս է սայթաքել… Դրաման կարծես թե մարդ արարածին ազդարարում է հետևյալը. մենք բոլորս հայտնվել ենք ոչ ուղիղ, ոչ շիտակ ժամանակներում: Մեզ մերձեցել է մահվան թունավոր սուրը: մեզ կարող է փրկել միայն երկնային նոխազը, գառն Աստծո, ով մորթվեց մեր բոլորի մեղքերի քավության համար և հարություն առավ Աստծու Սուրբ Հոգու զորությամբ: Ով մա՛րդ արարած, հիշելով այդ Զոհը, լա՛ց եղիր, որ մաքրագործվես, որ փրկվես շղթայական ռեակցիայի նման տարածվող դառը մահվանից: Իր բովանդակությամբ, թեմայով և գաղափարական ուղղվածությամբ դրաման հիշեցնում է Աստվածաշնչյան համապատասխան դրվագները, որոնց գեղարվեստական փոփոխակները կամ փոխակերպումները արտահայտելու համար կիրառվել է

դրամայի ողբերգության ժանրը և վերջինիս հատուկ լեզվաոճական-լեզվաարտահայտչական ձևերը՝ դրանով իսկ դրսևորելով բովանդակության և ձևի միասնություն: Գրականագետները նշում են, որ «գեղարվեստական ձևը պատկերման և արտահայտչական այն բոլոր միջոցների ամբողջությունն է, որոնք ծառայում են բովանդակության մարմնավորմանը» (Ջրբաշյան Էդ. Մախչանյան Հ., Գրականագիտական բառարան, 1980): Դրանք են երկի կոմպոզիցիան, դեպքերի շաղկապման և զարգացման դիպաշարը, ստեղծագործության լեզվի և ոճի բնորոշ գծերը, ժանրային առանձնահատկությունները, խոսքի ռիթմիկան, ռիթմահնչերանգը և այլն:

Եթե «Համլետ» դրամայի գաղափարական հիմքը աստվածաշնչային (=արքետիպային) մեղք, ոճիր, հատուցում հասկացույթներն էին և դրանց գեղարվեստական պատկերացումները դրամայի ժանրի միջոցով, ապա «Օթելլո» դրամայում այդ հիմքը նույնպես աստվածաշնչային է և առնչվում է «*սպրանայական դավադրության», մոլորեցնողի», «խանդի*» գաղափարների հետ: Դրամայում հին, աստվածաշնչյան, արքետիպային Օձի՝ սատանայի պրոեկցիան է Յագոն և հասարակական այն միջավայրը, որը փաստորեն համակցված է «յագոիզմով» կամ «յագոյականությամբ»: Եթե Աստվածաշնչում՝ Ծննդոց գրքում, բանսարկու օձը սատանան է, որ մոլորեցնում է (գայթակղում է) առաջին մարդուն, ապա շեքսպիրյան դրամայում Յագոն է (օձակալությամբ համակված մարդը), որը մոլորեցնում, մահ է մատուցում սիրահար ամոլին՝ Օթելլոյին և Դեզդեմոնային: Եթե նույն Ծննդոց սատանան գայթակղում է Եվային (նրա միջոցով՝ Ադամին) «ակնահաճո պտղով», ապա «Օթելլոյում» գայթակղության քար է դառնում նվիրական թաշկինակը, որը Դեզդեմոնային է նվիրել Օթելլոն: Նվիրական այդ «մանրուքն» էլ դառնում է ողբերգության, ավելի ստույգ՝ շփոթության պատճառ: Օթելլոն խեղդում է Դեզդեմոնային՝ վերջինիս մեղադրելով անհավատարմության մեջ: Թաշկինակն այստեղ սիմվոլացնում է սերը, այն չպետք է տրվի ուրիշի, քանզի այն պատկանում է միայն տիրոջը (Օթելլոյին) և տիրուհուն (Դեզդեմոնային): Այս առումով թաշկինակը՝ որպես առհավատչյա, կատարում է յուրատեսակ «արգելված պտղի» դեր: Ակնհայտ է, այսպես ասած, նվիրագործական առարկան ուրիշին, օտարին (խորքում սատանային) փոխանցելու արգելանքի խախտման թեման, որի զուգահեռն է Աստվածաշնչյան պատվիրանը ՝ տրված Ադամին ու Եվային՝ չճաշակել բարու և չարի գիտության ծառի պտուղը: Սա է դրամայի թեմատիկ-գաղափարական նախահիմքը (արքետիպային բովանդակությունը), որն արտահայտվել է դրամայի ժանրի միջոցով:

Ուշագրավ է այն, որ թե՛ դրամայում, թե՛ այդ ժանրի աստվածաշնչյան նախատիպը հանդիսացող երկխոսություններում, որոնք ընթանում են Օձի՝ սատանայի և Եվայի, Եվայի և Ադամի, Աստծո և Ադամի ու Եվայի միջև, առկա է արտահայտման հենց այդ ձևը՝ դրամայի ժանրի հատուկ երկխոսության ձևը, որը ամենանպատակահարմարն է երկի բովանդակության արտահայտիչ դրսևորման համար (= արտահայտության պլան): Ուրեմն կարելի է ասվածի շրջանակներում կատարել ընդհանրացում, որ որպես գրական անդրադարձ՝ կարելի է դիտարկել ոչ միայն տեքստային այս կամ այն միավորը (ենթադրենք՝ ողջ տեքստը կամ նրա

մի մասը, պատկերավորման այս կամ այն միջոցը, դարձվածքը, մակդիրը և այլն), այլև անդրադարձվող երկի թեմատիկ-գեղարվեստական բովանդակությունը և նրա արտահայտման ձևը (ժանրը, կոմպոզիցիան, զարգացման արվեստը՝ սյուժեն, ռիթմը, հնչերանգը, լեզվի և ոճի բնորոշ կողմերը և այլն): Ասվածը վերաբերում է նաև շեքսպիրյան մյուս դրամաներին՝ «Ռոմեո և Ջուլիետ», «Լիր Արքա», որոնք նյութ են տալիս նման քննարկումների համար: «Ռոմեո և Ջուլիետ» դրամայի համար կարող է, օրինակ, որպես գաղափարական հիմք դիտարկվել Աստվածաշնչյան հանրահայտ ասույթը.

Set me as a seal upon your heart,
As a seal upon your arm,
For love is strong as death,
Jealousy is cruel as the grave,
Its flashes are flashes of fire,
A most vehement flame (Song of Solomon, 8:6).

Հայերենը՝ ըստ Աստվածաշնչի եբրայական կանոնի.
Ձիս քու սրտիդ վրայ կնիքի պէս,
Քու բազուկիդ վրայ կնիքի պէս,
Վասն զի սէրը մահուան պէս զօրաւոր
Ու նախանձը գերեզմանի պէս խիստ է,
Անոր կայծերը սաստիկ բոցավառ
Կրակի կայծեր են (Երգ երգոց 8:6):

Շեքսպիրյան դրամայում, ինչպես գիտենք, գործում է հենց այս «մահուան պէս զօրաւոր» սերը: Շեքսպիրն ուզում է ասել, որ այդ զորավոր սերը մարդկային հասարակությունում, հակամարտություններով լի սոցիումում կարծես տեղ չունի, այդ սերը, վեր բարձրանալով սոցիալական, կաղապարային բնույթի նորմերից, դատապարտվում է ողբերգական մահվան: Այս գաղափարը, իհարկե, լավագույն ձևով կարող էր արտահայտվել դրամայի ժանրի միջոցով, որն էլ վերջինիս թեմատիկ-գաղափարական բովանդակության դրսևորման գեղարվեստական ձևն է, հեղինակի ասելիքի մարմնավորման համապատասխան եղանակը:

«Լիր արքա» դրամայում որպես նախատիպային, գաղափարական նշանակություն ունեցող աստվածաշնչային տարրեր կարող են դիտարկվել օրինակ, Տերունական աղոթքի խոսքերը *«Ու մեզ փորձութեան մի տանիր»* (Մատթ., 6:13), և «*Սերը չի նախանձում, սերը չի գոռոզանում*» (Ա. Կորնթ., 13:4), «*Որդեակնե՛րս, ոչ թե խօսքով ու լեզուով սիրենք, հապա գործով ու ճշմարտութիւնով*» (Ա. Հովհ., 3:18), « *…լեզուն էլ մի պստիկ անդամ է, բայց մեծ բաներ է խօսում…*» (Հակոբ., 3:5), «*Շողոքորթ բերանը կորուստ է առաջ բերում*» (Առակ., 26:28) և մյուս ասույթները: Անշուշտ, աստվածաշնչյան-նախատիպային գաղափարները, որոնք պայմանավորել են «Լիր արքայի» թեմատիկան ու բովանդակությունը, շատ ավելի շատ են, քան վերը թվարկվածները, բայց դրանք էլ բավական են՝ ակներև կերպով ցույց տալու, որ այս դրամայում Շեքսպիրը կիրառել է աստվածաշնչյան գա-

ղափարները, մասնավորապես վերը նշվածները: Այսպես, Լիր արքան, կարծես մոռանալով Տերունական աղոթք-պատգամը, դիմում է փորձության՝ ցանկանալով իմանալ, թե իր դուստրերից ով է իրեն ավելի շատ սիրում, և դրանով իսկ մատնվում մեծ փերձության՝ չտարբերելով իսկական սերը: Նա շփոթվում է իր երկու դուստրերի՝ Գոներիլի և Ռեգանի շռայլ խոսքերից՝ հավատ ընծայելով նրանց և արհամարհելով իսկապես սիրող իր կրտսեր աղջկան՝ Կորդելիային, ով ինքն իր մասին իրավամբ ասում է.

The poor Cordelia!
And yet not so; since, I am sure, my love's
More richer than my tongue (Act I, Sc. 1, p. 433-434).

Հայերենը.
Թշվառ Կորդելիա:
Բայց ես թշվառ չեմ, քանի որ սերս
Ավելի պերճ է, քան տկար լեզուս (Արար 1, տես. 1, էջ 464).

Կորդելիան շատախոս չէ, նա չի գոռոզանում իր սիրո մասին շատախոսելով, մեծ բաներ չի բարբառում, այլ սիրում է «գործով ու ճշմարտությունով», մինչդեռ նրա քույրերը իրենց թագավոր հոր նկատմամբ սիրո խոսքերի հորդ ջրվեժներ են հոսեցնում: Ինքը՝ Լիրը, անխորհուրդ վարք է դրսևորում, նա իր մտածողությամբ ու վարքով, հակասում է աստվածաշնչային ճշմարտություններին, ուստի և հայտնվում է փորձության շրջապտույտի մեջ՝ հասնելով թափառաշրջիկ կյանքի խելացնորության: Ի վերջո, նա ներումն է հայցում Կորդելիայից նրա ձեռքով փրկվելուց հետո: Դրամայի գաղափարական բովանդակությունն է չդիմել փորձության, ճանաչել ճշմարիտ սերը, որը, ըստ Կորդելիայի բնորոշման, «ավելի պերճ է», քան «տկար լեզուն»:

Ընդհանրապես լեզվաոճական միջոցների թարգմանությունը պահանջում է գիտելիքների լայն ֆոն, ազգային լեզվամշակութային իրողությունների և լեզվական ինքնությունների խորը ճանաչում: Եթե գիտական թարգմանության համար հիմնականում կարևորվում է զուգադրական վերլուծության մեթոդը, որը հնարավորություն է ընձեռում հստակորեն պատկերացնել «բառային» (verbal) և պատկերավոր (non-verbal) թարգմանությունների էական տարբերությունները (Akhmanova O.S., Zadornova V. 1980), ապա պատկերավոր թարգմանության (այդ թվում նաև ոճավորումների) համար անհրաժեշտ են այլ գործոններ ևս՝ բանաստեղծական խոսքի արտակարգ զգացողություն, ներըմբռնողականություն և այլն՝ բնագրի բուն էությունը վերհանելու և թարգմանական համարժեք ձևերով և պատկերներով այն արտահայտելու համար՝ կարևորելով մշակութային բաղադրիչները և ֆոնային տարբեր գիտելիքները: Իսկ Ա. Ա . Բրագինան ցույց է տալիս, որ նույնիսկ ընդհանրությունների պարագայում առկա են, այսպես կոչված, ազգային բառիմաստներ: «Միևնույն երկու բառը – գրում է նա, - երկու տարբեր ժողովուրդների մշակույթում և երկու տարբեր լեզուներում ներկայացնելով միևնույն

առարկան, անպայման ունենում են ոչ նույնական բովանդակություն, որն էլ թույլ է տալիս խոսել «ազգային իմաստների» մասին:

Տեսաբանները իրավամբ գտնում են, որ գրական բարձրարժեք ստեղծագործությունները, ինչպիսիք են Շեքսպիրի դրամաները, իրենց արմատներով առնչվում են հեռավոր անցյալի հետ: Մեծ ստեղծագործությունները, այդպիսով, նախապատրաստվում են դարերով, ուստի և իրենց մեջ կրում են ազգամշակութային անցյալն ու ներկան: Այդ կարգի ստեղծագործությունները, ազգամշակութային ավանդույթների և տեղեկատվական ողջ համալիրի ընդգրկման առումով թերևս նման են դարձվածային միավորների, որոնք իրենց մեջ ներդրված գերխիստ տեղեկատվության առումով դառնում են լեզվամշակութային յուրօրինակ մարկերներ: Ինչպես նշում է «Դարձվածաբանությունը մշակույթի համատեքստում» (“Фразеология в контексте культуры”, ответственный редактор В. Н. Телия, М. 1999) գիտական հոդվածների ժողովածուի հեղինակներից Վ. Գ. Գակը, դարձվածային միավորների մշակութային յուրահատկությունն այն է, որ դրանք առնչություն ունեն տվյալ հասարակության նյութական կամ հոգևոր մշակույթի, պատմության, հավատալիքների, սովորույթների, բնության և աշխարհագրական այն տարածքի հետ, որտեղ ապրում է տվյալ ժողովուրդը: Ուստի թարգմանել որևէ դարձվածք, որը հատուկ է տվյալ ժողովրդին, նշանակում է ինչ-որ չափով թարգմանել նաև պատմությունը, դավանանքը և այլն:

Թարգմանության տեսության այս հայեցակերպից մոտենալով շեքսպիրյան դրամաների թարգմանություններին՝ նկատում ենք, որ դրանք կատարված են համեմատաբար լավ, այսինքն՝ բավականին ճշգրիտ՝ հաշվի առնելով շեքսպիրյան բառ ու բանի տարողունակությունը, պատմամշակութային առանձնահատկությունների առկայությունը, ժամանակի դրոշմը տեքստի վրա, և այդ ամենը դրսևորված լեզվաոճական և լեզվաարտահայտչական համապատասխան իմաստավորումներով ու երանգավորումներով:

Բանալի բառեր՝ *բարոյական, մարդաբանական, էզոթերիկ, դարձվածաբանական միավորներ, օքսիմորոն, համադրական վերլուծություն, թարգմանություն:*

Օգտագործված գրականության ցանկ

1.Гаспарян С. К., Лингвопоэтика образного сравнения, Е., Лусакн, 2008.

2. Гюббенет И. В., К. Вопросу о “глобальном” вертикальном контексте // Вопросы языкознания, N 62, МГУ, 1980.

3. Задорнова В. Я., Словесно-художественное произведение на разных языках, М., 1992.

4. Лайонз Джон, Лингвистическая семантика, М., Наука, 2003.

5. Литвин Ф. А., Многозначность слова в языке и речи, изд. 2 –ое, М., КомКнига, 2005.

6. Умберто Еко, Поэтика Джойса, Санкт-Петербург, 2003.

7. Федоров А. В., Основы общей теории перевода, М., Высш. Шк.Ф., 1983.

8. Ricks G. Allusion to Poets, Oxford Univ. Press 2002.

SHAKESPEAREAN USAGE OF THE BIBLICAL LINGUOSTYLISTIC MEANS AND THEIR ARMENIAN TRANSLATION

A. M. IGITYAN
Researcher of the Chair of Translation Studies
of Yerevan State University

The article touches upon the biblical allegories because they contaion explicity or secretly moral, biblical and anthropological ideas. Linguostylistic means such as phraseological units and oxymorons have been analysed. By means of contrastive analysis, common features and differences have been revealed in the original and in translation.

ШЕКСПИРОВСКИЕ ПРИМЕНЕНИЯ ЛИНГВОСТИЛИСТИЧЕСКИХ СРЕДСТВ И ИХ ПЕРЕВОД НА АРМЯНСКИХ ЯЗЫК

А. М. ИГИТЯН
Соискатель кафедры теории и практики перевода
Ереванского государственного университета

В статье рассматриваются библейские аллегории, так как в них присутсвуют моральные, библейские антропологические идеи и их эзотерические стороны. Основательно были анализиованы фразеологические единицы и оксимороны. Посредством сопоставительного анализа были обнаружены общности и разницы в оригинале в переводе.

ԱՆԳԼԵՐԵՆԻ ՀԱՐԱԿՑԱԿԱՆ ՀԱՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՑՈՒՄԸ ՀԱՅԵՐԵՆԻ ԶՈՒԳԱԴՐՈՒԹՅԱՄԲ

Ս. Հ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ՀՊՄՀ գերմանական լեզուների ամբիոնի դասախոս

Ժամանակակից դասախոսի ամենակարևոր առաքելությունն ուսումնասիրվող նյութի մանրակրկիտ և հետաքրքիր մատուցումն է: Գաղտնիք չէ, որ մեր ժամանակներում անցում է կատարվել դասախոսակենտրոն ուսուցումից ուսանողակենտրոն ուսուցման: Վերջինիս նպատակը դասաժամի ընթացքում ուսանողի ակտիվ մասնակցությունն ապահովելն է, նրա ստեղծագործական և լեզվական հմտությունների կատարելագործումը:

Օտար լեզվի բառապաշարի՝ բառակազմական ամենատարբեր եղանակներով կազմված բառային միավորների ուսուցումը բուհում կատարելագործում է ուսանողների լեզվական կարողությունները, նրանց դարձնում ունակ՝ տվյալ լեզվով համարձակ և անկաշկանդ հաղորդակցվելու, ինչպես նաև հարստացնում նրանց գրավոր հմտությունները: Սույն հոդվածի նպատակն է ներկայացնել անգլերենի և հայերենի հարակցական հարադրությունների համեմատական ուսուցումը բուհում: Առհասարակ գաղտնիք չէ, որ օտար լեզվի այս կամ այն լեզվական երևույթը առավել խորությամբ և ճիշտ է ընկալվում, երբ այն զուգադրում ենք մայրենի լեզվին:

Հայտնի է, որ հայագիտության մեջ առանձնացվում են բառակազմության երկու տիպեր՝ համադրական և վերլուծական[1]: Հայերենի բարդ բառերը քննող մեր բոլոր աշխատանքներում մենք առաջնորդվում ենք այն մոտեցմամբ, որ վերլուծական կառուցները բարդ բառերի (բարդությունների) մեջ չպետք է մտցնել՝ անվանելով հարադրական բարդություններ, քանի որ «…դրանք կազմվում են բառակազմական բոլորովին այլ, անկախ եղանակի՝ հարադրման ճանապարհով, ուստի և դրա հետևանքով ստացվող վերլուծական կազմությունները կամ բաղադրությունները պետք է կոչել պարզապես հարադրություններ»[2]:

Վերլուծական կառույցների առանձին տեսակ են հարակցական հարադրությունները: Դրանց բաղադրիչները հարադրվում են ուղղակի հարակցությամբ, գրվում են միացման գծիկով և ունեն իմաստային, ինչական միասնություն[3]: Դրանք անգլերենում համապատասխանում են copulative compounds «կապակցված, հարակցված բարդություններ» կամ additive (adjunctive) compounds

[1] Տե՛ս Ա. Մարգարյան, Ժամանակակից հայոց լեզու (բառակազմություն, դարձվածաբանություն, բառարանագրություն), Եր., 1990, էջ 51: Լ. Հովսեփյան, Բառակազմության տիպեր, եղանակներ և միջոցներ, «Ջահուկյանական ընթերցումներ» (4), Եր., 2009, էջ 106-108:
[2] Լ. Հովսեփյան, Գրաբարի բառակազմության վերլուծական տիպը, Եր., 2016, էջ 24:
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 26:

«գումարումային, հավելումային բարդություններ» տեսակին: Այս եզրույթները հաճախ հավասարապես կիրառում են՝ նկատի ունենալով նաև առդրական բաղադրությունները, ինչպես՝ բժիշկ-մաշկագետ, հնձիչ-խրձակապ, սակայն առդրականներին ավելի շատ տրվել է appositional անվանումը:

Հարակցական հարադրությունները կարելի է ուսուցանել՝ դրանք բաժանելով խմբերի՝ ըստ բաղադրիչների իմաստաբանական հարաբերակցության աստիճանի: Ըստ այդմ՝ կան առնչակից իմաստով, հոմանիշ և հականիշ բաղադրիչներով հարադրություններ.

Հարակցական հարադրություններ	Անգլերեն	Հայերեն
Առնչակից իմաստով բաղադրիչներով	cost-benefit «ծախք-օգուտ», mind-body «միտք-մարմին», murder-suicide «սպանություն-ինքնասպանություն», parent-child «ծնող-երեխա», parent-teacher «ծնող-ուսուցիչ», space-time «տարածություն-ժամանակ», work-life «աշխատանք-կյանք»	աղոթք-մրմունջ, անուն-ազգանուն, բեղ-մորուք, գիր-գրականություն, զենք-զրահ, թել-ասեղ, հարս-փեսա, հաց-թաց (թացան), պատանք-պատարագ, սեր-կարոտ, քար-ճար
Հոմանիշ բաղադրիչներով	dryness-drought «չորություն-երաշտ», love-affection «սեր-համակրանք», promotion-advancement «պաշտոնի բարձրացում-առաջխաղացում», tumbler-glass «բաժակ-ըմպանակ», rumour-gossip «ասեկոսե-բամբասանք»	գոռում-գոչյուն, դեղ-դարման, ընդմիջում-արանք, հաց-նշխար, հույս-ապավեն, հուր-կրակ, մեգ-մառախուղ, քար-ապառաժ
Հականիշ բաղադրիչներով	angel-beast «հրեշտակ-հրեշ (գազան)», day-night «գիշեր-ցերեկ», friend-enemy «ընկեր-թշնամի», love-hate «սեր-ատելություն», man-woman «կին-տղամարդ»	ահել-ջահել, աղջիկ-տղա, առավոտ-իրիկուն, երկինք-երկիր, գիշեր-ցերեկ, որձ-էգ

Հարակցական հարադրությունների իմաստային խմբերն ուսանողներին կարելի է առավել տեսանելի դարձնել PowerPoint ներկայացման միջոցով: Ուսա-

նողներին կարելի է բաժանել խմբերի, որոնցից առաջինը պետք է առանձնացնի փոխաբերական իմաստով հարակցական հարադրությունները, ինչպես՝ անձրև-արցունք «շատ արցունքներ», արցունք-կղզի «լացող, տառապող սիրտ», թաշկի-նակ-ամպ «թաշկինակաձև ամպի ծվեն», թարթիչ-նետ «նետաձև երկար ու սուր թարթիչ», թռչուն-միտք «նյութից նյութ անցնող միտք», լեռ-բլուր «շատ մեծ չափերով», խաղալիք-բլուր «խաղալիքանման փոքրիկ բլուր»:

Երկրորդ խմբին առաջադրվում է ներկայացնել, թե ինչպես են հարակցական հարադրությունները քերականական փոփոխությունների ենթարկվում (թվակազ-մություն, հոլովում, հոդառություն): Ուսանողները նշում են, որ հիմնականում փոփոխվում է հարակցական հարադրությունների երկրորդ բաղադրիչը, ինչպես՝ տատիկ-պապիկներ, տատիկ-պապիկները, տատիկ-պապիկներից, քար-ապա-ռաժներ, քար-ապառաժները, քար-ապառաժներից և այլն:

Կան նաև հարակցական հարադրություններ՝ երկու հոլովված բաղադրիչներով, օրինակ՝ ա) սեռական հոլովով՝ ամռան-ձմռան (հագուստ), սարի-ձորի, սրի-հրի, բ) տրական հոլովով՝ ձեռին-ոտին, ոտին-գլխին, քարին-քոլին, գ) բացառական հոլովով՝ հորից-մորից, ձեռից-ոտից, տնից-տեղից, դ) գործիական հոլովով՝ ազգով-ցեղով, բեռով-բարձով, բեռով-թեռով, թրով-սրով, ձեռով-ոտով, նազով-սազով/նազով-տուզով, շարքով-կարգով, շենքով-շնորհքով, տնով-տեղով, ոտով-ձեռով և այլն:

Այստեղ անհրաժեշտ է բացատրել, որ այս հարադրություններում ոչ թե բաղադրիչներից ամեն մեկն առանձին փոփոխվում է, այլ հարադրությունը կազմ-վում է արդեն հոլովված բաղադրիչներով:

Այս խումբը նաև նշում է, որ անգլերենում նույնպես քերականական փոփո-խության է ենթարկվում հարակցական հարադրությունների երկրորդ բաղադրիչը, ինչպես օրինակ՝ հոգնակիի կազմության դեպքում՝ friend-enemies «ընկեր-թշնամիներ», murder-suicides «մարդասպանություն-ինքնասպանություններ» և այլն:

Հարկ է նշել, որ քանի որ հոլովված բաղադրիչներով հարակցական հա-րադրություններից շատերը հաճախ փոխաբերական իմաստ են արտահայտում, այդ պատճառով երբեմն դիտվելով որպես անվանական դարձվածային կապակ-ցություններ՝ սրանց մի մասը տեղ է գտել նաև հայերենի դարձվածաբանական բառարաններում[1], օրինակ՝ համով-հոտով «դուրեկան, հաճելի», հոգով-սրտով «լիովին», ձեռով-ոտով «առողջ», ոտքով-գլխով «ամբողջապես, լիովին», տնով-տեղով «ողջ ընտանիքով, ունեցած-չունեցածով» և այլն: Սրանք նախադասության մեջ հիմնականում կա՛մ որոշչի դերում են հանդես գալիս՝ «Ձեռով–ոտով մարդ էր», կա՛մ պարագայական կիրառություն ունեն, ինչպես՝ «Ոտքով-գլխով փորձանքի մեջ ընկավ»:

[1] Տե՛ս Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Եր., 1975, Պ. Բեդիրյան, Դարձվածաբանական բացատրական բառարան, Եր., 1971:

Այնուհետև խմբի անդամները թվարկված հարադրություններով նախադասություններ են կազմում: Խմբային աշխատանքները զարգացնում են ուսանողների համագործակցային հմտությունները, նրանց միջև ստեղծում դրական փոխկապվածություն, միջանձնային ճիշտ փոխհարաբերություններ և ապահովում հետադարձ կապ խմբի անդամների միջև: Խմբերը վերջում գնահատվում են՝ ըստ ցուցաբերած ընդհանուր արդյունքի: Հմուտ դասախոսը պետք է կարողանա անգամ դժկամ ուսանողներին համոզել, որ խմբային աշխատանքներն արդյունավետ են ու անհրաժեշտ[1]:

Ուսանողների ուշադրությունը պետք է հրավիրել այն փաստին, որ անգլերենում հարակցական հարադրությունների ածականական արժեքը ակնհայտ է դառնում այն ժամանակ, երբ դրանք, միանալով մեկ այլ գոյականի, դառնում են վերջինի որոշիչը, ինչպես՝ [[doctor-patient] talk] «բժիշկ-հիվանդ զրույց», [[employer-worker] interaction] «տնօրեն-աշխատակից փոխհարաբերություն», [[father-son] relationship] «հայր-տղա հարաբերություն», [[mind-body] problem] «մտավոր-ֆիզիկական խնդիր», [[professor-student] cooperation] «դասախոս-ուսանող համագործակցություն», [[parent-child] conflict] «ծնող-երեխա հակասություն»[2]:

Father-daughter «հայր-աղջիկ» տիպի բաղադրությունների համադասական հարաբերությունը դրսևորվում և որպես այդպիսին ըմբռնվում է միայն այն դեպքում, երբ դրանք հանդես են գալիս իբրև լրացում, օրինակ՝ [[father-daughter] dance] կապակցության մեջ, որ նշանակում է «հոր և աղջկա պար», իսկ առանձին գործածվելու դեպքում բաղադրության իմաստը կարող է ճիշտ չհասկացվել և ընկալվել «հայր, որը նաև աղջիկ է» իմաստով. սա, իհարկե, անհեթեթություն կլինի[3]:

Երրորդ խմբին հանձնարարվում է առանձնացնել անգլերենում և հայերենում հարակցական այն բաղադրությունները, որոնք երկանդամ հատուկ անուններ են, ինչպես՝ Austria-Hungary «Ավստրո-Հունգարիա», Bosnia-Herzegovina «Բոսնիա-Հերցեգովինա», USA-Canada «ԱՄՆ-Կանադա», Արփա-Սևան, Բրեստ-Լիտովսկ, Գորիս-Երևան և այլն: Հարակցական հարադրություններ կարող են կազմվել նաև ամսանուններով, ինչպես՝ մարտ-ապրիլ, հունվար-փետրվար, April-May «ապրիլ-մայիս», June-July «հունիս-հուլիս», November-December «նոյեմբեր-դեկտեմբեր» և այլն:

Պետք է նշել, որ թվարկված հարադրությունները ևս, հարադրվելով գոյականի հետ, դառնում են դրա որոշիչները, ինչպես՝ [[Spain-France] match] «Իսպանիա-Ֆրանսիա մրցախաղ», [[Yerevan-Moscow] flight] «Երևան-Մոսկվա չվերթ»,

---

[1] Տե՛ս J. Harmer, The Practice of English Language Teaching, Edinburgh, 2001, էջ 119:

[2] Տե՛ս S. Padrosa-Trias, Are there Coordinate Compounds?, "Morphology and Diachrony; On-Line Proceedings of the Seventh Mediterranean Morphology Meeting (MMM 7)", Greece, 2010, էջ 98-111:

[3].Տե՛սhttps://books.google.am/books?id=46kLFhR5gj4C&pg=PA2&lpg=PA2&dq=Olsen+S.,+Coordination+in+Morphology+and+Syntax:+the+Case+of+Copulative+Compounds S. Olsen, Coordination in Morphology and Syntax: the Case of Copulative Compounds, "The Composition of Meaning: from Lexeme to Discourse (Current Issues in Linguistic Theory, 255)", Amsterdam/Philadelphia, 2004, էջ 23:

[[November-December] period] «նոյեմբերից դեկտեմբեր ընկած ժամանակահատված» և այլն:

Ինչ վերաբերում է հարակցականների իմաստային կենտրոն ունենալուն, doctor-patient «բժիշկ-հիվանդ», professor-student «դասախոս-ուսանող» բաղադրություններն արտակենտրոն են, քանի որ թեև դրանց կազմի մեջ մտնող բաղադրիչներն առանձին բնութագրում են մարդկանց, սակայն հարադրությունն ամբողջությամբ մատնանշում է բաղադրիչների միջև եղած հարաբերությունը, հետևաբար կենտրոնը բաղադրությունից դուրս է[1]:

Անգլերենի հարակցական հարադրությունների դասավանդումը ինտերակտիվ մեթոդների, զույգերով և խմբային աշխատանքների կիրառմամբ հարստացնում է ուսանողների բառապաշարը, նրանց իրազեկ դարձնում բառապաշարային զարգացումներին և փոփոխություններին:

Բանալի բառեր՝ բառակազմություն, մեթոդներ, հարակցական հարադրություններ, իմաստային, քերականական, հոմանիշ, հականիշ, արտակենտրոն, դարձվածային, բառապաշար:

TEACHING ENGLISH COPULATIVE (ADDITIVE/ADJUNCTIVE) COMPOUNDS (ANALYTICAL STRUCTURES) IN COMPARISON WITH ARMENIAN

S. H. KARAPETYAN
PHD, Lecturer of the Chair of Germanic Languages, ARMSPU

The article examines the methods of teaching English copulative (additive/adjunctive) compounds in comparison with Armenian in higher educational institutions. The explanation of copulative (additive/adjunctive) compounds is accompanied with their grouping into certain semantic classes, using pair and group works, implementing interactive methods. The grammatical and vocabulary peculiarities of copulative (additive/adjunctive) compounds (analytical structures) are also touched upon in the article.

[1] Տե՛ս R. Lieber, Introducing Morphology, Cambridge, 2009, էջ 47-48:

ОБУЧЕНИЕ АНАЛИТИЧЕСКИМ КОНСТРУКЦИЯМ АНГЛИЙСКОГО ЯЗЫКА С АДДИТИВНЫМ СОПОЛОЖЕНИЕМ КОМПОНЕНТОВ В СОПОСТАВЛЕНИИ С АРМЯНСКИМ ЯЗЫКОМ

С. О. КАРАПЕТЯН
Кандидат филологических наук,
преподаватель кафедры германских языков АГПУ

В статье рассмотрены методы преподавания в вузе аналитических конструкций английского языка с аддитивным соположением компонентов в сопоставлении с армянским языком. Разбор конструкций сопровождается их классификацией в определенные семантические группы, а также предлагаются модели работы студентов в парах и группах с использованием интерактивных методов. Затрагиваются грамматические и лексические особенности аналитических конструкций с аддитивным соположением компонентов.

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԻՋԻՆ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Ս. Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ
Բանասիրական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ հայոց լեզվի պատմության ամբիոնի դոցենտ susannagrigoryan@ysu.am

Միջին հայերենում եվրոպական փոխառությունների մեջ քանակապես աչքի են ընկնում հունական փոխառությունները: Հունարենի ազդեցությունը հայերենի զարգացման ընթացքում տարբեր է եղել՝ պայմանավորված այդ լեզուները կրող ժողովուրդների քաղաքական, մշակութային, կրոնական, պատմական առնչակցությունների հանգամանքներով: Թեև հայ-հունական ուղղակի շփումներն արդեն անցյալում էին, սակայն հունական գիտությունը և մշակույթը շարունակում էին ուղղորդող ազդեցություն գործել հայ մտավորականության վրա, և միջին հայերենի ժամանակաշրջանում՝ հատկապես 12-14-րդ դարերում, մեր լեզուն շարունակում է հարստանալ հունական փոխառություններով: Հունարենից միջին հայերենին անցած բառերի գերակշռող մասն անմիջական գրական փոխառություններ են՝ հիմնականում կապված գիտական, կրոնական և մշակութային բնագավառների հետ:

Ըստ Գ. Ջահուկյանի՝ հայ-հունական լեզվական առնչությունները նախագրային շրջանում ընթացել են 4 հիմնական փուլով. ա. վաղ առնչությունների փուլ (մ. թ. ա. 5-րդ - մ. թ. ա. 4-րդ դդ.), բ. հունական քաղաքական և մշակութային վաղ ազդեցության փուլ (մ. թ. ա. 3-րդ դարի 30-ական թթ.- մ. թ. 1-ին դարի 60-ական թթ.), գ. Հռոմի քաղաքական ազդեցության ուժեղացման և հունական մշակութային ազդեցության փուլ, դ. բյուզանդական մշակութային և կրոնական ազդեցության փուլ (4-րդ դար), երբ հայերը կրոնակից են դառնում հույներին և քրիստոնեական կողմնորոշումից հետո սերտ կապերի մեջ են մտնում հունական պետության հետ: 4-րդ դարի երկրորդ կեսում թեև դավանաբանական տարաձայնությունների հիման վրա հայկական եկեղեցին անկախացավ Բյուզանդիայից, բայց և այնպես շարունակվում էր հունական մշակույթի ազդեցությունը[1]: Ի տարբերություն Գ. Ջահուկյանի ՝ Հր. Աճառյանը հայ-հունական լեզվական առնչությունների սկիզբ համարում է քրիստոնեության ընդունման շրջանը՝ պնդելով, որ ‹‹նախաքրիստոնեական շրջանում հայերը հույներից ոչ մի բառ փոխ չեն առել…››[2]: Ինչպես նշում է Ռ. Ղազարյանն իր ‹‹Միջին գրական հայերենի բառապաշարը›› աշխատության մեջ, միջնադարում հունարենը հայերենի ընդհանուր բառապաշարի հարստացման գործում էական դեր չի խաղացել, քանի որ միջին հայերենում գործածական հունարեն փոխառյալ բառերի մեծ մասը՝ որպես օտարաբանություն, չմերվելով գրական լեզվի բառապաշարին, ժամանակի ընթացքում դուրս է մղվել գործածությունից[3]:

---

[1]. Տե՛ս Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային ժամանակաշրջան, Եր., 1961, էջ 615:
[2] Տե՛ս Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, մաս 2, Եր., 1951, էջ 7:
[3] Տե՛ս Ղազարյան Ռ., Միջին հայերենի բառապաշարը, Եր., 2001, էջ 138:

«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատության Ա հատորում արձանագրված է 180 հունական փոխառություն, իսկ Հ. Ավետիսյանի և Ռ. Ղազարյանի «Միջին հայերենի բառարանում» դրանց թիվը 276 է: Միջին հայերեն թափանցած հունական փոխառությունների թիվը, ելնելով որոշ սկզբնաղբյուրների հետազոտությունից, Մ. Ղազարյանը հասցնում է 300-ի՝ բացառելով 5-9-րդ դարերում փոխառված, ինչպես նաև այլ լեզուների միջոցով թափանցած բառամիավորները[1]:

Հունարենից միջին հայերեն փոխառված բառերի մեծ մասը խոսքիմասային առումով գոյականներ են, որոնք հիմնականում ենթարկվում են **ի** արտաքին հոլովման՝ ապօտիկս /մուրհակ/-ապօտիկսի, ակալութ/հետևորդ/-ակալութի, դոմետիկոս/դավանաբան/-դոմետիկոսի, իկոն/սրբապատկեր-իկոնի, սենգելոս/ա-վագ սարկավագ/-սենգելոսի և այլն, թալատայ/ ծով/ գոյականը ենթարկվում է **ու** արտաքին հոլովման՝ թալատու, պապ/եկեղեցական տիտղոս/ գոյականը են-թարկվում է **ի, ու, ա** արտաքին հոլովումների՝ պապի, պապու, պապայ, իսկ որոշ գոյականներ պատկանում են միաժամանակ 2 հոլովման՝ սինօդ/սահման/-սինօդի, սինօդայ, տաֆնի/դափնի/-տաֆնու, տաֆնոյ: Բառի թեքման ժամանակ հնարավոր է շեշտազրկված ձայնավորի սղում, ինչպես՝ վուծին/տակառ/-վուծնի: Փոխառված գոյականների հոգնակին կազմվում է **եր, ներ, ք, նի** հոգնակերտ մասնիկների միջոցով՝ կոմ/մազափունջ/-կոմեր, սինօդ/սահմանագիծ/-սինօդնի, լիթանիայ/ա-ղոթք/-լիթանիայք, անքիլոս/օձաձուկ/ անքիլոսներ:

Հունարենից կատարված փոխառությունները, ենթարկվելով հայերենի բառակազմական կանոններին, կարող են կազմել նոր բառամիավորներ, օրինակ՝ փոխառված գոյականներից և ածականներից մի քանիսը ստացել են հայերենին հատուկ ձև, քանի որ հունարեն վերջավորությունը փոխարինվել է հայերեն ածականակերտ **-ական** ածանցով, ինչպես՝ իմերիական, սեմական, էլիսական-արեգակնային, պատրիարգական- պատրիարքին վերաբերող, դիաթէկ գոյա-կանը, որ միջնադարյան գրականության մեջ հանդիպում է դիատիկ, դիաթիկ ձևերով, փոխառվելով հունարեն «կտակ» բառից և ստանալով **–ան** ժխտական նախածանցը, կազմել է անթիատիկ-անկտակ գոյականը, իսկ մելան/թանաք/ գոյականից միջին հայերենում կազմվել են նորաստեղծ մելանագիծ, մելանաւոր, մելանագործութիւն, մելանառ, մելանածուկ գոյականները, զիտառ /կեղծ աբեղա/ գոյականից՝ զիտառութիւն ածանցավոր գոյականը, սինօդ /սահման/ գոյականից՝ սինօդակից, սինօդապահ բարդությունները, սինօդել բայը: Ինչպես նկատելի է, բառաբարդման կամ ածանցման ժամանակ մի դեպքում փոխառված բառա-միավորը պահպանում է իր խոսքիմասային պատկանելությունը, ինչպես՝ սինօդապահ, մելանագիծ, մելանածուկ, զիտառութիւն, մեկ այլ դեպքում տեղի է ունենում խոսքիմասային անցում՝ դիատիկ-անդիատիկ, սինօդ-սինօդել:

Այս շրջանում, ըստ մեր հաշվումների, հունարենից փոխառվել է 14 ածական՝ անտիաթիկ-անկտակ, դիակայիս-սուր, դիկատոր-հրամայող, եպիկորոս-էպի-

[1] Տե՛ս Ղազարյան Մ., Եվրոպական փոխառությունները միջին հայերենում, Եր., 2000:

կուրյան, էգոնոմոս-խստակյաց, էտիսիուն-տարեկան, ամենամսյա, ըկտիկօն-թոքախտային, իմերիական-ամենօրյա, մակարայ-երջանիկ, պերիտոս-կենտ, անզույգ, պրոկող-կաղ, սեմական-գերեզմանային, վլատ-ծիրանի, օքսինտռի-ասեղնագործ: Միջին հայերենի շրջանում հունական փոխառությունների մեջ արձանագրված է 5 բայ՝ անոգանալ-կարդալ, եպիդեմել-կառուցել, սինօռել-սահմաններ հաստատել, րոտել-փնտրել, ֆանոսել-կարասը ձյութելուց առաջ ողորկել, կոկել:

Հունական փոխառություններից մի քանիսը որոշակի փոփոխություններով պահպանվել են ժամանակակից հայերենում, ինչպես՝ ագադէս-ագաթ, ալապաստր-ալաբաստր, ապանոս-էբենոս, տաֆնի-դափնի, կեթար-կիթառ, մազտաքե-մաստակ, մօլօշ-մոլոշ, նարդոս-նարդոս, պաքսիմիտ-պաքսիմատ, սալամանտարայ-սալամանդր, տարեխ-տառեխ և այլն:

Հունական փոխառությունների իմաստաբանական քննությունը ցույց է տալիս, որ դրանք կարելի է բաժանել երկու խմբի՝ տերմինային և ոչ տերմինային արժեք ունեցող բառամիավորների: Քանի որ հունարենից միջին հայերեն կատարված փոխառությունների մեծ մասը պատկանում է գիտական, մշակութային և կրոնական ոլորտներին, ուստի դրանք հիմնականում լրացնում են տերմինային արժեք ունեցող բառերի իմաստային դաշտերը: Ներկայացնենք հունարենից միջին հայերեն մուտք գործած փոխառությունների իմաստային դասակարգման ցանկը.

Ֆիզիկական աշխարհ, բնության երևույթներ - ագատ-ագաթ, ալապաստր-լսնակուճ, ամթ-ամեթիստ, ապանոս-սևափայտ, արիս-հարավարևմտյան քամի, արղիրոս-արծաթ, բօրէաս-հյուսիսարևելյան քամի, բօրֆիւր-ծիրանաքար, դիամանդ-ադամանդ, թրասկիայ-հյուսիսարևելյան քամի, իլիօս-արեգակ, կիկիաս-հյուսիսարևելյան քամի, կիսար-չեչաքար, կլիմ-կլիմայական գոտի, կուկուլ-մետաքս, ղալխանդ-պղնձարջասպ, ղալղատիս-պղնձահանքանյութ, մարմառ-կարծր փայլուն ապար, մէդալ-մետաղ, մկնատիզ- մագնիս, պորփիւր-ծիրանաքար, վօրեազ- հյուսիսային սառը քամի, օխրայ-դեղնահող:

Բժշկություն - ապուպլիսխայ-կաթված, ափիմեռինոս-ամենօրյա ջերմ, դասպինա-շնչարգելություն, դիապետս-շաքարախտ, եփթեսիստ-թոքախտ, զմայ-ասթմա, ըկտիկոն-հալումաշ, լիթրուղօս-հիշողության կորուստ, կաթուղիկէ-բազկերակ, կոմայ-քնափություն, ռուստուպել-կարմիր քամի, սինէխօս-տենդ, սնթերի-արյունալուծ, տեքսիս-տենդ, տիստրիտէօն-եռօրյա ջերմ, փլեղմունի-ճարպաշերտի բորբոքում:

Ժամանակի, չափի միավորներ- դիկտիոն- 15 տարվա շրջան, դիւստրոս-հունական արեգակնային տարվա առաջին ամիսը, երկուս-չորեքշաբթի, մետրաչափ, միլ-մղոն, պերիտոս-կենտ, տրխանայ-նուկիի ութերորդ մասը:

Կենդանական աշխարհ-ախազ- կզաքիս, անքիլոս- օձաձուկ, ափասիանոս-փասիան, բաղուրեայ-ծովախեցգետին, եղուրոս-կատու, եպենէս-ծովային երկպատյան խեցեմորթ, ըխթափոթ-ութոտնուկ, ըստաքոս- օմար, կօլէօզթյունիկազգի ձուկ, կօխլօնջ-խխունջ, յասպիս- թունավոր օձ, ոփսարի-ձկան տեսակ, պիթնուս-աքաղաղ, պրիստէ-սղոցաձուկ, սալամանտարայ-սալամանդր, սարու-մողես, սուփեայ- թանաքաձուկ, տիգրիս-վագր:

Բուսական աշխարհ-աթանասիա-անթառամ ծաղիկ, աղարիկոն-գլխարկավոր սունկ, աղիմայ-հովվափող, աղկեպ- եղինջ, աղրանիայ-հոնի, ամրուսիայ-ամբրոսիա, արխրս-խոլորձ, ափարփի-կաթնուկ, բլիտոր-մեղրատու բույս, լիբանոս-խնկի ծառ, լովիաս-լոբի, կաստանայ- շագանակ, կիմինոն-դարչնածառ, կիպեռիս-գետնանուշ, կոպտոն-կտավատ, կռան-հոն, կուկիայ-բակլա, մանծակ-սմբուկ, մաքկակաչ, մենիաս- խաղողի որթի տեսակ, մորտ-մորի, պանտատիղոն-մատնունի, պեղանոս-պեգանա, պետարիօն-երեսնակ, պռաս-պրասասոխ, սկորդօն-վայրի սխտոր, սֆիտամօն-թխկի, քամայֆատոս-լերդախոտ, քամատարիոս-գետնի կաղնի:

Կենցաղ, ընտանիք, գործողություն, նավագնացություն - անոգանալ-կարդալ, ապոմամ-տատի տատը, ապոպապ-պապի պապը, եպիդեմել-կառուցել, կատառիկայմ, կերիոն-մոմ, կոմ-մազափունջ, ղալէ-առագաստավոր թիանավ, մանրայփարախ, պռոյգ-օժիտ, վարքայ-նավակ, րոտել-փնտրել, ֆանառ-լապտեր, ֆանոսել-ձյութել, ողորկել կարասը:

Պետական-վարչական կյանք, ծառայություն, պաշտոն, տիտղոս, իրավունք-ակալութ-հետևորդ, անափոռտ-զեկուցագիր, անթիպատ-փոխհյուպատոս, ապոտիկս-մուրհակ, բեկար-արքայի փոխանորդ, դեսպինա-արքայադուստր, դիաթէկկտակ, դիար-պալատական պաշտոնյա, դիմիսոն-բանտ, եղդիկոս-դատավոր, եպարքի-նահանգ, եպարքոս-կուսակալ, երղատ-գործավոր, իպպատոս-հյուպատոս, լեդին-դատավարություն, լիզիոն-վասալ, կատապան-գլխահարկ, կիռ-տեր, նօմիկոս-նոտար, նօմոս-օրենք, պռոթես-վճիռ, պայման, պռոքսետորայ-վահանակիր, պռաստին-արվարձան, պօլիս-քաղաք, սեւաստոս-ասպետ, սինտիկոսվերակացու, տիթլ-տիտղոս, տիկանիօն-տասնապետ, տոկլինար-թագավորական պալատի սեղանապետ, տրակաման-թարգմանիչ, փղակոն-գիշերապահ:

Կրոն-անաթէմաթիզաթ-անեծք, ապոկրիսիար-եկեղեցու սպասավոր, արքիտիագօնուս-ավագ սարկավագ, դեկան-վանահայր, դիակոն-սարկավագ, դոմետիկոսդավանաբան, եկլէսիայ-եկեղեցի, եմիֆօրօն-ուրար, եպիմանիկոս-պատարագիչ քահանա, երեփս-քահանա, իկոն-սրբապատկեր, լաւրա-վանք, լիթանիայ-աղոթք, հեննետիկոն- միաբանական, մոլոզոն-մենակյաց, միդր-խույր, պռոտոֆրօնտէսպատրիարք, սենգելոս-ավագ սարկավագ, սինակոկ-աղոթարան, սպերտօ-լուցկի, վիռոն-փիլոն, փիրիսկոպոս-քորեպիսկոպոս:

Ուտելիք և ըմպելիք-զօմին-արգանակ, ըրախի-օղի, իսխադաս-չոր թուզ, պաքսիմիտ-պաքսիմատ, պաստեղ-պաստեղ, փխտի-դոնդողակ:

Բանալի բառեր՝ *կաղապար, հաղորդակցում, լեզվական կառուցվածք, բառապաշար, գրական լեզու, անմիջական և միջնորդավորված փոխառություն:*

GREEK LOAN WORDS IN MIDDLE ARMENIAN

S. A. GRIGORYAN
PhD, Associate Professor of the Chair of the Armenian Language History
YSU Lecturer

In the course of time Middle Armenian word system has always developed and got richer, reflecting the differences which take place in the life of the nation. The given period is quite rich in borrowings, which were adopted and did not die out in the language due to the cultural, political and commercial connections of Armenians with other nations. The aim of the given article is to analyze Greek loan words, to reveal the frequency and spheres of their usage and their morphological and semantic peculiarities. In the period under discussion, the number of loan words imported from Greek languages has reached to 300.

ГРЕЧЕСКИЕ ЗАИМСТВОВАНИЯ В СРЕДНЕАРМЯНСКОМ ЯЗЫКЕ

С. А. ГРИГОРЯН
Кандидат филологических наук
доцент кафедры “История армянского языка”, преподаватель ЕГУ

Лексический состав среднеармянского языка постоянно пополнялся и обогащался по ходу развития, отражая изменения, происходящие в жизни народа. Этот период достаточно богат заимствованиями, которые прижились в языке благодаря культурным, политическим и торговым связям армянского народа с другими народами. Целью этой статьи является исследование греческих заимствований, выяснение сферы их употребления и частотности, а также выявление их морфологических и семантических особенностей. В рассматриваемом периоде число греческих заимствований достигает примерно 300 слов.

ОСОБЕННОСТИ ОРГАНИЗАЦИИ ОБРАЗОВАТЕЛЬНОГО ПРОЦЕССА С ДЕТЬМИ-БЕЖЕНЦАМИ

Г. А. МИРИБЯН

Кандидат филологических наук,
зав. кафедрой иностранного языка и литературы ГГУ

In their research, Knight and De Wit suggest viewing the internationalization process as a continuous cycle, not a linear or static process. The proposed internationalization cycle attempts to identify the steps or phases in the process of integrating the international dimension into the university/college culture and systems. The internationalization cycle has six phases, which an institution would move through at its own pace. (See Figure 1).

Internationalization Cycle

Figure 1



Awareness

It is important to stimulate campus-wide discussions on such topics as the need, purpose, strategies, controversial issues, resource implications and benefits of internationalization. Internationalization cannot be owned by a small group, as it then becomes marginalised and can be seen as an exclusive, rather than inclusive, issue. Finally, awareness is not enough; it must be turned into commitment.

Commitment

Building commitment to the process of integrating an international dimension into the teaching/learning, research and service functions of a university.

Strong and vocal support from a broad base of faculty, staff and students are needed to complement the commitment from the senior administrators and to convert commitment into planning strategies. While the commitment from senior administration will lead the process, the real engine of internationalization will be faculty and staff.

Planning

Clarification of the purpose and goal is a critical first step. The reasons for internationalizing, the intended outcomes, the unique features, resources and needs of the organisation need to be clearly assessed and factored into a strategy. An internationalization plan tailored to build on the specific interests, characteristics and objectives of the university/college has a better chance of success than a general purpose strategy. Planning needs to happen at several different levels. The university-wide plan needs to demonstrate the priority and provide the framework and direction. Reference to the international dimension in the mission statement is critical but the next step is to translate this expression of importance and intent into strategic and operational plans. Planning for internationalization will be unique to each institution. Institutions do not start with a blank slate, and it is important to respect the constituencies of interests and expertise and build on them.

Review

The concept of review needs to be interpreted in two different ways. In the more conventional sense, review means monitoring and assessment of the value and success of individual activities as well as how they work together in a complementary and mutually beneficial way.

The concept of review also relates to incorporating internationalization into the annual or biannual review and budgeting process engaged in by academic departments and administrative units across the campus. This type of systematic review is necessary to integrate internationalization into the regular administrative and academic systems of the institution.

Reinforcement

For commitment to be sustained, it is important to build in incentives and rewards. The culture of each university will determine the specific ways to acknowledge and honour internationalization efforts. It is important to poll faculty and staff for their own ideas on what helps or hinders their contribution and sense of achievement in internationalization work.

Reinforcement and reward lead to renewed awareness and commitment. A continuous support, monitoring and review system attempts to improve quality and involves incentives, recognition and rewards (De Wit H., Knight J., 1995).

Internationalization of the curriculum may be an effective means of providing an academic environment that supports the diverse cultural learning needs of international students. Leask (Leask, 2001) suggests that, "internationalizing university curricula is a powerful and practical way of bridging the gap between rhetoric and practice to including and valuing the contribution of international students".

Numerous researchers emphasize the centrality of the curriculum and the internationalization of the curriculum and teaching and learning processes as critical elements of internationalization (Bond, 2003a; Bond et al., 2003; Green & Olson, 2003; Knight, 1994). Knight describes the curriculum as "the backbone of the internationalization process" (Knight, 1994). Other researchers concur, emphasizing the importance of an internationalized curriculum in providing a student-centered learning experience for all students and in preparing students to be successful in today's increasingly interdependent global society.

Internationalization of the curriculum should be part of an ongoing, comprehensive, integrated, interdisciplinary approach to institutional internationalization.

Internationalizing the curriculum is a lengthy process. Yet programme design and revision are creative activities, and will result in innovative and beneficial ideas for the way that programmes are delivered in any institution.

Why do universities need to “internationalize” their curricula? Students who learn in an environment where diverse perspectives are fostered and appreciated become better critical thinkers, better communicators, better problem-solvers and better team players. The curriculum should be inclusive and culturally responsive. It should help students to understand the global context of their studies and to operate effectively in international professional environments.

A graduate with an international awareness of his / her chosen profession is arguably much more employable than a graduate who does not have this awareness. Young people who have an awareness of cultural differences and can demonstrate an ability to build relationships with a diverse range of customers /patients/ colleagues are seen to have a significant advantage in the job market.

Curricular reform needs to occur not only at the faculty and departmental level, but also at the

institutional level in order that students' experiences with an internationalized curriculum are not isolated to a particular course or department. Transforming the curriculum requires a move from individual faculty members working in isolation to a more comprehensive, collaborative strategy. An internationalized curriculum demands a move from a teacher-centered learning environment, in which the traditional lecture and discussion style of teaching dominates (Bond, 2003a), to a more inclusive, student-centered, interactive, and experiential learning environment.

The three approaches to internationalizing the curriculum most common are the add-on, infusion, and transformation approaches (Bond, 2003a, 2003b).

The first approach used to internationalize the curriculum was the *add-on approach*. It is

characterized by adding "content, concepts, themes, and perspective to the curriculum without changing its structure".

The infusion approach to internationalizing the curriculum is the one most commonly employed in European institutions today (Bond, 2003b). Within this approach, the curriculum is infused with "course content that reflects diverse perspectives and provides students with knowledge of the differences in professional practices across cultures". The infusion approach focuses on the interdisciplinary nature of the internationalization of the curriculum and provides opportunities for students in all fields of study to experience "an international, multicultural and if possible intercultural dimension".

The final approach to internationalizing the curriculum, *the transformation approach,* is probably the most difficult to adopt and the least utilized approach to modifying the curriculum (Bond, 2003a, 2003b). Bond stated that the goal of the transformation approach is "to enable students to move between two or more worldviews". *The transformation approach* recognizes that the intellectual skills and knowledge that institutions impart to their students within the curricula are culturally biased. A transformed approach to an internationalized curriculum aims to assist students with developing the required critical consciousness, values, awareness, skills, and knowledge of cross-cultural differences to thrive as global citizens in a constantly changing world.

Researchers overwhelmingly contend that faculty members are the key to the reform process required for the internationalization of the curriculum (Bond, 2003, Green and Olson, 2003). Nevertheless, faculty cannot act alone in this process.

Students also play a crucial role in internationalizing the curriculum. The importance of including a cross-cultural perspective within the curriculum and pedagogical techniques of a course and of drawing upon the knowledge and experiences of international students as a resource towards this goal is essential for successful curricular reform (Bond, 2006; Bond, 2003, Knight, 1994, Leask, 2001).

Nevertheless, by only focusing on curriculum internationalization activities one can overlook the organisation process issues, which are important to ensuring that the different activities within internationalization reinforce each other; that they become central to the mission of the university.

However, the study of internationalization of higher education is still rather fragmented, primarily based on American experiences, and conflated with studies in the areas of comparative education, international education, global education and multicultural education.

Key words: *Internationalization, higher education, international education, international students, university, knowledge, student, curriculum, multicultural, approach, strategy.*

References

1. Bond, S., Untapped resources: Internationalization of the curriculum and classroom experience. Ottawa. 2003.
2. Banks, J., Approaches to multicultural curriculum reform. University of Washington. 2004.
3. De Wit H., Knight J., Strategies for internationalization of higher education: historical and conceptual perspectives. Washington. 1995.
4. Etaat, J., Education and development. Economic and Political Information. International Association of Universities Newsletter. 1999.
5. Enders, J., Higher Education, Internationalization, and the Nation-state: Recent Developments and Challenges to Governance Theory. Higher Education, Romania. 2004.
6. Fielden, J. & Karen, A., Accountability and international cooperation in the renewal of higher education, Unesco. 2001.
7. Ginkel, H., & Seddoh, K., Challenges, Perceptions & Priorities: Internationalization of Higher Education. International Association of Universities Newsletter. 2002.
8. Green, M. & Olson, C., Internationalizing the Campus: A User's Guide. Washington, DC: American Council on Education. 2003.
9. Hudzik, J., Comprehensive Internationalization: From Concept to Action. Washington, D.C. 2011.
10. Knight, J., Internationalization: Elements and checkpoints (CBIE Research No. 7). Ottawa. 1994.
11. Knight, J., Internationalization remodeled: Definition, approaches, and rationales. Journal of Studies in International Education. 2004.
12. Khalid Pervaiz, M. & Azad, M. U. D., Quality teaching and research: Prerequisites, accomplishment and assessment. China. 2007.
13. Leask, B., Bridging the gap: Internationalizing university curricula. Journal of Studies in International Education. 2001.
14. Mahmoodi, V., Education for development. Economic and Political Information. Journal of Studies. 1993.
15. Van der Wende, M., Internationalization Policies: About New Trends and Contrasting Paradigms. Higher Education Policy, Stockholm. 2001.

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐ

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
ԳՊՀ միջազգային ծրագրերի գծով որակի ապահովման մասնագետ,
ԳՊՀ դասախոս

Հոդվածում քննվում է բարձրագույն կրթության միջազգայնացման կարևորությունն արդի դարաշրջանում: Կրթության միջազգայնացումն օգնում է ուսումնական հաստատություններին՝ պատրաստելու շրջանավարտներ ապագայի համար: Այն առանցքային նշանակություն ունի ուսանողական կրթական պայմանների, ծրագրերի և ուսումնական պլանների բարելավման գործընթացում:

Հոդվածում ներկայացվում է բարձրագույն կրթության միջազգայնացման առավել հայտնի ռազմավարությունները: Անդրադարձ է կատարվել նաև կրթական ծրագրի միջազգայնացմանն ուղղված մոտեցումներին ու մեթոդներին:

ИНТЕРНАЦИОНАЛИЗАЦИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ

С. А. ХАЧАТРЯН
Специалист по обеспечению качества международных программ ГГУ
Преподаватель ГГУ

В статье обсуждается важность интернационализации высшего образования в современную эпоху. Интернационализация образования помогает учебным заведениям подготовить выпускников для будущего, она является ключевым элементом в процессе совершенствования образовательных программ, учебных планов и условий обучения студентов в глобализирующемся мире.

В статье представлены наиболее известные стратегии интернационализации высшего образования. Затронуты подходы и методы, направленные на интернационализацию образовательной программы.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Հ. Հ. ՕՀԱՆՅԱՆ
Մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ,
ՀՀ վաստակավոր մանկավարժ,
ԳՊՀ դասախոս
Ա. Դ. ՍԱՀԱԿՅԱՆ
Կարմիրգյուղի թիվ 1 միջնակարգ դպրոցի ուսուցչուհի

Ժամանակակից աշխարհում մեծանում է հասարակության ներգործության աստիճանը շրջակա միջավայրի վրա, և առավել արդիական է դառնում մարդկանց էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը:

Հանրակրթական դպրոցը՝ որպես կրթական համակարգի կարևորագույն օղակ, կոչված է լուծելու նաև աճող սերնդի էկոլոգիական դաստիարակության խնդիրը՝ սկսած կրտսեր դպրոցական տարիքից: Ուստի էկոլոգիական դաստիարակությունը համարվում է հանրակրթական դպրոցի դաստիարակչական աշխատանքների գերակա ուղղություններից մեկը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների պատշաճ կազմակերպումը կնպաստի բնության հանդեպ երեխաների ճանաչողական կարողությունների զարգացմանը, նրանք կունենան էկոլոգիական գիտելիքներ և կկարողանան հոգատար վերաբերվել շրջակա միջավայրի նկատմամբ:

Այսօր, առավել քան երբևէ, այս ուղղությամբ տարվելիք աշխատանքները իրենց զգացնել են տալիս: Ուստի կարևորվում է տարրական դասարաններում էկոլոգիական դաստիարակության կազմակերպման առանձնահատկությունների ուսումնասիրման խնդիրը:

Գիտատեխնիկական առաջընթացի ներկա փուլում առաջացել են բնության հավասարակշռության աննախադեպ խախտումներ և կենսոլորտի հետագա վիճակը կախման մեջ է մնացել մարդուց: Մարդկությանն անհրաժեշտ է ազատվել բնության դեմ պայքարողի, բնության «տիրակալի» բարդույթից:

Մարդու ներթափանցումը ինքնակարգավորվող կենսոլորտ, որը ձևավորվել է միլիոնավոր տարիների ընթացքում, նրանից առանձնահատուկ գիտելիքներ, շրջակա միջավայրի անվտանգությունը երաշխավորող քայլեր է պահանջում: Ահա թե ինչու էկոլոգիական դաստիարակության հետագա խթանումը, որակապես նոր մակարդակի բարձրացումն օրվա հրամայական հարց է դարձել:

Ժամանակակից աշխարհն ապրում է իր զարգացման բարդ շրջանը և տեխնոկրատական քաղաքակրթությունը հակասությունների մեջ է մտել բնության օրենքների հետ: Անխնա օգտագործելով բնությունը՝ մարդը գերագնահատել է կենսոլորտի հնարավորությունները: Շրջակա միջավայրի էության այդպիսի գիտակցումը տարբեր բնագավառների մասնագետներին բերել է այն եզրակացության, որ առկա է էկոլոգիական ճգնաժամ: Էկոլոգիական աղետալի վիճակից դուրս գալու առաջին պայմանը սովորողների մեջ բնության վերաբերյալ

ունեցած պատկերացումների վերանայումն է, բնությունը պահպանելու, այն խնայողաբար օգտագործելու մշակույթի ձևավորումը:

Ընտանիքի, նախադպրոցական հաստատության, հանրակրթական դպրոցի խնդիրը պետք է լինի երեխայի գիտակցությանը հասցնել այն գաղափարը, որ յուրաքանչյուր մարդ բնության հետ կապված է անտեսանելի թելերով և պետք է նրանից ընդօրինակի կյանքի ռիթմը, ներդաշնակությունը, համաչափությունը... Դպրոցականները պետք է գիտակցեն, որ իրենցից յուրաքանչյուրը բնության մի մասնիկ է և պետք է ենթարկվի այն կարգ ու կանոնին, որը տիրում է բնության մեջ[1]:

Բնությունը, շրջակա միջավայրը, բոլոր մարդկանց հոգածության առարկան պետք է լինի, որի պահպանման և բարեհաջող վերականգնման համար բոլորը անձնական պատասխանատվություն են կրում:

Շրջակա աշխարհի հետ սովորողների փոխհարաբերության մշակույթի ձևավորման գործում գլխավոր դերը պատկանում է դաստիարակությանը, որն ապահովում է անձի հոգևոր ու բարոյական հասունացումը՝ նպաստելով բնության հետ նրա ունեցած հարաբերությունների ներդաշնակությանը:

Էկոլոգիական դաստիարակությունը չի կարող իրականացվել սոցիալ-մշակութային բնագավառներից դուրս, որտեղ պետք է փնտրել էկոլոգիական հիմնախնդիրների պատասխանները՝ բնության պահպանման, բնօգտագործման հարցերը: Դաստիարակության հիմնական գործառույթը աճող սերնդին մշակութային այն արժեքների փոխանցումն է, որոնք դարերի ընթացքում կուտակվել են նախորդ սերունդների կողմից:

Էկոլոգիական դաստիարակության նպատակը սովորողների մեջ բնության պահպանման, բնության նկատմամբ ընդունելի վարքագծի դրսևորման սովորույթի մշակումն է: Էկոլոգիական դաստիարակություն ասելով պետք է հասկանալ անձի ուսուցման, դաստիարակության և զարգացման գործընթացների ամբողջական միասնությունը, որը նպատակաուղղված է աճող սերնդի էկոլոգիական մշակույթի և աշխարհայացքի ձևավորմանը: Դպրոցականների էկոլոգիական գիտելիքների ձևավորումը իրականացվում է հատկապես մայրենիի, շրջակա աշխարհի, տեխնոլոգիայի, կենսաբանության, բնագիտության, քիմիայի, ֆիզիկայի, աշխարհագրության և այլ առարկաների դասերին:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ ոչ բոլոր սովորողներն են ակտիվություն ցուցաբերում նշված առարկաների դասերին և էկոլոգիական տեղեկատվություն պարունակող թեմաների նկատմամբ հետաքրքրության ցածր աստիճանը բացատրվում է ոչ միայն նրանց անտարբերությամբ, այլև որոշ ուսուցիչների կողմից բնապահպանական հարցերի ոչ հատուկ շեշտադրմամբ: Այդ պատճառով էլ դպրոցականների մի զգալի մասի էկոլոգիական գրագիտության աստիճանը նկատելի ցածր է, որն էլ իր հերթին պատճառ է դառնում բնության պահպանման նկատմամբ առկա անտարբերության դրսևորմանը. դպրոցներում

[1] Беневольская Н. А., Экологическое воспитание младших школьников на уроках изобразительного искусства // Начальная школа, 2009, N2. с. 51-55.

սովորողների էկոլոգիական կրթությունը և դաստիարակությունը հետագա բարելավման կարիք է զգում:

Երեխաների էկոլոգիական դաստիարակությունը սերտորեն առնչվում է մեր ժողովրդի ազգային, էթնիկական, մշակութային առանձնահատկությունների ու հոգեկերտվածքի հետ: Հաշվի առնելով տարածաշրջանային և բնակլիմայական պայմանները, մեր ազգային ավանդույթներն ու սովորույթները մարդկանց էկոլոգիական գիտակցության ամբողջական համատեքստում՝ կարելի է ավելի նպատակային կազմակերպել սովորողների էկոլոգիական դաստիարակությունը:

Էկոլոգիական դաստիարակությունը՝ որպես դաստիարակության ընդհանուր համակարգի բաղադրամաս, ուղղված է դպրոցականների համակողմանի զարգացմանը և գիտական աշխարհայացքի ձևավորմանը, այնքանով, որ այն անձի գիտակցության և հոգևոր միասնության հիմքն է, քանի որ հայեցակարգային առումով մտնում է անձի գիտական աշխարհայացքի կառուցվածքի մեջ[1]:

Այսպիսով, էկոլոգիական դաստիարակությունը կախված է մարդու էկոլոգիական գիտակցության, էկոլոգիական կուլտուրայի և գիտելիքների մակարդակից: Էկոլոգիական դաստիարակության չափանիշ է համարվում շրջակա միջավայրի նկատմամբ մարդու հոգատար վերաբերմունքի աստիճանը և դրա համապատասխանեցումը հասարակական շահերին:

Մենք ապրում ենք այնպիսի ժամանակաշրջանում, երբ ամեն պահ կարելի է սպասել էկոլոգիական աղետ: Դա գլոբալ խնդիր է և վերաբերում է բոլոր ազգերին ու տարածաշրջաններին: Դրանով պետք է բացատրել վերջին շրջանում հաճախակի նկատվող փոթորիկները, ցունամիները, երկրաշարժերը, ջերմաստիճանի տատանումները, որոնք մեծ չարիք են դարձել մարդկության համար:

Հայաստանում էլ առկա էկոլոգիական խնդիրները հասնում են մեծ չափերի: Որպես օրինակ՝ բերենք այն փաստը, որ մեզանում ընդհանուր տվյալներով յուրաքանչյուր մարդուն հասնում է շատ քիչ կանաչ տարածք: Ոչնչացվում են ծառերը, կանաչ տարածքները՝ ստեղծելով սրճարաններ կամ զվարճանքի այլ օբյեկտներ: Վառելափայտի նպատակով անտառների հատումը դարձել է սովորական երևույթ, որի դեմ տարվող պայքարը բավարար չէ: Կանաչ տարածքների կրճատման հետևանքով աշխարհում հիվանդությունների քանակը շատացել է, բարձրացել է օդի աղտոտվածության աստիճանը, ոչնչանում են այդ տարածքներում ապրող շատ կենդանիների տեսակներ և այլն:

Տարրական կրթություն ունեցող աշակերտը պետք է նախնական պատկերացում ունենա բնապահպանական հարցերի մասին, գաղափար ունենա շարժման, մարմինների փոխազդեցության, ջերմության, լույսի, ձայնի վերաբերյալ, ճանաչի իր շրջապատում տարածված կենդանիները, բույսերը: Նույնը վերաբերում է բնության հանդեպ ունեցած իր դերի գնահատմանը:

Էկոլոգիական կրթության անհրաժեշտությունը պայմանավորված է հասարակության և բնության հարաբերությունների հավասարակշռության խախտումով, էկոլոգիական արդի ճգնաժամով, մարդկանց էկոլոգիական մտածողության և

[1] Ասատրյան Լ. Թ. և ուրիշներ, Էկոլոգիական դաստիրակության համակարգը ավագ դպրոցում, Երևան, 2003. էջ 28:

էկոլոգիական մշակույթի ցածր աստիճանով, ինչպես նաև այս բնագավառի նկատմամբ աճող հետաքրքրության պահանջմունքով: Որքան երեխան շուտ ծանոթանա էկոլոգիական հիմնական հասկացություններին, բնության պահպանման հարցերին, այնքան ճիշտ կձևավորվի նրա հարաբերությունները շրջակա միջավայրի նկատմամբ: Էկոլոգիական բնույթի տարրական գիտելիքները երեխաներին կտան իրենց հետաքրքրող շատ հարցերի պատասխանները, որոնք վերաբերում են բնապահպանական թեմաներին:

Տարրական դասարանների աշակերտների էկոլոգիական կրթության նպատակը նախնական էկոլոգիական մտածողության ձևավորումն է, բնության օրենքների իմացությունը, բնության նկատմամբ պատասխանատվության զգացումի դրսևորումը, էկոլոգիական մշակույթի ձևավորումը:

Այդ նպատակին են ծառայում.

- հենքային դասընթացը, որը էկոլոգիական գիտելիքների ձեռքբերման հիմքն է կազմում և կարող է ներառվել դպրոցի ուսպլանում՝ բաղադրիչ ժամերի հաշվին,
- ուսուցանվող թեմաների բնապահպանական ուղղվածության բացահայտումը,
- Էկոլոգիական թեմաներին նվիրված արտաուսումնական միջոցառումները (խաղեր, զրույցներ, էքսկուրսիաներ, ծառատունկ, կենդանիների նկատմամբ ցուցաբերվող խնամք, սանիտարական աշխատանքներ և այլն):

Բնության ուսումնասիրությունը տարրական դասարաններում պետք է սկսել էքսկուրսիաների կազմակերպումով և շարունակել դասերի ու արտադասարանային միջոցառումների ժամանակ: Յուրաքանչյուր թեմայի ուսումնասիրման ընթացքում պետք է կապ հաստատել մեր հանրապետությունում առկա էկոլոգիական խնդիրների հետ: Թեմաներին զուգընթաց երեխաները սովորում են բանապահպանական տարրական կանոններ, որոնք նվիրված են գարնանը, աշնանը, ձմռանը, ամռանը, բերքի, ծաղկի տոներին և այլն: Օգտագործելով միջառարկայական կապեր՝ էկոլոգիական հարցադրումները հնչում են մայրենիի, հայոց լեզվի վարժությունների տեքստերում, մաթեմատիկայի խնդիրներում, կերպարվեստի առաջադրանքներում, և, որքան հնարավոր է, պետք է դասերն անցկացնել բնության գրկում: Երեխաները սովորում են գեղեցիկը տեսնել իրենց շրջապատում՝ գեղեցիկ բույսեր, կանաչ դաշտեր, հրաշագեղ լճակներ, բազմադեմ, գունագեղ ամպեր... Սակայն նրանց հարկավոր է ոչ միայն տեսնել, այլև հաղորդակցվել բնության հետ՝ շարադրություն գրել, նկարել, պատմել, հեքիաթներ լսել...

Իհարկե, ոչ բոլոր աշակերտներն են կարողանում իրենց տեսածը համապատասխան ձևերով վերարտադրել երևակայությամբ, ստեղծագործել: Գունագեղ ու հեքիաթային է երեխաների երազների աշխարհը, այդպես էլ նրանք պատկերում են շրջապատող աշխարհը իրենց ստեղծագործություններում:

Կրտսեր դպրոցականների բնապահպանական դաստիարակության խնդիրները բազմազան են.

- բնության մեջ բոլոր երևույթներն ընթանում են ժամանակի մեջ, և մարդիկ կարողացել են չափել ժամանակը մինչև ժամացույցի ստեղծումը,

- պատկերացումներ ունենան բնության երևույթների և ժամանակի մասին (օր, ժամ, Երկրի պտույտն իր առանցքի շուրջ, տարի, Երկրի պտույտն Արեգակի շուրջ): Գիտենան բնության մեջ գոյություն ունեցող ժամանակի որոշման միջոցների մասին (արևային ժամացույց, աքլորաժամացույց, ջրային ժամացույց):1

Տեղեկատվական հաղորդակցումը նպաստում է աշխարհի ամբողջական ընկալմանը, զարգացնում աշակերտների անձնային որակները, ապահովում նախադպրոցական և կրտսեր դպրոցական կրթության հաջորդայնությունը և այլն:

Ընդհանուր առմամբ կրթական գործընթացի կառավարումը արտահայտվում է ուսուցչի ու սովորողների փոխկապակցված գործողությունների միջոցով, որի իրականացման մեթոդները բազմազան են: Տարբերվում են ուսուցման և դաստիարակության մեթոդների տարբեր դասակարգումներ:

Ուսուցման և դաստիարակության մեթոդների վերլուծությունը ցույց է տալիս, որ դրանք ամբողջական կրթական գործընթացի կառուցվածքում կատարում են կառավարչական, ուսուցանող գործառույթներ: Մանկավարժական նկատառումներով կրթական գործընթացի իրականացման ընդհանուր մեթոդների համակարգը իր մեջ ներառում է.

- գիտակցության ձևավորման մեթոդները (պատմում, բացատրություն, զրույց, դասախոսություն, բանավեճ, աշխատանք դասագրքով և այլն),
- գործունեության կազմակերպման և հասարակական վարքի փորձի ձևավորման մեթոդներ (վարժություն, ընտելացում, դաստիարակչական իրավիճակների ստեղծում, մանկավարժական պահանջ, հրահանգավորում, ցուցադրում և այլն,
- գործունեության ու վարքի խթանման, մոտիվացիայի մեթոդներ,
- կրթական գործընթացի արդյունավետության վերահսկողության մեթոդներ (բանավոր և գրավոր բնույթի)»2:

Մեթոդների դասակարգման այս մոտեցումը՝ որպես ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության եղանակ, դիտարկվում է բազմաթիվ մանկավարժական համակարգերում:

Սույն ուսումնասիրության առարկան կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության գործընթացի կազմակերպումն է, որը թույլ է տալիս ուսուցման մեթոդների հիմնախնդրի քննարկմանը մոտենալ ուսուցչի և աշակերտի համատեղ գործունեության տեսանկյունից:

Ուսուցիչը պետք է մեթոդների գիտակցված և հստակ ընտրություն կատարի՝ ելնելով յուրաքանչյուր մանկավարժական իրավիճակից, ապահովելով սովորողների ակտիվ մասնակցությունը տվյալ մանկավարժական գործընթացում:

Մեթոդների ընտրության իրականացման համար անհրաժեշտ է ունենալ որոշակի չափանիշներ.

---

[1] Кузнецова Л. В., Взаимодействие детского сада и семьи в экологическом воспитании детей // Дошкольная педагогика, 2009, N 6.

[2] Маринченко А. В., Приоритет экологическому образованию, М., Феник, 2008, с. 52

- էկոլոգիական կրթության և դաստիարակության նպատակները և խնդիրները,
- կրթական գործընթացի բովանդակությունը և սկզբունքները,
- սովորողների էկոլոգիական պատկերացումների և գիտելիքների մակարդակը,
- ուսուցիչների տեսական պատրաստվածության աստիճանը և մեթոդների ու միջոցների կիրառման կարողությունները և այլն:

Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության գործընթացի կազմակերպման այդպիսի մոտեցումը նպատակ ունի նրանց տալ նախնական

պատկերացումներ աշխարհի ամբողջական ընկալման մասին, ինչպես նաև ընդգծել մարդու կենսագործունեության անքակտելի կապը շրջակա միջավայրի հետ՝ երեխաների մեջ ձևավորելով էկոլոգիական մշակույթ:

Դպրոց ընդունվելիս կրտսեր դպրոցականն սկսում է գիտության համակարգված ուսումնասիրությունը, նրա մեջ ձևավորվում է գիտական հասկացությունների համակարգ, որը այլևս չի համապատասխանում նախկինում ունեցած կենցաղային պատկերացումների ամբողջությանը: Շրջապատող իրականության, առարկաների և երևույթների մասին գիտական գիտելիքների յուրացումը մեծ տեղաշարժեր է առաջացնում երեխայի մտածողության, դատողության, աշխարհայացքի և ընդհանրապես հոգեկան որակների մեջ:

Ճանաչելով շրջապատի բնությունը՝ երեխան դառնում է հարցասեր, որին նպաստում է նաև բնականից զգացմունքային ու հետաքրքրասեր լինելը: Կրտսեր դպրոցականի դիրքորոշման հետ առնչվող դրդապատճառները հասարակական և ճանաչողական բովանդակություն ունեն: Երեխաների ուսումնաճանաչողական դրդապատճառների ձևավորումը կարևոր նշանակություն ունի և՛ շրջապատող աշխարհի երևույթների մասին տեղեկատվության ձեռքբերման, և՛ ուսումնասիրվող առարկայի հիմունքների յուրացման, գիտելիքների ձեռքբերման գործում. դրանով է պայմանավորված նրանց հետագա ուսուցման հաջողությունը:

Առաջնորդվելով Դ. Էլկոնինի հայտնի դրույթներով՝ պետք է օգտագործել տարրական ուսուցման շրջանի բոլոր հնարավորությունները երեխաների ուսումնական դրդապատճառների ձևավորման և մտավոր զարգացման գործում: Այդ առումով կարևորվում է հատկապես միջառարկայական ուսումնական կապերի ստեղծման անհրաժեշտությունը: Միջառարկայական կապերի ստեղծումը մեծ հնարավորություն է ընձեռում կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության կազմակերպման գործընթացում՝ հստակեցնելով դրանց նշանակությունը: Այդ առումով մեր հետազոտության հիմքում դրել ենք միջառարկայական բնույթի հետևյալ էկոլոգիական գաղափարները՝

- աշխարհի ամբողջականությունը և ճանաչելիությունը,
- մարդ-բնություն-հասարակություն փոխադարձ կապը,
- մարդու ներգործությունը բնության վրա,
- բնությունը և մարդու հոգեկան զարգացումը,
- բնությունը և մարդու առողջությունը,
- բնության և մարդու ստեղծագործական փոխազդեցության կապը,

- մարդու դերը բնության պահպանության հարցում և այլն:

Հիմնախնդրի վերաբերյալ գոյություն ունեցող գրականության տեսական վերլուծությունը բերում է այն համոզման, որ կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության օպտիմալացման համար լավագույն նախադրյալներ են ստեղծում հումանիտար, բնագիտական և գեղագիտական առարկաների միջև ստեղծվող միջառարկայական կապերը: Կրտսեր դպրոցականների էկոլոգիական կրթության ու դաստիարակության համար լայն հնարավորություններ են ընձեռում մայրենիի, մաթեմատիկայի, հայրենի բնության, տեխնոլոգիայի, ես և շրջակա աշխարհի, կերպարվեստի, երգ-երաժշտության և այլ առարկաների դասերը: Դրանք այն առարկաներն են, որոնք, սկսած առաջին դասարանից, դպրոցականների մեջ ձևավորում են բնության մասին տարրական պատկերացումներ, և դպրոցի հաջորդ աստիճաններում վերածվում են դատողությունների ու համոզմունքների. ձևավորվում են բնության մեջ երեխաների կողմնորոշվելու և բնությունը արժևորելու կարողությունները:

Նշված առարկաների գծով միջառարկայական կապերի հաստատումը արտահայտվում է գիտելիքների փոխներթափանցմամբ, որով միևնույն փաստը ենթարկվում է կրկնակի հիմնավորման: Օրինակ՝ մայրենիի դասընթացում ներառված են՝

- բնական երևույթներ,
- տարվա եղանակներ,
- բույսերի տեսակներ,
- կենդանիների տեսակներ,
- բույսերի ու կենդանիների նկատմամբ խնամք ցուցաբերելու մասին գիտելիքներ պարունակող թեմաներ և այլն:

Մենք հետևել ենք դպրոցների առաջին դասարաններում մայրենիի դասավանդման ընթացքին, թե երեխաներին որքանո՞վ են հասանելի էկոլոգիական բնույթի տարրական հասկացությունները: Օրինակ՝ Կարմիրգյուղի թիվ 1 միջն. դպրոցի 3-րդ դասարանի աշակերտուհի Մանան Սահակյանի շարադրությունը իր մեջ ներառում է այդ հարցի պատասխանը.

- Մի անգամ ես մեր բակում գտա մի վիրավոր թռչուն: Ես նրան տարա տուն և խնամեցի: Նա ուրախ ծվծվաց և սկսեց թռչկոտել, բայց մեկ օր անց նույնը չէր նկատվում: Ես հասկացա, որ նա կարոտել է իր ազատ կյանքին՝ բնությանը: Ես թռչունին տարա մեր պարտեզ: Երբ նրան դրեցի թփի վրա, սկսեց թռչկոտել՝ ծաղկից-ծաղիկ, թփից-թուփ և շատ ուրախացավ: Ես հասկացա, որ թռչունը առանց բնության չի կարող ապրել:

Երեխան նկարագրել է բնությունը՝ պարտեզ, բույսեր, ծաղիկներ, տերևներ, թռչուններ և երկնքում՝ արև: Սա մի խոսուն օրինակ է բնության վերաբերյալ երեխայի ունեցած պատկերացումների ու վերաբերմունքի մասին:

Բազմաթիվ շարադրություններ՝ նվիրված ծառատունկին, բույսերի աճեցմանը, շողացող արևին, սիրած կենդանիներին՝ վկայում է, որ երկրորդ դասարանցիների մեջ արդեն ձևավորվում են էկոլոգիական բնույթի հարցերը, բնապահպանական կողմնորոշումները իրենց զգացնել են տալիս:

Ուսումնասիրվել է նաև մաթեմատիկայի, կերպարվեստի, երգեցողության շատ դասեր՝ կապված խնդրո առարկա հարցադրմանը:

Հայտնի է, որ մաթեմատիկայի ուսուցումը առնչվում է շրջապատող աշխարհի քանակական և տարածական պատկերացումներին: Խնդիրներ լուծելիս, երեխաների մեջ ձևավորվում են քանակական, տրամաբանական, բնաճանաչողական, բնապահպանական, ժամանակային, տարածական և այլ բնույթի գաղափարներ:

- Լճի ափին կանգնած են 7 նավակ, որոնցից յուրաքանչյուրի մեջ կարող են նստել ամենաշատը 2 մարդ: Ափին մոտեցան 3 մարդ և նստեցին նավակները: Քանի՞ նավակ մնաց ափին:
- Պուրակում կար 14 եղևնի: Ծառատունկի ժամանակ աշակերտները տնկեցին 5 եղևնի: Քանի՞եղևնի կաճի պուրակում:

Այդ առաջադրանքների միջոցով երեխաները կփորձեն հասկանալ բնության մեջ հանդիպող երևույթները, կիմանան մարդկանց, կենդանիների ու բույսերի մասին տեղեկություններ և այլն:

Հետևաբար նպատակահարմար է դեռևս առաջին դասարանի ծրագրերում ներառել հետևյալ թեմաները.

ա) Մեր գյուղը, քաղաքը:

բ) Բնական երևույթները (անձրև, քամի, ամպրոպ, կայծակ) և նրանց պատկերումը նկարներում ու հեքիաթներում:


գ) Տարվա եղանակային փոփոխությունները:

դ) Կենդանի և անկենդան բնության նշանակությունը մարդու կյանքում:

ե) Ժամանակի միավորները՝ ժամ, օր, ամիս, տարի և այլն:

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բնապահպանական դաստիարակության ուղղությամբ տարված աշխատանքները տալիս են ցանկալի արդյունք:


3-րդ դասարանում անցկացրած նախնական և վերջնական ստուգման արդյունքները ավելի արտահայտիչ նկատելի է գծապատկերում:



.


Երեխաների բնապահպանական գիտելիքների նախնական ցուցանիշները ցածր են եղել, հարցերին ճիշտ պատասխանել են նրանց 28%-ը, չգիտեմ՝ 47,3%, սխալ՝ 24,7%-ը: Բնապահպանական բնույթի դաստիարակչական աշխատանքներից հետո պատկերը փոխվել է, ճիշտ պատասխան են տվել երեխաների 91.5 %-ը, չգիտեմ՝ 5.5%, սխալ պատասխան չկա:

Նույնը նկատվել է նաև 4-րդ դասարանի աշակերտների ուսումնասիրության ընթացքում:



Երեխաները նախնական հարցաթերթիկը լրացնելիս պատասխանել են. ճիշտ՝ 31,95 %, չգիտեմ՝ 51.48% և սխալ՝ 16.6 %, իսկ վերջնական արդյունքերը նկատելի բարելավվել են, պատասխանել են ճիշտ՝ 85%, չգիտեմ՝ 2.56% և սխալ ՝ 12.44 %:

Մինչդեռ 4բ դասարանում, որտեղ բնապահպանական բնույթի պարապմունքներ չեն ացկացվել, աղբի տեսակավորման և վերամշակման վերաբերյալ կատարված նախնական և վերջնական ստուգան արդյունքները միմյանցից էականորեն չեն տարբերվում:



Գրեթե նույն արդյունքներն են արձանագրել նաև Սարուխանի թիվ 2 միջն. դպրոցի տարրական դասարաններում կատարված ուսումնասիրությունները:

Այսպիսով, շրջակա աշխարհի հետ կրտսեր դպրոցականների փոխհարաբերությունների հարցերում էական դեր է պատկանում բնապահպանական դաստիարակչական աշխատանքներին, որոնք նպաստում են անձի հոգևոր ու բարոյական հասունացմանը, բնության հետ նրա հարաբերությունների ներդաշնակությանը: Բնապահպանական դաստիարակության հիմնական գործառույթն է աճող սերնդին նախապատրաստել կյանքի համար, փոխանցել հոգևոր ու մշակութային այն արժեքները, որոնք կուտակվել են դարերի ընթացքում նախորդ սերունդների կողմից՝ նպաստելով սովորողների ոչ միայն հայեցի, այլև բնապահպանական ավանդույթների ձևավորմանն ու զարգացմանը:

Բանալի բառեր՝ *սովորող, դաստիարակություն, կրթություն, մեթոդներ, բնություն, բնապահպանություն, էկոլոգիա, միջավայր, բույսեր, կենդանիներ և այլն:*

WAYS TO IMPROVE THE EFFECTIVENESS OF ENVIRONMENTAL EDUCATION OF JUNIOR SCHOOLCHILDREN

H. H. OHANYAN
PhD in Pedagogical Sciences,
Associate Professor,
Honored pedagogue of RA
GSU lecturer
A. D. SAHAKYAN
Teacher of Karmirgyugh No. 1 Secondary School

The article refers to the identification of pedagogical features of the organization of environmental education for junior schoolchildren, the need for the *formation of ecological knowledge, skills and culture in the primary school aimed at* improving the environment.

ПУТИ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ ЭКОЛОГИЧЕСКОГО ВОСПИТАНИЯ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

Г. Е. ОГАНЯН
Кандидад педагогических наук, доцент,
заслуженный педагог РА
Преподаватель ГГУ
А. Д. СААКЯН
Учительница средней школы н. 1 Кармиргюха

Статья посвящена выявлению педагогических особенностей организации экологического образования младших школьников, вопросам необходимости формирования в начальной школе экологических знаний, культуры и навыков, направленных на оздоровление окружающей среды.

ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԴԻԴԱԿՏԻԿԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Ա. Տ. ՄԱՅԻԼՅԱՆ
ԳՊՀ որակի ապահովման բաժնի վարիչ,
մանկավարժական գիտությունների թեկնածու

Գիտելիքի և տեղեկատվության արագ փոփոխությունը, սոցիալական, տնտեսական, քաղաքական, մշակութային, գիտական, տեխնոլոգիական սրընթաց զարգացումները, համաշխարհայնացման գործընթացները մեծացնում է կրթության նկատմամբ պահանջարկը, հատկապես մեծահասակների կրթության նկատմամբ: Մեծահասակների կրթությունը միտված է առաջընթացի գործընթացներում ապահովել անձի անընդհատ զարգացումը և կյանքի ընթացքում ակտիվացնել նրա ինքնիրացման հնարավորությունը:

Համբուրգի հռչակագրում մեծահասակների կրթությունը սահմանվում է. «Ֆորմալ կամ այլ տիպի ուսումնառության շարունակական գործընթացների ամբողջություն, որի միջոցով տվյալ հասարակության կողմից մեծահասակ համարվող մարդիկ զարգացնում են իրենց կարողությունները, հարստացնում են իրենց գիտելիքները, կատարելագործում տեխնիկական և մասնագիտական որակները կամ փոխում են մասնագիտական ուղղվածությունը՝ իրենց սեփական կամ տվյալ հասարակության կարիքներին համապատասխան»[1]:

Համբուրգի ինստիտուտը կենտրոնացնում և տարածում է ամբողջ տեղեկատվությունը մեծահասակների կրթության վերաբերյալ ողջ աշխարհում:

«1920 թվականից սկսած մեծահասակների կրթությունը դարձավ համակարգայնորեն կազմակերպված, երբ մեծահասակներին դասավանդողները փորձարկեցին դիդակտիկական մոդելի մի քանի խնդիրներ»[2]:

Մեծահասակների դիդակտիկան լուծում է խնդիրներ, որոնք վերաբերում են տվյալ լսարանային գործընթացի նպատակներին, սկզբունքներին, կրթության բովանդակությանը, ուսուցման մեթոդներին, ձևերին, միջոցներին, որոնք ուսումնասիրվում և հստակեցվում են մինչև ուսուցումը, բացահայտում են դրանց իրականացման արդյունավետ պայմանները: Մեծահասակների պարագայում կարևոր խնդիրներից է նաև ֆինանսական միջոցների կազմակերպումը:

«Դիդակտիկա» տերմինը ընդհանուր է թե՛ դիդակտիկայի, թե՛ անդրոգոգիկայի համար, «…այդ պատճառով էլ մեծահասակների ուսուցման տեսական հիմքերը կարող են նշանակել «մեծահասակների դիդակտիկա»[3]:

Ա. Բ. Սոլոմոնիկը սահմանափակում է դիդակտիկայի առարկան՝ հանգեցնելով համակարգված և ոչ կազմակերպված փոխազդեցության: «Այնտեղ, որտեղ առկա

[1] http://jornal.znanie.org/n1/st_vistupl_ribalko.
[2] Malcolm S. Knowles, The Modern Practice of Adult Education From Pedagogy to Andragogy; Revised and Updated, Cambridge Adult Education, Englewood Cliffs, N 07632, p. 40.
[3] Василькова Т. А., Основы андрагогики: учебное пособие, Москва, КНОРУС, 2009, 256 с., с. 158.

է մեծահասակ սուբյեկտների փոխազդեցությունն ապահովող ուսուցման ձևեր, մեթոդներ, հաղորդակցման միջոցներ՝ նրանց սովորեցնողների կամ գրքի ներգրավմամբ, կարելի է ասել ուսուցման կամ դրա իրականացման համար ընդունված տեսության՝ մեծահասակների դիդակտիկայի մասին»[1]: Այս իմաստով դիդակտիկայի նշանակությունը դրսևորվում է հարաբերություններում համակարգայնությամբ, մյուս կողմից այն կարող է ոչ միշտ լինել, որը մեծահասակ սովորողին չի խանգարում: Մեծահասակների ուսուցման գործընթացն ինտելեկտուալ փոխազդեցությունների գործընթաց է:

Համակարգային մոտեցումը կիրառվում է ուսումնական գործընթացի նախագծման և կազմակերպման նպատակով (Ի. Ա. Կոլեսնիկովա, Մ. Տ. Գրոմկովա, Ս. Գ. Վերշլովսկի և այլք):

Համակարգային մոտեցումը հայեցակարգային հիմք է մոդուլային ուսուցման մոտեցման համար: Մոդուլը դիտարկվում է որպես՝

- ուսումնական փաթեթ, որն ընդգրկում է ուսումնական նյութի հայեցակարգային միավորները և նկարագրում է սովորողների գործողությունները (Ջ. Ռասսել),
- անկախ միավոր, որը նպատակաուղղված է ձևավորելու ուսումնական գործունեության մի շարք ձևեր, օգնելու սովորողներին՝ հասնելու սահմանված որոշակի նպատակների (Բ. և Մ. Գոլդշմիդներ, Ս. Ի. Կուլիկով),
- համակարգի հարաբերականորեն ինքնուրույն մաս, որը կրում է գործառութային ծանրաբեռնվածություն՝ ուսուցումը համապատասխանեցնելով տեղեկատվության և գործողության «չափաբաժնին», որոնք անհրաժեշտ են ձևավորելու ապագա մասնագետի մասնագիտական այս կամ այն գիտելիքն ու կարողությունը (Յու. Ֆ. Տիմոֆեև),
- տեղեկատվական բլոկ, որը ներառում է ուսումնական նյութի միավորի տրամաբանական իրականացումը, գործողությունների և մեթոդական ղեկավարման բոլոր ծրագրերը, ապահովում է առաջադրված դիդակտիկական նպատակների կենսագործումը (Պ. Ա. Յուցքիչեն)»[2]:

Առաջին անգամ՝ 1972 թվականին, Տոկիոյում՝ ՅՈՒՆԵՍԿՕ-ի միջազգային կոնֆերանսում, հռչակվեց մոդուլային մոտեցումը, որն ուղղված է մեծահասակների կրթության խնդիրների լուծմանը և առավել համապատասխան է շարունակական ուսուցման համակարգին:

Մեծահասակների կրթական գործընթացում հայեցակարգային սկզբունքներից է նաև շարունակականությունը: Դրա էությունն այն է, որ կրթությունը չի սահմանափակվում ուսումնական ժամանակահատվածով, այլ ձեռք է բերում անձի

[1] Методологические основы педагогики взрослых: Краткие тезисы докладов на конференции 13-15 дек., 1972, под общ. ред. А. В. Даринского и Ю. Н. Кулюткина, Ленинград, 1972, с. 13.

[2] Принципы модульного обучения (методическая разработка для преподавателей), сост. О. Г. Проворова, Красноярск, Красноярский гос. университет, 2006, 32 с., с. 13-14.

կենսագործունեության կամ զարգացման գործընթացների հատկանիշներ ողջ սոցիալական ակտիվ կյանքի ընթացքում, և կյանքը ձեռք է բերում շարունակական կրթության գործընթացի հատկանիշներ: Կրթության այդպիսի հայեցակարգը համաձայնեցվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի «Բարձրագույն կրթությունը 21-րդ դարում. մոտեցումներ և գործնական չափանիշներ» միջազգային կոնֆերանսի (Փարիզ, 1988 թվական, հոկտեմբերի 5-6) հռչակագրի որոշումների հետ, համաձայն որի՝ բարձրագույն ուսումնական հաստատությունները պարբերաբար պետք է հաշվի առնեն աշխատաշուկայում, ինչպես նաև գիտության, տեխնիկայի և տնտեսության մեջ ի հայտ եկած նոր մոտեցումները: Բարձրագույն կրթության այս ձևն ապահովում է բնակչության առավել լայն շերտերի համար տարբեր ձևերում կրթություն ստանալու հնարավորությունը և երաշխավորում կրթություն ողջ կյանքի ընթացքում:

«Շարունակական կրթությունը մի կողմից շարունակականության գիտակցումն է, շրջապատող աշխարհում Ես-ի իմաստավորումն է, մյուս կողմից պայմանների ստեղծումն է, որոնք խթանում են, մոտիվացնում են անընդհատ պահանջը կրթության մեջ և դրանց բավարարման հնարավորությունը»[1]: Ս. Գ. Վերշլովսկին շարունակական կրթության համար առանձնացնում է որոշակի պայմաններ, նշելով, որ կրթությունը շարունակական է, եթե.

- «մեծահասակը ռեֆլեքսիայի (ինքնավերլուծման), գիտակցման և վերագնահատման միջոցով զարգացնում է իր փորձը,
- հարստացնում և զարգացնում է գիտակցական հետաքրքրությունները, ստեղծում է արժեքներ ոչ միայն ուսումնական գործունեության արդյունքում, այլ իր կողմից գիտելիքների ձեռքբերման գործընթացում,
- յուրացմանն օգնող միջոցները թույլ են տալիս մարդուն ինքնուրույն «կրթվել» իր ողջ գիտակցական կյանքի ընթացքում,
- ստեղծում է պայմաններ՝ թույլ տալով մեծահասակին կառուցելու սեփական «համալսարանները» այնքանով, որ դրանց կրթական նախագծերը տարբեր են և զերծ չեն խիստ նախագծված դասընթացներից»[2]:

Կյանքը թելադրում է պայմաններ՝ մեծացնելու կրթության համակարգի սահմանները շարունակական կրթություն (continuing education) կամ կրթություն ողջ կյանքի ընթացքում (life long learning) սկզբունքով:

Ա. Ի. Սուբետտոյի կարծիքով՝ «life long learning» սկզբունքը՝ որպես շարունակական կրթության հայեցակարգ, չի հանդիսանում միայն ուսուցման գործընթաց, այլ մտածողության տեսակ է, կենսակերպ, թույլ է տալիս յուրաքանչյուր անձին «գերազանց կերպով հարմարվելու» փոփոխությունների զարգացումներին:

Այսպես, ժամանակակից հասարակության զարգացումը թելադրվում է կյանքի

[1] Громкова М. Т., Андрагогика /теория и практика образования взрослых/, Москва, Юнити, 2005, 496 с., с. 371.

[2] Вершловский С. Г., Образование взрослых: перспективы развития, Новые знания, 2003, № 2, 1-4 с., с. 2.

պայմաններով, որի ընթացքում կրթությունը դադարում է լինել միայն կազմակերպված գործընթաց, դառնում է հիմնականում սովորող անձի գործը, անձի կրթությունը:

Կյանքի տեսլականի փոփոխությունն օրինաչափորեն փոխում է ուսման նկատմամբ վերաբերմունքը, փոխում է կրթության համակարգը, որն ամբողջովին պայմանավորված է գաղափարներով և նորմերով, որոնք գերակշռում են հասարակության մեջ: «Ի՞նչ է հարկավոր մարդուն իր կյանքի համար», «Ինչի՞ համար է կրթությունը». այս և նմանատիպ հարցերը միշտ մտահոգում են մարդկանց: Ա. Տրուբնիկովն իմաստավորում է կրթությունը փիլիսոփայական տեսանկյունից, ուշադրություն է դարձնում այն բանին, որ եթե անձը կրթության մեջ չի ապրում, կրթության համակարգի մեջ էլ չի մնում, այլ միայն ստանում է այն, եթե կրթությունը չի բացահայտում անձին, ապա դանդաղ դուրս է գալիս նրանից: Հեղինակը ժամանակակից կրթության թերությունները տեսնում է անձի անտարբերության մեջ: «Ինչու՞ է ուսուցման գործընթացը ոչ միշտ սիրելի ու հետաքրքիր» հարցին նա տալիս է հետևյալ պատասխանը. «…որովհետև այն կտրված է անձի կենցաղից, …որովհետև կրթության իմաստը փոխարինվել է կիրառական նպատակով, նպատակ-արդյունքներով, արդյունքներ-գոհունակությունով…»[1]:

Կրթությունը պետք է իմաստ ունենա, պետք է կապված լինի անձի կյանքի համար կարևոր արժեքների հետ, առանց որոնց հնարավոր չէ ապրել: «…Կրթությունը և՛ վիտալական է, և՛ սոցիալական, և՛ հոգևոր, և՛ ներառում է անձին ամբողջությամբ»[2]:

Ուսուցման մեջ առաջին տեղում պետք է լինի անձի անձնական հետաքրքրվածությունը:

Անձի գործունեության մոտեցման հիմքն ընկած է Կ. Կ. Պլատոնովի, Ա. Ն. Լեոնտևի, Բ. Գ. Անանևի աշխատություններում, ովքեր անձին դիտարկում են որպես գործունեության սուբյեկտ, ով անձամբ է ձևավորում իր գործունեության գործընթացը, որոշում գործունեության հետագա բնույթը:

Ս. Լ. Ռուբինշտեյնի կարծիքով՝ «…անձի հոգեկան ոլորտում առանձնացնում ենք տարբեր գծեր, որոնք բնութագրում են անձին տարբեր կողմերով, սակայն դրանք իրենց բազմազանությամբ, տարբերությամբ և հակասող հիմնական միջոցներով փոխազդեցության և հակազդեցության մեջ են միմյանց հետ մարդու կոնկրետ գործունեության մեջ»[3]:

Ըստ Կ. Կ. Պլատոնովի[4] անձնային մոտեցումը, այդ անձնային սկզբունքը հիմնվում է անձի հոգեկան դրսևորման և նրա գործունեության վրա:

---

[1] Трубников А., Духовность образования и трансценденция // Вестник высшей школы, № 8, Alma Mater, 1998, с.11.

[2] Տե՛ս նույն տեղում:

[3] Леонтьев А. Н., Деятельность. Сознание. Личность, Москва, Политиздат, 1975, с. 76.

[4] Платонов К. К., О системе психологии, Москва, Мысль, 1972, 216 с.

Այսպես, սովորող անձի գործունեության մոտեցումը ենթադրում է.

1. սովորող անձի զարգացման համար պայմանների ստեղծում,
2. սովորողի ակտիվություն,
3. արտաքին և ներքին մոտիվների միասնության ապահովում:

Անձի գործունեության մոտեցումը կրթության մեջ լուծում է անձի սոցիալական, համատեղ ներդաշնակ գործունեության, մասնագիտական կարողության և ինքնազարգացման պայմանների ստեղծման խնդիրները:

Կրթության համակարգի բարեփոխումները բխում են ժամանակակից կյանքի պահանջներից և ապահովում են նոր սոցիալ-մշակութային մակարդակ: Յուրաքանչյուր մշակույթ ուղիղ համեմատական է սեփական կրթության մակարդակին:

Մշակույթի ուսումնասիրությունը, հիմնված կրթության վրա, Լ. Բուևայի կարծիքով, որքան արդիական է, այնքան էլ բարդ է: «Բարդ է, քանի որ երբեմն մարդկությունը ներկայացվում է անորոշ կերպով: Հասարակության մեջ գործնական և ճգնաժամային իրավիճակներում, երբ համակարգն արժեքային է, նորմերը ենթարկվում են փոփոխության, ապամարդասիրական է դառնում նաև միջավայրը, որտեղ մարդն ապրում է: Հենց այդ փուլում է հայտնաբերվում, որ անձի ձևավորման համար առավել կարևոր դաշտ է հանդիսանում մշակույթը»[1]: Այդ պատճառով մշակութակենտրոն մոտեցումը կարևոր նախադրյալ է կրթության համակարգի ձևավորման և զարգացման գործում:

Լ. Բուևան գտնում է, որ բոլոր կրթական համակարգերն ունեն որոշակի սոցիալ-մշակութային հենք, որը որոշիչ է մշակույթի և խառնվածքի առանձնահատկությունների համար: Այնուհետև հեղինակն առաջարկում է մարդկային հասարակության մեջ մշակույթի դերի բացահայտման հետևյալ տեսակետները. «Մշակույթը մարդկային կեցության միջոցն ու ձևն է...: Մշակույթն անհրաժեշտ պայման է սոցիումի կայացման համար, նրա շարժիչ ուժը...: Մշակույթը կարևոր որոշիչն է սոցիալական համակարգի տեսակի...: Կրթությունը փոխանցողն ու թարգմանիչն է մշակույթի»»[2]: Կրթությունը և մշակույթը չի կարելի տարանջատել: Դրանք «միևնույն վերարտադրման գործընթացի, անձի զարգացման երկու կողմերն են»[3]:

Մինչև 20-րդ դարի սկիզբը այդ միասնությունը պահպանվել է: Կրթական հաստատությունները միևնույն ժամանակ նաև մշակութային կենտրոններ էին: Կրթությունը մի որոշակի ժամանակահատվածում կարծես կորցրել էր իր մշակութակենտրոն նշանակությունը, երկու գործընթացները տարբերակվեցին, քանի որ գերիշխում էին կրթության մեջ գործառութային մոտեցումները: Գիտելիքների համակարգը կապված չէր անձի ներքին մշակույթի ակտիվացման հետ: «Կրթված անձ» էր համարվում «տեղեկացված անձը»: Կրթության և մշակույթի

[1] Буева Л. П., Человек: деятельность и общение, Москва, Политиздат, 1978, с. 11.
[2] Буева Л. П., Человек: деятельность и общение, Москва, Политиздат, 1978, с. 12.
[3] Տե՛ս նույն տեղում, էջ 17:

օտարացումն ամբողջությամբ չի հաղթահարվել մինչև հիմա: Այդ միտումների առանձնացումը հաղթահարվում է ուսուցման գործընթացում: Այս տեսակետն է հիմնավորված Վ. Ա. Ռիժկոյի՝ «Գիտական հայեցակարգեր. սոցիալ-մշակութային, տրամա-իմացաբանական և գործնական ասպեկտներ»[1] մենագրության մեջ: Հեղինակը կարծում է, որ գոյություն ունի որոշակի անհամաչափություն իմացաբանական և սոցիալ-մշակութային ասպեկտների գիտակցման միջև: Դա բացատրվում է մի կողմից, որ իմացաբանական ասպեկտը վերաբերում է գիտական գիտելիքի ներքին կողմին, իսկ սոցիալ-մշակութային ասպեկտն արտաքին պայման է նրա զարգացման համար: Մյուս կողմից՝ սոցիալ-մշակութային վերլուծությունը երկար ժամանակ չի ունեցել գիտական հիմք: «Մշակույթ» և «սոցիալ-մշակութային» հասկացությունների վերաբերյալ բնութագրումներ ներկայացնելիս նա նշում է, որ լսարանը՝ որպես մշակութային երևույթ, բազմաձև միջոցների համակարգ է, որոնց շնորհիվ իրականացվում է անձանց ինտելեկտուալ կյանքը, որը մոտիվացվում է, խթանվում, ծրագրավորվում, ապահովում է ֆիզիկականը, վերարտադրվում սոցիալականը, կազմակերպվում նրանց ակտիվությունը և զարգանում է անձանց կոլեկտիվները:

21-րդ դարում, կրթության համակարգում միանշանակ առկա է սոցիալական և մշակութային գործառույթների անխուսափելի ներթափանցումը: Սա մեծ չափով վերաբերում է հենց մեծահասակների կրթությանը: Մեծահասակների կրթության գործընթացն ուղղված է նրանց կյանքի որակի բարելավմանը, մշակույթի նոր տարրերին և դրանց հաղորդակցմանը (մշակութայնացում), սոցիալական կյանքի նոր պայմաններին հարմարմանը (սոցիալականացում), իրականացրած գործընթացներով նոր կենցաղի իմաստի գիտակցմանը (ինքնաիրացում): Մշակույթի, հասարակության և ինքն իր հետ հաղորդակցումը կրթության գործընթացում ուղեկցվում է մեծահասակների ներուժի (ներքին հնարավորությունների) ինքնազարգացման գործընթացներով:

Յու. Կ. Չերնովան գտնում է, որ մշակույթը դառնում է գլխավոր գործիք՝ բացահայտելու բոլոր սոցիալական փոփոխություններն այնքանով, որ նրանք գոյություն ունեն մշակույթի մեջ և մշակույթի միջոցով:

Մեծահասակների կրթության համակարգում կարևոր մոտեցումներից է ակմեոլոգիան: «Ակմե»-ն հունարենից թարգմանաբար նշանակում է գագաթ, ինչ-որ բանի բարձր աստիճան: Ուսումնասիրում է անձի հասունության փուլում զարգացման օրինաչափություններն ու մեխանիզմները՝ այդ զարգացման մեջ հասնելու առավել բարձր աստիճանի ֆիզիկական առողջության որակով, անձնային, սուբյեկտիվ հասունությամբ:

Ակմեոլոգիական խնդիրների ուսումնասիրությամբ զբաղվել են Ա. Ա. Դերկաչը,

[1] Рыжко В. А., Научные концепции: социокультурный, логико-гносеологический и практический аспекты, Монография, Киев, 1985, 184 с.

Վ. Մ. Ֆիլիպովը, Վ. Ս. Ստեպաշինը և այլք:

Այսպիսով, մեծահասակների կրթության դիդակտիկական հիմքերը դիտարկվում են համակարգայնության, շարունակականության հայեցակարգային, անձի գործունեության, մշակութակենտրոն, ակմեոլոգիական մոտեցումներով:

Բանալի բառեր՝ *մեծահասակների կրթություն, դիդակտիկա, համակարգայնություն, շարունակական կրթություն, անձի գործունեություն, մշակութակենտրոն մոտեցում, ակմեոլոգիա:*

Օգտագործված գրականության ցանկ

1. Буева Л. П., Человек: деятельность и общение, Москва, Политиздат, 1978, 82 с.
2. Василькова Т. А., Основы андрагогики: учебное пособие, Москва, КНОРУС, 2009, 256 с.
3. Вершловский С. Г., Образование взрослых: перспективы развития, Новые знания, 2003, № 2.
4. Громкова М. Т., Андрагогика /теория и практика образования взрослых/, Москва, Юнити, 2005, 496 с.
5. Леонтьев А. Н., Деятельность. Сознание. Личность, Москва, Политиздат, 1975, 304 с..
6. Методологические основы педагогики взрослых: Краткие тезисы докладов на конференции 13-15 дек., 1972, под общ. ред. А. В. Даринского и Ю. Н. Кулюткина, Ленинград, 1972.
7. Платонов К. К., О системе психологии, Москва, Мысль, 1972, 216 с.
8. Принципы модульного обучения (методическая разработка для преподавателей), сост. О. Г. Проворова, Красноярск, Красноярский гос. университет, 2006, 32 с.
9. Рыжко В. А., Научные концепции: социокультурный, логико-гносеологический и практический аспекты / Монография, Киев, 1985, 184 с.
10. Трубников А., Духовность образования и трансценденция // Вестник высшей школы, № 8, Alma Mater, 1998.
11. Malcolm S. Knowles, The Modern Practice of Adult Education From Pedagogy to Andragogy; Revised and Updated, Cambridge Adult Education, Englewood Cliffs, N 07632, p. 40.
12. http://jornal.znanie.org/n1/st_vistupl_ribalko.

DIDACTIC BASES OF ADULT EDUCATION

A. T. MAYILYAN
Head of GSU Quality Assurance Department
PhD in Pedagogy

In this article the didactic bases of adult education are considered with the approaches of systemization, continuity, person's activities, as well as culture-centered and acmeological approaches.

ДИДАКТИЧЕСКИЕ ОСНОВЫ ОБРАЗОВАНИЯ ВЗРОСЛЫХ

А. Т. МАИЛЯН
Заведующая отдела по обеспечению качества ГГУ
Кандидат педагогических наук

В статье дидактические основы образования взрослых рассматриваются по подходам: систематизированности, непрерывности, деятельности личности, культуры, акмеологии.

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ՆԿԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱԿՏԻՎԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐԸ

Թ. Հ. ԿՈՏՈԼԿՅԱՆ
ԿԱՒՀ-ի Գեղարքունիքի մասնաճյուղի կերպարվեստի և տեխնոլոգիայի մասնագետ
ԳՊՀ դասախոս

Կրթական բարեփոխումների և հանրակրթական դպրոցին առաջադրված խնդիրների շրջանակում իր ուրույն տեղն ունի կերպարվեստը, որի կարևորությունը պայմանավորված է ոչ միայն գեղարվեստական կրթությամբ և գեղագիտական դաստիարակությամբ, այլև դպրոցականի իմացական գործընթացների զարգացմամբ: Հանրակրթական դպրոցը ֆիզիկոսներ, մաթեմատիկոսներ չի պատրաստում: Բազմիցս նշվել է, որ այն կոչված չէ նաև պատրաստելու կերպարվեստի վարպետներ: Այդ խնդիրը լուծում են մասնագիտական ուսումնական հաստատությունները: Իսկ հանրակրթական դպրոցներում նկարչության դասավանդման անհրաժեշտության մասին կարևորել են արևմտաեվրոպական մեծ լուսավորիչներ Կոմենսկին,Պեստալոցին, Ռուսսոն և Ջոն Լոկը:

«Կերպարվեստ» առարկայի չափորոշչում, ըստ կրթական աստիճանների, տրված են սովորողներին ներկայացվող գիտելիքների, կարողությունների և հմտությունների պարտադիր պահանջները և արժեքային համակարգը: Հետևաբար հանրակրթական դպրոցում գեղարվեստական կրթությունից և գեղագիտական դաստիարակությունից աշակերտներին առաջադրվող խնդիրներից կարևոր նշանակություն են ստանում ոչ միայն գիտելիքների ձեռք բերումը, այլև ուսուցչի առջև խնդիր է դրվում փնտրել ու գտնել երեխաների կերպարվեստային գործունեության ակտիվացման ուղիներ, քանի որ դեռևս դպրոցներում կերպարվեստի դասավանդումը շարունակում է մնալ թվերի ոչ լիարժեք «բարձրության» վրա, այսինքն՝ չեն իրականացվում առարկայական չափորոշչային պահանջները: Կերպարվեստի դասավանդումը հանրակրթական դպրոցում պետք է կրի իրատեսական բնույթ և զուրկ լինի ինքնանպատակ և ձևական լինելուց: Սովորողների նկարչական գործունեության ակտիվացնելու մեթոդիկայի համար անհրաժեշտ է բացահայտել աշակերտների գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը նպաստող մեթոդներ, աշխատանքի կազմակերպման ձևեր ու հնարներ և այլ գործոններ՝ դրանք հակադրելով կերպարվեստի ուսուցման ավելի պակաս արդյունավետ մեթոդներին կամ նկարչական ունակությունների զարգացմանը խանգարող գործոններին: Կերպարվեստի դասի ճիշտ պլանավորմամբ և կառուցվածքով էլ պայմանավորված է աշակերտների նկարչական գործունեության ակտիվության մեթոդիկան:

Կերպարվեստի դասը անհրաժեշտ է կահավորել համապատասխան միջոցներով և տարբեր գեղարվեստական նյութերով: Պետք է ստեղծել արվեստին բնորոշ ու համապատասխան միջավայր, որտեղ աշակերտը ոչ թե միապաղաղ

իրականությանը կիանդիպի, այլ գեղարվեստատեխնիկական միջոցներով հագեցած միջավայրին: Որտեղ կլինեն ոչ միայն հայտնի նկարիչների նկարների վերատպություններ, այլ նաև իրենց հասկակիցների նկարած լավագույն նկարները: Միաժամանակ նախընտրելի է առաջադրանքների կատարման գեղարվեստական նյութերի բազմազանություն, որն էլ նպաստում է կրտսեր դպրոցականի անհատական գեղարվեստատեխնիկական հնարավորությունների բացահայտմանը: Ջրաներկի կամ գուաշի օգտագործումը ի հայտ է բերում ոչ միայն իրականությունը գույների միջոցով արտահայտելու ցանկություն ունեցող երեխաներին, այլև զարգացնում է երեխաների մոտ գունազգացողությունը, որն էլ ծառայում է որպես հիմք գույնի գեղագիտական արժեքի, նրա գեղագիտական արժեքայնության ըմբռնման համար: Առաջադրանքի կատարման տարբեր գեղարվեստական նյութերի /պաստել, գուաշ, ջրաներկ, գունավոր մատիտներ/ և աշխատելաձևերի կիրառումը օգնում է խուսափել դասավանդման միօրինակությունից և օժանդակում երեխաների ընդունակությունների դրսևորմանը: Դեռևս դպրոցներում իշխում է ողջ ուսումնառության ընթացքում միևնույն գեղարվեստական նյութերով աշխատելու մեթոդիկան, մասնավորապես գունավոր մատիտները, որոնցով սահմանափակվում է թղթի մեծ տարածությունները գունավորելու և նոր գույներ ու երանգներ ստանալու հնարավորությունները: Եթե երեխան տարրական դպրոցում յուրացնի ներկերով աշխատելը, ազատ կերպով օգտվի վրձնից, գույներից, երանգներից, գծերից, եթե յուրացնի ծավալով՝ պլաստիլինով, թղթով աշխատելը, եթե կավիճները, գունամատիտները, նկարչական ածուխը, և այդ բոլոր նյութերը և նրանցից ազատորեն օգտվելու հմտությունները նրա համար դառնան սովորական, մենք լուրջ հիմքեր կստեղծենք միջնակարգ դպրոցում կերպարվեստի ուսուցման համար հետագա փուլում: Սա էլ կհանդիսանա կերպարվեստի դասավանդման անհրաժեշտ պայմաններից մեկը, քանի որ նկարչական գործունեության ակտիվացումը աշակերտների մոտ շատ բանով կախված է բազմազան գեղարվեստական նյութերի և միջոցների օգտագործումից:

Աշակերտների նկարչական գործունեության ակտիվացման բնագավառում շատ արդյունավետ կարող է լինել կերպարվեստի դասատիպերի՝ «նկարչություն բնօրինակից», «թեմատիկ նկարչություն», «դեկորատիվ նկարչություն» և «զրույցներ կերպարվեստի մասին», չափորոշչային պահանջների իրականացումը: Ցանկալի է, որ այս դասաժամերին ավելացվի ևս մի դասաժամ՝ «նկարչություն հիշողությամբ», որը իր բնույթով տարբերվում է վերը նշվածներից:

Կերպավեստի յուրաքանչյուր դաս պետք է ունենա իր ուղղվածությունը, իր ուսումնական խնդիրը: Անհրաժեշտ է ապահովել գիտելիք - կարողություն, հմտություն - արժեքային համակարգ կապը: Քիչ չեն այն ուսուցիչները, որոնք կերպարվեստի դասաժամերին հանձնարարում են կատարել շարունակական բնույթ կրող «Ազատ թեմա» աշխատանքը: Բազմիցս հանձնարարվող կրկնվող այդ դասաժամերը չեն ապահովում աշակերտների մոտ բարձր ակտիվություն, որն էլ հետագայում հանգեցնում է կերպարվեստի նկատմամբ պասիվ դիրքորոշման: Ի վերջո, արդյունքում չեն լուծվում մի շարք ուսումնական, հոգեբանական և

դաստիարակչական խնդիրներ, որոնց արդյունավետ լուծումը շատ կարևոր է հենց կրտսեր դպրոցական տարիքում: Սովորողների նկարչական գործունեության ակտիվացման համար անհրաժեշտ է բացահայտել և կիրառել գիտելիքների, կարողությունների և հմտությունների զարգացմանը նպաստող ինչպես ավանդական, այնպես էլ ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաներ: Մանկավարժական տեխնոլոգիաները կարողանում են վերարտադրել ուսուցման և դաստիարակության գործընթացը և դրա հետ միասին երաշխավորել ուսումնադաստիարակչական աշխատանքների և խնդիրների լուծման բարձր որակ: Մեզ հայտնի է, որ մանկավարժական տեխնոլոգիաները բնութագրվում են հետևյալ հատկանիշներով՝

1.Ուսուցման և դաստիարակության հստակ, հաջորդական մանկավարժական և դիդակտիկական սկզբունքներով մշակված նպատակների առկայություն:

2.Յուրացման ենթակա կամ տեղեկատվության կառուցում, խտացում և համակարգում:

3.Դիդակտիկական, տեխնիկական, այդ թվում նաև համակարգչային միջոցների կիրառություն:

4. ՈՒսուցման բարձր որակի երաշխիք:

Մանկավարժական տեխնոլոգիաների համալիր կիրառությամբ կարելի է իրականացնել կերպարվեստի ուսուցումն ու գեղագիտական դաստիարակությունը, ինչպես նաև ակտիվացնել երեխաների կերպարվեստային գործունեությունը հանրակրթական դպրոցում:

Հարկ է նշել, որ բազմաթիվ տեխնոլոգիաներից կերպարվեստի դասաժամերին իրենց դրական ազդեցությունն են թողնում §Համագործակցային ուսուցման¦ տեխնոլոգիան, որի դեպքում ապահովվում է անձի զարգացումը և անհատականության ձևավորումը, հոգեբանական և ֆիզիկական առողջությունը, սթրեսի հաղթահարումը, շրջապատողների հետ առողջ փոխհարաբերությունների կառուցումը:

Այս ընթացքում է, որ բացահայտվում է աշակերտների բոլոր հնարավորությունները և արդեն լուրջ փորձերը մեծ և փոքր կոլեկտիվներում:

Այս տեխնոլոգիայի դրական արդյունքն այն է, որ երեխաները արվեստի միջոցով հաղորդակից են լինում ոչ միայն ուսուցչի, այլև միմյանց հետ: Ներկա ժամանակներում, երբ տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաները ավելի ու ավելի են երեխաներին մեկուսացնում ու պարփակում, առավել են կարևորվում ինչպես միասնական կոլեկտիվ մտածողությունը, այնպես էլ համագործակցային կարողությունները և հմտությունները: Եվ այստեղ է, որ համագործակցային աշխատանքների ժամանակ ունենում ենք ուսումնական և դաստիարակչական ակնհայտ արդյունքներ: Այս աշխատանքները կարելի է իրականացնել հետևյալ կերպ. մի աշակերտը շարունակում է մյուսի հղացած միտքը և շարունակում կիսատ թողնված աշխատանքը:

Առանձին աշակերտների կարելի է հանձնարարել կերպարներ և առարկաներ նկարել, որոնք, հետո կողք կողքի փակցնելով, դառնալու են մի ամբողջություն և

մի թեմատիկա: Եվ դասի վերջում ունենում ենք պատին փակցրած պաննո: Մի ենթախումբը նկարում է գծով, իսկ մյուսը՝ գունավորում է:

Այս բոլոր դեպքերում էլ առկա է և՛ խաղ, և ՛ աշխատանք , և՛ ուսուցում և՛ ստեղծագործություն, և՛ այս բոլորի հանրագումարային արդյունքից բխած բարձր ակտիվություն:

«Շատերի համար կրթել նշանակում է ստիպել երեխային նմանվել իր հասարակությանը բնորոշ մեծահասակին, մինչդեռ ինձ համար կրթել նշանակում է ստեղծագործական հնարավորություններ ընձեռել»,- այս խոսքերը պատկանում են մեծ հոգեբան Ժան Պիաժեին, որն իր աշխատանքային գործունեությունը սկսել է որպես կենսաբան: Առավել խորանալով գիտական մտածողության մեջ՝ նա սկսում է հետաքրքրվել մտածողության զարգացման հարցերով: Հետագայում Ժան Պիաժեի աշխատությունները ոուսումնասիրել է Հովարդ Գարդները, որն էլ դառնում է «Զրո ծրագրի» հետազոտական խմբի անդամ: «Զրո ծրագիրը» ստեղծում է այն մթնոլորտը, որտեղ էլ կարողանում է սկսել մարդու ճանաչողությանը վերաբերող իր հետազոտությունները: Սկզբնական շրջանում «Զրո ծրագրի» շրջանակներում Գարդները ուսումնասիրում էր երեխաների զարգացումը արվեստի և պատկերավոր խոսքի ազդեցության տակ: Նա հատկապես զբաղվում էր երեխաների մոտ խորհրդանիշների այնպիսի համակարգի զարգացման հարցերով, որոնք օգտագործվում են արվեստի մեջ:

Հաճախ նկարչությունը սեփական մտահղացումներն ու ապրումները արտահայտելու ամենաառաջին միջոցն է երեխայի համար: Երեխան շրջապատի աշխարհը պատկերում է իր մանկական պատկերացումներով, առանց փոխելու և աղավաղելու: Նա չի էլ մտածում՝ նման լինի կամ «իսկական լինի»: Դժվար է նկատել այն սահմանագիծը, որը մանկական, միամիտ, մակերեսային հեռանկարի օրենքները չբովանդակող հուզական մտապատկերները բաժանում է իրականության այն աղավաղումներից, որոնցից երեխան իր զարգացման տվյալ մակարդակում կարող է և պետք է նկարելիս խուսափի:

Պատկերման հիմնական արժեքն ամփոփված է աշխարհի համակողմանի և հուզական գնահատման այդ գործընթացում, որը հնարավոր է իրականության անձնային, սուբյեկտիվ ըմբռնման ժամանակ: Եվ այստեղ է, որ մեծահասակները /ծնողները, ուսուցիչները, որոնք այդքան էլ չեն տիրապետում կերպարվեստի դասավանդման նրբություններին/ անտեղի իրենց միջամտություններով/ «նման չի», «մի՞թե դու վարդագույն ձի տեսել ես» անհարկի արտահայտություններով նրան կհեռացնեն գույնզգույն մատիտներից և ներկերից: Եվ երեխան կամավոր կհրաժարվի նկարելուց:

Մանկական նկարին անհրաժեշտ է վերաբերվել լրջորեն, այն դիտել որպես աշխարհը հասկանալու և յուրացնելու կարևոր միջոցներից մեկը: Եվ երբ երեխան նկատի, որ քննադատության ու ծաղրի չի արժանանա, ինչքան էլ տարօրինակ ու «ոչ իսկական» նկարի, այլ ընդհակառակը, կհասկացվի իր նկարը ու կարժանանա գովասանքի, որքան էլ անհաջող ստացվի, նա կշարունակի նկարել: Եվ պար-

սավանքի փոխարեն ոգեշնչումն ու խրախուսանքը կնպաստեն աշակերտների ստեղծագործական մտահղացմանը և ակտիվության բարձրացմանը:

«Ստեղծագործական նախագիծ» տեխնոլոգիան հատկանշական կիրառություն է ունենում դեկորատիվ նկարչության դասերի բովանդակալից կազմակերպմամբ, որը նպաստում է երեխաների ստեղծագործական ունակությունների զարգացմանը:

Աշակերտները շատ հետաքրքիր լուծումներով են կատարում բացիկների և հրավիրատոմսերի ձևավորումները, հատկապես տոներին նվիրված, որոնք էլ նվիրելու են մայրիկներին կամ ուսուցիչներին: Հաջորդ տեխնոլոգիան, որ շատ նպատակահարմար է կիրառել կերպարվեստի դասաժամերին, պրոբլեմային ուսուցման տեխնոլոգիան է:

Պրոբլեմային ուսուցման կիրառման դեպքում ուսուցիչը սովորողին ոչ թե պատրաստի գիտելիք է տալիս, այլ ներկայացնում է այն խնդիրը կամ հարցը, որը պիտի լուծում գտնի աշակերտի կողմից: Ուսուցիչը, սովորողին որոշակի հիմնախնդիր առաջարկելով, ձգտում է հետաքրքրել նրան, տվյալ խնդիրը լուծելու նախանձախնդրություն է արթնացնում: Դրան կարելի է հեշտությամբ հասնել թեմայի կամ առաջադրվող խնդրի հարցական ձևակերպման միջոցով: Օրինակ՝ երեխային ներկայացնում ենք կախարդի տնակը և հանձնարարում նկարել նրան, թե ով կարող է ապրել այդ տնակում՝ կախարդը, թագուհին, թե բարի փերին: Կամ կարդում ենք հանելուկներ և հանձնարարում նկարել հանելուկների պատասխաններով մի թեմատիկ նկար: Մի ուրիշ տարբերակով էլ հանձնարարում ենք նկարել տարվա այն եղանակը, որը կարող են գունավորել միայն տաք գույներով:

Այս և այլ տիպի տարաբնույթ աշխատանքները երեխաների մոտ ոչ միայն զարգացնում են կերպարային և սյուժետային պատկերացումները և ստեղծագործական մտածողությունը, այլև ստեղծում մի իրավիճակ, որտեղ ամեն մի երեխա կարող է յուրովի և ինքնատիպ լուծում գտնել:

Ելնելով իր առջև դրված ուսումնական խնդրից՝ յուրաքանչյուր դաս պետք է ունենա հատուկ վարժությունների շարք, որոնք կնպաստեն համապատասխան նկարչական կարողությունների ու հմտությունների մշակմանը:

Օրինակ՝ որպեսզի բնօրինակից նկարելու ժամանակ երեխաների մոտ զարգանան գծապատման կարողություններն և հմտությունները, անհրաժեշտ է նախօրոք հանձնարարել նկարել շախմատի տախտակ, որտեղ ամեն մի քառակուսու մեջ երեխաները կկատարեն տարբեր ուղղություններով՝ հորիզոնական, ուղղահայաց, թեք ուղղությամբ գծեր /շտիխներ/: Այս տիպի վարժությունները վստահություն են ներշնչում երեխաներին հետագա աշխատանքները կատարելու համար:

Կերպարվեստի յուրաքանչյուր դաս կարելի է կազմակերպել անպես, որ աշակերտները կարողանան իրենց բառապաշարը հարստացնել մասնագիտական բառերով և բառապաշարով: Թեմայի հաղորդման ժամանակ անհրաժեշտ է կիրառել ընդարձակ ձևակերպումներ՝ նկատի ունենալով, որ հենց այդ ձևակերպումներն են խթան հանդիսանում կոմպոզիցիայի ավելի գեղեցիկ ու բազմազան լինելուն:

Օրինակ՝ «Ծով» թեմայի փոխարեն կարող ենք ավելի մանրամասն ձևակերպել՝ «Կապույտ ծովի հատակի գանձերը» կամ «Գարուն» թեման վերնագրել «Մեր բակի ծաղկած ծառերը» և այլն:

Որպեսզի կրտսեր դպրոցականի ամենասիրելի առարկաներից մեկի՝ կերպարվեստի դասավանդումը դառնա էլ ավելի նպատակային և նպաստի գեղարվեստական կրթության ու գեղագիտական և զգայական դաստիարակության մի շարք խնդիրների լուծմանը, մենք կարող ենք ներկայացնել սովորողների նկարչական գործունեության ակտիվացման երեք հիմնական ուղղություն.

1. Հուզակամային կամ հոգեբանական ուղղություն:

Սովորողները, հենվելով առարկաների ու երևույթների գեղարվեստական կերպարային հատկանիշների վրա, կարողանան տեսնել գեղեցիկը, սեփական հույզերն ու ապրումները վերարտադրել նկարչական գործունեության գործընթացում:

2. Տեսական /թեորետիկ/ ուղղություն:

Իրականացվում է նկարչական գործունեության ժամանակ աշակերտներին կերպարվեստին վերաբերող գիտելիքներով զինելուն մասնագիտական բառերի ու հասկացությունների օգտագործման հմտություններ մշակելու միջոցով:

3. Պրակտիկ ուղղություն:

Նկարչական հնարքների գործնական օգտագործում. գիտելիք-կարողություն, հմտություն-արժեքային համակարգ կապի իրագործում և ամրապնդում:

Բանալի բառեր՝ *կրտսեր դպրոցական, նկարչական ակտիվություն, գույն, գուաշ, կերպարվեստ, ձևավորում:*

Օգտագործված գրականության ցանկ

1. Բալյան Ա. Ա., Դպրոցականների գեղագիտական դաստիարակությունը, Երևան, 1978:
2. Նեմենսկի Բ. Մ.,Գեղեցկության իմաստությունը, Երևան, 1987:
3. Քոչինյան Կ. Հ., Կերպարվեստի դասավանդման իմ փորձից, Երևան, 1987:
4. Ժամանակակից մանկավարժական մոտեցումները գործողության մեջ, Երևան, 2005:
5. Панько Е. А., Коломинский Я. Л., Учителю о психологии детей шестилетнего возраста, Москва , 1988.
6. Юсов Б. П., Грамотность и выразительность детского рисунка, М., 1963.

WAYS OF ACTIVATING THE PROCESS OF ARTISTIC ACTIVITY AMONG JUNIOR SCHOOLCHILDREN

T. H. KOTOLKIAN
Specialist in Fine Arts and Technology of
National Institute of Education branch in Gegharkunik,
GSU lecturer

The article tries to reveal the ways of activating artistic activity among junior schoolchildren in public schools. Since artistic activity becomes more important at preschool and school age, it develops not only cognitive processes / imagination, views and spatial thinking/ but also forms aesthetic and emotional perception that provides a comprehensive and harmonious development of the individual.

ПУТИ АКТИВИЗАЦИИ ПРОЦЕССА ХУДОЖЕСТВЕННОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ У УЧЕНИКОВ МЛАДШИХ КЛАССОВ

Т. А КОТОЛКЯН
Специалист по изобразительному искусству и технологии
Гегаркуникского филиала НИО
Преподаватель ГГУ

В данной статье мы попытались определить пути активизации художественной деятельности у учеников младших классов общеобразовательных школ, поскольку именно в дошкольном и школьном возрасте закладываются основы художественной деятельности, которые не только развивают процесс познания (воображение, представление, пространственное мышление и т.д.), но и формируют эстетическое и эмоциональное восприятие, что обеспечивает всестороннее и гармоничное развитие личности.

5.	ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ LAW ЮРИДИЧЕСКИЕ НАУКИ

ՏՐԴԱՏ ԱՌԱՋԻՆԻ ԵՎ ՍԱՆԱՏՐՈՒԿԻ ԱՌԵՂԾՎԱԾԸ

Ս. Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ,
Գավառի պետական համալսարանի դասախոս

Հայկական պատմագրության մեջ տարակարծություններ կան Տրդատ (Տիրիդատ) Առաջին և Սանատրուկ հայոց թագավորների պատմականության ու անձերի շուրջ: Զարմանք է հայտնվում, թե ի՞նչու Մովսես Խորենացին Տրդատ Առաջին Արշակունու նման նշանավոր թագավորի մասին որևէ տեղեկություն չի հաղորդում: Եվ դա այն դեպքում, երբ այս թագավորը և նրա եղբայր, պարթևական կայսրության արքայից արքա Վաղարշակ (Վաղարշ, Վոլոգեզ) Առաջինը Մեծ Հայքի և հայ ժողովրդի կյանքում խիստ կարևոր դերակատարություն են ունեցել: Նրանք իրենց գործունեությամբ նշանակալի հետք են թողել ոչ միայն Իրանի և Հայաստանի, այլև հռոմեական կայսրության պատմության մեջ: Կարելի է պնդել, որ առաջին դարի երկրորդ կեսին շուրջ 20 տարի Հռոմեական կայսրությունն առավելապես զբաղված է եղել այս թագավորների և նրանց ներկայացրած պետությունների հետ հարաբերությունները կարգավորելու խնդրով: Նրանց գործունեության պարզաբանմանն է նվիրված Տակիտոսի «Աննալներ» («Տարեգրություններ») աշխատության մի ստվար մասը[1]: Նրանց և նշված ժամանակի քաղաքական անցքերի մասին ծանրակշիռ տեղեկություններ է պարունակում նաև Դիոն Կասիոսի «Հռոմեական պատմություն»[2] աշխատությունը: Տիգրան Երկրորդից հետո Տրդատ Առաջինը եղել է Մեծ Հայքի ամենահայտնի և արևմտյան հեղինակների վրա վառ տպավորություն թողած թագավորն Արևմուտքում: Այսքանից հետո հնարավո՞ր է արդյոք, որ Մովսես Խորենացու նման պատմիչն այս թագավորի ու գործունեության մասին տեղյակ չլիներ և նրա մասին տեղեկություններ չհայտներ: Իսկ Խորենացին իր «Հայոց պատմության» մեջ իսկապես էլ մ. թ. 1-ին դարում Մեծ Հայքում թագավորած Տրդատ անունով թագավոր չի հիշատակում: Նրա փոխարեն հիշատակվում է մոտավորապես այդ նույն ժամանակ թագավորած Սանատրուկ անունով մի թագավոր:

Հայ և օտար պատմաբանները այդ առեղծվածը պարզելու համար գնացել են հեշտ և ոչ գիտական ուղիով: Նրանցից ոմանք նույնացրել են ոչ թե Տրդատ

[1] Տե՛ս Корнелий Тацит. Сочинения в двух томах. Т. 1 /Анналы/, СПб, Наука, 1993.
[2] Տե՛ս Кассий Дион. Римская история, кн. VXIV-LXXX, Перевод с древнегреческого. Под ред. А. В. Махлаюка; комментарий и статья А. И. Махлаюка, СПб, Нестор-история, 2011.

Առաջինին և Սանատրուկին, այլ Մ. Խորենացու կողմից մ.թ.ա. 2-րդ դարում որպես Հայաստանի թագավոր ներկայացված Վաղարշակ Առաջին Արշակունուն և Տրդատ Առաջինին[1]: Մեկ այլ հեղինակի կողմից Տրդատ Առաջինը նույնացվել է Երվանդ թագավորի հետ[2], որին Մ. Խորենացին ներկայացնում է Սանատրուկ հայոց թագավորին անմիջականորեն հաջորդած ապօրինի թագավոր: Ա. Գարագաշյանը և Մ. Աբեղյանը նրան նույնացրել են Արտաշես Բ-ի (իրականում՝ Արտաշես Գ-ի) հետ, բայց որը, ըստ Մ. Խորենացու, եղել է Սանատրուկ թագավորի որդին և թագավորել Երվանդից հետո[3]: Սակայն դա բոլորովին էլ այդպես չէ: Ճիշտ չեն նաև այն հեղինակները, որոնք նրան համարում են ոչ միայն ամբողջ Մեծ Հայքի թագավոր, այլև պարթևական հարստության հիմնադիրն այնտեղ[4]:

Բանավեճի առարկա է նաև Տրդատ Առաջինի (և Սանատրուկի) թագավորման ժամանակի հարցը: Լեոն գտնում է, որ Տրդատ Առաջինը թագավորել է 62-100 թվականներին, և նրան հաջորդել է Աշխադարը: Իսկ Սանատրուկ անունով հայոց թագավոր, ըստ նրա, Մեծ Հայքում թագավորել է ոչ թե 1-ին դարի կեսերին, այլ «մ.թ. 190 թվականից, 6 տարի ժամանակով»[5]: Ն. Ադոնցը նույնպես Սանատրուկին համարում է երկրորդ դարի վերջում թագավորած և ասում, որ «Նա հայոց այն թագավորն է, որին իր մոտ կանչեց Կարակալլա կայսրը (211-217թթ.) իբր նրան ապստամբ որդիների հետ հաշտեցնելու համար...»[6]: Դա միանգամայն սխալ տեսակետ է: «Հայ ժողովրդի պատմության» չորսհատորյակի հեղինակների կարծիքով էլ Տրդատ Առաջինը Մեծ Հայքում թագավորել է 66-78 թթ., իսկ նրա «որդի» Սանատրուկը՝ 78-110 թվականներին[7]: Հ. Մարկվարտը, իր հերթին, գտնում է, որ Սանատրուկ անունով հայոց թագավոր իսկապես գոյություն է ունեցել, և որ նա ու նրա որդի Վաղարշը թագավորել են Տրդատ Առաջինից անմիջապես հետո՝ առաջին դարի վերջերին և երկրորդ դարի սկիզբներին[8]:

Հ. Մանանդյանը նույնպես կարծում է, որ Տրդատ Առաջինը թագավորել է 66-75 թթ., իսկ նրա «որդի» Սանատրուկը՝ 75-110 թթ.[9] և որ Սանատրուկը «նրան

---

[1] Տե՛ս Հարությունյան Հ., Հայաստանը Արշակունիների ժամանակ, Երևան, 1945, էջ 28-29, 32-34: Մելքոնյան Հ. Գ., Ադիաբենի պետությունը և Հայաստանը, ՀՀ ԳԱ հրատ., Երևան, 1980, էջ 130—133, 139-140: Սարգսյան Գ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը, Երևան, ԳԱ հրատ., 1966, էջ 181: Ֆեթթեր Պ., Հայկական աշխատասիրութիւնք, Վիեննա, 1895, էջ 124 (թարգմանությամբ և ծանոթագրությամբ Հ. Տաշյանի):

[2] Տե՛ս Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան, «Լույս», 1993, էջ 232-233:

[3] Տե՛ս Գարագաշեան Ա. Մ., Քննական պատմութիւն հայոց, մասն Բ (Արշակունիք ի ժամանակի հեթանոսութեան), Թիֆլիս, 1895, էջ 242: Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1944, էջ 115, 118-124:

[4] Տե՛ս Աստուրյան Հ., Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի և Հռովմայ, Վենետիկ, 1912, էջ 13-15: Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 1, Երևան, ՌՋԽՊ, էջ 326-357: Նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. 2, Երևան, 1957, էջ 5- 20, 433: Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, 1966, էջ 347, 354, 357, 517: Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 387-388:

[5] Տե՛ս Լեո, Երկերի ժողովածու, հ. 1, Երևան, «Հայաստան» հրատ., 1966, էջ 347, 354, 357, 517:

[6] Տե՛ս Ադոնց Ն., Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում, Երևան, 1987, էջ 387-388:

[7] Տե՛ս Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա.Գ., Մելիք-Բախշյան Ստ., Հայ ժողովրդի պատմություն, հ. 1, 1963, էջ 230-239:

[8] Տե՛ս Markwart J., Untersuchungen zur Geschichte von Eran, *Leipzig*, Heft 2, 1905, S. 33-34:

[9] Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, Երևան, «Հայպետհրատ», 1957, էջ 14, 15, 16, 18, 19, 35, 50, 51, 57:

հաջորդած պետք է լիներ 75 և 110 թթ. միջև»[1]: Նա Տրդատ Առաջինի մահվան հավանական թվականը համարում է 75 թիվը և նշում, որ «Միանգամայն հավանական կարելի է համարել, որ նրան (Տրատ Առաջինին - Ս.Խ.) հաջորդած պիտի լիներ (75 և 110 թթ. միջև) Սանատրուկ թագավորը, որի թագավորման ժամանակաշրջանը պատմագետների մեծագույն մասը թյուրիմացաբար տարել է երկրորդ դարի վերջերը»: Այնուհետև, Հ. Մանանդյանը, հետևելով Դիոն Կասիոսի երկի համապատասխան հատվածի (LXXIV 9. 6) ծանոթագրություններին[2], գտնում է նաև, որ «Սանատրուկը և նրա որդին՝ Վաղարշը, ոչ թե Սեպտիմիոս Սևերոս կայսեր (193-211 թթ.) ժամանակին է վերաբերում, ինչպես պատմագրության մեջ ենթադրվում է, այլ Տրայանոս կայսեր (98-117 թթ.) վերջին տարիներին, և, հավանորեն, 116 թվականին»: Այնուհետև նույն տեղում Հ. Մանանդյանը բերում է Դիոն Կասիոսի «Հռոմեական պատմության» վերոնշված հատվածը (LXXIV 9. 6), որում Դիոն Կասիոսը պատմում է հետևյալը. «Երբ Վաղարշը՝ Սանատրուկի որդին, իր զորքերը շարեց Սևերոսի զորքերի առջև և մինչև ճակատամարտ տալը (հռոմեացիների դեմ) խնդրեց զինադադարի մասին, ապա ստացավ այն: (Տրայանոսը) նրա մոտ ուղարկեց դեսպաններ և խաղաղության հաստատման համար նրան նվիրեց Հայաստանի մի մասը»[3]: Դիոն Կասիոսի գրքի խմբագիրների կատարած տողատակի ծանոթագրությունից պարզ է դառնում, որ Սանատրուկի մասին «աղոտ հիշողությունները» վերաբերում են Պարթևաստանի թագավոր Խոսրով Առաջինի (109 -128 թթ.) եղբայր Միհրդատի որդի Սանատրուկին և ոչ թե հայոց Սանատրուկ թագավորին: Պարթև Միհրդատի որդի Սանատրուկը ակտիվորեն և հաջողությամբ պայքարել է Տրայանոսի զորքերի դեմ, սակայն սպանվել իր ազգականների ձեռքով: Նրա որդի Վաղարշն էլ, որը, ըստ Դիոն Կասիոսի վերոնշված տեղեկության, պատրաստվում էր ճակատամարտել Տրայանոս կայսեր զորավար Սևերոսի դեմ, ապագա հայոց Վաղարշ Առաջին (117-140/141 թ.թ.) թագավորն է:

Պատմաբան Լ. Շահինյանը նույնացնում է հայոց Տրդատ Առաջին և Երվանդ թագավորներին, պատմական համարում նաև Երվանդին հաջորդած Արտաշես թագավորին և պնդում, որ Սանատրուկ անունով հայոց թագավոր չի եղել: Միաժամանակ նա ենթադրում է, որ «Արտաշես Բ Արշակունու տեղը ժամանակագրորեն զբաղեցնող «հայոց թագավորները (Սանատրուկ՝ 88-110, Աշխադար՝ 110-113, Պարթամասիր՝ 114, Վաղարշ Ա՝ 117-141) սոսկ պատահական, դեռևս անորոշ տեղեկությունների ու շփոթի հետևանք են»[4]:

Գ. Սարգսյանն իր «Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը...» աշխատության մեջ Տրդատ Առաջինին համարում է Մեծ Հայքում Արշակունիների հարստության հիմնադիրը և գտնում, որ Մ. Խորենացին իր «Հայոց պատմության»

---

[1] Տե՛ս Մանանդյան Հ., նույն տեղում, էջ 14:

[2] Տե՛ս Кассий Дион, Римская история, кн. VXIV-LXXX. Перевод с древнегреческого. Под ред. А. В. Махлаюка; комментарий и статья А. И. Махлаюка, СПб, 2011, с. 119.

[3] Տե՛ս Кассий Дион, Римская история, кн. VXIV-LXXX. Перевод с древнегреческого. Под ред. А. В. Махлаюка; комментарий и статья А. И. Махлаюка, СПБ, “Нестор-история”, с. 119.

[4] Տե՛ս Լևոն Շահինյան, Հայաստանը և առաջին Արշակունիները, Երևան, «Լույս», 1993, էջ 229, 319, 322-325, 337, 382: 232-233, 237-238, 243:

մեջ նրան չի հիշատակել այն պատճառով, քանի որ նա «հայ ժողովրդի հիշողության մեջ Արտաշես է դարձել»: Եվ որ նրա կերպարը Մ. Խորենացու կողմից խառնված է «Արտաշիսյան դինաստիայի հիմնադիր» Արտաշես Առաջին թագավորի կերպարի հետ: Նա Մ. Խորենացուն մեղադրում է նաև այն բանում, որ վերջինս, «ժամանակագրական տեղաշարժ կատարելով», մ.թ.ա. 3-2-րդ դարերում թագավորած Երվանդ և Արտաշես Առաջին թագավորներին տեղափոխել է մ.թ. առաջին դարի վերջ՝ նրանց դրնելով «խորթ ժամանակագրական միջավայրում»: Իրականում, նրա կարծիքով, առաջին դարի վերջում Երվանդ և Արտաշես անուններով թագավորներ չեն եղել: Այդ դիրքերից նա լիակատարորեն իրար է խառնում ինչպես բոլոր Երվանդներին, այնպես էլ Արտաշես Առաջինին, Տրդատ Առաջինին և 1-ին դարի վերջում թագավորած Արտաշես Երրորդին[1]: Ինչ վերաբերում է Սանատրուկին, ապա նա այս հեղինակի կողմից համարվում է Տրդատ Առաջինին հաջորդած երկրորդ հայ Արշակունի թագավոր, որը թագավորել է, իբր, 80-110 թթ.[2]: Թեև նրա կողմից բերվում են Անանուն պատմիչի և Խորենացու արքայացանկերը, ըստ որոնց Սանատրուկը հայոց գահի վրա հաջորդել է Աբգարին, Երվանդը՝ Սանատրուկին, իսկ Արտաշեսը՝ Երվանդին, բայց դրանից ոչ մի հետևություն չի կատարում[3]: Նա համոզված է, որ այդ տեղեկությունները ճիշտ չեն:

«Հայ ժողովրդի պատմության» ութհատորյակի 1-ին հատորում Տրդատ Առաջինին և նրա գործունեությանը ընդարձակ անդրադարձ է կատարված: Եվ դա հիմնականում Տակիտոսի և Դիոն Կասիոսի աշխատությունների հիման վրա[4]: Այստեղ ևս Տրդատ Առաջինը համարվում է Հայաստանում Արշակունյաց դինաստիայի հիմնադիր: Նկարագրվում է նրա մղած տասնամյա պատերազմը Հայաստանի գահը հռոմեացիների օգնությամբ զավթած վրացի գահակալների և Տիգրան Զ-ի և հռոմեացիների դեմ, որն ավարտվում է Հռանդեայի դաշնագրով: Նորից պնդում է արվում, և դա Մ. Աբեղյանի անհիմն ենթադրությունների հիման վրա, որ Տրդատ Առաջինի մասին Մ. Խորենացու երկում հիշատակումներ չկան այն պատճառով, որ նրա կերպարն այնտեղ «համաձուլվել է Արտաշեսի կերպարին»: Այնուհետև հղում կատարելով Մ. Խորենացուն՝ նշվում է նաև, որ Վաղարշակը (իմա՛ Տրդատ Առաջինը, որի և Վաղարշակ Առաջինի կերպարները Խորենացու մոտ նորից նույնացված են համարվում) թագավորել է 22 տարի: «Եթե Տրդատ Ա-ի թագավորության պաշտոնական թիվը վերցնենք 66 թվականը և ավելացնենք 22 տարի, կստանանք 88 թվականը, որ պիտի լիներ նրա մահվան տարեթիվը: Այդ թվականի մոտերքը պետք է թագավորեր Սանատրուկը, որը 91 թվականին, այսինքն՝ իր գահակալության երրորդ տարում դարձել է նաև Եդեսիայի թագավոր և մնացել որպես այդպիսին մինչև 109 թվականը»: Ենթադրություն է արվում նաև, որ «թերևս նա (Տրդատ Առաջինը – Ս.Խ.) մահացել է

[1] Տե՛ս Սարգսյան Գ., Հելլենիստական դարաշրջանի Հայաստանը և Մովսես Խորենացին, Երևան, 1966, էջ 80-82, 140, 150, 178-179, 182-186, 191-198, 202-220, 228, 240:
[2] Տե՛ս Սարգսյան Գ., նույն տեղում, էջ 62, 65, 84-85, 103, 125, 140, 144, 150, 152, 176, 179, 203, 220, 240:
[3] Տե՛ս Սարգսյան Գ., նույն տեղում, էջ 84-85, 179:
[4] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, Երևան, ՀՀ ԳԱ հրատ., 1971, էջ 730-733, 735-764:

Բակուրակերտ (Փիլադելփիա) ավանում, Մարանդ քաղաքի մոտերքը, 88 թվականին»[1]: Այս ամենի պատմականությունը հիմավորվում է Յ. Գուտշմիդի աշխատությունից բերված մի անհիմն կարծիքով[2]: Դրանից հետո ընդամենը մեկուկես էջ նվիրվում է Սանատրուկ թագավորին և հայտարարվում, որ Տրդատ Առաջինի մահից հետո նա է եղել հայոց հաջորդ գահակալը, և որ «Տրդատ Ա-ի մահից հետո պարթևների առաջարկով Հռոմը հաստատել էր սրան»[3]:

Պատմական ճշմարտությունն այն է, որ Տրդատ Առաջինը և Սանատրուկը նույն անձինք են: Եվ Մ. Խորենացին իր երկում Տրդատ Առաջինին հիշատակում է միայն Սանատրուկ անունով (պատվանունով): Եվ նա ոչ մեկին, մանավանդ Վաղաշակ Առաջինին և Տրդատ Առաջինին, վերջինիս և նրա որդի Արտաշեսին, նրան և Երվանդին կամ Արտաշես Առաջինին ու Տրդատ Առաջինի որդի Արտաշես Երկրորդին (իրականում՝ Արտաշես Երրորդին, քանզի Պոնտոսի թագավոր Պոլեմոսի որդի Զենոնը, որը Մեծ Հայքում թագավորել է 18 -34 թթ., նույնպես ընդունած է եղել «դինաստիական Արտաշէս անունը, որն այնքան սիրելի էր հայերին»[4]):

Ինքը՝ Մովսես Խորենացին, «Սանատրուկ» անունը համարում է նրա դայակ Սանոտի անունից առաջացած: Նա պատմում է, որ Աբգար թագավորի քույր Ավդեն իր շքախմբով դեպի Հայաստան ճամփորդելիս Կորդվաց լեռներում ձնաբքի մեջ է ընկել: Փոքրիկ Սանատրուկին, որը գտնվելիս է եղել Ավդեի շքախմբում, ցրտահարումից փրկել է նրա դայակ Սանոտը՝ հայոց իշխան Բյուրատ Բագրատունու քույրը և Խոսրեն Արծրունու կինը, մի սպիտակ շան օգնությամբ: Սանոտի անունով էլ, իբր, հրաշքով կատարված այդ փրկության առթիվ, նա կոչվել է Սանատրուկ՝ «Սանոտի տված»[5]: Գ. Խալաթյանցը կասկածի է ենթարկում անվանակոչության այդ վարկածը, ինչպես նաև այն, որ Բագրատունի Բյուրատի քույր Սանոտ տիկինը կարող էր լինել և եղել է Սանատրուկի դայակը: Նա մեղադրում է Մ. Խորենացուն նաև այն բանում, որ նա հայացրել է Խոսրեն կոչվող

---

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, էջ 762-765: Աբեղյան Մ., Հայոց հին գրականության պատմություն, հ. 1, Երևան, 1944, ՀՍՍՌ ԳԱ հրատ., էջ 115-123:

[2] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, էջ 766-767:

[3] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, էջ 766: Աստուրյան, Քաղաքական վերաբերութիւններ ընդ մէջ Հայաստանի և Հռովմայ, Վենետիկ, 1912, էջ 198:

[4] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, էջ 713:

[5] Տե՛ս Մովսես Խորենացի, Հայոց պատմություն, Երևան, ԵՊՀ հրատ., 1981, էջ 188: Պարզաբանման ենթակա հարց է նաև, թե ի՞նչու է ձմռանը նման ճանապարհորդություն ձեռնարկել Աբգար թագավորի քույր Ավդեն (որը հավանաբար եղել է պարթև արքայից արքա Վոնոն Երկրորդի կանանցից մեկը և Սանատրուկի մայրը: Սանատրուկը կարող էր լինել նաև Աբգարի ու Ավդեի քեռորդին, որին խնամելիս է եղել Ավդեն) փոքրիկ Սանատրուկի և նրա ստնտու Սանոտի հետ: Կորդվաց լեռների միջով անցնող և հայկական Միջագետքից դեպի Մեծ Հայքի կենտրոնական մարզերը տանող այդ ճանապարհը չափազանց դժվարամատչելի է, մանավանդ՝ ձմռանը: Նման ճանապարհորդություն ձեռնարկելու համար անհրաժեշտ էին լուրջ պատճառներ: Կարելի է կարծել, որ դա եղել է ուխտագնացություն: Իրանական աշխարհի զրադաշտական տաճարները, այդ թվում՝ Միհր դիցին նվիրված, կենտրոնացված են եղել Հայաստանում: Դեկտեմբերի 25-ին Միհրի ծննդյան օրն է, իսկ հունվար ամսվա սկիզբներին կատարվել են Արամազդին նվիրված տոնախմբություններ[5]: Կարելի է կարծել, որ Ավդեի ուխտագնացությունը այդ տոներով է պայմանավորված եղել: Մանավանդ՝ Սանատրուկ անունը հուշում է, որ այդ թագաժառանգը նվիրված է եղել կամ Միհրին, կամ էլ Արամազդին, և նախատեսվել է, որ նա ապագայում այդ աստվածներից մեկին է նվիրվելու և դառնալու է մոգ:

ոմն մեկին, նրան կոչել Խոսրեն Արծրունի, բայց որին ասորի պատմիչ Լաբուբնան Խուրան է կոչում, և որը պետք է ասորի եղած լինի[1]:

Այս հարցում ճիշտ է Մ. Խորենացին և ոչ թե Լաբուբնան: Եվ որևէ հիմք չկա համարյա ոչինչ չստեղծած այդ անձնավորությանը՝ Լաբուբնային[2], ընդունել որպես ճշմարտության աղբյուր, իսկ Խորենացուն՝ սուրբ եպիսկոպոսին, որն ապրում էր Երկնային Արքայություն մտնելու հույսով, համարել ստախոս: Այս հարցում բան չի փոխվում նաև նրանից, որ Հր. Աճառյանը Խոսրեն անունը նույնպես համարում է ասորական Խուրան անվան տարբերակ[3]: Գուցե և այդպես է, բայց բանն այն է, որ հայոց նախարարներից (հատկապես Արծրունիներից) շատ քչերի անուններն են եղել հայկական: Բացի դրանից՝ Խոսրենը (գուցե՝ Խոսրով) եղել է զորավար, իսկ ասորիները այդ ժամանակ արդեն վաղուց ազնվականություն և զորական ուժեր չունեին: Այդ հանգամանքը նաև ապացույց է այն բանի, որ ասորի չեն եղել Եդեսիայի թագավոր Աբգար Հինգերորդը, նրա նախորդներն ու հաջորդները: Իսկ Բագրատունի, Արծրունի և այլ հայոց նախարարական տների անդամների հիմնական զբաղմունքներից են եղել ինչպես պատերազմը, զորավարությունը, այնպես էլ իշխանազուն ու թագավորազուն երեխաների դայակությունը, որի մասին բազմաթիվ վկայություններ կան հայոց պատմագրության մեջ:

Բացի դրանից՝ Բյուրատ Բագրատունին և նրա քրոջ ամուսին Խոսրեն Արծրունին նշված ժամանակ փաստորեն գտնվելիս են եղել պարթևական պետության կազմում գտնվող Մծբինում կամ Օսրոենի մայրաքաղաք Եդեսիայում: Քանի որ այդ նույն ժամանակ Մեծ Հայքում թագավորելիս են եղել հայոց գահը զավթած վրացիներ, ապա բնական է, որ տվյալ իրադրության մեջ Բագրատունի թագադիր ասպետն ու նրա ազգականները չէին կարող գտնվել Մեծ Հայքի զավթված մասում: Նման դեպքում նրանք կա՛մ պետք է թագադրեին և ընդունեին ապօրինաբար հայոց գահը զավթած օտարազգի ոչ լեգիտիմ թագավորներին և այդպիսով օրինականացնեին նրանց իշխանությունը, կա՛մ էլ զոհվեին: Դրա համար էլ բնական է, որ նրանք գտնվելիս են եղել հարկադրական վտարանդիության մեջ հայկական այն երկրամասերում, որոնք նշված ժամանակ պարթևական գերիշխանության տակ էին: Երվանդ թագավորի ժամանակ նույն դրդապատճառներով Արտաշես թագավորազնի դայակ Սմբատ Բագրատունին էր վտարանդիության մեջ գտնվում:

Հր. Աճառյանը Սանատրուկ անունը, հետևելով Խորենացուն, ստուգաբանում է որպես «Սանոտի տուրք»՝ կարծելով, որ նրա անունը «Սանոտ» անունից է ծագել, և նշում, որ այն ունի պարսկական ծագում[4]: Մեր կարծիքով՝ այն իսկապես էլ պարթևական ծագում ունի, քանզի նրա կրողը պարթև է, և այն նշանակում է «Արևի տված»: Սանոտ անունն էլ պետք է ստուգաբանել որպես «Արևոտ» կամ «Արևի Տուրք» (տված): Գուցե հրաշքով փրկվելու հետևանքով էլ նրան այդ ժամա-

[1] Տե՛ս Халатянц Г., Армянские Аршакиды в «Истории Армении“ Моисея Хоренского, Часть 1, М., 1903, с. 87-98:
[2] Տե՛ս Мещерская Е. Н., Легенда об Авгаре. М., Наука, 1984.
[3] Տե՛ս Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. 2, Երևան, 1944, էջ 531:
[4] Տե՛ս Աճառյան Հր., Հայոց անձնանունների բառարան, հ. 4, Երևան, 1942, էջ 392-393:

նակ կնքել են հայկական որևէ զրադաշտական տաճարում, և նրան տվել այդ երկրորդ անունը, որն իրականում Արշակունիների արքայաանուններից է:

Նա եղել է ոչ միայն թագավոր, այլև զրադաշտական մոգ և մոգպետ (քրմապետ), աչքի ընկել նոր սրբավայրեր, տաճարներ ու քաղաքներ կառուցելու, ավերվածները վերակառուցելու, զրադաշտական իրավունքը, արարողակարգերը հետևողականորեն վերականգնելու և մարդկանց կյանքը, որը խաթարվել էր հռոմեական արշավանքների հետևանքով, նորմալ հուն մղելու գործում: Այդ մեծագործությունների համար Սանատրուկ պատվանունը նրան կարող էր շնորհել նաև պարթևների թագավորներին կից և «թագավորներ դնող» ազգականների ու իմաստունների ատյանը (խորհուրդը)[1]: Բացի դրանից՝ նա՝ որպես զրադաշտական, պարտավոր էր ունենալ բազմաթիվ անուններ (Արամազդն ուներ 72 անուն, որոնք թվարկված են Ավեստայի «Օրմազդ-յաշտում»[2]):

Նրա զրադաշտական քրմապետ լինելը հաստատում է նաև Տակիտոսը: Վերջինիս հաղորդմամբ՝ պարթևական Վաղարշ Առաջին թագավորը 63 թվականի գարնանը Ներոն կայսրին հղած նամակով նրան տեղեկացրել է, որ հանուն ընդհանուր խաղաղության նա համաձայն է, որ Տրդատը գնա Հռոմ՝ Ներոնից թագ ստանալու համար, բայց նրան քրմապետական պարտականությունները թույլ չեն տալիս դա անել[3]: Բանն այն է, որ Հռոմ գնալ հնարավոր և խելամիտ էր միայն ծովով: Բայց ծովի ջուրը, ըստ զրադաշտական կրոնի (իրավունքի), սրբազան տարերք է, և զրադաշտական քրմապետը չէր կարող համաձայնել ծովային ճամփորդության: Քանի որ ծովով նավարկել առանց ջրի մեջ աղբ թափելու և այդպիսով այն պղծելու՝ հնարավոր չէր[4]:

Բայց Ներոնը, որը թատերական ներկայացումների սիրահար էր, ամեն կերպ ձգտել է Տրդատին հրապուրել Հռոմ[5]: Եվ երբ Հռանդեայի պայմանագրով[6] փոխհամաձայնություն է ձեռք բերվել, որ Տրդատ Առաջինն անպայման պետք է գնա Հռոմ Ներոնից թագ ստանալու համար, ապա պարթևահայկական կողմը պայման է դրել, որ հայոց թագավորը Հռոմ գնա ցամաքային ճանապարհով: Եվ որ հռոմեական կողմը պետք է հատուցի ճանապարհորդության ծախսերը: Այդ ուղևորության մասին Պլինիոս Կրտսերը (61-111/113թթ.) գրում է (Ա. Գարագաշյանի թարգմանությամբ) հետևյալը. «Տրդատես մոգ եկեալ էր գտանել զնա (զՆերոն) ի Հռոմ, բերեալ յանձին իւրում զձաղանս Հայոց աշխարհին, և վասն այսօրիկ իսկ կոխեր զնահանգսն ընդ որս անցանէր: Չէր կամեցեալ երթալ ընդ ծով, զմոգքն արգելեալ համարին թքանել ի ծով և աւելորդօք ինչ կարևորօք մարդկութեան զտարրն զայն պղծել: Ունէր ընդ իւր մոգս, առնէր զՆերոն միջամուխ ի խնջոյսն մոգականս. սակայն կայսրն որ տայր նմա թագավորություն՝ չկարէր ընդունել ի

[1] Տե՛ս Моммзен Теодор. История Рима, Т. 4, Ростов на Дону, Феникс, 1997, с.с. 254-255:
[2] Տե՛ս Wolff Fritz. Avesta- Die heiligen Bücher der Parsen, übersetzt auf der Bartolomae,s Altiranischem Wörterbuch. Strassburg, 1910, S. 325-332.
[3] Տե՛ս Корнелий Тацит, Сочинения в двух томах. Т. 1 /Анналы/, СПб, Наука, 1993, XV. 24, с 230.
[4] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ. 1, էջ 759:
[5] Տե՛ս Սվետոնիոս, Տասներկու կեսարների կյանքը, Երևան,1986, էջ 210:
[6] Տե՛ս Степанян А. А., Рандейский договор и коронация Тиридата Аршакида в Риме, ИФЖ, 1961, № 1-2.

նմանէ զարուեստ մոգութեան»[1]: Իրանական իրավահայտ աղբյուր հանդիսացող «Արտա Վիրապ Նամակի» 58-րդ գլխում Արտա Վիրապը դժոխքում տեսնում է մի մարդու հոգի, որն այնտեղ տառապում էր երկրային կյանքում «մեծ ջուրը», «ավազանի ջուրը» և «գնայուն ջուրը» պղծելու համար[2]: Այսպիսով, ջուրը, ըստ զրադաշտական իրավունքի և կրոնի, սրբազան տարերք էր, և դրա պղծողը կարող էր դժոխք ընկնել: Դրա համար էլ Տրդատը հրաժարվել է ծովով ճամփորդել:

Մովսես Խորենացու հաղորդման համաձայն (գիրք 2, գլ. ԼԶ)՝ Տրդատ Առաջինը կամ Սանատրուկը վերականգնել է երկրաշարժից տուժած Մծբինը, որը եղել է նրա թագավորության մայրաքաղաքը[3]: Այդ առթիվ նա իրեն արձան է կառուցել Մծբինի հրապարակում՝ մի դրամ ձեռքին բռնած: Դրամը խորհրդանշել է այն փաստը, որ նա իր վերջին փողերը ծախսել է Մծբինի վերականգնման վրա[4]: Երկրաշարժի հետևանքով Մծբինի կործանման ճշտությունը հիմնավորվում է նաև Տակիտոսի հաղորդած այն տեղեկությամբ, որ Տիբերիոս (14-37 թթ.) կայսրի իշխանության տարիներին 12 ասիական քաղաքներ կործանվել են երկրաշարժից[5]: Դրանք հիմնականում Մծբինի հարևանությամբ Սիրիայի տարածքում գտնվող հռոմեական քաղաքներն են: Տակիտոսի և Խորենացու՝ միմյանց լրացնող այս տեղեկությունները նույնպես ապացուց են հանդիսանում այն բանի, որ Տրդատ Առաջին-Սանատրուկ թագավորը կարող էր և վերակառուցել է երկրաշարժից տուժած Մծբինը:

Նա է վերակառուցել և կարող էր վերաշինել հռոմեացիների ավերած Արտաշատը, Տիգրանակերտը, Գառնին և այլն, Արտաշատի մոտ կառուցել ամբողջ տաճարական համալիր, որը կոչվել է Դուին-Ասասակ, ինչպես նաև Մծուրն քաղաքը[6]: Որ այս և այլ հայկական քաղաքներ վնասված են եղել պարթևական արքա Վաղարշ Առաջինի և նրա եղբայր, հայոց արքա Տրդատ Առաջինի կողմից Հռոմեական կայսրության դեմ մղած տասնամյա պատերազմի ժամանակ, հանրահայտ է: Հայտնի է նաև, որ Ներոն կայսրը նրան դրամական միջոցներ և արհես-

---

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ.1, էջ 759: Գարագաշեան Ա. Մ., Քննական պատմութիւն հայոց, մասն Բ (Արշակունիք ի ժամանակի հեթանոսութեան), Թիֆլիս, 1895, էջ 240:

[2] Տե՛ս Արտա Վիրապ Նամակ, պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 76, 88:

[3] Հարցը, որ նշված ժամանակ Մծբինը եղել է Մեծ Հայքի մայրաքաղաքը, որ նա վերանորոգել է այն երկրաշարժից հետո և այլն, հայոց պատմագրության մեջ անհիմն կերպով վիճարկվում է: Որոշ հեղինակներ պնդում են, որ Մ.Խորենացու գրքում խոսքը ոչ թե Մծբին, այլ Մծուրն քաղաքի մասին է: Այնինչ այս թագավորը, ըստ Խորենացու, վերականգնել է երկրաշարժից տուժած Մծբինը և կառուցել Մծուրն քաղաքը: Նա հավատավոր զրադաշտական էր և կործանված քաղաքները վերականգնելը, նորերը կառուցելը, (ինչպես նրանից առաջ վարվել են նաև Վաղարշակ Առաջինը, Արտաշես Առաջինը, Տիգրան Մեծը), նրան՝ որպես զրադաշտական տիրակալի, պարտադրվել է Ավեստայի «Աշխարհագրական պոեմ», «Յիմա», «Հողը» ֆրակարդների ստանձներով ու դրանց պարունակած նորմերով: Ինչ վերաբերում է Մծուրնին, որը գտնվել է զրադաշտականի համար Եփրատի ամենանշանակալից ու սրբազան հատվածում՝ Արածանի և Մեղ գետերի խառնման տեղում, ապա այն, անկասկած, կառուցել կամ վերակառուցել է այս թագավորը: Ըստ Ավեստայի յաշտերի՝ Արդվի Սուր, այն է՝ Եփրատ սրբազան գետի (և ոչ թե Ամու-Դարիայի) ափերին և ամեն մի ոլորանի վրա պետք է լինեին պալատներ, տաճարներ և քաղաքներ: Իրականում էլ Եփրատի ափերը պատած են եղել դրանցով, և այս թագավորն անմասն մնալ այդ գործընթացներից չէր կարող:

[4] Տե՛ս Մովսես Խորենացի, նույն տեղում, էջ 188:

[5] Տե՛ս Тацит, Публий Корнелий. Анналы. Малые произведения. История. М., “Ладомир”, 2003, с. 81.

[6] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ.1, էջ 761:

տավորներ է տվել հռոմեացիների կողմից հայոց ավերված քաղաքները վերականգնելու համար: Եվ նա իրացրել է այդ միջոցներն ըստ նշանակության: Դրանից հետո շուրջ 50 տարի Հայաստանում տիրել է խաղաղություն: Եվ 1-ին դարի երկրորդ կեսին, ինչպես նաև երկրորդ դարի առաջին կեսին պատերազմի հետևանքով Հայաստանի քաղաքների կործանման և դրանց վերականգնման մասին որևէ վկայություն չի պահպանվել: Այդ թվում՝ ալանների 72 և 75 թ.թ. արշավանքների և դրանցից հետո որևէ այլ հայոց գահակալի տիրապետության ժամանակ: Եվ 100 թվականից անմիջապես առաջ և հետո Սանատրուկ կամ այլ անունով որևէ թագավոր հայկական քաղաքներ չի վերակառուցել: Դրա կարիքը չի եղել:

Մովսես Խորենացին Աբգարից հետո որպես հայոց թագավորներ է հիշատակում Սանատրուկին և Աբգարի որդի Անանունին: Նրա կողմից որպես հայոց թագավորներ չեն հիշատակվում Մեծ Հայքում մ.թ. 1-ին դարի կեսերին իրապես թագավորած վրացիներ Միհրդատը, Հռադամիստը և Ջենոն-Տիգրանը: Թվում է, թե դա այն պատճառով, որ նրանց մասին նա չգիտի: Սակայն ավելի հավանական է այն վարկածը, որ նրանք չեն եղել Արշակունիների հարստության ներկայացուցիչներ, հետևաբար չէին կարող թվարկվել հայոց արքայացանկի մեջ և համարվել հայոց օրինական թագավորներ: Այդպես է վարվում նաև Սեբեոսը, որը Աբգարից հետո որպես հայոց թագավոր հիշատակում է Սանատրուկին և նրան անվանում Աբգարի քեռորդի: Նա ևս Տրդատ Առաջինի չի ճանաչում, վրացի թագավորների մասին նույնպես չի հիշատակում, իսկ Սանատրուկից հետո էլ հայոց թագավոր է անվանում ոչ թե Երվանդին (որպես ապօրինի թագավոր), այլ Արտաշեսին՝ վերջինիս կոչելով Սանատրուկի որդի[1]: Մ. Խորենացին վկայում է, որ Աբգար թագավորը Թադևոս առաքյալին ուղարկել է իր քեռորդի Սանատրուկի մոտ, որը նրա կողմից նշանակված է եղել «ի վերայ աշխարհիս և զօրացն»[2]: Հայտնի է, որ Մ. Խորենացին այս Աբգարին, որը Աբգար Հինգերորդն է (4 թ. մ.թ.ա. - 7 թ. մ.թ., 13-50 թթ.), համարում է ամբողջ Մեծ Հայքի թագավոր: Այնինչ նա եղել է Հայկական Միջագետքի՝ Օսրոենի կամ Եդեսիայի (Ուռհայի) ու դրա շրջակայքի թագավոր: Իսկ կարո՞ղ էր Աբգար Հինգերորդը Սանատրուկ-Տրդատին մինչև իր մահը նշանակել զորապետ և ինչ-որ տարածքի կառավարիչ: Այո, կարող էր: Զրադաշտականը 15 տարեկանից համարվում էր չափահաս և առանց կառավարման փորձի ու քաջագործությունների նրան Մեծ Հայքի թագավորի թեկնածու պարթևների թագավորական ատյանը և թագավոր Վաղարշ Առաջինը չէին առաջադրի:

Մովսես Խորենացին պատմում է (2-րդ գրքի ԼԳ գլուխ), որ Թադեոս առաքյալը Եդեսիայում քրիստոնեությունը տարածելուց, թագավոր Աբգարին ու եդեսացիներին մկրտելուց հետո տեղափոխվել է թագավոր Սանատրուկի մոտ, որը, ինչպես ասվեց, այդ ժամանակ Աբգարի կողմից կառավարիչ և զորապետ է նշանակված

[1] Տե՛ս Սեբէոս եպիսկոպոսի պատմութիւն, Ստ. Մալխասյանցի խմբագրությամբ և ծանոթագրություններով, Երևան, «Արմֆան», 1979, էջ 11:
[2] Տե՛ս Մովսես Խորենացի, նույն տեղում, էջ 176:

եղել: Ակնարկ կա այն մասին, որ Սանատրուկը նույնիսկ քրիստոնեություն է ընդունել, որը շատ հնարավոր է: Այդ ժամանակ Օսրոենում և Ադիաբենում տարածված էր հրեական կրոնից չանջատված ու դրա ազդեցության տակ գտնվող քրիստոնեական մի հոսանք: Այդ նույն ժամանակ Հռոմեական կայսրության Արևելքում (Եգիպտոս, Սիրիա, Պաղեստին և Փոքր Ասիա), ինչպես նաև Պարթևական տիրույթներում տեղի են ունեցել հրեաների և քրիստոնյաների հալածանքներ ու կոտորածներ[1]: Դրա արձագանքներից է նաև Խորենացու հաղորդածն այն մասին, որ Աբգարի որդի Անանունը կամ Մանու Հինգերորդը (50-53 թթ.) Եդեսիայում հալածել է քրիստոնյաներին՝ ոչնչացնելով Աբգար թագավորի ձեռքբերումները: Արդյո՞ք այդ ժամանակ է Տրդատ Առաջինը մահապատժել Թադեոս առաքյալին, կույս Սանդուխտին և մյուսներին, թե՞ Հռոմից վերադառնալուց հետո, որտեղ նա մեկնել էր 66 թվականին: Դա այնքան էլ կարևոր չէ: Նրանց հնարավոր էր մահապատժել 51-66/70թթ., բայց բացառվում է այդ անձանց մահապատժի ենթարկելը 100 թվականից անմիջապես առաջ և հետո, որտեղ երբեմն տեղափոխվում է Սանատրուկի թագավորման ժամանակաշրջանը: Ընդ որում կարևոր չէ հարցը, թե Թադեոսը առաջին, թե երկրորդ հերթի առաքյալ է: Երկրորդ հերթի Թադեոս առաքյալն էլ է եղել Քրիստոսի ժամանակակիցը, հետևորդը: Եվ նա նույնպես չէր կարող Հայաստանում քարոզել 100-ական թվականներին և այնտեղ մահապատժվել: Այդքան երկար այդ առաքյալները չեն ապրել և չէին կարող ապրել ու քարոզել:

Ըստ Մ. Խորենացու հաղորդման (գիրք 2, գլ. ԼԴ)՝ Սանատրուկը Թադեոս առաքյալին, իր դուստր Սանդուխտին և բազմաթիվ այլ քրիստոնյաների մահապատժի է ենթարկել Մեծ Հայքի Արտազ գավառում՝ մի քարքարոտ, ջրազուրկ վայրում: Պատմահայրը նաև նշում է, որ այս սրբերի նշխարները նրա ժամանակ հայտնաբերվել են այն նույն վայրում, որտեղ նրանք, ըստ «նրանից առաջ պատմողների», նահատակված են եղել[2]: Այս հանգամանքի վրա հետազոտողները ընդհանրապես ուշադրություն չեն դարձրել և ավելի շատ հետևում են այդ դեպքերի մասին սկզբնաղբյուր համարվող ու հակասական տեղեկություններ հաղորդող Լաբուբնայի, Ե. Կեսարացու գրածներին:

Իսկ այն հանգամանքը, որ մահապատժի վայրը, Խորենացու տեղեկության համաձայն, եղել է քարքարոտ, անջուր և կարող էր ծառայել որպես դախմայատեղ՝ մահապատիժն իրականացնելու և մահապարտների դիակներն այնտեղ թողնելու համար, նույնպես այդ տեղեկության արժանահավատության ապացույց է: Դա նշանակում է, որ նրանք մահապատժի են ենթարկվել զրադաշտական թաղման ծեսով այնպիսի քարքարոտ տեղամասում, որտեղ սրբազան տարերք հանդիսացող հողը և ջուրը մահապարտների արյունով պղծել հնարավոր չէր: Նրանց մարմիններն էլ թողնվել են մահապատժի վայրում, որպեսզի ըստ զրադաշտական կանոնի՝ վայրի գազաններն ու թռչունները նրանց հոշոտեն:

---

[1] Տե՛ս Ренан Э., Антихрист, СПб, изд. Н. Глаголева, 1991, с. 493.

[2] Տե՛ս Մովսես Խորենացի, նույն տեղում, էջ 184:

Բացի դրանից՝ միայն Սանատրուկ-Տրդատ Առաջինը ժամանակագրական առումով կարող էր լինել այն թագավորը և հայոց զրադաշտական քրմապետը, որը մահապատժի է ենթարկել առաքյալ Թադեոսին, նրա ուղեկից սրբերին, իր դուստր սուրբ կույս Սանդուխտին և շատ այլ քրիստոնյաների: Ժամանակագրական առումով միայն նրա թագավորման ժամանակը կարող է և համընկնում է Թադեոս (և Բարդուղիմեոս) առաքյալի Հայաստան գալու և քարոզելու ժամանակի հետ: Իսկ 88-110 թվականներին, որն անհիմն կերպով հայտարարվում է թագավոր Սանատրուկի թագավորման ժամանակահատված, Թադեոս առաքյալը, այդ թվում երկրորդ հերթի, չէր կարող Հայաստան գալ և այնտեղ նահատակվել: Պետք է նաև շեշտել, որ Ներոնից հետո ոչ մի կայսր, այդ թվում Տրայանոսը, ինչպես նաև Մերձավոր Արևելքի որևէ տիրակալ, քրիստոնյաների չի հետապնդել[1]: Սանատրուկ անունով թագավոր էլ Տրայանոսի ժամանակ Հայաստանում չի թագավորել:

Փավստոս Բուզանդը նույնպես Տրդատ Առաջինին հիշատակում է Սանատրուկ անունով և կոչում «առաքելասպան»: Այդպիսին կարող էր լինել միայն Տրդատ Առաջինը: Բացի դրանից՝ Փ. Բուզանդը փաստում է, որ երբ 4-րդ դարի կեսերին պարսիկները պղծել են հայոց թագավորների հանգստարանը Եփրատ սրբազան գետի ափին գտնվող Անի ամրոցում և գերի տարել հայոց թագավորների ոսկորները, ապա չեն կարողացել բացել միայն Սանատրուկ թագավորի դամբարանը: Այն աչքի է ընկել հատուկ ամրությամբ[2]: Այդպիսին կարող էր լինել միայն այս հզոր թագավորի դամբարանը:

Մովսես Խորենացու հաղորդմամբ (գիրք 2-րդ գլ. ԼԴ գլուխ)՝ Աբգարի մահից (մթ. 50 թ.) հետո հայոց թագավորությունը երկու մասի է բաժանվել, որից հետո Եդեսիայում թագավորել է Աբգարի որդի Անանունը, իսկ Մեծ Հայքում՝ Աբգարի քրոջ որդի Սանատրուկը: Իսկապես էլ Սանատրուկը (Տրդատ Առաջինը) Մեծ Հայաստանում սկսել է թագավորել մ.թ. 51 թվականի վերջին կամ 52 թ. սկզբին, երբ արդեն Աբգարը մահացած էր[3]: Իսկ 52 թ. գարնանը (Արշակունիներն արշավանքները միշտ սկսել են գարնանը) Մծբինից, որը եղել է Մեծ Հայքի մայրաքաղաքներից, սկսվել է պարթևների ու հայերի արշավանքը՝ Մեծ Հայքը գրավելու, և այն արդեն իսկ պարթևական ատյանի կողմից դրա թագավոր օծված Տրդատ Առաջինին հանձնելու համար: Այս փաստը նույնպես ապացույց է այն բանի, որ Սանատրուկը և Տրդատ Առաջինը նույն անձինք են:

Մովսես Խորենացին նշում է նաև (գիրք 2, գլ. ԼԵ), որ Սանատրուկը (Տրդատ Առաջինը), Մեծ Հայքի գահի վրա հաստատվելուց անմիջապես հետո, ցանկացել է հարձակվել Եդեսիայի (Օսրոենի) վրա՝ այդ թագավորությունը Մեծ Հայքին

---

[1] Տե՛ս Грант Майкл, Римские императоры. Биографический справочник правителей Римской империи. 31г. до н.э. - 476г. н.э. М., Терра – Книжный клуб, 1998, էջ 67-95:

[2] Տե՛ս Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, ԵՊՀ հրատ., Երևան, 1987, էջ 12, 180, 222:

[3] Հայ ժողովրդի Պատմության ութհատորյակի 1-ին հատորում Աբգար Զ-ն համարվում է թագավորած մ.թ. 71-91 թթ. (էջ 925), որը ճիշտ է: Սակայն նա այն Աբգարը չէ, որը շփումներ է ունեցել Քրիստոսի առաքյալների հետ: Քրիստոսի ժամանակակիցը Աբգար Հինգերորդն է (մահացած մթ. 50 թ.), որն էլ Տիրոջ առաքյալի կողմից բուժվել, ընդունել է քրիստոնեություն և այլն: Նրա մասին է գրում Եվսեբիոս Կեսարացին, Մովսես Խորենացին և այլք, և ոչ թե Աբգար Վեցերորդի: Վերջինս Եդեսիայում իսկապես էլ թագավորել է 71-91 թթ., իսկ Տրայանոս կայսեր ժամանակակից Աբգար Յոթերորդը թագավորել է 109-116 թվականներին:

միացնելու համար: Բայց այդ ժամանակ Եդեսիայի թագավոր Անանունը մահացել է, և Եդեսիան Մեծ Հայքին է միացվել խաղաղ ճանապարհով: Այդ հաղորդումը նույնպես կարող է համապատասխանել պատմական իրողություններին և ճիշտ լինել: Դա կարող էր լինել և եղել է մինչև 54 թվականը և ոչ թե 91 թվականին՝ Աբգար Վեցերորդի (71-91թթ.) թագավորման ժամանակ, ինչպես որ կարծում են հայ ժողովրդի պատմության ութհատորյակի հեղինակները[1]: Չէ՞ որ այդ գլխում նշում է առկա այն մասին, որ Եդեսիայի գրավումը հայերի կողմից և Մեծ Հայաստանին դրա միացումը, Աբգար Հինգերորդ թագավորի կին Հեղինե թագուհու աքսորը Խառան քաղաք, իսկ աղջիկներինը՝ Հաշտյանք, կատարվել է «յաւուրս Կղաւդեայ», այն է՝ Կլավդիոս (Տիբերիոս Կլավդիոս Դրուզ՝ 41-54 թթ.) կայսեր ժամանակ: Իսկ Տրդատ Առաջին-Սանատրուկը թագավորել է 51/52 թվականներից, և այդ ամենը կարող էր կատարել 53-54 թվականներին:

Առանձին հետաքրքրություն է ներկայացնում Խորենացու հաղորդումը Սանատրուկի կողմից Աբգար Հինգերորդի արու զավակներին կոտորելու, իսկ աղջիկներին Հաշտյանք գավառն ուղարկելու մասին: Հաշտյանքում բնակվել են այն Արշակունիները, որոնք թագավորելու իրավունքից զրկված են եղել: Դա նշանակում է, որ Աբգար Հինգերորդը և նրա դուստրերը եղել են հայացած Արշակունիներ: Դրանով հերքվում է Տակիտոսի այն տեղեկությունը, որ Աբգարը, որին նա Ակբար է կոչում, եղել է արաբ[2]: Արաբը (կամ ասորին) չէր կարող այդ ռեգիոնում՝ գտնվող պարթևների ազդեցության ոլորտում, թագավորել: Արաբները նշված ժամանակ այդ շրջանից դեռևս չափազանց հեռու էին գտնվում[3]: Եվ միաժամանակ վերոնշված վկայությամբ հաստատվում է այն հանգամանքը, որ նշված դեպքերը կատարվել են այն ժամանակ, երբ Տրդատ Առաջին-Սանատրուկն արդեն իսկ 51/52 թվականներից եղել է հայոց թագավոր, Աբգար Հինգերորդը՝ արդեն մահացած, իսկ Հռոմի կայսր եղել է Կլավդիոսը, որը մահացել է 54 թվականի հոկտեմբերին[4]: Ուստի հնարավոր է նաև, որ Տրդատ Առաջինի կամ Սանատրուկի կողմից Եդեսիայի գրավումը տեղի ունենար Կլավդիոս կայսեր թագավորման ժամանակ՝ 53-54 թվականներին:

Հ. Մանանդյանը, Լեոն, Գ. Խալաթյանցը մեջբերում են կատարում ոմն Սուիդասի բառգրքից, որում վկայություն է կա հայոց Սանատրուկ թագավորի մասին՝ Արրիանոսի «Պարթևականք» (որը չի պահպանվել - Ս.Խ.) գրքից քաղված: Այդ մեջբերման բովանդակությունը հետևյալն է. «Հայոց թագավոր Սանատրուկը, - վկայում է Արրիանը - ուներ միջակ հասակ, բայց հակում ուներ դեպի ամեն մի մեծ բան և մանավանդ դեպի պատերազմական գործերը: Նա հավատարիմ պահապան էր արդարադատության և իր կենցաղավարության մեջ զուսպ էր, նաև չափավոր և ողջամիտ էր, ինչպես լավագույնները հույների ու հռոմեացիների

[1] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ.1, էջ 766, 925:
[2] Տե՛ս Тацит, Сочинения в двух томах. Т. 1 Анналы, СПб., „Наука“, 1993, кн. 12, гл. 12, с. 160.
[3] Տե՛ս Пигулевская Н. В. Арабы у границ Византии и Ирана в 4-6 вв. Л., М-Л., Изд. АН СССР, 1958.
[4] Տե՛ս Грант Майкл., Римские императоры. Биографический справочник правителей Римской империи. 31 г. до н.э. – 476 г. н.э., М., Терра – Книжный клуб, 1998, с. с. 67-95.

մեջ»[1]: Կարելի է պնդել, որ նման հատկություններ ունեցել է Տիրիդատ Առաջին Արշակունին: Այդ նա է, որ «...հակում ուներ դեպի ամեն մի մեծ բան, մանավանդ դեպի պատերազմական գործերը»: Նա է, որ 10-12 տարի անզիջում պատերազմ է մղել հռոմեացիների, ալանների դեմ, կառուցել քաղաքներ ու տաճարներ: Եվ եթե նրանից հետո լիներ Սանատրուկ և թագավորեր 78-110 կամ 88-110 թթ.[2], ապա նա չէր կարող աչքի ընկնել պատերազմական գործերում: Քանզի Հռանդեայի դաշնագրի կնքումից հետո շուրջ 50 տարի (64-114) պատերազմներ չեն եղել և տարածաշրջանում խաղաղություն է տիրել:

Բացի դրանից՝ նա կարող էր, որպես զրադաշտական քրմապետ, կոչվել «հավատարիմ պահապան արդարադատության»: Արդարադատ էին կոչվում զրադաշտական դիցեր Միհրը, Տիրը, Վահագնը, Ռաշնը, Սրոշ Առաքինին և ուրիշները, որոնք Չինվատ կամրջի մոտ դատում էին մահացածների հոգիներին, ֆրավաշիների (հրեշտակների) գլուխ անցած պատերազմներ մղում հանուն արդարության[3]: Այս թագավորն էլ նրանց քուրմն էր և զրադաշտական իրավունքի կամ արդարության երկրային պահապանը, այդ դիցերի անունից մարդկանց դատողը: Պետք է նշել նաև, որ մինչև Տրդատ Առաջինը, շուրջ 50-60 տարի, երկիրը մատնված է եղել քաոսի, խարխլված է եղել զրադաշտական օրինականությունը, արդարությունը, փորձեր են արվել երկրում ներդնել հռոմեական իրավունքը և այլն: Իսկ նա, որպես գլխավոր մոգպետ, այն է՝ գլխավոր իրավարար և զրադաշտական արդարադատության երաշխավոր, վերագործարկել և ապահովել է զրադաշտական իրավական համակարգի գործողությունը, վերականգնել խախտված օրինականությունը, արդարադատությունը: Այդ նա է, որ եղել է կենցաղավարության մեջ զուսպ, չափավոր և ողջամիտ, աշխարհակալ Ներոնի, նրա պալատականների վրա թողել դրական տպավորություն և բարձր գնահատականի արժանացել հռոմեական մտավորականության այնպիսի ներկայացուցիչների կողմից, ինչպիսիք են Տակիտոսը, Արիանոսը և այլք:

Հովսեփոս Փլավիոսը հիշատակում է այս Տրդատին ալանների դեմ 72 կամ 75 թթ. պատերազմելիս՝ նրա հետ միաժամանակ հիշատակելով Մեդիայի (Մարաստանի) թագավոր, նրա եղբայր Բակուրին[4]: Սա այն Բակուրն է, որն իր եղբայր, արքայից արքա Վաղարշ Առաջինից հետո, դարձել է ամբողջ Պարթևաստանի թագավոր և այդ կարգավիճակում թագավորել 75/78-110 թվականներին: Իսկ որևէ հայոց թագավոր Սանատրուկի՝ թագավորած 1-ին դարի վերջին, Փլավիոսը չի հիշատակում:

---

[1] Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն, հ. 2, էջ 15: Լեո, Հայոց պատմություն, հ. 1, էջ 15, 357: Халатянц Г., Армянский эпос в истории Моисея Хоренского. М., 1896, с. 180.

[2] Տե՛ս Մանանդյան Հ., Քննական տեսություն..., հ. 2, էջ 14-15, 433:

[3] Տե՛ս Արտա Վիրապ Նամակ, Պահլավերեն բնագրից թարգմանեց և ծանոթագրեց պրոֆ. Լ. Թ. Աբրահամյան, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 1958, էջ 51: Տե՛ս **Wolff Fritz**. Avesta- Die heiligen Bücher der Parsen, übersetzt auf der Bartolomae,s Altiranischem Wörterbuch. Strassburg, 1910:

Учение Аддая апостола

[4] Տե՛ս Иосиф Флавий. Иудейская война. Пер. с древнегреческого М. Финкельберга и А. Вдовиченко, под ред. А. Ковельмана. М., Мосты культуры, 2008, кн. 7, гл. 4, с. 431.

Այնուհետև, Խորենացին հիշատակում է, որ Սանատրուկը թագավորել է սկսել պարսից Արտաշես թագավորի 12-րդ տարում, («Սա թագաւորեալ յերկոտասաներորդի ամի Արտաշիսի արքայի պարսից, կեցեալ ամս երեսուն՝ մեռեալ յորիս, նետի ուրուք դիպեալ փորոտեացն…»): Նա վիրավորվել է որսի ժամանակ արձակված պատահական նետից[1]: Ամենայն հավանականութամբ պարսից Արտաշես թագավորը Արտավան կամ Արտաբան Բ-ն է, որը, ըստ Ն. Դիբվոյզի տվյալների, թագավորել է 11-38 թ.[2], Ըստ Է. Բիկերմանի՝ 10-ից մոտ 38թ.[3], իսկ ըստ Հ. Մանանդյանի և Լեոյի՝ 11-40 թթ.[4]: Տրդատ-Սանատրուկը, ինչպես ասվել է, պարթևական ատյանի կողմից Մեծ Հայքի թագավոր է օծվել և իրավաբանորեն դարձել լեգիտիմ թագավոր 51/52 թվականներին՝ իր եղբայր Վաղարշ Առաջինի և Բակուրի հետ միաժամանակ: Եվ նա չէր կարող թագավորել այդ թագավորի 12-րդ տարում, այլ նրա կողմից թագավորել դադարելուց 12 տարի հետո: Ըստ երևույթին՝ Մ. Խորենացին, իր ժամանակի սովորության համաձայն, այս թագավորի թագավորման ժամկետին է միացրել նրանից հետո և մինչև Վաղարշ Առաջինը թագավորած Պարթևաստանի աննշան թագավորներ Վարդան Առաջինի (39-45թթ.) և Գոթարզ Երկրորդի (43-50թթ.) թագավորման տարիները, որոնք իրար հետ կազմում են մոտ 12 տարի: Նման դեպքում մոտավորապես կստանանք Տրդատ Առաջին-Սանատրուկի թագավորելու սկզբնատարին՝ 51/52 թվականները:

Սանատրուկին հաջորդած Երվանդը, ըստ Մ. Խորենացու, թագավորել է Վեսպասիանոսի (69-79թթ.) և Տիտոսի (79-81թթ.) ժամանակ և իր իշխանության սկզբում նրանց զիջել հայկական Միջագետքը՝ Մծբինը և Եդեսիան իրենց շրջակայքով՝ թագավորելու համար նրանցից Պարթևաստանի դեմ աջակցություն ստանալու համար: Եվ եթե հաշվի առնենք Խորենացու այն հաղորդումը, որ Սանատրուկը թագավորել է 30 տարի, ապա կարելի է կարծել, որ նա, սկսելով թագավորել 51/52թթ., իսկապես էլ թագավորել է 30 տարի, զոհվել 80/81 թթ., որից հետո էլ հայկական գահն անցել է Երվանդին: իսկ որ Հայկական Միջագետքը մոտավորապես այդ ժամանակ է անցել հռոմեացիներին, ապա դա պատմական իրողություն է:

Մ. Խորենացու հաղորդման համաձայն՝ Սանատրուկը թագավորել է 30 տարի, Երվանդը՝ 21, իսկ Սանատրուկի որդի Արտաշեսը՝ 41 տարի: Վերջին երկու թագավորների գահակալման տարիները չեն համապատասխանում հունահռոմեական աղբյուրներում առկա տվյալներին և հակասության մեջ են դրանց ու պատմական իրողությունների հետ: Այդ առթիվ կարելի է ենթադրել, որ Խորենացին նորից իրար է գումարել մի քանի հայ թագավորների թագավորման տարիներ: Բացի դրանից՝ նա կարող էր նաև այդ հարցերում սխալվել, ինչպես որ սխալվել է Գառնիի հայտնի արձանագրության կապակցությամբ՝ նշելով, որ այն թողել է Տրդատ Երրորդը:

---

[1] Տե՛ս Մովսես Խորենացի, նույն տեղում, էջ 178:

[2] Տես Дибвойз Н. К. Политическая история Парфии, Пер. с англ., науч. ред. и библиографическое приложение В. П. Никонова. СПб.: Филологический факультет СПб ГУ, 2008, с. 150.

[3] Տես՛ Бикерман Э., Хронология древнего мира. М., Наука, 1975, с. 197:

[4] Տես՛ Մանանդյան Հ., Քննական տեսություն, հ, 2, էջ 64, 433: Լեո, նույն տեղում, էջ 342:

Որ Սանատրուկ անունը Տրդատ Առաջինի անուններից մեկն է, և այդ անունները կրողը նույն անձն է, հիմնավորվում է նաև Գառնիի հայտնի հունարեն արձանագրությամբ: Դրա բովանդակության և պատվիրատուի անձի շուրջ բանավեճերը մինչև այժմ չեն դադարում: Տարբեր հեղինակներ այն թարգմանում և մեկնաբանում են տարբեր կերպ[1]: Այդ թարգմանություններից մեկն է Հ. Մանանդյանի կողմից կատարածը, որը տեղ է գտել նրա «Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը» գրքույկում[2]: Ճիշտ է, դրանում, հետևելով Մ. Խորենացուն (սա այն հազվադեպ դեպքերից է, երբ Մ. Խորենացին սխալվում է), այդ արձանագրությունը նա վերագրում է Տրդատ Երրորդ Մեծին[3] և ոչ թե Տրդատ Առաջինին, բայց նրա այդ կարծիքն այս դեպքում էական նշանակություն չունի: Այդ արձանագրությունը նա թարգմանել է հետևյալ կերպ. «Էլիոս Տիրիդատես թագավորը Մեծ Հայաստանի, իշխելով որպես գերագույն տեր՝ վերստին կառուցեց տաճարը, անհաղթելին, իր քրոջ արքայադստեր համար մեծաշուք թագուհու խնդրանքով: Շենքի հովանու ներքո սպասավորողը թող երգեր խորհե մեծ սրբին, նաև գոհության ավետարանման համար»[4]: Այստեղ պարզապես Հելիոս անունը նա բռնազբոսիկաբար փոխարինել է Էլիոս անունով, գտնելով, որ այդ հռոմեական անունը Տրդատ Գ-ն կարող էր ստացած լինել Հռոմում գտնված ժամանակ: Բայց այդ Էլիոս (Aelius) անունը բոլորովին էլ հռոմեացու սովորական անուն չէ, ոչ էլ այն կարելի է կարդալ որպես «Տիրան-Տրդատ», կամ համարել «Տիրան» անվան խորհրդանիշ, ինչպես ենթադրում է նա[5]: Հելիոս անվան տակ հունական դիցաբանության մեջ ենթադրվել է ևսի աստվածը, երբեմն՝ Ապոլոնը, երբեմն՝ Զևսը: Իսկ հայկական զրադաշտական պանթեոնում այդպես կարող էր կոչվել Արամազդը, Միհրը կամ նույնիսկ Տիրը: Այդ տեսակետից ճշմարտությանն ավելի մոտ է կանգնած Ստ. Լիսիցյանը, որը «Հելիոս» բառը թարգմանել է «Արև»[6]:

Այս արձանագրության մեջ Տրդատ Առաջինը կոչվում է Հելիոս-Տիրիդատես, այն է՝ Սանատրուկ (Արևորդի, Արևատուր)-Տիրիդատ: Եվ այդ կրկնակի անվան մեջ միավորված ու արտահայտված են նրա մարմնավորած հոգևոր և աշխարհիկ

---

[1] Տե՛ս Մանանդյան Հ. Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը», երևան, 1946, էջ 3-8: Նույնի՝ Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության հ. Բ, 1957, էջ 132, 134: Նույնի՝ Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 136: Առաքելյան Ա.Գ., Հայ ժողովրդի մշակույթի զարգացման պատմություն, Երևան, «Հայպետհրատ», 1959, էջ 45-46: Тревер К. В., Очерки по истории культуры древней Армении (2-ой в. до н.э. – 4-ий в. н.э.), Ереван, 1953, с. 187.

[2] Տե՛ս Մանանդյան Հ. Գառնիի հունարեն արձանագրությունը և Գառնիի հեթանոսական տաճարի կառուցման ժամանակը, Երևան, 1946, էջ 8:

[3] Ինչ վերաբերում է Տրդատ Երրորդին, որին Մ. Խորենացին կոչում է Գառնիի տաճարի կառուցող, ապա պետք է ասել, որ այս հարցում Պատմահայրն իսկապես էլ սխալվել է: Օբյեկտիվորեն Տրդատ Երրորդը չէր կարող մինչև 298 թվականը Հայաստանում շինարարությամբ զբաղվել, որովհետև 282/283թթ. թագադրվելուց հետո նա անընդհատ պատերազմել է: Իսկ 298-301 թվականներին և դրանից հետո, երբ սկսվել է Հայաստանի քրիստոնեացումը, հասկանալի է, որ այդ ընթացքում նա նույնպես որևէ զրադաշտական տաճար չէր կարող կառուցել: Նրա կենսագիր Ագաթանգեղոսն էլ նրան որպես որևէ զրադաշտական տաճարի կառուցող չի հիշատակում:

[4] Տե՛ս Մանանդյան Հ., նույն տեղում, էջ 8:

[5] Տե՛ս Մանանդյան Հ. նույն տեղում, էջ 8: Նույնի՝ Երկեր, հ.1, Երևան, 1987, էջ 136:

[6] Ստ. Լիսիցյանի կողմից նշված արձանագրության թարգմանված տեքստը տե՛ս Հ. Մանանդյան, «Գառնիի հունարեն արձանագրությունը...», էջ 5:

իշխանությունները՝ հաստատագրված, ընդունված ինչպես զրադաշտական եկեղեցու, այնպես էլ արտաքին ու ներքին աշխարհական իշխանությունների կողմից: Քանի որ նա եղել է նաև հայոց քրմապետ, իսկ անունը՝ Տրդատ (Տիր աստծու անունից դատող կամ Տիրի տված), ապա շատ հնարավոր է, որ այդ անունների զուգակցման միջոցով շեշտվել է նաև Արամազդ աստծու կամ վերջինիս ընտանիքի որևէ անդամից նրա և նրա արքայատոհմի սերած լինելու հանգամանքը: Այստեղ գրանցված է այն «իրողությունը», որ նա «դիցախառն» Արշակունի է: Իր տոհմի հնության ու փառավորության, ինչպես նաև զրադաշտական հավատի կատարելության մասին նա հիշեցնում էր նաև Ներոն կայսրին և հռոմեացի երևելիներին Հռոմում գտնված ժամանակ: Իրեն «դիցախառն» է կոչում նաև Տրդատ Երրորդ Մեծը իր հակաաղանդավորական հրամանագրերից մեկում[1]: Բայց վերջինս ոչ մեկի կողմից Սանատրուկ չի կոչվում: Արտաշես անունով որդի էլ չի ունեցել:

Գառնիում նրա կառուցած տաճարն էլ կարող էր և նվիրված է եղել զրադաշտական աստվածներից Արամազդին կամ Միհրին (գուցե նաև՝ Տիրին), որոնք համարվել են նրա աստվածային նախնիները: Արամազդը, ըստ Ավեստայի «Խուրշեդ-յաշտի», կոչվում է արև (ինչպես պարզ է այդ յաշտի վերնագրից), համարվում աշխարհի ու արևի ստեղծող: Նա այդպես է համարվում նաև Եզնիկ Կողբացու «Եղծ աղանդոց» գրքում[2]: Միհրը, ըստ Ավեստայի «Միհր-յաշտի», ամեն օր ուղեկցել է արևին արևածագից մինչև մայրամուտ[3]: Տիր աստվածն էլ կարող էր նույնացվել արևի հետ, քանզի նա եղել է գրի ու լուսավորության, մշակույթի աստված և այլն: Դրա համար էլ Տրդատ Առաջինը՝ որպես այս աստվածների շառավիղ, կարող էր կոչվել Հելիոս-Սանատրուկ: Առանց իր տոհմաբանության (գենեալոգիայի) և թագավորական իշխանության նման կերպ հիմնավորման ու լեգիտիմացման Արևելքում թագավորել հնարավոր չէր:

Գառնիի արձանագրությունից նաև հայտնի է դառնում, որ նա՝ որպես ուղղադավան զրադաշտական և քրմապետ, ըստ խեթուկդասի օրենքի, ամուսնացած է եղել իր արքայադուստր քրոջ հետ, որի ցանկությամբ էլ կառուցել է տվել նշված տաճարը: Իսկ իր աղջիկ Սանդուխտին նա կարող էր մահապատժի ենթակել ոչ միայն քրիստոնյա դառնալու, այլև այն բանի համար, որ նա, քրիստոնյա դառնալով, զրկել է իրեն նրա հետ ամուսնանալու հնարավորությունից: Նա նույնիսկ պարտավոր էր ամուսնանալ Սանդուխտի հետ՝ վերոնշված օրենքի համաձայն[4]: Եվ դա, այդ օրենքի համաձայն, համարվել է առաքինության տեսակ:

Ինչ վերաբերում է արձանագրության վերջին հատվածին՝ «Շենքի հովանու ներքո սպասավորողը թող երգեր խորհե մեծ սրբին, նաև գոհության ավետարանման համար» տողին, ապա դա նշանակում է, որ իսկապես էլ Գառնիում նրա

---

[1] Տե՛ս Խաչատրյան Ս. Ա., Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը, Երևան, 2010:

[2] Տե՛ս Եզնիկ կողբացի, Եղծ աղանդոց, Երևան, 1994, էջ 112, 114:

[3] Տե՛ս **Wolff Fritz**. Avesta- Die heiligen Bücher der Parsen, übersetzt auf der Bartolomae,s Altiranischem Wörterbuch. Strassburg, 1910, էջ 182-184:

[4] Տե՛ս Սուքիասյան Ա. Գ., Հին իրանական իրավունքը ըստ «Սասանյան Դատաստանագրքի», Երևան, ԵՊՀ հրատ., 1980:

կառուցածը եղել է զրադաշտական տաճար-կրակարան: Այնտեղ սպասարկող մոգը պետք է երգեր և երգելով ավետարաներ «մեծ սրբին»: Ավետարան կոչվել է Ավեստան, որի աղոթքները և յաշտերը երգվել են, և դրանց միջոցով գոհություն է ավետվել[1]: Իսկ «մեծ սուրբը» կարող էր լինել ինչպես Արամազդը, այնպես էլ նրա որդիներից Միհրը (կամ Տիրը):

Ամփոփելով շարադրվածը՝ բերված ապացույցների հիման վրա կարելի է գալ եզրակացության, որ Տրդատ Առաջինը և Սանատրուկը իսկապես էլ նույն անձն է և Մեծ Հայքի այն թագավորը, որն իրավաբանորեն թագավորել է 51/52-75/81 թթ. (բայց ոչ մինչև 88 թվականը, ինչպես կարծում են որոշ հեղինակներ[2]), որի թագավորելը երբեմն և փաստացի ընդհատվել է ժամանակի մեջ: Նա հայոց թագավոր է օծվել Պարթևաստանի ատյանի կամ «թագավորներ դնող» մոգերի ու ազգականների խորհրդի (ատյանի) կողմից[3] 51/52 թթ.: Եվ դա այն ժամանակ, երբ նրա եղբայր Վաղարշակ Առաջինը օծվել է ամբողջ Պարթևաստանի, իսկ մյուս եղբայրը՝ Փաքորը կամ Բակուրը՝ Մարաստանի (Մեդիայի) թագավոր[4]: Տրդատ Առաջին-Սանատրուկի թագավորման իրավունքը վերջնականորեն հաստատվել է Հռանդեայի պայմանագրով և նրա իշխանությունը լեգիտիմացվել: Բերված ապացույցներով նաև հերքվում է այն արհեստական-հնարովի պատմությունը, ըստ որի՝ Մեծ Հայքում 1-ին դարի վերջում և 2-րդ դարի սկզբում թագավորել է Սանատրուկ անունով ոմն հայոց թագավոր:

Բանալի բառեր՝ *Տրդատ Առաջին-Սանատրուկ հայոց թագավոր, Սանդուխտ կույս, Մեծ Հայք, Պարթևաստան, Վաղարշ Առաջին, Հռոմեական կայսրություն, Ներոն, Գառնիի տաճար, Հռանդեայի պայմանագիր:*

[1] Տե՛ս Խաչատրյան Ս. Ա., Տիրիդատ Երրորդ թագավորի հակաաղանդավորական հրամանագրերը, դրանց աքսիոլոգիական, իրավաբանական, տրամաբանական և սոցիոլոգիական վերլուծությունը, Երևան, 2010:

[2] Տե՛ս Հայ ժողովրդի պատմություն, ութ հատորից, հ.1, էջ 724:

[3] Տե՛ս Моммзен Теодор. История Рима, Т. 4, Ростов – на - Дону, Феникс, 1997, с.с. 254-255:

[4] Իսկ այն փաստը, որ, ըստ Տակիտոսի, 61 թվականին՝ Մեծ Հայքի ազատագրման համար հերթական արշավանքը սկսելուց առաջ, Մծբինում Վաղարշակ Առաջինը Տրդատ Առաջին-Սանատրուկի գլխին թագ է դրել, ապա դա եղել է ոչ թե թագավոր օծելու, այլ ընդամենը թագ նվիրելու ծես և Մեծ Հայքն ազատագրելու վճռականության ցուցադրում: Դրանով միայն վերահաստատվել է նրա հայոց թագավոր և այդ ժամանակ Մեծ Հայքում թագավորող Զենոն-Արտաշեսի ապօրինի թագավոր լինելու հանգամանքը: Երևի այդ թագն է, որը Երվանդին հաղթելուց հետո նրա գանձարանում գտել և Արտաշեսի գլխին է դրել թագադիր ասպետ Սմբատ Բագրատունին:

THE MYSTERY OF ARMENIAN KINGS TIRIDATES I AND SANATRUK

S. A. KHACHATRYAN
Doctor of Law, Associate Professor,
GSU Lecturer

According to Armenian historiography and based on the testimonies of Roman historians Tacitus, Dio Cassius and others, in the middle of the 1st century AD Armenia was reigned by Tiridates I of Arsacid dynasty (Arshakuni) (54/66-75/88), who was the brother of the King of Parthia Vologases I (51-75/78). It is believed that Tiridates had a son named Sanatruk, who had inherited the Armenian throne from his father. Sanatruk is believed to have reigned in late 1st and early 2nd centuries (75/78-110 or 88-110).

Unlike Roman historians Tacitus, Dio Cassius and others, Armenian historian of 5th century Movses Khorenatsi doesn't mention Tiridates I in his "History of Armenia" and states that during that period the King of Great Armenia was Sanatruk who, according to him, was the relative of Armenian King Abgar.

In this article we prove that the name "Sanatruk" was the second name of Tiridates I and that these two people were the same person. There was no other king named Sanatruk who reigned after Tiridates I during those times.

ЗАГАДКА АРМЯНСКИХ ЦАРЕЙ ТИРИДАТА ПЕРВОГО И САНАТРУКА

С. А. ХАЧАТРЯН
Кандидат юридических наук, доцент,
Преподаватель ГГУ

В армянской историографии, на основе свидетельств римских историков Тацита, Диона Кассия и других, утверждается, что в середине первого века н. э. в Великой Армении царствовал брат парфянского царя Вологеза Первого (51-75/78 гг.) Тиридат Первый Аршакуни (54/66-75/88 гг.). Считается, что у него был сын по имени Санатрук, который унаследовал армянский трон после отца. Временем его царствования считается конец 1-ого и начало 2-ого века, примерно 75/78-110, или 88-110 годы.

Армянский историк 5-ого века Мовсес Хоренаци в своей «Истории Армении» о Тиридате Первом не упоминает, как это делают римские историографы Тацит, Дион Кассий, и другие. Вместо него царем Великой Армении он называет Санатрука, которого он считает родственником армянского царя Абгара.

В данной статье доказывается, что имя "Санатрук" было вторым именем Тиридата Первого и что он и Санатрук – одно и то же лицо. Другого царя по имени Санатрук, царившего после Тиридата Первого - не существовало.

ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲԱՑԵՐԻ ԼՐԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ն. Ա. ՀԱԿՈԲՅԱՆ
ՀՀ ԳԱԱ փիլիսոփայության և իրավունքի ինստիտուտի հայցորդ

Մինչև 19-րդ դարի վերջը իրավունքի և իրավագիտության պատմական զարգացման ընթացքում կիրառվել են իրավունքի բացերի լրացման տարբեր եղանակներ ու միջոցներ: Խոսքը հիմնականում վերաբերում է իրավունքի և օրենքի անալոգիային: Իրավական կարգավորման նպատակներին համապատասխան՝ ինքնիշխան մարմինը (իշխանությունը) դատարանին հասցեագրում էր գործողությունների տարբեր կարգեր: Դրանցից մեկի՝ օրենքի անալոգիայի օրենսդրական ձևակերպումները առավել հաճախ ենթադրում էին, որ դիտարկվող դեպքը կարգավորող իրավաբանական կանոնի բացակայության դեպքում դատական մարմինը պարտավոր էր կիրառել գործող իրավական այն նորմը, որը կարգավորում էր վերլուծվող դեպքին նմանվող իրավիճակ:

Երկրորդ կարգը իրագործվում էր մեկ այլ իրավիճակում: Այստեղ չկա անալոգիայի համար կիրառվող օրենք: Իսկ գործերը, ինչպես ամրագրվում է օրենսդրության մեջ, պետք է լուծվեն իրավական սկզբունքների հիման վրա: Այդպիսին է իրավունքի անալոգիան:

Հայտնի չէ, թե առաջին անգամ իրավունքի բացի լրացման հնարքները երբ են կիրառվել կամ նկարագրվել իրավագիտական գրականության մեջ, արտացոլվել օրենսդրությունում կամ արձանագրվել իրավակիրառ պրակտիկայում: Սակայն հայտնի է, որ օրենքի անալոգիայի մասին պատկերացում կար դեռևս Հուստինիանոսի Դիգեստներում: Մասնավորապես Պանդեկտներում նշված է հետևյալը. «Սալվի Հուլիանոսի խոսքերով, չեն կարող բոլոր առանձին դեպքերը նախատեսված լինել օրենքով կամ սենատուսկոնսուլով: Սակայն երբ որևէ դեպքում նրանց իմաստը պարզ է, ապա իրավասությունն իրականացնողը կարող է դրանք կիրառել նմանատիպ (հանգամանքների) նկատմամբ և դրան համապատասխան ընդունել որոշումը»[1]: Ինչպես վերլուծվող իրավիճակի վերաբերյալ նկատել է Կ. Աննենկովը, «օրենքում բացերի ու թերությունների լրացումն անալոգիայի ճանապարհով թույլատրվում է հռոմեական իրավագիտության կողմից գրեթե անսահմանափակ կերպով»[2]:

Բացի դրանից՝ Հին Հռոմում պրետորներն իրենց գործունեության մեջ, ըստ էության, օգտագործում էին իրավունքի անալոգիան՝ հենվելով ոչ թե իրավունքի տառի, այլ դրա ոգու, այսինքն՝ արդարության վրա:

Ավելի ուշ եվրոպական պետություններում իրավական կարգավորման դիտարկվող հնարքներն իրենց արտացոլումն են գտել օրենսդրության մեջ առնվազն մի քանի հարյուրամյակ առաջ: Այսպես, իրավունքի անալոգիայի մասին առաջին հիշատակումներից մեկը պատկանում է 15-րդ դարին: Դեռևս 1499 թ.–ին ընդուն-

[1] Дигести Юстинина: М., 1984, էջ 109:
[2] Аннекин К. Система русского гражданского права Т. 1 СПб., 1910, էջ 21-22: Տե՛ս նաև՝ Петровский И.А. Институт аналогии в римской правовой науке и судебной практике // Древнее право. Lvs antiqvvm, М., 2007: N 1: էջ 85-86 :

ված Տիրոլի քրեական կանոնադրությունը թույլ է տալիս «դատավորին դիտարկել ու դատել դրանում չնախատեսված հանցագործությունները՝ օրենքի ոգուն ու բանականությանը համապատասխան»[1]: Այլ կերպ ասած՝ կանխատեսվում էր իրավունքի անալոգիայի օգտագործումը[2]:

Ֆ. Դուբրովինի խոսքերով՝ 1499 թ.-ի Տիրոլի քրեական կանոնադրությունից բերված «դրույթը»[3] կրկնվում է 16-րդ դարասկզբի «քրեական օրենքների գրեթե բոլոր հաջորդ ժողովածուներում»[4]: «Առանձնակի լայնությամբ ու մանրամասնեությամբ»[5] այն արտահայտված է Landsgerichsordnung-ում 1514թ.–ից (Դատավարության կանոնները Ավստրիայի համար Էննոսում), որի 48–րդ ենթագլխում նշված է հետևյալը. «Սակայն բոլոր հանցագործությունները՝ ինչպես օրենքով քրեական պատիժների ենթարկված, այնպես էլ այդ օրենսգրքում չնախատեսված կամ ոչ բավարար չափով պարզ նկարագրվածները, պետք է դիտարկվեն ու դատվեն դատավորների կողմից՝ օրենքների բանականության ու ոգուն համապատասխան»[6]:

Այն պետություններում, որտեղ իշխանությունը օրենսդրության վերլուծվող ճյուղում թույլ էր տալիս իրավունքի ու օրենքի անալոգիա, հայտնաբերվել էր իրավական նորմատիվ ակտերի «մեկնաբանման և կիրառման ժամանակ դատավորների բավականաչափ լայն կամայականություն»[7]: Որոշ ժամանակ նա այստեղ ծառայում էր իբրև իրավական բացերի հետ վարվելու քննարկվող եղանակը դուրս մղելու պատճառ[8]: Սակայն այդ չափը, մեծապես նվազեցնելով իրավական կարգավորման արդյունավետությունը՝ նախկինում դիտվող դրա թերությունների ուժով, «քիչ հաջողություն է»[9] ունեցել դատարանների աշխատանքի արդյունքում օրինականության ապահովման գործում:

Ահա թե ինչու 18-րդ դարում իրավունքի ու օրենքի անալոգիայի ճանապարհով իրավաբանական բացերը լրացնելու դատական մարմինների պարտականությունը սահմանված է բազմաթիվ եվրոպական քրեական նորմատիվ իրավական ակտերում: Օրինակ՝ 1721թ.-ի պրուսական օրենսգիրքը դատարանից պահանջում էր արդարադատության իրավաբանական սկզբունքի հիման վրա վճռի կայացում, եթե տվյալ դատական մարմնի կողմից դիտարկվող արարքը հանցագործություն չէր որակվել գործող օրենսդրությամբ[10]: 1751թ.-ի բավարական օրենսգիրքը նմանատիպ իրադրություններում ևս թույլատրում էր իրավունքի անալոգիայի կիրառում[11]: Իսկ 1768թ.-ի ավստրիական քրեական օրենսգրքի (Թերեզիանայի)

---

[1] Дубровин Ф. О., размерах допустимости аналогии при применении уголовного закона // Журн. М-ва юстиции. 1899. N 5, էջ 130:
[2] Տե՛ս Покровский И., Основные проблемы гражданского права., М., 2001, էջ 9:
[3] Дубровин Ф. О., размерах допустимости аналогии при применении уголовного закона // Журн. М-ва юстиции, 1899, N 5, էջ 130:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում:
[6] Дубровин Ф. О., размерах допустимости аналогии при применении уголовного закона, էջ 130:
[7] Նույն տեղում էջ 129:
[8] Նույն տեղում էջ 130-131:
[9] Նույն տեղում էջ132:
[10] Տե՛ս Hall J. Nulla Poena Sine Lege // The Yale Law Journal, 1937, 47, էջ 168: (Ընդ որում գործերի նշված կատեգորիայից ամենադժվարները պետք է լուծվեին անձամբ թագավորի կողմից (նույն տեղում)):
[11] Նույն տեղում:

համաձայն՝ հիշատակված դեպքերում մասամբ պետք էր օգտագործել օրենքի անալոգիան: Ընդ որում այն կիրառած դատական մարմինը պարտավոր էր ներկայացնել որոշումը գերագույն դատարանի հաստատմանը[1]:

18-րդ դարի ռուս հետազոտող Ս. Դեսնիցկին առաջարկում է նախատեսել իրավունքի անալոգիան նաև ռուսաստանյան օրենսդրության մեջ, ընդ որում նա նկատի ուներ ոչ միայն քրեական իրավական նորմատիվ ակտերը: Մտածելով, «թե ինչպես դատարանները պետք է դատեն քրեական գործերը»[2], Ս. Դեսնիցկին պնդում էր. «Ոչ մի երկրում հնարավոր չէ օրենքներով սահմանափակել և նախապես կանխատեսել բոլոր վարկածները, այդ պատճառով անհրաժեշտությունից դրդված այդպիսի անկանխատեսելի դեպքերում թույլ է տրվում դատավորին որոշելու և դատելու գործերն ըստ խղճի և արդարության, և որքան մեծ լինի դատավորի այդպիսի հայեցողությունը, այնքան զգուշավորությամբ է այն հարկավոր օրինականացնել: Այդ հանգամանքի մասին լորդ դատավոր պարոն Քեմզը Շոտլանդիայում գրել է գիրք՝ Lord Dames՝es Equiti[3] խորագրով»:

18-րդ դարի վերջում և 19-րդ դարի սկզբում իրավունքի ու օրենքի անալոգիայի հնարքներն ամրապնդվել են Եվրոպայի կոդիֆիկացված օրենսդրական ակտերում, որոնք պարունակում էին քաղաքացիական-իրավական նորմեր: Այսպես, օրինակ, 1794թ.-ի[4] պրուսական հողային օրենսգրքի 49-րդ ենթագլխում ամրագրված էր. «Եթե դատավորը չի գտնում այնպիսի օրենք, որը կարող է կիրառվել վիճելի դեպքը լուծելու համար, ապա նա պետք է իր լավագույն իմացությամբ ճանաչի և կիրառի օրենսդրության ընդհանուր սկզբունքները, ինչպես նաև առկա և նմանատիպ դեպքերում ընդունված գործադիր իշխանության նորմատիվ ակտերը»[5]: Նշված ձևով այստեղ թույլատրված են անալոգիայի երկու դիտարկվող հնարքները: Իսկ միայն օրենքի անալոգիային դիմելու՝ դատարանների իրավունքը արտացոլված է 1811թ.-ի Ավստրիական քաղաքացիական օրենսգրքի 7-րդ ենթագլխում: Այստեղ նշված է. «Եթե դեպքը չի կարող քննարկվել և լուծվել ոչ տեքստի հիման վրա, ոչ օրենքի բնական իմաստի հիման վրա, ապա հարկավոր է նկատի ունենալ նմանատիպ օրենքներում որոշակիորեն լուծված դեպքերը, ինչպես նաև նմանատիպ այլ օրենքների հիմքերը: Եթե հարցն այդուամենայնիվ մնում է վիճելի, ապա այն, ըստ հանգամանքների մանրազնին ուսումնասիրության, պետք է լուծվի իրավունքի սկզբունքների հիման վրա»[6]:

Ինչպես գտնում էր Մ. Շաուերը, 1811թ.-ի ավստրիական քաղաքացիական օրենսգրքի ենթագլխի վերջին նախադասությունը մշակված էր հայտնի տեսության ազդեցության ներքո: Նկատի է առնվում բնական իրավունքի ուսմունքը[7]:

---

[1] Տե՛ս Дубровин Ф. О., размерах допустимости аналогии при применении уголовного закона, էջ 130:

[2] Десницкий С., Представление об учереждении законодательной, судительной наказательной власти в Российской Империи, СПб., 1905, Էջ 10:

[3] Նույն տեղում:

[4] Ինչպես նշում է Վ. Գրաֆսկին, §Այդ նորմատիվ-իրավական ակտի մշակումը տևեց մոտ երեք տասնամյակ» (Графский В.Г. Всеобщая история и государства: учебник, М., 2013: Էջ 390):

[5] Allgemenines Landrechi fur die Preussischen Staaten. Berlin, 1835.էջ 7:

[6] Покровский И.А. Նշված աշխ., էջ 92:

[7] Տե՛ս Grandmann S., Shcauer M. The Architecture of European Codes and Contract Law. Alphen aan den Rijn, 2006, էջ. 85:

Այս պնդման ճշմարտացիությունը վիճելի է, քանի որ հիշատակված օրենքին հատուկ չէ «իրավունքի բնական սկզբունքների հիման վրա» դրույթը:

Սակայն ընդունելի է այն փաստը, որ որոշ իրավագետներ դա մեկնաբանում էին իբրև բնական իրավունքի գաղափարների ամրապնդում: Օրինակ՝ «իրավունքի բնական սկզբունքների հիման վրա» արտահայտությունը Բ. Չենգը թարգմանել է «բնական իրավունքի սկզբունքներին համապատասխան»[1] , Գ. Շերշեներիչը՝ «բնական իրավունքի սկզբունքերին համաձայն»[2] , իսկ Պ.Վինոգրադովը՝ «բնական իրավունքի հետ համաձայն»[3]:

Ընդ որում առանձնացված դրույթը, ըստ երևույթին, արտացոլվել է դիտարկվող օրենսդրական ձևակերպման «ճակատագրի» վրա, երբ հարց է առաջացել այն պրակտիկայում կիրառելու մասին: Ինչպես նշել է Ի. Պոկրովսկին, իրավակիրառ մարմինները 1811թ.-ի Ավստրիական քաղաքացիական կանոնի վերջին նախադասությանը «ոչ մի ուշադրություն չէին դարձնում»[4] իրենց որոշումներն ընդունելիս: Այսինքն, ինչպես նկատել է Պ.Վինոգրադովը, «բնական իրավունքի տեսությանը՝ դատական պրակտիկայի վրա անմիջական ազդեցություն գործելու հնարավորություն տալու այդպիսի փորձերը հաջողություն չեն ունեցել»[5]:

Նշվածի պատճառները պետք է փնտրել 19-րդ դարի իրավաբանների կողմից բնաիրավական ուսմունքի ընկալման բնույթի մեջ: Այդ ժամանակ բազմաթիվ իրավագետների համար ակնհայտ է դարձել այն, ինչի մասին հետագայում գրում էր Հ. Կելզենը. «Հենց որ բնական-իրավական ուսմունքը փորձում է սահմանել բնությանը ներհատուկ և դրանից դուրս բերվող նորմերի բովանդակությունը, անմիջապես առաջանում են ամենասուր բախումները»: Քննարկվող հայեցակարգի ներկայացուցիչները հռչակում են ոչ միայն բնական իրավունքը, այլև բազմաթիվ տարբեր, միմյանց հակասող մի շարք այլ դիրքորոշումներ: Տվյալ իրադրության մեջ անխուսափելի է հետևյալ եզրակացությունը. «Պոզիտիվ իրավաբանական կարգադրությունների համակարգում բնական-իրավական ուսմունքների մարմնավորման փորձերը «պարտադիր» կերպով հանգեցնում են պետության մեջ ՙլիարժեք անարխիայի ձևավորմանը»[6]:

Ահա թե ինչու իրավունքի բացերի լրացման նպատակով բնական իրավունքի նորմերի տեսությանը դիմելն այն ժամանակի եվրոպացի իրավագետների կողմից որոշակի ձևով էր դիտարկվում: Իրավաբաններն այդպիսի պրակտիկան գնահատում էին իբրև ոչ պատշաճ: Բնաիրավական ուսմունքի «թերահավատներին»[7] դրա կիրառման հիշատակված դեպքում «այս ուսմունքը թվում էր իրավունքի անունից սեփական նախապաշարմունքները պարտադրելու իրավունք»[8]:

---

[1] Cheng, B. General Principles of Law as Applied by International Courts and Tribunals. N.Y.: Cambridge University Press, 2006, էջ 401-402:

[2] Шершеневич Г.Ф., Общая теория права. Т. 4, М., 1910, էջ 746:

[3] Виноградов П.Г., Очерки по теории права. М., 1915, էջ 148:

[4] Покровский И. А., Նշված աշխ., էջ 92:

[5] Винаградов П.Г., Նշված աշխ., էջ 148:

[6] Տե՛ս Дробышевский С., История политических и правовых учений: основные классические идеи: էջ 583:

[7] Տես՝ Herger J.E., Wallace S. The German Free Law Movement as the Sources of American Legal Realism // Virginia Law Review. 1987. 73. էջ 403.

[8] Նույն տեղը, էջ 403-404:

Մասնավորապես, նմանատիպ գաղափարները ճիշտ էր համարում 19-րդ դարի իրավագետ Ս. Բուդինսկին: Նրա կարծիքով՝ «բոլոր պոզիտիվ օրենսդրությունների վերևում բարձրացված բնական իրավունքի միջոցով եղած բացի լրացումը կհանգեցներ օրենքը ոչնչացնող կամայականությանը»[1]:

Հավանաբար Ս. Բուդինսկու մեջբերված եզրակացությանը համաձայն էին 19-րդ դարի բազմաթիվ ֆրանսիացի իրավաբաններ: Հակառակ դեպքում դժվար է բացատրել, թե ինչու նրանք մերժեցին 1804թ.-ի Ֆրանսիայի Քաղաքացիական օրենսգրքի առաջին խմբագրության այն հոդվածները, որոնցում դատարաններին իրավաբանական բացերի բացահայտման դեպքում արգելվում էր լուծել համապատասխան գործերը բնական իրավունքի հիման վրա:

Աշխարհի հեղինակավոր կոդիֆիկացումներից մեկում՝ 1896թ.-ի գերմանական քաղաքացիական օրենսգրքում, չկա ոչ իրավունքի և ոչ օրենքի անալոգիայի հիշատակում: Սակայն վերլուծվող օրենսգրքի նախագիծը ներառում էր նշված հնարքներին նվիրված ենթագլուխ: Այնտեղ նշված էր. «Այն հարաբերությունների նկատմամբ, որոնց մասին օրենքները ոչ մի դրույթ չեն պարունակում, համապատասխանաբար կիրառում է գտնում այն կարգավորորումը, որը տրված է նմանատիպ իրավական հարաբերությունների համար: Այդպիսի կարգավորող դրույթների բացակայության պարագայում կիրառվում են իրավակարգի ոգուց բխող սկզբունքները»[2]:

Դիտարկվող օրենսգրքի նախագծի վերաբերյալ փաստաթղթերում նշված ենթագլխի անհրաժեշտությունը բացատրվում էր հետևյալ կերպ. «Իրավունքում բացերի գոյությունն անխուսափելի է»: Այս իրավիճակում 1896թ.-ի գերմանական քաղաքացիական օրենսգիրքը պետք է «լրացվեր ինքնին, դրանում պարունակվող իրավական համակարգից»[3], քանի որ նշված օրենսգիրքը «իր մեջ պարունակում է ոչ թե միայն միմյանց հաջորդող իրավական դրույթների չգործող զանգված, այլ ներքուստ կապված նորմերի օրգանական ամբողջություն: Դրանց հիմքում ընկած սկզբունքներն իրենց մեջ կրում են հետագա զարգացման սաղմը»[4]:

Բացի դրանից՝ 1896թ.-ի գերմանական քաղաքացիական օրենսգրքի հեղինակներն ընդգծում էին. «Առաջարկվող ենթագլուխը լիարժեք համաձայնության մեջ է իշխող տեսության և օրենսդրությունների մեծ մասի հետ»[5]: Իսկ դրա նպատակներից մեկը բնական իրավունքի կիրառումը դադարեցնելու մեջ է[6]:

Սակայն քննարկվող ենթագլուխը քննադատության է ենթարկվել: Մասնավորապես օրենսգրքի նախագիծ նախապատրաստող հեղինակավոր գերմանացի իրավաբանները նշել են, որ «անալոգիայի կիրառման համար չի պահանջվում օրենքի կողմից ոչ մի հատուկ լիազորում»[7]: Պետության օրենսդիր իշխանությունն ընդունեց բերված փաստարկը:

---

[1] Տես՝ Будзинский С.М., Начала уголовного права., Варшава,1870: էջ 36:
[2] Տես՝ Заводский А. В., К учению о толковании и применении гражданских законов. М., 2008. էջ 352:
[3] Նույն տեղում:
[4] Նույն տեղում:
[5] Նույն տեղում: էջ 353:
[6] Նույն տեղում:
[7] Նույն տեղում:

Արդյունքում վերլուծվող ենթագլուխը չներառվեց 1896թ.-ի գերմանական քաղաքացիական օրենսգրքի մեջ: Դրա հետ մեկտեղ իրավունքի ու օրենքի անալոգիան կիրառվում է դատարանների կողմից տվյալ իրավական նորմատիվ ակտի գործողության ժամանակ, որը տվյալ պահին նույնպես ունի իրավաբանական ուժ[1]:

Այլ կերպ ասած՝ գերմանացի օրենսդրի կարծիքով՝ դրա օգտագործումը դատական գործունեության մեջ կազմում է ինքնին բնական երևույթ: Այդ պատճառով էլ 1896թ.-ի գերմանական քաղաքացիական օրենսգրքի մեջ իրավունքի և օրենքի անալոգիայի հնարքների մասին հիշատակումն ավելորդ էր համարվում: Այսինքն՝ չի պահանջվում այն բանի իրավաբանական պարտադրության սահմանում, որն առանց այդ էլ ամենուրեք կյանքի է կոչվում:

Բանալի բառեր՝ *պատմահրավական հուշարձաններ, քաղաքացիական օրենսգիրք, իրավական բաց, օրենսդրական բաց, իրավունքի անալոգիա, օրենքի անալոգիա:*

Օգտագործված գրականության ցանկ

1. Аннекин К. Н., Система русского гражданского права, Т. 1, СПб., 1910, էջ 21-22:
2. Будзинский С. М. , Начала уголовного права, Варшава,1870, էջ 36:
3. Виноградов П. Г. , Очерки по теории права, М., 1915, էջ 148:
4. Графский В. Г. , Всеобщая история и государства: учебник, М., 2013, ¾ç 390:
5. Дигести Юстинина, М., 1984, էջ 109:
6. Дубровин Ф.И. , О размерах допустимости аналогии при применении уголовного закона // Журн. М-ва юстиции, 1899, N 5, էջ 130:
7. Десницкий С.Е., Представление об учереждении законодательной, судительной наказательной власти в Российской Империи, СПб., 1905, էջ 10:
8. Дробышевский С.А. , История политических и правовых учений: основные классические идеи, էջ 583:
9. Заводский А. В. , К учению о толковании и применении гражданских законов, М., 2008, էջ 352:
10. Петровский И.А. , Институт аналогии в римской правовой науке и судебной практике // Древнее право. Lvs antiqvvm. М., 2007, N 1, էջ 85-86:
11. Покровский И.А. , Основные проблемы гражданского права, М., 2001, С.9.
12. Шершеневич Г.Ф. , Общая теория права, Т. 4, М., 1910, էջ 746:
13. Allgemenines Landrechi fur die Preussischen Staaten. Berlin, 1835.էջ 7:
14. Cheng, B. General Principles of Law as Applied by International Courts and Tribunals. N.Y.: Cambridge University Press, 2006, էջ401-402:
15. Grandmann S., Shcauer M. The Architecture of European Codes and Contract Law. Alphen aan den Rijn, 2006. P. 85:
16. Hall J. Nulla Poena Sine Lege // The Yale Law Journal. 1937, 47. P. 168:
17. Herger J.E., Wallace S. The German Free Law Movement as the Sources of American Legal Realism // Virginia Law Review. 1987. 73. էջ 403.
18. Landmark T. Charting the Divide between Common and Civil Law. N.Y., 2012. էջ 104, 110, 128, 283, 291:

[1] Տե՛ս Landmark T. Charting the Divide between Common and Civil Law. N.Y., 2012, էջ 104, 110, 128, 283, 291:

THE HISTORICAL ANALYSIS OF METHODS USED TO FILL IN THE GAPS IN LAW

N. A. HAKOBYAN
PhD Student, Institute of Philosophy and Law, NAS RA

In this article the author highlights the historical process of filling in the gaps in Law based upon the results of critical analysis of historical and legal sources, as well as acting French and German Civil Codes.

Key words: historical and legal sources, Civil Code, gap in Law, legislative gap, analogy of rights, analogy of law.

ИСТОРИЧЕСКИЙ АНАЛИЗ МЕТОДОВ ВОСПОЛНЕНИЯ ПРОБЕЛОВ ПРАВА

Н. А. АКОПЯН
Соискатель института философии и права НАН РА

В настоящей статье автор на основании результатов аналитического исследования историко-правовых памятников и действующих французского и немецкого Гражданских кодексов изложил основные направления исторического развития выявления и восполнения пробелов в праве.

Ключевые слова: историко-правовые памятники, Гражданский кодекс, правовой пробел, законодательный пробел, аналогия права, аналогия закона.

ՀԻՄՆԱԴԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ՝ ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ 4

Գրքի ձևավորումը՝ Լուսինե Ավետիսյանի

Ստորագված է տպագրության 23.10.2017թ.:
Թուղթ՝ օֆսեթ: Տպագրություն՝ օֆսեթ:
Գրաչափը՝ 70x100, 1/32: Հրատ. մամուլ՝ 31.5:
Տառատեսակը՝GHEA Grapalat:

Տպաքանակ՝ 100 օրինակ:

Հայաստանի Հանրապետություն,
Գեղարքունիքի մարզ, ք. Գավառ,
1201, Հրանտ Հակոբյան 1,
ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
Հեռ.: +374 60 460201
Կայքէջ՝ http://www.gsu.am
էլ. փոստի հասցե - info@gsu.am
infogsu@mail.ru

«ԱՐՏԱԳԵՐՄ» հրատարակչություն
ք. Երևան, Իսահակյան 28
Հեռ.՝ (+37499) 14-27-97, (+37498) 14-27-97
Էլ. փոստ՝ artagers.hrat@mail.ru
artagershrat@rambler.ru